



88

5-22













2004

88  
5-22  
պ:

5214-02/29  
540-04

ԱՌԱԿՔ

ԵՊՈՎԻՍԻՏ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ԳԱՂՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ

ՅԱԻԵԼՄԱՄԲ ՈՏԱՆԱՒՈՐ ԻՄԱՍՏԻՑ

ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՈՒՅ

13  
Ի Հ. ՄԻՆԱՍ Վ. ԲԺՇԿԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ


ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1849










ԵՂՈՎԻՍ ԱՌԱԿԱՆԻՕՍ

47.



1771/11/11

UNIVERS



1771/11/11

In unappla Quinqu

..... 1849 .....

5214-4.3

36

3



Վ Ա Ր Ք

# Ե.Չ.ՈՎ.Բ.ՈՍԻ

Հ Ա Ր Ա Գ Ր Ե Ա Լ Հ Ե Լ Լ Ե Ն Ե Ր Ե Ն  
Ի Մ Ա Ք Ս Ի Մ Ո Ն Ս Բ Լ Ա Ն Ո Ւ Տ Ե (1)

1001  
563  
C95

Պ Լ . Ա .

Մանկանք խախտաբար էինք 'ի հանդէս',  
Եւսմբ 'ի Լուսնի-ր Կարոյն' իւրէ Վճեղ.  
Ուր անխառն, յաւել, ճառէն գիտնապէս,  
Հրահանգէլ ըլնարդ յիմաստաւ պէտպէս:

Շատ գիտուն մարդիկ գեղեցիկ քննե-  
լով մարդկային գործողութիւնները և ա-  
պրատամբութեանց պատճառները՝ ջանա-  
ցին աշխատեցան, որ եռքի եկողները պէս-  
պէս խրատներով կրթեն և բարեկարգեն:  
Բայց Եզովբոս քան զամենը գերազանցեց.  
որուն գործքին մէջ ամենէն աւելի կը փայլի

(1) Բւանդա Մասիմոս եր յոյն իրօնաւոր, որ  
հին Բաներոս քեղեալ ըլնաւ ի իւրօնաւորներուն  
ապանաւորներ ժողովեալ 5 գիրք ըրաւ յետոյ Եւսմ.

խմաստասիրութիւնը և բարոյական հան-  
ճարը . որ գրեթէ վերին զօրութեն շարժե-  
լով զարմանալի աւանդեց մարդկան ցայս-  
չափ գեղեցիկ և օգտակար կանոններ բարոյ-  
ականութեան , որ շատ վեր են երևելի փիլի-  
սոփաներուն տուած կանոններէն . որոնք որ  
մինչև ան ատենը աշխարհք էին եկեր : Իբր  
զի՝ Եզովբոս չկամեցաւ առաջ բերել ըա-  
րակ սահմաններով պատճառներ , և երևելի  
պատմութիւններէ օրինակներ , որպէս զի կա-  
րենայ մարդուս միտքը համոզելով բռնա-  
դատել՝ որ առաքինութիւն սիրէ ու մոլու-  
թէ՝ փախչի : Ուրիշ բանով չուզեց մարդ-  
կանց վարդապետել , բայց միայն առակով ,  
որ կ'ըսուի Առասպել (1) . որով իբր վախ մը  
կուտայ թէ թռչունները և այլ կենդանի-  
ներն՝ որ իսելք ու միտք չունին , միայն բնա-  
կան հասկացողութիւն շարժելով շատ բանե-  
րէ հեռու կեցան . իսկ մարդիկ՝ որ ունին  
բանականութիւն , պէտք է ամբնան երբոր  
չեն զգուշանար անանկ բաներէն , որ աղ-

Բոսին վարդի աւ հին գրեանց Տեղէն , և հիւերոն-  
բերենէն լեւել շարատրեց . որ Փոսանուզերեն ըն-  
դիւր թարգմանած ըլլաւով , Տեն+ աւ աշխարհաբառ-  
տարձոցին : Ա'երեւնայ թէ Տեր Տեղ աւ հին ապենը  
Թարգմանած պիտի ըլլայ . Վասն զի հին գրեանց  
Տեղ Եզովբոսին բաներէն իւր գրանոսին :

(1) Առասպելի՝ Եսոսին անանկ առասպելներն որ իբր  
լեն եղած , այլ յնացողած են . որպէս թէ կենդա-  
նին և անշունչ բանը իւր իօսի : Ասանկ առասպելերը  
հին ծածանակը շարք իւր գործածողութիւն ամեն ազգի  
Տեղ, Հայոց՝ Յոսեփոյ՝ Արաբացոց՝ Տանուսի տ Հրեիոց

ուեսները, և ուրիշ կենդանիները զգուշա-  
նալով ազատեցան մեծամեծ վտանգներէ ի-  
րենց ճարտարամիտ խորագիտութիւնը. և եր-  
բեմնչափ մեծ օգուտներ ալ շահեցան երբոր  
առիթը պատահեցաւ: Ուստի Եզովբոս իր  
վարքը իբր քաղաքավարութե և իմաստասի-  
րութե պատկեր մը ձևացընելով գրաւ ա-  
մենուն առջին, և ասով փիլիսոփաներէն  
երևելի եղաւ, որ առաւել գործքով քան  
թէ խօսքով վարդապետեց:

Ծնաւ Եզովբոս Ամորիոն քաղաքը մեծին  
Փռիւզիոյ (1), և սնաւ ծառայական վիճա-  
կի մէջ: Ասոր շատ յարմար կուգայ Պղա-  
տոն փիլիսոփային գեղեցիկ խօսքը. որ Կ-ը-  
իիս ըսուած տրամախօսութե մէջը ճշմար-  
տութիւն կը խօսի, թէ || Բնութիւն ու օրէնքը  
շատ անգամ իրարու հակառակ են ||: Ասն

ՁԷ, Ինչպէս յայտնի է Ածաշնէն: Բայց գիտն-  
ները երէտ Կէստի իւր Բաթնէն առասպելը. Կ Բա-  
նական, որ Տարգոն Բարեց իւր յայտնէ. և շեքած  
Բանը՝ Երծի պէս իւր յեանքնէ. Ինչպէս է հէ ա-  
ռասիւ Եղնւլբոսին, և անոր նմանները: Բ Բարոյ-  
ական, որ անբաններուն Բարեց Բարաբարելու խրա-  
իւր հանէ. Ինչպէս է Բ և այլ առասպելները Եղնւլբո-  
սին: Գ Խառն. որ իւր յեանքնէ, Բէ Տարեց իւր  
խօսի անբանին հետ. Ինչպէս է Ե առասիւ, և Ե:

(1) Փռիւզիոս է գաւառ Ասիոյ՝ Գաղափի-  
ային ու հին Սփանդուին ՁԷ պեղը. որ շափ Կա-  
ղաթներուն Կալէ. ՁԷն ալ է Ամորիոն Կաղաթը,  
որ Ծնաւ Եղնւլբոս յաճախ 3400. Իբր  
600 Կարիստաւ Բ-ի Բնականէն. որ հին ապելնէն  
ի վեր շափ երևելի եղաւ իրեն առասպելները. Բէ

զի բնութիւնը տուաւ Եզովբոսին մեծութեան չափը . հոգի մը . բայց մարդկային օրէնքը դրաւ զայն ծառայական վիճակի մէջ . սակայն այս օրէնքը չկրցաւ այլայլել անոր հոգւոյն ազատութիւնը . երբոր իր գերի վիճակը՝ զինքը մէկ դիէն մէկալ դին նետելով կը չարչարէր . և զանազան վիշտ նեղութիւնները՝ ոչ երբեք կրցան զայն իր բնական կարգէն փոփոխել:

Բաւական չեղաւ Եզովբոսին գերի վիճակը, այլ և գէմքը խիստ դարչատեսիլ էր. անանկ որ աշխարհք չէ եկած այնպիսի տգեղ մարդ . վասն զի գլուխն էր սրածայր երկայն, քիթը տափակ, վիզը հաստ ու կարճ, պոկունքը թանձր, գոյնը սեւ, կապուտ . և այս պատճառաւ կ'ըսուէի Եզովբոս, այսինքն Եթիօփ . որ կը նշանակէ եթովպացի (1): Ասկէ 'ի զատ փորն էր չափազանց դուրս, կռնակը

դէպ գերի ծնաւ, բայց ճար ըրաւ . Անէն + Գեոյ Բարոյական թիւիստոյան-նի սորվեցաւ, որ շատ յարգելի ուսումնէր . Բայց Գեոս - որ այն վիճակին մէջ այլոց բան չընտր սորվեցընել, սխալ էր Գեոյանիւնէրուն Բերնէն խօսելով այս առաջինը ընել, որ Գեոն առով Կարենայ Բարի վարտ սորվեցընել . որ շատ մեծ յարգումն ունեցաւ նախ Եթովպացի մէջ, որ Սիրապ թիւիստոյան ան ապենը Գեոսն - որ Գարիս - Բուր - առաջինէր, և յետոյ ալ մէն ազգ Բարգմանեց ախորժելի ըլլալնուն համար:

(1) Եզովբոսին ծնողը Եթովպացին, իմ հապեղաւ Կալմերէն եկած Ժախոսած էին Փոխագիտ մէջ . ուստի իրեն + որուն որ Գերին էին, Եզովբոս ալ նախ անորն էր. յետոյ Ժախոսեցաւ Գարիւնէրուն:



ծուռ սապատողն (խամպուռ) . այնչափ որ ասոր տգեղութիւնը աւելի էր քան զԹերսիտէսին (1) . որ ծիծաղելով կը նկարագրէ Հոմերոս : Ամէն բանէն աւելի մեծ պակասութիւն էր գոլարախօսութիւն . որուն խօսքն էր աննշան և ձայնը անորոշ (2) :

Ահա այս ամէն պակասութիւններս յարմարեցան Եզովբոսի ծառայական վիճակին , որ այնպիսի արտառոց բաներու մէջ գտնուելով այս տգեղ և անյարմար մարմնովը ինչպէս կրցաւ իր ծառայական կեանքը վարել : Թէպէտ ասանկ անշնորհք էր դրսի տեսքը , և մարմինը այլանդակ . բայց հոգին Եզովբոսի ազնիւ էր , սրամիտ և քաղաքավար . որ զանազան գիւտերով և խելքով լեցուած՝ չուտով կը գտնէր ամէն բանին հնարքը , որչափ խրթին և նուրբ բան ըլլար (3) :

(1) Թերսիտէս յոյն անանկ գարշապետիւ էր իաղ , անշնորհ , որ պարտիւնէրը առաւ էին ըրեր . ինչպէս Հոմերոս Բանաստեղծն աւ ծառք ընելահամար անոր իերպարանս իշնիարագրէ : Այս քֆել և անպարծ մարդը օր մը քնաց հերթիւնս քաջին քով , ան աւ մէյ մը յետքով զարթոյն պէս ընկաւ . իբր 1200 քարի Քնի թռականէն առաջ :

(2) Բւանաստայողէս քֆել իշնիարագրէ . Բայց իսն ուրիշն թէ Եզովբոսին ինչպէս որ խելս գեղեցիկ էր , անանկ աւ մարմին . և ինքս յարմար քաղցրաստայն երածիչս էր ամենէն վեր :

(3) Եստա առաքինէր խառնուեցան Եզովբոսին առաքինէրուն հէպ . անանկ որ Եզովբոսէն առաջ և յետոյ շինուած առաքինէրուն շարք Եզովբոսին գործին մէջ խառնուեցին : Այս պարծառաւ որչափ

## ԳԼ . Բ .

## ԶԵՊԱՐԳՈՒԹԻՆԻ ԵՂՈՎԲՈՒՒՄ :

Եղովբոսին առջի տէրն որ զինքը գնելու էր՝  
ասանկ կոչտ, անշնորհք տեսնելով զայն, միա-  
քը դրաւ թէ տանը ծառայու թիւնը չափաի  
կրնայ ընել, ուստի արար խրկեց որ հոն  
երկիր փորելով աշխատի . բայց Եղովբոս հոն  
գացածին պէս սկսաւ անանկ լաւ աշխատիլ  
սրտանց որ չկրնար ըլլալ : Օր մը տէրը գե-  
ղին տունը գնաց անտեղի գործքերը նայելու  
համար . մէկ պարտիզպան մը տեսնելով ա-  
նոր գալը՝ ընծայ բերաւ իրեն աման մը խիստ  
ազնիւ և պատուական թուղ, որ սիրով ա-  
ռաւ հաճեցաւ, ու տուաւ պահելու իր մէկ  
ընտանի ծառային, որ կ'ըսուէր Ագաթօբոս  
(1), որպէս զի երբոր բազնիքէն ելէ՝ առ-  
ջին բերէ : Այս միջոցիս մէջ պէտք եղաւ որ  
բանի մը համար Եղովբոս տունը մտնէ : Ագա-  
թօբոս այս բանն իրեն առիթ ընելով գնաց

ԵՂՈՒՄԻ ՄԵՋ ՈՐ ԲԱՐԳՄԱՆԱԺ ԿԱՅ, ՌԻՍԻԵՐԿ ԷՆ . .  
ԴՈՒՆ ՄԵՋ ՄԱՆԷԼԻ Է, ՈՐՈՒՆ ՄԵՋ ՍԱԽԱՍ :

(1) ԱԳԱԹՈՐՈՒՄ ԿԵ ԲԱՐԳՄԱՆԻ ԲԱՐԵՆՈՒՄՆ ԿԱՆ  
ԳՈՆԵՍ) . ՈՐ Ի՛ՆԵՐԵՆԱՅ ԲԷ ԲԱՐԳԱՆԱՐԺ ԱՆԽԱՅԺ  
ՏԱՐԵՐ ԸԼԱՆՎ ԱՅՍ ԱՆՈՒՄԻ ԿԵ ԿՈՆՈՒՆԵՐ . ԵՄ ԱՆՈՎ  
ՌԻՍԵԼԻ ԵՆԱԺ ԷՐ ԳԻՐՈՋՆ ՈՐ ՀԱՄԱՐԺԱԿԵՂԱՍ ԱՅՍ  
ԶԵՊԱՐԳՈՒԹԻՆԻ ԸՆԵԼՈՒ ԵՂՈՎԲՈՒՒՄ ԺՐԱՅ :

իր ընկերներուն մէկին ըսաց թէ Եկո՛ աս  
 թուղերը մենք ուտենք . երբոր մեր տէրը ու-  
 զէ , Եզով բոսին վրայ կը ձգենք թէ տունը  
 մտնելու ատենը կերաւ ծածուկ : Այս բա-  
 նիս վրայ մենք կրնանք շատ սուտեր շինելու ,  
 որ ճշմարիտ երևնայ . անանկ որ Եզով բոս  
 չկարենայ այս զրպարոտութէս զինքն արդա-  
 րացընել . որովհետեւ անոր վկայութիւնը չի  
 կրնար դէմ կենալ մեր մէկ խօսքին՝ երբոր  
 լաւ հաստատենք . հապա ի՞նչպէս պիտի կա-  
 րենայ մեզի սուտով յաղթել . մանաւանդ  
 մեզի պատասխան տալու մէկ պատճառ մը  
 ցուցմունիք մը չունի :

Ասանկ խորհուրդ ընելէն ետեւ այս ըրած  
 միաբանութեւ չար խորհուրդը կատարեցին ,  
 ու ամէն մէկ թուղն ուտելու ատենը բարձր  
 ձայնով կը ծիծաղէին ըսելով . || Այ՛ . քեզ  
 ողորմելի Եզով բոս || :

Ելաւ տէրը բաղնիքէն և ուզեց որ թուղը  
 բերեն . երբոր լսեց թէ Եզով բոսը կերաւ ,  
 անանկ բարկացաւ , որ մէկէն հրամեց դի-  
 մացը հանեն . որ տեսածին պէս կանչեց ,  
 այ՛ թշուառական , ինչպէս յանդգնեցար մտար  
 սեղանատունն ու կերար . թուղերն որ ինծի  
 համար պահուած էր :

Եզով բոս լսելով այս յանդիմանութիւնը լաւ  
 հասկը ցաւ բանը . բայց դժուարութիւն հոն  
 էր՝ որ չէր կրնար խօսք արտաբերել ու պա-  
 տասխան տալ : Այս պատճառաւ չուտով  
 յաղթուեցաւ սուտ վկաններուն խօսքովը . և  
 տեսաւ թէ չարաչար ծեծ պիտի ուտէ , ըն-  
 կաւ տիրոջը ոտքը մեծ աղաչանքով խնդրեց ,  
 որ քիչ մը ատեն տայ իրեն : Ուստի վազեց

կերակուր եփելու տեղն ու քիչ մը տաք ջուր  
բերաւ հոն խմեց. յետոյ մատը խօթեց բեր-  
նին մէջ սիրտը ետ բերաւ : Նայիս բերնէն  
պարզ ջուր եկաւ , վն զի բոլոր օրը բան չէր  
կերած : Ետքը աղաչեց տիրոջն որ հրամայէ  
ամբաստանող թշնամիներուն , որ անոնք ալ  
անանկ ընեն . որպէս զի յայտնի ըլլայ թէ ո՛վ  
է կերեր զանոնք , և ուրիշի խօսքով չխաբուի :

Իսկ տէրը զարմանալով անոր սրամիտ ու  
չիմութեր վրայ , պատուիրեց որ սուտ վկա-  
ներն ալ խմեն այն ջրէն իրեն առջին : Անոնք  
ալ խմեցին , բայց փոխանակ որկորը (պաշտօն) <sup>պաշտօն</sup>  
տանելու մատը , գէպ'ի ընտերքը տարին , որ  
չփսխեն : Սակայն հազիւ թէ խմելը լմն-  
ցուցին , ներսերնին աւրուելով գանիլ մը ե-  
կաւ իրենց , և ահա բոլոր կերած թուղերը  
դուրս եկան . որոնց յանցանքը և անօրէն զը-  
ստարտուելը յայտնի եղաւ ամենուն : Իսկ տե-  
րը հրամայեց մէկալ ծառաներուն , որ զա-  
նոնք մերկացնեն , և լաւ մը ծեծեն : Որոնք  
ան ատենը իրենց վրա փորձելով լաւ հասկը-  
ցան այս ճշմարտութիւնը առակին , որ կ'ըսէ .  
|| Ո՞վ որ նենգութեմբ չարութիւն կը ստարտա-  
տէ ընկերին , իր գլխուն կը բերէ այն բո-  
լոր չարիքն որ ուրիշին համար կուզէր || (1) :

(1) Եղովթանին այս առակի փերը իբրեանայ Բէ-  
Փաի-գիս Գնէր եր Եղովթան Անկէ+էն դատանա-  
լէն երև. Իսկ Անկէ+էրեւան' Ժողովին որիւրջ հրա-  
մանալէ պիտի ըլլայ . որ Պետեւելէն ետեւ առոր Ժա-  
խոռած իբրեանայ . Իսկ այս մարդէրէսա Պեծադոռն  
եր , Բայց անիմաստ ըլլաւ ի Եղովթանին յարգը  
լիպեր :

## ԳԼ. Գ.

## Հիւսիս-արեւելեան Եզն-Բաւ:

Միւս օրը տէրը քաղաք դարձաւ. և Եզով  
բոս երկիր փորելով կ'աշխատէր ինչպէս որ  
պատուիրած էր իրեն: Եղաւ որ Արաւմի-  
սին (1) քուրմերը ուրիշ մարդկանց հետ  
դիպուածով ճամբայէն մոլորեցան և ժողո-  
գալով եկան Եզովբոսին հանդիպեցան,  
երդումով աղաչեցին թէ վանատուր Դիո-  
սին (2) համար ըլլայ քաղաքին ճամբան ի-  
րենց ցցրնէ: Ան ալ շուտ մը զանոնք նստե-  
ցուց ծառին տակը՝ շուք տեղ մը, և իրենց  
քիչմը ուտելու բան հանեց լաւ մը մեծարեց.  
յետոյ պատուելով զանոնք առաջնորդու-

(1) Արաւմիս լածո-հին Տեր Տէլ Անահատ Իւ-  
սո-էր, որ հայոց ազգին գլխաւոր իսկո-ութիւն էր. Ու-  
իւհապ վարդապետն էր իր անունը: Առա-  
պաւանեց Իւսէին, որ այս լածո-հին Դիոսին աւ-  
ջին էր և Ապաղոնին գոյրը. որ Բուր Ասիային  
պաւապան էր իրեն. անոր համար ասոր գո-  
րն ալ (շէյխերը) ասանկ պապա-ւեցան Եզն-Բա-  
ւէն: Տէն Տեր Ճեմարանին 651 համարը:

(2) Դիոս իմ Արամապի՝ Կոռնոս ծեր լածին  
որդին ըստել, Բուր լածնէրուն հայրը իւ-  
ւո-էր և ամենուն գլուխը. որ հին իսապապանէր  
անանկ Տէծ իւր անունը, որ անոր անունը ինչ իւր-

Թի ըրաւ մինչև շիտակ ճամբան հանեց : Իսկ  
 ճամբորդները ուրախանալով Եզովբոսին  
 մեծարանացը վրայ, և անոր երախտիքը ճանչ  
 նալով՝ ջերմեռանդ սրտով Թեերնին վեր  
 ցուցին երկինքն ու աղօթք ըրին պաղատան  
 քով իրենց բարեբար Եզովբոսին համար : Ե  
 զովբոս դարձաւ իր տեղը, բայց ճամբուն աշ  
 խատանքէն և տաքէն յոգնած ըլլալով պառ  
 կեցաւ քնացաւ : Բայց քունին մէջ երազ մը  
 տեսաւ Թէ Բաղդը (1) մօտեցաւ իրեն, ու  
 լեզուն բացաւ և իրեն տուաւ զօրութիւն  
 խօսելու, և առականեր շինելու : Ո՛հ ըսաւ  
 արթննալով, ի՞նչ անոյշ քնացեր եմ, և ի՞նչ  
 բարի երազ տեսայ, ահա ի՞նչպէս զարմա  
 նալի դիւրութիւն կը խօսիմ, ահա առանց  
 դժուարութե կրնամ ամէն բանին անուն  
 ները տալ եւ, եւ, Բեւ : Գիտէ Երկնաւորն,  
 որ այս բարեքն ինծի եղաւ երախտեացս փո

Դիւր՝ ո՛ր ըսաւ՝ հարիւր իսպառելու եր : Ուստի  
 շաք անգամ օգնել գնած հայր իւրեան, և եր  
 Բեւ լանապոս, այսինքն խնամօղ : Տէր ճէմ. 619 :

(1) Որովհետեւ Բաղդոս այս պատմութիւնը  
 իտապալաներուն գրեանց մէջէն հաներ է. որոնց  
 + ուփարահանին (միւսաֆիրին) պատիւ օգնութի  
 լնելու՝ շաք մեծ բան եր. ինչպէս որ ամէն ազգի  
 օրէնքն է : Ուստի Եզովբոսին ըրած Բարեբարոսն  
 մեծութե հասկընելու համար, ի՛նչպէն թէ Բաղդոս  
 իրեն հապոստոս ըրաւ. որոնք թեպէք ի՛նչ իւրե  
 ին Բաղդը մէկ պատիւ լրա իեցած, որ շաք անգամ  
 Դիւրածով իտապայ Բարին անարժաններուն,  
 Լաւաներ որ արժանաւորին պայ. Բայց աստուծոյ  
 Դարձին աւ լեզու, Բարին պատիւ իւրե ի՛նչպէն :

խարէն, որ մուրտած օտարականներուն ըրի :  
Ուրեմն երբոր մէկը բարերարութի կ'ընէ ,  
պիտի յուսայ թէ հարկաւ իրեն ալ բարի  
կ'ըլլայ : Եզովբոս տեսնելով թէ այս մեծ բա-  
րիքն իրեն հանդիպեցաւ՝ ուրախութե լե-  
ցուած սկսաւ ալ աւելի հոգ տանելով աշ-  
խատիլ անանկ սրտանց որ չէ եղած :

ԳԼ . Դ .

Վաճառումն Եզովբոսի :

Չենաս անունով մէկը վերակացու էր  
գեղի տանը , ուր կ'աշխատէր Եզովբոս : Այս  
մարդը ելաւ արտը դնաց որ տեսնէ թէ  
ծառաները հաւատարիմ կ'աշխատին ինչ որ  
իրենց հրամայած է : Տեսաւ որ աշխատող-  
ներուն մէկը անհոգութե իր գործքը թո-  
ղուցեր չէր աշխատէր , մէկէն վրան վազեց  
սկսաւ սաստիկ ծեծել խեղճը : Այս ան-  
գթութեը չգիմացաւ Եզովբոս . սիրտը ցա-  
ւելով մօտեցաւ ըսաւ , ինչո՞ւ համար ասանկ  
չարաչար կը զարնես խեղճ մարդուն , որ  
քեզի գէշութի մը չէ ըրած . դուն այն մար-  
դը չէ՞ս որ ամէն օր բոլոր տանը մարդկանց  
նեղութիւն և չարչարանք կուտաս առանց  
պատճառի . իրաւ որ ըրածներդ կ'ըսեմ մեր  
տիրոջը : Չենաս լսելով Եզովբոսին զուր-  
ցած խօսքերը շատ զարմացաւ անոր համար  
ձակութեը վրա . ուստի մէկէն իմէ կ'ընէ իրեն



մամբնալով կ'ըսէր թէ ահա Եզովբոս խօսիլ  
 սկսաւ ասկէ ետեւ իմ բանս խիստ գէշ է .  
 մանաւանդ երբոր Թորս հասկընայ իմ ըրած-  
 ներս : Ուրեմն պէտք է որ ես Եզովբոսէն ա-  
 ռաջ խօսիմ, և ամբաստանութի ընեմ անոր  
 վրայ . վն զի Թորս իմ գործքերս իմացածին  
 պէս զիս կը վճընտէ պաշտօնէս :

Ասանկ մտածելէն ետեւ ճամբայ ելաւ քա-  
 ղաք գնաց տէրը գտաւ . և մօտենալով քովը  
 խռոված երեսով մը բարեւեց : Տէրը երեսը  
 նայելով հարցուց թէ ի՞նչ պատճառէ եկած  
 է քեզի այդ խռովութիւն , որ կերպարանքէդ  
 կ'երևնայ : Պատասխանեց Չենաս թէ դե-  
 ղի տունդ մէկ արտաքոյ կարգի հրէշ մը ե-  
 ղաւ : Ի՞նչ է ըսաւ տէրը , ծառերուս մէկը  
 ատենէ դուրս պտո՞նղ տուաւ , թէ ձիերս  
 ցուցանք ծնան : Չէ ըսաց Չենաս , հապա  
 Եզովբոս որ միշտ համր էր չէր կրնար խօսիլ ,  
 հիմա խիստ լաւ կը խօսի : Չայնդ վար քաշէ  
 ըսաւ տէրը . հրէշի տէ՞ղ ես դրեր այդ դի-  
 պուածը :

Արկնեց Չենաս . Թորս ճմարիտ կ'ըսեմ , որ  
 ես լռութենով անցայ , և չեմ պատմեր Եզով-  
 բոսին ինձի տուած նախատինքները . բայց  
 տէրութե՞դ և Աճներուն դէմ ըրած հայ-  
 հոյանքներուն , և յանդգնական խօսքերուն  
 չեմ դիմանար . ահա կը պատմեմ : Այս խօս-  
 քերս որ լսեց տէրը անանկ բարկացաւ Եզով-  
 բոսին վրայ , որ մէկէն ըսաւ թէ ահա այն  
 թշուառականը քեզի յանձնեցի , ի՞նչ որ կ'ու-  
 ղես ըրէ անոր . կ'ուզես ծախէ , կ'ուզես մէ-  
 կին տուր , ի՞նչպէս սիրտդ կ'ուզէ անանկ ըրէ .  
 վն զի ես բու կամացդ կը յանձնեմ զայն :




Զենաս երբոր բացարձակ տէր եղաւ Եզով  
 բոսին հասկըցուց անոր, թէ իր ազատու  
 թիր բոլորովին անկէ կը կախուի: Եզով բոս  
 ալ պատասխան տուաւ, թէ ինչ որ ձեռ  
 քէդ կուգայ ըրէ ինձի. և որ բանն որ հա  
 ճոյ է քեզի, իմ անձիս հրամէ: Այս խօ  
 սակցութեան վրայ յանկարծ վաճառական մը  
 եկաւ հոն անասուն գնելու համար. հար  
 ցուց Զենասին թէ ունի՞ս ծախու անա  
 սուն: Ան ալ չէ ըսաւ. բայց մէկ գերի մը  
 ունի՞մ ծախու, որ հոս մօտ է, ուզես կրնաս  
 գնել: Զայս ըսելով կանչեց Եզով բոսը առ  
 ջին: Իսկ վաճառականը երբոր տեսաւ անոր  
 կերպարանքը՝ սկսաւ ծիծաղել. Ուստի՞ դտեր  
 ես ըսաւ այս ցուցանքը, որ ստուկի նման  
 է: Մարդ է, թէ ծառի կոճ. թէ որ ձայն  
 ալ չունենար՝ սլիտի կարծէի թէ տիկ է հո  
 ղով լեցուն. ինչո՞ւ ճամբայէս արգելեցիք.  
 ասանկ մէկ այլանդակ մը ինձի ցընելո՞ւ  
 համար: Այսպէս խօսելով սկսաւ երթալ.  
 Իսկ Եզով բոս ետեւէն վազեց, կ'աղաչէր որ  
 քիչ մը կենայ. վաճառականը բարկանալով  
 կ'ըսէր, գնա՛ կորի՛ր գարշելի: Պատասխա  
 նեց Եզով բոս թէ հապա ինչո՞ւ համար այս  
 գեղս եկար: Եկայ որ ըսաց վաճառականը՝  
 լաւ բան մը գնեմ. բայց ինձի հարկաւոր չէ  
 ասանկ ագեղ, անպիտան մարդը, ինչպէս որ  
 դուն ես: Զիս գնէ՛ ըսաց Եզով բոս. եթէ  
 ինձի կաւտաս, քեզի նեղութի մը չեմ բերեր,  
 և անանկ լաւ ծառայութի մը կ'ընեմ, որ  
 մօրէդ ալ չէ անցած: Հարցուց վաճառա  
 կանը թէ ինչ օգուտ կրնամ յուսալ քեզ  
 ֆէ, որովհետեւ ասանկ կերպարանքի մէջ ես,

ամենուն ատելի և դարձելի կրլաւ : Պատասխանեց Եղովբոս թէ չունին տանդ մէջ անհանդարտ կանչուըւտող լալկան տղաք , զիս անոնց վրայ դիր , որոնք զիս տեսնելով իբր մէկ զարհուրելի բանէ մը կը վախնան : Խնդաց այս խօսքիս վրայ վաճառականը . ետ դարձաւ Զենասին հարցուց թէ ի՞նչ տամ որ ինձի տաս այս ողորմելին : Ան ալ ըսաց երեք դրամ(1) : Ա՛յ՜ վաճառականը հանեց ստանկը տուաւ ըսելով թէ ոչինչ տուի , ոչինչ գնեցի : Ուստի երկուքը միատեղ սկսան դնալ , և երբոր հասան վաճառականին տունը , երկու տղաք կային հոն , որ դեռ կաթ կ'ուտէին , տեսածնուն պէս սկսան պօռալ : Տէս ըսաւ տիրոջը ի՞նչպէս խոստմունքս կատարուեցաւ , հիմակուց վախցան տղաքը : Ա՛յ՜ վաճառականը խնդալով պատուիրեց որ մէկալ ծառաները բարևէ . որոնք տեսնելով զայն կը զարմանային իրարու ըսելով , իրաւ որ այս մէկ մեծ գժբաղդուծի մը կը նշանակէ մեր տիրոջն որ ասանկ անշնորհք մարդ գնեց , երևուծը կը ցցընէ թէ տանը պիտի բերէ մէկ գէշ ձախորդուծի մը (2) :

(1) Գաղաթացին իւրնէ (օւլօլ) . իսկ յոյնը (օփօլօս) . որ իւր նշանակէ՝ դրամ , քանի , նախարարիք . որ հին յոյներէ իւր գործածէին այս ստանի . Բայց յայտնի չէ թէ քանի դրամէն կ'արժէր մէկ (օւլօլը) , թէպէտ կ'երևնայ թէ յաժէր գինէ :

(2) Ուրվհէփն հեթանոսներէ առին բան իսլամադոնէն իւր մէկէն , միւլն բնական բաներն ալ այն մարդ կ'առնէին . զորօրինակ ալ ինչ խաղալէ , պատասխանը դիմացինն էլած մարդը , ևն . որ միւլն



ՃԱՐՈՐԴԱՆՈՒԹՅԱՆ ԵՂՈՎԲԱՆԻ:

395

Քանի մը օրէն ետե վաճառականը կա-  
մեցաւ Ասիա երթալ. ուստի ծառաներուն  
սկստուիրեց որ բեռները կապեն պատրաստ  
ըլլան որ մէկալ օրը ճամբայ ելեն: Անոնք  
ալ ամէն բան կարգաւորեցին ինչպէս որ տէ-  
րը սկստուիրէր էր, և բաժնեցին իրենց մէջ  
բեռները ինչ որ ամէն մարդ պիտի տանէր: Ե-  
զով բոս կ'աղաչէր որ իրեն թեթեւ բեռ տան,  
որովհետեւ ամմէնէն ետքը նոր եկած ըլլալով  
ասանկ բաներու սորված չէր: Անոնք ալ  
զինքը սարսաւորեցին որ բան մը չառնէ,  
և աշխատանք չքաշէ: Պատասխանեց ա-  
նոնց թէ արդարութի չէ առանց աշխատան-  
քի մնալ, ամէն մարդ պէտք է իրեն բեռը  
տանէ: Ընկերներն ալ իրեն կամացը ձգե-  
ցին, ինչ բեռ որ ուզէ, զայն թող տանի ի-  
րեն յարմար: Եզով բոս ասգին անգին նայե-  
լով կը գիտէր բեռները, ամանները և սուպ-  
րակները. աղաչեց որ հացին ամանը իրեն  
կռնակը տան, որ երկու հոգւոյ բեռ էր.  
ուստի սկսան ամմէնքը խնդալ վրան ըսելով

հիմա միամիտ երեւեալ պահէն: Ահա Եղովբոսին իե-  
պարանոն նայելով աշէի ըսեպէն, իւրծեալ  
նէ քան յախորդոն պիտի բերէ:

Թէ այս խեղճ գերիին պէս անխելք մարդկայ արդեօք աշխարհքիս մէջ. որ իր յիմարու թիւ ահա ամենուն յայտնի ըրաւ. վասն զի խնդրեց թեթեւ բեռն ու ընտրեց առաւ խիստ ծանր բեռը: Սակայն պէտք եղաւ ահոր կամքը կատարել. ուստի բառձուցին վրան բեռը. որ այն ծանրութեւ տակը աշխատելով ասդին անդին կը գլորէր: Իսկ վաճառականը այնչափ բեռն անոր կռնակը տեսնելով կը զարմանար թէ այս ինչ ջանքով կ'աշխատի Եզովբոս. իրաւ որ կ'ըսէր՝ ահա իր գինը հանեց, զի ձիու մը բեռ մինակ կը տանի:

Երբոր հասան պանդոկ (խօնախ) մը, պէտք եղաւ բան ուտել. Եզովբոսին հրաման եղաւ որ ամէն ծառաներուն հաց բաժնէ. ան ալ որ բաժնեց՝ ամանին կէսը հատաւ կերակրէն ետքը, և բեռին կէսը թեթեւաւ անանկ որ շատ դիւրութեւ կ'երթար ճամբան: Իրիկունն ալ նորէն բաժնեց ծառաներուն հաց. ուստի մէկալ օրը Եզովբոսին ամանը պարպեցաւ, որ կռնակը զարկած առանց աշխատանքի կ'երթար ամենէն առաջ. որոնք չիտէին ինչ ըսեն, մինչև կը տարակուսէին, թէ իրենցմէ առաջ գացողը Եզովբոսն էր թէ ուրիշ մարդ. բայց երբ գիտցան թէ այն է՝ շատ կը զարմանային իրեն ճարտարմտութեւ վրայ, որ անանկ տգեղ, անշնորհք մարդ ըլլալով ծաղր էր եղեր իրենց, ու այնպիսի խելք բանեցուց հացին ամանն առնելով. զի լաւ գիտէր թէ այն բեռը շատ չափտի մնայ իրեն վրան: Իսկ ընկերներն ուրիշ բեռ տանելով չկրցան յոյս մը ունենալ, որ բե-

ռէն թեթեանն ճամբորդութե մէջ. որով  
հետեւ ծախսելու բաներ էին՝ չէին կրնար  
պակսիլ ուսեղու բանի պէս :

## ԳԼ . Զ .

Երկրորդ վաճառահան իշխութեան :

Վաճառականը Ասիա հասաւ, և հոն իր  
գերիներուն շատը ծախեց աղէկ գնով. մի-  
այն երէք հոգի մնացին քովը. մէկը նոտար  
(Եաղճը), մէկը երգիչ (հանէնփէ), մէկուն ալ  
Եզովբոս : Վաճառականին մէկ բարեկամը  
իրեն խորհուրդ կուտայ, թէ այս երէք  
գերին ծանր գնով ծախելու համար Սամոս  
կղզին (1) երթայ հոն ծախէ : Երբոր հասաւ  
հոն աղէկ լաթեր հագցուց նոտարին ու եր-  
գիչին, վաճառանոցը (Ժաղաւը) հանեց, որ  
ծախէ : Բայց Եզովբոսին յարմար բան մը չի  
գտաւ հագցնելու, որ քիչ մը զարգարուի .  
որովհետեւ անանկ անձոռնի էր մարմինն՝ որ  
միայն մէկ քուրձ մաղէ հագուտու մը կրցաւ

(1) Սամոս կղզի ըստ ԳՃ. (սուսամատասը)  
է Եփեսոսին Դիմարը Միփիւլիէն անդին, որ հին  
աքեմը չէն ընաւել վաճառահանութի փեղ էր Ե-  
փեսիւլը անոռնի էին. որ իսկեւ աման չէնեւ  
առնէ Գփան ի՛նչ Պլիւիոս. այս կղզիէն էր  
Պի-Բագորաս թիւիոթան :

հագցրնել, և անանկ այլակերպ դրաւ ընկերներուն մէջ. որոնք որ կը տեսնէին՝ զարմանալով կ'ըսէին թէ այս հրէշս ուրիշ բանի չի գար, հապա մէկալոնք ալ կ'աւրէ: Եղովբոս թէպէտ միշտ ասանկ ծաղը կ'ըլլար անարգութեամբ ամէն տեսնողներէն, սակայն ամենեկին չէր այլայլէր, և ամենուն ուշ գնելով միակերպ կը նայէր: Քսանթոս (1) փիլիսոփան ան ատենը Սամոս կղզին կը բնակէր. որ մը ելաւ վաճառանոցը գնաց, երբոր տեսաւ թէ այն երկու ծառաները լաւ հագուած էին, և Եղովբոս անոնց մէջ անանկ անշնորհք հագուստով՝ շատ զարմացաւ վաճառականին հնարքին վրայ թէ այն այլակերպ մարդը դրեր է մէկալոնց մէջն, որ անոր անշնորհք երևնալովը մէկալոնք քաւելի գեղեցիկ երևնան:

Ուստի այս փիլիսոփան մտնեալով անոնց՝ հարցուց երգիչին թէ ի՞նչ տեղէ ես: Ան ալ պատասխան տուաւ թէ Վապագովկացի (2) եմ: Հարցուց թէ ի՞նչ գիտես ընել: Ան ալ

(1) Այս փիլիսոփան Բեպէս շաք երեւելի չէր, Բայց այն կղզիին մէջ մեծ ունուն ունէր. լասն շի քաշափն Դպրապանը գլուխն էր, ու շաք աշափներան էր ունէր, և շաք մեծ ունի. միւլն ամենուն առջին ցարգելի էր:

(2) Վապագովիա կ'ըսուի (զայսերի). որուն բնակիչները Գամբրէ կը կոչուէին: Արեւմտայ Բէայն գետին արեւելեան կողմերէն եկած Վապագովիա երկար Ժաւով Բան սորվէր է, իմ ծննդէ 400 եկած Ժախոսած էն, և իրենց զաւակն ալ գետի ընկած լաճառախանը գնէր է:

ըսաւ, ամէն բան գիտեմ: Այս պատասխանին վրա խնդաց Եզովբոս ակռաները բանալով: Քսանթոսին աշակերտները իրեն հետ ըլլալով Եզովբոսին երեսն որ տեսան անանկ ակռաները բաց, կարծեցին թէ մէկ ցուցանք մըն է. որոնցմէ մէկը կ'ըսէր թէ անտարակոյս այս մէկ կատղած կենդանի մը պիտի ըլլայ, որ ակռաները բացաւ: Մէկալն ալ կ'ըսէր թէ արդեօք ի՞նչ բանի համար ծիծաղեցաւ: Մէկ ուրիշն ալ կ'ըսէր թէ սոսկալով խոժոռեցաւ ու դէմքը ծռեց, չէ թէ ծիծաղեցաւ: Ուստի ամէնքն ալ ուզեցին հասկընալ անոր ծիծաղին պատճառը, մինչև մէկը մօտեցաւ Եզովբոսին հարցուց, թէ ինչո՞ւ համար անանկ խնդացիր: Ան ալ ըսաց. գնա՛ք ուլէս ծովո՛ւ ոչխար: Այս պատասխանն անանկ ամբօջուց զայն, որ տաքնալով մէկէն փախաւ:

Իսկ Քսանթոս հարցուց վաճառականին, թէ երգիչին գինը որչափ է: Ան ալ ըսաց հազար դահեկան: Քսանթոս տեսաւ որ չափազանց է գինը, գնաց մէկալ գերիին հարցուց. որ քաղաքէն էս: Պատասխանեց թէ Լիւդացի (1) եմ: Ի՞նչ բան գիտես հարցուց. Ան ալ ըսաւ՝ ամէն բան գիտեմ: Եզովբոս լսելով, նորէն սկսաւ խնդալ: Այս փիլիսոփային մէկ աշակերտը չիյտէր թէ ինչ պատճառաւ կը խնդայ, ուզեց հարցընել. բայց իր ընկերներէն մէկը զինքն արգիլեց ըսելով, թէ որ գուն ալ կ'ուզես ծովու նո-

(1) Լիւդացի՝ հին աքեմէն շաք էին Աթրիկէի գաւառին մէջ. որոնցմէ գերի էլած է Նոթարը:



խաղ կոչուիլ նէ հարցուր: Ան ատենը Քսան  
Թոս մօտեցաւ վաճառականին հարցուց Թէ  
քանի՞ է նստարին գինը: Պատասխան տը-  
ւաւ Թէ երեք հազար դահեկան:

Այս չափազանց գինը Քսան Թոսին սիրտը  
նեղացուց, ուստի սկսաւ ետ դառնալ: Բայց  
աշակերանները հարցուցին Թէ չհաճեցա՞ր  
գերիններուն. հաճեցայ ըսաց, իմ ուզածս  
են. տակայն օրէնք դրած է, որ մէկ գերիի  
համար այնչափ տօակ չտրրուի: Եթէ այդ-  
պէս է ըսին՝ օրէնքի դէմ չըլլար, Թէ որ տը-  
գեղ գերին գնես, որ անոնց չափ քեզի ծա-  
ռայութի կրնայ ընել. և մենք կը վճարենք  
անոր գինը ինչ որ կ'արժէ: Պատասխանեց  
Քսան Թոս, Թէ խելքի դէմ բան է, որ դուք  
գնէք՝ ես ծառայի տը ըլլամ: Ո՛ւր Թողունք  
որ իմ ընկերս աւելի զարդարանք և մաքրու-  
թի կը սիրէ, նայինք կուլէ՞ ասանկ աղտոտ  
և այլանդակ ծառայ: Անոնք ալ ըսին Թէ  
այս պատճառը չկրնար խափանել, որ  
չգնես այն գերին. որովհետեւ առակ մը կայ  
կ'ըսէ, որ պէտք չէ հնազանդիլ կնկան խօս-  
քին, և անոնց շատ մօտիկ ընել:

Քսան Թոս ըսաւ, Թէ քանի որ չենք գնած  
երթանք նայինք բան մը գիտէ. չըլլայ Թէ  
ծովը նետենք տուած ստակնիս: Ուստի մօ-  
տեցաւ Եղովբոսին ըսաց, ուրախ կեցիր: Ին-  
չո՞ւ համար՝ հարցուց Եղովբոս, մի Թէ ես  
տրտո՞ւմ եմ: Քեզի կը բարեւեմ ըսաւ Քսան  
Թոս. ան ալ ըսաց և ես քեզ կը բարեւեմ:  
Ամենքը զարմացան այս շնորհքով պատաս-  
խանիս վրայ: Հարցուց Քսան Թոս, Թէ դուն  
ուստի ես: Ես ըսաց՝ սե եմ: Այն չէ հար-



ցուցածս ըսաց . ես կ'ուզեմ իմանալ թէ  
որքաղաքէն ես , և ո՞ւր տեղէն : Ես մօրմէս  
եղեր եմ , ըսաց Եզովբոս :

Այն չեմ ուզեր գիտնալ ըսաց , հապա  
սուր տեղ ծնած ես : Պատասխանեց Եզով  
բոս , թէ իմ մայրս չէ պատմած ինծի , թէ  
ո՞ւր ծնած եմ . տանը վէրը , թէ բակը (1) :

Ի՞նչ բան գիտես՝ հարցուց Քսանթոս :  
Ան ալ ըսաց՝ բան մը չկտեմ : Ի՞նչ ըսել կ'ու  
զես՝ հարցուց : Պատասխան տուաւ Եզովբոս .  
որովհետեւ այս գերիներն ըսին թէ ամէն  
բան գիտենք . ինծի բան մը չմնաց գիտ  
նալու : Այս խօսքերուս վրայ խիտ շատ  
զարմացան փիլիսոփային աշակերտները : Ի  
րաւ որ , կ'ըսէին զարմանալով , այս մարդը  
յայտնի ըրաւ իրեն խելքն ու միտքը այս  
խօսքերովս . ո՞վ կրնայ պարծենալ թէ ամէն  
բան գիտեմ . ահա այս է եղեր պատճառն  
որ կը խնդար և ծաղը կ'ընէր առոնց տուած  
պատասխանը :

Նորէն հարցուց Քսանթոս , կ'ուզե՞ս որ  
քեզ գնեմ . ան ալ ըսաց թէ այս խօսքդ ա  
մենեւին ինծի հարցընելու բան չէ . կ'ուզես  
գնէ , կ'ուզես մի գներ . քու միտքդ ինչ որ  
կը վկայէ , զայն ըրէ . պէտք չէ որ մարդս  
բռնի ակամայ բան ընէ այս գործքս բոլո  
րովին . քուկին կամքէդ կը կախուի : Թէ որ  
կ'ուզես զիս գնել , բաց քսակդ ու ստակ

(1) Հին ապենի իմաստականներուն մէջ սովորութի  
էր այսպիսի հարցմանս պատասխան ընել : Եզով  
բոս ալ անոնց սովորութեանը նայելով այս ոճ  
բանէր . մնէն զարմացուց իմաստականները :

համբէ . և եթէ չես ուզեր գնել , հանգիստ  
կեցիր , ալ մի խնդար վրաս : Աշկերտներն  
իրարու կ'ըսէին թէ ճամարիտ որ մեր վար  
պետին յաղթեց : Թէ քեզ գնեմ , ըսաց , Քսան  
Թոս , պիտի ջանամ փախչելու : Եզովբոս ծի  
ծաղելով ըսաց , եթէ ուզենամ փախչել , քեզի  
չեմ հարցըներ , ինչպէս որ քեզ ալ պէտք չէ  
ինծի հարցընել : Լաւ կը խօսիս ըսաց Քսան  
Թոս , բայց խիստ աշխուհակ ես : Պատաս  
խանեց Եզովբոս թէ փիլիսոփային կը վայլէ  
որ մարդուս խելքին ու հոգւոյն նայի , չէ  
թէ գէմքին :

Ան ատենը ՔսանԹոս գնաց վաճառական  
նին հարցուց , թէ այս գերիին գինը ինչ  
է : Ան ալ ըսաց թէ եկեր ես որ իմ գերի  
ներս վաճառեմ , լաւ և գեղեցիկ գերի  
ներս չուզեցիր գնելու , հիմա եկեր տգեղ  
մարդուն Թոս կ'ելէս , կ'ուզես մէկալ երկու  
սին մէկը գնէ . ապա աշանոնց վրայ ան առանց  
ստըկի : Չէ , ըսաց , ՔսանԹոս , ես պիտի զայս  
գնեմ : Ուրեմն տո՛ւր , ըսաց , վաճառուն դահե  
կան : ՔսանԹոսին աշկերտները շուտով հաւ  
րեցին ստակը , և գնեցին Եզովբոս : Մաք  
սաւորները (Լիշապաններ) եկան քննելու ,  
թէ ո՞վ է ծախողը , և ո՞վ է գնողը . բայց երբոր  
հասկըցան թէ ոչինչ գնով է ծախուածը ,  
ամբչցան : Իսկ Եզովբոս ոտքի վրայ ելաւ կան  
չեց թէ ահա ես եմ ծախուողը . ահա զիս  
ծախողը և գնողը . թէ որ ասոնք ձայն չի հա  
նեն , ես ազատ կը մնամ : Մաքսաւորները  
ծիծաղելով մաքս չառած ելան գացին :

## ԳԼՈՒԽ,

Եղովբոս երկուսի մասին :

Երբոր Քսանթոս տուն դարձաւ պատուիրեց Եղովբոսին, որ դռանը քով սպասէ, որովհետեւ գիտէր որ կնիկը բանի մը չէր հաւնէր, այն այլանդակն որ տեսնէ՝ չըլլայ թէ բարկանայ. ու զեց նախ անուշ քաղաքավար խօսքերով սիրաբը շահել, ու յետոյ ներս բերել կոշտ Եղովբոսը: Քսանթոս ներս մտաւ, մօտեցաւ կնկանն ըսաց, թէ Տիրուհի ասկէց ետեւ ալլ երեսս չես զարներ աղախիններուդ աշխատանքը. ահա քեզի ծառայ մը գնեցի, որ իմ առջիս անանկ ազուոր շնորհքով է, որ այնպիսի սիրուն մարդ չես տեսած. ահա դռանը քով կեցեր է: Երբոր ասանկ կը խօսէր՝ աղախինները վազեցին որ տեսնեն, և կը մտմտային, թէ որերնո՞ւն հետ պիտի բարեկամ ըլլայ: Իսկ Տիրուհին հրամեց որ ներս գայ նոր գերին: Աղախիններուն մէկը վազեց կանչելու համար, երբոր տեսաւ, դո՞ւն ես ըսաւ Եղովբոս ծառան. թէ որ դուն ես՝ ներս մի մօտեր, վա՞զի քեզ տեսածնուն պէս ամէնքը պիտի փախչին: Մէկ ուրիշն ալ դուրս ելաւ ծաղր ընելով կըսէր թէ դէմքդ փոխէ անանկ ներս մտի՛ր:

Եղովբոս ներս մտաւ գնաց Տիրուհիին

առջին, որ տեսածին պէս աչքը դարձուց  
երկանն ըսաց, ո՛ւր տեղէն փնտրուցիր  
գտար այս ցուցանքս. վերցնուր առջիկէս վեր-  
ցնուր: Կ'աղաչէր Քսանթոս թէ մի խռովիր,  
մի անարգերնոր գերիս: Ես ի՞նչպէս կրնամ  
համբերել կ'ըսէր կինը. ահա ասով հասկը-  
ցայ որ դուն զիս քամահրել կ'ուզես, ու կ'ա-  
տես. կ'երևնայ թէ ուրիշ մը կ'ուզես բե-  
րել, անոր համար այս գերին բերիր, որ ես  
իզմէ երթամ տնէն. ուրեմն տուր իմ բա-  
ներս, ես կ'երթամ:

Քսանթոս տեսաւ որ չըլլար, սկսաւ ա-  
նարգելով ըսել Եզովբոսին թէ ամէն բանի  
պատասխան կուտայիր, հիմա ինչո՞ւ կնկանս  
բան մը չես զուրցեր: Պատասխանեց Եզով-  
բոս թէ մէկ փոսի մը մէջ ձգէ կնիկդ:  
Կտրէ ձայնդ ըսաց, չատ մի խօսիր սիրելի  
ընկերոջս դէմ: Եզովբոս ոտքը գետինը զար-  
նելով կ'ըսէր թէ ահա տրս գերի բռնուած  
է կնոջմէն: Ո՞վ մեծդ Եւրիբիտէս (1), չու-  
նիմք ու ճարտասանուիդ որ քեզի պէս խօ-  
սիմ. խիստ լաւ կ'ըսէիր թէ || ծովուն կա-

(1) Եւրիբիտէս երայն բանաստեղծ երեւելի,  
Սալամինա իշխէէն, ուր ծնաւ շաքաղաւթի աստուծ  
Քրիստոսիանէն. որ Տէլֆորած Ժայռի (խայայի)  
Տէմէլ+աշտած իւր գրեթէ բանաստեղծութիւնները,  
որոնք շաքաղաւթի յարգութիւն ունեցան յունաց Տէլ-  
այս գրութեան երէն միւլա հիմա իւր գրութիւն: Եւ-  
րիբիտէս շաքաղաւթի անունը գործեց Տիպեւով  
անունը Տէլ շաքաղաւթի խօսակեր և լծիւնէր  
իւրեք այնչափ որ անունը Տրին կանանց թշնամի,  
անոյ այս բաներէն բերած է Եզովբոս այս խօսքն:

տաղութիւնը սոսկալի է, դետերու՛ն առատա-  
նալը սարսափելի է, կրակին բռնութիւնը ա-  
ղետալի է, և աղքատութիւնը անտանելի  
խեղճութիւն է. հազար կերպ պատահմունք-  
ներ կան, որ արտմութիւն և վիշտ կը բերեն,  
սակայն անզգամ կնիկը ամէն չարութիւններէն  
աւելի է ||: Այս գիտնական բանիս վրայ  
մտածելով ո՛վ Տիրուհի, քեզի շատ մեծ բան  
է որ ասանկ փիլիսոփայի կնիկ ես եղեր.  
խելքդ գլուխդ ժողուէ, չըլլա՛ թէ աղուոր  
մանուկ ծառայ առնես քեզի, որ անպա-  
տուութիւն մը չբերես ընկերոջդ:

Այս խօսքս կնկանը խելքը տարաւ, ա-  
նանկ որ չէր գիտէր ինչ պատասխան տայ.  
մինչև դարձաւ երկանն ըսաց թէ ուստի դը-  
տար այս շնորհքով դերին. իրաւ կ'ըսեմ, որ-  
չափ ագեղ և այլանդակ է, այնչափ սիրելի և  
անոյշ է. ուրեմն ես հետը կը վարուիմ կ'ու-  
ղեմ: Քսանթոս դարձաւ Եզովբոսին ըսաց,  
թէ ահա Տիրուհիդ քեզի հետ հաշտուեցաւ:  
Պատասխանեց Եզովբոս թէ ուրեմն այնչափ  
խեղճ մարդ չեմ եղեր ես. որովհետև մէկ  
կին մը հաշտեցրնելը պզտիկ բան չէ: Ձայնդ  
վա՛ր քաշէ ըսաց արը, ես քեզ գնեցի, որ  
ինձի ծառայութիւն ընես, չէ թէ գիտագար-  
ձութիւն:

## ԳԼ . Ը .

Պատասխանատուութիւնք :

Քսանթոս մէկալ օրը հետն առաւ Եղով  
բոսն ու գնաց սլարտէզ մը բանջարեղէն գը-  
նելու համար : Եղով բոս առաւ ձեռքը սլար-  
տիւզպանին ժողուած կանանչեղէնները . Քը-  
սանթոս ստակը տալու ատենը, սլարտիզպա-  
նը այս խօսքս ըսաց . Կ'աղաչեմ, մէկ բան  
մը պիտի հարցընեմ, ինչի սլատասխան տո՛ւր :  
Ի՛նչ է տարակոյսդ հարցո՛ւր ըսաց : Չեմ  
հասկընար՝ կ'ըսէր, ինչո՛ւ համար բանջարե-  
ղէն բոյսերն, որ այնչափ հոգ տանելով կը  
տնկեմ, կը ջրեմ, ու ասանկ ուշ, և դժուա-  
րաւ առաջ կուգան . և ընդ հակառակն՝ ինք-  
իրմէ բուսած խոտերը առանց փորելու և  
ջրելու շուտ առաջ կուգան . ի՛նչ է պատ-  
ճառը :

Այս խօսքս թէպէտ փիլիսոփայական  
ինդիւր է, բայց Քսանթոս չհկրցաւ լուծե-  
լու . այլ մէկ ընդհանուր սլատասխան մը  
տուաւ թէ օյ նախախնամութեան գործքն  
է, որ ամէն բան կը կարգաւորէ (1) :

(1) Նախախնամութիւնը ի՛շտո՞ւի քե՛սւն-ի, քե՛քե-  
սն-ի . հին ի՛նքն-տէրեւեց ասով ի՛մանային անային  
խառնաբոյժին, որ ամէն բան իւր կամսովը անանի կը  
կարգաւորէ՝ որ իրենց լախճանին կը հասնին : Կա-  
պալաք ի՛նքն-տէրեւեց լիւրջան ուրանաւ անային

Եզովբոս լսելով սկսաւ այս պատասխանիս վրայ խնդալ: Զիս ծաղր կ'ընէս, ըսաց փիլիսոփան, թէ կը ծիծաղիս: Պատասխան տըլաւ Եզովբոս թէ իրաւ ծաղր կ'ընեմ, չէ թէ հրամանքդ, հապա քեզի սորվեցընողդ. վս զի անանկ մէկ հասարակ պատասխան մը տուիր, որ գիտունները ամէն հարցմունքի կրնան տալ. որոնք բաւական կը կարծեն ըսել թէ ամէն բան Խոյ նախախնամութիւն կը կառավարէ: Ինչի հրաման տուր ես պատասխանեմ պարտիզպանին. տեսնես թէ ինչպէս կը հանգչի սիրաւ: Ան ատենը Քրսանթոս դարձաւ պարտիզպանին ըսաց թէ վայելուչ բան չէ որ ես երևելի գպրատուններու մէջ փիլիսոփայութիւնը բաժ եմ, հիմա կենամ պարտեզի մէջ բան վարդապետեմ. ահա իմ ծառաս ու կրնայ քու հարցմունքդ քակել թէ որ իրեն զուրցես. վս զի հմուտ է ասանկ բաներու պատասխան տալու:

Արկնեց պարտիզպանը թէ բէհ կրնայ ըլլալ որ ասանկ անշնորհք, կոշտ մարդը կարգաւ բան գիտնայ. սրչափ խեղճ բան է ասանկ տգեղ ըլլալը: Տեսնենք կրնաս իմ տարակուսանքս լուծել, և սիրոս հանգչեցընել այս ըսած բանիս վրայ: Եզովբոս սկսաւ ասանկ պատասխան տալ. երբոր մէկ կին մը երկու անգամ կը կարգուի, ու առջի էրկը-

նախախնամութիւն. զի «պէղծողը պէտք է պէղծածները իրաւարելով խաւով կ'ընէի»: Ահա այս մարդը պատասխան իրաւայ Քրսանթոս. որ բուն իրիշխութեան պատասխան չէ, ինչպէս Եզովբոսին:



նէն զաւակներ ունի, և առած մարդն ալ առջի կնոջմէն զաւակներ ունի. յայտնի է որ այս կնկանը հարազատ զաւակները հետը բերածներն են, և էրկանը զաւակները իրեն խորդ են. այս պատճառաւ տարբեր կերպով զանոնք կը նայի, մեծ հոգ կ'ընէ, որ լաւ սրահէ, աղէկ կերցընէ, և մեծ սիրով խնամէ իր ծնածները: Իսկ էրկանը զաւակները չէ թէ միայն այնպէս չնայիր, հապաշատ անգամ կ'ատէ, և ոտքի տակ կ'առնէ. անանկ որ զանոնք կը զըկէ, անոնցմէ կը քաշէ, ու իր զաւակներուն կուտայ, և այնպիսի բնական գուժ մը կը ցցընէ իրեններուն, որ կարծես թէ իր մարմինին կտորուանքն են. ասոր հակառակ, մէկալոնք օտարի աչքով նայելով միշտ կը ջախէ: Ասանկ ալ հողը մայր կը սեպուի ամէն բուսած բաներուն. բայց քու անկածներդ անոր խորդ զաւակներն են, և իր բուսուցածները բուն հարազատ զաւակ ըլլալով աւելի հոգ կը տանի, ու կաճեցընէ. ուստի քու անկածներդ խորդ ըլլալով քիչ սնունդ կուտայ, որ շատ չեն կրնար աճիլ, վն զի օտար են:

Այս պատասխանը անանկ հանգչեցուց պարտիզպանին սիրտն որ մէկէն կանչեց Եզովբոսին, թէ ես քեզի մեծապէս շնորհակալ եմ, որ մեծ տարակուսանքէս զիս ազատեցիր, և սիրտս հանգիստ ըրիր: Ուստի երթաս բարով, որչափ բանջար (շաւ-շաւ-ադ) կ'ուզես՝ առ գնա առանց ստրկի, և որ թամանակ պէտք ըլլայ՝ եկոր առ. ասկէ ետեւ քու պարտեզիդ պէս պիտի գաս հոս բան առնես:



ԳԼ . Թ .

Խորանային Եղովբոսի :

Քանի մը օր անցնելէն ետեւ Քսանթոս բաղնիք գնաց , հոն մէկ քանի բարեկամներ գտաւ . պատուիրեց Եղովբոսին որ վազելով երթայ տուն՝ իրեն ոսպ մը եփէ : Եղովբոս մէկէն տուն գնաց , ու սատանութի բանեցընելով , մէկ հատ ոսպ մը առաւ պատուին մէջ գրաւ եփեց : Իսկ Քսանթոս բաղնիքէն ետեւ աղաչեց բարեկամներուն որ կերակուրը տունն ուտեն , և հասկըցուց թէ ես մէկ հարկիք մը չունիմ . միայն թեթեւ ոսպէ ապուր մը պիտի ուտենք : Աս ալ ըսաց թէ չի վայելէր շատ տեսակ կերակուրներով բարեկամ փորձել , հասկա աւելի պէտք է սիրտը նայիլ :

Անոնք ալ Քսանթոսի հարկիքն ընդունեցան , տունը եկան : Տէրը կանչեց Եղովբոսին թէ մեզի մէկ բաղնիքի ջուր մը բեր , որ զովանանք քիչ մը : Այդեց Եղովբոս գնաց բաղնիքին լուացուած ջուրը բերաւ տիրոջը տըւաւ . երբոր բերանն առաւ , դարչահոտին չցիմանալով , ըսաց , ուստի բերիր այս ջուրը : Բաղնիքէն բերի , ըսաց , ինչպէս որ ինձի պատուիրեցիր : Քսանթոս բարեկամներուն առջին բռնեց բարկուն , ու հրամեց Եղովբոսին որ իրեն մէկ կոնք (շէշ) մը բերէ :

Ան ալ բերաւ, ոտքի վրայ կեցաւ: Չի լուան, ըսաց Թորը. չէ, ըսաց, վն զի ինծի ինչ որ ըսիր, այն ըրի. Թոր ըսէիր, Թէ ջուր լին կոնքը, ոտքս լուան. բեր հողաթափներս, և բոլոր բաներս: Քսանթոս դարձաւ բարեկամներուն ըսաց, Թէ այս գնած մարդս գերի չէ, հասկա վարդապետ է: Երբոր սեղան նստան Քսանթոս հարցուց Եզովբոսին Թէ եղան ոսպը: Եզովբոսն ալ բերաւ դգալով մէկ ոսպն որ եփեր էր: Տէրը բռնեց մատովը սկսեց, ըսաց, Թէ լաւ եփած է բեր: Եզովբոս լեցուց ջուրն ու բերաւ ամանով սեղանը: Հարցուց Քսանթոս Թէ ո՛ւր է ոսպը: Քեզի տուի, ըսաց: Ի՛նչ, մէկ հատ մը եփեցիր: Հրամներես ըսաց. վն զի դուն որոշ ըսիր Թէ ինծի ոսպ մը եփէ. ոսպեր եփէ չըսիր: Այս խօսքովս խիստ տաքցաւ Քսանթոս. մինչև, ըսաց բարեկամներուն Թէ Թողութիւնը քէ ծառայիս յիմարութեւ, որ մարդը խենթ կը դարձնէ:

Հոս եկոր ըսաց Եզովբոսին անզգամ ծառայ. գնա խողի չորս ոտք գնէ, և շուտ մը եփէ, որ ուտենք: Եզովբոս գնաց շուտով բերաւ. երբոր ոտքերը կ'եփէին՝ Քսանթոս գնաց ծածուկ ստիկն մէկը դողցաւ Եզովբոսին հոն չեղած ատենը. որպէս զի պատճառընելով լաւ մը ծեծէ զայն:

Քիչ մը կ'անցնի Եզովբոս ալ կուգայ կը նայի, որ պտուկին մէջ երեք ոտք կան. կը հասկընայ խաբէութիւն, ուստի վազէ կ'երթայ տանը պահած խողին մէկ ոտքը կըտրէ՝ քերթէ, կը գնէ մէկալոնց հետ կ'եփէ: Քսանթոս կը վախնայ որ Եզովբոս տեսնելով

ոտքին մէկը պահաս, չըլլայ թէ փախչի. պահած ոտքը կը բերէ մէջը կը ձգէ: Եփած ոտքերն որ առաջ բերաւ, Քսանթոս տեսաւ թէ հինգ են: Ինչ է այս ըսաց Եզովբոսին, ես քեզի չըսի որ չորս ոտք գնես: Հրամար ես ըսաւ, բայց երկու խողին ոտքերը քանի կըլլան, ութը. ահա գուն հինգ հատ տեսար հոս. երեք ալ վարի խողն ունի, որ կը պահես:

Քսանթոս այս խօսքիս վրայ սաստիկ բարկանալով կ'ըսէր բարեկամներուն թէ ես իրաւունք չունիմ, որ կըսեմ, թէ այս ծառան իմ խեղքս գլխէս պիտի տանի: Եզովբոս ուղեց պատճառով խօսիլ տիրոջը հետ. Տէր իմ ըսաց, չիյտնո՞ւ որ թուաբանութեան մէջ որչափ հանում ըլլայ քանակութենէ, այնչափ ալ յաւելում որ ըլլայ, գումարը սխալ չըլլար: Ուստի Քսանթոս չկրցաւ պատճառ մը գտնել, որ Եզովբոսին ծեծ մը տայ, սկսաւ սիրան ինջնիլ (1):

(1) Եզովբոս երէտ պարծառաւ այս խաբէութիւնները բանեցո՞ց. իսկ ուղեց Կիւրճէն Լաւրենտի, և իր ինչպիսի մարտ ըսաւ անոր հասկընել, որ ընդհանրեալ հետք. երկուրդ ուղեց Վեթիւրի ըսաւ անոր ըսած անարգանաջը. և անով հասկընայ, որ երէտ ասանցիկ իրեն ներշնչեալ Կալ ուղե, մարտն ձեռնիւ ծաւր ընելով Կեղեցի հանէ:

## ՎԵՃԻԽԻՏԻՆԻ ԵՂՎԲՈՒՆ :

Եղաւ որ Քսանթոսի մէկ աշակերտը մեծ հարկիք մ'ըրաւ իր վարսէտին, և բոլոր ընկերներուն : Քսանթոս սեղանին վրայ որ չափ լաւ և համով կերակուրներ կար, մէյմէկ քիչ կը վերցընէր Եզովբոսին կուտար, որ ետին կայնած էր : Ասոնք տո՛ւն տար կ'ըսէր իմ բարեսրտիս տո՛ւր : Եզովբոս առաւ գնաց. բայց ճամբան ինքիրեն մամլրտալով կ'ըսէր Թէ ահա խիստ աղէկ տեղն եկաւ, որ վրէժ ինդիր ըլլամ մեր Տիրուհին, որ հասկընայ անանկ իմ վրաս անողորմ խնդալն, ու սիրտ ծակելը՝ երբոր զիս առջի անգամ տեսաւ. ես ալ հիմա փորձեմ, նայինք կը սիրե՞սըր. քանց մեր Թորը : Երբ տուն հասաւ Եզովբոս կանչեց Տիրուհին, և Քսանթոսի տուած կերակուրները առջին դրաւ՝ ըսաց, ահա ասոնք իմ Թորս խրկեց. բայց քեզի չխրկեց, իրեն բարեսիրտ սիրականին խրկեց : Շուտ մը կանչեց տիրոջը սղտի շունն որ հոն կը կե-  
նար. առ աղուորիկ կ'ըսէր, կէ՛ր, Թորս հրա-  
մեց, որ քեզի տամ. և այսպէս բոլորը կեր-  
ցուց շանը : Յետոյ դարձաւ գնաց տիրոջն  
ըսաց, որ տուի և բոլորն իմ առջիս կերաւ :  
Ուտելու ատենը բան մը զուրցեց, ըսաց

Քսանթոս: Չէ, ըսաց, բայց մտքովը չնոր-  
հակալ կ'ըլլար տէրութեդ:

Իսկ Քսանթոսի կնիկը սաստիկ նեղացաւ,  
որ ընկերն իրեն բան մը չխորկեց հարկի-  
քէն. միտքը դրեր էր թէ այս եղած բանը՝  
նշան է թէ զինքը աչքէ ձգեր է, և իր սե-  
րը պաղած է. որովհետեւ հոգ տարաւ աւե-  
լի շանը, քան թէ իրեն. ուստի սոսկալի  
տրտունջներ կ'ընէր, և վշտանալով բարկա-  
նար ու կ'ըսէր թէ այլ չպիտի նայի երկանն  
երեսը. և այսպէս իր խուցին մէջ փակուած  
անանկ կուլար ու աշխարհք կը փնջընէր, և  
ամենևին չէր ուղէր միտթարուիլ այս ըրած  
բանին համար:

Բայց հարկիքը լաւ մը շէնցաւ գինին խմե-  
լով. երբոր զուարճութե մէջ էին սկսան  
ամէն մէկը իրարու հետ հակաճառութիւն  
նեւ զանազան բաներու վրայ: Անոնցմէ մէ-  
կը աւելի բարակամիտ և հետաքրքիր ըլլա-  
լով հարցուց՝ թէ ո՞ր ստեն կ'ըլլայ աւելի  
հակառակութիւն և անկարգութիւն մարդկանց  
մէջ: Եզովբոս այս հարցընողին ետին ըլլալով  
պատասխանեց թէ ան ստենը կ'ըլլայ երբոր  
մեռելները յարութիւն կ'առնեն. վն զի ամէն-  
քը ինչ որ ունէին (1) աշխարհքիս մէջ մէկ-

(1) Կառապալք ինքնագործութեան շարք գիտե-  
ին, որ մէկ յիմէ մեռելներէ յարութիւն գիտի առնեն.  
որովհետեւ ինչպէն որ ազէի մարդիկ հոռւ եղան-  
իւն տալեն մարմնով, և գէշ մարդիկ շատ կ'ապրին.  
հարկաւ առնել հապառցում գիտի ըստ կ'ընեն.  
մանաւանդ Պղապառի աշխարհէն. որոնք Ածա-  
շտնէն իւրեքով շաք բանի կ'ապային:

զմէկէ կը պահանջեն: Քսանթոսի աշակերտները խնդալով այս խօսքիս վրայ, միաբան խոստովանեցան թէ Եզով բոս խիստ մտաւոր մարդ է:

Մէկ ուրիշն ալ հարցուց թէ ինչո՞ւ համար երբ մնադործը կը քաշէ ոչխարը՝ չափաւար, ու խողը սոսկալի կը պօռայ: Պատասխան տուաւ Եզով բոս թէ ոչխարը սորված է որ կաթը քաշեն, և վրայի բուրդը խուզեն. ուստի ձայն չհաներ, թող կուտայ, որ զինքը բռնեն քաշեն ոտքէն, ինքն ալ լըռութիւն կ'երթայ ետեւում, անտարակոյս գիտէ թէ իրեն նեղութիւն պիտի տան: Բայց խողը ոչ կաթ կուտայ, ոչ բուրդ. ոչ կը կապեն, և ոչ ոտքէն կը քաշեն. գիտէ որ մարմինէն 'ի զատ ուրիշ բան մը չունի. ուստի այս պատճառաւ կը պօռայ, կը կանչէ երբոր իրեն կը դալի մնադործը: Սկսան այս պատասխանիս վրան ալ խնդալ Քսանթոսի աշակերտները, և մեծ գովեստներ տըւին Եզով բոսին:

Կերակուրը լմնցածին պէս Քսանթոս տուն դարձաւ. հարցուց թէ ո՞ւր է կնիկն որ հեաը խօսի, ինչպէս սովորութիւն ունէր: Բայց կնիկը ծուռ ծուռ նայելով անոր ըսաց, հեռո՞ւ գնա, տո՛ւր ինծի իմ բաներս, որ երթամ քու անէդ. ասկէ ետքը ես չեմ կրնար քու տանդ մէջ քեզի հետ մնալ, դուն գնա՛ քու շունդ սիրէ, որուն որ հարկիքին բաները խրկեցիր: Քսանթոս խիստ զարմանալով ասանկ անմիտ անարդանացը վրայ, չէր գիտէր ի՞նչ ընէ, և ինչ պատասխան տայ. կ'ըսէր թէ առանց կարծեաց Եզով բո-

սը բան մ'ըրեր է : Դարձաւ կնկանն ըսաց ,  
 Թէ Տէրուհի , ես խմեցի՝ դո՛ւն գինովցար .  
 ես այն պատուական բաները որո՛ւն խրկե-  
 ցի , քեզի չի խրկեցի : Երդում կ'ընեմ ըսաց  
 կնիկը Թէ ինծի բան մը չեկաւ , հասպա շա-  
 նը եկաւ : Հո՛ս եկոր ըսաց Եզովբոսին , ո-  
 րո՛ւն տուիր այն կերակուրները : Որո՛ւն պի-  
 տի տամ ըսաւ , քու սիրականիդ տուի :

Դարձաւ ՔսանԹոս կնկանն ըսաց , Թէ  
 դո՛ւն բան մը չե՞ս առած : Ամենեկն բան ա-  
 ռած չեմ ըսաց : Տէր իմ , ըսաց Եզովբոս , դո՛ւն  
 սիրականիդ չխրկեցիր : Կանչեց շունն ը-  
 սաց . ահա բարեսիրտ սիրականդ , որ ամե-  
 նէն աւելի քեզ կը սիրէ , և քեզի բարի կ'ու-  
 ղէ : Ասան զի Թէպէտ կինդ կը վկայէ Թէ  
 քեզ շատ կը սիրէ , բայց պզտի բանէ մը նե-  
 ղացածին պէս , քեզի դէմ կ'ելլէ կը խռովի ,  
 կը պարսաւէ անարդէլով , կը չարանայ , որ  
 քեզ ձգէ : Իսկ շունը Թէպէտ ծեծ ուտէ ,  
 անօթի մնայ , վաճնտուի , ամենեկն չփախ-  
 չիր . բոլորը կը մոռնայ , քեզ կը սիրէ շողո-  
 քորԹելով , և ամէն երախտագիտութեան  
 նշանները կուտայ :

Ուստի պէտք էր որ ըսէիր աէր իմ , Թէ  
 կնկանս տո՛ւր , չէ Թէ բարեսրտիս : Քսան-  
 Թոս դարձաւ ըսաց կնկանը , կը տեսնէս Տէ-  
 րուհի , այս պակասութիւն իմա չէ , հասպա  
 Եզովբոսին է . ուրեմն համբերէ , հանգարտ  
 կեցիր , ես ծեծով անոր վրէժխնդիր կ'ըլլամ :  
 Այս պատասխանը բաւական չեղաւ անոր  
 սիրաւ հանգչեցընելու . նայիս ծածուկ մը  
 տնէն ելաւ գնաց հօրը տունը : Ան ատենը  
 դարձաւ Եզովբոս ըսաց սիրոջը Թէ ես քե-



զի չքսի, թէ քու շունդ կնոջմէդ աւելի քեզ  
կը սիրէ:

## ԳԼ. ԺԱ.

ԵՆԸԼԻՈՍ ԴԱՐՅԱՆՆԵ ԿՄԻՅԻՆՆԵ 'Ի ԳՈՒՆ:

Քանի մը օր անցաւ Քսանթոս չիկրցաւ  
կնկանը սիրտն առնել ո՛չ աղաչանքով և ո՛չ  
շողոքօրթելով. ուստի գրաւ իրեն աղգական  
ները խրկեց որ հաշտեցնեն, և մոռնայ սըր-  
տին նեղութիւնը. բայց ամենեկին մօտիկ չըրաւ,  
այլ աւելի կատողեցաւ: Այս ըրած անգգա-  
մուծիւ խիստ ցաւցուց Քսանթոսին սիրտը:

Եզովբոս եկաւ քովն ըսաց մի վշտանար իմ  
իմ, մի տրտմիր պարապ տեղը ես քեզի  
խօսք կուտամ, որ կնիկդ վաղը ինքիրեն կու-  
գայ հոս: Քանի մը գրամ առաւ անկէ գը-  
նաց գնելու հաւեր՝ թռչուններ՝ որսեր, և  
այլ հարկաւոր բաներ մեծ հարկիքի մը հա-  
մար: Զասոնք բերելու ատենը տնէ տունն ալ  
տըտելով կուգար, յետոյ եկաւ Տիրուհիին  
հօրը տանն առջևէն անցաւ, այս մտքով, որ  
տեսնեն առած բաները առանց խմացնե-  
լու, թէ ինքը գիտէ որուն տունն ըլլալը, և  
Տիրուհիին հոն ըլլալը:

Յանկարծ հանգիստեցաւ անոնց ծառային,  
հարցուց թէ արգեօք ունին ծախու բա-  
նէր հարսնեց հարկիքի համար: Արուն հա-



մար կ'ուզես ըսաց ծառան : Պատասխանեց ,  
 Թէ Քսանթոս փիլիսոփային համար , որ վա-  
 ղը պիտի կարգուի : Ծառան շուտ մը ներս  
 վազեց պատմեց կնկանը , որ առանց ուշա-  
 նալու մէկէն ելաւ գնաց երկանը տունը :  
 Եւ այնպէս խռոված անհանգիստ էր , որ  
 տրտնջելով կ'ըսէր Քսանթոսին Թէ քեզի  
 կը վայէ՞ կարգուիլ ուրիշին հետ քանի որ  
 ես կամ : Ահա այսպէս մնաց երկանը քով  
 Եղովբոսին հնարքովը . ինչպէս որ անոր  
 պատճառովը դացեր էր , անանկ ալ եկաւ :

ԳԼ . ԺԲ .

ՍՊՈՒ ԵՂՎԵՐՈՒ :

Քսանթոս ուզեց որ մը իր աշակերտնե-  
 րուն կերակուր ընէլ . Եղովբոսին պատուի-  
 րեց որ երթայ որչափ լաւ պատուական բան  
 կայ զանոնք գնէ : Եղովբոս երթալու ատե-  
 նը կ'ըսէր Թէ պիտի հասկըցնեմ տիրոջս ,  
 որ ուրիշ անգամ ինձի ասանկ անխելք բան  
 չհրամէ : Ուստի գնաց մէկ քանի խոզի լե-  
 զու առաւ պատրաստեց հարկիքին համար ,  
 և ամենուն առջին դրաւ մէյմէկ լեզու խոր-  
 ված համեմով (պահարւր) : Աշակերտները հա-  
 ճեցան , որ փիլիսոփայի գործք է առջի կե-  
 րակուրը լեզու բերել . ինչպէս լեզուն ամեն  
 լաւ խորհուրդները կը յայտնէ : Իսկ Եղով-  
 բոս երկրորդ կերակուրն ալ խաշած լեզու

բերաւ : Երբոր երրորդ կերակուրն ուղե-  
ցին , նայիս լեզու բերաւ : Այս բանիս վը-  
րա սրտերնին նեղացաւ . վասն զի լեզու ու-  
տելով ձանձրացեր էին , մինչև բարկանալով  
ըսին Եզովբոսին թէ մենք մինչև իրիկուն  
լեզու պիտի ուտենք : Բայց Եզովբոս առանց  
նայելու անոնց արտունջին նորէն լեզու դը-  
րաւ անոնց առջին : Ուստի Քսանթոս բար-  
կանալով կանչեց թէ ուրիշ բան մը չի կայ որ  
բերես : Պատասխանեց Եզովբոս հանդիստ  
սրտով մը թէ չկայ : Ինչ կը խօսիս թըշ-  
ւառական կ'ըսէր , ես քեզի չպատուիրեցի որ  
պատուական համով բաներ դոնես . սկսաւ  
անարգել զինքը վիլիսոփաներուն առջին :

Շնորհակալեմ ըսաւ Եզովբոս՝ ըրած նա-  
խատանքիդ վրայ . բայց խնդրեմ՝ լեզուէն ա-  
նոյշ և պատուական ի՞նչ բան կայ աշխարհ-  
քիս մէջ . ահա ամէն ուսում և իմաստութի  
լեզուով կըլլայ , ամէն բան անով կ'առնենք  
կուտանք , աղօթք , ատենաբանութի , մար-  
դավարութի , հարսնախօսութի , և ամէն ճո-  
ռումութի լեզուով կըլլայ , քաղաքներ անով  
կը շինուին և ամէն մարդ լեզուով կը վճա-  
րէ իրեն գործքը : Ուրեմն ես կը հաւտամ  
և լաւ գիտեմ թէ լեզուէն գերազանց բան  
չկայ աշխարհքիս մէջ : Բոլոր նստողները  
հաւնելով այս պատճառներու միաբան  
վճռեցին թէ Եզովբոս իրաւունք ունի , և  
Քսանթոսի բարկութիւնը անիրաւ է : Եւ այս-  
պէս ամէն մարդ տուն դարձաւ :

ԴԼ. ԺԳ.

ԵՐԵՐԷ. «ԿԱՍ ԵՂՆԸՔԱՒ:

Քսանթոսի աշակերտները քանի մը օրէն  
էտե երեսը զարկին ըրած հարկիքը: Ան ալ  
անսլարտ զինքը ցըցուց ըսելով թէ այդ  
բանը մտքէս ալ չէր անցած. իմ ծառայիս  
չարուծէն անանկ եղաւ, բայց փորձը այ-  
սօր ամէն բան կը յայտնէ. ահա ձեր առջին  
իրեն կը պատուիրեմ: Այս խօսքիս վրայ Ե-  
ղովբոս ալ հոն եկաւ: Տէրն ըսաց որ գնա՛  
որչապի գէշ բան գտնես գնէ, որ հարկիք  
ընեմ այս պարոններուն:

Եղովբոս գնաց նոյնպէս լեզու գնեց,  
պատրաստեց սեղան բերաւ: Ամէնքը տրան-  
ջալով սկսան իրարու զուրցել թէ այս ի՞նչ  
պէս բան է. միշտ լեզու պիտի ուտենք:  
Քիչ մը անցաւ, նորէն լեզու բերաւ: Եր-  
բորդ անգամ ալ լեզու բերաւ սեղանը:  
Այլ չգիմացաւ Քսանթոս բարկութեամբ  
կը սլօռար. դուն ի՞նչպէս խօսք կը հասկը-  
նաս Եղովբ. երբոր քեզի ըսի պատուական  
կերակուր գնէ, դուն գացիր լեզու գնե-  
ցիր. և երբոր պատուիրեցի անշահ կերա-  
կուր գնէ, նոյնպէս գացիր լեզու գնեցիր:

Ճշմարիտ է խօսքդ ըսաց Եղովբոս. բայց  
լեզուէն գէշ բան ի՞նչ կրնայ գտնուիլ. լե-  
զուն չէ որ աշխարհք կը կործանէ, և սոս-

կալի մարդիկ կը կորսընցնէ . ինչով կ'ըլլան  
այնչափ սուտերը , հայհոյութիւնները , անի-  
րաւութիւնները , և խաբէութիւնները . լեզուով  
կ'ըլլան : Ասով պսակեալները կը քակուին .  
տրութիւններ , թագաւորութիւններ կը կործա-  
նին , և այլ անհամար չարիք միշտ լեզուն  
կը պատճառէ , տրամութի , խեղճութի , եր-  
գում , բամբասանք , որով մարգուս կեան-  
քը լեցուած է :

Ան ատենը նստողաց մէջէն մէկը կանչեց  
Քսանթոսին թէ զգոյշ կեցիր՝ այս ծառադ-  
քու խելքիդ բան մը կը բերէ . զի կընայիմ  
որ հոգին ալ մարմինին նման այլանդակ է :  
Եզովբոս մէկէն պատասխան տուաւ թէ այ-  
լանդակ անմիտ դուն ես , որ հետաքրքրու-  
թի՞ ուրիշի բանին կը խառնուիս , և չար  
խօսքերով կը ջանաս անմիաբանութի ձգել  
տիրոջն ու ծառային մէջ :

ԳԼ ԺԴ .

Հետաքրքիրն Եզովբոս :

Քսանթոս Եզովբոսին այս խօսքերը լսե-  
լով անանկ տաքցաւ , որ պատճառ կը փնտը-  
ռէր լաւ մը ծեծելու : Գարշելի ըսաց , ո-  
րովհետեւ դուն իմ բարեկամս պարսաւեցիր  
թէ հետաքրքիր ըլլալով ուրիշի բանին կը  
խառնուիս , գտիր ինձի մէկն որ հետաքրք-  
րիւ չըլլայ : Եզովբոս հասկըցաւ բանը , մէ-

կալ օրն ելաւ գնաց վաճառանոցն բազմու-  
թէ մէջ ուշադրութեամբն կը նայէր .  
տեսաւ թէ մէկ մարդ մը երկար ժամանակ  
կեցէր է մէկ տեղ մը : Հասկըցաւ որ խիստ  
պարզամիտ խեղճ մարդ մ'է . մօտեցաւ իրեն  
ըսաց , թէ Կորս կը հրամցընէ , որ իր տունը  
կերակուր ուտես : Այս կոչտ մարդը ա-  
ռանց հարցընելու , թէ ո՞վ էս , և որո՞ւ տը-  
նէն եկեր էս , ելաւ գնաց հետը . և աղտոտ  
կօշիկները ոտքը գնաց անանկ սեղանը նըս-  
տեցաւ :

Քսանթոս հարցուց թէ ո՞վ է այս մար-  
դը : Պատասխանեց Եզովբոս , թէ առանց  
հետաքրքրութեամբ մարդ է , որ ուրիշի գործ-  
քին չխառնուիր : Ան ատենը Քսանթոս  
ծածուկ կնկանն ըսաց , որ էս քեզի ինչ բան  
ըսեմ' նէ՝ հնազանդելով պիտի ընես . որպէս  
զի պատճառ մը գտնեմ , ու լաւ ծեծ մը  
տամ Եզովբոսին : Ուստի ամենուն առջին  
ըսաց կնկանն , որ գնա՛ ջուր բեր՝ օտարակա-  
նին ոտքը լուա՛ . վասն զի կարծէր թէ այն  
խեղճ մարդը չպիտի թող տայ որ Տիրուհին  
ոտքը լուայ , պէտք է որ մեծ շնորհակալու-  
թի ընելով հրաժարի : Եւ ասանկ ընելովը  
յայտնի կ'ըլլար , որ հետաքրքիր մարդ է , ո՛չ  
թէ անհոգ . ինչպէս հասկըցեր էր Եզովբոս .  
այս բանը կ'ըլլար օրինաւոր պատճառ Եզով-  
բոսը պատժելու : Իսկ կնիկը բերաւ ջուրն ,  
ու պատրաստուեցաւ որ օտարականին ոտքը  
լուայ : Բայց այն թանձրամիտը տեսաւ  
թէ Տիրուհին իրեն ծառայութիւն կ'ընէ ,  
ինքիրեն կ'ըսէր , որ ահա զիս կ'ուզէ պա-  
տուել , ուրիշին ընել չտար , ինքը կ'ընէ՝ և

այսպէս երկրնցուց ոտքերն, ու կ'ըսէր՝ Լուս Տիրուհի. որ լուացուելէն ետև սեղան նստաւ: Քսանթոս հրամեց, որ իրեն խմած գինիէն օտարականին տայ: Դարձեալ կը մտմրտար գեղջուկը թէ պէտք էր որ առաջ իրենք խմեն. բայց որովհետև այսպէս հրամեց բարեսիրտը՝ ինծի չիյնիր քննել այս քաղաքավարուիը. ուստի առաւ խմեց:

Բերին առջին կերակուր մը, որ շատ կը սիրէր, ու ախորժանքով կ'ուտէր: Տէրը կանչեց խոհարարը (պճիւն) երեսը զարկաւ թէ ինչո՞ւ համար գէշ եփեցիր. և պատուիրեց որ պատժեն ու ծեծեն: Գեղջուկը անհոգ կ'ուտէր և կ'ըսէր թէ այս կերակուրս խիստ պատուական եփած է, մէկ պակասութիւն մը չունի. բայց թէ որ փորը իր սիրտը հանգչեցընելու համար կ'ուզէ առանց պատճառի ծեծել խոհարարը, ինք գիտէ. իմ ինչ վերաս պէտք է, ինչ կ'ուզէ թող ընէ:

Քսանթոս այս անհոգ մարդուն վրայ, խիստ կը նեղանար որ ամենևին հետաքրքրութիւն մը, հոգ մը չէր ըներ, և բանի մը ետեւէն չէր ըլլար. բայց կը համբերէր նեղութիւնը չէր ցցըներ: Բերին սեղանը կարկանդակի (պօղալա). օտարականը ուտելը չէր գիտէր, սկսաւ հացի պէս ուտել: Քսանթոսին սիրտը սխմուելով կանչեց ըսաւ հացեփողին. յիմար, ինչո՞ւ համար կարկանդակին տակը մեղր ու համեմ չլեցուցիր, որ քիչ մը համով ըլլար: Ան ալ պատասխան տուաւ թէ տէր իմ թէ որ գէշ եփեցի, զիս պատժէ. բայց թէ համեմ չէ դրած՝ մեր Տիրուհին պիտի գիտնայ, իմ բանս չէ, անորն է: Ա-

Թէ իմ կինս է պատճառը՝ հիմայ ողջ ողջ  
կ'երեմ՝ կ'ըսէր Քսանթոս : Աչք ըրաւ կըն-  
կանն որ իրեն հնազանդի . որպէս զի պատ-  
ճառ ունենայ Եզովբոսը պատժելու :

Ուստի բերել տուաւ փայտի կտորուանք .  
որ երբ վառեցան՝ Քսանթոսի Տիրուհին բե-  
րին կրակին մօտ ; և ձևացուցին որ մէջը  
պիտի ձգեն . նայելով Թէ ի՞նչ կ'ընէ օտա-  
րականը այս բանիս մէջ . գէթ հոգ տանե-  
լով բան մը կը հարցընէ , կամ կ'արգիլէ որ  
չէրի կինը : Բայց այն առանց այլայլեւ  
հոգ մը չուէր այս սգաւոր բանին վրայ . և  
իր սովորական անհոգութիւնէ կեցեր կ'ըսէր  
մտքովը Թէ որ պատճառ մը չունի բարկա-  
նալ ընկերոջը դէմ , ինչո՞ւ ասանկ տաքցեր  
է : Ելաւ գնաց Քսանթոսին քով ըսաց՝ Թէ  
որ պարտք է ասանկ ընել կանանց , քիչ մը  
համբերէ երթամ իմին ընկերս ալ բերեմ ,  
որ երկուսը միատեղ երես :

Փիլիսոփան լսելով այս մարդուս խօսքը ,  
զարմացաւ Թէ ասանկ առանց հետաքրք-  
րութեան հոգ և սլարզամիտ մարդ կրնայ  
ըլլալ . այնչափ որ այլ չգիմացաւ կանչեց  
Եզովբոսին Թէ իրաւ որ դուն պարապ տե-  
ղը մարդ չես ճանչնար . ահա՛ ճշմարիտ ան-  
հոգ անհետաքրքիր մարդ , որ ամենևին բան  
մը հոգը չէ . յաղթեցիր Ե'զովբ , և վաստը-  
կեցար յաղթութիւնը : Ահա՛ ասկէց ետե գոհ  
եմ քու վրագ , կը մոռնամ ըրած բաներդ ,  
կը ներեմ , և ազատ կ'ընեմ քեզ ծառայու-  
թենէդ :



## ԳԼ. ԺԵ.

ԵՍՏՈՒ ԵՂՈՎԵՐՈՒ ԸՆԴ ԴԱՄԱՄԱՆՈՐԻՆ :

Քսանթոս պատուիրեց Եղովբոսին, որ երթայ բաղնիքը նայի թէ բազմութիւն չապկայ. վասն զի կ'ուզէր բաղնիք մտնել: Եղովբոս երթալու ատենը ճամբան հանդիպեցաւ դատաւորին, որ գիտէր թէ Քսանթոսին մարդն է, հարցուց թէ ո՞ւր կ'երթաս: Չիյտեմ ըսաց Եղովբոս, ո՞ւր կ'երթամ: Դատաւորը կարծեց թէ զինքը ծաղր կ'ընէ, բարկացաւ տուած պատասխանին վրայ. հրամայ որ բանտը դնեն: Երբոր դարձուցին Եղովբոսը, սկսաւ բարձր ձայնով պօռալ: Տես կ'ըսէր տէր իմ, ահա իմ պատասխանս նայէ ինչպէս ճշմարիտ ելաւ. ուրեմն իրաւունք ունէի որ ըսի թէ չիյտեմ ուր կ'երթամ. ես գիտէի՞ թէ բանտը պիտի երթամ գիպուածով քեզ տեսայ, որ իմ բանտն երթալուս պատճառ եղաւ:

Դատաւորը զարմանալով անոր խելացի պատասխանին վրայ, թող տուաւ: Եղովբոս բաղնիք գնաց տեսաւ որ շատ բազմութիւն կայ. ամէն մէկին ուշադրութիւն կը նայէր. բաղնիքին դռանը քով մեծ քար մը տեսաւ որ ամէն մտնող ելողին ոտքին դպչելով նեղութի կուտար, որ մէկը չէր վերցընէր անկէ. մէկ մարդ մը ներս մտնելու ատենը

վերցուց անկէ ուրիշ տեղ դրաւ : Եզովբոս  
գարձաւ տուն ըսաց տիրոջն , որ խիստ հան-  
գիստ կրնաս լուացուիր . վասն զի ես մինակ  
մէկ մարդ մը տեսայ հոն :

Քսանթոս գնաց բաղնիք երբոր տեսաւ  
այնչափ բազմութիւն , որ կը լուացուէին . ինչ  
է այս կանչեց Եզովբոսին , դուն ինծի չըսիր  
որ մէկ հոգի մը կայ . ճշմարիտ է ըսաց .  
բայց տէր իմ տեսայ այն քարը բաղնիքին  
դռանը մէջ դրած , ամէն մտնող ելլող անոր  
զարնելով կ'անցնէր , այնչափ բազմութեան  
մէջէն մէկ մարդ մը գտնուեցաւ որ այն  
քարը վերցնէ անկէ անդին դնէ : Ահա  
այս պատճառաւ ըսի որ մէկ մարդ մը տե-  
սայ այսչափ բազմութեւ մէջ , ամենէն վեր  
դնելով զայն : Քսանթոս ծիծաղելով ըսաց  
թէ Եզովբոսին պատասխանը խելքով լե-  
ցուն՝ միշտ պատրաստ է :

ԳԼ . ԺԶ .

Հանճար Եզովբոսի :

Երբեմն Քսանթոս իր աշակերտներովը  
երևելի հարկիք մը գնաց . երբոր գինին խմե-  
ցին հարբեցան , սկսան իրարու հարցմունք-  
ներ ընել կերպ կերպ բաներու վրայ : Քսան-  
թոս տաքնալով կը խօսէր գինիին ուժովը .  
Եզովբոս քովն ըլլալով ըսաց . Ա՛ միտայ քեզի

կ'ուզեմ հասկըցնել թէ Բաքոս (1) երեք  
յատկութի, կի՞ երեք զանազան աստիճան  
ունի. առաջինն է զուարճութի. երկրորդն  
է արբեցութի. երրորդը՝ կռիւ, թշնամանք.  
գուն ուզածիդ չափ խմեցիր լաւ մը զուար-  
ճացար, ուրեմն գոհ կեցիր այդ աստիճա-  
նին մէջ, ալ առաջ մ'երթար: Քսանթոս որ  
սկըսեր էր դինովնալ, այս խրատս ծուռ  
մտքով հասկըցաւ, ու բարկանալով ըսաց.  
կտրէ՛ ձայնդ՝ գնա՛ դժոխքին մէջ եղողներուն  
խրատ տո՛ւր: Պատասխանեց Եզովբոս թէ  
կարծեմ գուն պիտի երթաս անոնց քով:

Հոն նստողներուն մէկը տեսաւ որ Քսան-  
թոսի գլուխը տաքցեր է. Պարոն, ըսաց, կըր-  
նայ գտուիլ անանկ մարդ, որ բոլոր ծովուն  
ջուրը խմէ: Պատասխանեց Քսանթոս թէ  
ես մինակ կրնամ խմել: Ան ալ ըսաց. թէ  
որ չկրնաս նէ ինչ կ'ուտաս: Բոլոր տունս  
կուտամ ըսաց: Այս դաշինքս հաստատե-  
լու համար երկուքն ալ հանեցին իրենց մատ-  
նին դրին գրաւ (շահն). ետքը ամէն մարդ  
տեղը դարձաւ:

Առաւօտուն Քսանթոս ելաւ լուացուեցաւ  
տեսաւ որ մատնին մասը չէ՛ զարմանալով

(1) Բաքոս Ռիւսին որդին էր. որ խաղաղա-  
նէրը խաղաղի և գինիի քիժ Գրեք էին, ու Ռի-  
ւիւսս կ'ընէին. իսկ հայերը Սպանդարտէս կ'ա-  
ռանային. որովհետեւ ասոր քովին օրը շաբաթ  
դանիներ ընդ կ'ընէին. որուն արձանն էր հանդի-  
սալը: Բայց շաբաթ անգամ գրոյ մէջ գինիին Գրեք  
Բաքոս իւր տնէն. ինչպէս Եզովբոս ալ գինին ըն-  
տա Գրեք կ'ընէ Բաքոս երեք յափտութի ունի:

հարցուց Եղովբոսին թէ ինչ էլաւ : Պատասխան տուաւ թէ չիտեմ. բայց այսչափ գիտեմ որ դուն տունդ կորսնցուցիր : Ինչո՞ւ համար՝ ըսաց : Երէկ գինովութե՛ մէջ պարտաւորեցար որ ծովը խմես. ասոր համար մասնիդ գրաւ դրիր (1) : Պատասխանեց Քսանթոս թէ ինչ ընելու է որ այս բանէս ազատիմ. իրաւ որ մարդու կարողութե՛ վեր բան է, կ'աղաչեմ, մէկ խելք մը բանեցո՛ւր, ու բոլոր խմաստութե՛դ և փորձովդ ետ առ իմ խօսքս, այս փորձանքէն զիս ազատէ, որպէս զի իմ տուած գրաւս ետ առնեմ առանց անարդանաց : Իրաւ որ անկարելի է ըսաց Եղովբոս, որ կարենամ քու խօսքդ ետ առնե՛լ բայց կրնամ գաշինքդ աւրել :

Երբոր այսօր ամէնքդ մէկտեղ կուգաք՝ դուն խօսքիդ վրայ կեցիր համարձակ, ամենեկին մի վախնար : Արբեցութե՛ մէջ ինչ որ ըսիր, հոն ալ ըսէ բազմութե՛ մէջ. հրամայէ որ ծովուն քով սեղան դնեն. ապառախիւք ծառաներուդ որ աման մը ծովու ջուր բերեն քեզի խմելու համար : Կը տեսնես որ բոլոր ժողովուրդը հոն ժողուած են, հրամայէ քովի եղողներուդ որ գաւաթը ծովու ջուր լեցնեն՝ տան. ձեռքդ առ, բարձր ձայնով հարցո՛ւր գաշինք ընողին թէ ինչ էր մեր պայմանը. ան ալ պիտի ըսէ թէ բոլոր

(1) Ուրիշէքն հին իիւլիանոսեան ժողովուրդէան յէջ չափ մեծ ցարգոսութիւն և գերապանցութիւն ունէին, անոր համար գինովութե՛ մէջ էլած խօսքն ալ ընդունելի էր, և էպ ատենէլ անխաբէրի :

ծովը խմել: Ան ատենը դարձի՛ր նստողներուն  
ըսէ. Սամոսացիք, դուք գիտէք թէ՛ օրչափ  
գետեր կը լեցուին այս ծովուն մէջ. իրաւ  
ես պարտաւոր եմ միայն ծովուն ջուրը խմե-  
լու չէ թէ գետերուն. ուրեմն պէտք է որ  
այս մարդս նախ գետերը կտրէ, որ ծովը  
չվաթին, հապա թէ ես ալ խմեմ ծովը:

Քսանթոս տեսաւ թէ այս հնարքս ան-  
տարակոյս կրնայ դաշինքն աւրել, և մատնին  
ետ տալ, մեծ յուսով սկսաւ ուրախանալ:  
Ուստի երբոր ժողովուրդը ծովուն մօտ դի-  
զուեցաւ, բոլոր քաղաքը հոն լեցուեցաւ որ  
այս չսուած բանը տեսնեն, թէ ինչպէս  
Քսանթոս զինքը պիտի այս բանէն փրցընէ:  
Բայց Քսանթոս ինչ խրատ որ առաւ Եզով-  
բոսէն՝ կատարեց ըրաւ ժողովրդեան առ-  
ջին: Սամոսացիք զարմացան Եզովբոսին խել-  
քին հնարքին վրայ, և մեծապէս գովեցին:  
Իսկ դաշինք ընողը Քսանթոսին ոտքն ըն-  
կաւ, խոստովանեցաւ թէ յաղթուեցայ, և  
աղաչեց որ դաշինքն աւրէ: Քսանթոս ժո-  
ղովրդեան աղաչանքովը յօժարեցաւ աւրել  
դաշինքն, ու հաշտուեցաւ անոր հետ:

91. 64.

ሀዳድ ስላሳቀጠው ይህን ድምፅ ሲሰማው ለሰው ልሳብ ሲሆን  
ቴረፊክስ፡

Երբոր տուն դարձան, Եզովբոս ըսաց Քսանթոսին. «Իմ քեզի ըրած այս աղէկութեան գէմ, արժան չէ որ ես ինչպէս քեզ ազատեցի, դուն ալ զիս ազատես գերութէն: Տէրը խտուածք վաճառեց ըսելով կարծես թէ ես չեմ ուզեր քեզ ազատելու. ելիր դուռը նայէ թէ որ երկու ագուա միատեղ կեցած են, բարի նշան է. հապա թէ մէկ ագուա մը կայ, գէշ նշան է (1): Եզովբոս երկուսը միատեղ տեսաւ կեցած ծառին վրայ, եկաւ պատմեց Քսանթոսին. բայց երբոր Քսանթոս ելաւ նայեցաւ, մէկը կար, մէկալը թռեր էր: Թշուառական ըսաց Ե.

(1) Հին ապենց հաս-երոան և Ռուս-աններոան  
 Կեդո-ած+բ և յայնց Դիպել-ը Կախարդո-նի Կե-  
 նեին, Լեւած Բաները և Գո-շակեին Կերպ Կերպ  
 Խաբեո-նի Կե-նի Հաւահմայոն. որ հաս-ե-  
 րոան յայնեան և շարժոան+են և Գո-շակեին Լա-  
 պիպի ըւսայ Ռե Գեւ: Ե- երբեմն իորը Բանո-  
 լը աշի+ներոան շարո-ած+են և Լերդին Գո-նեան  
 Գո-շակո-նի Կե-նեան: Ահա Քոան-նոս աւ ագ-  
 ոսո-ը նշան Գե-նը Գեւ աեպեց ազապ ընել Ե-  
 ղը Բոսը. որ և Խաբեո-նի:

զովբոսին, դուն ինձի երկուք էն ըսիր, ուր է. պատասխանեց թէ ես ճմարիան ըսի, բայց մէկը թռաւ: Անանկ չէ, հապա գար շէլի դուն զիս ծաղր ըրիր: Բարկութիւն պատուիրեց ծառաներուն որ հանուեցնեն Եզովբոսն ու ծեծեն: Երբոր կը զարնէին խեղճին, տեղէ մը կանչեցին Քսանթոսը որ կերակրի երթայ: Սկսաւ Եզովբոս կանչել, վայ անբաղդ ողորմելուս, ես որ երկու ագռաւ տեսայ, ծեծի արժանի եղայ. դուն որ մէկ ագռաւ մը տեսար՝ հարկիք ուտելու կ'երթաս. ահա իմ փորձս յայտնի ըրաւ, որ ըրած կախարդութիւնդ սուտ է: Քսանթոս զարմանալով անոր բարակ մտացը վրայ դադրեցուց ծեծը:

## ԳԼ . ԺԸ .

Փոքե Եււֆոս ղգիտականս:

Եղաւ որ Քսանթոս կերակրի հրամցուց շատ փիլիսոփաներ և ճարտասաններ. Եզովբոսին պատուիրեց որ դուռը կենայ, և պատիւ ըլլալու համար միայն իմաստուն մարդիկ ներս առնէ. իսկ Եզովբոս դուռը գոցեց ու ներսը կեցաւ. նայիս հրամցուցած մարդուն մէկն եկաւ դուռը զարկաւ: Եզովբոս առանց դուռը բանալու ներսէն հարցուց թէ շունը ի՞նչ կը շարժէ: Ան ալ դըրսէն կարծեց թէ իրեն շուն կ'ըսէ՝ բարկա-



նալով ձգեց գնաց։ Որչափ մարդիկ որ եկան, ասանկ բարկանալով ետ դարձան, կարծէին թէ զիրենք կը նախատէ։ Վս զի Եզովբոս ամենուն ալ այս հարցմունքը կ'ընէր։ Յետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ. ահոր ալ հարցուց Եզովբոս թէ շունը ինչ կը շարժէ։ Ան ալ դրսէն պատասխան տուաւ թէ պոչն ու ականջները։ Եզովբոս տեսաւ որ յարմար պատասխան տուաւ, բայցաւ դուռն ու տարաւ ներս տիրոջը քով, ըսաց թէ մէկ փիլիսոփայ մը չեկաւ քու հարկիքդ ասկէ՝ ի դատ։

Քսանթոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով թէ մէկալոնք զինքը ծաղր ընելու համար չէն եկած։ Ահալ օրը բարեկամներն եկան դպրոցը, և երեսը զարկին Քսանթոսին որ զիրենք անանկ անարգելով դռնէն ետ ճամբեց։ Ինչո՞ւ համար՝ կրսէին այն աստիճանը մեզ անարգեցիր. դրիր դռանը քով այլանդակ գերիդ որ մեզ թշնամանելով ետ դարձուց։ Հարցուց Քսանթոս թէ քո՞ն էք ինչ էք. իրա՞ւ է ըսածնիդ։ Պատասխանեցին ամենքը մէկ ձայնով. ճշմարիտ է քեզի ըսածնիս։ Հուտ մը կանչեց Եզովբոսն հարցուց բարկանալով թէ ինչո՞ւ համար ասանկ անարգելով ետ դարձուցիր բարեկամներս։ Պատասխանեց Եզովբոս թէ դուն չի պարտաւորեցիր որ յիմար մարդիկ թող չտամ ներս մտնելու, որ միայն գիտուն իմաստուն մարդիկ նստին հարկիքդ։ Իրաւ այդպէս է ըսաց Քսանթոս, բայց ասոնք ամենքը գիտուն չէն։ Պատասխանեց Եզովբոս թէ ես այս գիտեմ որ դուռը զար-

կած ատենը, ես իրենց կը հարցընէի թէ շունը ի՞նչ կը շարժէ . մէկը չկրցաւ հասկընալ, և հարցմունքիս պատասխան տալ . ուստի կը նայէի որ տգէտ մարդիկ են, դուռը չէի բանար . միայն անոր բացի դուռն որ լաւ պատասխան տուաւ :

Եզովբոս խօսքը լմնցուց, բայց մէկը չկրցաւ դէմ խօսիլ . և ամէնքը խոստովանեղան թէ ճշմարիտ է ըսածը :

## ԳԼ . ԺԹ .

Հնարագիտութիւն Եզովբոսի :

Քսանթոս օր մը Եզովբոսին հետ գերեզմաննոցը գնաց որ գերեզմաններուն վրայի գովեստները կարդալով կը զուարճանար : Եզովբոս տեսաւ որ մէկ գերեզմանի մը վրայ գրած էին Յունաց այս գրերս .

α Ύψω .  
β Δύτω . δ Σέλω . ο Οψείω , ε Ήΐω .  
ς Θύω . χ Ίω :

Եզովբոս այս գրերը ցըցուց Քսանթոսին, հարցուց, թէ ասոնք ի՞նչ կը նշանակեն : Քսանթոս ուշադրութիւն նայեցաւ քննեց մտմբտաց, չէմ հասկընար ըսաց ի՞նչ ըսել կ'ուզէ : Ան ատենը դարձաւ Եզովբոս ըսաց . Ամիրայ եթէ այս գրերուն ուժովը հոս գանձ գտնեմ, ի՞նչ կուտաս ինձի : Ան ալ հաշտ սիրտ տալով ըսաց թէ կէսը կուտամ և քեզ ալ կ'ազատեմ : Եզովբոս այս խոստմունքըս ըսելով՝ չորս քայլ (սքէ) հեռացաւ ան .

կէ՝ փորեց գանձ գտաւ . տարաւ Քսանթոսին ըսաց թէ կատարէ խոստմունքդ . զիս ալ ազատ ըրէ : Պատասխան տուաւ թէ քեզ չեմ ազատեր , մինչև որ այն գրերուն զօրութիւն չմեկնես ինձի . վն զի աւելի կ'ուզեմ անոնց իմաստը հասկընալ , քան թէ ոսկին ժառանգել :

Եզովբոսն ալ ըսաց թէ ով որ այս գանձը հոս թաղեր է՝ իմաստուն մարդ ըլլալով այս գրերը փորել տուեր է . որ կընշանակեն . α Աֆօն գնացեալ . β Ալֆօն քայլս . δ Դէսէրս չորս . ο Ορεֆոս փորեալ . ε Էրէֆոս գտցես . ς Թիսոս գանձ . χ Խհրիֆոս ոսկոյ : Քսանթոս ալ ըսաց , որովհետև այսպէս հնարագէտ բան գիտցող ես դուն , յիմար կ'ըլլամ ես թէ որ քեզ ազատեմ : Կրկնեց Եզովբոս . թէ որ չընես՝ այս գանձը չես կրնար ժառանգել . վն զի կ'երթամ Բիւզանդացոյ (1) թագաւորին կ'իմացընեմ . որ անոր համար պահած էր : Ուստի գիտես ըսաց Քսանթոս : Ահա գրերը յայտնի կը ցընեն ըսաց . α Աֆօն տուր . β Ալֆօն թագաւորին . δ Տիօնիֆոս Դիոնէսիոսի . ο Օն զոր . ε Էրէֆոս գտեր . ς Թիսոս գանձ . χ Խհրիֆոս ոսկոյ : Քսանթոս այս բանը լսելով հասկըցաւ որ ձեռքէն պիտի

(1) Բիւզանդիոն կ'ըսուի Սրամայօլ Ալիպա իշխանին անուամբ . որ նախ շինեց պալատի քաղաք իւր Ապոլոնիոն պապագամով . յետոյ Կոստանդինոս նորոգեց յետոյ : Հին աստուծոյ հոս նշանաւ Քսանթոս իւր հրամայեց յօր եղած իշխանի . ինչպէս Եզովբոս ալ իւր յայտնէ :

երթայ . առ ըսաց կէսն , ու ձայն մի հաներ :  
Դուն չես ինձի տուողը ըսաց Եղովբոս ,  
հասկա ոսկին թաղողը տուեր է : Մտիկ դիր  
նայէ ի՞նչ կը նշանակեն գրերը . α Անէլօֆ-  
նի զառեալն . β Աստիսնֆէս գնացեալ . δ  
Տիէէն-նի բաժանեցէք . ο Οն զոր . ε Է-րե-  
րէ գտիք . ς Թիսս-րօն գանձ . χ Խհրիստոս  
ոսկւոյ :

Եկոր տուն երթանք ըսաց Քսանթոս որ  
բաժնենք ոսկիները , և քեզ ալ ազատ ընեմ :  
Բայց երբոր եկան՝ վախցաւ Քսանթոս , չը-  
լայ թէ բանը դուրս հանէ Եղովբոս , ուստի  
բանալը դնել հրամեց խեղճը : Երբոր բանալը  
կը տանէին Եղովբոս կըսէր թէ փիլիսո-  
փաները այսպէս կը սրահեն իրենց ըրած  
խոստմունքը : Չէ թէ միայն չազատեցիր զիս ,  
որ խոստացեր էիր , հասկա բանան ալ դնել  
կուտաս : Այս խօսքովս սիրալը չարժեցաւ  
Քսանթոսին , շուտ մը պատուիրեց որ թող  
տան , ըսելով անտարակոյս երբոր դուն ա-  
զատիս՝ զիս չարաչար պիտի բամբասես և  
ամբաստանես :

Պատասխանեց Եղովբոս . հիմա որչափ  
գէշութի կ'ուզես ինձի ըրէ . բայց գիտնաւ  
որ օր մը զիս ահամայ պիտի ազատես :



ԳԼ. Ի.

ԱՆՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՂՈՒՄ Ի :

Այս ժամանակս Սամոս կղզին զարմանալի գիպուած մը պատահեցաւ . երբոր մէկ քնա-  
նուր երևելի տօն մը կընէին , յանկարծ ար-  
ծիւ մը ինջաւ բարձրէն խլեց տէրութեան  
մատնին , տարաւ ծառայի մը ծոց ձգեց :  
Բոլոր ժողովուրդը զարմանալով այս սքան-  
չելեացս վրայ , եկան միաբան աղաչեցին  
Քսանթոսին որ իրենց մէջ խիստ երևելի  
իշխան և մեծ փիլիսոփայ էր , մեկնէ ա-  
նոնց , թէ ինչ կը նշանակէ այս հրաշալի  
գիպուածս :

Քսանթոս չէր գիտեր ինչ պատասխան  
տայ , ժամանակ ուզեց որ մտածէ : Երբոր  
տուն դարձաւ միշտ անհանգիստ արտամութե-  
մէջ մնալով սկսաւ մաղձոտիլ : Եզովբոս տե-  
սաւ թէ իր արքա արտամութիւն կը մաշէ՝ հար-  
ցուց թէ ինչո՞ւ համար ասանկ արտում էս .  
այս բանս ինձի ձգէ , և արտամութիւն մէկ գի-  
դիր որ քեզ կը տանջէ : Գնա՛ վազէ զուրցէ  
Սամոսացիներուն թէ իմ բանս չէ հրաշք  
մեկնել և գուշակութիւն ընել . սակայն ես  
մէկ ծառայ մը ունիմ տունս որ ասանկ  
բաներու լաւ տեղեակ է , այն կրնայ տալ  
ձեզի գիպուածին մեկնութիւն , և ձեր տա-  
րակուսանքը քակել : Տէր իմ , թէ որ էս

անոնց տարակոյսը վերցընեմ՝ բոլոր պատիւը քեզի կ'ըլլայ, որ ասանկ բան գիտցող ծառայ ունիս. թէ որ չկրնամ, միայն ինձի կ'ըլլայ պարսաւանքը:

Քսանթոս մեծապէս ուրախանալով գնաց միւս օրը քաղաքացւոց ժողովքը, և անոնց պատմեց Եղովբոսին խօսքերը: Անոնք ալ աղաչեցին որ շուտով բերել տայ: Երբոր Եղովբոս եկաւ մտաւ Սամոսացւոց ժողովքին մէջ, կերպարանքին նայելով սկսան ամէնքը ծիծաղել, մինչև ծաղր ընելով ըսին թէ կրնայ ըլլալ որ ասանկ այլակերպ կոշտ մարդը այս հրաշքին մեկնուածիւր տայ: Ասանկ ցուցանեալոր բերնէն ինչպէս սկսան բարի բան լսենք. ուստի նորէն սկսան կատակելով խնտալ Եղովբոսին վրայ:

Իսկ Եղովբոս ձեռքը շարժելով կ'աղաչէր ժողովքին որ լուռ կենան. ո՞վ Սամոսացիք կ'ըսէր, ինչո՞ւ զիս կ'անարգէք կերպարանքիս տգեղ ըլլալուն համար. հոգին պէտք է նայիլ չէ թէ կերպարանքը. բնութիւնը շատ անգամ գեղեցիկ հոգին տգեղ մարմնոյ մէջ կը գնէ. դուք ամանին ձեռն կ'ընայիք թէ մէջի էղած պատուական գինիին: Բոլոր ժողովքին մարդիկը այս խօսքերս լսելով՝ ըսին որ եթէ դուն ունիս մեզի օգտակար բան մը խօսելու որ կարենայ ամենուս սիրտը հանգչեցընել՝ խօսէ: Ան ատենը մեծ համարձակութիւն մը այսպէս խօսեցաւ Եղովբոս. Ո՞վ Սամոսացիք որովհետեւ երբոր Բաղդը կը սիրէ երկպառակութիւն և խռովութիւն ցանել, կը գնէ մէկ առիթ մը փառաւորութիւն տիրոջն ու ծառային մէջ. եթէ պատահի որ ծառան

իյնի իշխանութե տակը, վիշտ կը քաշէ. և թէ տիրոջմէն վեր ըլլայ, նոյնպէս վիշտ կը քաշէ ծեծ կ'ուտէ. անանկ որ բանը ո՞ր դին դառնայ, ծառան նեղութիւն պիտի քաշէ: Դուք մինչև որ զիս ազատ չընէք, իմ տիրոջս իշխանութեը տակէն չհանէք, ես համարձակ ձեզի չեմ կրնար յայտնել առանց վախուզայն՝ որուն կը փափաքիք: Այն կետին բոլոր ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Քսանթոսին թէ ազատ ըրէ Եզովբոսը, կատարէ Սամոսացոց կամքը. ասով բոլոր քաղաքը ազատ կ'ընէս:

Քսանթոս պատասխան չտուաւ: Դատաւորը մէկէն կանչեց Քսանթոսին. թէ որ դուն ժողովրդեան մօտիկ չընելով ազատ չընէս քու կամքովդ՝ հիմա ես ազատ կ'ընեմ իմ իշխանութեւ. որ քեզի հաւասար կ'ելլայ:

Այլ չի կրցաւ դէմ կենալ Քսանթոս՝ ահամայ կամքով ազատ ըրաւ. որ փողերով (պոռոններով) քաղքին մէջ կը կանչէին թէ Քսանթոս փիլիսոփան ազատ ըրաւ Եզովբոսը Սամոսացոց աղաչանքին համար: Եւ այսպէս կատարեցաւ Եզովբոսին մարգարէութիւնը, որ Քսանթոսին ըսեր էր թէ ահամայ զիս պիտի ազատ ընէս: Եզովբոս ազատ ըլլալէն ետեւ սկսաւ ասանկ խօսիլ ժողովրդեան:

Ո՞վ Սամոսացիք՝ ինչպէս գիտէք, արծիւն (1) է թռչուններուն թագաւորը. որ իշ-

(1) Արծի- (խարդալ) Թռչունը. Ի՛շխան Թռչուններու Թագաւոր, որովհետեւ ամէնէն զօրա-



խանական մատնին վերցուց տարաւ ծառային  
ծոցը ձգեց . այս բանս կը նշանակէ՝ որ հի-  
մակուան թագաւորներէն մէկը կը մտածէ ,  
որ ձեր ձեռքովը ձեր իշխանութիւնը կործա-  
նէ , և ձեզ գերիւնէ եղծանելով ձեր օրէն-  
քը : Այս խօսքս ահի դողի մէջ ձգեց բոլոր  
Սամոսացիքը :

Քանի մը օրէն ետև Սամոսացիք թուղթ  
առին Կրէսոս (1) Լիւդիայի թագաւորէն՝  
որով իրենց կը պատուիրէր որ ամէն տարի  
իրեն տուրք տան , եթէ չտան՝ պատերազ-  
մով վրանին պիտի ելլէ , պատրաստ կենան :  
Այս բանիս վրայ ժողովք ըրին որ մտածեն  
ճամբայ մը գտնեն . վն զի եթէ հնազան-  
դէին , ազատութիւն կը կորսուէր . և կը վախ-

աւր եւ սոսիալի է , ու ամենուն իւր յաշմէ . նաև  
Դիոսին ընծայ ելած է , ինչպէս պիտի բացա-  
րենք :

(1) Կրէսոս Լիւդիայի թագաւորն էր 550 քա-  
րի տասն Քմի թաւախանէն . որ Ասիայի մէջ շատ  
պէշերոս պիտէլով Բուր Յոյներէ հաւկապոս ըրա-  
այն լատ գանձ մեծոթի տիւնէ , որ շատ մեծ եղա-  
հաւսարանք : Իմաստուններոս հեթ խօսիւ շատ իւ-  
րերէր . օր ճէ մեծոթէն վրայ զոտարձանալով ը-  
սաց Սոլոն փիլիսոփային թէ ինչի պէս փառա-  
ւոց ճարտ պենած էս : Ան ալ ըսաց թէ մեզնի  
ճահ պէտք է որ ճարտ իրեն երանի քաղ : Յետոյ  
Կիւրոս թագաւորէն յաշմոտելով քաղաքն առին .  
եւ Բուր մէկ զինուոր ճէ զփրկաւով սոտը վերոս-  
պիտի շարնէր Կրէսոսին , իր քաղաքն քովէ գան-  
ւեցաւ , որ լեզուն իսպառած էր լեւ խօսէր , որքին  
իւրեւրուն լեզուն բացուեցաւ . մի շարնէր , ըսաց զի-

նային Կրեսոսին իշխանութենը տակն իյնիլ մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցընել Եղովքոսին . և անոր տուած խորհուրդին հետեիլ ամէն բանի մէջ : Ան ալ պատասխան տուաւ թէ Պարոններ ձեր իշխանները խորհուրդ կուտան թէ տուրք տանք Կրեսոսին . և օգտակար է հնազանդիլ անոր , ու պատերազմին թշուառութեն ազատիլ . ուստի իմ ձեզի տալու խորհուրդս պարապ է . սակայն բաւական է ձեզի մէկ բան մը պատմել՝ որ հասկընաք թէ ինչ պէտք է ընել այս բանիս մէջ : Այս աշխարքիս մէջ բաղդը երկու ճամբայ յայտներ է մէկզմէկու հակառակ . մէկն է ազատութե՝ ճամբան , որուն սկիզբն է դժուար և խիստ , և վերջը դիւրին ու զուարճալի : Մէկալն է ծառայութեան . որուն սկիզբն է դիւրին և հանդիստ , բայց ետքը դժուար և խիստ : Այս բանս որ լսեցին , ամէնքը մէկ ձայնով պօռացին թէ մենք ազատ ենք . ծառայութե տակ չենք իյնիր : Եւ այսպէս թագաւորին խրկած դեսպանը ետ ճամբեցին առանց տուրք տալու : Կրեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուղեց Սամոսացւոց վրայ պատերազմ բանալ . բայց դեսպանն իրեն ըսաց թէ տէր իմ , չեմ կարծեր թէ կարենաս անոնց յաղթելու վրայ եւ

նաւորին , իմ հայրս Կրեսոսն է : Չինոսորը Բանեջ քաւրսս Կիւրոս Թագաւորին ատըին , որ հրամայ իրաւ լաւեւն ողջ ողջ ելեն . իրաւին գողնալ որ Բեւին՝ Ռփան ընկաւ Սողոմէին խօսքն ուսկիսս պօռաւ , Սողոմ Սողոմ : Թագաւորը պապաճառը հարցաւ . երբոր իմացաւ Սողոմին խօսքը , ազապ ըրաւ :

լէս որչափ որ Եզովբոս իրենց քովն է . վն զի անոր խորհուրդին կը հետևին , որամմէնբանի տակէն կ'ելլէ . ուստի իմ խորհուրդս այս է որ ամէն բանէն լաւ կ'ըլլայ , դեսպան խըրկէ՝ Սամոսացւոցմէ Եզովբոսն ուզէ , և խօսք տուր իրենց հետ հաշտութիւն ընելու . պարգևներ ալ խոստացիր առանց յիշելու տուրքը՝ ձգէ հիմա պատերազմը : Երբոր Եզովբոսը ձեռք ձգես ան ատենը առանց աշխատանաց կը յաղթես անոնց : Կրեսոս հաւանեցաւ այս հնարքիս , և դեսպան խրկեց ուզեց Եզովբոսը : Անոնք ալ հաւանեցան խրկելու :

Եզովբոս հասկընալով անոնց միտքը եկաւ Ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ . Ո՛վ Սամոսացիք ինձի մեծ պատիւ է որ թագաւորին երթամ ոտքն իյնիմ , պատուեմ . սակայն երթալէս առաջ կ'ուզեմ ձեզի առակմը զուրցել : Հին ատենը երբոր կենդանիները համաձայն էին՝ գայլերը պատերազմ բացին ոչխարներուն գէմ , որ շներուն հետ միաբան ըլլալով անոնց ետևէն կ'երթային . իսկ շները առաջնորդ ըլլալով կը ծեծկուէին , անանկ որ գայլերը չէին կրնար մօտենալ ոչխարներուն : Ուստի գայլերը դեսպան խրկեցին ոչխարներուն որ հաշտութիւն բայց իրարու հետ սիրով վարուելու համար ուզեցին որ շները պատանդ (ռէհին) խրկեն : Ոչխարները յիմարութե՞ հաւանեցան , և խրկեցին անոնց իրենց շները . գայլերը մէկէն պատուեցին շները՝ եկան ոչխարներն ալ կերան :

Սամոսացիք լաւ հասկըցան առակին միտքն ու չուզեցին որ Եզովբոս երթայ իրենց քո-

վէն . բայց Եզովբոս չուզէց կենալ, Էլաւ  
դէսպանին հետ գնաց Թագաւորին :

### ԳԼ . ԻԱ .

Եզովբոս հաշտեցաւ ինչպէս զԼազարն :

Երբոր Լիւդիա քաղաքը հասաւ Եզովբոս  
Էլաւ Թագաւորին առջին . բայց Թագաւո-  
րը զայն որ տեսաւ աւելի բարկացաւ :  
Մեծ ամօթ է ինձի՝ կ'ըսէր , որ ասանկ այ-  
լանդակ մարդը զիս արգելէ , և անանկ մեծ  
կղզին ձեռքէս հանէ : Պատասխանեց Ե-  
զովբոս , Ո՛վ մեծ Թագաւոր , ես ոչ բռնու-  
թի՛ եկայ հոս , և ոչ վախնալուս . այլ իմ  
կամքովս եմ եկեր . ներէ ինձի որ քիչ մը  
խօսիմ . սակայն մեր բանին վրայ չխօսած  
մէկ առակ մը պատմեմ , Թողու՛թիւն ըրէ :  
Մէկ մարդ մը մարախ (լէփրիկ) Ժողվէր կը  
մեռցընէր . դիպուածով բռնեց ճպուռ  
(ճըռճըռ պէօճէի) մը . կենդանին տեսաւ Թէ  
զինքն ալ պիտի մեռցընէ , սկսաւ աղաչել Թէ  
զիս մի մեռցընէր սլարապ տեղը . վս՝ զի ես  
ոչ ցորենի փնաս ունիմ , և ոչ մէկ ուրիշ զէն  
մը կրնամ տալ՝ այլ միայն շարժելով (1) իմ

(1) Աս բեռալ իենդանիներան խայն օդէն  
իւ աստփանայ . ինչ չի վրայի ծախէն օդ և չաւ-

մանարդարիկ մաշկերս որ ունիմ վրաս՝ քաղցր ձայն կը հանեմ, որ անցնողները և բանուորները զուարճանան. ուստի ձայնէս 'ի զատ բան մը չունիմ, և ուրիշ բան չես կրնար վրաս գտնել: Այս բանս որ լսեց, Թողուց որ երթայ:

Ո՛վ մեծ Թագաւոր. ահա ես ալ ոտքդ ընկած կ'աղաչեմ, զիս փուճ տեղը մի մեռցնէր. ես մարդու գէշութիւրրած չեմ. մէկ յանցանք մ' ունիմ որ համարձակ կը խօսիմ, և մարդու երեսպաշտուծի չեմ ընէր. Թէպէտ մարմինս է անշնորհք, որ գրտէն անարգ կ'երևնամ, բայց խօսքս անարգ չէ: Թագաւորը այս խօսքիս վրայ անանկ զարմացաւ՝ որ մեռցնելու մեղքը ցաւ. ուստի կանչեց. Ե՛ղբոս, ես չէ՛, հասկա ճակատագիրը (1) կեանքդ քեզի բաշխեց. խնդրէ ինձմէ ի՛նչ կ'ուզես, քեզի կը շնորհեմ: Ո՛վ մեծ Թագաւոր, ըսաց Եղովբոս, կը խնդրեմ որ Սամոսացւոց հետ հաշտուծի ընես: Շնորհ բարի ըսաց Կրեսոս՝ կը հաշտուիմ: Ան ատենը Եղովբոս ընկաւ Թագաւորին ոտքն ու խո-

ւեն մաշկէդէն Բեւերոսն. և այն մաշկէրոսն Բեւերոսու՛մ՝ օրէ իւր շարժի և սաստիկ յայն իւր հանէ. շաք մանր իենդանիներ ասանկ շաք յայն իւր հանէն:

(1) Ճակատագիր ընելով հեթանոս փիլիսոփաներէ Ի՛իմանային ճակատի լեայ գրած ամեն մարտուն գաւիտէ. և գրուած ճակատագիրս զիս ըսաւ, ինչ որ ընես շահ լիայ ի՛րենին: Այս գիրը Ռայն անտէրէ Իրնային կարտաւ, Բայց չէին կրնար աւել. անոր համար ի՛րենին, Բէ Դիոս Ալիստին մահաւորը լեայ կուտար. ու ճակատագրած

նարհուծք շնորհակալ եղաւ ըրած բարե-  
րարութենէ համար :

# ԳԼ . ԻԲ .

Եղովբոս Գրէ զառաքել իւր :

Եղովբոս իր առակաները ան ատեն ըզրեց  
Երբոր Կրեսոս թագաւորին քովն էր, որ  
մինչև մեր օրը մնացին : Այս առակաները  
ընծայ ըրաւ թագաւորին, ան ալ մեծ շնոր-  
հակալութք ընձնեց, և Եղովբոսին մեծ ու-  
թի տալով դեսպան ըրաւ, ու թագաւորա-  
կան թղթերով իրկեց որ երթայ Սամոսա-  
ցւոց հետ հաշտութի խօսի թագաւորին կող-  
մանէ, և հասկըցնէ, որ իրեն աղաչանքով  
Կրեսոս անոնց հետ բարեկամ պիտի մնայ :  
Ասկէ 'ի զատ թագաւորը շատ պարգևներ  
ընծայ ըրաւ Եղովբոսին, և ճամբուն ամմէն  
բանը հոգաց : Երբոր Սամոս հասաւ, քա-  
ղաքացիք անպատմելի ուրախութք լեցուած,  
թագ պսակ տարին իրեն, և քաղաքական  
հանդէսներ ըրին՝ որ մեծ պատիւ ըլլայ Ե-  
ղովբոսին :

Իսկ Եղովբոս թագաւորին թղթերը կար-  
դաց բոլոր ժողովրդեան առջև, հասկըցը-  
նելով թէ անոնք ինչպէս որ իրեն աղաատու-

էր : Բայց « Բարեպետները 'իմանան ասոյն  
նախախնամութիւն » որ իւր նախախնամ  
աշխարհս :

Թի շնորհեցին, ինքն ալ անոր դէմ այս բանով հատուցում ըրաւ. ուստի Թագաւորին միտքը յայտնեց անոնց և հաշտութիւն ըրաւ: Յետոյ ելաւ այս կղզիէն գնաց զանազան քաղաքներ իմաստուն մարդիկ փնտրուելով, որ հետերնին հակաճառութիւն ընէ: Մինչև ելաւ Բաբելոն (1) գնաց. հոն ալ իր իմաստութիւնը յայտնեց, և Լիգերոս Թագաւորին պալատը մտաւ:

Այն Ժամանակի Թագաւորները իմաստութիւն վարուելով կռիւ չունէին, միշտ խաղաղութիւն մէջ էին. և ասով շատ անգամ իրարու առակներ, և խրթին բաներ կը գրէին հարցմունք կ'ընէին այս սլայմանով, որ երբոր մէկը չէր կրնար սպտասխան տալ, կը պարտաւորէր տուրք տալու մէկալին, ինչ կերպ որ գաշինք կ'ընէին (2):

Եզով բոս ամմէն հարցմունքին և առակներուն դիւրին սպտասխան կուտար, որ Լիգերոս Թագաւորին կը գրէին, և ասով մեծ համբաւ ունեցաւ Թագաւորը: Բայց որովհետև մէկալ Թագաւորները չէին կրնար Լիգերոսին խնդիրներուն սպտասխան տալ, կը պարտաւորէին դաշնագրութեան համար տուրքեր տալ Թագաւորին:

(1) Բաբելոն (Պաղտատ) այն Ժամանակը Ժաղիած ըլլալով գիպոսներու յարգութիւն կար, մանաւանդ Լիգերոս Թագաւորին օրը. անոր համար Եզովբոս հոն գնաց:

(2) Այս կերպ հարցմունքս մինչև հիմա կայ Արաբացոնց մէջ. որ Դրսի քաղաքները շատ անգամ (Շէյխերը) և (Տէրվիշները) կ'երևան մեծամեծ



## Գ. Լ. Ի Գ.

Եզովբոս որդեգրէ ինքեան զԵննոս :

Եզովբոս տեսաւ որ զաւակ չունի . մէկ ազնուականի մը զաւակ Եննոս անունով իրեն որդի ըրաւ , տարաւ Թագաւորին յանձնեց իբր իր հարազատ զաւակը . բայց այս ապերախոր շատ չանցաւ մեծ անկարգութիւններ ըրաւ Եզովբոսին տանը մէջ : Եզովբոս հասկըցածին պէս տնէն դուրս ըրաւ : Իսկ Եննոս ոխ պահեց , ու Եզովբոսին վրէժխնդիր ըլլալով Թուղթ մը շինեց անոր բերնէն , որ կը գրէ իշխաններուն . որոնք խրթին առակներ կը խրկէին Ղիզերոսին . և անոնց կը հասկըցնէ Թէ ասկէ ետեւ ձեզի հետ մէկ պիտի ըլլամ Թագաւորին դէմ : Այս Թուղթը Եզովբոսին մատնիովը կնքեց տարաւ Թագաւորին ցրցուց :

Թագաւորն որ տեսաւ Եզովբոսին կնիքը (Ռ-հի-րը) , կարծեց Թէ անտարակոյս Եզովբոսն է գրեր այն Թուղթը իրեն դէմ . ուստի բարկութեւ հետեւելով անանկ տաքցաւ որ մէկէն հրամեց Հերմիբբոսին (1) , որ ա-

նէրոն Բան իւ հարցունէն . եթէ լգիանան , իւ պարգաւորին անոնց Բան քաշուա :

(1) Հերմիբբոս եր Բագաւորին մէկ հաւատարմ-

ռանց քննելու մեռցնէ Եզովբոսը իբր մատնիչ . Հերմիբբոս ճշմարիտ բարեկամ ըլլալով Եզովբոսին՝ իրեն բարեկամութիւն յայտնի ըրաւ այս կերպովս : Առաւ Եզովբոսը տարաւ մէկ գերեզմանի մը մէջ պահէց ամենեին ծածուկ . և ինքը զգուշութեւն բան կը տանէր անոր մարդ չիմանալով : Իսկ Եննոս՝ Թագաւորին հրամանովը Եզովբոսին ամմէն բանը յափշտակեց :

Ճամանակ անցնելէն ետեւ Նեքդէնաբոս Եգիպտացւոց Թագաւորը լսեց որ սպաններ են Եզովբոսը, Թուղթ մը գրեց Նիգերոս Թագաւորին՝ կաղաչէր որ իրեն մէկ քանի սրամիտ ճարտարապետ (Գալֆա) խրկէ, որպէս զի չինեն իրեն անանկ մէկ աշտարակ (Խուլէ) մը, որ ոչ երկնքին դպչի և ոչ գետնին : Նաեւ խրկէ իրեն անանկ մէկ խելացի բարակ մարդ մը որ կարենայ պատասխան տալ խրթին առակներուն : Թէ որ ըսաց այս բանս կարենաս ընել, ես տուրք կուտամ քեզի . Թէ չի կրնաս, գուն ինծի պիտի տաս : Այս Թուղթն որ կարդաց Թագաւորը տրամուլթեւ պաշարուեցաւ . վն զի մէկը չունէր քովն որ կարենայ աշտարակին առակը մեկնել . ուստի սաստիկ ցաւելով Եզովբոսին մահունը վրայ՝ կրսէր Թէ անոր մեռնելով իմ տէրութեան գլխաւոր սիւնը կործանեցաւ :

Հերմիբբոս տեսաւ Թէ Թագաւորին կակի ծը սրտանց է, եկաւ աւետիս տուաւ Թէ Եզովբոս կենդանի է . վն զի Թագաւորիս

բի՛ն պաշտօնապէսը իբր (Հասաս պաշը) . անոր համար իրեն պաշտօնիւն որ Ֆուշէն Եշվէնը :

օգտին համար չմեռցուցի . լաւ գիտէի , որ  
շատ պիտի զոջաս տուած վճռոյդ վրայ : Այս  
բարի լուրը լսածին պէս թագաւորը մեծա-  
պէս ուրախացաւ : Ուստի շուտով Եզովբո-  
սը գերեզմանէն դուրս հանեցին , խեղճին  
վրան գլուխը աղտոտ հողոտ՝ մէկէն թագա-  
ւորին դէմը հանեցին . որ զայն անանկ խե-  
ղճ տեսնելով այնպէս սիրտը ցաւեցաւ որ  
սկսաւ լալ : Հրամայ որ շուտով լրւան հագ-  
ցնեն և ամմէն պակասութիւն հոգան : Եզով-  
բոս Եննոսին ըրած անօրէնութիւն սուտ հա-  
նեց , և իր մեծասրտութիւն յայտնի ընելու  
համար՝ ներում խնդրեց թագաւորէն , որ  
չմեռցնէ Եննոսը :

Լիգերոս թագաւորը հանեց Եգիպտոս-  
ցւոյ թագաւորին թուղթը ցրցուց Եզովբո-  
սին որ հասկընալով առակին միտքը , սկսաւ  
ծիծաղիլ . ետքը թագաւորին ըսաց , որ ա-  
սանկ պատասխան տայ : Երբոր ձմեռն անցնի՝  
քեզի բանուորներ կը խրկեմ որ շինեն ըսած  
աշտարակդ : Նաև կը խրկեմ մէկ գիտուն  
մարդ մը որ ամէն բանի պատասխան տայ  
ինչ որ իրեն առարկեն : Ան ատենը Լիգերոս  
ճամբայ դրաւ Եգիպտոսի թագաւորին դէս  
պանները , և նորէն առաւ Եզովբոսին ամէն  
մեծութիւն , իրեն ծառայ տուաւ Եննոսն  
ամէն ունեցած բարիքովը :

## ԳԼ . ԻԴ .

Անյիշատակութիւն եւ խորագր : Եղովթոսի :

Եղովթոս նորէն տունն առաւ Եննոսը .  
 ամենեւին անցած բաները չյիշելով իր զաւակին  
 պէս կը նայէր , և շատ գեղեցիկ խրատներ  
 կուտար որ բարի ըլլայ : Ո՛րդեակ կ'ըսէր ,  
 ամէն բանէն աւելի զԱճ պաշտէ . Թագաւո  
 րին հնազանդ եղիր . Թշնամիներուդ առջին  
 երևելի եղիր , որ քեզ չի նախատեն . Իսկ  
 բարեկամներուդ՝ հեզ և խոնարհ , որ միշտ  
 գլխդ աւելի սիրեն : Աղօթք ըրէ Թշնամի  
 ներուզ երբոր խեղճ կ'ըլլան աղքատութիւն և  
 հիւանդութիւն , որ ետքը քեզի տրամուծի  
 չբերեն : Շատ անգամ ալ բարեկամներուդ  
 առողջութիւնը համար աղօթք ըրէ : Միշտ  
 նայէ որ ընկերոջդ հետ աղէկ սիրով եր  
 Թաս , որ չըլլայ Թէ ցանկութիւն ուրիշ մար  
 դու ետեւէն ըլլայ , որովհետեւ կանայք բնա  
 պէս փոփոխական և Թեթևամիտ են . երբոր  
 կը շողոքործին , չար բան չեն մտածեր : Ան  
 խոհեմութիւն ամէն բանի մէկէն մի հաւա  
 տար , քիչ խօսէ , և միշտ քու լեզուիդ օր  
 եղիր . մի նախանձիր ուրիշներուն բաղդին .  
 առաւել ուրախացիր ուրիշին յաջողութիւնը  
 վրայ . վն զի նախանձը աւելի վնաս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (1): Հոգաբարձութիւնը բնականաբար ծառաներուդ վրայ, որ քեզմէ վախնան իբրեւ իրենց մեծէն, և քեզ սիրեն իբրեւ իրենց քաբարերար: Մի ամենար միշտ աղէկ բաներ սորվելու. մի յայտներ կնոջդ քու ծածուկ բաներդ, վն զի անդադար կը ջանայ պատճառ դանել, որ վրագ ելլէ, և քեզի հրամմէ: Ամէն օր բան ժողովէ քեզի վաղուան համար. զի շատ աղէկ է ունեցած բարիդ թշնամուդ ձգել մեռնելէդ ետեւ, քան թէ ողջութեւ ատենդ բարեկամի կարօտ ըլլալ:

Որո՞ւն որ հանդիպիս բարեւէ պատուով և քաղաքավարութեւ. շունը պոչը շարժելով եբր կը շողոքորթէ անոր, պարտական կ'ընէ որ իրեն հաց տայ: Մի զըջար բարեպաշտ ըլլալու. բամբասող մարդը տունդ մի հանդիպցնէր, վն զի դուրս կը հանէ տանդ բանը, և ամէն զուրկածներդ: Անանկ բան չընէս որ քեզ անարդանք և տրտմութիւն բերէ: Մի խռովիր աշխարհքիս պատահմունքներուն վրայ: Ուրիշին չար խորհուրդ չի տաս, և անօրէն մարդկանց չար վարքին չի հետեւիս:

Այս խրատներս անանկ դպան Եննոսին, որ նետի (օգի) պէս սիրտը խոցեցին. մինչև խղճմտանքին խայթելովը, և Եզովբոսին

(1) Այս Եզովբոսին խրաբը աւելի յարմար ինքայ մեր լեզուին սքոթաբանութեւ. իբր ղի նախանձ բառը այսպէս կը սքոթաբանի նախանձին ձևաւ. Վն ղի սիրաբ ճաշելունախ իրեն ձևաւ ինքայ:

սուր խրատները մտնոտալով շատ չանցաւ  
մեռաւ :

## ԳԼ . ԻԵ .

Եզովբոս իրնէ Վաթս արժանոյ :

Եզովբոս կանչեց բոլոր հաւորանները և պա-  
տուիրեց՝ որ չորս հատ արծիւի ձագ բռնեն  
իրեն բերեն : Առաւ զանոնք զարմանալի  
կերպով անանկ կրթեց , որ մարդու հաւ-  
տալիք չգար (1) : Վասն զի կը պատմեն թէ  
թռչուններուն սորվեցուց որ երբ պիտի  
թռչէին՝ վիզերէն կախեց չուանով մէյմէկ  
զամբիւղ (շէշուիւ) , մէջը գրաւ պզտի տղաք .  
անանկ սորվեցուցեր էր ձագերուն , որ տղա-  
քը ո՛ւր ուզեն , հոն երթան . վեր վար կը  
թռչէին տղոցը ուզածին պէս : Երբոր ձմեռն  
անցաւ , գարնան ատենը Եզովբոս ամէն  
հարկաւոր պատրաստուիլ տեսաւ ճամբայ  
ելաւ . արծիւներն ալ տղաքներով հետն  
առաւ Եգիպտոս գնաց : Անանկ զարմանալի  
բաներ ըրաւ Եգիպտացւոց առջին , որ  
տեսնողին խեղքը կերթար :

(1) Բւանոս-ի քարահոս-ի այս պատմու-  
թեանն վրայ . վասն զի Դժոնար Բան է . Բայց հիմա  
Եւրոպայի երեսներէն անանկ իրնու-նի կո-  
տան , որ մարդ ինչ պատմանայ , մինչև հասարակ-  
չփար : Բեպէս այս պատմութիւն ալ շատ Դժոնար  
Բան է :

Բայց՝ Նեքդենաբոս Թագաւորը երբոր լսեց  
Եզովբոսին գալը մէկ բարեկամէն, ըսաց թէ  
զիս կը խաբէս. ես լսեր եմ թէ շատոնց մե-  
ռած է: Միւս օրը սլատուիրեց իր սլաւաւորի  
մեծամեծներուն որ ամէնքն ալ ճերմակ հագ-  
նին. ինքը կարծիրներ հագաւ, գլուխն ալ  
դրաւ Թագ մը անդին քարերով զարդարած,  
և այսպէս մեծուէ փառքով նստեր էր իւր  
գահը՝ հրամայ որ Եզովբոսը բերեն. որ ներս  
մտածին սէս յանկարծ հարցուց Թագաւո-  
րը թէ զիս ի՞նչ բանի կրնաս նմանցնել, և  
քովիններս ի՞նչ բանի: Պատասխանեց Եզով-  
բոս. քեզ կը նմանցնեմ գարնան արեւու, և  
քովի իշխաններդ հասած ցորենի: Թագաւո-  
րը զուարճանալով այս սլատասխանիս վրայ  
մեծամեծ սլարգաններ տուաւ Եզովբոսին:

Մէկալ օրը Թագաւորը հագաւ ճերմակ  
լաթեր, և իշխաններուն ալ սլատուիրեց որ  
կարծիր հագնին. բերել տուաւ Եզովբոսը և  
մէկէն հարցուց: Ան ալ սլատասխան տուաւ  
թէ դուն կը նմանիս արեգական, և իշխան-  
ներդ՝ ճառագայթին: Յետոյ ըսաց Նեքդե-  
նաբոս թէ իմ արուեստ առջին լիգերոս Թա-  
գաւորը բան մը չեմ սեպեր: Եզովբոս խնդա-  
լով սլատասխանեց, ո՞վ մեծ Թագաւոր ասանկ  
գիւրին գատաստան մի կտրեր լիգերոսին  
վրայ. եթէ դուն քեզ քու Ժողովրդեանդ  
հետ բաղդատես՝ կրնաս արեւ ըսուիլ. բայց  
թէ որ լիգերոս Թագաւորին հետ բաղդա-  
տես՝ քու լոյսդ անոր առջին խաւար կ'ըլլայ:

Նեքդենաբոս զարմանալով ասոր համար-  
ձակ սլատասխանին վրայ, հարցուց թէ բե-  
րի՞ր մեզի ճարտարապետներն որ ուզեցի



աշտարակ շինելու համար : Պատրաստ են ըսաւ Եզովբոս . միայն պէտք է տեղը ցոյց տաւ որ սկըսինք շինել : Ան ատենը Թագաւորը քաղաքէն դուրս ելաւ տարաւ մէկ մեծ դաշտի մը մէջ՝ ցրցուց տեղն որ պատրաստեր էր աշտարակին համար :

Եզովբոս հոն տարաւ արծիւները , և չորս տղաքը դրաւ զամբիւղներուն մէջ գործիքներն ալ միատեղ , Թռուց Թռչունները . երբոր այս տղաքը վեր բարձրացան , սկսան միաբերան սօռալ Թէ բերէք մեզի քար ու կիր և փայտ որ շինենք աշտարակը :

Նեքդենաբոս երբոր տեսաւ տղաքներն օդին մէջ կը սօռան , արծիւներն անոնց հնազանդ՝ ուր ուզեն տղաքը հոն կ'երթան . հարցուց Եզովբոսին Թէ ո՞ր աշխարհքէն այս Թեւաւոր տղաքը բերիր : Պատասխանեց Եզովբոս . Վիգերոս շատ ունի ատանկ տղաք . հապա դուն զբեղ ի՞նչպէս բաղդատեցիր անոր որ անոնք ունի հաւասար մարդ է :

ՅաղԹուեցայ ըսաւ Նեքդենաբոս , ուստի այլ բան չունիմ ընելու , բայց եթէ մէկ քանի տաակ զուրցեմ , նայինք կրնան շուտով քակել : Ես մէկ զարմանալի էգ ձի մը ունիմ , որ երբ կը լսէ Բաբելոնին արու ձիերուն ձայնը , հոս կըսկըսի շուտով յղանալ . Թէ որ այս կարգէ դուրս գիպուածին սպառճառը կարենաս տալ , իմաստու Թիդ մեզի կը յայտնես : Ո՞վ մեծ Թագաւոր ըսաց Եզովբոս . մինչև վաղը ինձի Ժամանակ տո՛ւր , պատասխան կուտամ հարցմունքիդ : Երբոր տեղը դարձաւ Եզովբոս բռնեց մէկ կատու մը տուաւ ծառաներուն որ բոլոր քաղաքին մէջ

ծեծելով կը պտըտցընէին : Բայց եգիպտացիք որովհետեւ ասանկ կենդանիները կը պաշտէին (1), տեսան որ կատուն կը ծեծեն՝ վրանին թափեցան բազմութիւն քաշեցին առին կատուն ձեռքերնուն որ չծեծեն և գացին թագաւորին յայտնեցին այս սոսկալի մեղքը : Թագաւորը կանչեց Եզովբոսն ըսաց թէ չիտէիր որ մենք աստուծոյ պէս կը պատուենք կատուն : Ինչո՞ւ համար այս բանս ըրիր : Պատասխանեց Եզովբոս թէ ես անոր համար ըրի, վասն զի անիրաւութիւն ըրաւ Վիգերոս թագաւորին ու այս գիշեր խղճեց անոր աքաղաղը, որուն ձայնովը գիշերուան Ժամանակը յայտնի կ'ըլլար. և խիստ արթուն կտրիճ աքաղաղ էր : Կրկնեց թագաւորը. Ի՞նչ կը խօսիս Եզովբոս. չէս ամբհնար շինած սուտերէդ : Ինչպէս կրնայ ըլլալ որ կատուն մէկ գիշերուան մէջ Եգիպտոսէն Բաբելոն երթայ :

Եզովբոս ծիծաղելով ըսաց. եթէ քու ձիերդ Բաբելոնին ձիերուն ձայնը առնելով կը յղանան, այս բանս ինչո՞ւ ըլլայ անհնարին : Թագաւորը բանը հասկընալով շատ զարմացաւ Եզովբոսին գիւտին և խեղճին վրայ :

(1) Ամէն լուրդաւորի ինչպէս ինչեք հասարակօրէն մեծ դասի ունէին Եգիպտոսի մէջ. մանաւանդ ինչ, ռիւսաբը, իսպան, և այլն. անոր համար Եգիպտոսի ժոմանք իսպան. ու ասանց մեծ լեին ինչաք ուրիշ :

## ԳԼ. ԻԶ.

Խմաստաբանի Եզովբոսի:

Քիչ մը ժամանակէն ետեւ Թագաւորը բերել տուաւ Արեգ (1) քաղաքէն շատ իմաստուններ, և վիճաբանող գիտուններ, որ Եզովբոսին հետ հակաճառութիւնէն, ուստի ամէնքը միատեղ Եզովբոսն ալ հետերնին կերակրի հրամցուց: Երբոր սեղան նստան, այն գիտուններուն մէկը դարձաւ Եզովբոսին ըսաց, ո՞վ տարական՝ անծն որ ես կը պաշտեմ, զիս խրկեց որ մէկ խնդիր մը զուրցեմ որ քակես: Պատասխանեց Եզովբոս Թէ դուն գէշ կը խօսիս. վասն զի ան տամէն բան գիտէ և իրմէ ծածուկ բան չկայ. ուստի մարդէ բան սորվելու կարօտ չէ, զքեզ ինչո՞ւ պիտի խրկէ. այս խօսքով չէ Թէ միայն դուն քեզ կ'անարգես, այլեւ անո՞ր ալ յիմար կ'ընես:

Մէկ ուրիշն ալ ըսաց Թէ մէկ մեծ տաճար մը կար, մէջը մէկ սիւն մը տասուերկու քա-

(1) Արեգ ասլա՝ այսինքն արեգական ասլա՝ շուշարէն կ'ըսուի հեղիուպօլիս. հին ասլանը արեգական պաշտօնը հոն կ'ըլլար, անոր համար այսպէս իշխեցաւ: Աս ասլա՝ Եզովբոս գեղին ու Արաբիային մէջն է. որոնք բնակիչները Բուր ասլանն ու գիպոսներն էին. որ Իսրայէլացի լիւծին Փարսոսին հրամանովը:

ղաքով. ամէն մէկը երեսուն գերան (սիւն) ունէր, և երկու կնիկ կը պարտէին չորս դին: Պատասխանեց Եզովբոս թէ այսինչ գեղեցիկ խնդիր է, որ մեր տղաքն ալ գիտեն մեկնել: Այս տաճարն աշխարհքս է, սիւնը տարի է, քաղաքները՝ ամիսներն են, գերանները՝ ամսուն օրերն են, երկու կնիկներն ալ, որ սիւնին չորս դին կը պարտէին, գիշեր ցորեկն է որ փոփոխ կը դառնան:

Միւս օրը՝ Նէքդենաբոս պատուիրեց որ իրեն իշխանները հոն գան. ես շատ կը վախնամ կ'ըսէր, չըլլայ թէ պարտաւորինք տուրք տալու Լիգերոսին Եզովբոսին պատճառաւ: Խորհուրդ ըրին, մէկը իշխաններէն ըսաց թէ սէտք է մենք ալ պարտաւորենք Եզովբոսն որ մեզի անանկ խնդիր մը առաջարկէ որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցում, մինչև մտքերնէս անցած չըլլայ ու լսած ալ չըլլանք (1): Եզովբոս խօսք տուաւ որ վաղը հարցմունք կ'ընեմ: Ելաւ տուն գնաց մէկ թուղթ մը շինեց, որուն մէջ գրած էր որ Նէքդենաբոս խօսք կուտայ թէ հազար տաղանդ Լիգերոսի տալիք եմ (2): Հետև

(1) Որովհետեւ իւրօրէն էիս. որ Եզովբոս ալ իրեն իշխան հարցունէ, և գիտէին որ անոր խնդիրը լինան պիտի հասկընաւ, անանկ խնդիր ճշողեցին, որ լինայ հասկընալու, և լսած բաներէն լսեց: Առով ինչ իշխան որ լսեց պիտի ընէին թէ մէկ այդ բանը լսած ենք և գիտենք, անպարտաւոր բան չէ. ահա այս ծածկով պիտի յաղթեն Եզովբոսին:

(2) Եզովբոս ալ անունը միտքը հասկընալով ա-

եալ օրը բերաւ թուղթը թագաւորին . իշխանները և խորհրդականները ուրիշ բան կարծելով թուղթը չբացած միաբերան կանչեցին թէ մենք գիտենք, և շատոնց հասկըցած ենք, այս բանը մեզի նոր չէ: Որովհետև գիտենք կ'ըսէք, ըսաց Եղովբոս, ես ալ ձեզի մեծապէս շնորհակալ կ'ըլլամ և խոնարհուիմ զիս սպարտական կը համարիմ ձեզի:

Բայց Նեքդենաբոս երբոր կարգաց թուղթը, շատ նեղացաւ սիրտը սպարաբլին համարոր գրած էր. մինչև չհամբերելով կանչեց թէ ես լիգերոսին սպարաբ մը չունիմ. վրկայեցէք ամենքնիդ ես անոր սպարտական եմ: Ան ատենը փոխեցին իրենց միտքն ու ըսին թէ մենք ասանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք: Կրկնեց Եղովբոս թէ ահա այս էր իմ խնդիրս, որ մեկնեցիք:

Եւ ի խնդիր ճշտեալ, որ հարկաւ պիտի պարտաւորին. վասն զի եթէ ըսեն իրաւ է, և լինեն, պիտի պարտաւորին. եթէ վկայութիւնս հանեն Ռոշիւն, դարձեալ ինչ պարտաւորին. որովհետեւ իրենց բերնով վկայեցին թէ այս բանը չեն լսած: Այս կերպ յետնարկութիւն երկսայրաբանութիւն կ'ըսուի. ինչպէս հին աստուծոյ ճշտեալութիւն ճշտեալ աշխարհս, և ըսաւ բան խոստացաւ թէ որ անանկ սորով, միւլն կարենայ յաշխարհ տալի տաքաստեանին մէջ որ իօտի: Այն բան սորովեւն ետեւ ընդէր վարպետին բան ճշտաւ. և որ դին դարձաւ ինչ վաստիւնցաւ. վասն զի եթէ յաշխարհ վարպետին՝ ինչ վաստիւնցաւ. եթէ յաշխարհ, նոյնպէս դաշխարհին ուժով ինչ վաստիւնցաւ: Այս նման է Եղովբոսին տաքաստեանին ալ:

Նեքդենաբոս անանկ զարմացաւ Եզովբոսին այս ըրած բանին վրայ որ չգիտացաւ կանչեց թէ պէտք է խոստովանինք որ երջանիկ է լիգերոս որ այսպիսի խմաստուն մարդուն իր անբուժելի մէջ, որ է իբր անհատնում աղբիւր մը գիտուածէ: Այս խօսքէս ետեւ հանեց տուաւ հազար տաղանդը Եզովբոսին որ դաշինք ըրեր էին. և մեծ բարեկամական սիրով Բաբելոն խրկեց: Եզովբոս Բաբելոն հասաւ պատմեց լիգերոս թագաւորին ամէն բանն որ ըրաւ Եգիպտոս, և տուաւ ոսկիներն որ Նեքդենաբոսէն առերէր: Լիգերոս այս ըրած երախտեացը համար մէկ ոսկիէ արծան մը կանգնել տուաւ ի պատիւ Եզովբոսին (1):

(1) Հին աքեմէն շաք մեծ պապի- եւ եմէ մէկին անուանը արքան ճշ կանգնեին. իսկ ոսկիէ արքան կանգնելը շաք գերազանց պապի- եւ: Միւր քիաղէս զօրապետը անենացոյց քրտաւիճ ազապեց, Բայց ոսկիէ արքան ըզրին. ասով իմացուի Եզովբոսին մեծ համարումն որ ունէր Բաբելոն:

## ԳԼ . ԻԷ .

Եղովբոս Գնայ 'ի Յոնն , և 'ի Դեղոս :

Եղովբոս Բաբելոն դառնալէն ետեւ շատ չանցաւ միտքը դրաւ որ Յունաստան երթայ Ժուռ գայ Թադաւորին հրամանովը . բայց մինչև որ երգում չըրաւ նորէն ետ դառնալու՝ Թադաւորը հրաման չտուաւ . ուստի խօսք տուաւ Եղովբոս Թէ կը դառնամ մինչև 'ի մահ Բաբելոն կը մնամ : Գնաց շատ երևելի քաղաքներ Յունաստանին մէջ քալեց , և ամէն տեղ իրեն խմաստուն փորձերն ըրաւ . յետոյ ուղեց երթալ Դեղոս կղզին (1) : Այս քաղաքացիք երբ անոր խօսակցութիւնը կը լսէին ուրախ կ'ըլլային . սակայն իրենց անշնորհք ըլլալովը մէկ յարգութիւն մը չըրին Եղովբոսին :

Իսկ Եղովբոս նայելով անոնց տմարդուէր զուրցեց . ո՛վ գեղոսացիք ես ձեզ փայտի կըտորի մը կը նմանցընեմ որ ծովուն վըայ կ'երթայ կուգայ . որոնք որ հեռուէն կը տեսնեն , կարծեն Թէ երևելի մեծ բան է . բայց

(1) Դեղոս կամ Դելոս կղզին հին Ժամանակէ շատ երեւելի քեշ էր . որ Ապոլլոն լաճին ծնած քեշն ըստւո՛վ՝ Խաբառնը հոն շինած էր շատ Ժառանգ , ամէն աշխարհէ հոն կ'երթար :



երբոր ցամաքին կուգայ կը մօտենայ, կը հասկըցուի ինչ ըլլալը: Ես երբոր ձեր քաղաքէն հեռու էի շատ կը զարմանայի ձեր վրան, մինչև իմ համարմանս արժանի դրեր էի զձեզ. բայց երբոր հոս եկայ շուտով հասկըցայ թէ սխալ է եղեր իմ կարծիքս. ուստի ես ալ միտքս փոխեցի և հիմա ձեզ կը տեսնեմ ամենէն անպիտան մարդիկ:

Դեղոսացիք այս խօսքերս լսելով վախցան որ չըլլայ թէ ամէն գացած քաղաքները սրտով, ուղեցին զըստըտելով մեռցնել: Այս բանը փառհօով գլուխ տանելու համար Ասողոնին (1), Երևելի տաճարէն գողցան մէկ ոսկիէ աման մը և բերին գաղտուկ սրահեցին Եզովբոսին բաներուն մէջ. իսկ Եզովբոս ամենևին բան մը չգիտնալով միամիտ ելաւ Դեղոս կղզիէն Ֆօքիդա երթալու: Մէկէն գեղոսացիք վրան թափեցան արգիլեցին, ամբաստանութիւն ընելով թէ դուն սրբասլըզծ ութիւ ըրիր: Եզովբոս զինքն արդարացնելով համարձակ, կ'ըսէր թէ այգալիսի բան չեմ ըրած: Անոնք ալ բռնութիւն փրնտըեցին բաներուն մէջ գտան ոսկիէ ամանը, որ իրենք դրեր էին հոն: Առին ամանը ձեռքերնին մեծ աղաղակով տարին բոլոր ժողովրդեան ցըցուցին: Եզովբոս հասկըցաւ

(1) Ապողոն եւ Դիոսին սրտին, լսած երաժշտութեան և բանաստեղծութեան որ այնչափ յարգելի եւ հեղինակուող, մինչև ամէնքն տալիս փառք կ'երկային, որ խիստ փառաստուր շինած եւ Դեղոս կղզին. քաղաքացիք այս փառաբանութիւն պարծեխ, և իրենք անպիտան մարդիկ էին:

անոնց անօրէնութիւնը և յայտնելով իրեն անմեղութիւնը աղաչեց որ թող տան իրեն երթալ : Իսկ անօրէն ժողովուրդը բանաւ դռնէլ տուաւ զայն , և դատաւորները վճռեցին որ դատասպարտութիւն մեռնի Եզովբոս իբր օրինազանց : Եզովբոս տեսաւ որ տեղէ մը ճար չկայ , անանկ վտանգի մէջ ընկեր էր որ ազատութիւն չունէր այն թշուառութենէն , սկսաւ իր անբաղդութիւնը լալ բանտին մէջ :

Դամաս անուշով մէկ բարեկամը բանտը գնաց . տեսնելով Եզովբոսին խեղճութիւն սիրտը ցաւեցաւ , և հարցուց թէ ինչո՞ւ համար կը վշտանաս կուշաս : Պատասխան տուաւ Եզովբոս թէ մէկ կին մը նոր թաղեր էր էրիկը գնաց գերեզմանին վրայ բոլոր օրը լաց կ'ընէր հոն մօտ տեղը երկրագործ մը կ'աշխատէր որ տեսնելով ասոր լացը՝ թողուց եղներն ու եկաւ ինքն ալ գերեզմանին քով կուշար : Աինք հարցուց թէ ինչո՞ւ համար կուշաս . ան ալ ըսաց թէ ես ալ իմ կինս թաղեցի , եկայ որ լալով սիրտս սպաղի : Ինձի ալ , ըսաց կնիկը , այս խեղճութիւնը սպտահեցաւ : Արկնեց երկրագործը . ուրեմն երբոր երկուքիս սպտահածն ալ նոյն է ինչո՞ւ համար մէկըմէկ չենք առներ , որ երկուքիս կսկիծն ալ անցնի , ես ինչ սէր ունէի ընկերոջս վրայ , քեզի կը դարձնեմ , դուն ալ անանկ ըրէ՝ կը լմննայ կ'երթայ : Երբոր մէկմէկու հաւանութի տալով ասանկ կը խօսէին գող մը եկաւ եղները գողցաւ . երկրագործը արտն որ դարձաւ տեսաւ թէ եղները չկան . սկսաւ անանկ դառն լալ ,

որ չկրնար ըլլալ : Իսկ կնիկը գերեզմանն  
նոցէն դարձաւ արտը՝ նայեցաւ որ մարդը  
կուլայ . ո՛հ ըսաց հիմա՞յ ալ կուլաս : Պա-  
տասխանեց մարդը թէ ահա՛ հիմա ունիմ  
ճշմարիտ սպառճառ լալու :

Ասոր նման է, կ'ըսէր Եղովբոս , իմ խեղ-  
ճութիւն և վիճակս . վասն զի չատ վտանգ-  
ներէ ազատեղէս ետեւ եկայ հոս ընկայ . հի-  
մա ճար մը չեմ կրնար գտնել որ մեռնեղէս  
ազատիմ, որով դատապարտեցին զիս . ահա՛  
այս է սպառճառն որ կուլամ :

ԳԼ . ԻԸ .

Մահ Եղովբոսի :

Ի եղոսացիք բազմութիւն եկան բանար մը-  
տան բռնութիւն քաջեցին դուրս հանեցին  
Եղովբոսն որ տանին մէկ բարձր ասպառաժ  
լեռան մը վրայ հանեն , ու անկէ վար նե-  
տեն : Եղովբոս սկսաւ առականեր զուրցել  
այսպէս : Երբոր կենդանիներն իրարու հետ  
կը խօսէին , մուկը գորտին հետ բարեկամ  
եղաւ . աղաջեց որ երթայ հետը կերակուր  
ուտէ . ուստի առաւ տարաւ մեծատան մը  
տուն , ուր լեցուն բարիք ըլլալով համբա-  
րանոցը (փեկեւ), կ'ըսէր թէ ո՞վ բարեկամ  
գորտ՝ հրամէ : Գորտը լաւ մը կշտանալէն  
ետեւ հրամցուց մուկն որ անոր հարկիքն  
երթայ . բայց ճամբան չհոգնելու համար  
ուզեց որ ոտքը թելով մը անոր ոտքին կա-

պէ . որպէս զի գորտին հետ լողալով անցնի ջրէն երթայ հոն : Ասանկ կապէլէն ետե գորտը ցած կէց ջրին մէջ սկսաւ լողալ . իսկ մուկը ջրին մէջ խղճուեցաւ . որ մեռնելու ատենը կ'ըսէր գորտին թէ գուն եղար իմ մահուանս պատճառը , բայց գուն ալ որ մը պիտի գտնես քեզմէ մեծէն : Այս խօսքս շատ չանցաւ կատարուեցաւ . վն զի մէկ արծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սատկած մուկ մը կայ , վրան ինջաւ խէց . բայց գորտն ալ անոր հետ կապած ըլլալով միատեղ յափը տակէց երկունն ալ կերաւ :

Այսպէս գուք որ զիս անիրաւութիւն կը մեռցնէք , ասանկ ռոքի տակ առնելով , որ կուգայ որ կը գտնէք , և ձեզմէ իմ վրէժս առնող մը կ'ըլլայ : Բաբելոն և բոլոր Յունաստան իմ արիւնիս վրէժը ձեզմէ պիտի հանեն : Այսչափ խօսքերը ամենեւին անոնց սիրտը չջարժեց որ ողորմին իրեն :

Տեսաւ որ այլ ճար չկայ , փախաւ Ապողոնին (1) տաճարը . բայց բռնութիւն անկէ ալ հանեցին , և կատաղութիւն կը տանէին

(1) Ամեն ազգի և իրօնի մէջ քաճարին պապիւնաւոր համար , հոն խիւղղւելի պապէր հին ապենէն 'ի վեր . ինչպէս Սպարսաղիտ հայրենեաց ժապնիւն քաճարէն լիցցան հանել , Դոնու լիցցոնի : Ապաղայ ազգն , որ ծառն է պապի , այն ծառին քալի խիւղղ գերին ազապն է սեպէ : Բայց Դեղոսաղիտ որովհետեւ Եղնիւնուս սրբապիշտ համարեցան որ քաճարին անիւրաւութիւնը Երաւիւնէն , անոր համար Բռնութիւն իրցան Դոնուս հանել :

բարձր լեռան ծայրը : Արթաշու առեւնը կ'ըսէր Եզովբոս . մտիք ըրէք ինձի ո՞վ ժողովուրդ Դեղոսի : Մէկ նապաստակ մը արծիւէն փախչելով չիյտէր թէ ո՞ւր պահուի որ թշնամւոյն ձեռքը չիյնի . գնաց բզէզին ծակը մտաւ , աղաչեց որ իրեն տեղ տայ . բզէզն ալ աղաչեց արծիւին որ խնայէ խեղճ նապաստակին՝ չմեռցնէ . երգում ըրաւ Դիոսին անուանը վրայ որ իր փոքր մարմինին չի նայի , աղաչանքն ընդունի : Իսկ արծիւը անոր խօսքը բանի մը տեղ չսեպելով թևովը զարկաւ բզէզին , և յափշտակեց նապաստակը կերաւ :

Բզէզը բարկանալով անոր անարգանացը վրայ՝ թռաւ ետեւէն գնաց գտաւ արծիւին բունը , մտաւ մէջն ու ծակ մը բացաւ , յետոյ արծիւին հաւկիթները վար թափեց կոտորտեց : Արծիւը տաքնալով այս յանդգնութեւր վրայ ուղեց աւելի բարձր տեղ մը շինել իր բունը : Բզէզը հոն ալ ելաւ , և առջինին պէս շնաս տուաւ : Արծիւը չիյտէր թէ ինչ ընէ , որ այս անձանիթ թշնամւոյն ձեռքէն ազատի , գնաց Դիոսին (1) , որովհետեւ այս թռչունը անոր նուիրած ըլլալով իրեն պաշտպանուէր տակն է . ուստի գրաւ Դիոսին գոգը իր հաւկիթները , և անոր յանձնելով աղաչեց որ հոգ տանի :

(1) Որովհետեւ Դիոս էր շնորհակալութեամբ , և արծիւն է թռչուններուն խաղաղութեամբի հեղինակներէն Կ'ըսէին թէ արծիւը Դիոսին նուիրած է . անոր համար Դիոսին արջանին պահէ արծիւն իւր տնէն :

Բայց բղէղը աղբ առաւ կշորակներ շինեց, ու թռաւ երկինքը տարաւ Դիոսին գոգը ձգեց: Դիոս երբոր հոսն առաւ նեղանալով վեր ելաւ որ վար ձգէ. բայց թոթուելովը հաւկիթներն ալ վար թափեցան կտոր կտոր եղան:

Իսկ Դիոս հասկըցաւ բղէղէն թէ այս բանս արծիւէն վրէժ առնելու համար կ'ընէր. որ ոչ միայն բղէղին ըրաւ անիրաւութիւն, այլ և Դիոսին, որ երգումը չընդունեցաւ երբոր բղէղն ըրաւ Դիոսին անուանը վրայ:

Արծիւն որ դարձաւ եկաւ, Դիոս անարգելով զայն երեսը զարկաւ թէ ահա բղէղը վրէժխնդիր ըլլալով քեզ կը տրտմեցնէ. և իրաւունք ունի քեզի այսպէս վրէժխնդիր ըլլալու: Սակայն Դիոս չկամեցաւ որ արծիւին ցեղը կորսուի. համոզեց խօսք հասկըցուց բղէղին որ հետը հաշտուի: Բղէղը չուզեց ամենևին հաշտուիլ: Ուստի Դիոս խելք բանեցընելով փոխեց ժամանակը. որ երբ բղէղը չէ ելած դուրս, ան ատենը հաւկիթ կ'ածէ արծիւը:

Ո՞վ ժողովուրդ Դեղոսի, մի անարգէք տաճարը, ուր ես ապաւինեցայ. թէպէտ և անոր մեծութեանայելով ես ոչինչ եմ, բայց գիտնա՛ք ճշմարտութե՛ք որ հարկաւ կը սլատթէ չարագործներուն անօրէնութիւնը: Դեղոսացիք իրենց կատաղութէն ամենևին ետ չկեցան, այլ միշտ առաջ կը տանէին Եզովբոսը մեռցընելու տեղն որ սպառաստեր էին:

Եզովբոս տեսաւ թէ ինչ բան որ խօսեցաւ

ամենևին անոնց ականջը չմտաւ, և կարող  
չեղաւ մտքերնին փոխելու, սկսաւ այս-  
պէս խօսիլ: Մտիկ ըրէք ո՞վ անօրէն խստա-  
սիրա ժողովուրդ, մէկ երկրագործ գեղացի  
մը գեղը ծերացեր էր, և ամենևին քաղաքը  
ոտք չէր կոխած. աղաչեց մարդիկներուն  
որ զինքը քաղաք տանին տեսնելու համար:  
Անոնք ալ էշերը սայլին կապեցին, և ծերը  
վրան գրին, թողտուլին որ քաղաք երթայ մի-  
նակ: Քիչ մը անցաւ մէկ սաստիկ փոթորիկ  
մը ելաւ, որ անանկ օդը մթնեցուց հովով  
անձրևով, մինչև էշերը ճամբան կորսնցու-  
ցին մոլորեցան չիյտէին թէ ո՞ւր կ'երթան.  
խեղճ ծերը տարին լեռանը ծայրը հանեցին,  
որ վար պիտի ձգէին. ողորմելին զինքն այն  
մեծ վտանգին մէջ տեսնելով, վա՛յ ափսոս  
ինձի, կը կանչէր Ափոսին. արդեօք քու մե-  
ծութե՞դ գէ՞մ ի՞նչ ըրած ունէի որ զիս ա-  
սանկ ողորմելի մահուամբ կը մեռցնես. զօ-  
րաւոր ձիերէ, և կտրիճ ջորիներէ չեմ մեռ-  
նիր, հասկա անարգ էշերէն ահա կը կորսը-  
վիմ, որ ամէն կենդանիներէն ցած եմ:

Ահա իմ վիճակս ալ այս խեղճ ծերուն  
նման է. որ շատ կը ցաւիմ իմ անբաղդու-  
թե՛ս վրայ. վա՛ զի չէ թէ իմաստուն և երևելի  
մարդկանցմէ դատապարտուեցայ մեռնելու,  
այլ անպիտան անարժան չարագործներէն:  
Երբոր վար պիտի նետէին զինքը լեռանը  
վրայէն, այս ետքի առակս ըսաց: Մէկ մարդ  
մը ուզեց անիրաւութի ընել իր զաւկին.  
խիկ զաւակը լալով կը կանչէր թէ շատ ա-  
ւելի կ'ուզէի այս անիրաւութի՛ր քաշել  
ուրիշ մարդիկներէն քան թէ քեզմէ, որ իմ



ծնօղս ես : Ահա ես ալ նոյն բանը կ'ըսեմ ձեզի ո՞վ անօրէններ . շատ աւելի կ'ուզէի ի յնիլ խորխորատոր Սկիզբայի (1) կամ Գարիարտեօի , և կամ Ափրիկէին ապառաժը . քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ : Անիծած ըլլայ ձեր հայրենիքը . վկայ կը կանչեմ անոններն որ իմ մահուանս համար վրէժ խնդիր ըլլան ձեզի , և պատուհասեն , որ զիս այսպէս անսրարտ կը մեռցնէք :

Իսկ Դեղոսացիք առանց ուշացնելու ապառաժին ծայրէն վար նետեցին . խեղճ Եզովբոսը մեռաւ : Քիչ ատենէն ետե բոլոր քաղաքը անասրատ դարձաւ ժանտամահէն . մինչև գացին հարցուցին պատճառը Պատգամաւորին (2) որ պատասխան տուաւ թէ այս պատիժս իրենց անօրէնութիւնը համար եղաւ , որ ըրին Եզովբօսին . և պէտք է այս յանցանքը ջնջել . պատիժէն ալ ազատիլ ,

(1) Բանաստեղծները կ'ըսէին թէ Սկիզբա եր մեծ գաղան ճշ Սիփիւիոյ Ժ-վո-ն մէջ , որ առաջ յա-երթահարս եր . երբոր միտս առաջանը լուս-ցուելո՞ւ՝ ըն-րը դեղած ըլլալով , խիստ-եղտ գաղան էղաւ , որ իր այլանդա՞յ կերպարանքէն սարսա-ժելով՝ Բարձր լեռանը սարէն ղինքը Ժովընէպեյ . ահա այս է Սկիզբայի խորխորատը : Աստիճա է Գարեգրեանին խորխորատը , կամ Ափրիկէին ապառաժը :

(2) Այս պատգամաւորն եր Ապողոնին գոր-ճէ կամ քրճահին . երբոր գացին ինտութին հար-ցոցին ծանախահին պատճառաւ , գորճէ ինտ-ութին Բերնէն պատասխան փոխաւ , ինչպէս սով-րո-նի եր ինտպալպնէրան :

որ անոր մահուանը համար կը քաշէին : Իրենց խղճմտանքն ալ ստիպէց զիրենք որ մէկ արձան մը կանգնեցին Եզովբոսին համար :

Երբոր Յունաստանի երևելի մարդիկ և մեծամեծ փիլիսոփաները լսեցին այս անօրէնութիւնն որ եղաւ Եզովբոսին՝ շուտ մը Դեղոս կղզին եկան , քննեցին գտան Եզովբոս մեռցընողները , և բոլորը չարաչար պատուհասեցին :









Ա. Քաղաղ և Մարգարիտ: Ը. Գայլ և Գառն:



Դ. Գորտ և Մուկն: Ե. Հուռն և Ստուեր:



Զ. Գայլ և Կռուռնկն: Ը. Երկրագործ և Օձ:

Ա Ռ Ա Կ Ք

## Ե.Չ.ՈՎ.ԲՈՍԻ

ԱՔԱՂԱՂ, ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Զանարդ վաստակ այր անխմաստ  
Յարգոյ դնէ քան զսերճ իմաստ :

Ո՛ւր բանի արժէ՜ք չիյսէ  
Գէշն ու Լաւը յէ՛կ իւր Դնէ :

Խ. Բաղադ մը աղբանոցը փորելով  
յանկարծ կը գտնէ մարգըրիտ մը , մէկ դի կը  
նետէ ըսելով , թէ որ մարգարտածախը այս  
բաղդիս հանդիպէր՝ փառք կուտար Խ. բայց  
իմ առջիւ անանկ ոչինչ է որ աւելի երջա-  
նիկ կ'ըլլայի եթէ հասն մը գարի գտնէի քան  
թէ զայս մարգարիտը :

Ահաւաղի՛ւրդ (խորոզը) , որ աղբանոցին մէջ  
թռնա գալով միշտ ուրիշներու բան իւր խնայէ , ե-  
ւթնէ գարի մը գտնէ՝ ամէն բանէն աւելի անով իւր

չոտարճանայ . որ օրինակ է առաքել Տարգմանց ,  
որոնց առջին գիրքոսթիւն յարգ շունի , և գի-  
րքուն Տարգման անխելէ Տարգմանի է . Եթէ ան-  
խելէն շահ ճ փեսէն , հաշար Իմաստունի հիւ-  
շէն գիրքեր :

Ահա անիմաստ բերմունք անբանի ,  
Զակինթ 'ի գարւոյ որոշէլ չունի .  
Դու մարդ բանական ընտրեալ զբարի ,  
Զառաքինութի նման մարգարտի :  
Բարին յանարգէ այնչափ տարբերի ,  
Որչափ բանականն յոգւոյ անբանի .  
Սարգոյ է ընտրել զիմաստ գանձ բանին ,  
Իսկ աքաղաղին զիւր անարգ գարին :

### ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Յանգութ դաժան սիրտ գաղանին  
Ոչինչ ազդէ ձայն անմեղին :

Անիբա՝ Տարգման էրբ շար կ'ընէ  
Սոս Դոսս պատճառ շոսս կ'ը գրէ :

Բ. Գայլն ու գառը վաղած ջրէ մը ջուր  
կը խըմէին . բայց գայլը շատ վերն էր քան  
զգառը , և սրտաճառ կը փնտրուէր որ կեր-  
պով մը յափշտակէ զգառը . ուստի տեսա-  
ծին պէս մէկէն քովը վազեց , ու սկսաւ մե-  
ղադրել թէ ինչո՞ւ համար իմ ջուրս սղտո-  
րեցիր : Պատասխան տուաւ գառը գողա-



լով. Ես ի՛նչպէս քու ջուրդ կրնամ պզտո-  
րել՝ որ խմած տեղէդ շատ վարէն կը խմեմ.  
Հաւատացիր, մտքէս ալ չէ անցած որ քեզի  
ամենեկին վնաս մը տամ: Կրկնեց գայլը թէ  
երէկ քու հայրդ տեսայ որ իր ձայնովը կը  
յորդորէր շներն որ զիս հալածէն:

Գառն ալ ըսաց թէ ամիսէն աւելի է որ  
զիմ հայրս մորթեց մսածախը: Ուրեմն այն  
քու մայրդ էր, ըսաւ գազանը: Պատասխա-  
նեց թէ իմ մայրս զիս ծնած ատենը մե-  
ռաւ: Գայլը ակռաները կը ճըտէլով ըսաց.  
մեռաւ չմեռաւ ես գիտեմ գռնն և քու  
ազգդ ի՛նչպէս կ'ատէք զիս, պէտք է որ ես  
ալ վրէժխնդիր ըլլամ: Չայս ըսելով ցաթ-  
կեց գառին վրայ, ու պատուեց կերաւ:

Գայլը վայրենի գազան ըլլալով շարագործ  
մարդուն պէս մշտնջենդութիւն և հալածանաց մեջ է.  
— անիրաւութիւն է ըսնայ յառաջակէլ անմեղ  
գառաները. — սպի օրինակ է զբնիկ մեծաբանը,  
որոնք ոտապ պապածառներով կ'ոռնեն զբնիկ ան-  
մեղները:

Բարք է այս անգուլթ պատառող գայլի,

Պատառել զանմեղն՝ չսեւ ձայնի.

Հզօր չարագործք զարդարն և խոնարհ,

Խոշտանդեալ ճիշէն նման գազանի:

Սակայն հատուցումն ՚ի դատաստանի,

Արդարոց չարաց կշռի և սղահի.

Մարդ քաղաքական մի զերթ ամէհին,

Խածատեր զընկերն ատեր զբարին:



## ԳՈՐՏ ԵՒ ՄՈՒԿՆ

Ըզվրէժ քինու կռուասիրաց  
 Լուծցեն արագ ձեռք թշնամեաց :

Կռիւ տիրւիւսս ի'երթայ,  
 Ինչ որ ընէ զայն իւր գրեաց :

Գ. Պորտն ու մուկը հակառակութի կ'ընէին. գորտը կ'ըսէր՝ թէ իրաւունք է որ ջրոտ տեղերը ես ժառանգեմ, և ընդ հակառակն՝ մուկն ալ ոտք կը կոխէր թէ ինձի կը վայլէ ժառանգել. այնչափ որ գորտը պիտի ելլէր ժառանգութէ, և բան չուզէր անոր ընել : Բայց վիճաբանութիւն շուտ մը տաքցաւ, անանկ որ պիտի սկըսէին կռուիլ : Սակայն շատ լաւ կ'ըլլար թէ որ իրենց մէջ միաբանէին. վնդի երբոր տաքցած կը ծեծկուէին ու ամենևին թշնամին չէին մտածեր ահա ուրուրը (լայլալը) հեռուէն դիտելով յանկարծ վրայ հասաւ, բռնեց կռուողները երկուսն ալ յափշտակեց :

Օրինակ է կռուարոր մարդիանց. որ հախառաւ ինքն ընելով իրեն, զիրեն, իւր թշնամեան : Եւ անով աւելի իւրեւր. ինչպէս որ մէկ Կապուստի մը Կապուստի վրայ գրած էր թէ մարդ մարդու հետ միաբանութիւն չեն կռուիր, հաճախ ալ իրեն հետ միաբանեցան :

Այսպէս և փոքրիկ իշխանաց դիպի ,  
 Երբ կռուին վիճէն 'ի վերայ գետնի .  
 Բայց հզօրագոյնն որ մերձ գտանի ,  
 Յափշտակէ զայն , կռիւն եզերի :  
 Այս արդար օրէնք է դատաստանի ,  
 Երկոքին կռուին երրորդն շահի .  
 Որչափ դատախազք 'ի պայքար մատչին ,  
 Այնչափ դատաւորք փաստաբանք հրճուին :

### ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Որ ոք ընկեր լինի չարին ,  
 փոյթ ուսանի զգործըս նորին :

Ո՛վ ո՞ւր էրի՞ն ընկեր 'բւււայ ,  
 Առաքու՛ն ա՛նոր ա՛նկերք 'բւււայ :

Դ. Եղնիկն ընկեր ըլլալով գայլին կը սղա-  
 հանջէ ոչխարէն թէ ինծի չափ մը գարի  
 տալիք ես , որ փոխ տուի քեզի՝ տո՛ւր . իսկ  
 ոչխարը գայլին առջին վախնալուն չուրա-  
 ցաւ , սլարտքս է ըսաց կուտամ , թէպէտ  
 անկէ բան մը չէր առած . և ժամանակ ու-  
 ղեց հատուցանելու : Ժամանակն որ եկաւ՝  
 եղնիկը կ'երթար անսպակաւ ոչխարէն կ'ու-  
 ղէր գարին , որ ինչպէս խօսք տուաւ վճարէ  
 պարտքը : Բայց ոչխարը երբոր տեսաւ զայն  
 մինակ , սկսաւ ծաղը ընկելով ըսել . ես չեմ  
 պարտական խոստմունքս պահելու . որով  
 հետեւ նեղը մնալուս , և գայլին վախուն քեզի

խօսք տուի, որ քեզ ընկեր էր եղեր, գնա՛  
բանդ քեզի սլարոք չունիմ:

Եղեի՛ն է (կէյիկ), ե օրինա՛յ՝ լա՛ր օրինա՛յ առ-  
նողին. այս խրափո՛ւ պէտք է անպատճերէն հե-  
ռո՛ւ գա՛նալիւ. լաւն զի ա-եւի Դի-րին է Բարի  
Տարեւ լա՛ր օրինա՛յ՝ զեւ ըւսայ, քան թէ զեւ  
Տարեւ Բարի օրինա՛յ՝ լա- ըւսայ:

Ահա՛ անիրաւ պահանջմունք եղին,  
Որ զրկէ զոչխարն ահիւ գազանին.  
Այսպէս անիրաւք ցաամամբ իշխանաց  
Կողոպտեն զարդարն զրկեն տնանկին:  
Արդ մի նմանիր մի անիրաւին,  
Մի՛ ընկերանար ահնառու չարին.  
Բարեք 'ի չարաց 'ի չար փոխարկին,  
Եւ բարք անմեղաց փոյթ ապականին:

## ՇՈՒՆ ԵՒ ՍՏՈՒԵՐ

Արդար պատիժ է ագահին  
Անյադ վազել զհետ ոչնչին:

Ագահն որ լա՛ւ շաքին ցանկայ,  
Անլա՛ւ աղտաք խեղճ իւր հայ:

Է. Շ ուն մը լողալով գետէն կ'անցնէր՝  
կըտոր մը միս բերանը. ջրին մէջ կը տեսնէ  
մսին շուքը՝ կարծէ թէ ուրիշ որս է. շուտ

մը կը ձգէ բերնին միան ու կը վազէ չքին ե-  
տեէն , որ իրեն մէկ պատուական կերակուր  
մը կ'երևնար . բայց ինչպէս յուսահատեցաւ  
երբոր տեսաւ թէ իր ագահութիւնը փուճ ե-  
լաւ : Այն ինչ կը կանչէր ցաւելով իր ձգած  
մտին վրայ , ես չգիտցայ պահել զայն որ ու-  
նէի , ահա ունեցածս ալ կորսնցուցի :

Ըսե՛լ քառաբիւն ինքունի ըլլաւ շոքով իւր  
թոթովի , եւ օրինակ է շահասէր մարդո՛ւ , որ վա-  
րակի սիրով մէկ բանը իւր յգէ մէկաւին երեսն  
վազէ . եւ անով յետոյ եղածն ալ իւր իտրուցընէ :  
Հարցո՛ղիս Բիւս ինչո՞ւրեքն ինչ մէկ է մեծա-  
քուն . պարտախանէ՞ր ինչ այն՝ որ բանի մը լի  
դանկար :

Քանի՞ շահասէրք նման են սմին ,  
Թողուն զբաւականն յանչափս ձկտին .  
Կա՛լ զոր ինչ ունիս , շատ է քում անձին ,  
Սի իբրեւ զանբան ցանկար ստուերին :  
Աստ է մոլեկան այս ախտ ագահին ,  
Յոգինչ շատանալ , ոչ հանգչիլ սրտին .  
Ցանկայ հանապազ նորանոր որտին ,  
Ձգէ զոր ունի , մաշի առ վշտին :



## ԱՌԻՒԾ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

Մի յաճախեր առ պետ իշխան ,  
Յաչա նորա լինիս խոտան :

Թէ Ժաբմամին Ժով շաք Էրմա ,  
Անարգ Ե յաժ առջին Ի՛լլա :

Ճ. Առիւծն ու ոչխարը , և այլ կենդանի-  
ներ միաբան կ'երթան որս ընելու . առիւծն  
երգում կ'ընէ թէ դառնալու ատեննիս ամ-  
մենուդ հաւասար կը բաժնեմ ով որ ինչ  
բռնէ : Նայիս որ ոչխարին որոգայթին մէջ  
ընկաւ եղնիկ մը , վազեց ոչխարը շուտով  
խմացուց առիւծին որ մէկէն հասաւ բռ-  
նեց եղնիկը չորս բաժին ըրաւ ընկերներուն  
առջին : Առջի բաժինն ըսաց ինձի կ'իյնի ,  
վասն զի ես առիւծ կը կոչուիմ . երկրորդ բա-  
ժինն ալ ինձի կը վայլէ , վասն զի ամմենէն  
քաջասիրտ ես եմ . երրորդ բաժինն ալ  
պէտք է որ ես առնեմ , որովհետեւ ամմենէն  
զօրաւոր եմ . իսկ չորրորդ բաժինին համար  
ով որ ձեզմէ ինձի հետ հակառակութիւն  
կ'ընէ մէկէն կը խղզեմ : Եւ այսպէս առիւ-  
ծը բոլոր եղնիկը յափշտակեց ու մէկը ըն-  
կերներէն չհամարձակեցաւ արտունջ մը  
ընելու :

Աստուծոյ խաղաղութեան շնորհիւ՝ յիշատակ  
 անձնական իրաւունքներն , որ օգտագործող անձնին  
 քաջ անձնի մէջ , որ Բանեւորին լինելու՝ անկէ ե-  
 րբեք անկէ ալ չեն նայիր : Դիմագրինէս իրաւո-  
 յուն ի՛նչեք թէ իշխանները իրաւի նման են , ոչ  
 չափ պէտք է ճշտեալ և ոչ հետեանալ :

Իշխանք մեծատունք նման առիւծին ,  
 Ինքեանց գրաւեն զչա՛ օտարին .  
 Իսկ ռամիկք նոցուն ընկերել կամին ,  
 Կարծեն թէ ինքեանց ելանէ բաժին :  
 Մի լինիր ընկեր հզօրագունին ,  
 Մի շողոքորթեր զարարըս նորին .  
 Զի իբրեւ գործի լինիս 'ի ձեռին ,  
 Եւ յաւարա գործոյն մնաս անբաժին :



## ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Մի նպաստեր գործոց չարին ,  
 Զի մի չարիք 'ի քեզ հասցին :

Ինչ որ ընէս ապերախսին ,  
 Բան չերենար իր ծախ ալսին :

Է. Վայը երբեմն ոչխարմը կ'ուտէ անանկ  
 որկրամոլութիւն որ մէկ ոսկոր մը որկորին  
 (պօղպոտ) մէջ կը մնայ . շատ ջանք ըրաւ որ  
 օգնութիւն մը գտնէ հանէ , չկրցաւ . ուս-  
 տի որչափ որ ազաւէց ուրիշ կենդանիներուն  
 փութ էլաւ . վասն զի ամէնքը կը թողուին



անանկ՝ որ կանչէ, և մէկը ցաւակից չեղաւ  
իրեն ցաւին. Օխ եղաւ կ'ըսէին, թող տան  
ջուի իր անյագութիւնը: Միայն կռուները ա-  
նոր անոյշ խօսքերէն խաբուելով՝ ուզեց օգ-  
նութիւն ընել և իր երկան կտուցքը խօթեց  
գայլին բերանն ու որկորին մէջէն քաշեց  
հանեց ոսկորը որ կը խղդէր զգայլը: Յե-  
տոյ կռուները հատուցում ուզեց այս մեծ  
բարերարութեան որ գայլը իրեն խոստացեր  
էր հատուցանելու: Այս բանիս պատաս-  
խան տուաւ գայլը խնդալով. բարեկամ  
դուն չէս մտածեր ինձի հատուցում ընելու,  
որովհետեւ կեանքդ ինձի պարտական ես,  
երբոր կտուցքդ իմ բերանս էր՝ կրնայի վի-  
զըդ փրցնել: Գնա՛ անպերախտ, շատ երա-  
նելի ես որ իմ պուկէս դուրս հանեցիր  
կտուցքդ:

Առախ իւր խափէ անպատճառ գործէն հեռու  
նաւ, և շարունակ օգնութիւն չընել. վն դի ինչ  
որ ընես աւելին չեմ նսար. ու վերջը շնորհակա-  
լուստով քեզը քեզի շնորհակալութիւն ի՞նչ:

Տեսէ՛ր նողկալի գործ զապերախտին,  
Որ չարիս խորհի իւր բարերարին.  
Զի փոխան բարեաց՝ որ ստարտ է նմին,  
Անտի սղահանջէ զգարձ փոխարինին:  
Անմտութիւն է նպաստել չարին,  
Կամ յապերախտէն յուսալ զբարին.  
Շատ է անփնաս մնալ կռնկան,  
Յորժամ նպաստեաց ասլիրատ գայլին:



## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՕՁ

Բարերարին խորհիլ ըզ չար ,  
 Է դառն օձի բարք չարաչար :


Ո՛ւ լաւ Ի՞նչէ Բարերարին ,  
 Ա՛նս Ի՞նչէ Իւ լաւ առջին :

Ե. Երկրագործ մը կը գտնէ ձիւնին մէջ  
 պաղած օձ մը իբր կիսամեռ , կը խղճայ վրան  
 ու կ'առնէ կը տանի իր խուցը , կրակ վառէ  
 կը տաքցընէ օձը , և այնչափ կը խնամէ որ  
 քիչ քիչ օձը հոգի կ'առնէ , և իւր բնական  
 ուժը կը ստանայ : Բայց առջի բանը այս  
 կ'ըլլայ որ իր բարերարին դէմ կ'ելլէ , և  
 կը ցաթկէ որ խայթէ : Զարմանալով ասոր  
 ապերախտութենը վրայ , կ'ըսէ երկրագործը .  
 ո՛վ ապերախտ , այս է երախտիք ճանչնալդ  
 որ քեզի ըրի . ես քու կեանքդ քեզի տուի .  
 դուն կ'ուզես իմն առնուլ չարագործ . զայս  
 ըսաց , և զարկաւ փայտով մեռցուց :

Ուրախ աշէկո-նի ընէս օձին՝ Կեղն ու Գայ իւ  
 խայթէ Իւ Բարերարը . առանի ալ ապերախտ մար-  
 դոն ինչ ու ընէս , չափ իւ հոռեայ , եւ լաւ  
 հապտոցոմ ընէլս իւ ջանայ :

Այս է դժնդակ բերմունք ժանտ օձի ,  
 Կեայ ի մնասել երախտաւորի .

Չածէ զմտաւ գործս բարեւարի ,  
 Բառնալ 'ի կենաց զնա նկրտի :  
 Արդար հատուցումն է ապերախտին ,  
 Զրկիլ 'ի կենաց վատանալ յանձին .  
 Որ ոք չկամի վայելել բարին ,  
 Արդ առաջիկայ հանգիստիլ չարին :



## ԽՈԶ ԵՒ ԻՇ

Քաջ յաղթանակ է վեհանձին ,  
 Մերժել խոտել զբան վատին :

Մեծամեծաց վայելն այս է ,  
 Որ յած հարդեն լրեթ լառնէ :

Թ . ( ) Ըմբ էշն արհամարհելով ծաղը կը  
 նէ զխոզը . իսկ խոզը անանկ կը բարկանայ  
 որ մէկէն պիտի պատուհասէր զայն . բայց իր  
 բարկութիւնը բռնեց , ու խոժոռ աչքով ըսաց .  
 չարագործ՝ ինձի դժուար չէ սորվեցնել  
 քեզի քու անխեղճութիւնդ . բայց հաճոյ  
 բան չէ որ ես մէկ ծոյլ անշահ անասունի մը  
 հետ կռուիմ , վասն զի աշխատանքս չարժէր :

Մեծ խոհեմութիւն է պարասխան լաւ ղած  
 հարդաւ խօսքին ու պատժել . վասն զի աշխատանք  
 նութիւն վայելէր որ ինչի անտնիկն հէփ : Սոքաք  
 իւրաքանչեւ լինէր որ մէկ իւրեւ գէշ կ'ըլլէր կ'անի-  
 ծէր , ղայն այսչափ ըսաց թէ որովհետեւ օրհնել  
 չէ սորված անոր համար կ'անիծէ :

Չէ վեհանձնութի չար առնել վատին ,  
 Եւ պատասխանել անիմաստ բանին .  
 Առաքինեաց է չսել ձայնին ,  
 Եւ վրիժառու լինել տկարին :  
 Քանի՞ անխորհուրդ բան աւանակին ,  
 Թողեալ զիւր հեղգանձն անգոսնէ խողին .  
 Յիմար է այո որ ընդ հզօրի ,  
 Եւ ընդ վեհ քան զինքն 'ի պայքար մատչի :




## ԸՆՏԱՆԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԱՅԻՆ ՄՈՒԿՆ

Խորոհաճաշին կայ 'ի սեղան  
 Խառն ընդ խորտիկ երկիւղ մահուան :

Անվախ ուսեւն է շաք համով ,  
 Քան թէ հարկիքն ահով դողով :


Ժ . Երբեմն քաղաքացի մուկն ու գեղացի  
 մուկը իրարու հարկիք կ'ընեն . գեղացին  
 կը սկըսի իր հարկիքը առանձին հեռու տեղ  
 մը ընել . և ծակէն դուրս կը հանէ իր պա-  
 տուական կերակուրները . քիչ մը բակլայ ,  
 կտոր մը պանիր , և քիչ մը խողի եղ . վն զի  
 աղքատ ըլլալով որչափ որ ձեռքէն եկաւ՝  
 այնչափ ըրաւ ծառայելու համար իր բարե-  
 կամին . որ աւելի գոհ եղաւ անոր լաւ մե-  
 ծարանքին վրայ , քան թէ անհամ պաղ կե-  
 րակուրներուն . ուստի քաղաքացի մուկը զը-  
 ւարձանալով միայն ակռային ծայրովը կը

գալէր կերակուրներուն , և չէր կրնար ու-  
 տել : Ինչ և իցէ կերակուրը լմննցաւ . ան ալ  
 հրաւիրեց զգեղացի մուկն որ մէկալ օրը  
 երթայ իրեն տունը կերակուր ուտելու . և  
 սլարծեցաւ թէ շատ փափուկ կերակուր-  
 ներ անոր համար ըրեր է քաղքին մէջ . ուս-  
 տի գեղացին քաղաք գնաց անոր հարկիքը .  
 և մէկ գեղեցիկ սրահի մը մէջ տեսաւ սլատ-  
 րաստած՝ սլաստառի վրայ լեցուն սլատուա-  
 կան մսեղէն կերակուրներ . բայց հագիւ թէ  
 սկսաւ ուտել յանկարծ մէկ ծառայ մը բա-  
 ցաւ սաստիկ դուռը այն տեղին ուր որ ա-  
 նոնք էին , և վերիվար ըրաւ ուրախութիւն  
 այս երկու բարեկամներուն . որ բոլորովին  
 վախցած փախան մէկը ասդին մէկալն ան-  
 դին : Ծառան գնաց անկէ . քաղաքացի մու-  
 կը իր ընկերը կերակրի կանչեց որ կիսա-  
 մեռ կը դողար վախուն . և հարցուց անոր  
 գեղացին , թէ շատ անգամ քեզի կը սլատա-  
 հի՞ ասանկ վախեր : Ան ալ սլատասխան տը-  
 ւաւ թէ ամէն անգամ կը հանդիպի , վն զի  
 առանց նեղութե ուրախութե չըլլար : Գե-  
 ղացի մուկը ետ դարձաւ ըսաց . քուկիներդ  
 ինչ որ ըլլան , հանգիստ վայելում չունին ,  
 և անոր համար նորէն զիս փորձուէ մէջ չեն  
 կրնար ձգել . մնաս բարով , ես առաջ նա-  
 խանձեցայ քու հարուստ կերակրիդ . բայց  
 գիտնաս որ հիմա շատ մեծ կը համարիմ իմ  
 աղքատութիւնս , քան թէ քու բոլոր մեծ ու-  
 թիւնդ :





ԺԽ. Արծիւ և Ագռաւ: ԺԶ. Աղուէս և Ագռաւ:



ԺԴ. Աղուէս և Արծիւ: ԺԵ. Ասիւծ և Մուկն:




ԺԶ. Գորտք Թզր խնդրեն: ԺԸ. Աղաւնիք և Ուրուր:



Օրինակ է հարուստ և մեծի մարդկանց . մէկը  
 առին մեծութիւնն ունի հանգստութիւնն լռանի , մէկա-  
 լը հանգստութիւնն ունի մեծութիւնն լռանի . բայց ա-  
 սոր վիճակը մէկալին ըստ լաւ է . որովհետեւ մար-  
 դոսս սիրտը Լազարոսի է մարմնին , երբոր հան-  
 գիսս կ'ըլլայ առանց սրտատուղի , անկէ աւելի  
 մեծութիւնն չըլլար :

Ձիւնչ օգուտ գործեաց մեծութիւնն ճաշին ,  
 երբ երկիւղ կասկած նմա լծակցին .  
 Եւ քանի՜ բերկրանք աղքատ կերակրին ,  
 երբ անհոգ զուարթ ուտեն 'ի դաշտին :  
 Մի ցակար ընչից մի խորտկաճաշին ,  
 եւ մի երաներ զբաղղ ընչեղին .  
 Ձի տագնապ և վիշտ յամէն վայրկենի ,  
 Ուտեն և մաշեն զսիրտ և հոգի :



## ԱՐԾԻՒ ԵՒ ԱԳՈՒՄ

Դիւրահաւան միտք զաղփաղիուն  
 Յամէն հողմոց կայ երերուն :

Անիւշ մարդիկ խոփոխան ,  
 Առն հովիւն կ'երթան իրագան :

Ժա . Ըրծիւն իր ճանկին մէջ մէկ ոտորէ  
 (սարդիկայ) մը բռնէր կը սխմէր որ կեղեր  
 կոտորէ , ու մէջի միտն ուտէ . բայց ճար չե-  
 ղաւ կոտորելու զայն տեսնելով ագռաւ մը կը  
 մարէր որ ձեռքէն առնու անոր որսը . ուտի

ըսաց խորամանկութեամբ. Ահա շատ աշխատած  
կը տեսնեմ զքեզ. թողի՛ր բարձրացի՛ր երկին-  
քը որչափ որ կրնաս, և վերէն ձգէ վար ոտ-  
րէն այս քարերուն վրայ. որչափ ամուր ը-  
լայ՝ կը կտարի կեղեր: Արծիւը մէկ զարմա-  
նալի դիւրութիւն մը գտնելով հետեւեցաւ  
ագռաւին խորհուրդին, ու ըրաւ: Բայց  
խորհուրդ տուողը միայն իր շահին համար  
կ'ըսէր զայն. վասն զի ոտորէն վար ընկա-  
ծին պէս կտարեցաւ և ագռաւը մէջի միտը  
հանեց կերաւ, ու խնդալով անոր դիւրա-  
հաւանութեւր վրայ փախաւ:

Ագռաւը խորամանկ Տարգոս օրինակ է, որ  
միայն իր օգուտը ինչ հայտ. ուստի զգոյշ կենալու  
է անանկ խաբէբայէն, և խօսքին հապաւում չէ.  
Վն զի ուղածն ընելէն ետեւ ծաղը կ'ընէ: Դիւ-  
գինէն ինքնաշարժ հարցոյցին թէ ո՞ր գազանը  
շար շնաւոր է. պատասխան արտաւ թէ վայրէ-  
շինեցէն օ՛յը, իսկ ընդամենէն խաբէբայ Տարգը:

Երբ խորամանկ ոք քեզ խորհրդակցի,  
Մի՛ կարծեր թէ նա սակս քո խորհի.  
Չամենայն օգուտ յինքեան վերբերեալ,  
Կերակրի նովաւ ծաղըն զկնի:  
Արդ մի հեշտալուր լինիր խարդախին,  
Որ մթին գունով ծածկէ զնենգ սրտին.  
Որչափ չողովէ 'ի սկզբան իրին,  
Այնչափ զղձանաս ծաղըրիս զերթ արծուին:

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱԳՈՒԱՒ

Ունայնասերն բանիւ ունայն,  
Խաբի ծաղրի միշտ է ունայն:

Փառասէր մարդն երբոր գովուի,  
Շահաւոր է՛ ապառ ամէն խօսի:

ԺԲ. Եւ աւելի բերանն ունէր կտոր մը պանիր. աղուէսը հոտն որ առաւ վաղեց ագռաւին առջին և ըսաց զարմանալով. Ի՞նչ բան է որ կը տեսնեմ. ես լսեր էի թէ քու փետուրներդ սև են. բէ՛ տէր ամ, այս ի՞նչ պէս ճերմակ են, որ կարապ (Խօյ) թռչունը քեզմէ ճերմակ չկրնար ըլլալ: Կ'աղաչեմ պարոն ագռաւ ինձի ներէ որ քիչ մը վրադ նայիմ ուզածիս պէս. ճշմարիտ կ'ըսեմ որ դուն ինձի անանկ աղուոր կ'երևնաս որ չեմ գիտեր ի՞նչպէս զմայլիմ քու վրադ: Նորէն կ'ըսէր աւելի անոյշ խօսքերով. Ես հաւաներ եմ թէ միայն գեղեցկու[թիւ]ր չէ քու յատուկ կատարելութիւնդ. այլ բնութիւնն որ կամեցաւ զքեզ ուրիշ թռչուններէն աւելի կատարեալ ընել, առանց կարծեաց քեզի տուաւ հրեշտակային ձայն մը. երգում կ'ընեմ որ այնպէս գեղեցիկ երգիչ չկայ մեր անտառներուն մէջ, ինչպէս դուն և սոխակը (Կիւրի-Լը): Այս խօսքերովս բոլորովին զուարճացաւ ագռաւը, և ուղեց իմացընել թէ աղուէսին ըսածը սուտ չէր. բացաւ

բերանն որ երգէ, բանալովը ձգեց բերնէն  
պանիրը : Իսկ աղուէսը յափշտակեց զայն ,  
ուշուռ մը երթալու հրաման ուղեց ագռա-  
ւէն , և ծաղը ընելով ըսաց . Շատ համ առի  
պանիրիդ անուշութենէն , քան թէ ձայնիդ  
գեղեցկութիւն :

Առաւել օրինակ է ունայնասիրտէն որ անանկ  
իւր ինքնացնէ ճարդոսս միտն որ սոսա գովասան-  
քով խաբարի իւր հպարտանայ , մինչև ահնաբ լէտն  
իւր խնդան :

Ահա կուրութի ունայնասիրի ,  
Ի պատիր բանից այլ յայլմէ լինի .  
Որով յիմարեալ ձգէ զոր ունի ,  
Սին պաճուճանօք հրճուի զոր չունի :  
Միտք փառասիրաց հեշտութիւ պատրի ,  
Մինչ չասել զանձնէ զինչ եմ զինչ էի .  
Կարծէ թէ բանիւ բնութի փոփոխի ,  
Անգէն յիւր գործոց փոյթ խայտառակի :



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԾԻԻ

Որ ոք առնէ բան անօրէն,  
Փոյթ գտանէ յերկնաւորէն:

Ո՛վ անօրէն բան որ ընէ,  
Երկնաւորէն շոք իւր գրէ:

ԺԳ. Արծիւն իր բունը շիներ էր կաղնի  
(Ֆէշէ) ծառին վրայ. ծառին տակն ալ ա-  
ղուէս մը իր ձագերը կը նայէր. այս երկուքը  
իրարու հետ սիրական կ'երեւնային: Օր մը ա-  
ղուէսը գնաց կերակուր գտնելու. արծիւն  
ինչաւ յանկարծ յափշտակեց աղուէսին ձա-  
գերն ու սարաւ բունը իր ձագերուն կեր-  
ցուց: Երբոր աղուէսը դարձաւ բունը, և  
հասկրնալով դրացիին ըրած անօրէնութիւնը՝  
շատ սաստիկ բարկացաւ. բայց որովհետեւ  
յոյս չունէր հասնելու իր թշնամույն որ  
կարենայ վրէժխնդիր ըլլալ, ինչ որ կըցաւ  
ղայն ըրաւ. իբր զի՝ իր բոլոր վրէժխնդրու-  
թե հոգը Այ թողուց. իսկ Աճ շատ չանցաւ  
անոր չարագործութիւն պատժեց. վասն զի  
քանի մը օրէն ետեւ արծիւը կը դիտէր որ  
երկրագործները զոհ (շոքաւ) կ'ընէին մէկ  
այծ մը իրենց կուռքին սեղանին վրայ. վաղեց  
եկաւ կտոր մը միս յափշտակեց, որուն վրայ  
մէկ քանի կրակ փակած էին, և անանկ տա-  
րաւ իր բունը: Եւ որովհետեւ բունը շինած

էր յարգով (սահմանով), և ուրիշ գիւրաւառ  
բաներով, մէկէն բռնկեցաւ. և արծիւին  
ձառքերը վարթափեցան: Անտոնը աղուէսն  
որ կը սպասէր ծառին տակը՝ ընկաւ ձառք-  
րուն վրայ. և ինչպէս որ արծիւն իրեն ըրաւ,  
ինքն ալ անոր անանկ ըրաւ, մէկիկ մէկիկ  
զամմէնը կերաւ:

Աշուհն է (Թիւքի), և արծիւն է (խարդալ)  
օրինակ անիւրաւ հարգող, որ միտք է իւր ինչ  
դրոշմէն լաւ ընելը ինչ լաւի. Բայց Աճ արդար  
դասելով՝ որիւնին ինչ որ ընէ, ինչ է գրանէ,  
Բէ Բարի և Բէ լաւ:

Տեսեր պատուհաս նենգամիտ արծուին,  
Որ ոչ խնայէ իւր մերձաւորին.  
Չածէ զմտաւ վճիռ տերունին,  
Թէ որով չափես չափի քեզ նովին:  
Արդ մի ոտնակոխ լինիր տկարին,  
Թէ և ի բարձունս ճախրես յեթերին.  
Քանզի վրէժխնդիր լինի քեզ երկին,  
Հուրք հատուցանէ պատուհաս կրկին.

## ԾԵՐ ԱՌԻՒԾ

Ծանր է և դառն հզօր պետաց,  
Անկեալ խոտիլ 'ի վատթարաց:

Շաք ԴԺՈՒՄԵՐ է ՌԵԺՈՒԹԱՅ,  
ԵՐԲ Կ'ԱՆԱՐԳԻՆ յԱՆԱՐԳ ՏԱՐԴԻԱՆՅ:

ԺԳ. ԼՂԻԼԾՐ ԾԵՐՈՒԹԷ խռփելով այրի  
(Տաշարայի) մէջ ընկած կը տանջուէր. անանկ  
որ հոգին բերանն եկեր էր. իսկ անասուն  
ները որովհետեւ այն առտիճանին մէջ չէին  
վախնար անկէ, ամէն կողմէն վազեցին եկան,  
որ սիրտը ծակելով նախատեն զայն. ուստի  
էշն ալ եկաւ, և խրոխտաւրով կից (չՖրէ)  
նետեց որ զարնէ անոր: Ան ատենը ո՛հ ը-  
րաւ առիւծն ու դարձաւ գայլին և խոզին  
ըսաց. Ձեր ամէն նախատիները որչափ կծու  
ըլլան համբերու՞թէ կը քաշեմ. բայց էշն ալ  
կը համարձակի զիս նախատել՝ ա՛հ ահա ա-  
սոր չեմ կրնար գիմանալ:

ԾԵՐ ԱՌԻՒԾԸ՝ օրինակ է ՌԵԺՈՒԹԷ ընկած և  
ծերացած Տարդոմ որ իր ծառաներէն և Ռու-  
ներէն նախապիսի և իւրեք ծերուքէ պապաճառաւ:  
Բայց ան ապենը պէտք է աւելի պապի- ընել և  
օրհնենքն ատենել, չէ թէ նախապելով ծաշը  
ընել:



Այս է տարացոյց հզօր իշխանին ,  
 Երբ Թափի յուժոյ լի փառաց նախկին ,  
 Ոչ ոք ակնածէ յերեսաց վեհին ,  
 Բնաւ կենդանիք նախատել բերին :  
 Ցորչափ զօրութի ունիս 'ի ձեռին ,  
 Մի թշնամանող լինիր օտարին .  
 Զի գայ ժամանակ տեղի տալ բաղդին ,  
 Քեզ ամենեքեան նախատիչ լինին :

### ԷՇ ԵՒ ՓՈՒՔՐԻԿ ՇՈՒՆ

Իւրաքանչիւր յատուկ բնութե ,  
 Են պատշաճեալ իրք զանազան :

Ամէն մարդո՛ւ մէյ մէկ բան կայ ,  
 Որ «իբեւի» անու ըլլայ :

ԺԷ . **Պ**արոն մը երբեմն իր սղտի շուռը  
 սիրելով հետը կը խաղար իշուն առջին . էջը  
 զայն տեսնելով նախանձեցաւ անոր երջան-  
 կութիւնը վրայ , և ինքիւրեն ըսաց . Ի՞նչ կ'ընէ  
 այս շունս որ մեր տիրոջը այսչափ սիրելուն  
 արժանի եղած է . բայց քծնելով երբեմն  
 Թաթիկներն անոր կուտայ . հէ՛ թէ որ ա-  
 սով սիրելի եղած է , ես ալ կ'ընեմ ու քան  
 զայն սղտի անասունը շուտ սիրելի կրնամ  
 ըլլալ : Զայս ըսելով ելաւ ետքի երկու ոտ-  
 քին վրայ կեցաւ , և տիրոջն առջին կոշտու-  
 թք անոր սկէս ըրաւ : Իսկ տէրը շատ զար-  
 մանալով մերժեց անոր կոշտ սէրը , և կան-

չեց ծառաները որ վազեցին եկան աղէկ  
փայտ մը քաշելով հատուցում ըրին աւա-  
նակին քաղաքավարութենէ:

Աժ մամէն մարդո՛ւ մէյմէի բնո՛ւի և Վիճակ քը-  
ւեր է իրենց յարմար . Բէ որ մէկին Վիճակէ վեր-  
նար մէկաւին երբար, այն մարդն աղէի լեր ըւ-  
լար . ապա մամէնքն աւ ալեքս է իրենց ունեցածին  
վրայ գոհ ըլլան, և իրարո՛ւ ընտանիքին, լէ  
նէ իւրն ըրով իւր տնայո՛ւն :

Մի ցանկար փոխել վիճակ բնածին  
Գործեալ 'ի բնէ անստեղծ մատին .  
Քանդի և բնութի անցնիւր էակաց  
Ետ զանազան գործս լիւրեանց յատկին :  
Իսկ քեզ որ տէրդ ես անասնոց սեռին ,  
Ետ 'ի կատարել վիճակ քո նախկին .  
Զի ոչ 'ի բնութի բնութի փոխարկի ,  
Ոչ յատկութի շան յէշ այլափոխի :

## ԱՌԻՒԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ փոքրիկ առնես բարի,  
Գացես յետոյ զայն պտղալի:

Եթէ ուզտի Բարի՜ յ' ընէս,  
Շահով ձեռնած զայն իւր գանէս:

ԺԳ. Երբեմն առիւծը սրառիկեր կը քնանար. մուկ մը մօտեցաւ քովն ու հարիւր անգամ բոլորէն անցաւ դարձաւ. յետոյ համարձակեցաւ մինչև ցաթկել գլխուն վրայէն: Առիւծը արթնցաւ բռնեց մուկը. քիչ մնաց պիտի տրորէր, բայց այս բանս անարժան սեպելով իր բարկութեւ՝ թողուց որ երթայ. իսկ մուկն որ անոր պարտական էր իր կեանքը, շատ չանցաւ միջոց մը գտաւ փոխարէնն ըրաւ իրեն. վասն զի քանի մը օրէն ետեւ առիւծն ընկաւ որսորդներուն ցանցը (դոն-դոն), և անոր մռնչալէն ու պօռալու ձայնէն բոլոր անտառը թնդաց. մուկը լսածին պէս այս ձայնս վաղեց եկաւ սկսաւ կրծել ցանցին օղակները որով փաթթուած էր իր բարերարը. և այսպէս դիւրին մը ազատեց զառիւծը:

Որչափ ձեռնարկ ըլլաս, ջանա՛ որ տենես հեփանոյշ վարդին ու ուզտիին ձեռն ուղեկոմբ

ընէս . վասն զի օր ի' ՇԼԼԵՅ՝ որ պղտի աղէկութի' ճշ  
Տեժ Բան ի' ընէ :

Չէ փոքր փոքուն առնել զբարի .

Երբ հարկն բերէ նպաստել այլում .

Թէ և Թագաւոր իցես յաշխարհի ,

Կարօտիս երբէք նպաստից փոքուն :

Քան զառիւծ հզօր զինչ հզօրագոյն ,

Եւ զինչ քան զմուկն անզօր փանաքի .

Արդ հզօրն ահա կապի պնդագոյն ,

Ազատէ անզօրն զհզօր ամեհի :



ԾԻԾԱՌՆ ԵՒ ԹՈՉՈՒՆ

Ա՛ռ քեզ խրատ խորհուրդ ծիծռան ,

Կշռեա՛ զանցեալն և զապագայն :

Բարեկամն խօսք մե՛հ ,

Երբ + եղ Բարի խրատ ի' ըսէ :

Ժէ . ( ) Իծեառնիկը տեսաւ որ երկրագործ  
մը կանեփ կամ քթանի հունտ կը ցանէր ,  
վաղէց գնաց ուրիշ Թռչուններուն խմացընե-  
լու : Օր կուգայ որ , կ'ըսէր , այս ցանած  
հատերը ձեր գլխուն բան կը բանան . վասն զի  
կանեփը կը հասնի , և հաւորսը կերպ կերպ  
որոգայթներ կը շինէ ու զամէնքդ կը բռնէ :  
Իմ խօսքս մտիկ ըրէք . ամէնքդ այս արտին  
վրայէն Թռչելով կերէք բոլոր հունտերը :  
Փուճ՝ տեղը խրատ կուտար անոնց որ ամե-  
նեին չուզէցին լսել . և մանաւանդ մէկ ան-

պէտ ձայն մը եկաւ իրենց, և ոչ թէ խոհեմ նախատեսութիւն: Ինչ և իցէ կանեփը բուսաւ ծիծեռնիկը նորէն ըսաց անոնց թէ եկէք հանեցէք այս գէշ խոտը, թէ որ թողուք զասոնք՝ շատ պիտի զղջաք: Պատասխան տուին թէ կ'ուզես դուն հանէ, մենք ասէն չունինք հանելու: Աւերջապէս կանեփը հասաւ. նորէն վաղեց ծիծեռնիկն ըսաց թըռչուններուն թէ ինչ մարդարէութիւն որ ձեզի ըրի, շատ չանցնիր պիտի կատարուի. եթէ կուզէք ձեր ազատութիւնը, փախի՛ք այս կողմէն հեռացիք: Անոնք ալ ըսին. գնա՛ բանդ շատախօս. գլուխնիս ճաթեցուցիր, երբ պիտի ըլլայ որ ձայնդ կտրես, գնա՛ մենք բանէ մը վախ չունինք: Չայս որ լսեց ծիծեռնիկը թողուց անոնց ընկերութիւն ու հեռացաւ. իսկ թռչուններն անոր խօսքին չաւտալնուն համար շատ զղջացան. բայց ինչ օգուտ՝ բանը բանէն անցաւ. վասն զի քիչ մը ատենէն ետեւ հաւորսը հանեց իր կանեփը, և ուրբեց որոգայթ շինեց, ու լարեց՝ զամէնը բռնեց:

Օրինակ է խոհեմութիւն, որ երբեք գաւիթները հարծելով և բարեկամի խօսքին հփիւ ընելով պէտք է արեւուն ինչաւ արեւով յետքէ եկածն ընել վրանգէն խախտիւ. Բէ լէ նոյն վրանգին մէջ իւր ստուի այն Բուրաններուն պէս՝ որ խոհեմ բարեկամին հփիւ լըրին ու իրան:

Նախատես լինել ապագայ չարին,  
Կեծ խմաստութի յիմաստնոց դատի.

Քանցի նախատեսն հանապազ շահի ,  
 Արտաքոյ եղեալ չարեաց բնաւին :  
 Ձինչ մեծագոյն գանձ գիտունք ասացին  
 Քան հաւատարիմ խորհուրդ մտերմի .  
 Արդ մի լքաներ զխրատ պիտանի  
 Նման անխմատ թռչնոց երամին :



### ԳՈՐՏՔ ԹԱԳԱՒՈՐ ԽՆԴԻՆ

Տրանջողին ոչ պակասին  
 Յաւք և վատտակք զոր տայ երկին :

Տժգոհ ճարտար ինչ ոչ ընեն ,  
 Միշտ իւր գանգաթի ունեցած են :

ԺԸ. Ղորտերը կը ձանձրանան անանկ  
 մնալ առանց թագաւորի . որ մը միաձայն կը  
 պօռան թէ ով Դիոս , դուն մեզի թագա-  
 ւոր մը տո՛ւր , որ գիտնայ մեզ կառավարել :  
 Իսկ Դիոս խնդաց անոնց անխոհեմութե՛ր  
 վրայ , և երկար ժամանակ չկատարեց իրենց  
 խնդիրքը . բայց հուսկ յետոյ ձանձրանալով  
 անոնց աղաղակէն , որոշեց ակամայ կամքով  
 կամքերնին կատարելու . և ձգեց իրենց լճին  
 մէջ գերան մը . անանկ մեծ ձայն ելաւ դե-  
 րանին իյնելովն որ գորտերը ահերնուն  
 զարհուրեցան , և ջրին տակը մտան , կիսա-  
 մեռ կը դողային : Բայց քիչ մը ժամանակէն  
 ետեւ իրենց մէջէն մէկ աւելի սրտոտ մը  
 գլուխը ջրէն դուրս հանեց , և առջի բերա-

նը չհամարձակելուն հեռուէն նայեցաւ նոր թագաւորին . յետոյ այնչափ զօրացաւ որ մօտեցաւ գերանին , և ապա տեսնելով թէ անշարժ է՝ սկսաւ ցաթկել վրան ելլալ ինջնել : Ասոր հետևեցաւ ուրիշ գորտ մը . անոր ալ ուրիշը հետևեցաւ . և այսպէս բոլոր գորտերն ելան թագաւորին վրայ . բայց շատ տրտնջացին այս իրենց անշարժ իշխանին համար , մինչև բողբոջեցին Դիոսին , որ ուրիշ թագաւոր մը տայ , որ կարենայ շարժիլ . իսկ Դիոս խրկեց անոնց թագաւոր արագիւր (վալէիւ) . որ քիչ ժամանակին մէջ կէսը հատցուց ուտելով : Իսկ գորտերը սօռացին կանչեցին ահագին ձայնով , և ինդրեցին որ զիրենք այն բռնաւորէն ազատէ : Բայց Դիոս ալ չուզեց լսել՝ ըսելով թէ որովհետև գուք չուզեցիք ընդունել ձեր բարի թագաւորը , հիմա համբերեցէք չարագործին , և վախցիք որ աւելի գեշը չգայ ձեզի :

Դիոս մեր գրող մէջ Արամազդ կ'ըսուի , որ իսպաշապէն ասքէն էրինի մեծ ան իւրեւեր . որ լափ աշէիոնի որ կ'ըսուի Բուրը Դիոս իսպաշա կ'ըսէին . անոր համար գորգերն ալ ասոր կ'աշաշեն որ իրենց Բագաւոր քայ . ուստի երբ որ գորգերը գիշերանց կ'ըսուան՝ հիները կ'ըսէին Բէ իրենց Բագաւորէն Գանգապ կ'ըսեն Դիոսին :

Օրինակ է Գանգապ ընդնէրուն . որ ինչ ընէն կ'ըսուի Գանգապ , և այն ընդհանրապէս ըսուի . անոր համար գեշ կ'ըսուի իրենց Բանը :

Երբ զիշխան և տէր տայ ուսմէք երկին ,  
Չէ պարտ տրտնջալ փոխել ըստ կամի .



Քանզի պատուհաս է տրտնջողին ,  
 Թողուլ զբարին հանգիսիլ չարի :  
 Արդ մի տրտնջար ըստ առակողին ,  
 Երբ առաջնորդիս 'ի կամաց վերին .  
 Որ ինչ անհաճոյ 'ի բէն դատեսցի ,  
 Յօգուտ է 'ի խրատ այն քեզ պատրաստի :



### ԱՂԱՒԵՒՔ ԵՒ ՈՒՐՈՒՐ

Համբերողին ամենայն փուլ  
 Լինի անխայթ բանջար անոյշ :

Համբերող սիրան ամեն լեզի ,  
 Լնայլ կ'ընէ նման մեղրի :

ԺԹ . Ուրուրը սոսկալի պատերազմ կ'ը-  
 նէր աղանիներուն հետ որ իրեն դրացի  
 էին : Իսկ աղանիներն այս թշնամուէց ազատ  
 ըլլալու համար կարծեցին թէ ուրիշ ճար  
 չկրնար ըլլալ , բայց եթէ թռչուններուն  
 մէջէն թագաւոր մ'ընտրել որ կարենայ ի-  
 րենց թշնամոյն դէմ դնել . բազէն (շահին)   
 եղաւ թագաւոր որ մտաւ աղանոցին մէջ  
 պատճառու հասկընալու անոնց միաբանու-  
 թեան ուժը . և մէկէն ցաթկեց աղանիներ-  
 րուն վրայ բոլորը խզդեց :

Հաս անգամ ճարդ անհամբեր . Բէ մէկ նեղու-  
 Բէն ազապելու համար անանի բան ճէ կ'ընէ , որ ա-

աւելի յեծ նէշու-նէ յեջ կ'իյնի . նաև ընամանոյն  
յետոքէն աղապէւոս համար աւելի շարին յետոք  
իւ հապնոսի :

Այս է վատ բնութի գծնեայ ուրուրին ,  
Յանգ թշնամանեւ զիւր հեզ գրացին .  
Որչափ քաղցրակեաց լինի աղաւնին ,  
Այնչափ դառնանայ գազան թշնամին :  
Սակայն համբերեւ է դարման նորին ,  
Ոչ մտանիլ 'ի ձեռս հզօրագունին .  
Չի սակաւ վնաս ուրուրն գործէ ,  
Քան արեանարբու սատակիչ բազէ :

### ԳՈՂ ԵՒ ՇՈՒՆ

Եթէ իցես հաւատարիմ,  
Հաց նենգողաց քեզ ոչ հաճին :

Բարի ծառան հաւաքարիմ  
Չի խառնուեր արծաթն ոսկին

Ե. Գող մը կը ջանար մէկ տուն մը մտնել  
գիշերուան մէջ, որ բաները թաղէ . բայց  
պահապան շունը թող չէր տար, անդադար  
կը հաչէր. իսկ գողը կտոր մը հաց ցրցուց  
շանը՝ կարծելով թէ անով կը պարտաւորէ  
զշունն որ լռէ : Բայց շունը մերժելով ըսաց  
գողին . այ չարագործ ես կը խաբուէի, ու  
կ'առնէի քու տուածդ թէ որ չգիտնայի  
թէ ի՞նչ մոքով կուտաս ինձի . դնա՛ս կորիւր

ատկէ . վն զի բան մը չկրնար աւրել զիմ  
հաւատարմութիւն :

Օրինակ է հաւաքարիմ ծառաներուն ու շա-  
հո- համար հաւաքարմունքի դէմ բան լին ընէր ի-  
րենց փերձը . վան զի հաշտութե իւր հաւատքնէ  
ճարտարաւ աւել :

Արդ ո՛ւր են ծառայք պահապան մանկտին ,  
խոհեմ մտերիմ շան հետեւեցին .

Տէս զիմարդ մերժէ զկաշառ նենգողին ,  
Յանարատ պահել զիւր գանձ բնածին :

Քանի՛ անարգանք նենգող ծառայի ,  
Երբ քան զօրինակն վատթար գտանի .

Անբանն 'ի սէր տեառն ինքնագրաւ մրցի ,  
Բանականն անփոյթ խորդայ 'ի մահճի :

### ԻԳ ԽՈՁ ԵՒ ԳԱՅԼ

Խորհուրդ և կամք նենգաւորին ,  
Ի չար առնել մերձաւորին .

Չաբն երբ +եղի խորհուրդ իո-բայ ,  
Վախճիւր ԳԼԽո-ր Բան իւր Բանայ :

Ինչ . Վայլը կը տեսնէ քած խող մը ծոց-  
ւոր և ծանրած , մտեհալով քովը քաղաքա-  
վար ձայնով մը կ'ըսէ . Մայրիկ թէ որ կամե-  
նաս՝ ես քեզի օգնութի կ'ընեմ որ զաւակ-

ներդ ծնիս . եթէ կ'ուզես ձագերուդ ալ  
հոգը ինձի յանձնէ որ սպահեմ . գիտնաս որ  
իմ քովս շատ ապահով կը մնան : Պատաս-  
խան տուաւ խոզը . կ'նքահայր՝ էս լաւ գի-  
տեմ զայդ . բայց թէ որ դուն իմ եղած տե-  
ղէս ուզէնայիր շատ հեռուն երթալ , ինձի  
կ'երևնայ թէ ձագերս ալ մայրն ալ ասանկ  
խիստ ապահով կը մնային :

Հարի է Դու հեռու . Ժողովել անպատ լաւն՝  
դի լարուծէ սորվող ճարտը աղէկութիւն չի իւր-  
նար ընել . Ինչ որ ընէ՝ իր շահուն համար ի՛նչն , ե-  
տեայ ընդունի Բարեկամն արանը ի՛տարէ :

Զխորդ ոճրագործն խորհի ըզբարին ,  
Ո՛չ մերձաւորի այլ յատուկ անձին .  
Մանկածու լինել տենչայ ընկերին ,  
Զի մանկունքն ինքեան կերակուր լիցին :  
Գայլակերպ նենգողք որչափ քեզ մերձին ,  
Զանա՛ հեռանալ 'ի սոռերէ նոցին .  
Զի խորհուրդք նոցա 'ի չարիս բերին ,  
Թէ և բարեկամ քեզ երևեսցին :







Ի՞նչ՝ Որսորդ և Հուռն ի՞նչ՝ Նապաստակի:



Ի՞նչ՝ Ուշ և Գայլ: Ի՞նչ՝ Ոչխար և Հուռն:



Ի՞նչ՝ Աղուհս և Արագիլ: Ի՞նչ՝ Գայլ և Նիսարձան:

# ՈՐՍՈՐԴ ԵՒ ՇՈՒՆ

Ոչինչ յանցանք ծեր զինուորի ,  
Երբ բընական յուժոյ թափի :

Թէ լաշխափի քեզ ծեր ծառան ,  
Յանցանքն իր լէ այլ ծերունի :

Իբ . Որսորդ մը վազեց եղնիկին վրայ , և կը  
ջանար թէ իր ձայնովը , և թէ փողին (պո-  
ռ-ի) ձայնովը սիրտ տալ շանը որ ծերու-  
թիւ թօշնած անկար էր : Իսկ շունն որ ա-  
ւելի ուժէ ընկած էր , քան թէ քաջութիւն ,  
եսքի ջանքն ըրաւ , ու անանկ արագութեամբ  
վազեց՝ որ հասաւ եղնիկին և խածաւ  
զայն . բայց սակասութիւնը ակռաներուն ե-  
ղաւ որ չկրցաւ բռնել արդէլէլ : Ան ա-  
տենը որսորդը տեսաւ թէ որսը ձեռքէն  
ելաւ փախաւ , վազեց շանը վրան և սկսաւ  
զարնել նախատել թէ բանի մը պէտք չէս :  
Պատասխան տուաւ շունը թէ ես որ առ-  
ջինը չեմ , սպառնալով ծերութիւն է : Արդ  
եւ կը խոստովանիմ որ հիմա զօրութիւն չու-  
նիմ , բայց սպերախա , դուն ալ միտքդ բեր  
զիմ քաջութիւններս որ կարըճութեւ ատենս  
ըրեր եմ :

Մեծ աշխատանքի է ծեր աշխատանքներ



Երեւե յգէլ, և լի կրնալ աշխատելու համար  
նախապէլ. լսան զի անոնք ապենով իրենց պարսպն  
ըրեբ են. անոնցմէ միայն բան սորվելու է, ու  
առջի ըրած աշխատանքնին հոռնալու լէ :

Քանի՜ վտաքեր փորձառու ծերոյն,  
Երբ Թափեալ յուժոյ նախատի յայլոց .  
Կամքն 'ի նա ամբողջ և միտքն է արթուն,  
Իբրև անսկիտան ծաղրի 'ի յեանոց :  
Արդ զինչ վրիպանք զինչ յանցանք նորուն .  
Չի տայ և բառնայ երբ կամի բնութիւն .  
Շատ է զոր արար յառոյդ հասակի .  
Այժմեան զօրութի 'ի խելն պահի :

### ՆԱՊԱՍՏԱԿՔ

Երկիւղ կասկած զգորտ չնչին,  
Ահեղ գործեն հանգոյն փղին :

Վախն ամէն բան ահեղ կ'ընէ,  
Լեռն ու յորեբն այն կը պահէ :

Իգ. (Նստառ մը սաստիկ շարժելով հովէն՝  
սովորականէն աւելի ձայն կը հանէր. իսկ  
հոն եղած նապաստակները վախերնուն դող  
կ'ըլէն. անանկ որ մէկը անոնցմէ կ'ըսէ .  
փախչինք ազատինք ահա կը լսեմ որսորդի  
ձայն, և շներու ոռնալ : Ուստի բոլորը մէ-  
կէն ամէն կողմէն շուտ մը սկսան փախչիլ :  
Ասոնց առջին ելաւ ջրոտ տեղ մը որ զի-

րենք արգիլեց փախչելու . վն զի գորտերը  
դրսէն ջրին մէջ ցաթկեցին . և այս ձայնով  
այնչափ եւեղցաւ նապաստակներուն առաջ  
նորդին վախը , մինչև չի կրցաւ առաջ վա-  
ղել , և չհամարձակեցաւ ալ ետ դառնալ .  
ուստի անանկ պաշարուեցաւ մնաց որ չէր  
գիտէր ինչ ընէ : Բայց անոնց մէջէն մէկը  
սկսաւ մոմբտալ այս վախուն վրայ որ զի-  
րենք այնպէս սաստիկ դողցուցեր էր : և մէ-  
կաշնոնց ըսաւ թէ ահա կը փախչինք հովին  
ու գորտերուն վախէն . ամօթ մեզի : Այս  
խօսքովս նապաստակները սիրտ առին , դար-  
ձան իրենց անտառը :

Նապաստակն է ( Թաւշան ) , որ սաստիկ վախ-  
էր ըլլալով օրինակ է անոնք ճարտիւնը որ  
Ժոճ Բանը Պեծ Բանի փեշ Դնելով աշխարհ  
Թունդ իջ հանեն :

Ձինչ բռնական կիրք իբրեւ երկիւղին ,  
Վիթխարի գործէ զառարկայս չնչին .  
Ձինուոր ցուցանէ զոչխարս 'ի դաշտին ,  
Լերինք ծով անտառ այնու պահպանին :  
Արդ մի հեռակիր վատ նապաստակին ,  
Որում անցնիւր գորտք որսորդք երևին .  
Մի յետս ընկրկիր 'ի տէս ստուերին ,  
Ձի միշտ երկնչիւ է պատիժ վատին :



## ՈՒԼ ԵՒ ԳԱՅԼ

Չարն 'ի բարին կերպարանի,  
Յորսալ զանմեղն յիւր ծուղակի :

Չորս Բարի ի յնանայ,  
Որ զանմեղներն իրեն որսայ :

Իդ. Այժը կը փակէ իր ուլը կամ ձագը  
գոմին մէջ, և կ'երթայ դաշտը արծելու.  
Իսկ գայլը կ'իմանայ, ու մայրը դացածին  
սէս կը վազէ կուգայ գոմին դուռը կը զար-  
նէ. ձայնը փոխելով այծու սէս կ'ըսէ ու-  
լին. Չագուկս երթալու ատենս մոռցայ  
քեզ սիրելու. շուտ ըրէ դուռը բաց որ իմ  
սէրս քեզի յայտնեմ, բաց դուռը սիրական  
մօրդ : Իսկ ուլը դռանը ծակէն նայելով  
ճանչցաւ ու պատասխան տուաւ թէ չեմ  
կրնար բանալ. իրաւ դուռն այծու ձայն ու-  
նիս, բայց չարն այն է որ ես քու մարմինդ  
բոլորովին գայլ կը տեսնեմ :

Աստուծոյ խոյն արեւին ծնօղ + ու իրենց  
չաւիւր լաւ ընկերի յետ + լիցիւն, և իրենցմէ  
լի չափեն. իսկ չաւիւրն ալ ինչամոյն յայնէն  
լի խաբարին, ու լաւաւ ինքստին :

Տեսնէր զօրինակ ոճրագործ չարին,  
Խնդրէ միայնակ ըզճնունդ այծին :

Յեղշեղէ զձայն իբր յուշկապարկին ,  
 Խարդախել զանմեղն ծախել յորկորին :  
 Մանկիկ խոհական մի լսեր ձայնին ,  
 Մի՛ քեզ քաղցրասցի բան անգգամին .  
 Փախի՛ր 'ի նմանէ զի գայլ է ներքին ,  
 Քոյ քաղցր ծնողաց հանգի՛ր 'ի բազկին :



### ՈՁԽԱՐ ԵՒ ՀՈՒՆ

Զրպարտողին մերձ դտանին ,  
 Կաշառակուրծ վկայք կրկին :

Զարին շո-դո՛ւ լարէր ի-գան ,  
 Որ լար գործ-իին օգնիւ ըլլան :

ին . ( Ը ունը դատաստան կը կանչէ զուշ  
 Խարը մէկ քանի կենդանիներու առջին որ  
 իրեն հաց մը տալիք է՝ տայ , և անիրաւութիւն  
 կը հաստատէր թէ փոխ եմ տուեր : Իսկ  
 ոչխարը դատաւորներուն ցըցուց հաստա-  
 տեց թէ շունը անիրաւութիւն կը պահանջէր  
 զայն զի ինքը ամենևին անկէ բան մը չէր  
 առած , բայց որչափ ջանաց հաստատել՝  
 կորսնցուց իր իրաւունքը . վասն զի շունը  
 վկայ բերաւ անգործ ( ախուպան ) և ուրուրը՝  
 անանկ որ անոնց վկայութիւն այն կետին ոչխա-  
 րը պարտաւորեցաւ հատուցանելու զայն ,  
 որ ոչ երբէք անկէ բան առած էր :

Անիբաւ Տարդոս հէփ ԳԼՈՒԻ լԵԼՆՈՒԻՐ • պէտք  
է ուղածը քաւ, և հեռոս թախէլ անիէ • որ ու  
րիշ Բան Տ' աւ չհանէ :

Վ կայք անիրաւ անիրաւ դատին ,  
Մատչին 'ի հանդէս առ դատաւորին .  
Որով զսլատճառ թիւրեալ արդարոյն ,  
Վ ճռեն հաստատեն բան զըսարատողին :  
Վ այ որ ստուծի փոխան ճշմարտին ,  
Դնեն և պնդեն լոյս ընդ խաւարին .  
Խաւարն է այո մոլթ նոցա բաժին ,  
Ծնունդ ստուծի թառանգ գեհենին :

## ՕՁ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Տարապարտուց բարկացողի ,  
Զեղջ ապաշաւ կայ առաջի :

Ոչ որ թոճ քէշ իւ Բարխանայ ,  
Բլած Բանէն շոք կաճընայ :

Ի՞նչ . Երկրագործ մը կը բարկանայ օձի մը  
վրայ որ իր տանը քով կը բնակէր , և այնչափ  
կը տաքնայ որ կայինը ձեռքը վրան կը վազէ  
որ սպաննէ : Բայց օձը կը փախչի մօտաւոր  
անտառին մէջ անանկ արագութեւ որ մար-  
դը չկրնար հասնիլ : Ժամանակէ մը ետեւ  
երկրագործը կը տեսնէ որ կարկուտը բոլոր  
իր ցորենը ջարդուբոլորդ ըրեր է , կը հաւ-  
կընայ թէ օձին իր ըրած չարութեանը սլա-

ախժն է, որ անձ զայն փոթորիկը խրկեց երկ-  
րին վրայ : Ուստի այս պատիժս հանգար-  
տեցընելու համար սկսաւ վնասըսել օձն՝ որ  
հետը հաշտուի . և երբոր գտաւ՝ խօսք տը-  
ւաւ թէ անկէ ետեւ ամենեւին անկէց վախ  
մը չունենայ, և աղաչեց որ դառնայ իր առ-  
ջի բունը : Բայց փուռ տեղը կ'աղաչէր ու-  
կը ստիպէր զայն, վն զի օձն ամենեւին մտիկ  
չըրաւ, և շուտ մը անկէ հեռանալով կան-  
չեց թէ մեծ սիրով կը դառնայի քու տունդ,  
թէ որ չգիտնայի թէ դուն դեռ կացինդ  
պահէր ես, և թէ որ կարենայի մոռանալ  
թէ դուն ինչ մտքով օր մը զայն ինձի գէմ  
վերցուցիր :

Բարի-նն է իբր մէջ Բոջ մը որ երեւոյն-  
նեմք քառաւով իւ վառէ Բարիարդին «իբր»,  
որ վեժծիւնդիւր ըլլայ . ապի տեժե իւ Բարի-  
ն Բարի-նն ի՞նչ ըլլայ ըսած լինի . ապի հա-  
մար Պղատուն իւ խրատէր որ Բարիարդ հարձե՛  
հայլին նայի, Բարի-նն Բան ընէ՝ որ ետեւ լի  
չըլլայ ինչպէս երեւոյնդին եղաւ :

Ահա ասպաժոյժ կիրք գաղանային,  
Որ զհուր բարկութիւն վառէ ի սրտին .  
Նեղէ զմերձաւորն այլ և զընտանին,  
'ի տանէ ի տուն վարէ զգրացին :  
Արդ մի հաւատար գու բարկասրտին,  
Թէ և դառն անմեղ քեզ երևեսցի .  
Եթէ միանգամ վշտացար անտի,  
Փախիր ի նմանէ, շատ է փորձառութիւն :

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Որչափ խարողն է խորամանկ ,  
 Խորամանկին լինի կատակ :

Դուն որչափ որ խարտիս ըլլաս ,  
 Քեզմէ փաժին ծաւր կ'ըլլաս :

Իէ . Սէկ օր մը աղուէսը կը հրամցընէ զարագիլը թէ իմ տունս հրամմէ կերակուր ուտելու , կը փափաքիմ որ քեզի լաւ հարկիք մ'ընեմ : Արագիլը դէմ չիեցաւ սիրով ընդունեց անոր սկառիւն , ու խօսք դըրած ատենը գնաց : Բայց սկառիւլը շատ քաղաքավար եղաւ և հարկիքը անքաղաքավար . վն զի բոլոր կերակուրներն որ առաջ բերաւ՝ կաթէ չինած ջրի ապուր էին՝ տափակ ամանի մէջ լեցուցած . անանկ որ արագիլը սեղանին վրայ ուրիշ բան չիկրցաւ ընել բայց եթէ ամանը քցըցելով գրեթէ բան մը չի կերաւ , հազիւ թէ կերակրին համն առաւ : Իսկ աղուէսը բոլորը լափելով բան չթողուց . ու կը խնդար արագիլին վրայ որ իր բարկութիւնը բռնելով չէր յայտնէր , որով հետեւ աւելինեղացած էր , քան թէ անօթի : Այս ուրախութիւնը աղուէսին շատ չեքշեց . վն զի այն օրը արագիլն ալ հրամցուց զաղուէսն՝ որ երթայ անոր տունը կերակուր ուտելու . և իրեն հանեց մէկ աման մը երկան ու նեղ վիզով , և մէջը մանրած միս .



լեցուն . ինքը դիւրին կերպով երկան բա-  
րակ կառնեցքը ամանին մէջ երկընցուց ըս-  
կըսաւ ուսեւ Հանգստութիւն , և խնդալ խա-  
բող ազուէսին վրայ անոր ըրածին դէմ , որ  
բոլոր հարկիքին մէջ ուրիշ բան չիկրցաւ ը-  
նել , միայն թէ ամանը լըեց : Ապա թողուց  
հարկիքն , ու անօթի մարած դարձաւ ամբը-  
նալով գնաց :

Աշուեսը խորամանկ ըլլաւով օրինակ է խաբե-  
բայ մարտուն որ մէջ ին նայի որիւն խաբել .  
բայց չգիտէր թէ ինչ որ ընէ , զայն ին գտնէ :

Ձիւնդ անվայել քաղաքականին

խարդախեւ զընկերն ըստ խորամանկին .

Որպիսի սատորանս նիւթէ օտարի ,

Նովին սատորանօք փոյթ խայտառակի :

Աղուխտու է բարբ ոչ բանականի ,

խաբել և ծաղրել զընկեր բարեկամ .

Կեղծաւորելով իբրեւ սիրելի ,

Ձրկել և լափել զօտարին սեղան :



## ԳԱՅԼ ԵՒ ԿԻՍՍԱՐՁԱՆ

Գեղեցկութիւն բանականին,  
Ո՛չ մարմնականն այլ է ներքին :

Ի՞նչ շահ է լինէ Դէժին է աշուո՞ր,  
Գլուխն անխելէ պարապ ին՞ր :

Ի՞նչ ( ) ր մը գայլը կը մտնայ արձան շինողին  
խանութը, և կը տեսնայ հոն մէկ կիսարձան  
մը շատ գեղեցիկ շինած. առջի բերանը կը  
զարմանայ անոր աղուորութիւնը վրայ. բայց  
երբոր կը տեսնայ ու կը հասկընայ թէ քա-  
րէ շինած անդգայ գլուխ մըն է և բան չիմա-  
նար, Ո՛հ ի՞նչ գեղեցիկ գլուխ է, կ'ըսէր,  
բայց մեղք որ խելք չունի :

Իմացողութիւն ընդունի՛ ի՛նչ, Բէ՛ որ ընդունի  
Բարախ երախեց և «Գիտ» և «Ընկ»  
ի՛նչ : Ասոր համար միշտ պէտք է մարդո՞ւն  
խելութիւն նայել, և Բէ՛ Դէ՛ ի՛նչ պարանոսին :

Զինչ գեղեցկութիւն անխմաստ գլխոյն,  
Երբ զուրկ ի խելաց պանծայ գերագոյն,  
Խմաստունք միայն գեղով գիտութեան,  
Հրճուն գեղապանծ լիներքին մարդոյն :  
Քանիք կան պարծին իբր անզոյգ ասուն,  
Այլ զուրկ յիմաստից են զերթ անասուն :





Ի՞նչ Կաշաղակ և Սիրամարգ: Ի՞նչ Կապիկ և Աղուէս:



Ի՞նչ Գորտ և Կով: Ի՞նչ Աղաւնի և Բաղէ:



Ի՞նչ Աղուէս և Գալ: Ի՞նչ Փայտահատ և Անտառ:

Արտաքուստ միայն գեղեցիկ վառուն,  
Բայց անխելք յաւէտ արձան ըստն երբնոյն:

## ԿԱԶԱՂԱԿ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Որ ոչ գիտէ զչափ անձին,  
Նախատանօք չափ տան նմին:

Նայէ ըստ սիրտն խելով,  
Չես աղուորնար օգար զարդով:

Իթ. Սիրամարգ մը փետուր փոխելու ա-  
տենը իր փետուրները կը թափէ. իսկ կա-  
չաղակը (սպասաշունչ) զանոնք կը թողլէ ու  
վրան կ'առնէ կը զարդարուի. և զինքը գե-  
ղեցիկութեւն շատ վեր կը դնէ քան զսիրամարգը.  
մինչև հպարտութեւն փքանալով կը թողու իր  
ընկերներն ու կուգայ սիրամարգներուն ըն-  
կեր կ'ըլլայ: Բայց այս հպարտութիւնը շուտ  
մը խայտառակ եղաւ. վն զի սիրամարգները  
ճանչցան անոր կեղծաւորութիւնն ու սուտ  
փետուրները վրայէն փեթաեցին, և շատ քը-  
ցըցելով վռնտեցին իրենց ընկերութեն:  
Իսկ կաչաղակը փեթտած և ծեծը կերած՝  
չկիրցաւ մէկալ կաչաղակներէն ալ ցաւա-  
կցութեւն արժանի ըլլալ, որովհետև զանոնք  
անարգեր էր առաջուց:

Առաջին օրինակ է գառաճակն՝ որ որին  
 Բանակը ին հաղարհանայ և ին պարծի . Պէտ ին  
 նայի որ Երեսն շարտարուած ըլլայ . Բայց ներսի  
 ինչ էլածը շտապով ին ճաննան որիննեցը :

Ահա տեսարան սլաճնող հպարտին ,  
 Պաճնի զարդարի զարդու օտարին ,  
 Որով թեկն ածէ հանգոյն չքնաղին ,  
 Պանծալ զընկերօք անցեալ 'ի հարդին :  
 Արդ զինչ շահ բերէ այն փառասիրին ,  
 Օտարին է զարդ ոչ յատուկ անձին .  
 Երբ իւրաքանչիւր զիւրն առնու 'ի բաց ,  
 Մնայ խայտառակ մերժեալ յընկերաց :

### ՃԱՆՃ ԵՒ ԿԱՌԻՔ


Յիմար ճանճիկն կարծէ զինքն ինչ ,  
 Սակայն յինքեան է սին ոչինչ :

Պէտի հարտիկ ձեծ ին խօսին ,  
 Կարծեն լեռներն իրեն + ըրին :

Ը. Կառավար մը Երբեմն իր կառքը (առա-  
 ղան) կը տանէր մէկ աւազուտ տեղէ մը , որ եր-  
 կու զօրաւոր ձիեր կը քաշէին արագութե .  
 ճանճ մը կը տեսնէ զայն , և բզզալով կու-  
 գայ կը նստի կառքին վրայ , ու միաբը կը դնէ  
 թէ ինքը մինակ կը քալեցընէ զայն . Հօ տե-  
 սէք , կ'ըսէր , որչափ փոշի կը հանեմ ահա :

Հաս ճարտիկի իտն որ յեռնուն բան լի գար,  
 ու ձեծ ձեծ իւր խօսին. և ուրիշին ըրած բանը  
 իրենք ըրածի պէս իւր պարմէն ծանծին նման. ա-  
 սանին երան ի' ըսեն, որ պզտի ճարտիկի ձեծ երազ  
 իւր քեանեն: Արիստոքանէլ քեանս հաւարա քաջայ ճը,  
 որ ձեծ իւր խօսե՛ր՝ ըսաւ. Երանի թէ ճարտէր ան-  
 ցած բաները էս ունենայի:

Տէ՛ս զանմիտ արարս անպէտ տկարին,  
 Պանծայ թէ իցէ կառավար մեկին.  
 Ոչինչ հայելով յիւր անձն չնչին,  
 Հոլովէլ կարծէ զանիւս աշխարհին:  
 Ա՛ռ քեզ ՚ի խրատ զառակին իմաստ,  
 Ծանիր զքեզ կշռեա՛ զինչ ես և ուր կաս,  
 Մի՛ համեմատեր զքեզ կարողաց,  
 Զի մի ծաղրեսցիս յաջս տեսողաց:



### ՃԱՆԾ ԵՒ ՄԻՋԻՒՆ

Որ զինքըն վէ՛հ գնէ այլոց,  
 Մերթի խոտի և ՚ի փոքունց:

Քեզ թէ քնէր իւրիւր ձեծին,  
 Դուրս ի' ըսաւ ձեծին գործին:

Ըս. **Ղ**անճը կը ջանար մեծ ուն իրաւունք  
 ունենալ, որ իր աստիճանը միջոնէն շատ  
 վեր գնէ. ուստի հպարտութիւն կ'ըսէր մեր-  
 ջունին թէ ես առանց պատճառի չեմ  
 ուզեր քեզմէ վեր ըլլալ: Մտածէ ինչ վիճա-




կի Թոր եմ ես, որ ստեղծուած ինձի պէս  
 ազնուական է: Ո՛չ երբէք կ'աշխատիմ. ո՛ւր  
 որ ուզեմ կը մտնեմ սլաշատներու մէջ ըլ-  
 լայ՝ տաճարներու մէջ ըլլայ. և թէ ինչպի-  
 սի՞ կերակուրներով ես կը սնանիմ՝ տէրը գի-  
 տէ. ի՞նչ սուկունքներու և գէմքերու վրայ  
 կը հանգչիմ: Իսկ դուն, ո՛ղորմելի, զասոնք  
 տեսնելով կրնաս զքեզ ինձի նմանցընել,  
 դուն որ ծակի մը մէջ կը բնակիս, ուրիշ  
 ապրուստ մը չունիս, բայց հագիւ թէ փրթ-  
 տած հատիկներով կ'ապրիս. և ան ալ ուրիշ  
 կերպ չես կրնար ունենալ, բայց եթէ մեծ  
 աշխատանքով և հոգնելով: Պատասխան  
 տուաւ մըջունը. ճշմարիտ է թէ դուն սլա-  
 շատներուն մէջ կը բնակիս, բայց ձանձրա-  
 ցուցիչ ես ամենուն առջին: Այն գեղեց-  
 կուհիները՝ որոնցմէ իբր թէ անուշութիւն  
 կը գողնաս, քեզ կը հալածեն և կ'անիծեն:  
 Ես կ'ընդունիմ թէ դուն ամառը քան զիս  
 լաւ կեանք կը վարես. բայց ձմեռն ի՞նչպէս  
 կ'ապրիս գիտեն: Երբոր ցրտէն հալածուած  
 պատին մէջ խեղճ կը սատկիս անթի ծա-  
 րաւ, ես հողին տակը իմ կերակուրներովս  
 կ'ապրիմ. և այն դժուար եղանակին մէջ իմ  
 աշխատանքիս սպողը կը վայլեմ ու կ'ուրա-  
 խանամ: Ուրեմն պապանձէ՛ ծոյլ, այլ զիս  
 մի անարգեր. թէ որ քու ապրելուդ կեր-  
 սըր ազնուական է, իմինս ալ առանց ծան-  
 րութե շատ ապահով է:

Անիտա թծապռններն իրենց հարսպո-լէշնայե-  
 ւով Բանդուէրը մարդո- րէզ լեն Դնէր. սակայն

Տարգոսն մեծ ունիւ Հոգոսն Վրայ ըլլաւ զ շա-  
տաւսս հայ՝ որ մեծագոսնէն շաք վեր է Տարգ-  
հոսնէմս :

Ամսարիշտ պարծանք սնապարծ վատին ,  
Պանծայ իբր ունակ բարեաց բոլորին .  
Ճգնի վերագաս լինել ընկերին ,  
Եւ դատարկութեամբ ուտէ զօտարին :  
Գնա՛ առ մըջիւնն ասի 'ի գրին ,  
Ուսիր տնտեսնել զպիտոյս անձին .  
Մի՛ զերթ ճանճն անմիտ սովամահ լինիր ,  
Մի՛ անմտութեամբ զծոյն երաներ :



## ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Թագաւորաց ոյժ զօրութիւն ,  
Սրուեստ հանճար իմաստութիւն :

Խելք և իմաստ լէ որ լուսիս ,  
Արտայ ըլլաս ու ինչ աւելիս :

Ըբ . ( ) ր մը կենդանիները ժողվեցան որ  
իրենց մէջէն Թագաւոր ընտրեն . կապիկը  
կը մարէր որ ինքն ըլլայ Թագաւոր . ուստի  
անոնց առջին մէկ զարմանալի խաղ մ' ըրաւ ,  
և անանկ թեթևութեմ ցաթ կը բտեց խաղաց ,  
որ իր ճարտարութեմ բոլոր ժողովքին սիր-  
տը շահելէն ետև վիճակն ալ իրեն ելաւ՝  
Թագաւոր կոչուեցաւ : Սակայն ազուէսը  
չքաշեց որ խաբեբայ հնարքով արժանի ըլ-  
լայ կապիկն այս մեծութեմ . ուղեց որո-

գայթ մը լարել կապիկին, և անոր ցըցուց  
մէկ փոս մը, որուն մէջ որոգայթ մը պատ-  
րաստեր էր, վրան ալ տերուներով գոցեր էր:  
Տէր ըսաւ՝ դուն գիտես որ անցած օրեր  
այս ծակին մէջ մէկ անպատմելի գանձ մը  
գտայ: Արդ ինչպէս տէրութիւն լաւ գիտէ,  
օրէնքով ամէն գանձ թագաւորին կ'իյնայ.  
դուն ես մեր թագաւորը, եթէ այս գանձին  
տէր ըլլաս ամենակին բան մը չպակսիր քու-  
կին մեծնալուդ: Ասանկ խօսքերով կապի-  
կը խաբուեցաւ ցաթկեց փոսին մէջ. բայց  
չէ թէ միայն չտեսաւ զայն որ կը խնդրէր.  
այլ և աղուէսին որոգայթին մէջ բռնուե-  
ցաւ: Իսկ աղուէսը ծիծաղելով կանչեց ա-  
նոր. խեղճ յիմար ի՞նչ խեղճով միտքդ գրիր  
որ ուրիշները կառավարես, երբոր դուն ըզ-  
քեզ չես գիտեր կառավարել:

Օրինակ է անմիջ ճարտիանց որ Թագաւորի  
պէս հանգստութիւն ունին, ու գանձ գանելու  
էրեւէ ի՛լլան, և ունեցածնին խրաւրջնելէն  
էրեւ խեղճ խայբառակ ի՛ր ծան:

Իմաստութիւն է տիրող աշխարհաց,  
Եւ ո՛չ արութիւն իշխանաց զօրաց.  
Ուսիր զիմաստից գրտանել զգանձ,  
Եւ մի աղուիսուն թակարթիր 'ի ցանց:  
Ոչինչ շահ գործէ մեծութիւն փառաց,  
Երբ աթոռակից չեն հանճար իմաստ.  
Չի իմաստնոց է նախ տիրել ինքեանց,  
Ապա թագաւոր գող աղգաց աղանց.

## ԳՈՐԾ ԵՒ ԿՈՎ.


Որչափ հստակա՛ն ուղեւորու՛մ ջանայ,  
Պայթի՛ ճողմով ո՛չ մեծանայ:

Մեծ ըլլաւ՝ շատ մ' ջանար,  
Թէ չէ պարտիս ու չէս մեծնար:

Ը. Գորտը երբեմն կով մը տեսաւ որ  
խոտ կ'ուտէր ջրոտ տեղի մօտ, սկսաւ ուղիւ  
բողոր ուժովը, և ուղեւորվ կանչեց ձագին  
թէ որդեակ այս բանը չիկրնար ըլլալ և  
չեմ կրնար քաշել՝ որ ես կովէն պղտիկ մը  
նամ. լաւ նայէ ինձի կ'ըսէր ես ինչպէս կը  
կարծեմ՝ ահա անոր պիտի հաւասարիմ մե-  
ծութի: Պատասխանեց ձագը, թէ դուն  
անոր չես կրնար հասնիլ, հանգիստ կեցիր:  
Ուրեմն, ըսաւ, ահա տես ի՞նչպէս կրնամ:  
Անալ ըսաւ. Պարապ տեղը կ'աշխատիս: Իսկ  
գորտը միշտ ուղեւորվ կ'ըսէր. Ո՛հ կամ անոր  
կը հասնիմ, կամ թէ... Անխելք գորտը  
այս խօսքս չիկրցաւ ըմբոսնել. վասն զի  
ուղեւորվ այնչափ մեծցաւ որ մինչև ճաթե-  
ցաւ:

Ո՛վ որ իբե մեծին նայելու՛ն կ'ուզէ լիճակ  
ի՛նչէն, և մեծերուն նմանի՛ն գորտին պէս՝ ի՛նչ  
լայ. ինչ պէ մեկուն իբեն յարժար լիճակ գորտեր  
է Աստուած:

Քանի՜ այլանդակ, գիտունք ասացին,  
 Հոգի փքացեալ 'ի փոքրիկ մարմին՝  
 Որ ջանայ լինել նման վիթխարին,  
 Ոչինչ խորհելով թէ գորտ է չնչին:  
 Այս դժնդակ կիրք ոգւոյ հպարտին,  
 Խորհի հանապազ վեհ լինել յանձին.  
 Արքայից պետաց նմանիլ տենչայ,  
 Սակայն սայթուցեալ նանրանայ ինքնին:



## ՉՂՋԻԿԱՆ ԵՒ ԹՈՉՈՒՆՔ

Այր անհաւատ՝ զերթ չղջիկան,  
 Չուրի 'ի լուսոյ կայ 'ի մթան:

Թէ լե՞ս թէ՞իդ հաւաքաբէմ,  
 Ահաբդ 'լուսն ամէն ազգին:

Ըբ. (Թ) աչուններն ու չորքոտանիները իրարու հետ կռիւ ունենալով՝ պատերազմ բացին, երբոր երկու դաս բաժնուեցան և սկսան ծեծկուիլ, չղջիկը կամ գիշերահաւը (իւճէ գռնի) անոնց կողմէն ելաւ, թշնամիներուն կողմն անցաւ, որ թաչունները տկար մնան, վասն զի անոնց կորուստը կ'ուզէր: Բայց երբոր տեսաւ թէ յաղթուած թաչուններն ըրին, որ զանոնք թողուցեր էր, շատ զղջացաւ: Իսկ յաղթող թաչունները, և յաղթուած կենդանիները իրաւամբ բարկացան անոր անչա՛հ անհաւատարմութեանը վրայ, ու հալածելով սպառուիրեցին որ կե-

նացը մէջ անոնց առջին չերևնայ: Ասկէ եղաւ որ չղջիկը չհամարձակիր ցորեկն երևնալու, գիշերը միայն կը թռչի:

Խրատ Ընդ աղանէն անհասարակ մարդիկ,  
 « ղիբէն + ղաիէն. լաւն ղի ասանին երբ մէկուն  
 քով հասարակութիւն լռանին, եւ ամենէն կը նա  
 խաբուին:

Տեսե՞ր զօրինակ խաւարասիրաց,  
 Որ ատեան ըզլոյս գնան խարխալած.  
 Զի չեն արժանի անհաւատարիմք,  
 Վայելէլ 'ի լոյս ընդ առաքինեաց:  
 Արդ չքնաղ զաշխարհս զինչ ինչ տապալեաց,  
 Անհաւատարիմ այր ընկերատեաց.  
 Որ ատեայ զիւր ազգ խառնի 'նդ օտարաց,  
 Յօտարաց մերժեալ մնայ խաւարած:



## ԱՂԱՒՆԻ ԵՒ ԲԱԶԻ

Որ արդարոյն չարիս խորհի,  
 Չարագունին ինքն հանգիպի:

Երբ անմեղին դուն լաւ կ'ախ,  
 Քեզմէ լարին յետոյ կ'իյնի:

Ը. Բազէն երկար ժամանակ աղաւնիին  
 ետեւէն ընկաւ, բայց չիկրցաւ բռնել. վեր-  
 չապէս խեղքը դարձած եկաւ ընկաւ հա-  
 ւորսին որոգայթին մէջ. իսկ հաւորսը բռ-

հաճին պէս պատրաստուեցաւ որ սպաննէ :  
Բազէն կ'ըսէր անոր . Ո՞վ անողորմ ես . քեզի  
ն'նչ գէշուածի ըրած եմ որ զիս մեռցընել  
կ'ուզես : Պատասխան տուաւ հաւորսը թէ  
ն'նչ գէշուածի ըրեր էր . քեզի այն աղաւնին  
որ այնչափ ետեւէն ընկար . և տեսայ որ կը  
հալածէիր . մեռնելու արժանի ես դուն ը-  
սելով խղդեց :

Երբեք Աժ Լոյլ իռփայ անպատճառ որ անմե-  
ղը հաւածէն . Բայց յեփայ անոնց դէմ աւ մէկ  
իւ հանէ՝ որ անպատճառ անպատճառ իւ իրսոսին .  
Ռայն անմեղին համբերութիւն իւ պատիւն :

Այս տարացոյց է անզգամ չարին ,  
Պնդի հանապազ ըզհետ անմեղին .  
Ի կեղեքել զայն յիւրում ճիրանին՝  
Ինքն կեղեքի ձեռամբ որսողին :  
Մի անիրաւիր երբ թոյլ տայ երկին ,  
Եւ մի հանգիսիւ քեզ լիցի չարին .  
Քանզի չարքն յաւէտ չարաւ կորնչին ,  
Եւ անօրինօք անօրէնք պատժին :



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԳԱՅԼ

Որ խորխորատ փորէ այլուժ,  
Ինքն անկանի չարեօք 'ի նոյն :

Ո՛վ որ Տափեի Կ'ըլլայ, Եղբօր,  
Իրեն գլխուն կուգայ սեօր :

Ը՛ղ. Գայլ մը բունին մէջ նստած իրեն կե-  
րակուրներովը կ'ապրէր, որ հոն ժողովեր  
սկսէր էր : Իսկ աղուէսն իմացաւ, վազեց  
եկաւ անոր հետ տեսութիւն ընելու . այս  
մոքով որ սատանութենով ձեռքէն կերա-  
կուրը յափշտակէ : Բայց գայլը շատ զգու-  
շութե՞ն նայելուն համար, աղուէսը չկր-  
ցաւ բան մը ձեռք ձգել : Մտմտաց որ այս  
չեղաւ նէ, ուրիշ ճամբայ մը գտնէ : Գնաց  
հովուին տունը, և անոր իմացուց գայլին  
կեցած տեղն ու առաջն ընկաւ տարաւ հոն .  
խորհուրդ տուաւ որ այն չար գազանը մեռ-  
ցնէ . վասն զի կ'ըսէր շատ անգամ քու լաւ  
ոչխարներդ կերեր է : Իսկ հովիւը հետե-  
ցաւ աղուէսին խորհրդին ու գնաց հոն .  
նախզարկաւ գայլը մեռցուց, յետոյ աղուէսն  
ալ սպաննեց՝ որ իր շահուն համար ուրիշին  
մատնիչ եղաւ :

Հովիւն արժանապէս ասփէեցոաց Տափեիւ .  
որ ուրիշ Տափեիւի խորժէն Բէ յետոյ բան ոչ-

« Ի ինչո՞ւ : Ասանկի ալ օր Տը սափանան պիտի ըն-  
 ճապնի ընէրոն . որ ուրիշները Տէկէնի յգեւել Տ-  
 Ղայ պափճառ կ'ըլլան :

Աղուխաբարոյ նենգամիտ քրտուն ,  
 Տքնի խարդախել զընկերին ըզտուն .  
 Խըռովէ ձգէ զեղբայր ընդ եղբօր ,  
 Ձի կերակրեսցէ 'ի նոցունց զիւր փոր :  
 Արդ մի խարդախին լսէր ձայն քաղցրիկ ,  
 Թէ և զերթ Թովիչ սուլեսցէ հեղիկ .  
 Քանզի նա միայն սակս իւր խորհի ,  
 Մատնէ զմերձաւորն 'ի սէր գոյզն օգտի :



### ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Թէ հաւատաս ռիսակալին ,  
 Փոյթ 'ի Ժանեաց ծախիս չարին :

Մի քար ղէն+ըտ լաւին յեռ+ը ,  
 Քեզ իւրեքէ ճահին ճանկը :

Է . ( ներն անանկ լաւ պահպանութի  
 կ'ընէին ոչխարներուն բոլորտիքն , որ գայ-  
 լերը չէին համարձակեր մօտենալ անոնց ,  
 որոնք ուրիշ բան չէին մտաւորար , բայց թէ  
 ինչպէս կ'ըլլայ որ ուտեն զանոնք : Որով  
 հետե առանց մեծ վտանգի չէին կրնար գայ-  
 լերը յայտնի բռնութի գլուխ տանել բանը ,  
 պէտք եղաւ որ խորամանկութի ընեն . տէս  
 թէ ինչ սատանութի բանեցուցին : Ոչխար-

ներուն առջին դրին որ հաշտութիւնն իւրարու հետ. անոնք ալ ընդունեցան. և ամենուն ապահովութիւնը համար կամեցան որ երկու կողմէն ալ պատանդ (ընկիւն) տան իւրարու: Շնեքը պատանդ գացին գայլերուն դին. և գայլին լակոտներն ալ ոչխարներուն դին գացին: Ոչխարները կարծեցին թէ ասանկ խիստ ապահով եղան. բայց շատ գէշ եղաւ իրենց բանը. վն զի քանի մը օրէն ետեւ գայլերը լտեցին լակոտներուն աղաղակը որ իրենց մօրմէն զատուէնուն համար կը պօռային. այս բանն իրենց պատճառ առին, ու խղդեցին շնեքը քներնուն մէջ. յետոյ վաղեցին եկան ոչխարներուն վրան ընկան պատճառելով թէ ինչո՞ւ համար դաշինքն աւրեցիք, ու մեր լակոտներուն նեղութիւն տուիք: Եւ որովհետեւ շնեքը չկային որ ազատեն ոչխարները՝ թշնամիներուն ձեռքը մատնուեցան, որ դիւրութեամբ յափըջտակեցին զամենքը:

Օրինակ է միմիայն մարդեանց, որ Ռշնամայն խօսքին հապաւսով բարեկամներէն հեռու իւր հետ, և իրենց ղենքը անոնց կռապան, ու լարաւոր իւր մաքնոսին անպատեհուն յետքը. ասանկներէն միշտ հեռու խախելու է, և ոչ թէ բարեկամութիւն ընելու:


Ահա բռնութիւն անդուծ գազանին

Ճգնի կը լանեւ զերամս ոչխարին.

Ձիարդ քաղցրութիւն դաշնակցի նոցին,

Մինչև որ սասցէ ըզսիրտ անմեղին:

Եւ զի՞ պիտոյ էր հաւատալ նոցին ,  
 Կամ զի՞ ապահով հաշտիլ ընդ գայլին .  
 Քանզի թշնամին գայլ է մարդախանձ ,  
 Դրժնեայ քանասար գրժրող անմեղաց :



### ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԱՆՏԱՌ

Զոր ինչ գործես կշռեա՞ զվախճան ,  
 Զունի ինչ շահ զեղջն անագան :

Մի՞ քար լարին յաջողութիւն ,  
 Քեզի՞ կ'ընէ նախ լարութիւն :

Ըն. Սէկ փայտ կտրող մը աղաչեց անտա-  
 ուին որ իր փայտերէն անոր փայտ մը տայ  
 կացինին կոթ շինելու համար . իսկ անտա-  
 ուը խիստ աղէկ ըսաց գլխո՛ւս վրայ . բայց յե-  
 տոյ շատ զլջացաւ երբոր հասկըցաւ թէ այս  
 ըրած բարերարութիւնը իրեն կործանմանը  
 պատճառ պիտի ըլլայ : Որովհետեւ փայտ  
 կտրողը կացինին կոթն անցուցածին սէս  
 սկսաւ անտառին ծառերը ջարդել , օր մը  
 մէկը կտրեց օր մը մէկալը . և այսպէս բո-  
 լոր անտառը կործանեց :

Պէտք է մշտ ղգոյշ իենալ շնաս եկած բանէն ,  
 և լար մարդուն յետոյ ղենք չբաւ որ քուն տարե-  
 լու ետեւէ է . առանկ մարդուն ո՛վ որ օգնութիւն





ՆՔ. Աղուէս և Խաղող: Խ. Գայլ և Հուն:




ԽՔ. Կապիկ և Աղուէս: ԽՊ. Չի և Կշ:



ԽՊ. Եղն հայիւն ջուր: ԽՊ. Աթիս և Աղուէս:

ընկելով յաջողութիւնէ կոտորաց՝ իր շնասիրն ալ պար-  
ճատ կ'ըլլայ :

Այսպէս անխոհեմք նրման անտառին  
Նըպաստեն չարեաց զէն տան ի ձեռին .  
Որով և ինքեանք ինքեանց կործանման ,  
Օտարաց համայն պատճառող լինին :  
Սակայն իմաստունք գիտող վախճանին ,  
Զոր ինչ գործ եսցեն նախ կըշռեն խորհին .  
Ըզգաստ գոլ ընդդէմ վընասաբերին ,  
Զըգեն զամենայն յօգուտ շահ անձին :



## ԱՂՈՒԻՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Յորժամ չունի վատն զբարին ,  
Անգոսնէ զայն իբրև չընչին :

Յաժ Ֆարդն երբ Լա- Բան ուրված է ,  
Աւելոյ Բարին Լաւ իւր զարնէ :

Ըթ. Այլուէս մը երբոր անօթի կը մարէր , կը  
տեսնէ խաղողին կուղերը կախուած բարձր  
փայտերու վրայ , և բոլորը հասած . խորա-  
գէտը կը բաղձայ որ ձեռք ձգէ . բայց որչափ  
որ վեր կը ցաթկէ՝ չկրնար հասնիլ որ ու-  
տէ : Ուստի տեսաւ թէ իր կարողութիւնը  
չափաի հասնի , ետ դառնալով գլուխը վեր-  
ցուց ըսաց . Այս խաղողները ես ուզենայի՝  
հեշտ կրնայի առնել ուտել . բայց ինձի ա-  
նանկ կանտնչ չհասած կ'երևնան որ չեն



արժէր այնչափ աշխատանք ինձի տալով զանոնք փրցընեմ :

Նախանձոք մարտը երբոր բան յը ին փեռնէ, ու անհար առնել, ին սիւսի վար զարնել այն բանը . բայց թէ որ յետոյ յգէր, ինչպէս ի՞նչ-բանաւոր : Ասպէս էն յիմար ուսմիկները, որոնց ինչոք իւրճ ըլլալով գիտութեան չհասնիր . անոր համար գիտութիւն և գիտան մարտը վար ինչ-վարնէն :

Իմաստ առաւելիս խոսէ ըզնոսին ,  
 Որոց այլ է միտք այլ ինչ 'ի լեզուին .  
 Տենչան 'ի սրբաէ ունեւ ըզբարին ,  
 Ապա զայն մերժեն երբ յուսահատին :  
 Մի՛ ատեր ըզլաւն հանգոյն խարդախին ,  
 Յորժամ չէ 'ի քեզ այլ կայ յօտարին .  
 Նախանձու է բերք այս ախտ մոլեգին ,  
 Երբ չունի մերժէ զամէն ցանկալին :

### ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ

Ազատութիւնն է ձիրք բնութեան ,  
 'նա և անբանք այնու սրանժան :

Ազապութիւնն է գանձ բնական ,  
 Մի՛ շոք ծախէր զայն որու աթան :

Խ. Պայլը խօսակցութիւն կ'ընէր շան մը  
 հետ աղէկ ապրելու վրայ , և անոր երանի

կուտար գիրութեւն համար: Բարեկամ, կ'ըսէր, քեզ ասանկ գէր և գեղեցիկ տեսնելով պէտք է ըսել թէ քուկին վիճակդ իմինէս շատ վեր է: Պատասխան տուաւ շունը թէ Ամեննին մի տարակուսիր ասոր վրան: Իրան որ, սիրելի՛ երբոր միտքս կը բերեմ թէ դուն ուրիշ տեղ չես պառկիր, բայց միայն անտառի մէջ միշտ բաց տեղեր, և շատ անգամ ալ անօթի կը մեռնիս, ամէն աշխարհք քեզ կ'ատեն կը վաւերեն ու կը հալածեն, իմ միտքս չհասնիր թէ դուն ինչպէս կը տանիս ասանկ խեղճ կեանքը. իսկ ես ամենէն լաւ կերպով կ'ապրիմ. աղէկ կը պառկիմ, աղէկ կ'ուտեմ պարոնի մը տուն, որ զիս շատ անգամ կը սիրէ: Ուրեմն դուն մոմտա՛ իրաւունք չունիմ որ զիս ամենէն երջանիկ համարիմ: Սակայն հաւատա՛ ինձի, և որոշէ որ հիմա իմ հետս գաս, ես ինչ որ ընեմ՝ դուն ալ ըրէ՛ գացած տեղս. ահա առանց դժուարութե՛ իմ երջանկութեամբս նակից կ'ըլլաս: Պատասխանեց գայլը թէ Ինչ բան պէտք է ընել. Գրեթէ ոչինչ, ըսաց, շունը. միայն թէ աւազակութի՛դ մէկ դի գիր, և ատեն ատեն շողոքորթէ զմեր տէրը. այլ ուրիշ բան չմնար քեզի ընելու, բայց եթէ ուտել խմել հանգիստ քնանալ: Արկնեց գայլը բոլորովին զուարճանալով, Բարեկամ, թէ որ ուրիշ բան չկայ, միայն այս բաներով երջանիկ կրնամ ըլլալ, բոլորը կ'ընեմ քեզմէ լաւ: Զայս ըսաց ու գնաց շանրետեհէն. ճամբան երթալու ատենը գայլը տեսաւ որ շանը վզին մազերը թափած էին, հարցուց պատճառը: Պատասխանեց

շունը թէ Այդ տեսածդ կը պատճառի օղակէն (Լասայէն), որ զիս կը կապէ: Ար կապէ ըսաց գայլը. ուրեմն դուն ուր որ ուզես չես կրնար երթալ: Միշտ չէ ըսաց, բայց գրեթէ ամմէն ուզածս ունիմ. Շէն մնաս ըսաւ գայլը՝ ճամբայէն ետ դառնալով. ես քու վիճակիդ այլ չեմ ցանկար. զի իմ ախորժակս այն է, որ քիչ բարիք ունենամ ու շատ ազատութի: Զայս ըսելով առաւ քալեց:

Բնախն է որ ամէն ինչունի ի՞նչէ ազապ  
 ԸԼԼԵԼ. Բայց Բուն Տարդոս ազապոս-Թիւնն է ինքն  
 Իր Բնութիւն Կրամել, ու անխաբ Բան լընել, և  
 Դիւ ազապ ԸԼԼԵԼ 'ի ինչո:

Ուսիր յառակէս չըթողուլ հեշտին,  
 Զիրս ազատութե օժիտ բընածին.  
 Ազատ կալ յախտէ ազատ 'ի կըրից,  
 Բուն ազատութիւն է բանականին:  
 Մի փոխանակեր զայն ընդ ուտելին.  
 Մի ընդ հեշտութեան գըներ 'ի կշռին.  
 Զի զազատութիւնն 'ի կըշիւ եդին,  
 Համայն գանձք երկրի ոչինչ կըշուեցին:

## ԱՆԴԱՄՔ ԵՒ ՈՐՈՎԱՅՆ

Որ անհնազանդ է իւր պետին ,  
Վաղ հանրանայ ջնջի ինքնին :


Հապ ձեծ լենսս ի՛նչէ իրեն ,  
Որ իւր ասէ ԳԵՆ՝ի ձեծէն :

խառն . ( ) ր մը մարմնոյն անդամները բար-  
կանալով որովայնին կամ փորին դէմ ըսին .  
Մենք միշտ աշխատանքով կը տանջուինք , ո-  
րո՞նչ համար , բայց եթէ մէկ որկրամոլի մը  
համար , որ ամենեւին մեր աշխատանքին ձեռք  
չդարձեր , ու բոլոր պտուղը մինակ ինքը կ'ու-  
տէ : Ասկէ ետեւ թող գտնէ իր ապրուստն  
ու ապրի՝ կ'ըսէր ձեռքը . ես այլ բան մը չպի-  
տի տամ անոր : Ոտքը կ'ըսէր՝ թէ Ես այն  
ծուլին համար որչափ քաշեր աշխատեի եմ ,  
և անանկ յոգնած եմ որ այլ պիտի հանգչիմ :  
Սրունքն ալ մէկալ դիէն կ'ըսէր . Ի՛նչ կ'ու-  
զէ ըլլայ , ես այլ չեմ կրնար տեղէս շարժիլ :  
Եւ այսպէս որովայնը երեսէ ընկած շուտ  
մը սկսաւ տկարանալ . բայց երբոր որովայ-  
նը ուժը կորսնցուց , ամմէն անդամն ալ ի-  
րենց ուժը կորսնցուցին . և մէկէն հալե-  
ցան մաշեցան , ու ետքը անոր հետ ոչնչացան :

Աս ԳԵՆԵՅԻԻ առասկէս պէտք է սորվինք հնա-  
շանդ ԸԼԼԵԼ ձեծէրնոս , որոնք յիշա մեր օգոստը

Ին Տփաթէն՝ որ լաւ հառաւարդն է : Ո՛վ որ Դե-  
ծին հնազանդ լուսէր ըլլաւ՝ շուրջ ին հարստի :

Քանի՞ գեղեցիկ խըրատ սխտանի ,  
Խըրատէ ըլմարդ պատկառ կալ պետին .  
Յորչափ է հնազանդ իւրում իշխանին ,  
Պայծառ 'ի լաւ անդր կայ անդրրդուելի :  
Չըքնաղ զարդ հոգւոյ է բանականի ,  
Այս ունակութիւն ըստ որում ասի .  
Քանզի այր հնազանդ պատմէ զյաղթուի ,  
Հնազանդեալ իւր ան յաղթէ աշխարհի :



### ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Յիմարութիւն է ցանկալ յինչ ,  
Որ կարևոր ինքեան չէ ինչ :

Ան բանն որ +եղ չէ պիտոսական ,  
Ինչո՞ւ կուգէն որ +եղի քան :

Խբ . Սապիկը կ'աղաչէր աղուէսին որ իր  
սրտէն քիչ մը տայ անոր : Ա'ղբարիկ , կ'ըսէր ,  
ասա՛ն անո Ես ամենեւին չունիմ ու գուն շատ  
ունիս : Իսկ աղուէսը այս անոյշ խօսակցու-  
թեան վրայ սկսաւ բոլոր ուժովը ծիծաղել , և  
ասա պատասխան տուաւ , Թէ որ ունե-  
նայի հարիւր անգամ աւելի շատ սրտ , ա-  
ռաւել կ'ախորժէի գետինն աւելի , քան թէ  
մէկ կապիկի մը ետին գոցել :

Օրինակ է անունը որ իրենց պէտք է զգած Բա-  
նին երեսնէն ի'իյնին . և երբեքն հասկնէրը ի'ո-  
ղին իմանալ անանի խրթին Բաներ որ ու ինչպէր-  
նին իւր հասնի, և ու իրենց պէտք է :

Խորատէ առակս ոչ ցանկալ այլում,  
Շատանալ այնու զոր ինչ ետ բնութիւն .  
Ձի իւրաքանչիւր կատարելութիւն,  
Իւրաքանչիւրում չէ յարմարագոյն :  
Կապկի է այս բարք և ոչ իմաստնոյն ,  
Ցանկալ զոր ետես օտարին բարւոյն .  
Որով և լսէ զոր ինչ ոչ կարծէ ,  
Ձանարգանաց բան ծաղրող յընկերէ :

## ՁԻ ԵՒ ԻՇ

Թշնամանողն ամբարտաւան ,  
Դժբաղդութեանց լինի արժան :

Որւա՞ր Գոռույն հպարտանայ ,  
Անւա՞ր անարգ ունիւն ի'ընկայ :

Խոյ . Ձի մը գլուխը վեր բռնած հանդէ-  
սով կ'երթար , և վրան ծանրագին զարդա-  
րանքներ լեցուն ըլլալով հպարտ կը շար-  
ժէր : Մէկ էշ մը անզգուշութե' անկէ անց-  
նելով ձիուն ճամբան կ'արգիլէ : Իսկ ձին  
գոռողութե' կ'ըսէր անոր . ո՞վ անպիտան  
գո'ւն մնացիր իմ ճամբաս արգիլող . կորսը  
վէ սրկէ , չէնէ վրագ կոխելով կ'անցնիմ :

Սասաիկ վախնալուն էջը շուտ մը մէկ դի կը  
 փախչի : Ան ատենը ձին ուղեց իր զօրութիւնը  
 յայանել թէ որչափ վեր է էջէն . սկսաւ  
 բոլոր ուժովը վազել . բայց վազելովն ա-  
 նանկ չարաչար աշխատեցաւ որ մարմինը  
 վտանգեցաւ , և անկէ ետեւ անշահ անպիտան  
 եղաւ . մինչև տէրը տեսաւ որ բանի չի գար  
 հանեց երկրագործի մը ծախեց : Երբոր էջը  
 դարձաւ ջաղացքը , քանի մը օրէն ետեւ տե-  
 սաւ ձին որ արօրը կը քաշէր գետինը փո-  
 րելու համար , շատ զարմացաւ . և անոր ը-  
 րած անարգանքին դէմ կրնար ինքն ալ ը-  
 նել . բայց մարդավարութեւ համար ամե-  
 նեին բան չըսաց , ու մեծապէս ցաւակից  
 եղաւ անոր :

Օր ի Եւ-Լեւոնի հարցոյնն թէ Աժ Բէ-  
 լենէ . ան ալ պարտախան քառսն թէ խոնարհ-  
 ներս ի Բարբարոսն , և հարգանքս ի Խոնարհե-  
 յոնէ : Ահա այս ի օրոնէ առաիկս միտք :

Խորատ սկիտանի 'ի բանէս ուսիր ,

Մի հպարտանար այլ յաւէտ երկիր .

Բաղդին է այն ձիւք այնպս զաղփաղփուն ,

Որ տայ և բառնայ ըստ շարժել հողմոյն :

Զխորդ նազելով ճեմէր չքնաղ ձին ,

Քանի անարգանս ձգէր օտարին ,

Ո՛վ ահա ձգէ զարօր 'ի գետին ,

Արժանի եղեալ թշուառ վիճակին :



# ԵՂՆ ՆԿԱՏԷ ԶԻՆՔՆ 'Ի ԶՐԻ

Միշտ սխալի ինքնահաւանն ,  
Եւ ոչ գիտէ զինչ կայ յինքեան :


Շատ մի հաւանիւ ունեցածիդ ,  
Որ շատ շատ չի գայ անյիդ :

Խմբ. **Ե**ղնիկ մը մաքուր ջրին մէջ իրեն նայելով անանկ կը հաւնի եղջիւրներուն բարձրութիւնը, մինչև կը սկըսի սրունքները (պաճախները) անարգել. որ խիստ բարակ ըլլալով իրեն անհամեմատ կ'երևնային : Երբոր սիրտը կոտորած ասանկ կը նայէր ոտքերուն վրան, ահա որսորդ մը հասաւ հոն, և շները ձգեց անոր ետեւէն : Եղնիկը մէկէն սկսաւ վազել գէպ 'ի անտառը, ուր տեղ սովոր էր փախչելու. և երբոր թեթև սրունքներուն վազելովը պիտի ազատէր, եղջիւրները խառնուեցան խիտ (սլի) ծառերուն մէջ, անանկ որ արգիլուեցաւ մնաց : Ան ատենը եղնիկը տեսաւ որ շները զինքը պիտի բռնեն, միտքը փոխեց ու սկսաւ անարգած սրունքները գովիւ, և գոված եղջիւրներն անարգել :

Ինքնահաւան հպարտ ճարտէ իրեն շատ Բերեւոյ Բանին վրայ կ'աւախանայ, ու իր գեղեցիկ Ռիւ Է Գովէ. Բայց շատ ճարտու կ'ըսպեան պատ.

Ճառ եղեր է գեղեցիկ-ութիւն . Վն զի ճարդուն  
գեղեցիկ-ութիւն է խելւոյ, իսկ իշխան գեղեցիկ-  
ութիւն է պարիւն-պար-ութիւն :

Խրատ է այս գործ անխմաստ եղին ,  
Կանացի բնութիւն յիմար պճնողին .  
Որ թողեալ զիւր գործ կայ առ հայելին ,  
Պէտք ունի գեղ մարմնոյն ոչ ը գեղ բանին :  
Սակայն մի միայն չքնաղ զարդ ներքին ,  
Ի գեղեցկութիւն բանեղէն մասին .  
Քանզի գեղ մարմնոյ առիթ կործանման  
Բազմիցս լինի ինքնահաւանին :



## ՕՁ ԵՒ ԽԱՐՏՈՑ

Որ հարկանի ընդ հզօրին ,  
՚Ի հզօրէն փշտի հեշտին :

Շատ Բ ԴԱՆԻՐ ԵՄԵՆ ԲԱՆԻՆ ,  
ԿԸ ՀԱՆԴԻՊԻՍ ՁԵՆ ԴԻՆԻՆ :

Խն . Սէկ օձ մը կը մտնէ դարբինին խա-  
նութը , և հոն կը գտնէ խարտոցը ( Կէօրիի-ն )  
ու կը սկըսի կրծել : Խեղճ յիմար , կ'ըսէ  
խարտոցը , գիտե՞ս ի՞նչ է կրծածդ . չե՞ս տես  
ներս որ ակուաներդ զիս չեն կրնար մաշել .  
որովհետեւ ես երկաթը կը մաշեմ , դուն զիս  
ի՞նչպէս պիտի մաշես :

Օձին Խառնային Կախի Բայն ՇԱՄԼԻՎ՝ ՎՃ ՇԱՄԻՎ՝  
Ի՞նչպէս Բանաստեղծել , որ օրինակ է լար լեզու Բան

Բասողաց , որոնք զամենէն խաթնելով ձար իւր զար-  
նեն . Բայց օր ծը մէկ զօրաւորին հանդիպելով  
անոր շնորհաբար քաջութիւնն իւր շնորհին :

Քանի՜ յանդրգունք յարճման սմին ,  
Հարեալ ընդ վիմաց փշրել նկրտին .  
Եւ զայն ոչ գիտեն , թէ ինքեանք մաշին ,  
Նոքա անմիտ կան յիւրեանց կային :  
Արդ մի յիմարեալ կապեր ընդ վեհին ,  
Կամ 'ի վէգ մաաջիւր ընդ առաքինին .  
Ուսիր յառակէս գիտել չափ անձին ,  
Զի մի հոսեացիս յերեսաց նոցին :



## ԱՔԻՍ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Որ քան զչափն ուտէ մոլի ,  
Սովալըլուկ անդէն տուժի :

Ագահութեամբ իւր որ մոլիս ,  
Ծով ապակեալ պէտք է իւրին :

Խղ . **Ս**էկ վատուժ աղուէս մը խիստնեղ  
ծակէ մը կը մոնէ ցորենին արտին մէջն , ու  
հոն մեծ ուրախութիւն չատ օր կը նստի կ'ու-  
տէ . և այնչափ կ'ախորժէ որ քիչ ատենին  
մէջ չատ կը գիրնայ . անանկ որ երբոր  
սկսոյք եղաւ անկէ դուրս ելլել , անկարելի  
եղաւ որ ծակէն կարենայ անցնիլ՝ ուր տե-  
ղէն որ ներս էր մտեր . մինչև մեծ տարա-  
կուսանքի մէջ ընկաւ չիտէր թէ ինչ ընէ :

Երբոր ասանկ մէկ գիէն մեկաւ գին կը վա-  
զէր, չէր գիտէր ինչ պիտի պատահի իրեն,  
աքիս (կէլինճի) մը գիմացը կ'ելէ, ու այս  
խորհուրդը կուտայ: Բարեկամ կ'ըսէր խըն-  
տալով՝ մինչև որ ծով պահելով առաջուան  
պէս վատուժ չըլլաս ինչպէս հոս մտեր էիր,  
անկարելի է որ կարենաս ազատիլ ասկէ:  
չէ նէ պարապ տեղը կ'աշխատիս:

Ինչ մուսթի-ն «բոնի մարդ», պէտք է անոր  
պարիժը Ժաշէլ «բազաթի» էլի հաւարի է, պէտք  
է խոնարհութիւն ընել, էլի որիմ մուլ է, պէտք  
է պատ պահել ծով բունէլ, «բոնի» ալ ազա-  
թի, հոգիս ալ:

Տէս զարգարացի պատիժ անյագին,  
Անյագ խճողի կերակրով արտին:  
Ոչ գիտէ թէ այն կորուստ է անձին,  
Եթէ ոչ պահօք հիւժեացի մարմին:  
Ահա իրաւունք օրինաց վերին,  
Որով ոք գործէ նովին իսկ պատժին.  
Եթէ կերակրօք, եթէ հեշտութեամբ,  
Եւ եթէ բերմամբ զանազան ախաին:





Խէ. Սիրամարգ և Սոխակ: ԽԺ. Սարեակ և Հաւորս:



ԺԳ. Առնժ և Ուլ: ԺԶ. Կաքաւ և Աքաղաղ:



ԺԷ. Ճպուռն և Մըշխն: ԺԸ. Ագռաւ և Ոչխար:

## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ՍՈՒԱԿ

Սիրտ նախանձոտ փառասիրին ,  
Այրի մաշի 'նդ փառս ընկերին :

Նախանձոտին իւրի հոգին  
Եւր իւր փեսանէ այլոց Բարին :

Իսկ . Սիրամարգը կը արտնջար հերային  
Թէ Ինչո՞ւ համար անոններն ինձի տուին կոշտ  
և անհամ ձայն մը , իսկ սոխակին տուին ա-  
նոյշ ձայն : Այս քաղցր ձայնը կ'ըսէր՝ այն  
սղտի Թռչունէն առաւել էս արժանի էի  
ունենալ . ես որ սուելի գեղեցիկ եմ ամէն  
Թռչուններէն , որ օդին մէջ կը Թռչին : Պա-  
տասխան տուաւ չանուհին Թէ ճշմարիտ  
է ըսածդ , որ դուն ամէն Թռչունէն գեղե-  
ցիկ ես և ամենէն գէշ դուն կ'երգես . բայց  
սոխակը՝ որուն ձայնին կը նախանձիս դուն  
անիրաւութիւն , ամենեւին չի ցանկար քու փե-  
տուրներուդ . վն զի գիտէ Թէ ան իր սլար-  
գեւը ամենուն ալ բաժնէր է , և ինչ որ կա-  
մեցեր է տալ՝ ամէնքը սարսաղան են որ ի-  
րենց ունեցածին վրայ դո՛ւ ըլլան : Ուրեմն  
լռէ , այլ մի արտնջար . վախցիր որ քու  
հպարտութիւնդ սպառեւո՞ւ համար չըլլայ  
Թէ փետուրներդ ալ առնէ , որով այսչափ  
ամբարտաւան ես եղեր :



Կոստայալանէր ի՛նչեքն ընէ հերայ Դիւան  
 Կնիկն ըլլաւ ի՛նչ Բաւր լաճնէրոն ճայրն էր. և  
 աշխարհիս աշխարհիս աշխարհիս ի՛նչ Կոստայալան :  
 Այս աշխարհաշին աշխարհաշին աշխարհաշին ի՛նչ Կոստայալան .  
 ո՛ր օրինակ է Կոստայալան , ո՛ր Կոստայալան լաճայ  
 Կնիկն ո՛ր Կոստայալան ի՛նչ Կոստայալան :

Ահա տարացոյց աժդոհ հալարոյն ,  
 Յանդգնի ընդդէմ կալ ճակատագրին ,  
 Զամենայն ըզփառս զոր դիտէ յայլում ,  
 Տրանջայ թէ հիմ ինքեան ո՛չ ետուն :  
 Արդ զի՞ փառասէրք ինքնատանջ ծփին ,  
 Անիրաւ զրկանս ո՛ր արար նոցին .  
 Հաշին և մաշին ո՛չ զի զուրկ ինքեանք ,  
 Այլ թէ զի՞ օտարք հրճուին ի բարին :

### ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԳԱՅԼ

Ոչինչ ազգէն խօսք ցնդական ,  
 Երբ ընդ գործոց ո՛չ միանան :

Ի՛նչ լաճ լեզուով Բարի ուղեւ ,  
 Գործով անոր ներհանն ընէ :

ԽԵ . Որսորդները գայլի մը ետեւ կ'իյնին  
 որ բռնեն իսկ գայլը կը փախչի փայտ կարող  
 զի մը խուց կը սղահուի , և կ'աղաչէ որ զինքը  
 մարդու չի յայտնէ . ան ալ խօսք կուտայ  
 անոր : Նայիս մէկէն որսորդները հոն հասան  
 ու հարցուցին փայտ կարողին թէ ո՛ր  
 է գայլը՝ քու խուցդ չի սղահուի : Մէկ հա-

մարձակ ձայնով մը ուրացաւ փայտ կտրողը  
 Թէ հոս չէ . բայց միանգամայն մատուլն ալ  
 ցցուց գայլին պահուած տեղը : Աղբեցին  
 հոն որսորդները , բայց զինքը հոն չգտան  
 միայն տեղը տեսան . վն զի գայլը երբ տե-  
 սաւ Թէ փայտ կտրողին մատնուծքը յայտ-  
 նուեցաւ , շուտով փախաւ գնաց իր տեղը :  
 Քանի մը օրէն ետեւ փայտ կտրողը հանդի-  
 պեցաւ գայլին , ու երեսը զարկաւ Թէ ի-  
 րեն ըրած բարերարութեն չամար ի՞նչպէս  
 շնորհակալուծի մը չըրած փախեր գացեր  
 էր խուցէն : Պատասխանեց գայլը Թէ Ես  
 ամենեւին չէի պակսեր այս պարտքէս , պի-  
 տի ընէի քեզի շատ շնորհակալուծի , Թէ  
 որ չի տեսնէի Թէ խօսքդ շատ լաւ էր ,  
 բայց գործքդ մեծ չար :

Օրինակ է Տէր Ժամանակի Տարդիանց որ խօս-  
 փոխան ու խօսութենին լին պահէր . և շաք խա-  
 բեբանէր ալ իան որ խօսութենին ուրիշ է , Գործ-  
 փենին ուրիշ . սակայն Տարդիանք ձկայն Տարդուս  
 խօսին ըւաւով շաք Տէր ամօն է Տարդուս պէս  
 խօս քաւ , և անասունի պէս խօսին ձկայ լի  
 ինեալ :

Իրաւամբք մերժի մատնիչ խաբեբայն ,  
 Յորժամ խոստանայ ոչ պահէ զիւր բան .  
 Զի լոկ բանք ոչինչ գիտեն վճարել ,  
 Գործով պսակի ամենայն վախճան :  
 խոստանալ պահէլ մարդոյ է պատկան ,  
 Ոչ ասել մերժել զիւր խօսս իբր անբան .  
 Քանզի անասունք զեղծերաց կապին ,  
 Լեզուաւ և բանիւ մարդ կապի միայն :

## ՍԱՐԵԱԿ ԵՒ ՀԱՒՈՐՍ


Հետաքրքիրն ընդ այլոց բանն,  
Զիւր կործանումն ամէ ինքեան:

Ըստ մի բնէր ուրիշն բանն,  
Թէ լէ ի՛նչն իսկն բերան:

Խ[թ]. Սարեակ մը կը տեսնէ հաւորաւ որ  
իր որոգայթը կը լարէր. հոգի ի՞նչ կ'ընէս  
ըսաց: Պատասխանեց հաւորաւ թէ Քաղաք  
կը շինեմ: Այս խօսքովս հետաքրքրու[թ]ին  
մը ունեցաւ սարեակն ու եկաւ որոգայթին  
քով, և անանկ մօտեցաւ որ տեսնէ. բայց  
մէկէն բանուեցաւ որոգայթին մէջ: Ան ա-  
տենը կանչեց հաւորսին. Ո՞վ անօրէն, եթէ  
միշտ ասանկ քաղաքներ որ շինես՝ դուն ա-  
մենևին քաղաքացի չպիտի տեսնես անոնց  
մէջ:

Ըստե՛ր ինչ որ իրենց բանը գործուի ինչպէս  
ուրիշն բանին ետեւէ ի՛նչն, և թէին շահ  
թէ ինչն ամէն շահելով սաքանային յետեւէ ի՛նչ-  
նին սեպոյն սարեակին պէս, որ է (խորաթա-  
ւուխ): Եւ իշխեալն հաւորոյն թէ Աճ ինչ բա-  
նով ինչ շահաւորայ. ան ալ ըստ թէ զայս թոյն  
գիտե՛մ որ հետադարձ ճարտէ ի՛նչն ու ի՛նչն:

Մի հետաքննէր զարարս օտարին ,  
 Խրատէ առակս կալ զգոյշ յանձին .  
 Քանզի որոգայթ լարեալ խարդախին ,  
 Կախարդէ զքեզ ձգել 'ի նմին :  
 Զի՞նչ օգուտ գործէ գիտել զընկերին ,  
 Երբ ոչինչ գիտէ զինչ ունի յանձին .  
 Լաւ է հետամուտ ելանել ինքեան ,  
 Քննել զիւր գնացս ուղղել զնոսին :



### ԱՌԻԻԾ ԷՇ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Որ խիզախէ ընդդէմ վեհին ,  
 Անդէն լինի կոխան ռաին :

Մի Դէժ Եւէր + Եւէ Ռեծին .  
 Կ'իսան 'ի լաւս ներքեւ ուրին :

Ծ. Առիւծը կը վախնայ կ'ըսեն աքաղաղին  
 ձայնէն . որ մը աքաղաղը երբոր սկսաւ եր-  
 գել առիւծ մը կ'անցնէր անկէ , առիւծը  
 ձայնը լսածին սկսան անանկ սաստիկ վախ-  
 ցաւ , որ շուտ մը սկսաւ փախչիլ , ան ատենը  
 մէկ էշ մը տեսաւ ասոր փախչիլը , որ իր  
 ճամբան կ'երթար : Անխելք էշը տեսնելով  
 առիւծին անանկ վազեց , կարծեց թէ իր-  
 մէ վախնալուն կը փախչի , սկսաւ ետեւէն  
 իյնիլ : Բայց առիւծը նայեցաւ որ աքաղա-  
 ղին ձայնը այլ չի գար՝ մէկէն դարձաւ բըռ-  
 նեց էշը փարատեց : Իսկ էշը մեռնելու ա-  
 տենը սկսաւ սրտաւ , վայ ինձ , կ'ըսէր , ես

Եւ չանխելք Էմ Էղեր . ինձի պէտք էր որ  
քաջութիւն ցուցընելու համար յիմարութիւն  
դամ առիւծի մը հետ իյնիմ :

Ու որ եր լաւ է ի ճաննար , ե իբե ձեծին  
հեք կ'իյնի՝ շաք անխել է . վս ղի Կարծե Բե  
Էրբոր Դեին իբեն լաւէր Գեւորնի ընել իբե Է  
վախնայ . լիյա Բե շաք Դարդ շաք Բան Կնայ  
ընել Բե որ ուղենայ :

Տեսեր պատուհաս յիմար տկարին ,  
Որ իբրե հզոր 'ի ճակատ մատչի .  
Դառնայ ընդ կրունկն հզոր ամէհին ,  
Գիշատէ զնա անդ 'ի ճակատի :  
Ուսի՛ր ճանաչել զոյժ և չափ անձին ,  
Եւ մի խորխտանար ընդդէմ առիւծին .  
Բազումք յիւրեանց տանխիզախեն 'ի սուր ,  
Անդէն կորանան 'ի տես հզորին :



## ԷՇ ՀԻԻԱՆԴ

Գիշակերաց խորհուրդ և կամք ,  
Է պարարիլ այլոց մահուամբ :


Շահաբերին Բնդ շահ ըլլայ ,  
Հոգ լե այլոց շահ ըլլայ :

ծա . Լ շը վտանգաւոր հիւանդութե մէջ  
էր . բայց երբոր սկսաւ առողջութե դին

դառնալ, ձայն մը տարածուեցաւ գայլերուն  
 և շներուն մէջ թէ եշը հոգեվարք է: Շնե-  
 րը մեկէն վազեցին որ մեռածին պէս կաշին  
 յափշտակեն. երբոր կը սպասէին անհամբե-  
 րութիւն թէ ի՞նչ ձայն կայ, և իշուն պառ-  
 կած տեղին դռանը ծակէն ներս կը նայէին,  
 տեսան հոն իշուն ձագը. կանչեցին անոր  
 այս բարեկամներս թէ Ո՛րդեակ կ'աղա-  
 չենք մեզի իմացոր ի՞նչպէս է մայրդ. գիտ-  
 նաս որ մեծ ցաւ ունինք անոր համար:  
 Պատասխանեց ձագը խառութիւն. շատ լաւ  
 է՝ ձեր չուղածէն աւելի:

Ուրիշմալ անշահ ճարտիի իւր նային ուր իրենց  
 թորը իշխանայ ուրիշին ինչ ի՛շխան ըլլայ՝ ըն-  
 հափար ամենին: Մարդ ճարտուօգնութիւն ընե-  
 ւո համար ծնած է, ի՛շխան թիւխոտան:

Այս դատարկակեաց բարք սորոտաբուծին,  
 Տքնի կերակրիլ մարմնով տկարին.  
 Իբրև բարեկամ ցաւակցի նմին,  
 Պատառել զնա մնայ առ սեմին:  
 Մարդ ընկերական, մի ըստ գազանին  
 Խոշտանդեր զընկերն առ օգաի անձին.  
 Կարեկից լինել ուսար ի բնուստ,  
 Բընութեանակից վշտաց օտարին:



## ԿԱՏՈՒ ԵՒ ՄԿՈՒՆՔ

Մի մերձեհար նենգամախն ,  
Մանրիս ծախիս 'ի ճիրանին :

Մի հապար Կրակն սուրբին ,  
Նայէ ինչէր սրբէն կ'անշնին :

ԺԲ. Սատու մը գրեթէ միներունցեղը ջըն-  
ջեր էր . կամեցաւ որ մնացածներն ալ ջար-  
դէ հատցընէ : Բայց կատուին անբաղդու-  
թիւր միներն աւելի խորագէտ էին . ուստի  
կատուն մեծ զգուշութիւն կը նայէր որ ձեռք  
ձգէ , և չէր յաջողէր որ զանոնք բռնէ : Սա-  
կայն ես զանոնք պիտոր բռնեմ , ըսաց կա-  
տուն՝ ուզէն չուզէն : Չայս ըսաց ու վրան  
ալուր ցանեց , կծկեցաւ մտաւ խմորին տաշ-  
տին մէջ : Մէկ մուկ մը տեսաւ այն կըոր  
ճերմակ բանը , կարծեց թէ մսի կտոր է ,  
մոտեցաւ քովը . իսկ կատուն թաթիկներուն  
վրայ զայն գտնելով բռնեց ճանկերովը . և  
ուրիշ մուկ մ'ալ մոտեցաւ հոն . և ասոր  
ետեէն բոլոր միները հոն ժողվեցան . բայց  
ասոնցմէ մէկը ետ չի դարձաւ , բոլորը հո-  
գաց : Ամէնէն ետե մէկ խռփած ծեր մուկ  
մը գլուխը ծակէն դուրս հանեց , ու մէկէն  
չորս գին նայելով առանց առաջ երթա-  
լու սկսաւ այն անըրոտ գնտին վրայ մտմը-  
տալ : Հուսկ յետոյ գլուխը շարժելով ը-



սաց. Բա՛րեկամ քուկին ասանկ ճերմկնալգ-  
իմ առջիս բան մը չարժէր. կ'ուզէս ալուր  
եղիր, կ'ուզէս սպարկ կմ տաշտ եղիր, ինչ որ  
կ'ուզէս եղիր, հազար տարի անցնի մէկ ան-  
գամ մը չեմ մօտենար քեզի:

Կեղծաւոր եւ խաբէբայ Տարդէն մշտ պէպէ՛ է  
հեռու ինչիւն, Բեպէպ դրսէն սուրբ էրանայ:  
Փոքի եւ խոհեմ Տարդիկ լաւ էր ճանչնան աստի  
Տարդը. պէպէ՛ է անոնց խրապին հեպնիլ:

Տեսանէս հնարս հնարագիտին,  
Որոգայթ լարէ ընդդէմ ոսոխին.  
Որչափ խորագէտ իցէ թշնամին,  
Այնքան դառնանայ ծախել զնոսին:  
Ուսիր 'ի ծերոյն չմերձիլ չարին,  
Թէ և լուսազգեաց իցէ արտաքինն.  
Արտաքուստ բազումք պայծառ երևին,  
Այլ ներքին նոցա չար և խաւարին:

## ԱՌԻԻԾ ԵՒ ՈՒԼ

Խրոխտալ հեռուստ դէմ առիւծին,  
Ի անխոհեմ գործ տկարին:

Հեռուէն շէմ խօսիլ մեծին  
Անիւել գործէ ե յիմար քշէին:

Ճ. Լ. Ս. Ժին ձագը մէկ բարձր պատուհա-  
նէ մը նայելով կը տեսնէ առիւծ մը որ

կ'անցնէր վարէն : Բայց բաղդ ունեցաւ որ  
բարձր տեղը զինքն ազատեց անոր ձեռքէն :  
Ուստի սկսաւ կծու խօսքերով անարգել  
զառիւծը և թշնամութեամբ նախատել : Իսկ  
առիւծը տեսաւ որ չի կրնար հասնիլ խոժոռ  
նայելով ըսաց . Ո՞վ անզգամ չար , դուն  
զիս չէիր կրնար նախատել , աղօթք ըրէ  
կեցած տեղիդ որ զքեզ իմ ձեռքէս ազա-  
տեց . Թէ որ քեզ ձեռք ձգէի , շատ տար-  
բեր պիտոր խօսէիր :

Տիար Տարդը Տիպ հեռուէն շաք մեծ իւ խօսի .  
և մեծաբանելով ուրիշը կ'աւհամարէ . Բայց եր-  
բոր Տօպ իր-գայ , լեւիկն իւ պապուի վախուս : Չի  
խածնող լուսնը հեռուէն իւ հաւէ , կ'ըսեն :

Այս յիմարական գործ է անպորձին ,  
Որ փակեալ 'ի տան գրգռի ընդ վէհին .  
Բայց իբրև արտաքս ելանէ անտի ,  
Զինչ ունի առնել առաջի նորին :  
Մի հակառակիր ընդդէմ հղօրին ,  
Մի զբարկութիւնն ամեր քում անձին ,  
Քանզի մեծարանք պատիւ 'ի փոքուէ ,  
Եւ ոչ անարգանք մեծաց սրտաշաճին :

ሆሊናግ ካሉ ሊባሉት

Անիրաւ է պարծիլ ընդ գործ  
Զոր այլքն առնեն, ինքն է անգործ:

Ի՞նչ շահ պարծիլ են անեաց Վահն,  
Եւք ինքն անիւնս չիցաք յէլ Բան :

ծի . Սարգն ու առիւծը միատեղ ճամբորդութի կ'ընէին . եղաւ որ ճամբուն վրայ տեսան արձան մը , որ կը ձևացընէր կտրիճ ըմբիշ ( Իէհիշան ) մը , որ կ'ըսպաննէր մէկ առիւծ մը : Զայս որ կը տեսնես՝ ըսաւ մարդն առիւծին , քեզ կ'իմացընէ թէ մենք ձեզմէ շատ աւելի կտրիճ և աւելի սրտոտ ենք : Պատասխանեց առիւծն անոյշ ձայնով մը . թէ որ մեր մէջն ալ գտնուէր քարակոփ կմ արձան շինող ինչպէս ձեր մէջ կայ , գուք ալ պիտի տեսնէիք շատ աւելի մարդիկ առիւծէ մեռած , քան թէ առիւծ՝ մարդէ սպաննուած :

Հին ապենեւ հերթիւնս անուանվ ի գրիճը ա  
ռիւծ յէ Դեոյոս-ցեղ էր . առաք տարե շինած աբ-  
խան շաք պեշ Կրած կար , որ փետնողները սիրտ  
առնելն : Օրինակ է անունը որ իրենց նախնեացը  
Դեծոս-Բէ վրայ իւր պարծիկ , եւ իրենք Բանի յէ շահ  
չունին :

Զինչ օգուտ պարծիլ ը գործ գիւցազանց,  
 Պանծալ 'ի վերայ նախնեաց և ազանց,  
 Յորժամ ինքն է զիրկ յառաքինութեց,  
 Անման նոցին քաջութեանց՝ խելաց :  
 Յամօթ սերնդոց անմիտ անարեաց,  
 Որ նախնեաց զարարս համարին ինքեանց,  
 Որով և լինին վեհապառ զարմին  
 Վախճան և աւարտ ազնիւ պերճութեց :

### ՄԱՐԴԵՒ ԼՈՒ

Փոքր շնաս ապիկարին

Մեծ համարի ընդդէմ մեծին :

Թէ շաք Բան Գար յետէն խորին ,

Տէն Բէ Ինչէր Ի՛նչէր Պեծին :

ԾԷ . | Ընն մարդու մը թե խածաւ . ցաւն  
 որ խմացաւ մարդը անանկ անհանգիստ է .  
 զաւ որ ուզեց բռնել և մէկէն ճզմել . ուս-  
 տի ձեռքն երկնցուցածին սէս բռնեց՝ պի-  
 տի ճզմէր . լուն ըսաւ թէ՛ . Մտմըտա՛ , որ  
 էս քեզ միայն խածայ , դուն կ'ուզես զիս  
 մեռցընել . ախոհս ինձի . ան ատենը էս  
 այս բանիս արժանի կ'ըլլայի՝ թէ որ ուզե-  
 նայի քու կեանքդ վերցընել : Պատասխան  
 տուաւ մարդը . Եթէ ունենաիր կարողու-  
 թի՛ ընելու՝ անտարակոյս կ'ընէիր : Զայս  
 ըսելով սխմեց մեռցուց :

Որչափ քոտր յանցանք յը մարտն ընէ աս դէ՛մ,  
 Տե՛ծ ի՞նչ սէպո՞ւի . վասն զի աս Տե՛ծ ուրե՛ն ի՞նչ լափո՞ւի  
 Տե՛ղբ . Բէ որ իարողութիւնն ունենար սպեղծողին  
 Դէ՛մ աւելի լարո՞ւի ընելո՞ւ՝ ի՛ ընէր . Բէպէս Գործողը  
 յիշէ Է . ահա համար օրինաւանդները ի՞նչ  
 պատժո՞ւի լարաւար :

Ահա հատուցումն արդար օրինին ,  
 Որ մահու սլաոժէ խայթիչ փանաքին .  
 Փանաքի մարմնով՝ այլ խայթն է ուժգին ,  
 Եթէ էր կարող զրաւէր զմարմին :  
 Օրինակ է այս օրինաւանցին ,  
 Մարդոյն ընդդէմ կալ օրինաց վերին .  
 Որչափ այն է մեծ և մարդն է չնչին ,  
 Այնչափ մեծ յանցանք ՚ի գործոց չափին :

### ԿԱՔԱՒ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Թէ խիստ ինչ է անտանելի ,  
 Համբերութեամբ է տանելի :

Որչափ քոտար խիստ Բան ըլլայ ,  
 Համբերողէն ի՞նչ խեղճնայ :

ԺՂ. ԲՐԹԻ ԽԵՐՐԸ ԿԱՔԱՎԻՐ ԿՐ ԳՆԷ ՈՒ ԿՐ ԴՐ-  
 ՆԷ ՄԱՆԻՐ ԲԱԿԻՆ ՄԷՋ . զայն որ տեսան աքաղաղ-  
 ները , որոնք չեն քաշէր ասանկ օտարական-  
 ները , վաղեցին վրան ու կտուցքով ծեծե-  
 ցին . անկէ ետեւ ամէն օր ասանկ կը նեղէին  
 խեղճը : Ուստի կաքաւը քաշուեցաւ հաւնո-

ցին մէկ կողմը՝ տրտմած երբոր կուլար՝ տե-  
սաւ որ աքաղաղներն իրենց նախանձին հա-  
մար իրարու հետ կը ծեծկուէին՝ ըսաց կա-  
քաւը. Ահա ես ալ միտքս գրի որ ասկէ ետեւ  
համբերեմ. որովհետեւ ասանկ կռուարար-  
ներն երբոր իրարու միս կ'ուտեն այնչափ  
կատղելով, ինչպէս կրնան ինձի հետ ա-  
նուշուծք վարուիլ:

Կատան է (քէքլէք) Բուլունը. Խոնարհ ըլլա-  
լով օրինակ է համբերողին, որ «արիւնէրուն նայե-  
լով ինչ ղինչ է իւր միտքէն, գիտնալով թէ ամէն  
ճարդ մէկ բաշտիւմ իւր պիտի ունենայ:

Ձիարդ գժնդակ բարբ կռուասիրաց,  
Կռփեն հարկանեն զընկեր բարեկէաց.  
Երբ ոչ գտանեն զայլ ոք յօտարաց՝  
Անհամբոյր դահիճ լինին իրերաց.  
Իսկ յաղթող նոցին՝ սիրտ համբերողաց  
Որ զերթ ասպառած անբեկ կայ յալեաց.  
Որչափ հարկանեն կոհակք եղերաց,  
Անդէն ընկրկեալ դառնան խորտակած:



## ՃՊՈՒՌՆ ԵՒ ՄՐԱՅԻՆ

Որ ոչ գործէ յամարայնի,  
Ի ձմերան սովու նքթի :

Թէ ապէնին բան լի հոգաս,  
Յեպոյ աղապար ինչ ինչ հաս :

ԺԷ. **Ն**պուռը բոլոր ամառուան մէջ ուրիշ բան չէր մտածէր միայն թէ ձայնովը միշտ կը զուարճանար . այս կենդանին ձմեռուան մօտ մեծ նեղութե մէջ դանդաղացաւ որ բան մը չունէր ուտելու : Ուտաի մտմը տալով թէ ձմեռն ինչպէս պիտի ապրի , գնաց մըջունին աղաչեց որ իրեն քիչ մը ցորեն փոխ տայ . թէ որ, ըսաց, ինձի բան չի տաս , գիտնաս որ իմ անօթի մեռնելս կ'ուզես . վն զի երգում կ'ընեմ որ ամենեկին ապրուստ մը չունիմ պահած : Պատասխան տուաւ մըջիւնը թէ՛ Շատ գէշ բան է ըրածդ . զի պէտք էր դալի քը մտածելով ինձի պէս ընել . ատենով աչխատիլ և կերակրով համբարները լեցընել . հապա դուք ի՞նչ կ'ընէք ամառուան այն գեղեղեցիկ եղանակին մէջ : Ես գիշեր ցորեկ կ'երգեմ ըսաց ճպուռը : Ծաղը ընելով ըսաց մըջունը . Իրաւ է որ դուք ուրիշ լաւ բան մը չէք կրնար մտածել , բայց միայն ուրախանալ . ուրեմն ինձի մօտիկ ըրէ , ինչպէս որ սկսար՝ կատարէ այս տարին . որովհետեւ ժա,



մանակիդ կէսը ծախեր ես երգելու համար,  
մէկալ կէսն ալ քեզ կը մնայ որ պար խա-  
ղաս :

Ճոռառն է (Ճրուճրու պէօճէին), որ օրինակ  
է Դաբարի և շաբաթօս մարդիանց, որ աստի  
անդին ժամանակին ի'անցընեն քոճ Բաներով.  
յէպոյ ի'երկան ուրիշներուն գլխացառնին ի'ը-  
նեն որ պահեն զիբեն : Ուր լաւէ գիպէ, շա-  
բան գիպէ, ի'ընեն :

Վայելուչ խրատ է անգործ ծուլին,  
Որ դատարկ ծախէ զիւր կենաց բարին .  
Այլ դայ ժամանակ դառն եղանակին,  
Կարօտի այլոց ծաղը եղեալ նոցին :  
Զինչ շահ սին ձայնիւ ընուլ զվայր օդին  
Եւ դատարկ թողուլ զիւր տուն զիւր տեղին .  
Ջանա՛ ի ժամուն գործել զպիտանին,  
Ամբարեալ պիտոյս վասն ապագային :

## ԱԳՌԱԻ ԵՒ ՈՉԽԱՐ

Զուարճութիւն անիրաւին,  
Է վշտագնեւ զհեղահոգին :

Անգամ ի'որ տխրանայ  
Երբ խոնարհին շնա ի'որայ

ՃԵ՛՛՛ Ըգուաւ մը խաղալով կը թռչնուէր ոչ-  
խարին բոլորովը, և շատ անգամ կտուց-

քով ալ դարնելով կը զուարճանար : Ես  
քեզ զուարճացընելու համար եղեր եմ, ը-  
սաց ոչխարը . ինչո՞ւ համար միշտ իմ վրաս  
կուգաս ու այս շանը վրայ չես երթար որ  
կը նայի ոչխարները : Անոր համար, ըսաց  
ապուաւր, ասանկ կ'ընեմ, զի քեզմէ շատ  
անկէ կը վախնամ . գիտնաս որ ես աւելի  
աղէկ կը վարուիմ չարերուն հետ, քան չա-  
րերը բարիներուն հետ :

Օրինակ է անպատճառ Դարբինոյ, որ հեղահոգի  
Դարբան վրայ իւր խնդան աւ ծաղը կ'ընեն, Բայց  
շատ անգամ ըրածնին իւր գրնէն : Ոչ որ անոյ իւր  
վախնայ, դուռն անիւն թէ վախնար . կ'ըսէ իւր  
սոթան :

Ահա այս է գործ չար անիրաւին

Որ չարիս գործէ ընդդէմ խոնարհին .

Քանզի վիշտ հարուած առնել անմեղաց՝

Միակ զբօսանք է չարասիրաց :

Արդ մի նմանիր դու անզգամաց,

Մի փնասաբեր լինիր անմեղաց .

Զանա՛ հետեւել բարուց խոնարհին

Որ խոնարհութեամբ տանի իւր նեղ չին :



## ԿԱՂՆԻ ԵՒ ԵՂԵԳՆԵ


Մեծաբանին փոյթ հասանէ  
Ծաղը լինել յիւր վեհ բանէ :

Մի շաք պարծիւ Բէ ութն էս ,  
Հնչել ի ոգայ ի եղծ ի շէն քեզ :

ԺԹ. Կաղնի ծառը կը խնդար եղէգին վրայ  
և նախատեւոյ կ'ըսէր , Թէ Պղտիկ հովէ մը  
կը շարժիս , ես շատ կը խղճամ քու վրագ-  
էրբոր կը տեսնեմ ջրին քով տնկած , ուր  
տեղ ուրիշ կերպ չես կրնար կենալ , բայց ե-  
թէ գլուխդ ծռած տկար հովերուն առջին :  
Ինչի նայէ տես ուր եմ բարձրացեր և  
ինչպէս հաստատ է իմ բունս և արմատս որ  
սաստիկ հովերու փոթորիկներու դէմ կը  
դնեմ : Երբոր այսպէս կը սլարծենար , յան-  
կարծ փոթորիկ մը ելաւ եկաւ կաղնիին և  
եղէգին զարկաւ : Այս հովը որչափ որ փչեց  
չի կրցաւ փնասել եղէգին , որովհետեւ հովին  
առջին խոնարհելով ուրիշ բան չեղաւ՝ միայն  
Թէ շարժեցաւ : Իսկ բոլոր փնասը կաղնիին  
եղաւ , վասն զի երբոր խիստ դէմ կեցաւ  
հովին ու կարծեց հաստատուն մնալ փո-  
թորիկին դէմ , մէկ կատղած հովմը զարկաւ  
անոր , և անանկ ցնցեց որ չըջեց սլառե-  
ցուց ծառը : Եւ այսպէս ահա այս հպարտ  
ծառը եղէգին ոտքն ընկաւ որ այնչափ նա-  
խատեր էր զայն :



ԾԹ. Կաղնի և Եղեգն: Կ՞՞ Ողնի և Գայլ:



Կ՞՞ Վղուխ և Աքաղաղ: Կ՞՞ Վքաղաղ և Հնդկահաւ:



ԿԹ. Գայլ և Հունք: Հա՛ Կատու և Աքաղաղ:



Խորապէս ՏեծաՏեծ հարուստներուն՝ որ հպարտ  
 փռ-նէ Ի՛ննարգէն աղփափները . Բայց շաք առ-  
 փամ ասունք իրենց լիճակով հանգիստ իւր ծանա-  
 հարուստները աշխարհիս հովերով իւր իրծանին  
 Ի՛ննան :

Այս է սլառուհաս ամբարտաւանին

Որ խայտառակի յիւր հպարտ բանին .

Այն մեծաբանող ամբարձեալն յերկին ,

Տես իբր ՚ի հողմոյ շրջի ՚ի գետին :

Քանի՛ մեծատունք նման են ամին ,

Անարգէն զաղքատն սկանծան ՚ի բաղդին .

Բայց ՚ի գալ հողմոց հոլովեալ անուին ,

Խոնարհք կան կանգուն ինքեանք կործա-  
 ( նին :



## ԶՈՐԻ ԵՒ ԳԱՅԼ

Որ գուբ փորել այլոց ջանայ ,

Ինքն սահեալ ՚ի նոյն մնայ :

Ունի տրեւ տառաւորին ,

Ինչք ի՛ննայ մեզ տոբն :

Կ. Սայլը կը տեսնէ մէկ ջորի մը որ խոտ  
 կ'ուտէր դաշտին մէջ . մէկէն պիտի յափըշ-  
 տակէր զայն . բայց երբոր տեսաւ ջորիին  
 զգուշութիւն և հասակին զօրութիւն որ կըր-  
 տար ինք զինքը պաշտպանել՝ միաբը դրաւ  
 թէ ալ լաւ կ'ըլլայ խորամանկութիւն ձեռք  
 ձգել քան թէ ուժով : Ուստի շուտ մը մօտե-

ցաւ անոր և զինքը խիտ վարպետ բժիշկ  
 ձեացընելով ուղեց իրեն դեղ ընել : Ես  
 ըսաց , անանկ վարպետ եմ որ եթէ ունիս  
 հիւանդութի՛ն մէկէն կ'առողջացընեմ : Իսկ  
 ջորին , որ վախ ունէր անկէ , պատասխանեց  
 թէ Դուն զիս մեծապէս կ'ամբօջընէիր , թէ  
 որ կամենայիր հանել ինձմէ մէկ փուշ մը՝  
 որ խոցոտեր է ոտքս : Չայս ըսելով վերցուց  
 ետեւի ոտքը ցըցուց գայլին : Իսկ գայլը որով  
 հետեւ ուրիշ բան չէր ուզէր միայն յարմար  
 ժամանակ կը փնտրուէր որ ջորիին վրայ ցաթ-  
 կէ , մօտեցաւ անոր . և երբոր սկսաւ նայել ,  
 ջորին անանկ կից մը զարկաւ գայլին որ  
 քիթը բերանը ճզմեց փախաւ : Ան ատենը  
 գայլը բոլորովին տրամած ըսաւ ինքիրեն .  
 Արժանապէս այս բանն ինձի եղաւ . սէտք  
 էր որ բժշկութիւն ընէի ես , որ ուրիշ բան  
 չեմ բայց միայն մտագործ :

Արեւան ինքից որ անդամ Տարտու Յեռ + շի-  
 նիս . և ինչ ընիար , նայէ որ խելս ճշ Բանեղընե-  
 լով անդամին յեռ + են ապափիս . Վասն զի Տար-  
 տուս զենիս է իրեն խելս :

Քանի՞ դիպաւոր այն անդգամին

Կրէլ զայս չարիս զոր նիւթէր նմին .

Քանզի վրիպանք խորամանկ չարին՝

Չարաչար լինի՛ ըստ առակողին .

Այս դաժան բնութեան է քանասարին ,

Պնդէլ զհետ այլոց սլատառէլ մարմին .

Որչափ դք ցանկայ զայլս կեղեքէլ ,

Այնչափ և յայլոց կրէ զարժանին :





## ՎԻՇԱՊԲ

Բազում գլուխք և տանուտեարք՝  
Են իրերաց խափանարարք :


Թե ասն ճշ մէջ շաք Գլուխ Իսյ ,  
Տանը Բանը շաք Գեշ Կլուսյ :

Կիւ , Երկու վիշապ կ'ուզէին ցանկէ մը  
կամ վիշոտ տեղէ մը անդին անցնիլ որ աւելի  
խիտ (սէ) ըլլալով արդիւէր էր անոնց ճամ-  
բան : Մէկ վիշապն ունէր մէկ գլուխ մը  
և շատ սուշ , մէկալը մէկ սուշ մ' ունէր և  
շատ գլուխ : Այս ետքինը բոլոր ուժովը  
ջանաց՝ չի կրցաւ անցնելու . վասն զի շատ  
գլուխ ըլլալով մէկմէկու արդեւք կուտային .  
ուստի ուրիշ բան չի կրցաւ ընել բայց եթէ  
մէկ ծակ մը բացաւ , որ մինակ մարմինը հա-  
ղիւ կրնար անցնիլ : Իսկ մէկալ վիշապը քիչ  
աշխատանքով բացաւ իր ճամբան . վասն զի  
մինակ գլուխը բացաւ ծակ մը հանգստութիւն  
անցաւ ու քաշեց սուգերն ալ անկէ անցուց .  
և անանկ լաւ ըրաւ որ անցան անկէ գլու-  
խը , սուգերը և բոլոր մարմինը :

Խրաք ըլլայ ամենան , որ աներնոն մէջ էր-  
իւն մէծ և շաք Գլուխ լինեն որ իրարու չի  
հասնելով Կ'աւրեն ասանը : Թե որ մէկ Բանին Գե-

Լաւիւր Ձէի Տարդ ՇԼԼայ, ամէն Բան Խարգի Դնէւիւ,  
Բուրն Իրէն հնազանդ Կ'ԸԼԼայ, Ե Բանը Դիւրին  
առաջ Կ'Երթայ :

Տէս զիարդ բազում գլուխք մի մարմնին  
Են արգելք միմեանց 'ի գործ պիտանին .  
Զի իւրաքանչիւրք են ինքնագլուխ ,  
Ոչինչ վճարեն՝ մնան անգլուխ :  
Այս օրինակ է իշխանաց պետաց  
Որ տիրել կարծեն անկախ յիրերաց .  
Բայց երբ չեն կարգեալ ընդ միով գլխով  
Են բազմագլուխ անբաժ 'ի բարեաց :



## ԿՐԻԱՅ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

Աշխատութի միշտ շարունակ  
Յաղթէ տունու ըզյաղթանակ :

Թէ անհանգիստ ջանաս հոգնիս  
Անէն շաք Դոսն իւ շահիս :

կբ. ( ) Երմընապատասկը կը խնտար կրիայ  
ին վրայ , ու երեսը կը զարնէր անոր խիտ  
ծանրաշարժութիւնը : Եկոր , ըսաց , կրիան  
դաշինք (դէս) բռնեմք . ես քեզմէ շուտ կը  
հասնիմ այն ծառին՝ որ տնկած կը տեսնես  
արտին ծայրը : Պատասխանեց նապատասկը  
Թէ Մէկ կրիայ մը ի՞նչպէս պիտի նապատա  
կին հետ վաղէլու ելլէ , քու խելքդ դարձեր  
է Եղբայր , գնա բանդ : Այս կարգէ դուրս  
բանին զիս հրամցընէէդ սուաջ պէտք էր

մտմբտալ, թէ էս չորս անգամ ցաթկեմ այն չափ ճամբայ կ'ընեմ, որ դուն չորս շաբթուան մէջ չես կրնար ընել: Հոգ չէ, ըսաց կրիան. և ասուն չի կորսընցընելով սկսաւ երթալ: Իսկ նապատտակն առանց հոգալու թողուց որ կրիան առաջ անցնի, երբեմն խաղ կ'ընէր, երբեմն ետ կը դառնար, և խոտ ու տէլով կը զուարճանար. ինքիրեն կ'ըսէր թէ Ես ասղահով եմ, որ կորսընցուցած ժամանակս՝ շուտով կրնամ շահիլ. սակայն կրիան միշտ առաջ կ'երթար: Երբ որ տեսաւ նապատակը թէ երկու մատ մնացեր է, որ կրիան հասնի ծառին, շուտ մը ցաթկեց ու կայծալ կի սէս վազեց. բայց բանը բանէն անցեր էր. վասն զի կրիան հոն հասնելու վրայ էր. և ինչ որ ըրաւ նապատտակը չիկրցաւ, կրիան առաջ հասեր էր. և այսպէս կորսընցուց իր դաշինքը:

Կրիան այսինքն (Թօսպաղին) օրինակ է աշխատաւոր մարդուն որ միշտ աշխատելով որեւէ խելճ ըլլայ առաջ կ'ուգայ: Իսկ նապատտակն է օրինակ անհոգ մարդուն, որ ծոյլ ապեհն անցընելով, որբիւնէրը կ'ուգան զինքն կ'անցնին՝ ինքն անտնի իւր հայ: Ամէն բանի յաղմուղ է աշխատաւորին, կ'ըսէ իւրիտո՛քան:

Ահա տեսարան ինքնահաճ հեղգին

Ինքնապանծ խոտէ գնացս օտարին.

Բայց նա անվատտակ գողով իւր ուղին,

Յաղթէ հասանէ իւր նապատակին:

Քանի պատկառանք այն դանդաղկոտին,

Երբ ինքն է մեղկեալ, այլք յառաջ ձգին.

Զինք օգուտ ուսանուլ լեռնէ ի լեռին,  
Զի աշխատասերն հասանէ կիտին :

### ՈՁՆԻ ԵՒ ԳԱՅԼ

Ոչ վայրապար բաշխէ բնութիւն  
Իւրաքանչիւր զէն զօրութիւն :

Ինչ որ ունի առէի պահէ


Որ Գործածէն Երբոր պէտք է :

կգ. Սէկ գայլ մը կը հանդիպի ողնիին , և  
շատ անօթի ըլլալով առաջ կը վազէ որ ուտէ :  
Իսկ ողնիին տեսածին պէս զայն՝ վրայի փշե-  
րը մէկէն շտկեցուց : Գայլը կատարելով չէր  
գիտէր որ տեղէն բռնէ . ուստի խորաման-  
կութեւ ըսաց անոր , Եթէ կամենաս քեզմէ  
հանել բոլոր այս փշերը՝ շատ աղուոր կ'ըլլաս .  
վասն զի ասոնք զքեզ խիստ գէշ կ'երեցընեն .  
ինձի մօտիկ ըրէ ու ասկէ ետեւ նեղէ զա-  
սոնք : Աստուած չընէ , ըսաց ողնիին աւելի  
շտկեցընելով փշերը , բարեկամ , Թէպէտ  
այս փշերս զիս գէշ կ'երեցընեն , բայց շատ  
լաւ կը սղաշտպանեն քու ձեռքէդ :

Ողնի է (քիւրի) . ասոր մէկ փեսայից է այ շան  
լաւ , որ ինքն ինչ նեղէ կ'ընեն Ռանգիին ինչ վար-  
նէ նեղի պէս : Օրինակ է Խոհեմ մարդուան որ  
Ռայն ինչ ապահովութեան ինչ նայի և ամենաինչ

աւրիշի խօսի մարիւն լենէր, որ շատ Տը Լփայ  
իրեն:

Խորատէ առաւիս զգոյշ կալ յանձին,  
Չթափել զգէնս բանիւ խարդախին.  
Ձի նենգել ուտել է խորհուրդ նորին  
Ոչ թէ կարեկցիլ իբրեւ մտերիմ:  
Արդ մի ապահով կար ընդ թշնամին  
Եւ մի հետեւիւր խորհրդոց նորին.  
Ձինեաց հանճարով ընդդէմ ոսոխին,  
Ձի զէն մարդոյն է հանճար բնածին:



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Որ ոչ ումէք բարի առնէ  
Յայլոց բարիս ոչ տեսանէ:

Մէկն որ մարտո՝ Բարիւն լենէ,  
Ուսի՞նք Բարիւն պիտի գտնէ:

կդ. Լ՝ զուէս մը շատ հաւեր յափշտակե-  
լէն ետեւ վերջապէս ընկաւ որոգայթին մէջ  
որ հողագործ մը լարեր էր անոր համար տա-  
նը բակին մէջը: Երբոր անօգուտ կ'աշխատէր  
և կը ջանար որ ազատի, տեսաւ արագադ մը:  
Ե՛ղբայր, ըսաց, զգոյշ կեցի՛ր, կ'երդուընցը-  
նեմ քեզ որ զիս չի յայտնես. թէ որ կ'ուզես  
ինձի հարկաւոր և մեծ ծառայութիւններու,  
վազէ շուտով դնա՛ իմացուր ազուէսներուն  
իմ գլխուս եկած վտանգը և ըսէ՛ իրենց որ

կ'աղաչեմ գան զիս ասկէ ազատեն : Իսկ ա-  
 քաղաղը գոցեց իր սրտին մէջի եղած ուրա-  
 խութիւն որ կարենայ վրէժ առնել անկէ .  
 երգում ըրաւ անոր խորհուրդը լաւ պահե-  
 լու և ամ կերպով դրած պարտքը կատա-  
 րելու . բայց շատ հեռու էր խօսքը պահե-  
 լէն . վասն զի վազեց գնաց շիտակ տանտի-  
 րոջը սրտամեց բոլորը . ան ալ մէկէն եկաւ  
 բռնեց սպաննեց աղուէսը , որ մեռնելու ա-  
 տենը լալով կ'ըսէր . Վայ գլխուս , պէտք էր  
 որ ես օգնութի խնդրէի քաղաղէն , որուն  
 այնչափ հաւերը խղզեր եմ :

Պէտք է յաջողութեան մէջ Բարեկամ ունենալ  
 ամենոն Բարեբարութի ընելով , որ Երեսօր-  
 մէջ ինքն ալ գանէ : Ասոր համար Աշխատեալ  
 Բարեբարութի ի՞նչեք թէ Ամեն Բանէն վեր հաւաքա-  
 րի՞մ Բարեկամ է :

Ահա գեղեցիկ պատուհաս չարին

Ոյր գործն է լարել թակարթ ընկերին .  
 Հուսկ յետոյ և ինքն 'ի նոյն թակարթի ,  
 Աղաչէ զնա գալ օգնել նմին :

Քանի՞ լըբութի՞ ժող խօսնակին՝

Ոյր ծծէր զարիւն թէ էր 'ի ձեռին .

Որպէս յօտարէն նպաստ որ յուսոյ

Երբ այլոց բարի չարար բնավին :



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՏՈՒ

Պատիր հանճար խորագիտին  
Ոչինչ զօրէ օգնել նմին :

Շափէֆ Տարգիի շափ Բան ի' ընէն ,  
Բայ Կէշ ի Գոյ որ Բան չիյ Կէն :

Կէ. **Ղ**ուէսն ու կատուն միատեղ ճամ-  
բորդութի կ'ընէին . երթալու ատենը սկսան  
խօսիլ զանազան բաներու վրայ . վերջապէս  
աղուէսն ըսաց մէկալին . Բարեկամ քու-  
կին քիչ մտածելուդ համար սլարտական էս  
որ յայտնի խոսստովանիս թէ իմ միտքս բա-  
րակութեամբ որչափ գերազանց է և խելքս  
քուկինէն շատ վեր է : Պատասխանեց կա-  
տուն . էս կ'աւտամ . բայց կաղաչեմ՝ նայ-  
ինք ի՞նչ օգուտ այն քեզի կրնայ ընել հիմա .  
կը տեսնե՞ս որսորդին երկու շներն որ շիտակ  
մեր վրայ կուգան ինչպէս ինձի կ'երենայ :  
Ահա թէ որ չեմ սխալիր , քու խորաման-  
կութիւնդ պիտի ըմբռնեն . ինձի որ հարցը-  
նես՝ ահա իմինս . իմ ունեցածս մինակ այս  
է որ բոլոր քուկին ունեցածներէդ լաւ կը  
բռնեմ : Չայս ըսելով ցածկեց ծառին ծայ-  
րըն ելաւ . իսկ աղուէսն որ այնչափ յաջող  
էր այս բանը չգիտցաւ ընելու , և թէպէտ  
շատ անգամ իր հնարքներովը խաղցուց ար-  
գիլէց շները և քսան անգամ առաջներնէն



փախաւ . բայց փութ էղաւ . վն զի վերջա-  
պէս չի կրցաւ ազատիլ , բռնեցին զինքը  
սպառուեցին :

Միշտ ջանա՛ որ շիտակ ճամբայէն լեւեա . վն  
զի որչա՛խ խորամանկ ըլլաւ , թեղմէ խորամանկ  
նայ , եւ ապէն ի՛ր ընկալ որ շաքոթիտ-ութիւն թեղի շա-  
ճ լի իննսր ընել : Ա՛րեւն գիտունները , թէ շաք  
ձեծ յիմարութի եւ պարծիլ խելսին վրայ :

Զխորդ անիրաւ սարծանք հպարտին  
Որ ազատ սանձայ ընդ հանճար անձին .  
Բայց երբ ժամանէ արկած իւր բաղդին՝  
Անդէն նանրանան այն սանձանք չնչին .  
Պանծալի իմաստ գոյ յառաքինին  
Որ իմաստութիւն փայլէ ի բանին .  
Ոչինչ յեղլեղեալ յարկածից բաղդին ,  
Ոչ նսեմացեալ ի մահու անուին :



## ԱՔԱՂԱՂ ԵՒ ՀՆԴԿԱՀԱԻ

Սիրտ նախանձոտ տանջի համայն ,  
Ի իւր ինքեան տանջանարան :

Թէ լեւ քանիւ այլոց գործին ,  
Նայէ՛ լեւեա դուն աւելին :

Կ՛ը . Ըբաղաղը բնութիւն նախանձոտ է .  
Բայց հինսու աբաղաղին հետ բակին մէջ

միատեղ կը վարուէին . որ մը տեսաւ որ վեր-  
ցուց փետուրներն ուռեցաւ մէկալ հաւե-  
րուն առջին . այս բանէն աքաղաղը կասկած  
գնաց ու ըսաց անոր . ‘Նէնգաւոր’ պարապ  
բան չէ՝ որ գուն իմ հաւերուս առջին փե-  
տուրներդ վերցուցիր . առանց կարծեաց  
կ’ուզես իրենց հաճոյ ըլլալ , և ինձմէ զանոնք  
հանել : Ան ալ պատասխան տուաւ , Բան  
մը կ’ըսես որ ամենևին մաքէս ալ չէ ան-  
ցած և անմտութի տաքցեր էս : Ինչո՞ւ հա-  
մար չես կրնար քաշել որ էս հաւերուդ  
առջին փետուրներս ուռեցընեմ . հապա էս  
կը համբերեմ որ գուն երբոր կ’ուզես իմին  
հաւերուս առջին միշտ կ’երգես :

‘Նախանձ անանկ անարգ անպէ որ ին քաբ-  
մեղենէ ուրիշին Բարո-Ռեանը Վրայ . ուսպի նախան-  
ձաբը լի իրնար Գաշէն ուրիշին Գեղեցի-Ռիւ , Գի-  
պո-Ռիւ և ամէն բանը . լո-ղէր որ իրեն հաւա-  
սար ըլլան , և ասով Ռեա սիրաբ ին ինծէ Գո-  
ւարձ իրեներով առաջադին պէս :

Անյագ է նախանձ ըստ անսուտ վճռի  
Որ բունեալ ՚ի սիրտ սպառէ զողի .  
Մաշի ընդ յաջող բաղդըս ընկերին ,  
Զի սպառի՞ նորա է այլոց բարին :  
Ուսիր կենակցիլ քաղցր ընդ ընկերին ,  
Եւ մի նախանձիր ընդ դործըս նորին .  
Զի ամօթ մեծ է թողեալ զիւր գերան ,  
Ընդ օտարս կազելը զշիւղոյ ահան :



## ԿՈՎ, ԵՒ ՇՈՒՆ

Չարական հիւծի ընդ բաւա մարդկան  
Յոր ինչ հայի սիրան է դաժան :

Ծախալն այլոց բան չի կատիր ,  
Թեպէր իրեն բան չի պատիր :

կէ. ( ուն մը պառկեր էր խոտի դէզին  
( եւշեն ) վրայ , կոշի ալեկաւ քիչ մը խոտ ու  
տելու որ անօթի կը մարէր . բայց շունն ար-  
գիլէց ու ակռաները կը ճըտելով կովին դէմ  
ցաթկէց : Ո՛վ նախանձոտ կենդանի , ըսաց  
կովը , ի՞նչ ես կատողեր ու չես կրնար քա-  
շել որ քիչ մը խոտ ուտեմ , որովհետեւ քեզի  
ամենեկին հարկաւոր չէ :

Օրինակ է լարախոս-ն է որ ուրիշին աղէկու-  
ն է լուսեր , ու գէշ ալով ինչ նայի ուրիշին :  
Փիւնոգոյ մը քեանս ասանկ մէկը քրքում , ըսաց  
Լե այս մարդոսս ի՞նչ գէշ բան մը պապահած է ,  
ի՞նչ Լե ուրիշին աղէկու-ն է մը եղած է :

Ո՛վ զեւորդ չարական ըզտիւ զերեկուն ,  
Առ չար նախանձու կաղկանձէ անքուն .  
Ձի երբ տեսանէ զընկերն 'ի բարին ,  
Իւր մաղձ դառնութիւն զեղանի յարին :  
Մի՛ ուտեր ըզհաց ասէ խմաստունն ,  
Ընդ վատ չարականին բարեաց թշնամոյն .

Զի հաճոյք նորա՝ զրկեն քոյդ սեղան  
Թէ և ինքն յագեալ ննջէ խոր ի քուն :



## ԲՈՒ ԵՒ ԹՈՉՈՒՆՔ

Որ զայլս ատէ յայլոց ատի ,  
Իբրև ըզբու ընդ մութ շրջի :

Դռն ուրիշին ինչ որ ընէ ,  
Ուրիշներէն զայն իւր փանէ :

ԿԵ. Իսկ թռչունը կը նայի որ ընդհան-  
րապէս բոլոր թռչունները զինքը կ'ատեն ,  
սաստիկ նեղութեն կը քաշուի կաղնի ծառին  
խոռոչին (խօշո-խի) մէջ կը նստի . ու ալ չի  
համարձակիր ցորեկը դուրս ելլելու , միայն  
գիշերը կ'ելլէ : Մէկ անգամ մը դիպուածը  
բերելով ցորեկն անկէ դուրս ելաւ . բայց  
բանը շատ գէշ եղաւ . վասն զի թռչունները  
զայն տեսածնուն պէս ամմէն կողմէն վազե-  
ցին վրան թափեցան , և յետոյ մեծէն մինչև  
սղտիկը սկսան զուարճանալով ծեծել զայն  
կտուցքով . և այնպէս հալածեցին :

Բռն այսինքն (պայղուշը) միայն հաւ փեղը  
իւր Լուի , և գիշերը բռն կ'որսայ կ'ափէ . ուստի  
խաւարասէր ըլլաւ ի նման է ափեցող հարգում  
որ միշտ ուրիշը ափելով ամենեւեալ զինքն կ'ափեն :

Այս օրինակ է ատելի անձին  
 Որ զանխուլ կրծէ զսիրտ ընկերին ,  
 Որով յամենից կրէ զարժանին՝  
 Ձրկեալ 'ի լուսոյ՝ չըջի խաւարին :  
 Քանի՞ վայելուչ սիրել և սիրիլ ,  
 Օտարաց համայն ցանկալի ընել .  
 Ձեռն հանգիստ չարաց ատել և ատիլ ,  
 Հաշածեալ իսպառ 'ի միժան թաքչիլ :

### ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆՔ

Որկրաժեռին միայն թակարթ  
 է կերակուրն եղեալ 'ի կարթ :

Ո՛ւր զուրիշն ուփել ցանկայ ,  
 Ինչքէ երախուր անուր կ'ըսայ :

կթ . Գայլ մը հեռուէն կը տեսնէ երկու  
 շուն որ իրարու հետ կռիւ կ'ընէին . կռիւն  
 որ աւելի տաքցաւ՝ մամլոտաց որ երթայ  
 մօտենայ անոնց և երբոր իրարու վրայ ել-  
 լեն՝ դիւրութե՞ք զանոնք յափշտակէ : Այս  
 խորհրդով շնտակ անոնց քովը վազեց . բայց  
 հակառակը եղաւ . վասն զի շներն այն կէ-  
 տին հաշտուեր էին . գայլն որ մօտեցած տե-  
 տան՝ շատ ուրախացան , և յետոյ երկուքը  
 միաբան վազեցին ընկան գայլին վրայ սպառ-  
 ուեցին :

Որհրամսւին իորոսաբ Ռշա իերախեն ի'ըււայ :  
 Վն զի շաք սաբելը շաք հիւանդոմէն պապաճառ  
 ըււաւեն ՚ի զաք , շաք թորթոմէ մէջ յգելով՝ վեր-  
 շապեն գլուխը ի'ոսաբ գայւին եղածին պէս .  
 այսպէս ի'ըււան ուրիշ ախաթի եփեւէ եղողներն աւ :

Ահա անհամբոյր բարբ գաղանային ,  
 Յայրոց գիտութեց հանէ զիւր բաժին .  
 Քանի՞ շահասէրք համանման սմին՝  
 Կռուողաց բարիս գրաւեն հեշտին :  
 Բայց արդարութի չթողու նոցին ,  
 Փութով հասանէ կշիռ ՚ի ձեռին .  
 Տոկոսիս արդար սղահանջէ կրկին ,  
 Եւ անդէն մասնէ ժանեաց ոսոխին :



## ԱՐԾԻՒ ԵՒ ԱԳՈՒԱԻ

Որ յանդգնի գործել մեծ ինչ ,  
 Նշաւակի լինի ոչինչ :

Չեռ+ թ զարներ մեծ Բաներոս ,  
 Կը պապահիս սե օրերոս :

Յ. Արծիւն ինջաւ ոչխարի մը վրայ , ու ա-  
 ռաւ վեր հանեց . զայն որ տեսաւ ագռաւը  
 ինքիրեն ըսաց . Միթէ ես ալ չեմ կրնար ը-  
 նել ասանկ մէկ բան մը : Չայս ըսելով թը-  
 ռաւ գնաց մէկ գէր ոչխարի մը վրայ . բայց  
 շատ հեռու մնաց արծիւին ըրածէն . վասն  
 զի անանկ ոչխարին բրդերուն փաթտուե-

ցաւ, որ չի կրցաւ ազատել. մնաց անանկ  
 ոչխարին վրայ: Երբոր կը շարժէր որ ազա-  
 տի՝ հովիւն իմացաւ, վազեց եկաւ բռնեց  
 գրաւ վանդակին (խաֆէ-ի) մէջ, տուաւ տ-  
 ղոցն որ խաղան:

Օրինակ է յանդուգն Տարտու. որ ղինժը և՛  
 ճաննաւով ինչ որ փենէ՝ կարծէ թէ ինչն աւ  
 իրնայ ընէւ. Բայց երբոր վառագի մէջ կ'իյնի. աւ  
 ասենք կ'իմանայ ինչ ըստէ:

Խրատ է այս գործ յանդուգն յիմարին,  
 Որ ոչ ճանաչէ զոյժ և չափ անձին.  
 Ի գործ մեծագործ մտիլ յանդգնի,  
 Մինչև 'ի ներքոյ ճմլի ծանրոցին:  
 Պիտանի յաւէտ իմացականին,  
 Ճանաչել զիւր կար և ոչ հզօրին.  
 Քանզի հզօրաց գործն է մեծագործ,  
 շնչին և թեթև է գործ տկարին:





## ԿԱՏՈՒ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Զրկողութիւնք անզգամին ,

Սուտ պատճառօք արդար դատին :

Զարգործ հարդն ինչ որ ընէ ,

Զինչ առաքով արդար կ'ընէ :

Հա . Սատուն բակը կը մօնէ , և հոն տեսնելով աքաղաղ մը վրան կը ցաթկէ , ճանկովը կը բռնէ որ իրեն ընէ մէկ լաւ կերակուր մը : Ինչո՞ւ համար ասանկ կ'ընէս ինձի , ըսաց աքաղաղը . ամէնեւին չեմ յիշեր թէ քեզի օր մը գէշութիւն ըրած եմ որ արժանի ըլլամ ասանկ սպաննուելու քու ձեռքէդ : Պատասխան տուաւ կատուն հանգիստ ձայնով մը . Թէ որ օրինաւոր բան մը չի գտնեմ քեզմէ տրտնջալու , և չի պատժեմ քուկին գողութիւներդ որ տեսած եմ , պարտական կը մնամ Այ առջին , ո՞վ անօրէն դուն չե՞ս որ ամէն օր կ'երթաս տիրոջդ արտին մէջ կը պտըտիս , որ ցանած ցորենն ուտես . մտհոլ արժանի ես գուն ըսելով , խղճեց կերաւ :

Զրեղո-Յի ընդէ Ռա Տէի առաք պատճառ հեղե Գանէ որ ըրած Բանը արդար երեւայ . և որով աղաւանդ ընէս , սիրալ չի կալուար . Էն չի Բայն իւրանայ որ ուրիշը չիկելով իրեն շահ հանէ , չէ Բէ Եանդանիւր Գանէ :

Այսպէս և զըկողք զինքեանս համարին  
 Արդար դատաւոր լինել անանկին .  
 Սուտ պատճառանօք խաբեն ըզմարդիկ,  
 Սակայն չիք խաբել յանխաբ ատենին :  
 Ո՞ր յայնժամ երկար պատմութիւնք բանին,  
 Եւ նրբին պատճառ փաստփաստաբանին .  
 Անդ ճշմարտութին անցեալ 'ի բեմին՝  
 Պահանջէ համար գործոց զըկողին :



## ՀԱՒ ԵՒ ԱՐՏԱՎԱՐ

Գործ խոհական հասուն մտաց,  
 Զփոքրն ընտրէ յերկուց չարեաց :

Բարի ծնող՝ զանին սիրուն ,  
 Գերի 'բլան օգտուն երուն :

Հիմ. Հաւ մընոր հանած ձագերը կ'առնէ  
 կը տանի արտերուն մէջ , և իր տեղէն շատ  
 կը հեռանայ . երբոր անհոգ կը պտըտէր , ա-  
 հա բազէն հոն երեցաւ , և մէկէն պատորաս-  
 տուեցաւ որ ինջնի ձագերուն վրայ : Ան ա-  
 տենը հաւն ինչ որ կրնար ընել ըրաւ որ ա-  
 զատէ ձագերը . մինչև փախաւ ազատեցաւ  
 մէկ ապահով գոց տեղ մը որ մօտ էր , և հոն  
 գտաւ մէկ վանդակ (խաֆէս) մը , մտաւ ձա-  
 գերոյն անոր տակը պահուեցաւ : Իսկ երկ-  
 րագործը տեսնելով զայն՝ շուտ մը վազեց  
 բռնեց հաւը ձագերոյն առաւ տարաւ : Բայց  
 հաւին միտիթարութին այն էր որ գոնէ ձա-

գերս ազատեցի կ'ըսէր անողորմ թշնամւոյն  
ճանկէն :

Ինչպէս որ հաւել առաւել իմեցաւ Գեղի ըն-  
լաւ քան թէ յագեցը Բաղէին յետոյ յգել, ա-  
ստի աւթնող արեւի է իրենց զաւիճերն անանի  
նային որ թշնամոյն եւ շար ընկերներուն յետոյ  
լինին լիորսութիւն շարաւար :

Այս օրինակ է խոհեմ ծնողին

Որ պահէ զորդիս 'ի ձեռաց չարին .

Յանձն առնու գերի լինել օտարին ,

Զի մի այն անմեղք մահու մատնեացին :

Եղով ծնողաց որ անհոգ նստին ,

Մանկունք մատնեալ կանառ չար ընկերին

Զորս 'ի խոր խոցեալ զանազան ախտին ,

Կերակուր առնէ անյագ գազանին :

## ԿԱՊԻԿ ԵՒ ԹՈՒԹԱԿ

Որչափ ճարպիկ խաբողն իցէ ,

Սուան անդէն զինքն յայտնի առնէ :

Ճրագ եւ մոմ վարպէսորդուն ,

Հաղիւ է'երեւայ մինչ իրիկուն :

հօ . ( ) ր մը կապիկն ու թուծակը մտա-  
ծեցին որ բանական ըլլան , և խեղճերնին  
դրին որ զիրենք մարդ ձևացընեն : Կապիկը

կարծէր թէ մարդու լաթ որ հագնի՝ մարդ  
կըլլայ, թուժական ալ կարծէր թէ մարդու  
սէս որ խօսի կըլլայ մարդ: Ուստի կապի-  
կը լաթը հագաւ, իսկ թուժական ալ քանի  
մը խօսք սերտեց. յետոյ երկուքը միատեղ ե-  
լան իրենց բունէն գացին բազմութե մէջ  
(Բաղարը) երևցան: Տեսնողը մէկէն կը խա-  
բուէր. բայց որովհետեւ կապիկը բան չէր  
կրնար խօսիլ, և թուժական ալ միշտ մէկ բան  
մը կըսէր, շուտ մը խաբէութիւնը յայտնի ե-  
ղաւ: Եւ այսպէս օրօնք առաջուց իրաւ  
մարդ կարծեցին զանոնք, քիչ ատենէն ետեւ  
ինչ ըլլանին հասկըցան վաւերացին:

Յիմար և իւր մարդը կարծէ թէ հագու-  
ած և մարդու մէջ հանելով երեւի ի՛նչնայ,  
ւէրէ թէ ի՛նչ զարծուածքն ու խօսք մէկէն ինչ  
ըլլաւ ի՛մացնեն:

Խրատէ առակս գոհ լինել յոգին,  
Մի խաբէութիւն մանեւ վեհին.  
Ձոր ինչ ետ բնութի այն է բուն անձին,  
Որ ոչինչ իւրիք փոխի բնաւին:  
Ձի՛նչ շահ ըղգեստութիւն ծածկել զարտաքին,  
Բարեձեւ կեղծիլ ի զարդ օտարին,  
Երբ ներքին նորա անկիրթ իբր անբան,  
Վաղ խայտառակէ զանիմաստ հոգին:

## ԳԱՅԼ ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Յաջողամիտք յանհնարինս՝  
Զեւոս իրաց հեշտ հնարին :

Գիտուն ճարտը երբոր ուզէ ,  
Ամէն Բանին ճար իւր գտնէ :

հգ. Գայլն ու աղուէսը կապիկին առջին  
հակաճառուն կ'ընէին իրարու դէմ : Գայլն  
ամբաստանութի կ'ընէր թէ աղուէսը գող-  
ցեր է իմ կերակուրս : Ան ալ կ'ուրանար թէ  
սուտ է : Իսկ կասկիկն՝ որ կը ճանչնար եր-  
կուսին ալ բնութիւն , մեծ տարակուսան-  
քի մէջ ընկաւ թէ որուն հաւատայ . ուս-  
տի միայն ասանկ ազատեցաւ . երկու կողմն  
ալ շատ հակառակութիւն ընելէն ետեւ ,  
պարտք դրաւ իրենց որ չի խօսին , և ասանկ  
պատուիրեց անոնց . Ո՛վ գայլ , կը պար-  
տաւորեմ քեզ , որ հատուցում ընես . որով  
հետեւ դուն աղուէսէն կը պահանջես զայն  
որ քեզմէ բան մը չէ առած . և դուն ալ ո՛վ  
աղուէս պէտք է որ հատուցում ընես . վն-  
դի կ'ուրանաս պարտքդ գայլին որ գող-  
ցեր էս :

Անիւշտ էն անսոս . որ գիտունիւն Բանի փեշ  
էի Գիւշտիւնն աշխարհի զաւկներնուն Բան սոր .

վէրցնէւր . Էս զի գիտուն ճարդը ամեն Բանին  
ճամբան Գանէւր զանօթի լի Գար, և ամենուն  
առջին յարգութի ունի : Իմաստութիւն և նմա-  
նութիւն ա, կ'ըսէ Իմաստուն Տը :

Այս իմաստնոց է և ոչ անգիտին

Գտանեւ Հնարս յանհնար դատին .

Զի երբ խորամանկք ընդ միմեանց վիճին ,

Գործ է գտանեւ անշուշտ ըզմիջին :

Ահա աստ յայանի միտք հանճարեղին ,

Որ շահի զսիրտ վիճողաց կրկին .

Ուսիր ընդ գիտնոց նստիլ կենակցել ,

Հանճարոյ նոցին բաժանորդ լինել :

## ԱՂՈՒԻՍ ԵՒ ՄՈՐԵՆՈՒ

Է ազգային օրէնք բնական

Պատուել ըզհիւր զօտարական :

Մարդիւնք Դէմ շաք Գէլ Բան է ,

Որ հիւր օգար լի ձեծարէ :

Հէ . Ս'էկ մարդ մը աղուեսին ետեւէն ըն-  
կաւ որաւու համար , ան ալ փախաւ գնաց  
մորմենիին մէջ մտաւ սլահուեցաւ , որաւէս  
ղի կարենայ աներևոյթ ըլլալ հալածողին  
տեսութեն . բայց նայեցաւ որ մորմենիին  
փշերը վրան գլուխը պատուեր են՝ ըսաց  
ինքիրեն . այս ինչ անխեղբուցի է իմին  
ըրածս որ այս անզգամին ապաւինեցայ .



Հէ. Աղուէս և Մորենի: Հ՞. Մարդ և Կուռք:



Ճ. Ուրուր և Նուսին: Ճէ. Հերմէս և փայտաճառ:



Ճէ. Կրիայ և Արծիւ: Հ՞. Գորտ և Աղուէս:





ոհ այնչափ արիւն թափեցի հոս որ չէր  
կրնար որսորդն այնչափ հանել ինձմէ :

Մ'ըմէին օրինակ է անպատճառ Դարձիանց որ  
օբարտանիւն լին ուղեր պատիւ ընել . Բայց ամեն  
ապագայ մէջ օրէնք է պատուել հիւրը (միւսաֆի-  
րը) , և յետո՛ւն էլ արժ օգնութիւն ընել :

Իմաստ առակիս խրատէ զնոսին ,  
Պատուել զհիւր օտար լի բերման առթին .  
Քանզի իրաւունք օրէնք ազգային  
Զայս ուսուցանեն ամենայն ազլին :  
Զի՞նչ շահ ընդ յարկաւ լինել ընկերին  
Եւ պատասպարիլ 'ի ձեռաց դայլին .  
Յորժամ տանուտէրն դառնացել յանձին ,  
Մերժէ հալածէ նման գազանին :

### ՄԱՐԴ ԵՒ ԿՈՒՌԻՔ

Զայնես մաղթես հիմ զանզգայն ,  
Զի լսելիս չունի յինքեան :

Խաբասրաբի խօսք լի Դպի ,  
Ինչ որ ըսէս ասի իւր Կրի :

հի. Սէկ մարդ մը չէր հեռանար կուռ-  
քին առջևէն , և միշտ կը շողոքորթէր կ'աղա-  
չէր ու կ'աղօթէր . օր մը խուսկ կը ծխէր ,  
օր մը զոհ կ'ընէր անոր համար որ կուռքը

իրենն ոսկի և գանձ տայ . բայց փուճ տեղը  
կաշխատէր , վն զի կուռքն անանկ խլացեր  
էր որ ստակ մը չի տուաւ խեղճին : Ուստի  
մարդը հարստանալու տեղը՝ աղքատացաւ :  
Բայց և այնպէս ետ չի կեցաւ , ալ աւելի  
սկսաւ աղօթք ընել և պաշտօն մատուցանել  
կուռքին . բայց բան մը չի հասաւ ձեռքը :  
Ժամանակ մը շարունակեց այս բաներն ը-  
նելու , սակայն պարապ ելաւ : Աւերջապէս  
համբերութիւնը հասաւ , որ մը յուսահա-  
տելով առաւ կացինը զարկաւ կուռքը կտոր  
կտոր ըրաւ . մէյմնալ տեսաւ որ կուռքին  
մէջէն ոսկիի կտորուանք թափեցան . ո՛հ ո՛հ  
կ'ըսէր ժողվելով ի՛նչ է այս , այս ի՛նչ  
պէս բան է . ուրախութէն խեղքը գլխէն  
գնաց : Ահա՛ կ'ըսէր , իրաւի մէկ անճոռնի  
ած մը . ես կրնայի՞ հաւատալ թէ աւելի  
պիտի վաստըկիմ եղեր զայն ծեծելովս քան  
թէ աղաչելովս :

Խափասիրտ անգոռն մարդ աղաչանքով չի  
խնդնար այլ Բանոռնի . ինչպէս արծաթաւէր մար-  
դը ոսիկն անանկ սրբին մէջ իւր խօլէ , որ մար-  
դոռն օգնոռնի մը լընէր . բայց մահառան Բանոռնի  
այնպէս ի՛նչէ որ յիւրոջան ի՛լլան պահած ոս-  
կիներէ :

Տէս զիարդ ձայնէ անլուր արձանին ,  
Ում լսել ոչ ետ մատն քանդակողին .  
Միայն ի պատիւ եդ ի լանջս ոսկին ,  
Չոր և տալ չունի թէ ոչ փշրեսցին :  
Այս օրինակ է անդուծ ադահին ,  
Որ ամուր փակէ զոսկիս ի սրտին .

Բանք ողորանաց ոչ ազդէ նմին,  
Արկածիւք ևւթ հանէ զայն ոսկին:



## ՄԱՐԴԻ ԵՒ ԵՐԿՈՒ ԿԱՆԱՅԻ

Վայ որ մատնէ զինքն կանանց,  
Հանեն յիւրմէ խելս ընդ հերաց:


Թէ ո՛ր ըստէ՛ւ կնիպոց մասնէս,  
Խելսէ մասնէ շատով կ'ելլէս:

Հէ. | Արիկմարդ մը սկըսեր էր հալւորնալ,  
և կը նայէր որ հաճոյ ըլլայ իրեն երկու սի-  
րելի կնիկներուն որոնց մէկը պզտիկ էր ու  
տարիքը քիչ, իսկ մէկալը տարիքն առած  
տեսքն ալ գացած էր: Ասոնք կ'ախորժէին  
որ երկնին իրենց յարմարցընեն. և երկուսն  
ալ իրենց ախորժակին հետևելով մեծ հոգ  
ունէին որ փոփոխ սանտրեն անոր գլուխը:  
Բայց մարդուն բանը շատ գէշ եղաւ. վն  
զի պզտի կնիկը երբոր անոր գլխուն վրայ կը  
տեսներ ծերութիւն նշան ճերմակ մազ, բար-  
կանալով կը փեթտէր որչափ որ գտներ:  
Մէկալ կնիկն ալ երբոր կը տեսներ սև մազ  
բոլորը կը փեթտէր: Եւ այսպէս քիչ ժա-  
մանակի մէջ մարդուն գլուխն եղաւ կըն-  
տակ (փաւ):

Արեւոտեւ իւրիւրեան կ'ըսէր թէ մէկ լաւ  
իկն հը Կարոյ է խելացիներն ալ Կարոյցնէն:

հապա երկուսը իրենց մէջ ո՞ր շէնքն էին իւր-  
նաւր ընել. անոր համար Ձօրաբաժնէ վիճաբա-  
նումն ըրաւ թէ ինչիկէն զօրաւոր բան չի կայ  
աշխարհիս մէջ :

Ո՛վ քանի՜ ապուշ մեղկ կնամարդին ,  
Մատնեալ կայ՝ի ձեռս վատ կանանց կրկին .  
Չգի ընդ տոռամբ ուր նոքա կամին ,  
Թափեալ 'ի խելաց զերթ խելագարին :  
Ուսիր արթուն կալ 'ի վերայ անձին ,  
Չմանիլ 'ի ձեռս քաղցր յուշկապարկին .  
Ոյր այնչափ է կար շրթանց և լեզուին ,  
Յաղթէ իմաստնոց արքայից բազկին :



### ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴՈՒԲ

Քան բերդ ամուր զինչ հաստատուն ,  
Բայց միաբան եղբայրութիւն :

Ուրա՛ծ էղբարք միաբան նն ,  
Ամեն բանի մէջ ի՞նչ յաղթեն :

ՀԵ՛. Սէկ տան մը ծէր շատ որդիք ունէր .  
Երբոր հասաւ վերջին ծերութիւն և տեսաւ  
Թէ մօտ է վախճանին , կանչեց քովը բոլոր  
որդիքը . նայեցաւ որ ամմէնքը քովն են ժող-  
ված , բերել առաւ մանար ցուպեր (շող-  
նէր) , և բոլորը մէկտեղ կապեց ու տուաւ  
մեծ որդւոյն և հրամեց որ կոտրէ : Ան ալ  
յանձն առաւ . բայց որչափ որ ջանաց՝  
և շատ անգամ ուժ տուաւ որ կոտրէ՝ չի

կրցաւ կոտորել : Ապա տուաւ զայն երկ-  
րորդին . ան ալ տուաւ երրորդին . ոչ մէկը  
ոչ մէկալը կրցան կոտորել զայն կապոցը :  
Ասանկ որ եղաւ՝ ծերն առաւ զայն կապը  
քակեց ու զատեց , ամմէն մէկին մէյմէկ  
հատ տուաւ , և հրամայեց որ երկրորդ ան-  
գամ փորձեն ու կոտորեն . բայց անոնք ա-  
ռանց դժուարութե մէկէն բոլորը կոտորե-  
ցին : Ան ատենը դարձաւ ծերն ըսաց . Ո՛ր-  
դեակ , երբոր ես այս աշխարհքէս ելլամ՝ ա-  
սանկ պիտի ըլլայ ձեզի . որչափ որ դուք  
ամէնքնիդ միաբան մնաք՝ այնպէս զօրաւոր  
կ'ըլլաք որ մէկը չի կրնար զձեզ շարժել .  
բայց անմիաբան եղածնուդ պէս՝ անանկ  
պիտի տկարանաք որ պզտի փորձանք մը  
ձեզ կրնայ կործանել :

Ո՛րչափ Լափաւորութիւնէր կան աշխարհքիս  
մէջ՝ որ Ռաբանութիւն էր , և անՌաբանութիւն  
էր կործանիւն : Հայոց Լափաւորութիւն մէջ քանի  
որ Ռաբանութիւն կար՝ այնչափ մեծոյս ու աշխարհքի  
սիրէր . բայց անՌաբանութիւն ծամանալի մէջ  
ունկայ :

Զի՞նչ հաստատութիւն գոյ երկրի երկնից

Որ քակել զօրէ զկապ միաբանից .

Զի երբ միաբան եղբարք դռանին ,

Դիմագրեն ուժոյ բոլոր աշխարհին :

Յէր վերայ կանգնի դունս տիեզերին ,

Բայց ի միաբան տարերց չորեքկին .

Ի քակիլ սոցս՝ քակի և աշխարհ ,

Ի քակիլ եղբարց՝ քակի տուն տեղին :

## ՀՈՎԻՒՄՍԻՍՈՍ

Ձեռք զբօսանք ստախօսին  
Երբ հաւատայ ոչ դք նմին :

Ան է շատաւ սոսախօսողին ,  
Որ ճարտ շատաւ էրէն խօսփին :


ՀԹ. Հովիւ մը իրեն զբօսանք էր ըրած  
որ ատեն ատեն կը պօռար գայլին գէմ, թէ  
պէտք բան մը չէր տեսներ : Այս ձայնը երբոր  
կ'առնէին գրացիները կը վազէին կուգային :  
Իսկ հովիւը շնորհակալ ըլլալով անոնց աչ-  
խատանքին համար՝ կը խնդար զուարճանա-  
լով, և շատ անգամ այսպէս ընելով կը խա-  
ղար : Սակայն եղաւ որ օր մը իրաւ եկաւ  
գայլը մտաւ ոչխարներուն մէջ . սկսաւ կան-  
չել պօռալ հովիւը որչափ որ ձայն և ուժ  
ունէր . բայց որչափ իրեն օգնութի կանչեց  
պարտաւ ելաւ . վն դի գրացիները կարծե-  
լով թէ սուտ կը պօռայ չուղեցին երթալ  
անոր օգնութի ընելու : Ուստի յաջողեցաւ  
գայլին որ բոլոր ոչխարները պատուեց :

Ստախօս ճարտան շահը այն է որ շփաւ  
խօսփին աչ ճարտ շատաւ , և մէկին քով հաւա-  
քարձոմէ շունի . որովհետեւ սոսախօս չէր  
սոսախօսի : Ուստի հին ասիւնը սոսա-  
խօս չէր ընդին լեզուն իւրեկին :



Ահա շահ ստուգող խաբող սուտ լեզուին,  
 Որ 'ի սուտ փոխէ զիսկուծի իրին .  
 Հակառակ գոչով անխաբ ճշմարտին,  
 Անհաւատարիմ լինի բոլորին :

Արդ մի հետեիր դու ստախոսին,  
 Որ զիսկն եղծանէ զիւր ստոյգ բանին .  
 Զի որ միանգամ սովոր է խաբէլ,  
 Բնաւ բանք և գործք անհաւան լինին :



### ՈՒՐՈՒՐ ԵՒ ԼՈՒՍԻՆԵԱԿ


Երգ և նուագ չեն ընդունակ  
 Ի կերակրել զորկոր գատարկ :

Այնքն բանին ապենը իայ,  
 Ապենէ Դո-րս մէջ գէշ կ'ըլլայ :

Ճ. Ուրուրմը շատ անօթի ըլլալով կը բռնէ ճանկին մէջ մէկ լուսինեակ (դիւ-լդիւ-լ) մը : Ո՞վ ուրուր, կ'ըսէր լուսինեակը, իմ կեանքս ինձի բաշխէ, ես քեզի մէկ բան մը երգեմ որ զմայլիս . վնձի իմ ձայնս դուն գիտես որ անքան ալ կը զմայլեցնէ : Պատասխանեց ուրուրը . Ես առանց կարծեաց յօժար սրտով կը լսէի քու ձայնդ, թէ որ չիմանայի ներսէն թէ հիմա աւելի կարօտուծի ունիմ կերակրի քան թէ եղանակի : Զայս ըսելով կերաւ :

Ամէն Բան Ժամանակի ունի, ապէնով եղած Բան  
նը Դէպ Լաւ ի' ՇԼԱՅ : շաք Տարդ Կայ որ Գործի  
ապէն Ժող Բաներոյն Կէպ ՇԼԱՅՈՎ Կարիւստոր Բան  
նէն Եպ ի Շ Ժայ Ե Խեղճ ի' ՇԼԱՅ :

Ուսիր չլինել Թոյլ ՚ի պիտանին,  
Գնալ ՚ի զբօսնուլ յերգս ընդ նուագին.  
Այլ է Ժամանակ վաստակել շահիլ,  
Եւ այլ Ժամանակ խօսել և հրճուիլ :  
Քանիք հեղք ՚ի գործս գնան զմայլին  
Ի լուր քաղցր երգոց ձայնի հռետորին.  
Թողուն լիք դատարկ զերեանց որովայն,  
Լընուն զլսելիս բաղնամբ լոկ օդին :



## ԱՌԻԻԾ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Բնութի շողմոգ նման ձիթոյ  
Յանգ ելանէ յերես ջրոյ :

Կէշտաւորներն եղի նման՝  
Կ'ընեն ի' ՇԼԱՅ երես ի' ՇԼԱՅ :

ձա. Երբոր առիւծ մը Թադաւոր պիտի  
ստակուէր՝ ծանուցումըրաւ ամեն կենդանիներուն թէ սէտք է որ գան իրեն հաւ  
տակուի և ծառայուի ցուցնեն. ուստի ամ  
ձենքն ալ վազեցին եկան ու խոստացան որ  
հնազանդ մնան միշտ : Մինակ աղուէսն ուշա  
ցաւ և ամենէն ետքը երեցաւ առիւծին :  
Իսկ առիւծը երբոր բարկութիւն կը մուրն.

չէր՝ աղուէոր խոնարհ ձայնով մը ըսաց . Տէր  
իմ, ժամանակ չունեցայ երևնալու տէրու-  
թե՛դ առջին . վն զի սէրն՝ որ ունիմ քու  
վրադ մի միայն պատճառ եղաւ իմին ուշա-  
նալուս . որովհետեւ լրածիս պէս թագաւո-  
րելդ վաղեցի գնացի կուռքին հարցընելու  
թէ որչափ պիտի թագաւորես : Իսկ կուռ-  
քը՝ որուն ամմէն օր քեզի համար կ'աղաչէի  
ո՛վ թագաւոր՝ ինձի վկայեց ուրախութիւն  
որ սրտիս մէջ ունէի . վն զի հաստատեց  
թէ առիւծներուն մէջ մէկ թագաւոր մը  
չէ եղած և պիտի չըլլայ անանկ երջանիկ  
և երկան ժամանակ թագաւորութի ընող  
ինչպէս դուն : Եւ ահա այս լուրս ժամ մի  
առաջ տէրութե՛դ ուղեցի հասցընել . բայց  
կուռքին քով ուշանալս թող չի տուաւ ընե-  
լու : Այս անմեղադիր խօսքս անանկ շատ  
հաճելի եղաւ առիւծին , որ չէ թէ միայն  
չի բարկացաւ , այլ և շնորհակալ ևս եղաւ ա-  
նոր աշխատանացը վրայ , և ամենէն աւելի  
սիրով ընդունեց զայն :

Առիւծը օրինակ է անանկ իշխաններուն որ  
երես պաշտոլ իշխածաւոր մարդուն խօսքին աւելի  
իւ հաւատն ու իւ պատուեն՝ քան թէ հաւատարիմ  
Բարեկամին որ անունը չահուն համար կ'աշխա-  
տի . Վասն զի անանկները ամեն բան կ'ընեն , ո-  
չիքն երեսն ալ կ'ենեն :

Զիարդ հեշտալուր ձայն փաղաքշողին  
Ի լուր լսելեաց արքայից վեհին .

Զի յաւէտ նոցա պատիւ յարգութիւն՝  
 Եւ ոչ խնամտնոց տան աւագանին :  
 Այս է գեղեցիկ վերականք նոցին  
 Որ շոգմոգ բանիւ խաբին և հաճին .  
 Եւ զայն ոչ գիտեն թէ բանիւ միայն ,  
 Ի միտքս ծանակ լինին շոգմոգին :



### ՄՐԱՅԻՒՆ ԵՒ ԱՂԱՒԻՆԻ

Բարերարողն զգուզնագոյն ,  
 Գտցէ բարիս ըստ իւր չափուն :

Բարին ըրէ ծովը նեփէ՛ ,  
 Ըռաւ ինձ ինձայ + եւ ինձ Գրեմ :

ձբ. Սէկ մըջիւն մը անզգուշութիւն կ'իյնայ սկզբի գետի մը մէջ . երբոր կը խղզուէր հոն՝ աղաւնի մը կը տեսնէ զայն , և ծառի ճիւղիկ մը կը ձգէ ջրին մէջ որուն վրայ կայնած էր ինքը . և այն կ'ըլլայ մըջիւնին իբր նաւ մը որ ցամաքը հանելով կ'ազատէ զայն : Գամաքն ելլելու ատենը որսորդ մը կը լարէր աղեղն ու աղաւնիին կը նայէր . երբոր սկիտի նետէր զարնէր , մըջիւնը հասկըցաւ իր բարերարին փառս , շուտ մը վազեց եկաւ որսորդին ոտքը խածաւ : Իսկ որսորդը շարժելով ձայն ելաւ , աղաւնին իմացաւ թուաւ : Եւ այսպէս մըջիւնն որ սպարտական էր իր կեանքը աղաւնիին՝ փրկեց զայն փոխադարձ . և այս մի-

ջոցով հատուցում ըրաւ անոր բարերարութեան  
թէ՛ր որ տեսեր էր անկէ :

Օրինակ է խառնարի արդարութիւն , որ մէկը  
իւր աշխարհի ըրաւ մէկաւին , ան ալ անոր զայն  
ըրաւ իրեն մեծութեւն լաճումն նայելով . ինչ  
ամեն գործի՝ ընդին ապիճանէն ինչ լաճումն :  
Ուստի ամեն մարդ պէտք է ըստ իւր լաճումն է  
բախտի ճանչնալով հապուցումն ընել :

Աստ է տեսանել սլատգամ տէրունւոյն ,  
Որ կըշուէ բարիս ըստ արդար չափուն .  
Թէ արար՝ յորմէ չունէր ակն առնուլ ,  
Յաննիազ գանձէն կըշուի չափնորուն :  
Եթէ բաժակաւ ջուր չափես փոքուն ,  
Անդրէն քեզ ջամբին թաթաղուն զեղուն .  
Եթէ նստաստ ինչ առնես կարօտին ,  
Անկարօտ մընաս 'ի վիճակ կըրկին :

### ՄԱՅՐ ԵՒ ԳՈՂ ՈՐԴԻՆ

Որ ոչ զորդւոյն չար գործ սլատժէ ,  
Գարշ ոճրագործ ըզնա առնէ :

Ու իր զաւին աշխի կ'աշխի ,  
Ամեն պատիւ միշտ ինչ շարի :

ձգ. II՝ այր մը իր որդին չէր սլատժէր բնաւ  
պզտիկ գողութե համար որ մանկութեն

սկսաւ ընել, և իրեն սովորութի եղաւ: Ուս-  
 տի որչափ որ հասակն աճեցաւ՝ այս չարութիւն  
 ալ հետը աճեցաւ: Տղայութե ատենը  
 խնձոր մը առաւ, և մէկը չմտածեց զինքը  
 սկսածելու: Երբոր գնաց դպրատուն՝ ընկեր-  
 ներուն գրքերը կը գողնար ու կը տանէր  
 մօրը ցոյց կուտար. իսկ մայրը խնդալէն 'ի  
 զատ ուրիշ բան չէր ընէր: Աւելի որ մեծ-  
 ցաւ՝ սկսաւ դրացիներուն տունը թալ-  
 լել և ծանրագին բաները գողնալ. սա-  
 կայն խրատ մը կամ նախատինք մը չսեց  
 մէկէն: Շատ չանցաւ գէշին գէշն եղաւ,  
 և անանկ չարացաւ որ սկսաւ քաղաքնե-  
 րուն մէջ և մեծ ճամբաներուն վրայ աւա-  
 զակութի ընել. մինչև դատաւորը բռնեց  
 զինքն ու արգարութե դատաստարտեց որ  
 կախուէլով մեռնի: Երբոր վեր պիտի հա-  
 նէին կախաղանէն, աղաչեց քովի եղողնե-  
 րուն որ մայրը բերել տան, ուր է նէ շը-  
 նորհք ընեն գտնեն իրեն համար որ ետքի  
 անգամն ալ տեսնէ: Մայրն որ տեսաւ խնդ-  
 րեց որ իրեն մօտենայ, և ձեռացուց թէ կ'ու-  
 զէ գրկելով բարեւել: Բայց ակռաներովը  
 բռնեց անոր ականջն ու քաշեց փրցուց.  
 յետոյ դարձաւ ժողովրդեան ըսաց. Պա-  
 րօններ, թէ որ այս թշուառականը զիս  
 սկսածէր խրատէր մանկութե ատենը որ-  
 չափ անգամ որ այս չարութիւն կ'ընէի, հիմա  
 ես ասանկ դարձելի մահուամբ չէի մեռնէր.  
 ուրեմն դադարեցէք այլ մի զարմանալը ը-  
 րած բանիս վրայ. վն զի ես մայր չեմ՝ ճանչ-  
 նար ինձի ասիկայ այլ մեծ թշնամի:

Խրատ ըլլայ ծնողաց, որ արարանին մանկութե  
ապենը լաւ նային ու պատժեն երբ որ գեշ քան  
ճշ լինին իւր պեննեն. ինչ որ մօտ իւր նմանին ա  
նոս, քանի որ կանաչ են՝ ինչ որ սորվեցնեա  
լայն կ'ընեն. երբ որ մեծնան անանի իւր ծնուն : Ու  
որ զարնել Խրատել լաւ գործ՝ կ'ապե իւր զաւակը .  
ու որ իւր «իւր» իւր Խրատե, կ'ընէ Սողոմոն :

Ահա դառնաղէտ տեսիլ ահագին,  
Մայրն է դժբընդակ դահիճ զաւակին .  
Պատժի և պատժէ զիւր ծընող որդին,  
Հատուցումն առնէ մահաբեր կաթին :  
Ո՛վ քանի՛ պարտք են խոհեմ ծընողին  
Ուղղել խրատել զիւր անաստ մանկտին .  
Եթէ միանգամ խընայէ նըմին,  
Ողբայ զայն ասպա առ կախաղանին :

### ՃԱՆԾ

Հատակերին կոսող է իւր յագ,  
Ուտէ պայծի մընայ անյագ :

Ծախալտ մարդիկ են ծախի կարաս,  
Որչա՞ր լըցնեն միշտ է պախաս :

ՃԴ. Սէկ առաւել Հատակեր ճանճ մը կը  
մտնէ կերակուր եփելու տեղն ու հոն չափէ  
դուրս ուտելու համար պտուղին մէջ կը  
խըխմուի, և այնչափ շատ կ'ուտէ կը խմէ  
չափազանց որ մինչև ճաթի հոն կը մնայ :



Օրինակ է գինեմուլ և շաքարէր մարդիանց, որ  
 ուրեւել խմելով ինքնութենին կ'ուրեւն, և հոգւով  
 մարմնով իւր իրաւունքն. մանաւանդ երբոր ուրիշին  
 բանը գտնեն ուրեւել լին իշխանար. լին գիտեր  
 լին մարդիային ախորժակիւ իրակի նման է, որւոք շաք  
 արսն՝ այնչափ աւելի իւր բարեգործի մեղքն որ հապնի:

Ապաժոյժ անյագ կիրք շատակերին,  
 Ցանկայ զծով լընուլ յորովայն ճանճին.  
 Որչափ շատ է կերն այնչափ իղձք աճին,  
 Մինչ անյագութեամբ պայթիլ գլխովին:  
 Ուսիր չափ դնել անյագ որկորին,  
 Մի պայթուցաներ զայն 'ի յուտելին.  
 Զի բազումք աստի բարձան 'ի միջոյ,  
 Կերակուր եղեալ որդանց զազրագին:



## ՀԵՐՄԷՍ ԵՒ ՓԱՅՏԱՀԱՏ

Ճշմարտախօսն առ դիւցազանց,  
 Եւ առ մարդկան միշտ գերազանց:

Շէրտի մարդը միշտ իւր շահի,  
 Եւ առնան է սիրելի:

ՃԷ. Փայտկտրող մը կը կորսնցնէ կացինը,  
 և որովհետեւ անով իր հացը կը վաստակէր՝  
 աղքատ մարդն սկսաւ յուսահատելով ա-  
 զաչել հերմէս չածին: Իսկ հերմէս խղճա-  
 լով անոր աղաղակին վրայ՝ կ'երևնայ իրեն ու-  
 մէկ արծըթէ կացին մը ցցնելով կ'ըսէ. «Այս»

չըլայ կորսնցուցած կացինդ : Պատասխա-  
նեց մարդը առանց տարակուսի թէ չէ :  
Դարձեալ անոր ցըցուց իրեն մէկ ոսկիէ  
կացին մը թէ արդեօք այն է : Աս ալ չէ ,  
ըսաց մարդը : Յետոյ ցոյց տուաւ իրեն եր-  
կը թէ կացին մը : Աղաղակեց փայտ կտրողը ,  
թէ Ահա այս է որ կը փնտռեմ , և ասոր  
համար միայն քեզի կ'աղաչէի : Ա՛ռ , ըսաց  
անոր , և քու բարի հաւատքիդ համար ան  
մէկալ երկուսն ալ : Եւ այսպէս ստիպեց  
որ իրենքն ալ առնէ երթայ :

Կռապալաները կ'ըսէին թէ հերթն էր որդի  
Պիտին , և զանազան արուեստներու անձ կ'ը-  
սէին : այս պատճառաւ խոյս կ'որոշէ անոր կ'ա-  
ղաչէր , որ օրինակ է շիպակ և արտաբ խօսողի ,  
ասանկ ճարտը միշտ բարի է գանէ :

Տեսեր զպերճութիւն ճրջմարտասուսին  
Զխաբի խկաբան գտաւ ի բանին ,  
Ոչ եղծանելով զիսկն առ ցանկութեան ,  
Պանծայ և շահի զարծաթն և զոսկին :  
Վայ որ ի շահել զանցաւոր ոսկին ,  
Երդնուն և խառնեն սուսն ընդ ճրմար-  
Որով և խաւար է նոցա բաժին (տին .  
Որդի սրտութեան խաւարասիրին :

# ՄԱՅՐ ԵՒ ՏՂԱՅ ԼԱՅՈՂ

Է վայելուչ ազնիւ ծնողաց  
Ժուժալ ձայնի անմեղ մանկանց :

Մի գէշ զոհեր լացող քաղաք ,  
Որ լար լըփանք լգայ գլխուն :

ձգ. Տղայ մը օրոցքին մէջ սլառ կած անանկ  
կուլար որ մօրը համբերութիւնը հատաւ , և  
սպառնալով ըսաց տղուն , Թէ որ ձայնդ  
չկորես հիմա զքեզ գայլին կուտամ որ ու-  
տէ : Այս խօսքս որ կ'ըսէր՝ դայլն ալ տանը  
սլատուհանին տակէն կ'անցնէր ու կը լսէր  
սպառնալիքը . ուստի մէկէն վազեց ուրա-  
խութիւն դուռն եկաւ որ յափշտակէ տղան  
որուն կը փափաքէր : Բայց չարաչար խա-  
բուեցաւ . վն զի մայրը զայն տեսածին սէս  
չուտ մը կանչեց դրացիները որոնք զէնքով  
եկան օգնութիւն , և գաւազանով երկաթնե-  
րով ծեծելով հալածեցին զգայլը :

Պէտք է որ մէկ մայր մը քոթոնաւով քաղաք  
անէծէր , կամ Բարի-ն-Բէ գէշ խօսք Բերնէն հա-  
նէ , որ լըլլայ Բէ լար պապահմանք մը հանդի-  
պի . վն զի օրհնէնքն ալ շատ կը հասնի ա-  
նէծէնքն ալ , հոգեւոր և մարտնչական ծնողաց : Ա-  
րիւնքաբէլ կ'ըսէ Բէ աշէկոն-Բիւնը ու գէշ-ն-Բիւ  
քաղի՝ Տօրմէն կը ճանչցուի . որովհետեւ որդւոյն  
իւր մայրն է :

Զխորդ վաղ լուեալ կրրից մօրն ըզձայն ,  
 Վազէ մերձ առ գուրս խըլել ըղաղայն .  
 Այս գործ է չարաց որ գրնան շըրջին  
 Դաւել խարդախել ծընունդս ընկերին :  
 Սակայն ազնիւ գութ ծնողականին ,  
 Չըժուժայ մերձիլ առ նա թշնամին .  
 Մերժէ հալածէ անդէն առ նմին ,  
 Զի գան և հարուած են չարաց բաժին :

### ԿՐԻԱՅ ԵՒ ԱՐԾԻՒ

Որչափ հըպարտն 'ի վեր ճախրի ,  
 Այնչափ սաստիկ գահավիժի :

Թէ վեր ելլէ՝ հըպարտանա ,  
 Վերէն կ'իջնի՝ ուրիշ կ'ըլլա :

ԸՃ. Սրիան օրմը աւազին վըայ բարչգալով  
 կ'երթար կ'աղաչէր արծիւին որ զինքը վեր  
 հանէ օդին մէջ . և որչափ կարելի է շատ վեր  
 բարձրացընէ իրեն հետ : Իսկ արծիւը անոր  
 խօսքը չկոտրելու համար առաւ զայն իր ճան-  
 կերուն մէջ , հանեց բարձրացուց ամպերէն  
 վեր . Սիրելի , կ'ըսէր անհանդարտ կրիան ,  
 ես վարն եղած ատենս ամէն կենդանիները  
 զիս կ'անարգէին , բայց հիմա առանց կար-  
 ծեաց նախանձելով ինձի կը նային՝ որ ա-  
 նոնցմէ շատ վեր ելած եմ : Երբոր ասանկ  
 կը պարծենար , արծիւը հոգնեցաւ զայն  
 բռնելու , և ճանկերը բացաւ ձգեց վար :

Ան ատենը հպարտ կրիան ընկաւ շուտ մը  
քարերուն վրայ ցըրէի ցըրէի եղաւ :

Փիւհոտայի Տէ հարցոցին թէ Աճ ինչո՞ւ հա-  
ճար թոյլ իոսպայ լար հպարտ ճարդիկներուն որ  
Քեծնան ու Բաճճրանուն : Ան ալ պատասխանի ար-  
տաւ թէ անոր հաճար որ Բաճճրէն ինչեւեղ լա-  
ճէ իսոր իսոր ըլլան , ինչպէս եղաւ իրիան :

Ահա գաղափար ամպարհաւաճին

Որ պանծայ ընդ ճախր յաճիլ յէթերին .

Ոչ գիտէ թէ այն բարձրագոյն վիճակ

Գուշակէ նրմա կործանումն ուժգին :

Զի բերկրի հպարտն 'ի թռիչ բաղդին ,

Երբ քան զայլս 'ի վեր բարձրանայ յերկին .

Երկիւղ ոչ բերկրանք նմա պատշաճին ,

Զի չար է անկումն գերամբարձ կային :



## ԽԱՉԱՓԱՌ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Բարի ծնողաց առաքինի ,

Լինին որդիք առաքինի :

Զաւակն ինչ որ ծնողէն փեսէ ,

Զոր թէ Բարի սորվի 'րէնէ :

ՃԵ. Խաչափառը կ'ըսէր իր ձագին թէ  
պէտք է որ դուն զքեզ շտկես այդ մեծ պա-  
կասուէդ որ շատ ժամանակէն 'ի վեր քու-

վրադ կը տեսնեմ: Այսին զի կը նայիմ որ  
միշտ ծուռ ծուռ կը գալէս ետևորանց . ինչ  
չո՛ւ համար ուրիշ կենդանիներուն պէս դէպ  
'ի առաջ չէս երթար: Պատասխան տուաւ  
ձագը . Մայրիկ , ես ուրիշ բան չեմ ըներ  
բայց ինչ որ կ'ընես դուն կը տեսնեմ՝ ես ալ  
անանկ կ'ընեմ: Թէ որ կ'ուզէս զիս շտկեմ,  
նախ դուն սկսէ զքեզ շտկել:

Խաւաքառն է (չաղանօզ) որ բնապէս խաբար  
նախ քան ինչ որ օրինակ է անանկ ծնողաց որ ի  
բնէս շփախ ընեն երեւոյ առաջին ունեմքն  
ի՞նչն որ պատահի շփախ երեւոյ . բայց անհը  
նար է թէ պաշտ ծնողաց լար օրինակն քան ինչ  
աշխի՛ ըլլայ . ինչ զի ծնողաց պէս լաւ վարժապետ  
նի իրենց ըլլաւ . թէ որ ծնողք ճի՛շտն պաշտ  
առաջինն ըլլաւ, նախ ինչ թող ընէ առաջին ու  
նի որ ան ալ սորվի:

Այսպէս օրինակ ծնողաց կրկին ,

Ի գիրդ սիրտ մանկանց խոր տպաւորին .

Քանզի օրինակ յաւէտ քան խրատ

Լինի ուսանել 'ի դպրոց ծնողին :

Քանի՞ նախատինք ախտաւոր ծնողաց ,

Երբ կամին զորդիս առնել բարեկեաց .

Ինքեանք զիրկ գողով յառաքինութեանց,

Ուղղել նկրտին ըզնոցին ընթաց :



## ԷՇ ԵՒ ՏԵՐ ԻՒՐ

Չգետտ և զարդ զտրմուղն անզօր  
Չառնեն արի առիւծ հզօր :

Ինչ չափ հագնիւ յորն առիւծին  
Երբ որ վախիտ էլ է ներսին :

Ճ[Թ.] ( ) Էկէշմը առիւծին մօրթը ( փոքր ) կը հագնի ու ջաղացքէն դուրս կ'երլէ , և անտառէ անտառ կ'երթայ անանկ այլակերպ որ ամէն կենդանիները կը վախցընէ . որոնց որ կ'երևնար կը մօմըտային թէ ի՞նչ բանի կը լմանի , ուստի սոսկալի բան մը երևնալով իրենց՝ շուտ մը կը փախչէին դողալով : Վախը հասարակ էր անոնց մէջ , մինչև առիւծներն ալ կը հալածէր : Երբոր ջաղացպանը ( Գէյրօնօն ) կը փնտրուէր էջը , կը հանդիպի անոր՝ ու մէկէնիմէկ հեռուէն կարծէ թէ իրաւ առիւծ է՝ շատ կը վախնայ . բայց մօտէն որ նայեցաւ՝ տեսաւ իշուն ականջներուն ծայրը դուրս ելած , հասկըցաւ անոր խաբէութիւնը : Ան ատենը շիտակ վրան վազեց , և առանց խնայելու լաւ փայտ մը քաշելով խօթեց ջաղացքին մէջ :

Մարտն դեռ է որ առաքինութիւնը իրեն բնութի ընէ սովորութիւն . որչափ որ իշուն վախ



լաւ Բան Տը քէնէն , Բէ որ ջանայ՝ ինքն ալ իրնայ  
 ընել . ինչ Բէ անխելա իշտան պէս հագոսապով  
 թայն քաջ էրեանալ ու քաջութի լուսնեանալ : Փի-  
 լիսոքանէն ընին Բէ ամեն Բան Բարակութի  
 ին Բերի . Տարեւ թայն հասա ըլլաւ ին ի պրի :

Տէս յիմարութի վատ ապիկարին ,  
 Կարծէ ըզգեստութի վէհ լինել յանձին .  
 Այն արտաքին է ոչ յատուկ ներքին ,  
 Մերկանայ լինի որպէս առաջին :  
 Արդ ջանա՛ ունել զարութի վէհին  
 Գրեալ քանդակեալ 'ի սիրտ և յողին .  
 Զի թէ զլանայ բնութիւն զբարին՝  
 Դու ունակութի լցո՛ զթերին :

## ԳՈՐՏ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Եթէ իցես բժիշկ ճարտար ,  
 Արդ արա՛ նախ անձին քո ճար :

Թէ Դուն լիցաքէն քէն լաւ ընել ,  
 Ի՞նչպէս իրնա ուրիշն ընել :

Ղ. Գորտ մը ճանչնալ սկսաւ մէկ քանի  
 բժշկական խոտեր որ բուսած էին իր լճին  
 քովերը : Յետոյ միտքը դրաւ որ կենդանի-  
 ներուն հասկըցնէ թէ սորված է ինքը բու-  
 լոր բժշկութե արուեստը : Երբոր ամմէն դի-  
 ծանուցում կ'ընէր թէ գիտէ բժշկել անոր  
 խալ ամմէն կերպ հիւանդութիւր որչափ ան-

բժշկելի ըլլայ. մէկ աղուէս մը՝ որ գէշ հիւանդութի մ' ունէր, ուղեց անկէ գեղ առնել: Ջայն որ տեսաւ գործը սկսաւ պատմել թէ զարմանալի բժշկութիւններ ըրեր է, որը ըռնացուցեր է, որը աղատեր է, քիչ մնացեր է որ յարութիալ աայ: Երբոր պատմութիւնը լմնցաւ, յորդորեց հիւանդն որ բոլորովին անոր գեղերուն յանձնէ զինքը. Պէտք է որ, կ'ըսէր, քիչ ժամանակին մէջ ըռնտնաս: Իսկ աղուէսը մեծ ուշադրութեամբ կ'ընէր մինչև խօսքը լմնցաւ. յետոյ այս պատասխանը տուաւ ծաղը ընելու կերպով մը. Դուն շատ աղէկ բացատրեցիր, իրաւ որ ըսածներուդ շատին կաւտայի թէ որ չի մտածէի քեզ տեսած ատենս. վասն զի կը տեսնեմ պուկունքներդ գեղնած և կապուտ որ ստոյգ նշան է թէ դուն գէշ տրամադրութեան մէջ հիւանդ ես: Հապա ինչպէս կրնաս զիս բժշկել երբոր չես կրնար դուն զքեզ բժշկել: Ասանկ զուրցելով թողուց գնաց:

Օրինակ է անոնց որ իրենց պախառութեան իւր թողուն, որ իրենց շփեւուն իւր նային. Բայց ծաղը կ'ըլլան ամենուն, որ կ'ըսեն իրենց թէ Բժիշկ Բժշկեալ զանքն + :

Այս տարացոյց է ախտաւոր անձին

Որ զայլոց ըզվէրս բուժել վաստակին .

Եթէ ունիս գեղ զարմանիչ ախտին՝

Դիր զայն ի վերայ քոյդ անբուժ վիրին :

Քանի շաղակրատք նմանեալ սմին

Բանիւ իմաստուն երևել աքնին .

Սակայն գիտնոց է սակաւ բարբառիլ ,  
 Զի միշտ լսի ձայն դատարկ անօթին :



## ՀՈՒՆ ԵՒ ԳԱՒԱԶԱՆ

Թուք անարգանք յերես չարաց  
 Վարդ համարին և զարդ դիմաց :

Որոշ + ու ռ Խաչիւ Լի Խայ ,  
 Զի արեւմտ Ին Խ ԸԱՄ :

ՂԹ. Սատղած շուն մը կը խածնէր բոլոր  
 անցնողները . տէրն որ այսըրած անկարգու-  
 թին իմացաւ՝ ուրիշներուն հասկըցընելու  
 համար մէկ գաւաղան մը կախեց վիզն որ  
 ամմէն տեսնող զգուշանայ անկէ : Իսկ շունը  
 կարծելով թէ այն մէկ պատուի մը նշան է  
 որ վզին վրայ կը տանէր , սկսաւ հպարտա-  
 նալով երթալ ճամբաներէն գլուխը վերցու-  
 ցած , և նախատինքով կը նայէր ուրիշ շնե-  
 րուն : Անոնց մէջէն մէկ շուն մը չի կրցաւ  
 քաշել ասոր անմիտ հպարտութիւն , ըսաց  
 իրեն . Խեղճ յիմար , ի՞նչ էրրած անխելքու-  
 թիդ . անանկ բանի մը վրայ կը պարծենաս՝  
 որ քեզ սէտք է ցածցընել . վն զի վիզդ ան-  
 ցած գաւաղանը չէ նշան քաջութե , այլ  
 նշան քու չարութեանդ :

ԱճԹ Ըտնէցաւ Տարտան Ին Խ Ընէս՝ Իրեն

Պէծումիւն ին սեպէ, և աւելի գեշ ի' ընայ :  
Անոր համար գիտաններ շամեն լարեն վեր ին Դը-  
նէին անամօնը . և աղօթք ի' ընէին ին յի քանի  
ամօնն երէտեն :

Սոյնպէս փառասէրք որչափ նախատին ,  
Զայն շուք և պարծանք վերագրեն անձին .  
Թէ առ չարութեան 'ի ճակատ խարին ,  
Իբրև քաջութեան նշանակ՝ պարծին :  
Զինչ անհամբոյր բարք , զինչ գազանային ,  
Իբրև անպատկառ խածատող ժանտին .  
Քանզի յերեսաց երբ ամօթ մերժի՝  
Ազատ զամենայն առնէ ըստ կամի :



## ՈՒՂՏ ԵՒ ԴԻՈՍ

Այր գանգատող հաշէ մաշի .  
Որչափ խնդրէ միշտ փնտսի :

Տժգոհ մարդը ուշադր ԴԻՈՍ ,  
Այնչափ շատ էրեն ինգայ :

դէ. ( ) Եւրոպայի ( Կէլէ ) կը տրտնջար Դիո-  
սին թէ ինչո՞ւ համար չաճները ցուլին կամ  
եղին եղջիւր տուին , ու ինձի մինակ ականջ  
տուին . Կ'երևնայ թէ , կ'ըսէր տրտնջողը , եղ-  
ջիւրներն ինձի այն կենդանիէն շատ աւելի  
կը վայլէին , և եթէ անոնք գլխուս վրայ բու-  
սած ըլլային՝ շատ աղուոր պիտի երևնայի  
որ ինձի կրնային ծառայելու թէ զարդա-



ՀԷ. Ռուս և Դիոս: ՀԸ. Սիրամարդ և Կռուկներ:



Տ. Եղևին և Մորենի: ՏԹ. Չկնորս և Չուկն փոքր:



ՏՐ. Արծիւ և Բզեզ: ՏՇ. Ագռաւ ծառաւի:



րանքի և թէ պաշտպանութեան համար :  
 Տրտունջն որ լմնցաւ , կարծեց թէ Դիոս  
 պիտի նայի իրեն խօսքին , բայց հակառակն  
 եղաւ , վասն զի բարկանալով անոր անխելք  
 Կանգատանացը վրայ՝ չէ թէ միայն եղջիւր  
 չի տուաւ որ խնդրեց , այլ և ականջներն ալ  
 մանտրըցուց :

Տժգոհ մարտը որւո՞ր մեծաւթիւն ունէնայ՝  
 Բռն յը իւր գրեմէ քրքնջաւո՞ւ . Բայց պէտք է ա՛մ  
 մէն մարտ իրեն ունեցածին վրայ գոհ ըլլաւ , և  
 Աստուծոյ Գառնի Կառնի լուսնայ Բէն ա՛յ Բարի-ԲԷՐ  
 ունեցածն ալ ի՞նչ ընդունէ :

Շատք ըլլաւ նման տրտնջան թէ հիմ  
 Ոչ առնէ Ա՞ճ զայս ինչ զոր կամիմ .  
 Չգիտեն ըզկարգ ամենիմաստին  
 Որ չափով կշռէ զչափ բոլորին :  
 Զի՛քեզ , ո՞վ յիմար , զի՛ ձայնես ուժգին ,  
 Կամիս փոփոխել զկանոն անբաւին .  
 Դու կաւ ես անարգ և որդն չնչին ,  
 Իսկ նա անաւսիչ զեղեւոյց բարին :



## ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՔ

Որ ոչ կշռէ զվախճան իրին ,  
Իւր փնասիւք փորձի յանձին :

ԱՄէն Բանի Տէջ Քի Տփնէր ,  
Առաջ նայէ իշնան ընէր :

դք. Մէկ մոռշտակ կարող մը կը փնտրուէր  
արջու մորթ ( Կէրէ ) . Մի աշխատիր , ըսին ի-  
րեն երկու գրացիները , մենք հիմա կ'երթանք  
հոս մօտ անտառը կը զարնենք մեծ արջ մը  
կը բերենք : Ասանկ խօսելով ծախեցին ար-  
ջուն մորթն ու պարտական եղան որ անոր  
ձեռքը տան : Ուստի ելան գնացին անտառ .  
բայց ներս մտածնուն պէս՝ մէկ մեծ արջ  
մը ելաւ իր բունէն վազեց շիտակ ասոնց  
վրայ . այս երկու կարիճները մոռցան իրենց  
ըրած առողտուրը , և ուրիշ բան չի մտածե-  
ցին միայն թէ ազատին . մէկը փաթառուե-  
ցաւ ծառն ելաւ , մէկայն որ գիտէր թէ արջը  
մեռած մարմինին չի մօտիր՝ ընկաւ գետինն  
ու շունք բռնեց մեռելի պէս եղաւ : Արջն  
որ եկաւ տեսաւ զայն գետինը փռուած ,  
հոտուրտալով ասդին անդին դարձուց , և  
մեռածի տեղ դնելով ձգեց դնաց : Երբոր  
հեռացաւ մէկաւ ընկերը ծառէն ինջաւ ե-  
կաւ ընկերոջը հարցուց թէ Արջն ի՞նչ ը-  
սաւ անկանջդ 'ի վար երբոր քովդ էր մօ-  
տեցեր : Ան ալ կիսամեռ պատասխան որ-

ւաւ, թէ ըսաց որ ամենեին չի ծախէք ար-  
ջուն մորթը մինչև որ գետնին վրայ ձգած  
ջուլայ:

Պէտք է ամեն Բանին Վերջը հաածել և ա-  
նանի ընել. շատ թէ պատահում է ետքը չի  
հաածելով խելսին էլածն ընել Բեռնում, որ  
շատ հարգի վշտացեր էն:

Այս գործ անխոհեմ վաճառականաց  
Որ գին հատանեն անծանօթ իրաց .  
Ի զի նկրտին զրկել օտարաց,  
Բայց ինքեանք զրկին արաքոյ մտաց :  
Զխորդ վայելուչ ընկերականաց,  
Հաւատարիմ գող խոհեմ 'ի գնացս .  
Զամենայն արարս արդար կշռելով,  
Հահին միշտ գովին յազանց և յազգաց :



ԱՆՕԹ ԵՐԿԱԹԻ ԵՒ ԱՆՕԹ  
ԽԵՑԵՂԷՆ

Որ ոչ է գոհ ընդ իւր վիճակ ,  
Զինքն արկանէ 'ի մեծ վտանգ :

Ու որ գոհ է եւ վիճակին ,  
Ըստ էւ Բերեւ լաւ եւ գլխին :

դդ. ( ) ր մը երկրթէ ամանը հողէ ամա-  
նին ըսաց թէ Եղբայր մենք խոհարանին  
(աւելիին) մէկ կողմէն 'ի զատ ուրիշ բան չպի-  
տի՞ տեսներք , ով որ բան չէ տեսած՝ բան  
չիտէ սրտամեղ , նաև կ'ըսուի թէ ճամբոր-  
դութիւն միտք կը բանայ : Ես կը փափաքեմ  
որ քաղաք տեսնեմ , թէ որ դուն ալ ունիս  
այս հեռաքրքրութիւն՝ միատեղ ճամբորդուի  
ընենք : Կը տեսնեմ այն ջուրը որ վարէն  
կ'անցնի , սէտք է որ մէջը մտնենք , յետոյ  
թող կուտանք զմեզ ջրին որ վազելով տա-  
նի , և այս կերպովս խիստ քիչ Ժամանակին  
մէջ շատ ճամբայ կրնանք ընել . և այն՝ ա-  
ռանց աշխատանքի ինչպէս կը տեսնես : Հո-  
ղէ ամանը շատ հաւնելով այս հնարքիս ե-  
լաւ անկէ երկրթէ ամանին հետ մտաւ ջրին  
մէջ , անոր ետեւէն կ'երթար , բայց չի կրցաւ  
շատ հեռուն երթալ , վասն զի երսուն օտք  
անդին չի դացած կտոր կտոր եղաւ : Իսկ  
երկրթէ ամանն ալ երբեմն աջ գին , երբեմն

ձախ գին ալէկոծելով միշտ քարէ 'ի քար կը  
ղարնուէր :

Փոփոխութիւն մարդու մէջ բանը ինչ Բողոք մէկաւ  
կ'ընէ, մէկ քեղէն մէկաւ քեղ կ'երթայ, Բայց ինչ  
որ ընէ՝ չի կրնար : Մեկը հարցաւ՝ ի՞նչ քեզի  
մէջ Բէ Ըստ քեզ քաւեցի՝ ինչո՞ւ համար բան մը  
չկարգիւցայ : Ան ալ պատասխան արեւմտ Բէ  
Դոնան ղտեղ հեպտ պարագընելու՝ համար այդպէս  
մնացիւ :

Դժնդակ բերմունք փոփոխամըտին ,  
Որ աստանդական ցանգ տարուբերին .  
Ի դիտել բազում՝ մոլորեալ շրջին ,  
Յօտարուծեան անդ մաշին կորնչին :

Քանզի Արարիչն էից բնաւին  
Ետ զանազան դործս իմ անցնիւր յատկին .  
Որ տժգոհ լինի ընդ իւր վիճակին ,  
Անվիճակ եղեալ քանդի իւրովին :



## ՄԿՈՒՆՔ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒՆ

Ժողով վատաց որչափ խորհի ,  
Ոչինչ բարի վճռել ունի :

Վախիկա մարդիկ խոր ինչ ինչէն ,  
Բայց լաւ բան մը ընել չի գտնէ :

դէ . Սկները խորհուրդ կ'ընեն , պիտի  
որոշեն թէ ինչպէս կրնան ազատիլ կա-

տուին ճանկէն որ գրեթէ իրենց ազգին իրեք մասին երկուսը ջարդեր էր . երբոր ամեն մէկը կը մոմըտար իր կողմանէ , մէկ աւելի ծեր մը իրենց մէջէն վեր ելաւ , ծանր ձայնով մը խօսեցաւ . Ես կարծեմ թէ , կ'ըսէր , պէտք է այս անդգամ գաղանին վիզը բոժոժ (լենիւրդա) կախել , որ քովերնիս չի մօտեցած բոժոժը կ'իմացընէ մեզի շատ հեռուէն անոր գալը , և այս միջոցով ամեն ատեն կրնանք փախչիլ . դուք ալ կը հասկընաք լաւ որ մեզի շատ դիւրին կ'ըլլայ այս ճամբով զմեզ պաշտպանելու անոր ամեն խաբէութենէն : Ուստի բոլոր ժողովքը շատ գովեցին այս խորհրդին օգուտը , բայց դժուարութիւնը քնաց մէկ մուկ մը գտնելու որ կարենայ համարձակիլ և բոժոժը կախել կատուին վզէն , վն զի ամենքն ալ հրաժարեցան . մէկը կ'ըսէր թաթս վիրաւորած է , մէկալը՝ աչքս հեռուէն չի զօրէր . մէկն ալ ըսաց թէ ես շատ սրտոտ չեմ . մէկ ուրիշին ալ ըսաց , թէ չիտեմ ինչպէս ընելու է : Ուստի ամենքն ալ զանազան պատճառներ առաջ բերին . անանկ որ առանց բան մը որոշելու բաժնուեցան գացին :

Տէր և անշահ հարգիլ՝ որչափ շատ ըլլան և շատ հաւածեն՝ մէկ լաւ բան մը լինի իրենց սահմանէն . Ժամն ղի ինչ որ հաւածեն լինի իրենց գլխի փանիւ , անիստար ինչ լուրսն :

Առաջ է տխար ժողովոց վատաց ,  
Որք նստին վճռել շահ հասարակաց .

Բայց զեւրդ հնար այնց ժողովակաց,  
 Խորհել կատարել զօգտակարն ինքեանց :  
 Զինչ օգուտ Խորհել բազմատանջ մտաց,  
 Եւ թողուլ անգործ զպիտանին Խորհած .  
 Որ ոչ աշխատի յօգուտ ընկերաց,  
 Ոչինչ վճարէ զիրկ յօգտակարաց :

### ՅՈՒԼ ԵՒ ՆՈՒԱԶ

Որ փակէ զգուժն ընդդէմ եղբօր ,  
 Ոչ գտանէ զբարիս բոլոր :

Թէ լէս գլխի իւրօք էղբօր ,  
 Ո՛ւր + էւ գլխի իւրճո-ւնէր օր :

զի. Լուիւծը մէկ ցուլի մը ետեէն կ'իյնի .  
 Իսկ ցուլն անկէ ազատելու համար ուզեց  
 փախչիլ նոխազին գոմը կամ օխոռը . բայց  
 նոխազը դուռը գոցեց , ու յանդգնութիւն  
 եղջիւրներն ալ ցըցուց անոր : Ետ քաշուե-  
 լով ըսաց ցուլը . Անզգամ թէ որ դուն չի  
 տեսնէիր զիս հալածողը՝ շատ պիտի զգու-  
 շանայիր զիս այսպէս վաւերացուի : Գիտնաս  
 որ եթէ չի կրնամ հիմա քու կամօքդ տունդ  
 մտնել՝ բռնութիւն ալ կ'ըմտնեմ . թէ որ ա-  
 տեն ունենայի , քեզի կը սորվեցընէի :

Յո-ւն է (պուղայ) , և նոխազն է ալոս այծ  
 ու օրինակ է խաբարիքս անօգուտ մարդոս ու

Յիսիս շահ Տէ ԼԵՆԵԼԷՆ 'ի զտա' շխաա աւ փաւ Ի'աւ  
 Ղէ, Բէպէպ յեռոյն աւ Բառն Լի Գառ :

Տիպ է այս առակ անողորմ անձին  
 Որ փակէ զգոռն ընդդէմ ընկերին .  
 Փոխան նպաստել փախստականին՝  
 Եղջիւր դառնութեամբ ամբառնայ նմին :  
 Ուսիր օգնական լինել տընանկին ,  
 Մի դառնար ընդդէմ վշտաւետ սրտին .  
 Զի որ ողորմի՝ ողորմին նմին ,  
 Պարտաւոր առնէ զվարձողն երկնային :



### ԴԻՈՍ ԵՒ ԿԵՆԴԱՆԻԲ

Ջանամբ զայլոց թերին ուղղել ,  
 Ի սեպհականն ոչ նշմարել :

Այլոց Գործոց շփել Ի'աւդէն ,  
 Մեքինէր Դորս Ին Եկեղէն :

Ղէ. ( ) Երմը Դիոսըսաց թէ բոլոր կենդա-  
 նիները թող ժողովրդին առջիս , վս զի կ'ու-  
 ղեմ հասկընալ իրենց տրտուհն ու սպա-  
 սութիւն , և ինչ սպաւասութիւն որ ունենան՝  
 կը լեցընեմ : Անոնք ալ հնազանդելով եկան  
 առջին. բայց Դիոս կարծեց թէ շատ գանգը  
 տող պիտի գտնէ անոնց մէջէն . փիլը պիտի  
 գանգաթի սոցին համար , ուղորդ աւանջին  
 համար , մանաւանդ արջը՝ իր անշնորհ  
 կազմուածքին համար : Բայց մեծ զարմանքն



այն եղաւ, երբոր տեսաւ թէ ամէնքն ալ  
այնչափ հաճոյ էին իրենց վրայ՝ մինչև սըր-  
տերնին ալ սըխմուեցաւ, թէ ինչո՞ւ Դիոս  
իրենց վրայ ասանկ կարծիք գացեր է։ Սա-  
կայն լաւ կրցան իրարու սրակասութիւնը  
գտնել, թէ անոր պէտք է բան եւեցընել,  
մէկալէն պէտք է բան սրակսեցընել։ Իսկ  
ամէն մէկը մասնաւորապէս իրենց կողմանէ  
անանկ գոհ կեցան, որ շտկելու բան մը չի  
գտաւ Դիոս։ Վապիկն ալ հպարտութեւ շը-  
նորհակալ եղաւ Դիոսին. և զինքն այնպէս  
գեղեցիկ դրաւ, որ չի կրնար ըլլալ։

Միշտ ուրիշ պատահելիք ինքեան, և  
զիս պատրաստ երեւնէ. խիստ լաւ ինքեան  
ուրիշն ըրածը. ինչպէս ի՞նչ էն. Դիոսն լաւ  
պէսներ. Բայց երանի ինչ նայելին. Դիոսն լաւ  
էն ինչ ուրիշն։

Այս գանգատանաց տեսիլ է ուամկին,  
որ տո՛գոհութեամբ վշտանան յանձին.  
Բայց իբրեւ խնդրես թէ յի՞նչ սրակասին,  
Բերեն զընկերաց ոչ զիւրեանց թերին։  
Զի՞քեզ անխմաստ, զի՞ գոչես ուժգին,  
Զի՞նչ սրակաս ի՞քեզ և զի՞նչ յընկերին.  
Մեկին նշմօրեալ զայլոց ըզթերին,  
Ուղղես ոչ զքոյս, միայն ըզնոցին։



## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Թող գովեսցեն օտարք համայն

Զքոյդ պերճութիւն՝ մի քո բերան :

Քո բերանը + եւ լի գովէ ,

Թող արիւն + եւ մեծցնէ :

դէ. Սիրամարգը մէկ օր մը առատապէս կը պատուէ զկռուակը . երբոր պատուական կերակուրները կը տաքնային , ինքն սկսաւ խօսիլ թէ ի՞նչ բանով կը զանազանի ուրիշ թռչուններէն : Յետոյ ուզեց հասկըցընել այս բարեկամին իր գերազանցութիւն թէ որչափ անկէ վեր է . բացաւ պոչը և ցըցուց անոր բոլոր վրայի գեղեցիկ դուռները : Իսկ կռուակը խոժոռելով անոր ունայնութիւն վրայ ըսաց . Բարեկամ ես կը հաւանիմ քեզի թէ իմ փեսուներս քուկինէդ շատ վար են գեղեցկութիւն . բայց երբոր կը մտածեմ թէ դուն դժուարութիւն կը թռչիս հազիւ տան մը երգիքին վրայ և ես ամպերէն վեր կը բարձրանամ , երգում ըլլայ քեզի որ շատ ուրախութիւն կը մխիթարուիմ :

Սիրամարգը այսինքն (թաւուղ գուշին) օրէնս է հպարտ Ժառանգիւն . Եւ Կարծէ Ըն Իրձէ

վեր յարդ լի իայ . Բայց չգիտէր թէ որիչին  
 քաւ ինչ Բաներ իան որ ինք լռնի :

Այսպէս մոլեգնեալ ինքնասպանծ ոգին ,  
 Գեր 'ի վեր կարծէ զինքն բոլորին .  
 Մինչ զերանուծիւն դնել ինդագին  
 Յառերևոյթ գոյն ցորման արեգին :  
 Զիարդ վաղանցուկ պերճուծիւն նորին՝  
 Ընդ շարժիլ լուսոյ այն աեսիլք փոխին ,  
 Զանա պերճանալ երանգօք ներքին ,  
 Առաքինանալ 'ի թև թեթևին :

### ՎԱԳՐ ԵՒ ԳԱՅԼ

Որչափ յանդուգն իցէ հրղօր ,  
 Ընդդէմ բազմաց մընայ անղօր :

Մի շարահիւր դռն քառ քառ թիւ ,  
 Վախոյիւր թէ այլ ինչէր ունիւ :

դթ. Այդր գաղանը ժողվեց իր մօտաւոր  
 կենդանիները և անոնց գլուխ եղաւ , ու  
 զնաց որսորդներուն դէմ այս մտքով որ  
 նախատանաց վրէժը անոնցմէ հանէ որ ա-  
 մէն օր կ'ընէին իրեն : Երբոր իր զօրքովն ե-  
 րեցաւ անոնց առջին , ըսաց կենդանիներ-  
 րուն . Ո՛վ բարեկամներ ես կ'ուզեմ հոս ձեզ  
 մէ բաժնուիլ ու մինակ թշնամիներուս վը-  
 րայ յարձակիլ , որովհետեւ ես այնչափ զօ-  
 րութի ունիմ որ առանց ձեր օգնականու-

Թէ՛ր կրնամ հալածել թշնամիներս . ուստի զգոյշ կենաք, հոս կեցէք կ'աղաչեմ ետեւս չի գաք : Իսկ գայլը հասկըցուց անոր թէ կ'երթաս բայց կը մնասիս չարաչար, զի մինակ ըլլալովդ որսորդներէն զօրաւոր չես կրնար ըլլալ : Ուստի թէ որ այսպէս միաբան երթանք վրանին յարձակինք՝ դիւրով կրնանք անոնց յաղթել : Այս խորհուրդս բանի տեղ չի դրաւ վագրը . և ինքիւրէն վըստահելով վազեց շիտակ որսորդներուն վրայ : Բայց որսորդները զայն տեսածնուն պէս՝ կարկրափ նման վրան մաղեցին նետերը . որոնց մէկը դպաւ իրէն և խոր վիրաւորեց : Ան ատենը ստիպեցաւ ետ գառնալ, ու ա՛մըջնալով եկաւ գայլին քով որ շատ երեսը զարկաւ ըրած յանդգնութիւն . բայց վագրը առանց զղջալու չի ցաւեցաւ իր թշուառութիւնը վրայ :

Վագր՝ այսինքն (սխալման) գառանն և խիստ խառն և յանդուգն որ ամեն ինչ անխնայ հետէն և յանդուգն հետ ալ ինչ համարձակ իտուիւ : Օրինակ է երբ լինի մարտիկ յանդուգն մարտիկ որ խելտին եկած ի՛նչ, և ամենին ուրիշի մօտ լինի . Բայց շատ անգամ ալ խառնաւոր ի՛նչ : Ասպէս են հիմախառն մարտիկ որ Բարեկամ խօսքին մօտ լինելով խելտինն տրած ի՛նչ :

Զի՛նչ շահ խիզախել խոտել զթըշնամին,  
Մերթել չըսել ձայն խրրատատուին .

Յորժամ ելանէ յասպարէզ մարտին ,  
 Կարեմէր խոցեալ ծաղրի 'ի զընին :  
 Արդ մի վտտահիր 'ի զէն յոյժ բազկին ,  
 Եւ մի անխորհուրդ կագեր ընդ բազմին .  
 Ձի զէն զօրութե յոլովագունին  
 Խորտակէ միոյն զօրուն ուժգին :



### ԵՂԵՒՆ ԵՒ ՄՈՐԵՆՒ

Խոնարհ ոգին յամէն վայրկեան  
 Կայ 'ի չարեաց աներկեան :

Խոնարհ մարդիկ ուր ուր ըլլան ,  
 Ամէն լարէ միշտ ազափ իան :

Ճ. Եղեւին ծառը կ'անարգէր զմորմենին  
 ու կ'ըսէր . Անպիտան ցուցանք բնութեան՝  
 տես իմ գլուխս մինչև ո՛ւր հասուցեր եմ .  
 մամբռտան ես ճիւղերովս որչափ տեղ գետ-  
 նին վրայ գոցեր եմ : Չէ թէ միայն նաւե-  
 րուն կայմեր ( քիւէնէր ) կըսատրաստեմ ,  
 այլ և աներու տաճարներու գերաններն  
 ալ ես կը շինեմ . Ի՞նչ գործք կայ որ ես  
 յարմար չըլլամ : Բայց դուն ողորմելի ծա-  
 ուիկ , չորս ոտքէն աւելի չես կրնար բարձ-  
 րանալ դաշտին մէջ ուր որ քեզ կը տեսնեմ  
 չորցած . հասկա ի՞նչ օգուտ քեզմէ կրնայ ըլ-  
 լալ : Պատասխան տուաւ մորմենին թէ ինձմէ  
 բան մը չըլլար , բայց իմ միսթարուհիս այն է  
 որ քեզմէ քիչ կը վախնամ այն փայտ կտրողէն

որ շիտակ մեր վրայ կուգայ : Ահա մէկէն 'ի  
մէկ եղենիին բերանը գոցուեցաւ . վասն զի  
փայտ կտրողը չուտ մը կացինը վերցուց ա-  
նոր դէմ . և քիչ ժամանակին մէջ ջարդու-  
բուրդ ըրաւ վարձգեց, ու դարձաւ գնացա-  
ռանց դաջելու մորմենիին . զի հարկաւոր  
բան մը չունէր որ առնէր :

Եւէին (չամ) ծառը օրինակ է պարծենոք  
Տարտոս որ զինքն մեծցնելու համար ուրիշ  
վաբ ինչ պարնէ պարծենալով . Բայց օր ինքայ որ չի  
հաւնած Տարտոսն ուրիշ 'ի'նչայ : Ուր քեզ որ ին-  
նարհոսն իայ՝ հոն իմաստոսն ինչ Գանոսն , 'ի'նչ  
սէ Սողոմոն :

Ահա սուտ պարծանք ունայնասիրին ,  
Պանծայ պարսաւէ զվիճակ խոնարհին .  
Բայց նա միշտ է նոյն յանսասան կային ,  
Ինքն անդէն սահեալ ձրգի 'ի գետին :  
Առ ինչ ճոխանալ յամպոց սահմանին ,  
Անտի 'ի խոնարհ սասանիլ հեշտին .  
Բարի է աղքատ կալ անդրդուելի՝  
Քան ճոխ 'ի բարձուէ խորտակիլ յերկրի :

## ՁԿՆՈՐՍ ԵՒ ՁՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ

Դուզնաքեայ որս աւուր սերկեան

Հատ է քան մեծ որս ինչ վաղուեան :

Աս օրոտն հաւը խոր աւ ըլլայ ,

վաղուտն գառէն թէ որս ի՛նչ ըլլայ :

ՃԹ. **[** Եկ ձկնորս մը կը ձգէ իր կարթը  
(օլնան) գետին մէջ , կը բռնէ սղտի ձուկ մը  
որ իր սղտիկուկն անոր առջին դնելով կ'ա-  
ղաչէր որ զինքը թող տայ : Խօսք կուտար  
որ եթէ թողու զինքն աւելի մեծնալ , քանի  
մը շաքաթէն ետե նորէն սղտի գար խած-  
նէր անոր կարթը : Այս անանկ բան է որ  
կ'ըսէր , քեզի օգուտ է . վն զի յետոյ աւելի  
լաւ կերակուր կ'ըլլամ քեզի : Պատասխան  
տուաւ ձկնորսը . թէ Ես չեմ կարծեր թէ  
դուն այնչափ յիմար ըլլաս որ խօսքիդ վրայ  
կենաս . բայց լաւ գիտեմ թէ ես ալ այն-  
չափ անխելք չեմ որ քեզի հաւտամ ու թո-  
ղում ունեցածս ունենալուքիս համար :

Հաս ճարտիի իտն որ Բանի լէն հասնիր , և  
աւելերին թէ Բանի վրայ է . այս պատճառա-  
պշարիլէն աւ իւր զինն ու խելձ իւր Բան :  
Անոր համար աս օրոտն հաւը վաղուտն սագէն  
չափ աղէի է ի՛նչուի :



Խմաստասիրել յառակէս ուսիր

Շատացեալ և գոհ լեր ընդ շահեալ իր .

Զի մեծ է սերկեան շահ գուղնագունին ,

Քան զանըստոյդ շահ վաղուեան մեծ իրին :

Շատք անգոհութեամբ թողուն զոր ունին ,

Կարօտեալ մքնան հանդիպիլ մեծին .

Որ չէ հաճ ը փոքր սլարգև իւր բաղդին ,

Արտաքոյ լինի մեծին և փոքրին :

## ԱՐԾԻԻ ԵՒ ԲԶԷԶ

Զրկանք չարեաց անիրաւին

Նա և յորդւոցն հատուցանին :

Ո՛ւ ի՞նչ չեմք շէ-բէշին քոն ,

Ի՞նչ չա-իշնէրն կ'ըլլան անքոն :

ՃԲ. Արծիւը երբեմն մէկ ճագար մը վեր  
կը վերցընէր առանց նայելու բզէզին աղա-  
չանքին որ միջնորդութի կ'ընէր բարեկա-  
մին համար՝ կ'աղաչէր արծիւին որ անոր  
կեանքը բաշխէ : Իսկ արծիւը առանց լսե-  
լու անոր ձայնին՝ յամուսակեց տարաւ . բայց  
շատ ջանքաւ խիստ զոջացաւ . վն զի քանի  
մը օրէն ետեւ բզէզը տեսաւ որ արծիւը  
հեռացեր էր իր բունէն՝ թուաւ հոն , բո-  
լոր անոր հաւկիթներն աստեղանեց , որը  
ծակեց որը կոտորեց , և իր բունը բոլորո-  
վին կործանելով՝ բարեկամին մահուանը  
վրէժն առաւ :

Ճագարն է (ատա դաւշանի), իսկ Բլէշն է  
(պէօճէկ) . ու արծիւը օրինակ է անոնց որ  
զբիողութեամբ հարստութիւն յիշգրտեն զաւելներնոն .  
և որովհետեւ անոնց համար եղաւ այս անօրէնա-  
ւիւր՝ արդարութիւն իւր պատժէ զանոնք ալ . ինչպէս  
ի՛շտէ այն ատաւիւր, թէ հարկ ազնիւ կերան և որդ-  
ւոց արամսանք ատան :

Տէս զարդար պատիժ անլուր զրկողին,  
Պատրաստէ ձագուց ըզմիս ճագարին .  
Սակայն իրաւունք ոչ թողուն նմին  
Դարմանել զածածն, աճիւղ զաւակին :  
Այս հատուցումն է զրկողաց բաժին՝  
Որ գանձեն որդւոց յանիրաւ չահին .  
Սովին անժառանգ անորդի լինին,  
Որդիք փոխան հարց դառնաղէտ պատժին :



### ՊԱՏԱՆԻ ԵՒ ԳՈՂ

Ճարտար մտաց չիք ինչ դժուար,  
Ամէն չարեաց գտանէ ճար :

Վնաս չի գար խելոյն ճարդուն,  
Զանա՛րդուն ալ ըլլաւ գիտուն :

Ճգ. Պատանի մը ջրհորին քովի քարին վրայ  
երբոր պառկեր էր, մէկ գող մը շտապ վրան  
կուգայ որ զինքն հանուեցնէ . իսկ պատա-  
նին հանկընալով անոր չար միտքը՝ սկսաւ  
լալ : Ան ատենը հարցուց գողը թէ Ի՞նչ

պատճառի համար կուլան : Ան ալ պատաս-  
խան տուաւ . Վայ ինձի, ահա այս հորին  
մէջ ոսկիէ աման մը ձգեցի : Շուտ մը գողը  
հանեց լաթերն ու հորն ինջաւ զայն հանե-  
լու համար, որ մէկալը կ'ըսէր՝ թէ ձգեցի  
կորսընցուցի : Բայց երբոր կը փնտրուէր,  
ժողովեց պատանին գողին լաթերն առաւ  
փախաւ :

Խելացի ճարպիկ մարդը ամէն բանին հետեւ  
իւ գտնայ, իսկ յիմարեւ իւ պաշարուի իւ քայ . անոր  
համար իմաստուն մարդը ամենուն յանկաւի է, եւ  
ամէն ազգի մէջ մեծ յարգութիւն պէտք է ունենալ,  
ինչպէս իշտոտի Բէ իմաստունը աշխարհի իւ  
փիլէ :

Արդ գողն 'ի գողէն յորժամ գողանայ  
Միտք հողածընաց ամբի զարմանայ .  
Բայց սակայն գողոց գողութիւն իրաց,  
Գողք են ժառանգող ըստ ճիշդ օրինաց :  
Եղո՛ւկ որ զիւր գործ թողու և գընայ  
Կողոպտել զընկերն կեղեքել ջանայ .  
Ո՛չ գիտէ թէ գանձ անիրաւ վատասկ  
Ի չեք փոխարկէն և զոր 'ի տան կայ :



# ԱՌԻԻԾ ԵՒ ԱՅԾ

Մի հաւատար ձայնի բազմաց,  
Զի բանք այլոց են վն ինքեանց:

Ամէն խօսքի մի հաւատար.

Շարին խելաքն է իր համար:

ՃԴ. **Ը**ռիւծը կը տեսնէ մէկ այծ մը որ ամ  
մէն դիէն ապառաժ բարձր քարի մը վրայ  
խոտ կ'ուտէր, հասկըցաւ առիւծն որ հոն  
ելլել չի կրնար շուտ մը կանչեց անոր խոնարհ  
ձայնով. Բարեկամ ինչո՞ւ այդ բարձր ապա  
ռաժներուն վրայ կը ճանկես. ուր տեղ ան  
համ մամուռէն (էօռուէն) ի զատ բան մը չես  
կրնար արծեւ. շատ լաւ կ'ընէիր ինչպէս  
ինձի կ'երևնայ վար ինջնէիր այս դաշտին  
մէջ ուր ես կ'արծիւմ, զի խոտերը մատղաշ  
և զարմանալի համով են, ինջիր վար նորէն  
կ'ըսեմ քեզի: Պատասխան տուաւ այծը ծաղը  
ընելով. Բարեկամ, ահա շատ յօժարուծք  
կ'ուզեմ ընել ըսածդ, բայց ան ատենը կ'ը  
նեմ երբոր քեզ չեմ տեսներ հոս բնաւ:

Պէտք է ինչամոյն տեսնել խօսքերուն հա  
րաւով խաբոսիւ. Էս դի «իբար լաւ ըլլաւ» հա  
րաւ «եւ ինչ իբար ընել», և որոտ բարեկամ յե  
ս

նայ, սոսք է մայն իր շահը ինչ հաւածէ: Շաք  
դժոռար է հաւատարիմ մարդ գտնել, ի՛նչն իմաս-  
տունը:

Վա՛շ որպէս առիւծ ցաւակցի այծին  
Թողուլ զապառաժ խայտալ ՚ի դաշտին.  
Բայց նա ծանուցեալ խորհուրդ նենդողին,  
Զարժանին առնէ պատասխան նրմին:  
Ո՛վ քանիք խաբեալ առ սէր որկորին  
Իջանեն ՚ի վայր ճարակել յախտին.  
Եւ անդէն ինքեանք լինին կերակուր  
Գազան թշնամւոյ ժանտ կլանողին:

### ԱԳՌԱՒ ԾԱՐԱՒ

Հարկն է գլտիչ նոր արուեստից,  
Եւ հընարէ անելք ելից:

Երբ՞ու հաբիւ մարդ ինչ պիտէ,  
Աճէն բանին ճար ինչ գտնէ:

Ճէ. Ըգուաւ մը խիստ ծարուած ջուր կը  
գտնայ աճանին տակը որուն վիզը երկայն ու  
նեղ ըլլալով՝ կտուցքը չէր կրնար ջրին հաս-  
ցընել որ խմէ: Այս դժուարութեւ ճարը  
գտնել անհնարին կ'երևնար, բայց որով  
հետեւ ծարաւէն կը մարէր, ծարաւն անցը-  
նելու հարկը իրեն ճար մը գտնել սորվե-  
ցուց: Ուստի ժողովեց շատ մանուորոյն քա-  
րեր, ու մէկիկ մէկիկ կտուցքով բերաւ ա-  
մանին մէջ ձգեց, ասով կամաց կամաց ջու-

ըր վեր ելաւ, այնչափ որ վերջապէս աղօա-  
ւը ջուրը խմեց դիւրութեամբ:

Հաւիւտորութիւնը մարդոս միտքը սրելով՝ շա-  
բա՛ն իւ գինէ, և շաբա՛ տրուեալ հնարել իո-  
թանքէն թո՛քել Արամայ Ռոտը քեսաւ թէ դարձ-  
նութիւն պէտք է մարդոս՝ երեսն եղաւ գիտ-  
հնարեց. աւուր տոյճը քեսաւ որ մահալները բա՛ն  
իւ գործէն, և գիտցաւ որ իրաւը շաբա՛ հաւիւտոր  
է, իրաւ գործէլը հնարեց, ևն:

Այսպէս հարկն եղև ըստ բերման առթին

Գտող արուեստից դեղոց դարմանին:

Որով հանճարեղք յիւրաքանչիւր դար,

Պիտանի մարդկան դիւտ հնարեցին:

Արդ մի անարգեր ըստ հեղգամբին

Ըզգիւտըս նախնեաց զառակըս նոցին.

Այլ ընտրեալ զլաւն հետեւեաց նմին,

Հանճարեալ զգիւտս ըստ բնագիտին:

## ՅՈՒԼ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ անարդ է փանաքին ,  
Գործել կարէ զնաւ մեծին :

Մի աւրծիւ Բէ ութը շաբ է ,  
Մէի աշխի՛ Տէ Է՛լ իւրաքէ :

ՃՂ. **Յ**ուլ մը խոտին վրայ պառկած կը մտածէր իր ուժին վրայ : Թող փիղն ու առիւծը չըլլան կ'ըսէր ինքիրեն , իրաւ որ ա մէն կենդանիներէն զօրաւոր և ահագին ես եմ . այս երկուքէն 'ի զատ ամենեւին մէկէն ալ չեմ վախնար : Երբոր ասանկ կը հպարտանար , մէկ մուկ մը ախոռին ծակերէն դուրս ելաւ , և կատուած եկաւ խածաւ ցուլին ոտքն ու յետոյ վազեց մտաւ ելած ծակը : Ան ատենը ցուլն անանկ սաստիկ ցաւ իմացաւ , որ չի կրցաւ զինքը բռնել և չի պօռաւ : Ուստի մէկէն բերանը փոխեց յուսահատեցաւ տեսնելով թէ մուկն ալ կըրցաւ զինքը նախատել , և այսպէս ինք զինքը դրաւ վախցող կենդանիներուն կարգը :

Ո՛վ իւր հասարայ Բէ մէի մուկ Տէ իրնայ այսպիսի ութով իենդանիին ասանկ Բան ընել . Բայց գիտնան ինքնահասան մարտիկ որ աշխի Բշնամին իրնայ մեծ լաւ ընել . և ասով պէտք է խոնարհիլ :






Ճգ. Յուլ և Մուկն : ՃԺ. Սադ և տէրն :




ՃԳ. Քայլ և Շուն վտիտ : ՃԺ. Արամիկ և ճագ իւր :



ՃԻ. Ուղե որդ և Սօսի : ՃԻԳ. Չկնորս և Չկուհի :



Պարծանք սընոտի վէս մեծամըտին  
 Զխորդ 'ի փոքրուէ նանրացաւ դիւրին .  
 Զի որ վեհ դնէ զինքն ամենեցուն ,  
 'Նաւ 'ի փոքրունց ընկճի հեշտագոյն :  
 Քանիք ինքնապանծ զանձինրս եղին  
 Ի կշիռ վեհից դիւցազանց կարգին .  
 Բայց 'ի դոյզն առթէ սահեալ 'ի խոնարհ,  
 Ծանեան թէ զինչ են և զինչ կար անձին:



### ՄՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ ԵՒ ՄԱՅՐՆ

Եթէ տիօք իցես անփորձ ,  
 Խրատ ծնողաց լիցին քեզ փորձ :

Թէ մանուկ էս՝ առվէ՛ մեծէն ,  
 Մի՛ պարծենար Լէ Բան Գիպէմ :

Ճէ. Սկան ձագ մը մօրը կը սլառմէ ինչ  
 որ իրեն հանդիպեր է ճամբորդութեանը  
 մէջ որ գացեր եկեր էր : Վ'ըսէր թէ օր մը  
 հեաաքըքրութիւն բերաւ որ մտնեմ բակի մը  
 մէջ , և հոն գտայ մէկ կենդանի մը որ չէի  
 ճանչնար , բայց խիստ գեղեցիկ ըլլալով շատ  
 հաճեցայ անոր վրայ , վնճի կերպարանքն  
 էր անոյշ և համեստ , նայուածքը շնորհալի ,  
 վրան գունաւոր և սուշն երկան գրեթէ  
 մերինին նման : Ահա ասանկ շատ գեղեցիկ  
 տեսք ունէր . իսկ ես անանկ սիրեցի որ մէ-  
 կէն պիտի մօտենայի անոր հետը ճանչու-  
 րութի ընելու համար . նայիս մէկ անդգամ

Թռչուն մը որ գլխուն վրայ կտոր մը ճրխ  
 քրքրած միս ունէր՝ խռովեց, և սուր ձայ  
 նովն անանկ վախցուց զիս որ գողալով  
 փախայ: Ո՛րդեակ, ըսաց մայրը, ան փառք  
 տուր, որ քեզ պահէր է այս չար պատահ  
 մունքէն որ չի կրնար ըլլալ. վասն զի այն  
 կենդանին որ քեզի անոյշ երեւցեր է՝ կա  
 տուն է, իսկ Թռչունն է աքաղաղը որ մե  
 զի վնաս մը չի տար. բայց կատուն մեր կո  
 րուստէն ՚ի զատ ուրիշ բան չի մտածէր:  
 Ուրեմն ճանչցիր Թէ ի՞նչ անխոհեմութե  
 մէջ ես որ անգուժ Թշնամույդ ձեռքը զքեզ  
 պիտի մատնէիր:

Ուրիշին գեղեցիկութանը մէջ նայիր, և մի սի  
 րուն Կենդանի և անոյշ Նեղուովը խաբարիր.  
 Կեպտէ իմաստութե՛ք ճաննալ բարեկամը և լեռնա  
 մին, որ լուսայ լեռն սափանայի՛մ յետոյ ինչո՞ւ. շատ  
 բան Կեպտէ որ այս խելոյք սորվիս խորհով:

Օրինակ է այս խաղամիտ մանկանց  
 Որ կարծեն լինել հմուտ աշխարհաց.  
 Բայց անփորձ գոլով յոլով գիտելեաց,  
 Փորձ հասուն լինել կարօտին բազմաց:  
 Խրատ է այս քեզ մանուկ ինքնապանծ,  
 Միխաբիր տեսեամբ գեղափայլ գիմաց.  
 Զի զգայութե՛ք խաբիս և փորձիս,  
 Միայն փորձ լինիս խորհրդով ծնողաց:

## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԵԶՆ

Թէ և զեղջիւր հատցես ժանտին,  
Կռուի ոտիւք փնասէ կրկին:

Եթէ իբրեւ յետոյ լարին,  
Որոշ շատ իռարայ իրին:

ՃԸ. Երկրագործ մը ուզէց եզին եղջիւրնե-  
րը կտրել որ միշտ իրեն դէմ կը վերցընէր .  
բայց կտրելէն ետև աւելի չարացաւ եզը ,  
փն զի տեսաւ թէ եղջիւրները կորսնցուց  
որով կը փնասէր անոր՝ սկսաւ ոտքերովը  
գետինը փորել անանկ կատարելով որ հա-  
նած փոշին ու հողը երկրագործին աչքը  
կը լեցուէր : Ուստի ըսաց խեղճ մարդը . Ո՛հ  
ի՞նչ օգուտ ինձի եղաւ ըրած զգուշութիւն .  
վասն զի այս չար կենդանին հիմա աւելի  
փնաս տուաւ ինձի ոտքերովը որ անցած  
օրերը այնչափ փնաս չէր տուած գլխովը :

Բարեկամիբ մարդուն հետ պէտք է ղգուշութիւն  
շարունակ և չի խաղերցնել , չէ նէ լեցած է ի  
մար . գլուխը խալէս՝ որոշու է ի իռար , որոշ  
խալէս՝ լեղուշու : Ինչպէս որ գաղանին ծանկը՝  
Բերնէն գէշ է պարտէ , այսպէս ալ Բարեկամիբին  
լեղուն աւելի է շատէ , ի՞նչ գիտուն ճ :

Ուսիր չկադէլ ընդ բարկասրտին,  
 Հեղ կենակցութիւն շահիլ զսիրտ ժանտին,  
 Զի ոչ վերք հարուածք վերք բժշկին,  
 Ոչ հուր բարկութիւն հրդեհք շեջանին:  
 Զեղջիւր ամբառնալ ընկեր ընկերին՝  
 Ոչ մարդոյ է գործ այլ դազանային,  
 Որք խայթեն խեթկեն յօտար տեսակին,  
 Մարդ միայն ըմպէ զարիւն իւր սեռին:



### ԱՐԾԻՒ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

Չարագործաց չարն է բաժին,  
 Չոր ինչ գործեն ի նոյն պատժին:

Չաւ ընդ լաւի զգրէ,  
 Իբեւ գործէ ընդ զաւրթէ:

ՃԹ. Երծիւն իր բռնին մէջ կեցած տեսաւ  
 հեռուէն որ նապաստակին ձագերը խոտ  
 կ'ուտեն, մէկէն վրանին հասաւ յափշտակեց  
 տարաւ իր ձագերուն: Իսկ անոնց մայրը  
 կ'աղաչէր արծիւին որ խնայէ և իրեն տայ  
 ձագերը: Բայց արծիւն առանց անոր աղա-  
 ջանքին նայելու մէկիկ մէկիկ մեռցուց ձա-  
 գերը աչքին առջև: Մայրն ալ կսկըծուն  
 կատղեցաւ, և ուրիշ ճար չի գտաւ վրէժ-  
 խնդիր ըլլալու, սկսաւ ծառին տակի հողը  
 փորել. այնչափ փորեց որ մինչև հովը զար-

կածին պէս ծառն ընկաւ, և արծիւին ձա-  
գերը վար ընկան մեռան:

Խրափ է անոնց որ իրենց Ձեռ-մէտնը ապա-  
-ինելով անիրաւ-ութիւն կ'ընեն աշխարհն. լին  
գիտէր թէ աշխարհն յայնը շտափ վեր կ'ելլէ, ու  
ձեռնն քան աւելին քանն յոյժից իւր Դաւթնէ:

Չափ է գեղեցիկ անձնապատանին  
Ի փոքրուէ անտի կըրել զարժանին.  
Որ քանդել ջանայ ըզտուէ տընանկին,  
Քանգի նանրանայ զըրկանօք նովին:  
Մի քեզ վստահիր թէ կաս 'ի գահին  
Վերանցեալ 'ի կայս իշխանականին,  
Երկիր 'ի շընջմանց ալէբեր հողմին  
Որ կործան առնէ զաթոռ հրպարաին:





## ՍԱԴ ԵՒ ՏԷՐՆ

Սիրտ ագահին ոչ գիտէ յագ,  
Թէ և իցէ յոսկի համակ:


Ագահ սիրաւ յոսկին Լաւաւի,  
Չի իշխանար, ալ շաք իսփ:

ՃԺ. **Ս**էկ սագ (խաղ) մը ամմէն օր մէյմէկ  
ոսկիէ հաւկիթ կ'ածէր տիրոջը. իսկ տէրը  
միտքը դրաւ թէ սագին ներսը լեցուն ոս-  
կի է: Այս մտքով բռնեց խղճեց զսագը.  
բայց ի՞նչպէս յուսահատեցաւ երբոր բացաւ  
փորն ու բան մը չգտաւ որ կը խնդրէր:

Ագահութիւն երբոր ագահին սրտին մէջ Լա-  
գահորէ իւր իտարացէնէ դայն. և որչափ շաքնայ  
ոսկին՝ այնչափ այս մաւաթին ալ իւր սաստիանայ.  
Վերջապէս հոգին ալ ի՛նչէ մարտինն ալ: Դիտ-  
գինէս թիւխոտային հարցոցին Լի ոսկին ինչ-  
տէշին է. պարասխանեց Լի Շաք քնաբոսող  
ունենալուն համար վախուն տէշներ է:

Ո՛վ քանի՛ անյագ սիրտ ոսկեսիրին,  
Ոչինչ շատանայ ընդ ձիրըս բաղդին.  
Ի մի ու մի լմակէր թէ էր ի ձեռին  
Չոսկի և զարծաթ գանձ տիեզերին:

Ի զի 'ի ցանկալ Հանգիստիլ շատին ,  
 Թողու զբաւականն որ կայ 'ի ձեռին .  
 Եւ է զի յոսկի Համակիլ սըրտին՝  
 Ճնշի և մաշի նոյն սիրտնոյն Հոգին :



## ԸՆԶԱՌԻՒԾ ԵՒ ԱՂՈՒԻՍ

Մեծ և չքնաղ է գեղ Հոգւոյ ,  
 Քան վաղանցուկ տեսիլ մարմնոյ :

Ս'ի պարծիք սոսա մարմնոյդ լրայ ,  
 Նայէ հոգիդ պայծառ ըլլայ :

ՃԺԾ . Ընծառիւծը կը պնդէր թէ աղուէ  
 սէն շաւալէր է ինքը . Լաւնայէ , կ'ըսէր , իմ  
 վրայիս աղուորութիւն . կը տեսնէ՞ս ի՞նչպէս  
 փայլուն դունաւոր խատուտիկ է մորթս .  
 բարեկամ առանց կեղծաւորութիւն մտածէ ,  
 քուկինդ իմինիս առջին կրնայ շուք ըլլալ  
 բաղդատութիւն : Պատասխանեց աղուէսը ,  
 թէ Ես անանկ տգեղ կը տեսնեմ զիս որ  
 կրնայի ազատ խոստովանիլ թէ քեզմէ շատ  
 վար եմ , թէ որ չգիտնայի թէ խելացիները  
 քիչ մը աւելի մեծ կը համարին Հոգին քան  
 թէ մորթը :

Ընթառիւծը խառնաի կենդանի ըլլաւ՝ յեւ  
 Բեթեհեմ-իւծը առիւծի նման է , իսկ մարմնը ընթի

(խամիլանի) . որ հաւարաբնութիւն օրինակ է պար-  
ծենիոյ Իանանց որ միայն իրենց զարդարանքն է-  
րուն Վրայ ինչ պարծենան , ու առաքինութիւն և  
պարիեշաութիւն մէկտէ Են յգեր , որ է Բուն մար-  
տուն Գեղեցկութիւն :

Անխմաստ դաստմունք մըտաց յիմարին ,  
Որ 'ի գեղ մարմնոյ դնէ զիւր բարին .  
Պանծայ վեհ լինել այն բազմագիտին ,  
Զի պերճ երեւի տեսիլն արտաքին :  
Բազումք 'ի մեր դար յայս խորհուրդ բերին ,  
Յարգեն զգեղ մարմնոյ և ոչ ըզհոգին .  
Թողեալ ըզնեքին պըճնեն զարտաքին ,  
Զիրկ գողով բարեաց իմացականին :

### ԵՐԿՈՒ ԲԺԻՇԿԻ ԵՒ ՀՈՒԱՆԴ

Արդ մի այլոց ըզքեղ մասներ ,  
Բերեն 'ի գլուխ քո սև օրեր :

Մի մաքնէր +եղ ուրիշներուն ,  
Շահաւ ի'երևաւ ծոցը հողուն :

ՃԺՔ. Հիւանդ մը իր հիւանդութե զանա-  
զան ցաւերը կը պատմէ երկու բժշկի որ  
զինքը նայելու եկեր էին : Ամէն մէկ պատ-  
մած բանին մէկ բժիշկը միշտ կ'ըսէր Շատ  
լաւ . մէկաւն ալ կ'ըսէր Շատ գէշ : Հիւանդը  
լաւ հասկըցաւ թէ այս բժիշկներն ինչ  
կարծիք ունեցան իր հիւանդութեը վրայ որ

մէկին կարծիքը մէկալին հակառակ էր :  
 Ուստի կապուեցաւ մնաց որն ընտրէ վասն  
 զի գթուար էր ընտրուիլ . երկու կողմի կար-  
 ծիքն ալ հաստատելով պինդ ունէին , և պա-  
 կաս չէր իրենց պատճառները՝ թէպէտ ան-  
 հաստատ բայց մեծցուցած և երկան պատ-  
 ճառներ էին : Այս ընդիմութեց մէջ հի-  
 ւանդը քրտնեւելով չէր գիտէր որ կողմը  
 բռնէ : Աւերջապէս յանկարծ գէշ ըսողին  
 հետեւեցաւ , և ամէն զգուշութիւննոր կար-  
 դադրութիւն յանձնուելով՝ դեղ առաւ ան-  
 կէ մեռաւ . իսկ բժիշկներն ասոր մահուա-  
 նը վրայ երկու պատճառ տուին . գէշ ըսո-  
 յը կ'ըսէր . Տեսա՞ք ես ի՞նչպէս ճանչցայ . լաւ  
 ըսողն ալ կ'ըսէր որ Անսխալ կ'ազատէր հի-  
 ւանդը , թէ որ ինքիր գլխովը բան չընէր :

Ըստ զգուշանաւն է որ օգտը մարդոց խօս-  
 քին հաւասարով պէշ ըմպանէս ուրիշին յետոյ .  
 Բեպէս շատ մարդոց բան հարցում , խրատ ան ,  
 Բայց քիչ մարդոց հետեւէ , և նայէ որ մարդոց  
 յետոյ լինիս :

Այսպէս որ տենչայ այլոց դարմանին  
 Մասնեալ զանձն 'ի ձեռս տրդէտ բրժը-  
 փութով կորնչի ըստ առակողին , (կին ,  
 Գընայ և նրստի 'ի մահու բանտին :  
 Իսկ գու որ իշխան և տէր էս անձին ,  
 Մի մասներ ըղքեղ օտարաց հեշտին .  
 Որ ոչ 'ի լաւ անդր փոխարկել ունին  
 Եւ ոչ անպատճառ մասնեկն գեհեմին :

## ԱԾԻԱԳՈՐԾ ԵՒ ՆԵՐԿԱՐԱՐ

Սկստեսիլ ածխագործին ,  
Ոչ երևի իւր սեաւ փողին :

Թեպէք յընդ մեջած ըլլաս ,  
Քեզի ճերմակ լաւ կ'երևնաս :

ՃԺԴ. Սէկ ածխագործ մը կ'ըսէր ներկա  
րարին , թէ Բարեկամ իմ տունս քեզի շատ  
յարմար է , հրամէ՛ հոն նստէ , հաւատացի՛ր  
որ շատ զարմանալի հանգիստ կ'ըլլաս : Պա-  
տասխանեց մէկալը շնորհակալ ըլլալով ա-  
նոր բարերարութեան վրայ , թէ Ես կը հաւ-  
տամ որ քու տունդ ինձի շատ աղէկ կ'ըլլայ ,  
բայց ինչպէս կ'երևնայ ես աւելի լաւ կ'ըլ-  
լամ ատանկ մէկ տեղ մը նստիմ ուր որ քու  
ածուխդ չկրնար սեցընել իմ կտաւներս :

Պախասաւոր ճարտը իր պախասաւորի լաւե-  
նէր , իւնայի որ ուրիշն ալ իրեն նման ընէ՝ իար-  
ծելով Բէ իրեն պէս շատ որ ըլլան՝ իր պախասա-  
ւորի իւր Գոյունի : Ասանկ լաւ ընկերեն պէտք է  
հեռու թափախել որ ըլլայ Բէ ինքն ալ անոր պէս  
«ննայ :

Այս օրինակ է պակասաւորին ,  
Որ ոչ տեսանէ զիւր ինքեան թերին .

Կոչէ զմերձաւոր նըստիլ առ նըմին ,  
 Համակել ըզնա 'ի մոռ սևագին :  
 Սոյնպէս ախտաւորք շաղեալ 'ի տըղմին՝  
 Մաքուր ձևացեալ արդարոց մերձին .  
 Փախչիլ 'ի ճահ է մերժել զայնպիսին ,  
 Քանզի աղտեղէն զանմեղաց հոգին :



## ՄՈՐԵՆԻ ՀՈՂԱՄԱՂ ԵՒ ՉՂՋԻԿԱՆ

Ամէն իրաց գոյ ինչ պատճառ ,  
 Քննեա՛ զծերոց բան նախաճառ :

Ամէն բանի մէջ պարճառ իայ .  
 Կ'ուզէս սորվիլ . գըրտէր իարդա՛ :

ԾԺԴ. Ս՝ որմենին , հողամաղը , և չղջիկը  
 ընկերացան որ վաճառականութի ընեն . մոր-  
 մենին ասլրանք առաւնաւը դրաւ որ Հընդ-  
 կաստան խրկէ . հողամաղը դրաւ իր կողմա-  
 նէ գունտ մը ոսկի . չղջիկն ալ իրեն համար  
 արծաթ ժողվեց դրաւ նաւը : Ժամանակն  
 որ եկաւ՝ ճամբայ ելաւ նաւը . բայց շատ  
 չհեռացած մէկ ալէկոծութեան մը հանդի-  
 պեցաւ , անանկ որ բոլոր մէջի ասլրանքովը  
 դնաց նաւը ծովուն տակը : Ասկէ եղաւ որ  
 հողամաղը միշտ ծովին քովերը կը պտըտի ,  
 յուսալով թէ ոսկին տեղէ մը դանէ : Չըղ-  
 ջիկն ալ կը վախնայ ցորեկն երևնալու՝ չըլ-  
 լայ թէ փոխ տուողը արծաթն ուղէ : Իսկ

մորմենին որ միշտ կը մտածէ իր ապրանքը  
գտնելու, ամէն անցնողներուն փէշը կը  
փակցի:

Հաղաճազն է (խարապաթախ) Բուլունը որ  
երկալենցադ ընտել՝ Տիշ գրեթէ ծովուն գնդին  
է: Այս առախ օրինակ է հափլըսիծ Տարտի-  
նէրուն որ Տինշ Դեռնին վախ իննն իւրսնց-  
ած Բանէրնուն վրայ: Ասեռ ասիէ հաթ է ա-  
Տինէրնուն Տէջ, Բէ որ Տարտինին գնու Տէին  
վրայ գալի՝ ի՛ննն Բէ Պարս+Դ քն-:

Ահա գաղափար ընչաքաղց անձանց,  
Որք մինչև ցրմահ շահել նըկըրտին.  
Եթէ միանգամ կորուսին ինչ գանձ,  
Հեծեն և ողբան մինչ 'ի կէտ վերջին:  
Են որք մահանան ընդ կորուստ իրաց,  
Եւ են որ մոլեալ մըտաթափ չըրջին.  
Բայց աւանդ ոչ մարդ սակըս մեռաղաց,  
Ի վստն մարդոյ այն գանձ այն ոսկին:



# ԵՐԿՈՒ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԷՇ

Հակառակողք յայնժամ հաշտին,  
Երբ վնասիւք իւիք տուժին:


Կռուսաւէր յարդ լի հաշտութի,  
Մինչև լընաւ լի պարտահի:

ՃԺՆ. | Եւ մը մուրրած կ'երթար, երկու  
մարդ կը գտնեն զայն և կը սկսին վիճաբա-  
նութիւն ընել թէ որոշն կ'լինի. երբոր  
կը ջանային մէկզմէկէ յափշտակելու՝ ըսին  
թէ ո՛վ որ աւելի զօրաւոր է՝ այն թող առ-  
նէ. ուստի սկսան ծեծկուիլ իրարու հետ.  
բայց շատ անխելքութի ըրին. վն զի երբոր  
մէկզմէկ գետինը կը զարնէին՝ էշն ելաւ ձեռ-  
քերնուն փախաւ. և ասով հաշտուեցան սի-  
րով այս երկու կռուողները:

Կռուսաւար յարդի այնչափ մէկ բանին վրայ  
հակառակութի լընեն որ վերջապէս ունեցածնին  
իւ իւր ընցընեն ու հապա իւ մեքանին:

Այս արդար պատիժ է կռուասիրաց  
Որք տքնին կորզել զչա՛ յիրերաց.  
Բայց երբ ելանէ այն ինչ ՚ի ձեռաց,  
Շուարեալ հաշտին ամաչեն յինքեանց:

Ա՛ռ քեզ 'ի խրատ այս գործ ատելեաց ,  
 Մի ատեր զընկերն առ սէր օգտութեանց .  
 Գաղանաց է բարբ, որք թողուն զորսանս ,  
 Անխնայ կռուին խաճատեն զինքեանս :



### ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ ՎՏԻՏ

Անյագ որկոր ցանկայ շատին ,  
 Բայց միշտ կարօտ կայ սակաւին :

Որո՞նք գո՞հ էին ունեցածին ,  
 Ունեցածէն ի՞նչ չւէրինին :

ՃԺՂ. ( ) ր մը մէկ գայլ մը կը պատահի  
 խիստ աղուոր շան մը , բայց անանկ վատութ  
 էր որ ոսկորն ու կաշին էր մնացեր . եր  
 բոր պիտի պատուէր զայն՝ ըսաց շունը . Ո՛վ  
 պարոն գայլ ի՞նչ կընես , չէ՞ս տեսներ թէ  
 հիմա ես անանկ վիճակի մէջ եմ՝ որ մէկ  
 ակռայիդ կերակուր չեմ ըլլար : Սակայն  
 հաւատա՛ն ինձի համբերէ՛ տեղս դառնամ ,  
 երգում ըլլայ քեզի որ կը ջանամ զիս լաւ  
 կերակրելու . թէ որքիչ մը ժամանակէն ե  
 տե ակործիս հոն գալ , զիս այնպէս գիր  
 ցած պիտի գտնես մինչև չպիտի զղջաս որ  
 անշահ կերակուր մը թողուցիր՝ աւելի լաւ  
 կերակուր ուտելու համար : Իսկ գայլը հա  
 լատաց և թողուց զայն : Քանի մը օրէն  
 ետե գնաց գայլը շանը տեղը , և դռանը ծա  
 կէն տեսաւ կանչեց որ դուրս ելլէ տուած

խօսքը կատարէ : Պատասխանեց շունը թէ  
կ'ուզես վաղն եկոր, զի այսօր չեմ յուսար  
թէ այն աստիճանը գիրցած ըլլամ որ քեզի  
յարմար կերակուր ըլլամ . և չեմ կարծեր  
թէ դուն ալ ինձմով գոհ ըլլաս : Իսկ գայլը  
այս խօսքս լսեց չի լսեց՝ կախեց ականջներն  
ու ետ դարձաւ, և երգում ըրաւ որ մէյմը  
նալ բան մը բռնէ՝ բնաւ չսկիտի թողու :

Պզտի Բանին լի հաւնող ձեծէն աւել ղերհոնի  
պզտիկէն աւ, վասն զի պզտիկ յետեւն ինձի .  
ձեծն աւ լի գաներ, ին խոյ Կարաբի : Գիտունի  
հաւցողին Լի Աշխարհիս վրայ ո՛վ է խեղճ .  
ան աւ ըսաց Լի Բանի լի հաւնող Ժոյլ ճարտը :

Ապաժոյժ բերմունք որկորաժեալն ,  
Թողու զբաւականն , վաղէ անջափին .  
Որով և նքթեալ հիւծի առ վշալն ,  
Արժանի սլափիժ անյագ որկորին :  
Արդ մի նմանիր գիշախանձ չարին ,  
Որ մարմնով այլոց սնանի յանձին .  
Ի սնունդ մարմնոյ շատ են ձեռք կրկին ,  
Քրտամբք երեսաց սնանեւ ինքնին :

## ԿԱՊԻԿ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Որ քան զչափ սիրէ զորդին ,  
Կրկին փնաս առնէ նմին :

Թէ լա՛նէ Դո՛ւրս զաւա՛սի սիրե՛ս ,  
Անշա՛հ ի՞նչիք ուրի՛նք ի՛շնե՛ս :

ՃԺՆ. Սէկ կապիկ մը խեղճը տուեր էր իր մէկ ձագին , անանկ որ գիշեր ցորեկ կը սրագնէր և գրկելով կը սխմէր . բայց այս անխեղճ սէրը շատ գէշ ըրաւ ձագին , վասն զի օր մը սաստիկ սիրելով գիրկն առաւ անանկ ուժով սխմեց գրկին մէջ որ շունջը բռնուեցաւ մեռաւ խեղճ ձագը :

Կապիկն ի՛շնե՛ն ինչ այնչափ սասափի ինչ սիրէ յագն ու երբեքն սխմելով ինչ մեռցնէ : Օրինակ է անանկ ծնողաց ուր սասափի սիրելով զաւակնին անխել՝ ի՛շնե՛ն , որոնք առանց կրնա-նեան մեծաւ լով՝ ախառաւոր ի՛շնե՛ն և բանի մը շահ լռնին , մնն ճարդի-նեան մէջ՝ մեռած ինչ սեպո-ին :

Տեսանէ՞ս զտիպ յիմար ծնողին

Որ գգուէ այնչափ փայփայէ զորդին  
Մինչ չիջուցանել զեռանդուն ոգին ,  
Առնէ զայն անմիտ իբրեւ լոկ մարմին :  
Ձինչ օգտեն գգուանք յիմար զաւակին ,  
Երբ անկիրթ աճէ նման անբանին .

Քանզի անխրատք ոչ մարդ համարին ,  
 Թէ և կերպարան մարդոյ ունիցին :



## ԱՒԱԶԱԿ ՀԵՂՁԵԱԼ

Թէ և պատիժք անագանին ,  
 Բայց ոճրագործք ոչ ազատին :

Չարէնն ռւտի պարթէն Գալիլէն ,  
 Հարկաւ Իս-գայ Իրո-սքան անջին :

ՃԺԸ. Դատաւորը մէկ աւագակի մը Ե-  
 անէն կ'իյնի որ բռնէ , իսկ աւագակը ա-  
 նանկ արագութեամբ կը փախչի որ չեն կրնար  
 բռնել . ուստի կ'ազատի և միաքը կը դնէ  
 չարագործը՝ Թէ այլ տեղէ մը վախճանալու  
 բան չունի , կարծէ Թէ իր գործած չարու-  
 թիւններն առանց պատժի պիտի մնան :  
 Բայց երկնաւորը լաւ գիտէ հասուցումը  
 ներու , վասն զի երբոր այս Թշուառականը  
 մէկ գետի մը մէջ մտեր անդին կ'ուզէր անց-  
 նիլ , չգիտնալով անոր խորութիւնը՝ ոտքը սո-  
 ղաց գնաց տակը խղզուեցաւ :

Թիւ խաբարին ասիէ լաւագործները ռոնոյ  
 Իրո-սքան չի սխալի հարկաւ պիտի ըսայ , լաւ  
 չի անէ Իրենց Բնասին , այ յետեւն ռո-  
 Գալիլէն . ան չի խաբարի , Ի՛նչեւ Բ գիտէ :

Այս է հատուցումն օրինաց Ինն ,  
 Որ կշռէ էից ըստ գործոց նոցին .  
 Թէ իցէ բարի՝ այն մնայ նմին ,  
 Իսկ եթէ չար է՝ հանդիպի չարին :  
 Ո՛վ , զիարդ սլաորաստ կայ դատող վերին  
 Դատել և սլատժել գործ չարագործին .  
 Թէ հալին արդարք յերեսաց նորին ,  
 Թշուառ մեղաւորք զինչ առնել ունին :



### ԵԶՐԱՅ ԵՒ ԼՈՒԾ

Ո՛րչափ բեռն է անտանելի ,  
 Համբերատար սիրտն տանի :

Ահա՛մբերին +իւ՛մ Վիշա Գայ ,  
 Տըփաւնջներս՝ Եիսա Էն ոգոսայ :

ՃԺԹ. Երկու եղներ լծած էին մէկ խիտ  
 բարձուած սայլի մը վրայ և շատ աշխատանքով  
 կը քաշէին . իսկ լուծը անանկ սասափկ  
 ձայն կը հանէր որ եղները ձայնէն վախցան  
 ու կեցան : Յետոյ դարձան լուծին ըսին ,  
 Թէ Ո՛վ անհանգարտ , ի՛նչ ունիս որ ասանկ  
 կը սօռաս , գրեթէ դուն աշխատանք մը չու-  
 նիս , մենք որ բոլոր այսչափ բեռը քաշելու  
 կ'աշխատինք՝ մէկ ձայն մը չենք հաներ :

Համբերող ծառը +ըստ ծանր բեռան քափ  
 ըսայ՝ Եսնեւեւեւ . Իսկ անհամբերին Եսնեւ +իւ

Բանէ յը սոսկաւի կ'ելլէ : Երանի անոր որ համ-  
բերուեալք իր բեռը ին Բեթլեհէն , և ասանց  
որքանչեւն ին քանի :

Ահա տարացոյց համբերատարին ,  
Որ ընկճեալ բեռամբ վաստակի լռին .  
Իսկ եթէ ոմանք մատամբ յինչ մերձին ,  
Չայն գանգատանաց արձակեն ուժգին :  
Ջանա անկեղու տանիլ քոյդ բեռին ,  
Ենթարկեալ ձեռաց ամենակալին .  
Լռողք տրտնջողք միապէս տանին ,  
Մին արդիւնատրի միւսն է անբաժին :

## ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԻՍ

Խարդախն որչափ նենգեւ ջանայ ,  
Ծանակ լինի անհետանայ :

Ո՛րւա՛ք որ շաք Բան ին Խորհիս ,  
Չարութենով ին Խորսուիս :

Ճի. Բազաղաղ մը նստեր էր բարձր կողնի  
ծառին վրայ . մէկ աղուէս մը հոն դալով  
տեսաւ որ չի կրնար անոր հասնիլ , վազեց  
ծառին տակն ու կանչեց անոր . Բարեկամա-  
ւեալիս աւեալիս , խաղաղուիլ հաստատուե-  
ցաւ երէկ ձեր մէջն ու մեր մէջը , ուրեմն կ'ա-  
ղաչեմ քեզի ասկէց ետեւ առանց ռիս պահելու  
պարտական ենք մէկզմէկ սիրել եղբօր պէս ,  
և մենք ալ սկսինք հաշտուիլ . ուստի եկոր



սիրելի ինջիր որ պագտուինք : Պատասխան  
տուաւ աքաղաղը . Բարեկամ , չիտես թէ որ  
չափ զիս ուրախացուց աւետիսդ . կարծեմ  
թէ իրաւ է ինչպէս ինձի կերևնայ , վասն  
զի կը տեսնեմ որ վարէն երկու սուրհան-  
դակ (Խալաթ) կուգան մեզի այս աւետիսը  
տալու համար . ուստի քիչ մը կեցի՛ր կ'աղա-  
չեմ , անոնք հոս հասածնուն պէս ես ալ վար  
կ'ինջնիմ , չորսս մէկ տեղ կ'ուրախանանք :  
Եւ այս սուրհանդակներն են երկու որսող  
շներ : Չայս որ լսեց աղուէսը դող ելաւ ,  
ու ճորով փախաւ անկէ . իսկ աքաղաղը վի-  
զը վերցուց , սկսաւ երգելով խնդալ անոր  
վրան :

Անգագն եր շրժե իւ գրե . որւո՛ր որ-  
շին իւրժաւորութի ընել-Վ խաբել ջանայ , այն-  
ւո՛ր ինչ ի՛նչի թաւ :

Տէս ըզպատուհաս խարդախող չարին ,  
Ի նենգել զընկերն հալածի ինքնին .  
Քանզի լոյս ճրագ նենգաւոր անձին ,  
Ի մուտս արեւու անդէն չիջանին :

Արդ այժմեան մարդիկ նման են սմին ,  
Միայն առ երես շուք տան ընկերին .  
Այսու քաղցրութիւն երբ զսիրտ շահին ,  
Լարեն անխնայ զորոգայթ նմին :



## ՎԱՐԴ ԵՒ ԾԱՂԻԿԻ

Զինչ փառք փթթիլ չքնաղ վարդի  
Երբ յերեկուն ընդ փոյթ խամրի :

Ինչ շահ Բայոսիւ լարդի նման  
Երբ իստփն ու իշտփն է ձէի օրոտան :

Ճիւն . ( ) Կողկրնէրը մտածեցին վարդին  
վրայ , և անոր գուներուն մէջ անանկ կէն ,  
դանի սլայծառութիւն մը գտան որ գրեթէ  
առանց նախանձելու խոնարհեցան ու գե-  
ղեցկութեւ պսակն իրեն տալ ուղեցին : Ամ-  
մէնքը միաբերան կ'ըսէին թէ Մեր գուները  
անոր պէս մէկ հատիկ գեղեցիկ չեն , մէնք  
անոր անոյշ հոտը չենք կրնար հանելու ,  
ուստի քեզի կը վայլէ պսակը ազնիւ վարդ ,  
քեզի կը վայլէ մինակ անոյշ հովին սիրուն  
գգուանքը : Վարդն ալ ըսաց հառաչելով .  
Ո՛վ ծաղկրնէր՝ որովհետեւ ես մէկ աւուր մէջ  
կը ծնիմ ու կը թռամիմ , ինչո՛ւս պէտք է իմին  
այսչափ գեղեցկութիւն . ո՛հ աւելի կ'ուզէի  
ձեզմէ վար ըլլալ և ձեզի չափ գիմունալ :

Օրինակ ատենն անոնք որ իրենց աշուստութեա-  
նը՝ իշտփն ու ապրտփն ապաւինելով ինչ հաւա-  
քանան . որովհետեւ ձէի բոպէին մէջ մամէնքէ կ'անց-  
նին կ'երթան , եթէ աշտիւն-նիւն ճշտանին՝ միմայ  
այն ինչ ծառ :

Ահա քեզ տիպար փառաց աշխարհի,  
 Որ փախչի գընայ նման սողուերի.  
 Մինչև է փթթեալ խամրի շիջանի,  
 Ի քթթեւ ական ը չեղեալս խառնի:  
 Թէ պանծանք ծաղկանց ոչինչ համարի,  
 Զինչ ասպա մարդոյն գիւրեղծանելի.  
 Որ այսօր 'ի կառս՝ վաղեւն 'ի դադաղս  
 Լքեալ զամենայն յաւիտեան հանգչի:

### ԿԱՐԱՊ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Թէ կեանք մարդոյ է բարեւի,  
 Լինի օրհասն ուրախաւի:

Թէ որ լարտ է առանց մեղքի,  
 Մահէտ 'ընչոյ տալորն չի:

Ճի՛ք. Սարապ թռչունը մեռնելու ատենը  
 կ'երգէր ինչպէս իր սովորութիւն է: Կռունկը  
 զայն տեսնելով ըսաց իրեն. Չեմ գիտեր  
 ի՞նչ կը մտմբտաս որ ասանկ վիճակի մէջ ալ  
 կ'ուրախանաս: Պատասխանեց կարասիւր թէ  
 Կը հասկընամ որ պիտի մեռնիմ կ'ուրախա-  
 նամ. միթէ ճամբէ գուրս անկարգ բան է  
 յայտնել ուրախութիւնս, երբոր զիս կը  
 տեսնեմ այս ետքի կէտիս մէջ որ բոլոր իմ  
 թշուառութիւնս պիտոր ազատիմ:

Օրինակ է առաին երջանիի մարդոսն որ մեռ-

նէլն ասին ըրած Բարեգործութիւնները յիշել  
 Բերելով ի՞նչ արտաքին , որ աշխարհին ընդա-  
 րարեն ի՞նչ ասին . ինչպէս հին ասինք ազգ ճե-  
 իսք որոնք պղայ որ ինչ ծնանէին՝ ինչպիսի , և  
 երբոր յիշել ինչ Դեռանէր՝ ի՞նչ արտաքին :

Լաւ է որ մահու քան զոր ծննդեան ,  
 Արդար օրինօք գիտունք վճռեցին .  
 Քանզի յոր ծննդեան վիշտ չարիք ծագին ,  
 Իսկ յաւուր մահու է չարեաց վախճան :  
 Երանի՜ մարդոյ որ յաւուր մահուան  
 Ընդ գործնս բարեաց հրճուի խնդագին .  
 Սիրտ առաքինեաց ցնծայ ՚ի բարին ,  
 Վայ անօրինաց մահու անվախճան :

## ՋՐՇՈՒՆ ԵՒ ՇՈՒՆ

Պատկ գործոց է կէտն յետին ,  
 Եզր և վախճան իրաց բնաւին :

ԱՄէն Բանին Վերջը նայէ ,  
 Որ Գործեալն էր պատէ :

Ճիշդ . **Ս**էկ շուն մը կ'իյնայ ջրշանն ետեւէն .  
 և ջրշունը անոր ձեռքէն ազատելու համար  
 զինքը ջուրը կը նետէ . շունն ալ անոր ետե-  
 ւէն ջուրը նետուեցաւ լողալով գնաց անոր  
 հետաւ , և այնչափ մօտեցաւ որ բերանը  
 բացաւ պիտի բռնէր . իսկ ջրշունը մէկէն  
 մտաւ ջրին տակն ու աներևոյթ եղաւ : Եւ

այսպէս շունը կորսնցուց որսը այն կէտին  
որ ձեռքովը գրէր էր թէ բռնեցի :

Կրեոսոս Լափառուրը հաբցոաց օր Տը Սողոմ թի-  
ւիսոթային , Թէ Ինչի պէս էրջանիլ ին գպնոսի  
աշխարհիս յէջ . ան ալ պապասխան պոսաս , Թէ  
Մինչեւ երբի ինքը պէտք էր էրանի պայ ճարտ-  
իւր յէծուէր . Վասն զի ամեն գործի վախճանով  
իւ պասխոսի :

Աստ է տեսանել ՎՃիւ Սողոմին ,  
Թէ վախճանն է եղը պսակիչ իրին .  
Մինչև է հասեալ դործ ինչ այն կիտին՝  
Մի վատահանար , տեղի տայ հեշտին :  
Ո՛վ զիարդ ոմանք 'ի մօտի եղին  
Յնծալ հանապաղ 'ի դահոյս բաղդին .  
Բայց 'ի Թարթ ահան ըհատեալ անուին ,  
Վէր 'ի վայր արար խորհուրդ հողածնին :

— ❦ —

## ԱՅՐ ԱՆՀԵՐ

Թէ չէ ինչ քո յատուկ անձին ,  
Ոչինչ օգտեն իրք օտարին :

Թէ բոս բանըր թեղ շահ չընէ ,  
Օտարինն Բնէ պիտի ընէ :

Ճի՞ղ . Մէկ անհեր մարդ մը հարկադրե-  
ցաւ որ գլուխն օտար մաղ դնէ , երբոր օր մը  
պար կը խաղար ընկերներուն հետ՝ անանկ

ուժով ցաթկեց որ մարմինը ցնցուեցաւ  
 և սուտ մազերը գլխէն վար ընկան : Չայս  
 որ տեսան ամմէնքն սկսան խնտալ , խոկ պար  
 խաղցողն ուղեց անոյշ խօսքով մը այս ծիծա-  
 ղը դադրեցընել անոնց ըսելով . Պարօններ  
 սէտք է այսչափ զարմանալ թէ այս մա-  
 ղերը ուրիշ մարդու գլխուն վրայ չեն կենար  
 կ'իյնան , որովհետեւ բուն տիրոջը գլխուն  
 վրայ չեն կրցած կենալ . մանաւանդ թէ իմ  
 յատուկ մազերս գլխուս վրայ չեն մնացած ,  
 ուրիշներ սխաի մնայ :

Ուրիշն Բանը Պեծո-վի-նը խելօք Տարդո-  
 օփո-ս լուսի . Չանա՛ որ դո-ն ունենաւ այն խել-  
 օք այն Պեծո-վի-նը արդարո՛ւմք որ միշտ հեփտ ըն-  
 լայ , և զա-իւնէրո-տ աւ շահ ընէ :

Այսպէս որ ցանկայ ընչից օտարին ,  
 խաբի և մնայ աղքատ և մերկին .  
 Չի այն որ չօգտէ իւր վաստակողին ,  
 Չխաղօ օգտեսցէ օտարաց անձին :  
 Չանա ամբարեւ-քեզ բարիս ներքին ,  
 Եւ մի մուրանար առ դուրս ընկերին .  
 Դիր զիմաստութի սրակ 'ի գլխին ,  
 Չառաքինութիւն զարդ ինչ դադաթին :

## ՈՒՂԵՒՈՐՔ ԵՒ ՍՕՍԻ

Զոր ինչ առնես ապերախտին ,  
Միշտ ապերախտ է յիւր բանին :

Ապերախտին ինչ բան ընէ ,  
Բաւոր ըրածք ծով ինչ Եփես :

Ճիւղ . **(** Ինչ աստղին մէջ մէկ խիստ տաք  
օր մը երկու ճամբորդ զովանալու համար սօ-  
սի ( ըստ ) ծառին շուքը նստան և արեգակին  
տաքութեն անգամ տեղով հոն քաշուեցան կե-  
ցան : Երբոր ծառին ճիւղերուն վրայ կը նայ-  
էին որ պտուղ չի կար վրանին , սկսան իրա-  
րու ըսել . Ահա անպիտան ծառ մը որ բա-  
նի մը շահ չունի . Թէ որ մեզի իյնիր՝ հիմա  
կը կտրէինք կրակը կը ձգէինք : Պատասխան  
տուաւ ծառը . Ո՛վ ապերախտներ՝ հապա-  
այա շուքն որ խմտերեններս ըրեր են բան մը  
չէ , որ զձեզ ասանկ ատեն արեգակին տա-  
քութեն անգամ որ երեւով հազիւ փախաք  
հոս հանգչեցաք :

Ապերախտ Տարդուն ինչ որ ընէս ասին ը-  
րեւար , և իրեն աղէկ-ութի ընողին գեշ ինչ փա-  
նայ . Վասն զի ինչք Տարդ ըն , աղէկ-ութեն ընողի  
որ Տարդիութի ճանչնայ , անոր համար միշտ ասե-  
լի է այ և Տարդուն : Երբոր արեգակն յուլիսի  
17 ին ընդի-ասալին քալել ինչ Բանէ՝ խիստ քա-  
լիւնայ :



Տէս ո՞րպէս խոտի բարերար սօսին  
 Յապերախոտ անձանց՝ յոր պատսպարին .  
 Քանզի որ առնէ բարիս ընկերին ,  
 Չարիս ընդունի դարձ փոխարինին :  
 Արդ մի մոռանար ըստ անըզգամին  
 Հնորհս երախտեաց քոյ բարերարին .  
 Մի հետաքններ զյատկութիւն անձին ,  
 Այլ թէ զինչ բարիք անտի քեզ քաղին :



## ՁԿՆՈՐՍ ԵՒ ՁԿՈՒՆՔ

Որք քաղցրութիւն ոչ ամոքին ,  
 Բռնի ուժով անդէն կակղին :

Ձի խելը յողն անոյլ խօսքով ,  
 Մո՛մ էլ գառնայ Բռնո-ւնէնով :

Ճիշդ . **Ս**էկ ձկնորս մընստեր էր ջրին մօտ  
 սրինգ (կիւիֆ) կը չալէր, կարծելով թէ ձրկ-  
 ներն ասոր ձայնէն կը զմայլին. ու անանկ կը  
 մօտենան իրեն որ ձեռքով կը բռնէ զանոնք .  
 բայց որչափ որ չալեց մէկ ձուկ մը չեկաւ :  
 Ան ատենը ձկնորսն առաւ իր ուռկանն ու  
 նետեց ձկներուն վրայ . ահա բոլոր ձկները  
 բռնուեցան ուռկանին մէջ ցաթկելով . զա-  
 սոնք դուրս քաշելով կ'ըսէր ձկնորսը . խեղճ  
 ձկներ , ես կարծէի թէ դուք երաժշտութի  
 կը սիրէք , բայց հիմա աղէկ հասկըցայ թէ  
 աւելի լաւ կը խաղաք եղեր ուռկանով քան  
 թէ սրինգով :

Անուշոմիլը ամեն փեղ շահ լինէր . շաք ան-  
գամ պէտք է բռնուիլ բան փեսնէլ . վասն զի  
իսն ճարտիկ որ մեշն բռնուիլ լի փեսնէն լին  
իսկընար :

Քաղցրութիւն բանից ոչ յամենայնի  
Յօգտակարաց ինչ վճարել ունի .  
Այլ 'ի ճահ յաւէտ իշխանաւորին  
Որոտալ երբէք 'ի սաստել ռամկին .  
Այսու ապստամբք ճնշին առ ահին ,  
Ըստահակ զաւակք ուղղին խրատին .  
Զի որ ոչ բանիւ դայ յուղիղ կարգին  
Գանիւ բռնութեամբ ուղղի խստագին :

### ԿՈԿՈՐԴԻԼՈՍ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Վայ որ զընկերքո անարդես ,  
Ամենեցուն դու անարդ ես :

Վայ անոր որ զինք լի ճաննայ ,  
Սոք պարծանքով ծաշեր կ'ըլլայ :

Ճիշ . Սոկորդիլոսը զաղուէսն անարդելով  
միայն իր ազնուական ցեղին վրայ կը խօսէր  
և հպարտ ձայնով մը կ'ըսէր անոր . Այ ողոր-  
մելի , ես զքեզ անանկ լիբք կը տեսնեմ որ  
մինչև կը համարձակիս ինձի հետ բարեկա-  
մութի ընելու . դուն գիտե՞ս ես ո՞վ եմ .  
գիտե՞ս որ իմ ազնուականութիւն գրեթէ աշ-  
խարհքիս պէս հին է : Պատասխան տուաւ  
աղուէսը զարմանալով . Այդ բանը ինչ

պէս կրնաս ցուցընել ինձի : Հատ գիւքին  
կրնամ, ըսաց կոկորդիլոսը, վասն զի գիտնաս  
որ հսկաներուն կռուին ատենը ոմանք Աճնե-  
րէն փախան եկան կոկորդիլոս եղան ու Նե-  
ղոս գետին մէջ պահուեցան, ահա ես ալ շի-  
տակ անոնց ցեղէն եկած եմ. բայց դուն  
Թշուառական ուստի՞ կուգաս : Պատասխա-  
նեց աղուէսը . Իրաւ որ այս բանը ամենեւին  
չէի գիտեր և չէի լսած . բայց հաւատո՞ւ  
պարոն կոկորդիլոս, որ ես շատ աշխատանք  
կը քաշեմ գիտնալ թէ ո՞ւր կ'երթամ քան  
թէ ուստի՞ կուգամ :

Ի՞նչ շահ պարծենաւ ծնողաց ձեռքէն Վրայ,  
երբոր ինքը մարտ չէ : Հարուստի ճշտան զա-  
ւանդէն մէկ իշխան ճշտար զարնել . պարծե-  
նալով երեսը զարիւս անոր վար մարդոս զաւան-  
ընալը . ան ալ պապասխան քուսաւ Բէ Ես իմ  
ցեղիս ատըի աշխուսականն էմ, իմ ազգս ինչո՞ւ կը  
սիսի, և քո ազգդ 'ի քեզ պիտի վերջանայ : Հսկա-  
ներուն պարսոսելիք քեզ ճէմ . 621 համարը :

Տէս զունայնութիւն զըրաքան վատին,  
Նախատէ զընկերն իբրեւ գիւցաղին .  
Երկրաքարչ գոլով սողայ ընդ գետին,  
Պանծայ թէ իցէ յԱստուածոց կարգին :  
Եղունկ այնոցիկ որ նման սմին  
Ի վերայ լանջաց ճարակէն յախտին .  
Պարծին ընդ նախնեաց գործս աղնիւ զար-  
Ոչ գիտեն այն է նախատինք նոցին : (մին)

# ՈՒԽՏ ՀԻՒԱՆԴԻՆ

Ոչ է հաճոյ երկնաւորին

Ուխտել 'ի վեր քան զոյժ անձին :

Թէ լաճէր Կոնստանտինոպոլս,

Աստուծոյ քաջ Բան Տէր լընէր :

Ճիշդ. Սէկ երկրագործ մը վտանգաւոր կը  
հիւանդանայ, և հարիւր կող ուխտ կ'ընէ  
Ասկղէսիոսին՝ այս դաշինքով որ եթէ առող-  
ջանայ բոլորը զոհ ընէ անոր : Հարիւր կո-  
վը ուստի՞ պիտի գտնես՝ ըսաց կնիկը, գուն-  
ջէս մտածեր ամենեւին . տէր Ա՛ճ՝ ես մէկ  
հատ մը չեմ տեսներ գոմին մէջ : Պատասխա-  
նեց հիւանդը թէ Վըսթէ ձայնդ . թող իմ  
խնդիրքս կատարուի, հարկաւորասէս ա-  
նանկ բարի է Աստուծոյ որ եթէ հաճի մեր  
հորթովն ալ գոհ կ'ըլլայ :

Հին ապենը Անդէպիոս եւ Բժշկո՛ւն լած .  
որ Ապոլոն լածին որդին ըստու՜մին կերպ հի-  
ւանդո՛ւն որ ըստ ինձ Բժշկել կ'ընէին : Աս-  
տուծոս երկրագործն ալ անոր ուխտ ըրէր  
է իր Կոնստանտին վեր որ հաճոյ Բան լէ . ին-  
պէս իսն յապնէր որ անկարելի ուխտեր կ'ընէն  
պարսպ փեղը :

Ահա քեզ բերմունք մտաց յիմարին ,

Վըշուէ մարդկօրէն ըզբան անբաւին .

Ոչ գիտէ թէ նա յամենայն վայրի  
 Ներկայ և զըննիչ է շարժման սըրտի :  
 Ուսիր երկիւղիւ պատկառ ևալ նըմին ,  
 Ուխտիւք զԱրարիչ պաշտել ջերմագին ,  
 Որում զոհ ընտիր է եռանգն հոգւոյն ,  
 Եւ ոչ բազմաթիւ երամ անբանին :

## ՁԿՆՈՐՍՒՔ

Որ լոկ յուսով ուրախանայ ,  
 Յամբոկ գործոյն անյոյս մնայ :


Միևի յուսով էիւ երես ,  
 Ամէն բանէն պարապ կ'ելլաս :

Ճիթ. **Ձ**կնորաները իրենց ուռկանը ջրէն  
 դուրս կը բաշէին , բայց սովորականէն ծանր  
 ըլլալով մեծ յոյս ունեցան , և մէկմէկու կ'ը-  
 սէին թէ Առանց կարծեաց լաւ որս ունինք .  
 ո՞վ գիտէ հիմա ինչ ձկներ սխտի տեսնենք .  
 մեր ուռկանին մէջ : Ասոնց ուրախութիւր  
 չատ չքշեց . վասն զի երբոր չատ աշխա-  
 տանքէն ետև նայեցան ուռկանին մէջ՝ ու-  
 թիշ բան չգտան բայց մէկ մեծ քար մը որ  
 ջրին ընթացքը բերեր էր հոն :

Օրիւնի է տունց որ իրենց հարկաւոր բանին  
 ետևէ լին ըլլաւ , ու իշնային որ հօրերնուն ապ-

բանից յափշտակեն : Բայց հայրերնին Ռեանելեն  
էպիսկոպոսն Ռեանելեն 'ի զապ ուրիշ Բան լի մը  
նոր յետեւերնին :

Քանիք յուսալից գրնան խնդագին ,  
Գլխովին յեցեալ գիւրասահ բաղդին .  
Զամենայն ըզգործս յաջող ենթադրեալ ,  
Յետոյ չարաչար յուսոյ վերիպին :  
Յորչ լիցի վըճիւ իմաստասիրին ,  
Իբրև բարեկամ քեզ ազգարարին .  
Սիրտ ըզգուշաւոր , ասէ , կասկածի ,  
Հակառակ կողման իւր յաջող բաղդի :



### ԳՈՐԾՔ

Միտք խոհական խորհի զվերջին ,  
Համեմատէ զեւս ընդ մօին :

Խելացի մարդ զապ Բան լենէ ,  
Եստի ու առաջ լաւ իւր լենէ :

ՃԸ. Դորտերը ամառուան մէջ տեսան որ  
իրենց ջրոտ տեղը կը ցամքի՝ սկսան պօռալ  
Թէ Ուր սիտի երթանք բնակինք : Իրենց մե-  
ջէն մէկ ձագ մը պատասխանեց, Թէ Այս մօտ  
եղած հորն երթանք , որուն մէջ լեցուն ջուր  
ըլլալով մինչև բերանը շատ գիւրին հոն կ'ըր-  
նանք մանեւ : Խիստ լաւ , ըսաց մէկ ծեր մը  
իրենցմէ . բայց երբոր ջուրը ցածնայ մենք  
հորին տակն որ մնանք՝ որուն խորութիւն

քսան ոտքէն աւելի է, ինչպէս կրնանք  
անանկ դիւրին դուրս ելլել որ ասանկ գիւ-  
րին պիտի մանենք :

Խելացի խոյն մարդը մշտ ամէն բանին ետեւ  
է յարմար . Իսկ անխոյն պատանին խելէին էլա-  
ծել կ'ընէ, և մշտ էլ սխալի : Ուստի պէտք է  
ծերոջ բան հարցընել և անոնց խրատով բան փե-  
նել որ լի սխալին :

Տէս հասուն մըտաց խորհուրդ գերազանց ,  
խորհի դժուարինս 'ի վախճան իրաց .  
Քանզի փորձ դուով խիթայ յասպառնեաց ,  
Զի մի անխորհուրդ գիպեսցի չարեաց :  
Արդ մի հեռանար դու 'ի ծերունեաց ,  
Ո'ւնին մատուցես բանից փորձառուաց ,  
Որք ոչ վայրապար խորհին և խօսին ,  
Թէ և չեն յարդոյ առ անմիտ մանկանց :



### ԵՐԿՈՒ ԹՇՆԱՄԻՔ

Որ ոխս ունի ընդ ընկերին ,  
Դաշնակից է սատանային :

Ոի պահելով ոչ լաւ կ'ուշե ,  
Չաբին բերան չինս ինչեքե :

Ճշմ . Երկու մարդ մէկըմէկ մահուչափ  
կ'առնին , եղաւ որ այս երկուքը մէկ նաւով



Ճամբորդութիւն ըրին : Երբոր լեցուն հովով  
կ'երթային , ալէկոծութի մը ելաւ անանկ  
սաստիկ՝ որ նաւը հովին բռնութիւն ծովին  
զարնելով փառատեցաւ , տակը բացուեցաւ :  
Այս վերջին խեղճութիւն երբոր երկու ճամ-  
բորդները ջրին մէջն էին ընկեր և իրաւ  
կըտեսնէին որ պիտի խղզուին՝ սկսան միմի-  
թարուիլ , զի կ'ըսէին մտքերնուն մէջ , թէ  
որ ես կորսուիմ , ահա թշնամիս ալ ինձի  
հետ կը կորսուի :

Արեւոթիւնը անանկ իւր հաշիւէ զճարտ Դ  
մեւն ճահին Դուռն իւր հասնի , ու թեւ սրբէ  
չհանելով սաքանային իւրախուր ի'ւրեայ : Փիւն-  
դայ իւր ի'ւրեւր , թէ Դ ի'ուրեւ Բնամիւր լեւծ  
առնել՝ անիւ աշիւ եւիւր :

Զիւրդ ապաժոյժ կիրք դժոխային  
Անհամբոյր սըրտի ատելեաց կըրկին .  
Մինչ հասեալ ժանեաց սեաւ մահաբերին  
Լինին վրիժառու յայն կէտ խաւարին :  
Բաբէ կուրութիւն խորհրդոց նոցին ,  
Ո'չ հային ո՞ւր կան յոր սահման հասին .  
Այս գործ է ահա ըսկըզբնաչարին  
Որ այսպէս ըզմարդ առնէ իւր բաժին :



## ԱՌԻԻԾ , ԱՐՋ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Խըռովարարք միշտ վընասին ,  
Այլ ոք չահի՝ ինքեանք ծաղըին :

Կըռռռա մարտիի վընաս կ'ընեն ,  
Անձ աղող չահի ինքեան :

ՃԼԷ. Լ՝ ուիւծն ու արջը իրենց մէջ խռովե-  
ցան մեղրի փեթակին համար որ գտեր էին  
կաղնի ծառին խռոցին մէջ . երկուսն ալ կը  
ջանային որ յափշտակեն առանց իրար մէջ  
բաժնելու : Շատ լաւ կ'ըլլար թէ որ երկու  
բաժին ընէին . վասն զի երբոր իրարու հետ  
կը կռուէին՝ մէկ աղուէս մը կամացուկ մը  
եկաւ մօտեցաւ մեղրին՝ ու բոլորը լափելով  
կերաւ փախաւ :

Շաք անգամ էրին- էշբայր , և էրին- բարե-  
կամ իրարու հետ լին հաշտութիւն մինչև որ մէջեր-  
նուն մէկը լիւռնի , կամ մեծ ձիւս մը լսալին . ձիւս  
չի ան ապենց իրենք իրենց կ'ոգան և շաք մը ին  
հաշտութիւն :

Ահա հատուցումն անմիաբանից ,  
Ջըրկեն ըզմիմեանս 'ի սիրոյ ընչից .  
Այլոց առնեն չահ , ինքեանք մերկ թափուր ,  
Երբ օտարք չահին՝ վերջ լինի վիճից :

Քանի՞ շահաբեր է միաբանից  
 Մասնակցել սիրով միմեանց ըզբարիս .  
 Զի զինչ քաղցրութիւն և զինչ բերկրակց,  
 Քան սիրել սիրել՝ գոյ հարազատից :



### ԱՍՏՂԱԲԱՇԽ

Զինչ շահ զննել զաստղըս վերին ,  
 Ոտուք սահել 'ի գուք խորին :

Ինչ շահ ձեծ ձեծ Բաներ խօսիւ ,  
 Պըշտի Բանով խոսիւ ինչիւ :

ՃԼԳ. Սէկաստղաբաշխ մը քաշելով կը դի-  
 ւար աստղերը , բայց շատ լաւ կ'ըլլար եթէ  
 իր ոտքին վրայ նայէր : Այսին զի երբոր աչքը  
 վերցուցեր միակերպ երկինքը կը գիտէր ,  
 ահա մէկ հոր մը փորած էր ճամուռն վրայ՝  
 որ առանց նայելու անակ մօտեցաւ՝ մինչև  
 ընկաւ մէջն ու խղճուեցաւ :

Թառեւ ինչիստիան օր Տէ Գործիւն յետեւ եր-  
 ևալով աստղերէ և Տիպէր , ընկաւ խօսի Տէ Տէ .  
 Ժառան հասաւ ու շինեւ անկէ հանէ , ըսալ՝  
 Երկինք Բաներէ Տիպէրն քեզ աստիք ասիւ  
 ըսայիս : Խրատ է անանց ու իրենց Բանէ և Բ-  
 շան ու իրենց մէջ Բաներն քեզ և իման ,  
 և երբեք հասաք իմ լեզու հակաճառութի կ'ը-  
 ղին ու Տէիկն խօսի և գլորին :



Ճէգ. Աստղաբաշխ: Ճէժ. Առիւծ և Գորտ:



Ճինա. Աբաղաղ և Բազէ: Ճինդ. Աղահ և Անցաւ որ:



Ճինե. Եղն և ձաղ իւր: Ճինդ. Աղուէս և Ախնճ:



Օրինակ է այս ընդվայր շրջողին ,  
 Թողեալ զօգտակարն քննէ ըզվերին .  
 Ոչ գիտէ թէ ո՞ւր իւր վիճակք յանդին ,  
 Շրջի իմանալ ըզբան օտարին :  
 Մի հետաքններ զոր քեզ ոչ օգտին ,  
 Պնդեա՞ գինի վայելչականին  
 Եւ օգտակարին և փառաւորին ,  
 Որով պերճ մնաս 'ի քոյդ վիճակին :



### ԴԼԲԻՆ ԵՒ ԴՈՆ


Մի պահանջեր վրէժս յայլմէ ,  
 Զի մի և քեզ նոյն չար հասցէ :

Վրէժին ԴԻՆ ալ-ը Տ'ԸԼԼԵՐ ,  
 Զէ Նէ Կո-Գա, ԳԼԽԽԻ ԴԵԺ ԼԵՐ :

ՃԼԴ . <sup>6</sup> Վրին ձուկը ետեւէն էր ընկեր մէկ  
 դոն ձկան մը վրէժխնդիր ըլլալով նախա-  
 տանացն որ անկէ տեսեր էր : Դոն ձուկը  
 փախաւ ծովին եզերքը (+էնաւը), դէքինն ալ  
 ետեւէն վազեց : Իսկ դոնը անոր ձեռքէն ա-  
 ղատելու համար ցաթկեց աւաղին վրայ ,  
 դէքինն ալ անոր ետեւէն ցաթկեց . բայց  
 ինչպէս պատճեցաւ իրենց յանցանքը՝ եր-  
 բոր երկուսն ալ անանկ ձգած մնացին հոն :  
 Որովհետեւ իրենք ջրէն դուրս ըլլալով օգին  
 մէջ մնացին , ու անանկ տկարանալով մե-  
 ռան , և չառ զղջացան որ իրարմէ վրէժ առ-  
 նելէն 'ի զատ ուրիշ բան չի մտմբտացին :

ԴԼԲ Ինն է (եօնուղ), և Դունն է (փալամուտ)  
 յոմե ու օր օրինակ էն ապելի մարտիանց . բայց  
 չափ անգամ երկու Լինամի այնչափ իրարու հետ  
 ի'իյնին ու ինչև իրարու գլուխ ի'ոսպեն :

Տեսեր զպատուհաս ոխակալ չարին ,  
 Զխորդ յայն պատիժ կորեալ ընդ նմին .  
 Զի որ ոչ ներէ չարեաց ընկերին ,  
 Ոչ թողցին յանցանք իւր յատուկ անձին :  
 Այս քեզ է խրատ մարդ ընկերական ,  
 Մի ատեր զընկերն ըստ ձկանց բերման .  
 Սիրել և սիրել քեզ է սեպհական ,  
 Կեալ որպէս ըզմարդ և ոչ զերթ գազան :



### ՄԵՌԵԼԱԹԱՂ ԵՒ ԲԺԻՇԿ

Որ անիրաւ ջատագովե ,  
 Զերթ չաղակրատ յայլոց ծաղրի :

Մի պարծենալ Լէ Բան գիպէս ,  
 Հապա Դիւ Լէ Բան ճ լիպէս :

ՃԼ. Սէկմեռել թաղող մը կը թաղէր իր  
 դրացին . երբոր գերեզմանը կը ըննցը-  
 նէր լեցընելու , տեսաւ բժիշկը՝ որ դեղ  
 ըրեր էր մեռելին երբոր հիւանդ էր , ուս-  
 տի ըսաց անոր , Ես զքեզ անանկ վարպետ  
 կը տեսնեմ որ կարծեմ թէ կրնայիր հի-  
 ւանդն ըռննոցընել : Պատասխանեց բժիշ-  
 կը , թէ Որչափ որ կրցայ նէ ըրի . բայց



այդ մարդը գէշ հիւանդութեան մէջ էր :  
 Կրկնեց մեռել թաղողը գլուխը շարժելով .  
 Թէ որ անանկ չըլլար քու ձեռքդ կ'իյնիր :

Լեզուանի մարդը իարժէ թէ խօսող գործած  
 յանդան է ինչ գոյէ . Բայց չափ անգամ աւ ծաշը  
 կ'ըլլայ եւ ինչ խօսողը կ'իյնի : Ասանի մէկ լեզու-  
 նիին ըսայ Զենան թէ Անանջեբտ լեզու էն  
 Դարձեր :

Այսպէս և զրկողք արդար երևին ,  
 Պատճառ տան գործոց ոչ զիրաւացին .  
 Որով 'ի բազմաց իբրև շաղակրատ  
 Արդար օրինօք մերժին հալածին :  
 Արդ մի հետեիր ունայնախօսին ,  
 Որ բազում բանիւք խաբել հնարին .  
 Քանզի բանք ոչինչ վըճարել ունին՝  
 Թէ ոչ ընդ գործոց արդեամբք լծակցին :

## ԹՈՉՆՈՐՍ ԵՒ ՕՁ

Որ ընկերին չար ինչ խորհի ,  
 Նովին չարեօք պատուհասի :

Ո՛վ որ էշօր չաւ ինչ իշի ,  
 Ինչն աւ չարով ինչ էրստի :

ՃԼԻ՛ . Սէկ թռչուն որսող մը կ'աշխատէր  
 որ թռչուն բռնէ . երբոր վար ծռեցաւ որո-

դայլժը լարելու, օձ մը խածաւ ոտքը. Ո՛հ  
կանչեց մարդը ես արժանի եմ այս բանիս,  
որ ինձի եղաւ. ի՞նչպէս կրնամ տրտնջալ  
թէ կուղէ օձը իմ կեանքս վերցընել, որով  
հետեւ ես ուրիշ բան չեմ մտածեր, միայն  
այլոց կեանքը վերցընելու կը նայիմ :

Անխաւ օրէնք է թէ որ ի՞նչէն քեզի ազելի  
ըլլայ, դո՛ւն աւ ուրիշէն ազելի ըրէ. Բէ որ ի՞նչ  
չէն քեզի մէջ գեշութիւն ընէ, դո՛ւն աւ ուրիշ  
չէն Տ'ընէր. Վասն զի ինչ որ ընէս, դայն իճ գտնէս:  
Առաջ է Բէ Սո՛ւր առնողը սրով ի՛նչընայ :

Այս արդար պատիժ է չարակամին

Միայն ըզջարիս այլոց խնդրողին .

Ձի որ չար կամի՝ չարն է իւր բաժին ,

Ձոր ինչ և կշռէ՝ կշռի չափ նովին :

Թէ խնդրես բարիս՝ բարիք քեզ պահին .

Գործքքո և քո սիրտդ քեզ ուղիղ դատին .

Մի ցանկար այլոց չարիս այլ բարին ,

Ձի արկածք չարեաց ի՛քէն հեռացին :



## ԱՒԱՆԱԿ ԵՒ ԴԻՈՍ

Որ ոչ է գոհ յիւր վիճակի,  
Ուր և գընայ յաւէտ ծանրի:


Թէ մէկ լիշտէն քախլէլ աւելն,  
Աւ թծին մէջ քէշ իւժգէն:

Ճէ. **Պ**արտիզպանին էջը կը ձանձրանայ  
ամեն առտու գիշերանց ելլել խոտ տանել  
վաճառանոցը: Օր մը աղաչեց Դիոսին որ  
ղինքը անանկ մէկ մարդու մը տայ որ կա-  
րենայ գէթ քնանալ: Ըսաց Դիոս թէ Ա-  
նանկ թող ըլլայ. նայիս որ ըսածին պէս  
էջը գործելի ծախողի մը տուն գտնուեցաւ:  
Երկու օր չի կրցաւ կենալ հոն՝ սկսաւ զըղ-  
ջալով փնտրուել զպարտիզպանը. ես անոր  
տունը կ'ըսէր երբեմն կաղամբի (լահանայի)  
տերւոնէր գաղտուկ կ'առնէի կ'ուտէի, բայց  
հոս ի՞նչ կը վատարկիմ գործելի տանելովս,  
ծեծ ուտելէն 'ի զատ ուրիշ բան չի կայ:  
Ուրեմն պէտք եղաւ անոր ուրիշ վիճակ  
խնդրել: Դիոս դրաւ զայն մէկ խաղա-  
խորդի մը (քապախի) տուն. իսկ էջը չէր  
գիմանար կաշինէրուն գէշ հոտին որ կը  
կրէր: Ուստի անանկ ուժով պօռաց որ չի  
կրնար ըլլալ, և խնդրեց երրորդ անգամ  
մէկ ուրիշ տէր մը: Ան ատենը Դիոս ըսաց  
անոր թէ գուն խելք ունենայիր առջի

տիրոջդ տունը կը կենայիր : Թէ որ քեզի  
 ուրիշ նոր տէր մ'ալ տամ գուն գոհ պի-  
 տի չըլլաս ինչպէս մէկաշնոնցըրիր : Ապա կե-  
 ցիր ուր ես նէ . չըլլայ թէ ուրիշ տեղ ա-  
 նանկ առիթ մը գտնես որ աւելի տրանջաս :

Անդադար գանգառը ճարտը խործէ Լէ Կել  
 ինքեւն իւ հանդարտի . Բայց պէտէ է իւ սիրտ  
 և գէշ Բնութիւն ինքեւ որ հանգւի . ուստի ասանկ  
 ճարտուն գլխէն իորձութիւն լի պախիր : Հոր-  
 ցոյնն ինքեւսոյն Լէ Աշխարհս ինչ ծանր  
 Բան ունի լճան . ան ալ լսաց Լէ Ծոյն և իւր  
 ճարտը :

Այս գործ է տժգոհ ծոյլ հեղգասիրին ,  
 Զանայ անվաստակ կալ 'ի քուն խորին .  
 Ի փոխել վիճակ կարծէ թէ փոխի ,  
 Իւր անասնական յատկութի ներքին :  
 Արդ մի գանգաւոր ըստ տրանջողին ,  
 Զի մի գիպեսցի քեզ չարիք կրկին .  
 Ուր և լինիցիս գու ընդ քեզ տանիս ,  
 Յոր վիճակ մտցես ընդ քեզ կամք քոյին :



## ԱՌԻԻԾ ԵՒ ԳՈՐՏ

Ի զի երբեք զառիւծ հզօր  
Ահաբեկէ գորտ ինչ անզօր :


Շաք հեշ անանի Բան իւր Կեննէն  
Չի կարծածէր որ կ'անարգէն :

ՃԸ. Սէկ առիւծ մը ջրօտ տեղի մը բով  
սլառկած ըլլալով քունը հոն կը տանի : Եր-  
բոր խորրունկ քունի մէջ էր՝ մէկ գորտ մը  
սկսաւ պօռալ . այս ձայնէն առիւծն ար-  
թընցաւ , կարծեց թէ զօրաւոր կենդանի  
մը եկեր է հետը կռուելու , մէկէն ելաւ  
չորս գին կը նայէր . բայց ինչպէս զարմա-  
ցաւ երբոր տեսաւ թէ մէկ գորտ մը զինքը  
անանկ սաստիկ վախցուցեր էր :

Որչափ Ձեռն-Բի ունենա՞ն ուրիշ լէ ուրիշ Կան  
առնեն աղտաբլ . Վասն զի շաք անգամ Վար Տար-  
դիի Բագա-որները իւր Կռուողնէն : Եւ երբեք  
երեսէ յգած Տարդիի անանի Բաներ կ'ընեն որ Տար-  
դը կ'անհաշտեն :

Տէս զիւրդ հզօր առիւծ ամենին ,  
Գողայ 'ի ձայնէ կենդանւոյ ջնջին .  
Որ օրինակ է փարթամ հզօրին ,  
Չաղքատս ըզփոքունս յաւէտ ծաղրողին :

Արդ մի ոտնհար լինիր տրկարին ,  
 Թէ և յարքայից բազմիս 'ի գահին .  
 Զի փոքունք երբէք արտաքոյ կարգին ,  
 Ահաբեկ առնեն ըզսիրտ արքային :



### ՀՆԴԻԿ

Օճառ և ջուր ո՛րչափ իցեն ,  
 Մաքրեւ զհնդիկ ոչինչ զօրեն :

Ի՞նչ շահ 'լնէ հիներն ըսին .  
 Սեին սապոն խրատ խնին :

ՃԼԹ. Ս' էկ մարդ մը միտքը գրաւ որ ճերմակցրնէ սև հնդիկ մը . ուստի ջուրը խօթէր կը լուանար և կ'աճըռէր , բայց փուճ տեղը աշխատեցաւ . վասն զի շատ աճըռվելովը անկէ ետև առաջուանէն աւելի սև երևցաւ :

Հնդիկի կամ սև մարդիկ օրինակ են պինդ գլխով մարդոս որ ինչ ընեն լին իրնաբ խօստ հասկըճնել' ինչպէս որ սևն աւելի ճերմկանաւ . վասն զի 'լնեն թէ անոնց կաշիին քակը Բաբայի մաշի ճէկայ որ ձեռն չունին , անիկց է սև-սևից որ իրենց րեղէն և արեգակին ուժէն 'լըւայ :

Զի՞նչ շահ լուանալ զսեաւ ամբիկեցի ,  
 Որ ըզսևութի ընդ մորթով ունի .

Զինչ շահ խորատե՛լ՝ զյիմար կամակոր ,  
 Որք ուղիղ գընեն զոր ինչ և խորհին :  
 Արդ մի վայրապար ուղղեր զայնպիսին ,  
 Ոյր անուղղութի՛ն է կանոն անձին .  
 Քեզ լիցին կանոն վերիպանք նոցին ,  
 Առաքինանալ ըստ ուղիղ բանին :



### ՎԱՃԱՌԱԿԱՆ ԵՒ ԾՈՒՎ

Փորձել զփորձեալն է յիմարին ,  
 Որ կըրկնակի փորձի յանձին :

Փոքած Բանը Ժոքել Լոպէս ,  
 Որ նոր Ժոքանք Կեղևի Բերէս :

Ճիս . Ս աճառական մը կը բարձընէ նաւը  
 ապրանքով՝ գէտ 'ի Հնդկաստան կ'երթայ :  
 Երբոր առաքասոր բացին հովը յաջող էր  
 և ծովը հանդարտ . բայց հազիւ թէ նաւա-  
 հանգստէն հեռացան մէկէն 'ի մէկ հովը փո-  
 խուեցաւ և ծովն ելաւ , անանկ որ նաւը  
 մընց բերաւ մէկ աւազոտ տեղ մը զարկաւ  
 հոն նստեցուց : Իսկ վաճառականը բոլոր  
 ապրանքը կորսընցնելէն ետև՝ նաւուն մէկ  
 տախտակովը հազիւ ազատեցաւ : Քանի մը  
 օրէն ետև երբոր ժուռ կուգար ծովուն  
 քով ուր տեղէն որ նաւ նստեր էր տեսաւ ծո-  
 վը հանդարտ , իրեն կ'երևնար թէ կ'ըսէ որ  
 նորէն նաւով տեղ մը երթայ՝ ուստի սկսաւ  
 պոռալ . Անդգամ ծով փուռ տեղը կ'աշխա-



տիս զիս խաբէլու սուա հանդարա ըլլա-  
լովք: Ով որ կ'ուզէ թող հաւատայ, իմ  
կողմանէս ես ամենեկին չեմ մոռցած անցած  
օրեր ինձի ըրածներդ, ես այնչափ փոփո-  
խամիտ չեմ որ հաւատամքեզի երկրորդ  
անգամ որուն անհաւատարմութիւն փոր-  
ձով տեսեր եմ:

Ծովն է օրինակ աշխարհիս որ անոյշ հոն-  
դարս երեսնաւով շատ մարտիի թորձո-ւնէ մեջգէր  
իւրաքանչեւ է. Բայց ափսոս որ ամեն անգամ  
աւելի-ծո-ւնան մեջ կ'իյնանք և լինք աբեւնաբ  
վոճառ-ականին պէս որ առիւններէն հեռո- կե-  
նաւով մեյճաւ լընիս- թորձո-ւնէ մեջ:

Ահա իմաստուն բան խոհականին

Որ ըղգուշանայ փորձ դընել անձին.

Ձի որ ոչ փախչի յառթից փորձողին


Անդէն անկանի 'ի վրաանդ կըրկին:

Ծովն է այս աշխարհ ըստ տարացուցին,

Հեզիկ ծածանմամբ քաղցր է անփորձին.

Արդ մի հաւատար տեպէան արտաքին

Ձի մի ընկղուզէ զքեզ յիւր կոհակին:



## ԱՔԱՂԱՂ ԵՒ ԲԱԶԷ

Ի՛ վաղանցուկ պարծանք չարին,  
Անդ 'ի հրճուիլ փութով պատժին:

Մի գոռուկն ալսոց վերան,  
Զի պարծանալու չեմար երկայն:

Ճիսմ . Երկու աքաղաղ չարաչար կը կը-  
ռուէին մէկ վառեկի մը համար որ մէկզմէկու  
կընախանձէին: Ինչ և իցէ մէկ աքաղաղը  
յաղթեց մէկալին, յաղթուողը փախաւ բա-  
կին մէկ կողմը քաշուեցաւ կեցաւ: Իսկ յաղ-  
թող աքաղաղը թռաւ ելաւ հաւնոցին վրայ  
որ երգելով իր յաղթութիւնն իմացնէ.  
Բայց այս ուրախութիւնս երկար չկրցաւ  
վայելել, վասն զի երբոր թռերը կը զար-  
նէր և ուրիշ բան չէր մտածէր բայց եթէ  
իր ուրախութիւնը յայտնել ամենուն, ա-  
հա բազէն՝ որ զայն յայտնի տեսեր էր հաւ-  
նոցին վրայ՝ յանկարծ վրան հասաւ յափըշ-  
տակեց:

Ամբարբաւան մարդը յաջողութի՛ն որ գտնէ աչ-  
խարհ և տեսելով զամենաւ գեղեւ ի՛նչ . Բայց  
նոյն յաջողութիւն վերջապէս իր գլուխը ի՛նչ փ-  
շաք ամբարբաւան մարդի՛ն երեսո գործին վրայ  
պարծելու ապենը լարաւար պաքոռհասեցան:

Արժանի պատիժ է անըզգամին,  
 Անդ հըրճուիլ 'ի չարն հանդիպի չարին.  
 Խոնարհք յանկեան ինչ ապահով նըտին,  
 Հըպարտք 'ի բարձունս չարաչար ծախին:  
 Զինչ օգուտ գործեաց այն յաղթականին,  
 Երբնոյն յաղթութի առթեաց մահնըմին.  
 Զինչ շահ ճոխանալ 'ի վերայ այլոց  
 Ուր այլք 'ի կեանս են իսկ ինքն յօրհասին:



### ԲԷՇԿ ՄՇԿՈՅ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ

Լաւ է տալ մասն ընդ բոլորին,  
 Զոհել զփոքրն առ սէր մեծին:

Շաք աղէկ է մաս իւր յեղէլ՝  
 Բոլոր մարմինն ամբողջ պահել:

Ճիսք. Որսորդները մէկ ջրչան մը ետեւ  
 կ'իյնան որ որսան, և իր անդամէն դեղեր չի-  
 նեն. որովհետեւ սովորութի է որ ասոր ա-  
 մորձիք մարմինը կը գործածեն օգտակար  
 դեղի համար շատ հիւանդութեց գէմ: Իսկ  
 ջրչունը գիտնալով անոնց միտքը՝ հասկըցա-  
 ծին պէս թէ չպիտի կրնայ ազատիլ անոնց  
 ձեռքէն՝ բռնեց իր անդամը ահռանքնովը  
 փրցուց վար ձգեց: Զայն որ տեսան որ-  
 սորդները առին իրենց ուղածը և անով շա-  
 տացան ու ալ ետեւէն չի գացին ետ դարձան:  
 Եւ ասանկ իր խոհեմութիւնը ջրչունն ազա-  
 տեցաւ որ շատ խմաստութիւն մտածեց մէկ

անդամը սրահսեցընել՝ երբ չէր կրնար պահել և բոլոր մարմինն ազատել :

Ջրշահը կ'ըսուի Բեշի մէկոյ (գունտուղ) որ է երկաթեղաղ և շան նման կենդանի . Բայց պուլը իման ի՞նչ նմանի . որովայնին փախը լորս պարի ունի իբր ամբիթ և լեցոուն հոփաւեփ հիւ-նով որ մուշի (միսկ) կ'ըսուի . և իր անդամը ունի Բժշկական զօրութի շափ հիւանդութեանց դէմ : Ասոր գործքէն պիտի սորվինք և ի՞նչ քիմիա զնախաջ և ի՞նչ քիմիա զնախաջ :

Գործ է խոհական ի լինել առթին  
Փոքրը չարն ընտրել խափան տալ մեծին .  
Ի ճահ է զոհել զանդամս ըստորին ,  
Պահել ըզգըլուի մասն հականին :  
Գլուի և բոլոր ըստ տիրականին  
Կրթոն և հաւատք են որպէս ասին .  
Արդ ի պահել զայն յաւէտ պատշաճի  
Զոհել զամենայն ըզկեանս աշխարհի :

## ՀՈՎԻՒ ԵՒ ՇՈՒՆ

Հահատիրն սըրտի բերկրանք ,  
Են օտարաց չարիք զըրկանք :

Անխաւերը միշտ ի՞նչ Բաշխայ  
Այլոյ զնախ ի՞նչ շահ ըլլայ :

Ճիշդ . Սէկ հովիւ մը շատ անգամ իր շանը կուտար՝ որչափ որ ոչխարներէն կը մեռնէին

հիւանդութիւնք։ Օր մը խիստ գէշ ոչխար մը  
կը հիւընդնայ, ան ատենը շունը սովորակա-  
նէն աւելի տրտում երեցաւ։ Հովիւը եր-  
բոր հարցուց անոր պատճառը, պատասխան  
տուաւ թէ Այս է պատճառն որ չեմ կըր-  
նար առանց տրտմութեան տեսնել ասանկ մէկ  
հատիկ պատուական ոչխար մը որ մեռ-  
նելու վտանգի մէջ է։ Պատասխանեց հո-  
վիւը, թէ Ի՞նչ պիտի ըլլայ այս երեսպաշ-  
տութիւն որ կ'ընես ինձի, որովհետեւ դուն  
քու շահդ իմինէս շատ աւելի կը նայիս,  
փուճ տեղը կեղծաւորութիւն կ'ընես. գնա  
սրկէ ես լաւ գիտեմ որ դուն չես ցաւիր  
իմ ոչխարիս համար, հապա կը վախնաս որ  
ըլլայ թէ ըսընտնայ ու ձեռքէդ ելլէ։

Ահաաւեր կամ ինքնաւեր մարդը ինչն որ  
իւրեն շահ ըլլայ ուրիշին ինչ կ'ըլլայ ըլլայ, և ա-  
տիւ ամենին ուրիշի խաւարդութեւն չլայ, որ է  
շան բնութիւն։

Ահաաւեր ժըլաոք համանման սըմին  
Կեղծեալ վըշտանան ընդ մահ ընկերին .  
Բայց յորժամ անտի ելանէ բաժին,  
Հրճուին 'ի հոգի ընդ օգուտ անձին։  
Ձինչ քան զայս զազիր գործ որկրաժեալին,  
Ուր չարիք այլոց են իւրեան բարին .  
Դառն է այնպիսւոյն գիտել յազգակցին  
Բարիս որ միակ է պատիժ սրբոյն։

## ԱԳԱՏ ԵՒ ԱՆՑԱՒՈՐ

Այն որ թաղէ սիրտն ընդ գանձին ,  
Անդ 'ի գեհեանն աստ 'ի գետին :

Թէ որ Դնէս սիրտդ 'ի յուրին ,  
Եւստի 'լ լուսն Դիւան Բաթին :

Ճիսիւ . **Լ**գահ մարդ մը կը թաղէ իր գանձը մէկ արտի մը մէջ , բայց չկրցաւ անանկ ծածուկ ընել որ իր գրացին չտեսնէ : Ուստի երբոր ագահը գնաց անկէ՝ գրացին հասաւ հոն հանեց ոսկին առաւ տարաւ : Մէկալ օրը ագահն եկաւ որ նայի իր գանձը , բայց ի՞նչ կսկիծ եղաւ երբոր բացաւ , ու բան չգտաւ հոն , աշխարհք չկրնար սրտամէլ անոր ըրածը , ի՞նչպէս կը կանչէր ի՞նչպէս կուլար և մաղերը կը փեթտէր մինչև յուսահատեցաւ : Այս ձայնն որ տուաւ մէկ ճամբորդ մը հոն վազեց ի՞նչ կորսընցուցիր , ըսաց անոր , որ ասանկ կեանքէ կ'ելլես : Պատասխանեց թէ Գանձս կորսընցուցի . որ ինձի հազար հեղաւելի սիրելի էր քան իմ կեանքս որ այս քարին քով թաղեր էի : Կրկնեց մէկալը թէ Առանց զքեզ աշխատցընելու բերելով այսչափ հեռու տեղ ինչո՞ւ համար տունդ չսրահեցիր որ ամէն անգամ երբոր պէտք ըլլար կարենայիր դիւրութիւն հանել ոս-

կիդ : Հանե՛լ իմ ոսկին , պողաց ագահը ,  
բէ՛հ , ես այնչափ խեղճ եմ որ հանէի , ա-  
մենևին չդպէի պիտի անոր : Ան աւըսաց  
թէ երբոր չպիտի դպէիր ինչո՛ւ համար  
այսչափ կը ցաւիս . ո՛վ բարեկամ քար դիր  
դանձիդ տեղը , ան աւ անոր բանը կ'ընէ  
քեզի :

Բիա՛ս ժիւիսո՛րային հարցո՛ցին Լէ Ո՛վ է  
աղփապ ողորմելի . ան աւըսաց Լէ Ագահն է , որ  
սիրան ու հոգին ճաշելէն ետե՛ս՝ դիպած ապրան-  
քէն լինար ամենեւին վայելել , եւ իեանքն աւ հո-  
գին աւ անոր համար ի՛նչ էրեւոյցնէ :

Աւա՛ղ կուրուԹԷ մըտաց ագահին ,  
Ամիսփէ 'ի հողըզսիրտ և հոգին .  
Այն որ է կարգեալ 'ի դիւր մարդկու՛ն  
Տես զիա՛րդ քաղէ զհոգի անմըտին :  
Դանձի այն ոսկի առ սնունդ անձին ,  
Նա մաշէ զայն անձն առ սէր սընուցչին .  
Արդ մի մատնէր զայն թաղեալ 'ի հողին  
Առ անբան սիրոյ առ անբան ոսկին :





## ԵՂՆ ԵՒ ՁԱԳ ԻՒՐ

Որ ոչ է փորձ ոչ գիտէ չափ ,  
 Ձանձին իւր կար գատի անչափ :

Ո՛վ ո՛ր ի՛րեն լա՛գ է խո՛րէ ,  
 Ձին ո՛ն ա՛նեն է՛ր ի՛ն Դ՛ն :

Ճիսէ. Եղնիկին ձագը կ'ըսէր իր մօրը թէ  
 Բնութիւն ինձի անանկ մեծութիւններ տուեր  
 է չնէն աւելի որ անկէ ամենեւին վախ մը  
 չունիմ. թէ որ սրտտահի, կ'ըսէր, շանը հետ  
 կուուէլու՝ գրեթէ առանց աշխատանքի սկի-  
 ւի յաղթեմ անոր. վասն զի ես շատ բարձր  
 և անկէ զօրաւոր ըլլալէս՝ ի զատ, իմ գլուխս  
 եղջիւրէ զէնք մը ունի և շունը բան մը  
 չունի: Պատասխանեց մայրը. Որգեակ ըզ-  
 գոյշ կեցիր անոր հետ իյնելու, գուն անոր  
 չես հասնիր, թէպէտ փծ զգուշացաւ իրեն  
 եղջիւր տալու և քեզի տուաւ, բայց անոր  
 անանկ սիրտ մը տուած է որ գուն չունիս  
 ամենեւին:

Ասաբանիք յարգե լաք բան ին խօսի քանը  
 Պէջ, Բայց Լինաթին ո՛ր քէսնէ Լեւին ին պապո՛ւի:  
 Անիւէլ է ո՛ր ի՛ր լա՛գ է ի ձանլաւ՛ւ ղինո՛ւ Դ՛ն  
 Դաւորնէրուն իարգէ ին Դ՛ն:

Այս թերակատար բերմունք են մանկանց  
 Որք դնեն զանձինս 'ի չափ վեհազանց .  
 Ամէն գթուարին հեշտ թուի ինքեանց ,  
 Զի խակ և անփորձ են բազում իրաց :  
 Մի՛ դներ ըզբեզ 'ի կշիռ քաջաց ,  
 Եւ մի անխորհուրդ լինիր ինքնասպանծ ,  
 Կշռեա խորհրդով զայլոց զօրութիւն ,  
 Գտանես յոլով գործս սքանչելեաց :

### ԱՂՈՒԻՍ ԵՒ ԿԻՆՃ

Խորհմ' բնութի հնարէ ճարտար  
 Նախ քան զարկած նսրաստ և ճար :

Խելի ունդին չկայ ինչ լար ,  
 Վշտա լեկած ին գանէ ճար :

Ծխոյ՛ **Ս**էկ լեռան խող մը կը սրէր ակռա  
 ները ծառի մը կոճի վրայ , զայն տեսնելով  
 աղուէն ըսաց իրեն , թէ Որո՞նք հեռ կը  
 սպասորաստուիս ծեծկուելու , որովհետեւ հի  
 մա ոչ չուն կը տեսնես և ոչ որսորդ : Պա  
 տասխանեց խողը . հէ՛ պէտք է սպասել որ  
 անոնք ետեւս հասնին ես հապա իմ զէնքս  
 սրեմ՝ երբոր ան ստենը մտածելու ժամա  
 նակ ալ չեմ ունենար :

Ամէն ճարտ պէտք է ապենով իր Բանը հոգալ  
 Իրեն պիտոսական Բանը գիտնալ , և ունեցած

Խելեռիւն զինքն խառնաւաբել խոհեմութիւն որ ցան-  
կարծ խորհութիւն ճշմարտ գաւազ խելիւն լըլըլայ :

Գեղեցիկ խորհի նախատեսն բնութիւն  
Պահել յարկածից վայրագ զանապուհն .  
Զի յամենեւին գոյ զէն զօրութիւն ,  
Թէ 'ի դէպ դործէ յաղթէ թշնամուոյն :  
Միայք և լոյս բանին է քաջ զէն մարդոյն ,  
Միակ կառավար բանական դատումն .  
Սրեա՛ փայլեցո՛ զայն ոյժ զայն ցորմունս ,  
Լիցի քեզ պաշտպան 'ի դիպող ժամուն :



#### ԿԱՐԿԱՏԻՉ ԲԺԻՇԿ

Բանն է շնորհեալ ամէն լեզուի ,  
Բայց սակաւուց խմատ բանի :

Ամէն մարդոս խօսք է քոռած ,  
Բայց ի՞նչ մարդոս խելք իմացուած :

Ճիշդ. **Ս**էկ կարկառիւ (էսքիւ) մը խիստ  
տգէտ մարդ ըլլալով իր արուեստին մէջ՝  
անանկ քիչ շահ ունէր իրեն եկած վաստա-  
կէն՝ մինչև մտմտաց որ արհեստը փոխէ :  
Օր մը խելքը դրաւ թէ բժիշկ ըլլայ և  
քանի մը բժշկական բառեր սորովելով բժիշկ  
եղաւ և ճանչցուեցաւ . իր ըրութիւնը  
շատախօսութիւնը և անձանօթ ըլլալը շուտ  
մը զինքն ըրին մէկ շատ անյարմար բժիշկ մը  
բայց խիստ յարմար շատախօս մը : Ամէն

գի ծանուցում ըրաւ թէ իր գեղերուն զօրութիւն չի կրնար սխալիլ և ամէնքն աւսորխօսքին հաւտացին : Իր դրացիներէն մէկ վարպետորդի մը ուղեց ծաղը ընել զայն այս կերպով : Սաստիկ գլխացաւութի ունիմ ըսելով բերել տուաւ այս բժիշկը . ա՛ն ալ եկաւ սկսաւ երկան երկան խօսիլ աւսոր սուտ հիւանդութիւն վրայ պատճառներով , յետոյ հաստատեց հիւանդին թէ զինքը կ'ազատէ այս ցաւէն քիչ ժամանակին մէջ միայն թէ կամենայ յանձնել զինքն աւսոր հոգաբարձութիւն : Արպետորդին ալ խնտալով ըսաց . Խեղճ անխելք , ես ի՞նչպէս կրնամ քեզի յանձնել իմ գլուխս որովհետեւ միայն ոտքս ալ քեզի չեմ հաւատար :

Օրինա՛յ եւ անոնց որ լին ջանար իրենց գործքին մէջ երեւելի ըլլաւ , այլ մեծ բանի յետոյ լարնելով իւր շնասին : Ո՞ր Լողոսն , զանոն , որ վաստի շունենալնուն համար եկեղեցական կ'ըլլան . իրեն , ինչ գիտեն որ ժողովրդեան ինչ պիտի սորվեցնեն . իոյր իտրի առաջնորդ՝ երկուսն ալ խորխորապ կ'իյնին :

Ահա արժանի բան անխմաստին

Զանձին բրտութի ոչ նկատողին .

Հեգել ոչ գիտէ տառս ալփաբետին ,

Բազմի սիգալով յիմաստնոց դասին :

Արդ քանի՛ անգորք յայս մտաբերին ,

Մոռանան ըզկար զօրութի անձին .

Միայն բան դատարկ ՚ի բերան նոցին ,

Հեռի ՚ի խելաց հանճար լոյս բանին :

## ՓՈՂԱՀԱՐ

Որ ոք դրդուէ զընկերն 'ի չար ,  
Նովին պատժի չարեօք խաբառ :


Ո՛վ լար պապճառ ալեղ 'ի լաւայ ,  
Շաք մեծ շնաս շաքին կոտորայ :

Ճիշդ **Ս**էկ փողահար (պօռուական) մը պատերազմին բաները չալելէն ետև բռնուեցաւ : Երբոր մէկն անոնց մէջէն թևը վերցուց որ սուրը խօթէ անոր՝ պոռաց դերի բռնուողը , թէ Ո՛վ զօրական մամլոտա որ ես ուրիշ բան չըրի բայց եթէ փողս չալեցի . ուստի ոչ մարդ եմ մեռցուցեր , և ոչ ձեզ մէ մէկին զարկեր եմ : Պատասխանեց մէկալը , թէ Դուն ալ քիչ արժանի չես մահու , և թուրը փորը խօթելով կ'ըսէր Ա՛նօրէն , իրաւ մարդ չի մեռցուցիր բայց ո՛վ ժողովեց զանոնք որ մեռցրնեն :

Աւելի պիտի պապոհասին անոնք որ ուրիշին գեղութիւն պապճառ 'ի լաւան և 'ի գրգռելն լարութի ընելու . ասանկներուն մեղքը իրենցմէ ասալ զապաստան 'ի երկայ :

Այս են հատուցմունք խեղ պատանեկաց  
Որ դրդուեն 'ի չար զընկեր բարեկեաց :

Ոչ գիտեն զերկնից պատիժ պատուհաս  
 Գանձեալ կան նոցա 'ի մահու արկած :  
 Զի՞նչ ունիս տալ քան յայն սահման չարեաց,  
 Զի՞նչ վասն անձին քո և զի՞նչ զընկերաց .  
 Մի՞ սուլեր զփող չարին գրգանաց ,  
 Զի՞ մի կորիցես 'ի սուր թշնամեաց :



## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՀՈՒՆՔ ԻՒՐ

Զայլոց չարիս երբ տեսանես ,  
 Այնու և դու ուզդեա զքեզ :

Թէ որ պախան այլոց փեսանս ,  
 Հալէ ըշտեղ . դու ալ լինանս :

Ճիթ. Երկրագործ մը կ'արձրկէ լծէն իր  
 կովերը , սովի առեն կը մորթէ զանոնք որ  
 անով ապրի ինքը և իր ընտանիքը : Երբոր  
 զայն տեսան իրեն շները շուտ մը ցաթկեցին  
 իրենց տեղէն քաղաք փախան . Փախչինք ա-  
 զատինք կ'ըսէին իրարու , թէ որ այս մար-  
 դը չի խնայեց մորթեց կովերն որ իր գործ-  
 քին շատ հարկաւոր էին , մեզի ի՞նչ չընէր  
 որ դրեթէ անանկ շատ պիտուական մը չենք  
 անոր :

Թէ որ ուրիշին վրայ գէշ բան մը փեսեն՝ մի  
 գայեալիչեւով դադեր , այլ նայէ որ դու ալ լինես ,

և անոնց իյնելովը գոն շփոթութիւն : Աւելոյ  
 ընդառառութիւն նայելով՝ եւ աղէկ եղայ, կ'ըսէ  
 թիւիսոթան :

Այս չքնաղ վճիռ իմաստասիրին ,  
 հրահանգիլ ասէ սահմամբ օտարին .  
 Ձի որ հանգիւղի երբէք տեսակին ,  
 հանգիւղիլ գիտէ նաև անհատին :  
 Բանական դատիս մասնակցեալ բանին ,  
 Սի օտար դատիր գործ բանականին .  
 Արթուն կաց դիտեա գործած աշխարհին ,  
 Փախիր 'ի յառթից փնասաբերին :

### ԱՌՒՒԾ ԱՂՈՒԷՍ ԵՒ ԻՇ

Ձինչ զօրաւոր քան միտք խոհեմ,  
 Որ աշխարհի յաղթել գիտեն :

Խոհեմութեան միջոց յաղթող է .

Ամեն բանին վրան կ'ելլէ :

ՃԾ. ( ) ր մը առիւծը աղուէսն ու էջը որ  
 սորդուծէ ելան միատեղ և բռնեցին մէկ  
 եղնիկ մը որ գետինն ընկածին պէս մէկէն  
 էջը կտրրտեց զայն , բաժինն որ եղաւ նախ  
 էջը յափշտակեց առաւ քան զամէնն աւելի  
 մեծ բաժինը : Այս անկարգութիւն անանկ  
 կատղեցուց զառիւծն որ նոյն կէտին ցաթ  
 կեց իշուն վրայ պատուեց : Ան ատենը հաս  
 կըցաւ աղուէսը գլխուն գալիքը , անոր հա  
 մար զգուշացաւ իրեն բաժինն առնելու



նաև տարաւ զան ալ խառնեց առիւծին և իշուն բաժինին հետ, և բոլորն ընծայ ըրաւ առիւծին: Այս քաղաքավար վարմունքս որ տեսաւ առիւծը խաղաղեցաւ որ քիչ մը առաջ իշուն ըրածը աղուէսին ալ պիտի ընէր: Մանաւանդ երբոր գոհ եղաւ բոլոր եղնիկն յափշտակելուն համար, ըսկըսաւ շնորհակալութի ալ ընել անոր մարդավարութիւնը: Եւ այսպէս աղատեցաւ աղուէսն իր ճարտարութիւնը անանկ վտանգէ մը և էջը կորաւ իր անխելքութիւնը:

Խելացի մարտը ղինո՛ւ վրանգէն կ'ապրեցնէ խելո՛ւն, իսկ անխել մարտը ղինո՛ւ վրանգի մէջ իւճո՛ւն: Եւ այս է զանազանութիւն խելացի ու անխել, իմաստուն և աստի՛ մարդիանց:

Ահա զօրութիւն հզօր առիւծին

Անաղապ խիզախ ճիրանաց նորին .

Տէս 'ի հանճարոյ զիարդ նուաճին ,

Զի միտք ոչ ճիրանք են սլաշտպան անձին :

Իսկ դու որ տէր ես աշխարհաց ծրին ,

Մի՛ ընկճիր փութով 'ի տես հզօրին .

Շողացո՛ւ յաւէտ զայն սուր հանճարին ,

Որ յաղթել գիտէ ուժոյ աշխարհին :



## ՊԱՌԱՒ ԵՒ ԱՂԱՒԻՆ

Որչափ փախչիս յաշխատանաց,  
Վաստակք լինին քեզ զուգընթաց:

Թե գլխաւոր է որ լիցաւ Կաթն,  
Ո՛ր որ Կաթնիւն Կաթնաւոր էս:

ՃԾԹ. Սէկ պառաւ մը իրեն աքաղաղին  
ձայնը առածին պէս՝ ամէն առտու կ'երթար  
կ'արթընցներ իր աղախինը (հաւայել) առա-  
ւօտէն ժամ մը առաջ կանուխ: Ան ալ կը  
հարկադրէր որ մէկէն ելլէ րոքն (ռոֆէն) առ-  
նէ մանէ, և թող չէր տար ձեռքէն ձգել՝  
մինչև որ արևը մտնէլէն ետև ժամ մը չանց-  
նէր մոռթ չըլլար: Իսկ աղախինը հալեցաւ  
մաշեցաւ քուն չըլլալով և աշխատանքով.  
ուստի օր մը բռնեց աքաղաղը խղզեց, այս  
մտքով որ երբոր պառաւը կը կորսնցնէ  
արթընցնողը՝ կրնայ անկէ ետև հանգիստ  
քնանալ. բայց հակառակն եղաւ, վասն զի  
աքաղաղն որ մեռաւ՝ պառաւը ալ չի լսելով  
ձայնը՝ կարգը կորսնցուց, ուստի բոլոր  
գիշերն ոտքի վրայ էր, կը վազէր կ'արթը-  
նէր աղախինը, անանկ որ հաղիւ կտոր մը  
ժամանակ կրնար սլառկիլ:

Պէտք է յիշու հնազանդ ըլլաւ Ռեծասորին որ.

լա՜ր խիստ ըլլայ, լե՛ թե աշխատանքէ խախտելու  
համար խելախն եկածն ընել, ան ապէն զհել' ըլ-  
լայ, Վասն զի երբեք մէկը տալէ լիք ուր ունենայ,  
ի՛նչ ընէ չա՛հ չոսնի :

Խնդրել ըզհանգիստ ըստ մարմնականին  
Խորշիլ 'ի կրել է գործ տկարին .  
Քանզի 'ի սկզբան 'ի գրիլ մարմին ,  
Նոյն սահման երկանց գրեցաւ նմին :  
Պատրաստ կալ ձայնի հրամանաց վեհին ,  
Միայն գիւրութի երկոց ծառային .  
Արդ մի լծընկէց լինիր հեղգութի ,  
Զի մի գիպեսցիս գժուարագունին :

## ԶԻ ԵՒ ԻՇ

Զայլոց վիճակ մի զարտաքինն՝  
Ուշիմ մտօք կշռեա զնեբքին :

Մեծ լեռունը յիանա ալ մեծ է,  
Հարուստին ալ հոգը շատ է :

ՃԾԲ. Փառաւոր ծածկոցով զարգա-  
րուած ձի մը կ'երթար տէրը գտնելու համար  
սրտաւրազմին մէջ . ասոր անցնելը որ տեսաւ  
էշ մը՝ սկսաւ հառաչանքով նախանձիլ ձիուն  
երջանկութիւն վրայ : Զին որ լսեց և հաս-  
կըցաւ զայն , Ետեւս եկոր , ըսաց , որ իմ  
փառքիս մասնակից ըլլաս ինչպէս ես ար-  
ժանի եղեր եմ այս զարգարանքիս : Իսկ է-

չը լսածին սէս վազեց ետեէն գնաց և հասան սլատերազմին բանակը . նախ տեսաւ զօրքերը զէնքերը վրանները (շաբլոններ) փողերուն թմբուկներուն ձայնը , շատ հաճեցաւ , ամենուն վրայ կ'ուրախանար զուարճանալով : Բայց քանի մը օրէն ետե տեսաւ որ ձին սլարտաւորեցաւ տէրը տանելու սլատերազմին կրակոտ տեղը և վտանգաւոր ծեծին մէջ սկսաւ տարակուսելով զուարճուլթիւր ձգել , և միտքը բերել իրեն առջի թողուցած տեղը . քիչ մըն ալ անցաւ կախեց ականջներն ու ետ դարձաւ . ինչ որ ըսաց իրեն ձին որ չերթայ հոն մնայ՝ ամենեւին մտիկ չըրաւ , և յետոյ սաստիկ վազելով ձեռք առաւ ջաղացքին ճամբան գնաց :

Օրինակ է մեծապառան հարուստին որ զբնէն անանկ փառաւոր կ'երեւնայ մինչև ամենքը երանի քաւով ինչ նախանշին . բայց ներսը նայիս՝ հաշար հոգ ներդառնի ունի անհանգիստ որ միշտ երանի կոտայ միշտ ճարտիւնդ :

Այսպէս և ռամիկք ընդ տես արտաքին Պշնուն զմայլին իշխանաւորին .

Երբ քննեն զկայս ներքին վիճակին՝

Այլազգ գտանեն տխուր վշտադին :

Մի ցանկար փառաց վսեմադուռին ,

Եւ մի փայլուծեց աչախիլ բաղդին .

Զի այն շողողանք են սոսկ արտաքին ,

Այլ ներքին նոցա թախիծ խաւարին :



## ՀՈՂԱԳՈՐԾ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Կենսակցութիւն անզգամին ,  
Վնաս բերէ մերձաւորին :

Անգութն լուսն ընկեր ,  
Գլխոսէ իռփան լարեաց տարեր :

ՃԺԴ. Երկրագործ մը լարեց իր որոգայ-  
թը և մէկ արագիւլ մը քանի մը որսող թռու-  
ջուններով եկաւ մէջն ընկաւ : Ան ատենը  
բռնեց երկրագործը մեռցուց թռչունները .  
երբոր սպառաաստուէցաւ արագիւլն ալ մեռ-  
ցնելու՝ աղաչելով կ'ըսէր արագիւլը , թէ Ես  
ոչ չարագործ եմ և ոչ մեղսակից աւաղակ-  
ներուն , վն զի որոնց մէջ որ գտնուելով  
բռնուէցայ՝ անոնք սորվեցընելով ախամայ  
զիս հոս բերին , ուստի մեծ անիրաւութի  
կ'ըլլայ թէ որ անոնց ըրածդ՝ ինձի ալ ընես  
և անոնց հետ զիս կորսընցընես : Պատասխա-  
նեց երկրագործը . Դուն մեռնելու արժանի  
ես , ինչպէս կրնամ ես քեզի բարի ըսել ,  
երբ չար ընկերներու հետ գտայ զքեզ : Զայս  
ըսելով վիզը փրցուց :

Խրատ է անոնց որ ի՛շտեն թէ Ես աշէի լուս-  
նէս երես Գեշ ընկերն ինչի ինչ պիտի ընէ : Ա-  
նանի մարտիի ինչ ի՛շտեն թող ըսեն . Գեշին հետ

Ինչո՞ւն գէշ է՛նայ, աշէիին հետ Ինչո՞ւն աշէի  
է՛նայ :

Այս ահա սխառդամ է գուշակողին ,  
Ի վերուստ անտի մեզ ազգ առնողին .  
Թէ որք ընդ չարաց կենակցիլ կրթին ,  
Չարեօք 'ի կենաց զըրաւիլ ունին :  
Հեռի 'ի վատաց մերձիր 'ի բարին  
Կցորդեալ յաւէտ ընդ առաքինին .  
Որով և արգար լինիս ընդ նմին ,  
Ազատ յարկածից վնասաբերին :



## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ԿԱՉԱՂԱԿ

Յիմարք սանձան ընդ զարդ մարմնոյ ,  
Իսկ իմաստունք ընդ գեղ հոգւոյ :

Խելացի հարդ մեծեալ լուսէ ,  
Իր Բարեւ մեծ զինեւ է՛նէ :

Ճճ. ( ) ր մը թռչունները ժողովուեցան  
իրենց մէջէն թագաւոր ընտրելու համար որ  
յարմար ըլլայ զիրենք կառավարելու : Իւրա-  
քանչիւր թռչուն ժողովքին ընտրութիւնն  
իրեն քաշելու համար ըսին թէ Այն ըլլայ  
թագաւոր որ ընապէս աւելի կարողութի  
ունի . ուստի արծիւը խօսեցաւ իր ուժին  
վրայ , աքաղաղը՝ քաջասրտութեւ վրայ , թու-  
թակը յիշողութեւ վրայ և կաչաղակը մտքին  
վրայ : Բայց պարաստ եղը կը պարծէին ժո-

զովքին մէջ ամէն մէկը իրենց կատարելութեւնը վրայ մէկին խօսքը բանի տեղ չի դնելէն՝ ի զատ՝ գլխացաւութիւն եղան զուրցուած խօսքերը։ Ամենէն ետեւ եկաւ սիրամարգը բանալով գեղեցիկ սլոցը, երենալուն պէս թռչունները զմայլելով գոյնզգոյն փետուրներուն վրայ՝ իրեն տուին մեծութիւնը առանց նայելու կաջաղակին ցուցմունքներուն որ կը սնդէր թէ Սիրամարգը սլոցէն ի զատ ուրիշ կատարելութիւն մը չունի։ Բայց անոնք գովասանքը սիրամարգին տուին և մէկէն թագաւոր կոչեցին։

Խել՝ ունեցողը պէտք է աւելի հոգոյ գելեցիութեւնը և բնական աշխարհութեւնը նայիլ քան թէ մարմնային։ Վասն զի մարմնական գելեցիութեւնը ծաղիկ պէս շուրջ կ'անցնի, միայն հոգոյնը կը մնայ։

Անբան ընտրութիւն աշխարհասիրին,  
Ընդ տեսիլ մարմնոյ յաւէտ պշնողին.  
Որ զուրկ ի լուսոյ տիրական մասին՝  
Ոչինչ նշմարէ զգեղ հոգեկանին։  
Նուրբ հանճար մտաց միակ գանձ անգին,  
Մի փոխեր զարդուց ըստ մարմնականին։  
Թէ վառ է հոգւոյ նշոյլ բնածին՝  
Ոչինչ գեղ և զարդ նմա զուգադրին։





## ԴԼԲԻՆ ԵՒ ԿԱՊԻԿ

Մի խուզեր զայն որ չէ քեզ անկ,  
Զի մի անկցիս յանել վտանգ:

Անպէս Բանին քննող լըլըսս,

Օր մը մահաւան խոսք կ'իյնաս:

ՃԾԷ. Սէկ դէբին մը ցամաքին խիստ մօտ  
լողալով կ'երթար, տեսնելով զայն կապիկ  
մը, Շատ լաւ միջոց է, ըսաց, որ դիւրութիւն  
երթամբ ուր ծովը քալեմ վասն զի բնաւ  
չեմ տեսած, պէտք է որ սիրտս հանդիսի:  
Զայս ըսելով ծովուն մօտեցաւ, յետոյ ցաթ-  
կեց ձկանը կռնակն հեծաւ. իսկ դէբինը  
որովհետեւ մարդս կը սիրէ՝ կարծեց թէ  
մարդ է վրան՝ առաւ շատ հեռուն տարաւ  
զկապիկը որ առաւելապէս կ'ուրախանար  
Ժուռ գալով Ուկիանոսին մէջ մինչև խորն  
դալու ձայն մը հանեց: Այս ձայնէս դըլ-  
բինը գլուխն որ վերցուց նայեցաւ կապի-  
կին՝ ճանչցաւ և զարկաւ պոչովը վեր նե-  
տեց վրայի բեռը՝ մէկէն մտաւ ծովուն տակը:

Ու որ իր Բանը և պռանը իւր յգէ ուրիշին  
Բանը Բանին էպեհն կ'իյնի իմանալու համար և  
դէպք լէշած Բանը քննելու համար՝ անխել

Իսպիկին պէս ուրիշին պատճառաւ ինչ իրաւոյ :  
 Շապերը քեանս, որ այս ճամբան բռնելով քներ,  
 նին աւելցին հարաջիւն եղան :

Բարբ անասնական ընդ վայր շրջողին  
 Մոռանայ զիւր գործ քննէ զօտարին :  
 Թողու լքանէ զտուն և տեղին ,  
 Ձի գիտակ լիցի թէ այլք յինչ բերին :  
 Ձի կաս ով յիմար 'ի վայր անտեղի ,  
 Առ ինչ յօտարաց շրջիս վիճակի .  
 Դարձ 'ի սեպհական արարս և տեղի ,  
 Ձի մի ծովակուր լիցիս անտեղի :



### ՀՈՎԻՒ ԵՒ ԳԱՅԼ ՓՈՔՐ

Մի նպաստեր չարասիրին ,  
 Ձի մի չարիք 'ի քեզ դարձցին :

Թէ Գալանին քունըդ քեզ քաս ,  
 Ձաւելներուդ իրաւսք իռքաս :

ՃճՂ. Նովիւ մը կը գտնէ գայլի ձագ մը որ  
 մայրը ձգեր էր , կ'առնէ կը տանի իր խուցը  
 և հոն կը մեծցընէ . ետքը կը գնէ զայն շնե-  
 րուն մէջ որ կը նայէին ոչխարները , բայց  
 չառ լաւ կ'ըլլար թէ որ սատկեցընէր . վն  
 զի առաջ քանի որ սղտիկ տկար էր բան  
 չէր ըներ , կատարեալ գայլ եղածին պէս  
 մեկէն 'ի մեկ շները խղճեց , և երբոր հովիւը






ՃԺԷ. Օձ և տուտն: ՃԿԷ. Երիտասարդ և Բաղդ:



ՃԿԸ. Հաւ պարարտ: ՃԿԹ. Երկրագործ և Աղուհա:



ՃԿԸ. Չիտդարս և Չի: ՃԿԹ. Արտավար և Կարապ:

քուն էր՝ վաղէց ընկաւ ոչխարներուն վրայ  
բոլորը ջարդէց :

Խրափ ըլլալ վարդապետաց որ աշխերփներուն  
յետեւ լի փան գարշելի աղանդաւորներուն գը-  
րաածեւ, որ Լեւոնի արարի Բերանը անձնաւի՛երե-  
նայ՝ Բայց Կամաց Կամաց Կ'ապահանէ Տանիանց Տի-  
պեւ Բարեւ : Եւ Տանապէս Ժնողքն աւ իրենց քաւնը  
Գեշ Դարդ լի Կանդիպոյրն են որ անոյշ լեզուով և  
Բարի երեսաւով լի Լուսաւորէ Բոլոր քաւնը :

Զօրավիգ լինել զըժնեայ գազանին

Գործ է զըժընդակ սըրտի անմտին .

Զի խընամ և գուծ տենչողականին

Ըստ տեղւոյն առնել է խոհականին :

Իսկ գուհոգածու մանկանց երամին ,

Մի խառներ ընդ այն ըզժընուհ գարին ,

Թէ և ապիկար իցէ չարածինն ,

Սակայն է անգուծ սերմըն գազանին :



## ՕՁ ԵՒ ՏՈՒՏԷ

Երբ ոտքն իշխէ իշխող գլխոյն ,

Եղճիկ և վայ բոլոր մարմնոյն :

Որ փեշ Կ'իշխէ Կին և Ժառայ ,

Շափով Կ'ընեն փափն ու վրայ :

ՃՃԷ. ( ) ր մը կը նայի օձն որ պոչը իր  
գլխուն դէմ կ'եղէ , Ի՞նչ ամբարտաւանու-

Թի է , կ'ըսէր պոչը գլխուն , որ միտքդ դրեր  
ես թէ ես քեզ անանկ լաւ չեմ կրնար կառա-  
վարելով տանել՝ ինչպէս դուն զիս կը տա-  
նիս , ուր թէ իմ խելքս քուկինէն շատ վար  
է : Յայտնի է որ շատ Ժամանակէ 'ի վեր  
ես քեզ կը հետևէի , հիմա ալ դուն ինձի  
հետևէ կարգով և տեսնես որ ասանկ լաւ  
բան չի կրնար ըլլալ : Զայս ըսաց պոչը և  
քաշեց գլուխն սկսաւ ճամբայէն ետ տա-  
նել որ ճամբուն վրայի բաներուն զարնե-  
լով տարաւ քարի մը զարկաւ պատուեց մար-  
մինը . քիչ մ' ալ առաջ գնաց ձգեց զայն  
ծակի մը մէջ : Եւ այսպէս քսան ոտք ա-  
ռաջ չի գացած՝ վայն 'ի վրան եկաւ բոլոր  
օձին : Ան ատենը ետ կեցաւ պոչը կառավա-  
րելու և խոնարհելով հետևեցաւ գլխուն  
ինչպէս կարգն էր . ուստի շատ լաւ բոլոր  
մարմինը կառավարուեցաւ գլխուն առաջ-  
նորդութեամբ քան թէ պոչին :

[illegible]

Անօրէն օրէնք ըստորնապռւնին

Որ իշխէ լինել կառավար գլխին ,

Բայց ո՞ւր տուն քաղաք կայգէ՛ ՚ի կային:

Երբ կին և ծառայիք տիրեն տիրողին :

Տէր իշխան կարգի բան մտաւորին ,  
 Ի քաղաք մարմնոյ կառավար մեկին ,  
 Թէ թոյլ տաս մասանց ըզգայականին՝  
 Տիրեն կործանեն զքաղաքն ընդ պետին :



## ԴԻՈՍ ԱՊՈՂՈՆ ԵՒ ՄՈՄՈՍ

Որ ձեռնարկէ 'ի գործս այլոց ,  
 Յետնեալ ծաղրի 'ի նոյն գործոց :

Մի յետ քարէն այլոց գործին ,  
 Ծաղր 'ի լուսն անոնց առջին :

ՃԾԵ. Մէկ օր մը Դիոս ըսաց Ապոլոնին  
 Թէ Կտոր մը ժամանակ՝ տուր ինձի քու ա-  
 ղեղդ զի կ'ուզեմ քեզի հասկըցընել թէ ես  
 քեզմէ շատ շիտակ կրնամ նետել : Կը տես-  
 նե՞ս այս կաղնի ծառը տնկած Ոլիմպոս լե-  
 ռան գլուխը , կ'ուզեմ որ նետը (օգը) երթայ  
 շիտակ ծառին կոճին մէջ տեղը զարնէ ,  
 այս որ ըլլայ՝ դուն ալ ջանա անանկ շիտակ  
 նետել որ յետոյ Մոմոս դատաստան թող  
 ընէ թէ որերնի՞ս աւելի յաջող ենք : Զայս  
 ըսելով առաւ Ապոլոնին աղեղը նետեց .  
 նետն ելաւ , բայց շիտակ երթալու տեղը  
 խոտորեցաւ և Մոմոս դատաւորին երե-  
 սին քսուելով անցաւ գնաց զարկաւ քարե-  
 րուն՝ հարիւր ոսք հեռու նշանէն : Իսկ Մո-  
 մոս բոլորովին շփոթած վախուն որ վտանգ  
 էր իրեն՝ ոսքի վրայ ելլելով ըսաց Դիոսին .



Ո՛վ Աճներուն գլուխը՝ չի կրցայ հասկընալ  
 Թէ Ապողոնին նետելը աւելի չիտանի է,  
 բայց զայս ստոյգ գիտեմ որ անոր նետած  
 ներն ինձի վախ մը չէին տուած ինչպէս  
 քուկինդ սլաածառեց. ուրեմն ինձի մօտիկ  
 ըրէ, առ ձեռքդ դուն քու կայծակդ և  
 մեծդ Ապողոն, դուն ալ առ քու աղեղդ,  
 ահա ասանկ շատ լաւ կ'ըլլայ: Չայս ըսաց  
 ու առանց աւելի բացատրելու և մեկալին  
 նետուածքը մեծցընելու՝ գնաց Մոմոս: Եւ  
 այս կերպովս դատաստանն անորոշ թողուց  
 Դիոսին վախուն:

Դիոս կայծակ ունի յետոյ որ իւր նեպէ կ'ը-  
 նէին. իսկ Ապողոն արեգակին լածը՝ աղեղ ունի  
 յետոյ. Մոմոս խելհափախութիւն լած ըլլաւ՝  
 երբեք լածներուն մէջ Դատաստոր կ'ըլլար: Օրի-  
 նակ է անոնց որ իրենց արուեստը իւր յգէն ու  
 չգիտցած բանի իւր խառնուիւն և անով շարաւար  
 իւր խաբուիւն և ծեծաղելի կ'ըլլան:

Այս շահ վաստակոց փոփոխամբոխն  
 Յայլոց ՚ի վաստակ վաղ ձեռնարկողին.  
 Այս և կատարած ինքնահաւանին  
 Որ զայլս ետերէ սլանծացեալ յանձին:  
 Բայց յիւրաքանչիւր ըստ իւր վիճակին  
 Գոյ զօրութիւն ինչ յատուկ բընածին.  
 Վառեա ըզնչոյլ քոյդ տընկականին,  
 Եւ մի նախանձու մըխիր յօտարին:



## ԵԶՆ ԵՒ ԿՈՎ

Զինչ շահ անգործ նստիլ 'ի տան ,  
Եւ պարարակ լինել զենման :

Հար աղէի է հագնիլ ջանալ ,  
Քան ծուռ-նք ի որոսպն երևալ :

ՃԾԹ. Եղ մը կը ջանար քաշել զսայլը (արա-  
պան) մէկ խիստ քարոտ տեղէ մը . մէկ կով  
մը տեսնելով անոր ջանքը՝ կը խնտար վրան  
ու կ'ըսէր . Խեղճ ողորմելի ես , չեմ տարա-  
կուսիր թէ դուն օրը հարիւր անգամ կը ցան-  
կասիմ վիճակիս , լաւ գիտեմ որ շատ կ'ուզես  
ինձի պէս սիրելի ըլլալ և առանց աշխա-  
տանքի ուտել : Երբոր ասանկ կը խօսէր՝ մէկ  
զոհ ընող մարդ մը հասաւ հոն և սկսաւ  
տաճարին ճամբան տանել զկոյնն որ սեղա-  
նին վրայ իր կուռքին զոհ ընէ : Ան ատենը  
եզն ըսաց անոր . Ո՛վ ամբարտաւան՝ նայինք  
հիմա քու վիճակդ ցանկալի կ'երևնայք բեզն .  
ճամարիտ է թէ ես կը բաղձամ քու վիճա-  
կիդ , բայց դուն ալ խոստովան եղիր որ  
հիմա շատ կը փափաքէիր զքեզ իմ վիճակիս  
մէջ տեսնել :

Հեշտաւեր հարոստ Տարդիի ուրիշը վաւ զաւ-  
նելով իւր պարծենան իրենց հանգստութիւն վրայ ,

Բայց լինալեն Ռէ Բըւոթ հանգիստ ապրին՝ այն-  
չաթ շտա իրենց իւ Տօպենայ հիւանդոս-Ռէլ և  
Տահը, անոր հասար աշխատաւոր Տարդիի շտա  
ի'ապրին և Ժաթո-ինէրը շտա իւ Ռեանին :

Այսպէս Թուլամորթք ընդ հեշտասիրին  
Մերթեն ըզվաստակ 'ի խընջոյս հրճուին .  
Որով մերձենան 'ի սայր մանգաղին,  
Խաւարին աւուրց կերակուր պահին :  
Իսկ դու որ գործել ծընար յաշխարհին  
Առաքինանալ 'ի սէր արարչին ,  
Մի անգործ նստիր ըստ հեղգասիրին ,  
Մի սլարարտանար 'ի գարշ հեշտալին :



## ԱՂՈՒԻՍ ԵՒ ՁԵՏ ԻՒՐ

Իւրաքանչիւր իւրն է սիրուն ,  
Ձոր ինչ ունի՝ հրճուի 'ի նոյն :

Պախատաւորն միշտ իւնայէ ,  
Ձորիչն իրեն նման ընէ :

Ճկ . Ըլուէս մը կ'իյնի Թակարթին մէջ ,  
մինչև որ սոցը չի ձգեց չի կրցաւ անկէ ա-  
զատիլ : Այս պատճառաւ շատ յուսահա-  
տեցաւ , վասն զի ասանկ անպոչ մէկուն  
չէր կրնար երևնալ , ամէնքը վրան կը խըն-  
տային : Այս բանէն ազատելու համար  
տես ինչ ըրաւ : Միտքը գրաւ որ իրեն պէս  
ընկերներ ունենայ , Ժողվեց աղուէսներն ու

բարեկամաբար խորհուրդ տուաւ անոնց որ  
 պոչերնին ձգեն. զի Աւելի արգելք կուտայ  
 կ'ըսէր, քան թէ զարդարանք որովհետեւ ա-  
 ւելորդ բեռ մի է. վերջապէս ցրցուց թէ  
 այս պոչը ճամբաներն աւելիէն 'ի զատ ու-  
 թիշ բանի չի ծառայէր : Փուճ՝ տեղը այս  
 ցուցմունքներն ըրաւ, վասն զի բոլոր Ժո-  
 ղովքը վրան կը խնտար : Յետոյ մէկ ծեր ա-  
 ղուէս մը դարձաւ իրեն ըսաց. Բարեկամ  
 չիտեմ թէ ի՞նչ կըլլայ մէկ պոչէն անցնե-  
 լով, բայց զայն գիտեմ ստոյգ՝ որ եթէ դուն  
 ունենայիր քու պոչդ՝ չէիր ըսէր թէ անո-  
 գուտ բան է պոչը :

Օրինակ է անոնց որ իրենց պաշտօն-  
 աշխարհիւ գործելու համար՝ ի՞նչն որ՝ ա-  
 մենք աւ իրենց պէս ըլլան, Բայց ինքն անանկ  
 մաւէն էպէս ի՞նչ օգուտ :

Արդ մի ցանկանար զարդու օտարին  
 Եթէ ոչ ունիս սեպհական յանձին .  
 Գիտութի հանճար հոգեկան մասին  
 Են բուն վայելանք խմացականին :  
 Զի՞նչ շահ բեռնակրի՝ գանձուց աշխարհին,  
 Զի՞նչ խմաստութի գործավաճառին .  
 Արտաքին է այն, ոչ 'ի նա յանկին,  
 Զի գայ և գընայ ըստ բերման առթին :



# ԱՅԳԷԳՈՐԾ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ

Անխոնջ վաստակ հողագործին  
Են հանք հողոյ և գանձ անգին :

Աւետարանին բան լի պատիւի .

Առաջ ինչ գիշեր Գանձ և ոսկի :

Ճկա . **Լ**՝ յգէգործ մը տեսաւ որ մեռնելը  
մօտ է կանչեց որդիքներն ըսաց . Որդեակք  
առանց ձեզի իմացընելու իմ խորհուրդս  
չեմ ուզեր մեռնիլ որ պատճառի մը համար  
մինչև հիմա ձեզմէ պահեր էի : Գիտնաք որ  
այդիկս մէջ գանձ թաղեր եմ , չի մոռնաք  
երբոր ես մեռնիմ , դուք ալ ետքի պարտքեր-  
նիդ ընելէն ետև փորեցէք որ գանէք հոն :  
Մեռաւ բարի ծերը . որդիքը վազեցին այդին  
և բոլոր հողը մէկ ծայրէն մէկալ ծայրը  
գարձուցին տակն ու վրայ ըրին . բայց փուճ  
տեղը հողնեցան և փորեցին հողերը՝ բան  
մը չի գտան ինչ որ ըսեր էր իրենց հայրը :  
Ան ատենը մտքերնին դրին թէ ծերը խաբեց ,  
բայց մէկէն խեղք ըրին որ ճշմարիտ էր ա-  
նոր ըսածը . վասն զի հողը այսպէս չըլելով  
անանկ պողաբեր եղաւ որ շատ տարի այ-  
դին սովորականէն եռապատիկ աւելի բա-  
րեք կուտար :

Ուիւշէն Դաւ Կ'ըսուէր հին ապենը երբոր  
ապելի սէր և հարկաւորութի լիար, ամեն ճարդ  
երկրագործութի Կ'ապրէր. երբոր պէտք ըլլար՝ Ե-  
րարէ իւր խիւսիս և աւանի հանգիստ Կ'ապրէին .  
ահա այս է Գանձը Կամ (տէֆինէն) որ անձիս  
ճարդի հողին փախ իւր խիւսիսն :

Զինչ այն գանձ հողոյ թաղեալ 'ի ծոցին ,  
Զինչ արծաթ ոսկի քիմիականին .

Աշխատանք և քիրտն ժիր հողագործին՝

Այն գանձ՝ այն ոսկւոյ ծընող են ինքնին :

Թէ վաստակք ձեռացդ ընդ քեզ կենակցին՝

Մըթերին քեզ գանձք մօր ոսկէբերին .

Եւ եթէ անգործ ձեռք բո կաշկանդին

Անչափ գանձ մըթերք փուլթով ըստառին :

### ԵՐԿՈՒ ՇՈՒՆԻ

Որք ընդ տըղմուտ վայր թարթափին ,

Ազտեղանան 'ի բաց մերժին :

Անվայելու Կէշէր լէրնա

Որ Գաւշէնի այլոց լըլըս

Ճիշդ . Երկու շուն տուն մը կը պահէին .  
որ մը մէկը բոլորովին ուրախանալով ըսաց  
մէկաւին . Ե՛ղբայր իմացայ թէ մեր տըղ  
դին տունը սկիտի կարգուի , դուն գիտես  
որ առանց հարկիքի հարսնիք չըլլար , ուս-  
տի թէ որ ինձի մօտիկ կ'ընես երկուքնիս մէկ

տեղ երթանք մեր բաժինը առնենք . ո՞վ գի-  
տէ թէ ինչ կերակուրներ պիտի ուտենք  
հոն : Զայս ըսելով սկսան երթալ մէկ գէշ  
ճամբայէ մը անանկ որ հարկաւորեցան  
աղտոտ և գարշելի ջրերէ անցնիլ , մինչև  
բոլոր տիղմ (շամառ) եղան և ասանկ հարս-  
նիք գացին : Երենք զիրենք գրին պատուա-  
ւոր հարսնիք գացողի տեղ , բայց չարաչար  
խաբուեցան . վասն զի երբոր երեցան հոն՝  
ամմէնքը պողացին անոնց աղտոտուէր վրայ  
և հարկիքին տեղը չմտեցած՝ որը փայ-  
տով որը ոտքով զարկին վռնեցին : Այս  
կերպով ետ գարձան այս երկու աղտոտ ջը-  
ները հոգնած քաղցած և ծեծ կերած :

Օրինակ է որհրամաններուն և գէշ ճամբայ  
գացողներուն որ ամենուն գարշելի է՝ ըլլան ,  
մեւ և մարդ երեսնին ըսայի . այ երեսեն ալ  
ընկած են՝ մարդո՞ւ երեսեն ալ իրենց լաւ վարժուէ :

Գեղեցիկ խըրատ մանկանց անփորձին  
Որ ընդ տիղմ գընան յանվայել տեղին .  
Անդէն մոլորեալ ի նոյն շաղախին ,  
Ի մաքուր հոգւոց մերժին հալածին :  
Արդ մի տենջանօք վազեր յուտելին ,  
Եւ մի ուղեկցիր ընդ հեշտասիրին .  
Որք գընան ընդ տիղմ՝ աղղմով աղտեղին ,  
Եւ ընդ թիւրս թիւրեալ սահին կործանին :



## Զ Ո Ր Ի

Ունայն պարծանք ոչ ինչ զօրէ ,  
Բնութիւն անդէն զիսկն յայտ առնէ :

Սոսա պարծանքով ճարդ շիշոխոսի ,  
Բնութիւն ինչ է՝ իւր յայտնոսի :

Ճկի . Սէկ գէր և մսոտ ջորի մը միշտ կը  
պարծենար մանկութե ատենը իր մօրը վը-  
րայ թէ ձի է ու ես ձիու զաւակ եմ . բայց  
ծերութե ատենը երբոր ալուր կը տանէր  
ջաղացքը , լեզուն փոխեց և միտքը բերեւով  
շիտակ խոստովանեցաւ թէ իմ հայրս էշ է :

Հարա ճարդը իւր մեծութեւ նայելով զինք  
Բան Տե իւր իարծե ու իւր ազգին լեռայ իւր պար-  
ծի , ինչպէս հին ապենի իտապաշա Լափառնե-  
րը յաջողութե մեջն ուր էին ի՞նչէն թէ ան-  
րոն յեղէն են , Բայց յախորդութե մեջ՝ ինչ է-  
ղածնին իւր խոսքովանէին : Աւելի գեղեցիկ է  
աշխատանքն ըստուր քան աշխատանքն ծնանէլը , ի՞նչ-  
եք Սողոմ :

Այսպէս ինքնասպանութի յաջող ելին  
Իբրը դիւցազունն ի հանդէս բազմին .  
Բայց երբ ժամանեն ի ձախողակին՝  
Զինչութի ինքեանց խոստովան լինին :  
Սի թեթևութե խաբիր զերթ ջորին ,  
Կարծելով լինել ի վեհից սակին .

Թէ բարբ քո և գործք չիցեն սպանծալի՝  
Անիրաւ պարծիլն է գործ յիմարի :



## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՒ ԲԱՂԴ

Լէր նախատես յընթացս առթին  
Եւ մի արատ գըներ բաղդին :


Զգոյշ իեղիւր գաւաւ լաւին

Եւ մի ասէր թէ Բաղդ լաւնիմ :

Ճիշդ. **Ս**էկ կարիճ մը սպառկեր հորին բե-  
րանը կը քնանար, երբոր բաղդն անկէ անցաւ՝  
տեսաւ զայն և հասկըցաւ անոր դալու վը-  
նասը, մէկէն վազեց եկաւ թէնքն քաշեց ու  
ձայն տալով կ'ըսէր. Ո'րդեակ թէ որ հո-  
րին մէջ իյնայիր՝ յանցանքն իմ վրաս պիտի  
ձգէին. ուրեմն քեզ կը թողուամ մտածել՝  
յանցանքն իմինս էր թէ քուկինդ :

Բաղդին առիթնէր՝ աւեր Բանաս գոցես կ'անց-  
նին՝ թէ յախորդ լուսն թէ յաջող. զոր օրինակ թէ  
որ առիթն իայ և դռն գաւաւ վնասին նախապէս  
լուսնս՝ հարկաւ վնասի մէջ կ'իյնաս, և թէ յա-  
ջողութե առիթն նախապէս լուսնս, կ'անցնի ա-  
ռիթն աւելս կ'ընար գանել այն յաջողութե : Հին  
ապենե Բաղդ ի լուսնաշնէին իոյր պատանի մը մէկ  
որդուն իւրաքանչիւր իեցած՝ որ առիթն անդին  
դռնաւոր իւրաքանչիւր իեցած՝ որ առիթն անդին  
և այլն :

Այս է նըշանակ անխորհուրդ անձին ,  
 Որ ոչ նախատես լինի վըտանդին .  
 Անարդէ զառիթս ալէբեր բաղդին  
 Ի վըտանդիլ անդ մեղ դընէ նըմին :  
 Դու խմացական վիճակեալ բանին  
 Կշռեա ըղվախճան ելից և մըտին .  
 Արա՛ ըստ տեղւոյն ըստ ժամանակին ,  
 Զի մի զըղջացիս 'ի փախչել առթին :



### ԾԻԾԱՌՆ ԵՒ ՊԱՏԱՆԻ

Մի՛ հաւատար պատիր բանից ,  
 Զի մի ծանակ նըկու՛ն լիցիս :

Եւէ՛ ~~հո-բոս~~ մմէն լէւո-ի ,  
 Եղո՛ւ-ի իո-գա, շո-բո՛ւ քեւի : -

Ճկէ . Սէկ ծիծեռնիկ մը փութալով  
 անցաւ ծովերէն և գարնան օրերէն առաջ  
 եկաւ այն քաղաքը հասաւ ուր տեղէն որ  
 ձմեռուան մօտ գացեր էր . մէկ սրտանի մը  
 աղուոր օր մը տեսաւ որ ծիծեռնիկը եկեր  
 է Շատ լաւ ըսաց ինքիւրէն , ահա գեղե-  
 ցիկ եղանակին կարապետը (Ռ-Ժ+էճիւ) ե-  
 կաւ . ուստի կրնամ լաթերս ձգել զի աս-  
 կէ ետեւ ծանրութի կուտան ինձի : Զայս  
 ըսելով դնաց ծախեց լաթերը և ստակն ալ  
 շոալլութի մսխեց կերաւ . բայց շատ չան-  
 ցաւ խիստ զղջացաւ , վն զի քանի մը օրէն  
 ետեւ ցուրտը ետ դարձաւ անանկ սաստիկ

որ պատանին չփոթեցաւ և մերկ աղքատ  
ըլլալով ծիծեռնիկէն առաջ մեռաւ որ այս  
գէշ գուշակութիւն անոր ըրեր էր :

Օրինակ է խոտիւսմիտ մարդիանց որ ամէն  
բանի ինչ հաւասան աւելորդապաշարութիւն և շարաւար  
իւր խաբուիւն : Այս առաւելէն միտ է որ ի՛շխոսի,  
Բէ Մէի ծիծեռն զարուսն չբերէր :

Աւանդ խորհրդոց յետսամիտ ուսմկին  
Որ դատի մեծ ինչ բան գուշակողին .  
Նա խաբէ ըզնա յերկդիմի բանին ,  
Սա կարծէ լինել զըճիւ երկնային :  
Զի՛նչ բան զայս անբան բան մտացածին ,  
Զխաբդ 'ի ստոյ իսկբ հետեւեցին .  
Գուշակբ և քաղդեայքարբանեակբ չարին  
Կորուստ են ինքեանց և բարեպաշտին :



## ԱՍՏՂԱԲԱՇԽ ՄՈՌ

Մի՛ հետեւիր ձայնի մոգին ,  
Զի մի՛ անկցիս 'ի ցանց չարին :

Մի՛ հաւաքար խախարդներուն  
Որոնց խօսքն է սոսառ լեցուն :

Ճկի՛ . Պող մը կը մտնէ աստղաբաշխ կա-  
խարդի մը տուն և երբոր կախարդը բազմու-  
թէ մէջ կեցած իբր նրբամիտ մարգարէի պէս

գուշակութի կ'ընէր գալիքներուն վրայ, և  
կը պարծենար թէ աստղերուն նայելով ա-  
նանկ գիտութի ստացեր եմ որ ամեն բան  
կ'իմանամ որոնք հարիւրաւոր տարիէն ետե-  
պիտի ըլլան, հոն կեցողներուն մէկն որ տե-  
սեր էր տունը մանող գողը, կտրեց անոր  
խօսքն ու ըսաց. Ի՞նչ պատճառաւ հաւատամ  
թէ դուն գիտես գալիքները, ինչի անտարա-  
կոյս կ'երևնայ թէ դուն և ոչ ներկայն կրնաս  
գիտնալ. բարեկամ թէ որ դուն գիտնայիր  
բան մը՝ շուտով տուն կը վազէիր գողը փախ-  
ցնելու համար որ տեսայ տունդ կը մտնէր :

Մագո-Ռէն հին Աբապներէն Ժառանգ է որ  
ի՛նչէին Ռէ որչափ աշխարհիս մէջ բան ի՛նչուայ,  
ասալերուն դառնալով և անոնց դժոխ-Ռէն ի՛նչ  
պատճառի. անոր համար ասալերուն դիրքն նայ-  
ելով Խարծէին Ռէ գալիքները ի՛մանան, և Խա-  
բեո-Ռէնէր ընելով ի՛նչ Խառնաբան Ժողովուրդ :

Տես խաբէութի բազմագէտ մոգին,  
Կախարդէ ըզմիտս անհանճար ուամկին .  
Ոչինչ տեսանէ որ կան առ ոտին՝  
Պանծայ գուշակէլ զապառնիս խորին :  
Քանիք կուրացեալ հաւատան նոցին  
Ի կուրաց անտի ըյս առնուլ կըրթին .  
Իմաստ ապառնեաց թէ գոյր 'ի նոսին  
Ոչ մերկ և աղքատ մոլեալ չըրջէին :



## ԴԻՈՍ ԵՒ ՄԱՐԴԻԿ

Այլոց թերին կայ առաջի,  
Իսկ սեպհականն յետուստ բերի:

Այլոց պալատն ունինք ասաջ,  
Մերինն ունինք մեր էպեանց:

Ճկէ. Սարգիկ ստեղծուելէն ետե Դիոս տեսաւ թէ անանկ մեծ մեծ պաղատութիւնք ունէին որ չափաի կրնային համբերել մինչև որ անոնց ճանաչողութիւնը չվերցընէր իրենցմէ. այս պատճառաւ կը մոմըտար Դիոս որ զանոնք այս կարծիքէն հեռացընէ. ուստի ժողովեց բոլոր մարդկային պաղատութիւները՝ լեցուց երկու բերնէն շատ սրարկերու (հէյպէնէրոս) մէջ, յետոյ բաժնեց՝ ամմէն մէկինը իրեն տալով վրան բարձուց անանկ կերպով՝ որ ուրիշներուն պաղատութիւները կախուած էին տանողներուն առջին, իսկ իրենց պաղատութիւնները սրարկին մէկալ դին ըլլալով ետեւին կախուած մնացին:

Մարդոս բնութիւնը եղբւր ե ուրիշ պալատներ չափանէր և ուրիշինը միայն ինք պէսնէ. անոր համար ասալիւ ինքնացընէ թէ Դիոս ասանկ ըլլաւ. իրեանս ըսելու թէ այս շար ուղղութիւնը բնութիւնը եղբւր ե:

Այս անկարգ գաղմուկնք պակասամբուն ,  
 Որ դընէ հանգէպ զայլոց ըզթերին ,  
 Սուր խուզէ ըզշիւղ ական ընկերին՝  
 Կոյր է և անտես իւրում գերանին :  
 Քանի՜ գեղեցիկ լինէր ըստ կարգին ,  
 Եթէ զըննէաք վրիպանս անձին ,  
 Փութապէս արդեօք զերծ գտանէաք  
 Ի վրիպանաց բարոյականին :

### ՀԱՒ ՊԱՐԱՐՏ

Որ քան ըզչափն ունել կրթի ,  
 Կորուսանէ և զոր ունի :

Եղած Բարոյն ո՛վ Գոհ չըլլայ ,  
 Ունեցածն ալ յեռիէն կ'երևայ :


Ճկը. Սէկ հաւ մը ամմէն օր մէյմէկ հաւ  
 կիթ կ'ածէր տիրոջը . իսկ տէրը կ'ըսէր որ  
 եթէ երկու չափ գարի տամ ինձի երկու  
 հաւկիթ կ'ածէ : Եւ ահա ժամէ 'ի ժամ  
 շատ գարի լեցընելով առջին՝ անանկ սաս-  
 տիկ հաւը գիրցաւ շատ ուտելուն պատճա-  
 րաւ որ մինչև շուտ մը սկսաւ քիչ ածել և  
 յետոյ բոլորովին հաւկիթէն կտրուեցաւ :

Հաս Ժարդ իբէն Բասախան Բարիսն աւելցնէ-  
 լաւ համար՝ սիրտ Ժաշէլով ունեցածն ալ իրարե-  
 րոպէս է , և յետոյ վախ ընելով Գաղէր է աւ-



խարհակ : Անոր համար կ'ըսէ մէկ իմաստուն մը .  
Բէ ինչպէս որ ծովը գետերով իջլէցոտի և լի  
յագէնար , ասանկ ալ շահասէր ագահին սիրաբ լի  
կ'ըսանար :

Այսպէս ոչ յագի բաղձանք անյագին ,  
Ձըկտի հանապաղ յանչափից մասին .  
Անսահման գոլով իղձ և տենչ սրտին՝  
Մինչև ըսպառէ ըզսիրտն ընդ գոյին :  
Մի՛ տենչար շատին մի՛ չափազանցին ,  
Մի՛ զքեզ մաշեցէ ցեց տրտմականին .  
Ի ձկտիլ յանչափն արկածք քեզ չափին ,  
Նանրանան բընաւք և դու ընդ նոսին :



### ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՅ

Մի՛ կար ընդդէմ կամաց վերին ,  
Մի՛ կըրեսցես սպառիժս յանձին :

Ինչ բանով որ ինչ մեղանչես ,  
Անոր պատիժն պէտք է գալէս :

Ճկթ . ( ) ր մը Դիոս կանչեց առջին բոլոր  
կենդանիներն որ ամմէնը միատեղ տեսնե-  
լով և իրենց տարբերութիւնը վրայ նայելով  
զուարճանայ . որոնք մէկէն հնազանդեւով  
վազեցին եկան արագութեւ , միայն կրիան  
ուշացաւ այնչափ որ կարծեցին թէ չի գայ  
պիտի . բայց ինչ և իցէ եկաւ յետոյ հասաւ ,  
և ինչ բանի վրայ որ տրտունջ կար՝ պատճառ

բերաւ թէ գալու ատենը հարկ եղաւ իր  
տունը ապահով տեղ մը պահել, ահա ասոր  
համար կ'ըսէր շատ ժամանակ կորսնցուցի  
և այսչափ ուշացայ : Բայց այս անմեղա-  
դրութիւն անանկ սլաղ ընկաւ որ միջոց չու-  
նեցաւ զօրութի մը ունենալու . վասն զի  
հազիւ թէ սկսաւ խօսիլ տանը վրայ, Դիոս  
վերցուց տունը կռնակը դրաւ որ կ'ուզէր  
թէ առանց ուշանալու հնազանդ ըլլայ ի-  
րեն : Ասկէ եղաւ որ պակասութիւնը պատ-  
ժելու համար մինչև հիմա իր տունը վրան  
առէր կը տանի :

Ինչ մեղք որ գործէ մէկը՝ անոր պատիժը ի՞նչ  
թաշկ . Ինչպէս իրիտն իր Կոնսն պատճառ Բե-  
րաւ անհնազանդութեւ, անոր համար Կոնսնին ա-  
ռաւ զայն . այսպէս զբիւղները պատճառ ի՞նչ  
Բերեն Բէ զաւիթ Կէր ենք պէտք է շահինք,  
ած ալ զաւաթին Եւրոպէնէն Կ'առնէ և Երբեմն  
Խեղճ աղաք Կ'ընէ . ասանկ է ամեն Բան :

Այս կշիռ արդար արդարագատին

Ոչինչ վրէպ կայ 'ի կըշռոյ նորին .

Յոր ինչ որ յանցեալ՝ զծանրութի բեռին

Դընէ 'ի թիկունս այն յանցաւորին :

Ուսիր յառակէս անլուր անբանին

Կոչողին ձայնի ոչ հետևողին

Պատկառ կալ կամաց վերին կոչողին՝

Գընալ ըզկնի ձայնի անբաւին :



## ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԱՅԳԻ


Որկոր անյագ կորուստ բազմաց  
 Կարապետէ 'ի չար արկած :

Անկարգ սերը շաք ուսելուն ,  
 Սև օր Բերաւ շաքին գըլխուն :

ՃՀ. Ս) Էկ եղնիկ մը որսորդներուն ձեռ-  
 քէն փախչելով այգին կը մտնէ և հոն տերեւ-  
 ներուն մէջ կը սլահուի անանկ որ որսորդնե-  
 րը զայն կորսընցուցին ետ դարձան : Իսկ  
 եղնիկը տեսաւ թէ վտանգէն ազատեցաւ՝  
 սկսաւ որթը (ասման) կրծել և տերեւներն ու-  
 տել որ զինքը սլահեր էին . և այս եղաւ իր  
 թշուառութիւնը սլատճառ : Ան զի այնչափ  
 տերեւները կերաւ որ բացն ելաւ երեցաւ ,  
 մինչև որսորդները ետ դառնալու ատենը  
 տեսան զայն , հասան վրան մէկէն բռնեցին  
 մեռցուցին :

Օրինակ է անոնց որ ուսելէն 'ի զաք ուսել  
 Բան լին Տաթեւի և Կարծեն Լեւ որչափ ուսելի  
 ուսելն ուրախանան այնչափ շաք կ'ապրին , Բայց  
 լինալէն Լեւ անանկ ուսելի դիւրին ին Կորսուին :  
 Կ'ըսէր Մէի Իմաստուն Տը Լեւ Տարդոսս կ'եսը ուսել-  
 ւով խմելով ին Մեռնի , կ'եսն ալ շաք հոգ ընելով :

Գործ է յեռասամիտ որկորաժետին  
 Ուտել և ըմպել ըստ տենչման սրտին .  
 Որով վաղվադէ ըզկորուստ անձին ,  
 Փուլթայ ժամանէ ժանեաց օրհասին :  
 Սակայն ողջութի դոհար է անգին  
 Թէ ոչ խամբեսցի յանկարդ հեշտալին .  
 Գընացք բարեխառն ըզգաստ յուտելին  
 Մի միայն անգիւտ գիւտ է կեցողին :



## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԱՂՈՒԻՍ

Որ չար խընդրէ մերձաւորին ,  
 Նոյն չար դառնայ 'ի ծոց նորին :

Ուրիշէրոսն չլ լար ի՞նչէ ,  
 Չարը ի՞նչայ դին , և գոհէ :

ՃՀԹ. Ս' էկ երկրագործ մը ցանեց իր ար-  
 տերը և բոլորը զարմանալի լաւ բուսաւ .  
 երբոր կընայէր որ հնձէ ցորենը , դրացիներ-  
 րէն մէկն որ զինքը կ'ատէր ըսաց մոքովը .  
 Իս անանկ արգելեմ ցորենիդ ժողվելն որ  
 դուն ալ տեսնես , ուստի առաւ վառած  
 կերոն մը կապեց աղուէսին պոչը որ բու-  
 նին մէջ բռնէր էր իր արտին քովերէն : Յե-  
 տոյ տարաւ զայն հետը մէկալին արտին մօտ  
 և հրելով հասած ցորեններուն մէջ ձգեց .  
 կ'ուզէր որ այս կերպովս բոլոր ցորենները  
 մոխիր դարձնէ . բայց տես ի՞նչ պատահե-  
 ցաւ : Աղուէսը առաջ երթալու տեղը՝ ճամ-

բայէն ետ դարձաւ որ իր բունը երթայ . և որովհետեւ չէր կրնար երթալ առանց անցնելու իր տիրոջը արտէն որ չարութի կ'ուզէր ընել, ահա վազեց մտաւ անոր արտերուն մէջ ու կրակը տուաւ . և այսպէս բոլոր չարութիւր չարութի ուղղողին գլխուն եկաւ, որ տեսաւ իրեն բոլոր ցորենը մոխիր դարձած իր խորամանկ չարութէն :

Նախանշոփ լաւ ՏարԴի իրենց պէս Ջէլե և Գփնէն ու իննային ու անո՛ւ ուրիշին շնորհաբան . Բայց ամեն ՏարԴ ըրածը և Գփնէ :

Չարակամ խորհուրդ դաւաճանողին  
Գուն գործէ կարճել զօտարաց բարին .  
Բառնայր զարեգակն թէ էր 'ի ձեռին ,  
Զի մի ծագեցի 'ի տուն ընկերին :  
Մի չարակնութիւն ատեր ըզբարին ,  
Եւ մի նախանձու վընասեր նմին .  
Զոր ինչ սերմանես ըզնոյն հընձեցես ,  
Թէ չար թէ բարի գըտանես ըզմին :

## ԶԻԱԴԱՐՄԱՆ ԵՒ ՁԻ

Վայ որ զայլոց փոքրըն դատէ ,  
 Զիւր մեծ չարիս անտես առնէ :

Քո պահանջիդ ասանքէ ԴԻՐ ,  
 Մի՛ գիշի՛ն խորը Կարի :

ՃՀԸ. Պարոնի մը սկէտք եղաւ իրեն ձին  
 որ քաղաքը թողուցեր էր , և հրամեց ձին  
 նայող սպասաւորին որ իր եղած տեղը բե-  
 րէ : Այս հրամանն որ լսեց՝ գնաց անոր ձին  
 առաւ մեկնեցաւ անկէ . երբոր երկուքը միա-  
 տեղ կ'անցնէին տիրոջը դաշտին մէջէն՝ ծա-  
 ռան տեսաւ որ ձին գլուխը կախեր գաղ-  
 տուկ խոտ կ'ուտէր . Գողաւազակը սաց զար-  
 նելով անոր՝ չիտե՞ս որ այս խոտը մեր տի-  
 րոջն է , ասկէ խոտ ուտելը իրեն գէմ է :  
 Պատասխան տուաւ ձին . Գուն որ ինձի կէս  
 չափէն աւելի գարի չես խտար որ ինձի հա-  
 մար գներ է , չիտե՞ս որ այս գարիին կէսը  
 անոր կ'իյնի և գողնալովդ մեկալ կէսը ինչ  
 պէս սովորութի ես ըրեր , ես կը վատուծ-  
 նամ տեսքով դուն մեղքի պատճառ կ'ըլլաս :  
 Եւ ահա այս շատ մեծ փնաս է մեր տիրո-  
 ջը քան թէ զայն որ երեսս կը զարնես :  
 Ուրեմն դադրէ ինձի նեղութի տալու . ե-  
 թէ կ'ուզես հաւատարիմ ըլլամ անոր՝ նախ  
 դուն սկըսէ ինձի բարի օրինակ տալ :

Օրինակ է անպատժառաներուն որ յեկեղեցի  
 չբերեն ձեռնաբաց և չեն արհեստագործ  
 քանակ ձեռնաբաց և չեն արհեստագործ  
 քանակ ձեռնաբաց և չեն արհեստագործ :

Շահատէր ծառայն անհաւատարիմ  
 Այսպէս կենակցի ընդ ծառայակցին .  
 Կարճէ հատանէ զապրուստ ընկերին  
 Լըցուցանել զայն յիւր անյագ փորին :  
 Սոցա դատաստան ոչ շատ յերկարին,  
 Որ զըկողուծի շահիլ նկրտին .  
 Երբ համար խնդրի 'ի դալ դատողին,  
 Պապանձին յայնժամ տալ պատասխան  
 (նին :

### ԱԳՌԱՒ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Պրճնեա բարեօք զէքնալ հողին՝  
 Մի՛ զվաղանցուկ պատիր մարմին :

Մի՛ զարտարէր մարմնդ ունայն  
 Այլ գեղեցիկ հագիդ մայն :

ՃՀԳ. Եւրոպայի օրմը զարդարուեցաւ փե-  
 տուրներով որ ժողովեր էր զանազան թըռ-  
 չուններուն բուններէն և եկաւ անոնց մէջ  
 որ փառաւորուի . իսկ թռչուններն առջի  
 բերանը զուարճացան զանազան գունով փե-  
 տուրներուն վրայ , բայց երբոր մօտանցնայ-  
 եցան և ճանչցան անոր խորամանկութիւնը  
 ամենքը բարկացած մէկէն 'ի մէկ վրան վաղե-



ցին, և շատ քրքրելով ոչ միայն իրենց փե-  
տուրները այլ և իրեններն ալ փեթտեցին :  
Իսկ ագռաւը այսպէս փեթտած ամօթով  
մնաց, անանկ որ վազէց պահուեցաւ, ալ չի  
համարձակեցաւ անկէ ետեւ երևնալու նաև  
ագռաւներուն առջին :

Օրինակ է անոնց որ ուրիշի բռնով իւր զար-  
դարութիւն և յեծութիւն իւր ծախեն . կամ ընդ հոգին  
իւր յիշեն միայն մարմինը իւր զարդարեն, երբոր մա-  
հը Գայ ամենը կ'անցնի կ'երևայ : Պաշտօն զարդա-  
րանք սիրողի մը ըստ . ինչո՞ւ համար իւր հոգին  
բանալի զարդարելու :

Զարդ գեղանկար զարդ բանականին՝  
Ներքին բարութիւնք են հոգւոյ մասին .  
Կրթողականօք չափակցեալ բանին՝  
Գերապանծ փայլի իբրև լուսածին :  
Իսկ որ ճոխացար գանձու իմաստին  
Մի ցանկար զարդու մի մարմնականին .  
Պատկեր քո անգիւտ մտաց անբաւին  
Մի նստամացի 'ի զարդ օտարին :



## ԱՐՏԱՎԱՐ ԵՒ ԿԱՐԱՊ

Մինչ ճանաչես ըզյարգ բարւոյն ,  
Մի՛ Լքաներ զայն հեշտագոյն :

Երբ Լաւ Բանին յարգե գիպէս ,  
Նայէ յեռեկէտ շաւի Կանէս :

ՃՀԴ . Ըրտաւարը կը բռնէ մէկ կարապ մը  
կարծէ թէ սագ է . երբոր վիզը սկիտի կըտ-  
րէր՝ սկսաւ կարապը երգել . իսկ մարդը  
ձայնէն հասկըցաւ և շուտով դանակը տե-  
ղը դրաւ . Սիրուն կարապ , կ'ըսէր սիրելով ,  
այն հաճոյ չէ որ ես քեզ մեռցընեմ որով  
հետև այսպէս գեղեցիկ կ'երգես :

Կարապը այսինքն (թոյ) Լուսնը սագի նման է  
Բէ գունով և Բէ Պեծո-ԲԷ , Բայց յայնը ախար-  
ծելի է , Տանտանդ Երբոր Պեռնիւն է Տօպէնայ  
Խիստ անոյշ կ'երգէ որ օրինակ է առագիւնի ճարտ-  
իանոյ ինչպէս վերն ըսինք :

Կարապ նշանակ է մաքրասիրին

Որ յողւոց հանէ 'ի գալ օրհասին .  
Անձկայ Լքանել զվիճակ մահաճին  
Գնալ մտանել յանմահ վիճակին :  
Ջանա մաքրափայլ լինել ըստ նմին ,  
Լծակցիւ սրբոց գրկել զբարին ,  
Մերթել զճոխութի ըզնորհս բաղդին ,  
Թեթև թևանալ առ քաղցր անձկալին :



## ՀԱՒ ԵՒ ԿԱՏՈՒ

Մի լաեր ըզձայն չարասիրին ,  
 Զի մի չարիք քեզ նիւթեացին :

Շաք Տի Տօփիւր նենգաւորին  
 Որ +եղ լենէ իրեն Բաթին :

ՃՀԷ. Սէկ հաւ մը անդգուշութիւն ուտե-  
 լով թունաւոր կենդանի մը կը հիւընդնայ ,  
 երբոր թւերը վար ձգած կ'երթար՝ կատուն  
 մօտեցաւ իրեն և քաղաքավար ձայնով մ'ը-  
 սաց . Որդեակ չի գտար քեզի ճար մը ըռընա-  
 նալու : Հրամերես , ըսաց հաւը , մէկ խիստ  
 ապահով դեղ մը գտայ որ դուն միայն կըր-  
 նաս ընել . Ի՞նչ է՝ ըսաց կատուն՝ դեղդ սի-  
 րելի . սրտասխանեց հաւը թէ Այս դեղն  
 է քու մէկ դի քաշուիդ , այնչափ հեռու  
 որչափ կարելի է :

Շաք ինչծաւոր Տարտիի իսն որ անոյշ լեզու-  
 ու իւր Տօփենան , և խորհուրդ իռփան որ իերպով  
 ճը զուրիշն յախշասիեն . Բայց անանկներէն հեռու  
 Ժախէլու է :

Այս կարեկցութի գաւաճանողին  
 Չէ վասն ընկերին այլ յօգուտ անձին .  
 Զի խորհուրդ և կամք նենգամիտ չարաց՝  
 Ծանօթից անգամ չար առնել յածին :

Քեզ խորհրդակցել մի թոյլ տար վատին ,  
 Զի մի խարդախեւ մուտ լիցի նմին .  
 Որչափ հեռի կայ 'ի քէն թշնամին ,  
 Այնչափ ապահով քնաս 'ի կային :



## ՈՐՍՈՐԴԻ ԵՒ ՀՈՎԻՒ


Չէ արութի 'ի տան պանծալ ,  
 Ի ժամ մարտի վատթարանալ :

Ինչ շահ ասն թէ թէ թէ խօսիլ ,  
 Բանի ապեն վախով Դեղնիլ :

ՃՀԳ. Որսորդ մը տաքցած վեր վար կ'եր-  
 թարկուգար , երբեմն անտառը երբեմն դաշ-  
 տը կը վազէր . Ի՞նչ կը փնտրուէս՝ ըսաց իրեն  
 հովիւ մը որ ասանկ խռոված կը տեսնեմ  
 զքեզ : Պատասխանեց թէ Մէկ առիւծ մը  
 անցած օրեր իմ խիստ լաւ շունս կերաւ , կը  
 փնտրուէմ որ գտնեմ սորվեցընեմ իրեն թէ  
 որո՞ւն հետ կը խաղայ : Խմհետս եկո՛ւ , ըսաց  
 հովիւը , ես քեզի կը ցցընեմ անոր բունը  
 ուր տեղ որ կը գտնուի : Որսորդը գոյնը  
 փոխելով ըսաց . Բարեկամ , ժամանակը ուշ  
 է ես ալ հիմա խիստ հոգնած եմ չեմ կըր-  
 նար հոն երթալ , բայց վաղը կանուխ կու-  
 գամ կ'աղաչեմ որ տանիս զիս հոն : Հովիւը  
 մէկալ օրը շատ սպասեց բայց մէյմնալ չե-  
 րեցաւ որսորդը :

Օրինակ է փառ Տարգմանց որ ամեն Բանի  
Վրայ Տեծ Տեծ ի լի Խօսին, Բայց փեղն որ Գայ լեզու-  
նին ի լի Կապուի. անոր համար ի' լուսնի Լի Մեծ Խօ-  
սողին յեռոտն Բան լի Գար. և Մեծ փառ նե փեղն  
լի զարնելու նշան է :

Այսպէս վատ մարդիկ յորժամ են'ի տան  
Առաջի իւրոց լինին բազմաբան .  
Բայց երբ 'ի հանդէս գործոց մերձենան՝  
Ձերթ կնամարդի վատթարեալ դողան :  
Քեզ լիցի իւրատ այս իմաստ և բան ,  
Մի առ օտարաց լինիր բազմաբան .  
Ձի բանք ընդ գործոց երբ ոչ միանան՝  
Ծանակ ամենից մնաս զըսբան :



## ԻՇ ԲԵՌՆԱԲԱՐՁ

Միտք յիմարաց որչափ խորհին ,  
Միշտ մնասու ծանրաբեռնին :

Յիմար Տարգման Գործոն Վրայ  
Յիմարուն նշան ի' լուսնի :

ՃՀԷ. Սէկ էշ մը աղ բեռցուած ջուրը  
մտաւ և շուտով վրայի աղը հալեցաւ . քա-  
նի մը օրէն ետև սպունդ (սի-նիլէր) բարձուած  
երբոր կ'անցնէր նոյն ջրին քովէն՝ վազեց չու-  
րը մտաւ որ բեռան ծանրութիւն թեթևաց-  
ինչպէս առջի անգամն եղեր էր , բայց հա-  
կառակն եղաւ . վն զի սպունդը ջուրը ծծեց

և բոլորն ուռեցաւ . ուստի անանկ իշուն  
բեռը ծանրըցաւ որ չի կրցաւ դիմանալ  
ընկաւ ջրին մէջ խղզուեցաւ :

Անիւել + Տարդը հրէաթ ասելի ջանայ խել + Բա-  
նեցընել՝ այնչաթ անշնորհ + Բան ի' ընէ . շաք աղէ  
է որ իրեն ընկածն ընէ ասելի Բան լի հաածէ :  
Անոր հասար ի' ըստի Բէ Շաք լաւ է խելացի Տար-  
դուն հէք + աբ իրել , + ան Բէ անխելիս հէք սե-  
ղան նապիլ :

Այս բերմունք մտաց անխմաստ ռամիկն ,  
Որ կարծէ խորհիլ զօգտակարն անձին .  
Խմաստնոց է այն խորհիլ ըզբարւոյն ,  
Առնել ըստ տեղւոյն և ՚ի գէտ ժամուն :  
Ջանա վառ պահել զխմաստ բընածին ,  
Եւ մի մթապներ ըստ աւանակին  
Որ ոչինչ ունի կշռել զառնելին՝  
Առնել կամթողուլ ըստ բերման առթին :







ՏՆՐ. Արծիւ նէ տաւար: ՏՃԱ. Առիւծ, Կիւնճ և Ուզղ:



ՏՃԷ. Կիւն և Ուզղաւ: ՏՃԶ. Հովիւ և Այծ:



ՏՊԱ. Հովիւ և Ուզղաւ: ՏՊԲ. Արծիւ և Կաշաղակ:

## ԱՐԾԻՒՆԵՏԱՏԱՐ

Ոչ որ յանկարծ գիպի չարեաց,  
Երբ նախատես է ապառնեաց:

Թէ մարմնաւ աշխարհ գործես,  
Շատ շնորհ է քեզ ի՛նչպիսիք:

ԾՆՆ. Երծիւր մէկ քանի փետուր կը փեթ-  
տէ իր վրայէն վար կը ձգէ. որսորդ մը կը  
թողվէ զանոնք, յետոյ նեախն ծայրը կ'անցը-  
նէ և անով նոյն արծիւր կը զարնէ: Մեռ-  
նելու ատենը կը կանչէր արծիւր. Վայ ինձ,  
ես ասանկ խեղճ ողորմելի կը մեռնէի՞ Թէ  
որ անխորհմուծք իմ մեռնելուս պատճառ  
չըլայի:

Անխորհմուտ պատճառ է որ ըրած Բանին վեր-  
ջը չի մարտնչել մահը յետոյ ինչիւն: Շատ  
անգամ մէկ անխորհմ գործի մը անանկ Բան ի՛նչ  
որ աշխարհի մէկ քեզ գար լիւր ինչու ընել: Ո-  
րեքն պէտք է նախ ամեն Բանին վերջը մարտնչել  
որ շնորհուն ինչ անխելտուտեամբ չի զղջայ  
պարտապաշտ:

Ահա տեսարան անխորհուրդ մտաց  
Ըզվախճան գործոց ոչ մտառողաց,  
Որով և ինքնին ըզթեղու կենաց  
Կտրէ հատանէ ի սայր մանգաղաց:

Բանի՛ր անխոհեմք դնին յայս արկած ,  
 Վաղվաղէն ըզմահ հանդիպիլ անձանց .  
 Որ ոչ նախատես լինի ապառնեաց՝  
 Մաշեալ զըրաւի 'ի նոյն ապառնեաց :

### ՈՒՐՈՒՐ

Որ զիւրն ատէ այլոց ցանկայ ,  
 Եւ յերկոցունց վրէսլ մնայ :


Այլոց բանին դռան մի ցանկար ,  
 Նայէ Ժողովնդ ըլլայ յարճար :

ՃՀԹ Արտուի Թէ ուրուրը առաջ հիմա-  
 կուան ձայնէն շատ լաւ ձայն ունէր , բայց  
 Թէ ինչ գիպուածով անանկ անուշութենէն  
 ասանկ խիստ անհամ ձայն եղեր է՝ ահա  
 պատճառը այս Թուշունին անխոհեմութիւն է  
 կ'ըսեն : Օր մը կը տեսնէ որ ձին խնրնջալով  
 ձայն կը հանէ , միտքը կը դնէ ուրուրն որ ինքն  
 ալ անոր պէս ընէ . բայց որչափ աշխատե-  
 ցաւ անոր ձայնը հանելու չի կրցաւ : Գէշն  
 այն եղաւ որ ուժ տալով նմանցընելու հա-  
 մար ձիուն ձայնին՝ իրեն ձայնն ալ աւրեց ,  
 և անանկ խառնուեցաւ որ մինակ մէկ զար-  
 հուրելի աղաղակ մը կը լսուի :

Օրինակ է անոնց որ իրենց ասեցածին լին  
 հասնիբ կ'աղեն ուրիշին նմանիլ , և անով ասել-

շածնին աւելի ի որսնցնէն և անպիստն ի՛շուան :  
 Շատ լաւ է իր ունեցածը խաբարելագործել  
 քան թէ ուրիշին եփեան իյնիլ :

Այս անմոռութիւն բերք են տկարին  
 Որ այլոց ցանկայ նմանել յատկին .  
 Թողու զյատկութի պատշաճեալ անձին ,  
 Ունել նկրտի որ 'ի չար բերին :  
 Զանա կատարել զքոյդ յատուկ ներքին  
 Զանազան ձրիւք իշխանականին .  
 Մի ցանկար այլոց այլք քեզ ցանկասցին  
 Նմանել բարուց վըսեմագունին :



## ԱՌԻՒԾ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ

Իմաստ հանճար մտաւորին  
 Յաղթէ ուժոյ վեհ առիւծին :

Մարդոս զենք իրեն խելան է .  
 Անշի իրնայ աշխարհս յաղթէ :

ՃՃ. Առիւծը մէկքանի կենդանիներու գը-  
 լուխ եղաւ և անոնց հետ միատեղ որսորդ-  
 ներու գէմ ելաւ որ ծեծկուի : Երբոր մօտ  
 գնաց որսորդները նեաեցին իրենց նեաերը  
 առիւծին վրայ վերաւորեցին : Առիւծը հաս-  
 կըցաւ որ վերքը խորունկ է . Բարեկամներ  
 ըսաց , ետ դառնանք . եթէ մեր թշնամիները  
 հեռուէն առանկ կը զարնեն՝ հասկա աւելի  
 որ մօտենանք ի՛նչ չեն ըներ մեզի :

Ո՛ւ որ իր զօր-նէն ապա-իննելով ուրիշը Բա-  
նի Գեղ չի Դնէր՝ առի-ծին պէս խայտառակ  
ի'լլայ, անոր համար ի'լլեն. Թշնամիդ սրլափ  
Գիւր լլայ Դոն զայն խիստ զօր-որի Գեղ Դիւր :

Տես զիարդ ընկճի հզօր ամեհին  
Յանգէն հանճարոյ իմացականին՝  
Զի միտք և ոչ զէնք տիրեն աշխարհի  
Թէ իմաստութիւն զինեալ է բանին :  
Մի վստահանար 'ի քո ոյժ բազկին,  
Մի 'ի վէգ բերիւր ընդ գիտնականին .  
Քանզի իմաստունք Թէ և փոքրոգի  
Փշրեն հանճարով զեղջիւր գոռողին :



### ԱՌԻԻԾ ԿԻՆՃ ԵՒ ԱՆԳՂ

Կինճ և առիւծ երբ մաքառին,  
Անգեղք խնդան յուտել զնոսին :

Երիտ հոգի սրլափ կոռնին,  
Շահ իւր Բերեն Դիւ ուրիշին :

ՃճԻ՞մ. Լ՛ուիւծն ու խոզը անանկ իրարու  
վրայ կատաղած էին որ կռուելով մէկզմէկ  
կը փառատէին . իսկ անգղ թռչունները ու-  
շադրութիւն կը գիտէին անոնց կռիւր, և ի-  
րենց մէջ կ'ըսէին . Թէ որ չիտակը նայինք՝  
այս յաղթութիւնը մեզի համար սխալի ըլլայ,  
վն զի ասոնք իրար չախալի թողուն մինչև որ  
մէկը գետինը չի յնի, ուստի կամ առիւծը և

կամ խոզը հարկաւ մեզի կերակուր կ'ըլլան :  
Այս խօսքը պարապ չեղաւ , վն զի յիրաւի  
ստացան աւելի մեծ որս մը որչափ որ չէին  
կարծեր , որովհետեւ առիւծը մէկէն պատ-  
ռեց զխոզը , խոզն ալ զինքը պաշտպանելու  
համար վիրաւորէր էր զայն . ուստի խոզը  
մեռնելէն մէկ քանի օրէն ետեւ առիւծն ալ  
մեռաւ իր խոցէն . և այսպէս անգղները  
յափշտակեցին երկուսն ալ կերան :

Օրինակ է յետեւ և իռաւանէր մարտինց որ  
իբար խածնելով իռաւան գլխին , և անոնց  
իռածնելով խաղաղանէրեբ և չահին՝ անգ-  
ղին (ախպասպային) ուն :

Ահա անհամբոյր կիրք գաղանային

Ածէ զատելիս ժանեաց օրհասին .

Որով և անգեղք բընակք յեթերին ,

Հանել կեր ինքեանց կան ՚ի տես մարտին :

Այս է ատելեաց գեղեցիկ բաժին ,

Խաճատեն զիրեարս յինքեանց կոտորին .

Մերժեն հալածեն ըզսէր ընկերին ,

Մերժին տեսանել ըզսէր արեգին :



## ԷՇ ԿՌԱԲԱՐՁ

Ձեռն շահ տանել գանձ և բազին,  
Մընալ վատթար թափուլ մերկին:

Մի պարծենալ թէ ունիս գանձ,  
Այն շոք կ'երթայ ինչ փաս բայ:

Ճձք. **Մ**էկ էշ մը վրան կուռք մը բարձած  
կ'անցնէր բազմութե մէջէն և ժողովուրդը  
երեսի վրայ ընկած մեծ յարգութե քերկրա-  
գութի կ'ընէին կուռքին: Իսկ էշը այս պա-  
տիւն իրեն սեպելով սկսաւ հպարտ քալել  
ծանր ծանր և գլուխը բարձրացընելով ա-  
կանջները վեր տնկել: Ասոր ըրածը մէկը  
տեսաւ կանչեց իրեն. Պարոն աւանակ՝ դուն  
կը կարծես թէ մեր յարգութեը արժանի ես  
եղեր, քիչ մը սպասէ մինչև որ կուռքը վը-  
րայէդ վար ինջնի որ կը տանիս՝ գաւազա-  
նը քեզի կը հասկըցընէ թէ յարգութեը որ  
մենք կ'ընենք քուկինն է թէ անորն է:

Օրէնսի է խառնուէր հպարտ ճարտար որ տրեւն  
պարիս քեանելով զինչ Բան Տը ինչ Խաթէ. Բայց  
ապրանչը վրայէն վերցոյածիդ պէս ինչ փայ  
ինչ որ է: Փիւստիանէր խաթանսնէ՝ արքա-  
սին Բարիս ըսին որ ինչ փայ կ'երթայ. վայ անոր  
որ ունայնսնէ ինչ հպարտանայ:



Անբան ջանկուծի կոյր փառասիրին  
 Կարծիս տայ լինել 'ի վեհից սակին .  
 Այլ չէ մեծուծի այն բեռն արտաքին ,  
 Բռն ներքին օթիսք են յոգւոյ մասին :  
 Մի ջանկար փառաց այն անցաւորին  
 Որ գայ և գնայ իբրև բեռնակրին .  
 Այնպէս զարգարեա՛ զնշոյլ բանին՝  
 Զի վեհ մնասցես 'ի գլնալ բաղդին :



### ԳԱՅԼՔ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Զէ պարտ անսալ խրատատուին  
 Երբ խրատու է թշնամին :

Զար խելապով անշղթաին  
 Ծոռ-ռ լի նայիս բարեկամին :

ՃձԳ. ( ) Ըմբ գայլերն ըսին ոչխարներուն .  
 Բարեկամք , իրաւ որ չենք կրնար հասկընալ  
 Թէ ի՞նչպէս դուք կրնաք համբերել անար-  
 գանացն որ ձեր շները ամմէն անգամ ձեզի  
 կ'ընեն՝ շխտկն որ նայինք ի՞նչ ծառայու-  
 թի կ'ընեն ձեզի այս անդգամները ձեր խում-  
 բին ետեէն գալով , բայց եթէ վշտացընել  
 միշտ և խածնել հազար նեղուծի տալով :  
 Մեր խօսքը մտիկ ըրէք և չուտով զանոնք  
 վռննտեցէք , ի՞նչ կը վախնաք միթէ դուք  
 բաւական քաջուծի չունիք որ ձեզ մինակ  
 պաշտպանէք և ձեզի վնաս տուողը հալա-  
 ծէք : Այս խօսքիս վրայ ոչխարներն իրենք

զիրենք խիստ զօրաւոր կարծեցին ու շուտ  
մը վազեցին շներուն ճամբայ տուին . բայց  
շուտով զղջացան , վն զի գայլերը աեսան  
որ շները հեռացան՝ մէկէն վազեցին ոչխար-  
ներուն վրայ բոլորը սլաառեցին :

Ու որ Լեւնամայն խօսքին իւ հաւաքայ և Բարե-  
խաֆէն իւ հեռանայ՝ այս ուխտարներուն պէս ի՛նչ  
լայ . վասն զի մէկն որ Բնու-Բէ չար է ուրիշին  
ու Բարի իրնայ ընէ և ու Բարի խրաք իրնայ  
բաւ :

Այսպէս չարք սլաառեն ըզմիտս անմեղաց ,  
Իբրև բարեկամ ձայնեն լսելեաց .  
Կարեկից լինին խրատառ բարեաց ,  
Մինչև ձգեսցեն 'ի ԹակարԹ իւրեանց :  
Մի՛ լսեր ձայնի մարդելոյզ չարին ,  
Մի՛ քեզ մերձեսցի գազան Թշնամին .  
Քանզի չարակամք միշտ չարիս կամին ,  
Մի՛ ակնկալցիս 'ի նոցունց բարին :



## ԳԵՏ ԵՒ ԱՂԲԻՒՐ

Սի՛ ապերախտ լինիր բարեաց,  
Զի մի՛ հասցեն քեզ տոյժք չարեաց:

Առէ՛ իմ-նիւն Բարերարի՛  
Գրած պահէ մէջը սրբի՛:

ՃձԳ. Պէտքը դէմ ելաւ իր գլխուն կամ  
աղբիւրին և անարգելով կ'ըսէր թէ Երբոր  
կը մտածեմ իմ լայնութիւն ու խորութիւն և  
կը տեսնեմ թէ իմ ջուրս աղբիւրներուն  
ջրէն ո՞րչափ մեծ և ո՞րչափ շատ է՝ փառք  
կուտամ որ ես գետ եմ. բայց դուն սղոր-  
մելի աղբիւր ի՞նչ ես՝ միայն թէ մէկ բարակ  
ջրէ թեւ մը որ արեգակին մէկ ճառագայ-  
թը կրնար ցամքեցընել թէ որ ասպառաժ-  
ները ուր տեղաց որ կը վազես՝ քեզ չի սլա-  
հէին արեւէն: Պատասխանեց աղբիւրը. Վիրբ՝  
իրաւի քեզ շատ կը վայլէ զիս անարգել,  
դուն որ առանց ինձի ոչինչ կ'ըլլայիր. ես  
թող չըլլամ՝ նայինք քու մեծութիւնդ և  
ձկներդ ի՞նչ կ'ըլլան:

Ապերախտ ի՞նչ Բարի՛ ո՞ր փեսնէ՝ լուռե՛ր  
ճանչաւ կարծելով թէ իրմէն է. անոր համար  
եղած Բարի՛ ինչ ալ չահը չի փեսներ և պարստա-  
կ'ըլլայ ո՞ր մարդ մարդո՞ւ Բարերարո՞ւնի՛ լընէ:

Դժնգակ դատմունք ասերախա վառին  
 Անգոսնել բերի իւր բարերարին ,  
 Որով և ըզբան լսէ զարժանին ,  
 Թէ ես եմ սատաճառ քեզ ապիրատին :  
 Արդ մի մոռանար ըստ օրինակին  
 Ձերախտիս այլոց որ քեզ արարին .  
 Գրեա քանդակեա յարձան քո սրտին ,  
 Ձի աշխարհ համայն զայն միշտ ընթերց .  
 (ցին :



### ԿԻՆ ԵՒ ՈՉԽԱՐ


Մի ոսնակոխ լինիր հեզին  
 Որ հպատակ կայ քոյդ ձեռին :

Եթէ իշխան ես ուրիշին  
 Վիշա նեղութի լի աս խեղճին :

ՃՃԷ . Սէկ կին մը կը խուզէր իր ոջևարին  
 բուրդը , և անանկ գէշ կը կտրէր որ կաշին  
 ալ միատեղ կը քերթէր : Իսկ ոջևարը կ'ա-  
 զազակէր թէ կ'աղաչեմ եթէ իմ կաշիս կ'ու-  
 զէս զիս մսածախին խրկէ և թէ բուրդս  
 կ'ուզես՝ խուզողը բերել տուր որ կտրէ :

Օրինակ է անողորմ մարդիանց որ անանկ ասն-  
 ջեւով կ'աշխատցնեն ծառաներն որ հոգին իւ  
 հանեն . Բայց թէ և պախաւասոր ըլլայ ծառան  
 պէտք է մոճբաւ թէ մէկ ալ քէր ունին , ար-  
 քեօ ինչպէս պէտք է իւր ծառայէն և մեր փերճը :

Այսպէս են վարմունք դաժան տիրուհեաց  
 Կռփեն կեղեքեն զաղախինս իւրեանց .  
 Մոռանան թէ գոյ և տիրող ինքեանց ,  
 Մորթեղերծ առնեն այսպէս չարատանջ :  
 Արդ մի խոշտանդիչ լինիր անմեղաց ,  
 Մի՛ իքեղ տեսցի գործ դառն դահճաց .  
 Ոչ մարդոյ է այն այլ բարբ գաղանաց  
 Ընկճել և մաշել զենթարկեալս անձանց :



### ՀՈՎԻՒ ԵՒ ԱՅԾ

Մի բարկութեամբ հարկանէր զոք ,  
 Զի ոչ հարուած բառնի վերօք :

Լէւի խօսում հարտ է շարիւր ,  
 Եւ վերս վերսում է բեթելիւր :

Ճճիչ . **Տ**ովիւ մը բարկանալով զարկաւ այ-  
 ծին գլխուն անանկ սատտիկ՝ որ մէկ եղ-  
 ջիւրը կոտորեցաւ . բայց շուտով զղջացաւ ը-  
 րածին վրայ ու կ'աղաչէր այծին որ տիրո-  
 ջը բան չըսէ : Պատասխանեց այծը . Ո՛վ թըշ-  
 ուառական յիմար , ես թող անանկ բարի  
 ըլլամ որ մեր տիրոջը բան չըսեմ , իսկ այն  
 աչք չունի չի՞ տեսներ թէ մէկ եղջիւրս պա-  
 կաս է :

Բարխտիւր հարտ է ինչ որ ընէ՝ վերջը բխ-  
 ծէր , անոր համար շուսում իւր զղջայ ըրածին

Վրայ . Տարդու իւ վայլէ որ Բարիս-Ռէ Դէժ անանի  
Բան ընէ որ էրդ լի գլխայ : Չար իշխան է որ իրեն  
Վրայ լի բնար իշխանութիւն ընէ՝ Կ'ընէ Սողոմ :

Տարապարտ ցասումն բարկասիրտ անձին  
Իբրեւ բոց հրոյ վառի 'ի սրտին .  
Չղջումն ապաշաւ հետեակ նըմին  
Խայթեն խըռովեն փութով զայն հոգին :  
Արդ մի բարկութի գործեր զանբարին  
Յորժամ մաղձ արեան եռայ 'ի լերդին .  
Բարեխառն եղեալ 'ի բարկանալին ,  
Չի մի զըջասցիս 'ի սլարզիլ բանին :



## ՆԱԽԱՊԵՏ

Այր նախատես ոչինչ զգլջայ  
Երբ յեւս յաջող զչարէն խիթայ :

Արեւան Տարդիի Դէշտ պարտապա Կան ,  
Վրանգն որ Գայ ալապ Կ'ըլլան :

Ճճէ . Երբոր հովը յաջող և ծովը հան-  
դարտ էր նաւապետ մը գնաց իր նաւը նայե-  
լու . խարխիւր ( լենիէլ ) տեղը հաստատեց  
չուանները պատրաստեց և վեր վար կ'եր-  
թար կուգար առագաստներուն քովերն ու  
ամմէն բանին զգուշութի ընելով կը նայէր .  
Ճամբորդներէն մէկը զարմանալով ըսաց ,  
Տէր ի՞նչ պատճառաւ ասանկ շատ կը հոգաս,  
այս ըրած հոգդ ո՛վ որ տեսնէ կարծէ թէ

մօտ էնք վտանգին , ահա ծովն ու հովը մեր վրայ կը ծիծաղին , դուն ինչո՞ւ համար կը վախնաս : Հիմա բանէ մը չեմ վախնար , Ըսաց խելացի նաւապետը՝ բայց գալիքներուն վրայ միշտ կը վախնամ . վն զի բան չմտածած տաւննիս կրնայ մէկ ալէկոծութիւն մը ելլել : Կ'աղաչեմ ըսէ , եթէ յանկարծ փոթորիկ մը հասնի վրանիս մենք անանկ անպատրաստ ո՛ւր կ'երթանք :

Խահէմ մարդը պէտք է որ յաջողութեան մէջ յախող դիպումներէն վախնալով դժուար էինաց , եւ յախորդութե մէջ առանց յաւաստաբէլու յաջողութե ապաստել . Ինչպէս նարա Կամ (Թաւու) Խաղողները կ'ընեն , եւեւ յաջողութե մէջ շատ բացոնին , Կամ յախորդութե մէջ խռովին՝ մէկ Խաղը Կը Կը Կորսնցընեն :

Տես զիա՛րդ խիթայ միտք խոհականին

Ըզճախողակէն 'ի յաջող ելին .

Քանզի յանկայուն չըրջի 'ի ծովին


Ի կիտէ 'ի կէտ փոփոխականին :

Ծով է այս աշխարհ ծըփեալ երերին ,

Ալէբեր հողմունք 'ի նոյն փոթորկին .

Արթուն կաց ըզգաստ ըստ քաջ նաւուդ

Զի մի սուղեսցի նաւ աիրականին : (ղին :





## ԽԱՂԱԽՈՐԴ ԵՒ ՈՍՏԻԿԱՆ


Այլոց անդէս գործոց համբեր  
Թէ և իցեն քեզ վըշտամբեր :

Ո՛վ ո՛ր այլո՞ց է համբերէ ,  
Լեւիին ի՞նչն Ժաշո՛ր համ Բերէ :

ՃՃԸ. **Ս**էկխաղախորդ մը դրացիեղաւ ու տիկանի մը որ տէրու թէ մարդ ըլլալով չի համբերեց անոր կաշին երուն գարշահոտութեւ՝ մինչև դատաստանի կանչեց և կ'ուզէր որ պարտաւորի դրացիութեն հեռանալու . իսկ դրացին շատ պատճառներով անանկ լաւ պաշտպանեց զինքն որ դատաստանը հեռուն ձգել տուաւ : Սակայն ոստիկանը սորվեցաւ գէշ հոտին , անանկ որ շատ ցաւեցաւ խարժած ստիկին վրայ որ փուճ տեղը դատաստանի կանչեց : Ուստի անկէ ետև համբերեց դրացիին ամենևին տրտունջ մը չըրաւ :

Ո՛վ ո՛ր Դրացիին իմ ընկերէն Ձի նեղութի՛ն է ինչ Կենսէ՛ պէտք է Դիտել Դե ինչն աւշապ պահասութի՛ն ունի ո՛ր զո՛րեւ ինչն է . Ե այսպէս Իրաւո՛ւ պահասութիւն գործելով սիրտին ապրիւ ինչ վայելէ . Վասն զի ամէն Բան կ'անցնի՛ Բայց լեւուին խորը անցնի՛ր կ'ըսեն :

Այսպէս կարճամիտք փութով զայրագնին  
 Ի վերայ թեթև բանից ընկերին .  
 Բայց յետոյ իբրև 'ի միտըս լինին՝  
 Տեղի տան կրրից սիրով կենակցին :  
 Արդ մի զայրանար ընդ դործ օտարին ,  
 Մի՛ յարուցանէր կազ ընդ դրացին .  
 Զի ամէն լեղի սիրով համեմին ,  
 Եւ սովորութեամբ անսովորք գիւրին :



## ՀՈՒՆ ՊԱՅՏԱՌԻ

Անդործ հանգիստ և քուն յերկար  
 Աստից լինին սընընդարար :

Գործքի ապէն ծայն է Ռեմբաժ ,  
 Հայն որ քեանէ կ'ելլէ պայ :

ՃձԹ . Պայտառին (սաւառիս) շունը սովորութիւն էր ըրէր որ միշտ պառկէր կը քնանար սալին (էօրաին) քով, թէպէտ պայտառը շատ անգամ երկաթ կը ծեծէր սալին վրայ բայց շունը ամենուին չէր արթըննար . և ընդհակառակն երբոր պայտառը գործքը կը ձգէր կերակուր ուտելու կ'երթար՝ շուտ մը շունը սեղանին ձայնէն կ'արթըննար ու վեր կը ցաթկէր մեկէն սեղանին կը վազէր :

Օրինակ է Ժողովի . շաք մարդ կայ որ գործ-

քի ասեն ըմբռնել ինչ Բայ, Բայդ իւրաքանչիւր ասեն  
անանի արեւուն է. որ ուրիշի Բան չընդար.  
ոսպի ինչ հանգիստն ու քունը շունը արեւուն  
Բնութիւնը ինչ Ժողովն անպիտան ի՛նչն է, հապա՛մար.  
Դուն ինչ լին ընէր որ հանգիստ ինչ սիրէ :

Այսպէս վատթարեալ յետոսմիտ ծուլին  
Եղծեալ զարթնութիւն նընջէ քուն խորին.  
Որով կարգն ուղիղ խամրեալ բընածին  
Արթուն կայ ըզգաստ միայն յուտելին :  
Մի քնափութեամբ շնջի լոյս բանին ,  
Եւ մի ուտելէօք թըմրանալ յանձին .  
Քանզի հեղգ դընացք ըզբազումս արկին  
Ի լայն որովայն կորըստականին :



## ԲԱԶԻՔ

Կագ և կըռիւ կըռուասիրաց  
Յօգուտ կարգին բարեսիրաց :

Անգագնէրն երբ ինչ ինչունին ,  
Բարի մարդի՛ հանգիստ ունին :

Ճղ. Երբեմն բազէներն իրենց մէջ խռո-  
վութի ունէին որ անդադար կը կըռուէին  
իրարու հետ , և ասով ուրիշ թուշումները  
հանգիստ էին անոնց ձեռքէն : Իսկ միամիտ  
աղանձները տեսնելով անոնց թշնամու-  
թիւր՝ բարեգործութի ընելու համար մէ-  
ջերնին մտան հաշտեցուցին , բայց չուտով

զըջացան, վն զի անզգամները հաշտածնուն  
սկս մէկէն սկսան հալածել ուրիշ թուչուն-  
ները և աղաւնիները՝ անանկ որ ամենևին  
անոնց հանգիստ չէին տար, ուստի աղաւ-  
նիները ցաւելով կ'ըսէին թէ Շատ աղէկ է  
ասոնց մէջ միշտ պատերազմ ըլլալ քան թէ  
խաղաղութի:

Ամեն փեղ հալածութի ընելն աղէկ չէ, երբեք  
ի՛նչա, որ հալածութիւն ընելով աւելի մեծ խառ-  
նեծագի, որովհետեւ գեշ մարդիկ իրենց մէջ եր-  
բոր հոռութիւն՝ բարեպաշտները +իւ մը, հանգիստ  
ի՛նչ քան:

Ահանգարտ գըրգռիչք միշտ՝ ի վէճ բերին,  
եթէ ընդ իրեարս թէ ընդ օտարին.

Յորժամ խածատեն զիւրեանց ըզմարմին,  
Բարեսէրք անվէր և հանգիստ նըստին:

Արդ մի կըցորդիր ընդ գործոց նոցին,

Զի մի այն հարուածք քեզ փոխաբերցին.

Դժնեայ անզգամք երբ միաբանին՝

Խըռովեն զարդար զընկեր գըրացին:



## ՀՈՎԻՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Թէ երախտիք ճանաչելին ,  
Արջառք ոչխարք ոչ զոհէին :


Անիբաւն որ գէշ բան լինէ ,  
Մեծ բարոյնի դայն իւր տէպէ :

Ճղն . Հովիւ մը գաւազանով սաստիկ կը  
զարնէր ոչխարին . Ես քեզ, ըսաց ոչխարը ,  
բուրդ և կաթ կուտամ, բարութիւն ի՞նչ զատ  
ուրիշ բան չեմ ըրած . քեզի անպերախտ, դուն  
ի՞նչու ասանկ միշտ գէշութիւն կ'ընես ինձի :  
Պատասխանեց հովիւը , Թէ Ապերախտ դուն  
ես որ զիս չես սեպեր , վս զի իմ աղէկու-  
թիւս քու կեանքդ քեզի բաշխեր է , որով  
հետեւ ամէն վայրկեան կեանքդ իմ ձեռքս է ,  
երբոր ուզեմ կրնամ վերցնել :

Անիբաւ ճարտիկ ինչ աղէկոյն որ ուրիշն  
տեսնեն յաւ դիտեն , արծանի իւր համարին , և  
եթէ իրենք ուրիշն գէշոյն ճշ լինեն թէ ե-  
րախտիք իրենք . Բայց այդ դատաստանն որ բա-  
րոյնի վայր իրենց :

Այս գործ է և բարք ժանտ ապիրատին ,  
Կըռփէ հարկանէ երախտաւորին :

Իբրև դատաւոր դառնանայ նըմին  
 Թէ քո կեանք և մահ ունիմ 'ի ձեռին :  
 Բայց դայ ժամանակ քրննել զերկոսին ,  
 Պըսակ սպարժանաց պահի անմեղին .  
 Արդարք աստտանջին և անդէն հըրճուին ,  
 Զրկողք աստ հըրճուին և անդէն տանջին :



### ԱՐԾԻՒ ԵՒ ԿԱԶԱՂԱԿ

Բանք և զըրոյցք ըզլարս մարդկան  
 Ծածկեն յայտնեն միանգամայն :

Մարտոս Ժորճե Իբեն Խօսքն Ե  
 Ի'ն ԸԼԱԼԸ այն կը յայտնէ :

Ճղթ . (Ժ) Ուչունները սպարաւորեցին ար-  
 ծիւն որ զիրենք կառավարելով Թագաւորէ-  
 ան ալ անոնց հասկըցուց Թէ իրենցմէ մէկը  
 պէտք է օգնական ըլլայ որ իրեն աշխատան-  
 քին մէկ մասն ալ այն ընէ որ ինքը Թե-  
 Թէնայ : Այս բանիս համար կաջաղակն ե-  
 լաւ անոնց մէջէն եկաւ արծիւին ծառայու-  
 Թի ընելու , որուն առջին գրաւ չէ Թէ միայն  
 մարմինը որ ԹեԹե և յարմար է շուտով կա-  
 տարելու ինչ որ իրեն հրամէ , այլ և ունի  
 մէկ զարմանալի յիշողութիւն մը և բարակ  
 սուր միտք մը . դարձեալ Թէ յաջող է՝ ար-  
 Թուն և աշխատաւոր . երբոր անհամար ու-  
 թիշ շատ կատարելութիւնները պիտի մանրա-  
 մասն սկստմէր , արծիւը մէկէն կտրեց անոր

խօսքն ու ըսաց . Այսչափ կատարեալ ըլ-  
լալովդ դուն ինձի շատ յարմար ես , բայց  
դէշն այս է որ խիստ շատախօս կ'երևնաս .  
վս զի կասկած եկաւ որ չըլլայ թէ երթաս  
ամենուն իմացընես իմ պաշտօնս մէջի եղած  
ծածուկ բաները : Ուստի շնորհակալ ըլլա-  
լով անոր շուտ մը ճամբեց :

Շապախօս մարտը որչափ աւելի դինքս գովե-  
այնչափ անհաճոյ կ'ըլլայ մանաւանդ մեծամեծոյ  
առջին . ուստի լուռ կենալու է որ որդիներ  
գովեն իր լաւութիւնը և թէ ինքս : Խեղադի մար-  
տը իւր խօսել ինչ «իւր», կ'ըսէ իմաստունը :

Այսպէս շատաբանք 'ի գովեստ անձին  
Յերեան ածեն զիւրեանց ըզթերին .  
Կարծեն թէ բանիւ ցանկալի լինին ,  
Այնու տաղտկալի յաւետ բոլորին :  
Արդ մի ինքնահաճ պանծար առ վեհին ,  
Մի զքեզ առարկեր յաստիճան վերին ,  
Զի որք վերանան հարկիւ վայրբերին ,  
Եւ ինքնահաւանք նանրանան խոտին :





## ԿԻՆ ԵՒ ՄԱՀ

Մի հաւատար կանանց ձայնին ,  
Որ փոյթ կոչեն ըզմահ անձին :

Կանանց խայնը +էպէ՛ր շարժէ ,  
Որ +իւ Բանով մահ ին իմենէ :

Ճղճ . Սէկ հիւանդ մը երբոր պիտի մեռնէր , կնիկը յուսահատելով կը սրուար ելլալով կ'ըսէր . Ո՛վ մահ հասիր ինձի ու կսկիծս վերջացուր . մի ուշանար եկո՛ւ արեւ կարճեցուր , երանի՛ եր թէ իմ կեանքս վերջընէիր ընկերոջս տայիր . դարձեալ կ'ըսէր , Ո՛վ մահ ինչո՞ւ կ'ուշանաս ես քեզի կը սպասեմ ես քեզ կը փափաքեմ կ'ուզեմ : Ահա ես՝ ըսաց մահը երևնալով անոր , ինչ կը խնդրես ինձմէ : Կնիկը տեսաւ որ մահն իրեն կը մօտենայ սպտասխանեց դողալով . Ո՛հ կ'աղաչեմ առանց երկնցընելու ընկերոջս ցաւերը՝ շուտով հոգին առ որ վերջանայ հիւանդութիւնը :

Որչա՛ր որ մահը մահիւնացու Բնութիւնէ արեւելի է , այնչա՛ր ալ մօտ է ամենուն որ ամէն դիպումով իրագայ ին հասնի . ուրե՛ք ու պէտք է մահը իմենէլ եւ ու ալ մահէն քախլիլ :

Զինչ հրղօրադոյն քան զմահ ասացին  
 Որ նկուռն առնէ զանյաղթ կօրովին :  
 Լուծանէ ըզսէր անքակ լծակցին ,  
 Մինչ յղէ ըզմահ յիւր քաղցր անձկալին :  
 Բուռն է սէր հրղօր յիւր ասպարիզին ,  
 Բայց 'ի մահուանէ լուծանի հեշտին ,  
 Ատելի արկած ըզգայականին՝  
 Վէր 'ի վայր առնէ զարուեստ աշխարհին :

### ԳՈՂ ԵՒ ԱՂՔԱՏ

Որ գընէ զաչս յինչս օտարին ,  
 Տոյժ և չարիք ինքեան գիպին :

Ո՛վ որ շայն զբոլեւ կ'առնէ ,  
 Իրեն գըլիւսն վայ իւր Բեբէ :

Ճղթ . Վիշեր մը գող կը մանէ աղքատի մը  
 խուց . դռանը բացուելու ձայնէն կ'արթըն .  
 նայ աղքատն ու անանկ սոսկալի ձայն կը  
 հանէ որ բոլոր տունը թունդ կ'ելլէ : Իսկ  
 գողը չի կրնար հոն մնալու , այնպէս կը վախ .  
 նայ որ առանց բանի նայելու կը ձգէ վրայի  
 լաթն ու կը փախչի անկէց շուտով : Եւ այս-  
 պէս փնասն եղաւ անոր որ բան առնել  
 կ'ուզէր , և շահն եղաւ անոր որ կարծէր  
 թէ բան պիտի կորսընցընէ :

Անիրաւունէան և գողութիւնն էփեւէ էղողնէ .

բը Ժեշ արտաբ լաւապիւնին խրաւիճելէն ետեւ  
 ճոխիւր Դարձեւ էն . լաւն դի անիւրաւութիւն իրա-  
 յի պէս ի'երէն ուր ուր ճախէ :

Այս է շահ գողոց աւաղակողին

Ձըրկիլ ի շահուց իւր սեպհականին .

Քանզի անիրաւք աստ և անդ զըրկին ,

Ի կրկին վիճակ աղքատ և մերկին :


Առ քեզ ի խրատ բան զառակողին

Մի ցանկար ընչից փոքու և մեծին .

Ձի գողոնք գողոց ոչինչ շահ բերին

Եւ զարգար վաստակս յաճիւն գարծու

(ցին :



## ՄԱՐԴ ԵՒ ԳԱՆՁ

Արդ մի մերժէր զառիթ բաղդին

Որ ոչ դառնայ յիւր շըրջանին :

Բարին ծողվէ Բաղդ Դ Բաղդ ,

Ձի ետ չի գար երբոր ի'անցնի ,

Ճիլ . Խիստ հարուստ մարդ մը ճամբուն  
 վրայ գանձ կը գտնէ , բայց անանկ մեծու-  
 թե մէջ էր որ ամենեւին չէր երևակայէր թէ  
 որ կուգայ որ կարօտ կ'ըլլայ այն գանձին  
 որ գտեր էր . այս պատճառաւ և ոչ զինքն  
 արժանի սեպեց որ ծռի գետնէն գանձը  
 վերցնէ , ուստի ձգեց գնաց : Դամանակ մը  
 անցաւ ասոր մէկ նաւն ընկղմեցաւ բոլոր  
 բանովն որ շատ ծանրագին ապրանքով բար-

ձուցեր էր . և մէկ վաճառական մը բացն  
 ելաւ ու այս հարուստին շատ ապրանքը  
 փճացուց : Յետոյ կրակ ընկաւ տունը բոլոր  
 բանովը մոխիր դարձուց : Դատաստանի մը  
 մէջ ալ իրաւունքը կորսնցընելով շատ բանէ  
 ելաւ , մինչև այս բաներով աղքատացաւ մար-  
 դը : Ան առենը միտքը բերաւ ձգած գանձն  
 ու վազեց հոն որ առնէ , բայց բանը բանէն  
 անցեր էր . վասն զի երբոր առաջ այն տե-  
 ղէն քանի մը քայլ հեռացեր էր , մէկ ըստկի  
 կարօտ մարդ մը անկէ անցնելով տեսեր էր  
 գանձն ու առեր շուտով փախեր էր :

Հարոստ Տարդիի Խաճէն Ռէ Ռշտ անանի  
 պիպի Տան , լիպէն Ռէ սպուերի պէս ին Ժախէ  
 Ի'երեայ . այսօր Տէիին վաղը Տէիալին Ժալ ին  
 պարտի . էլիկ լուսին հոգեոր Բարիտ , անիկ լա-  
 ճ ԼԵԼԱՐ :


Այսպէս է խորհուրդ անմիտ փարթամին  
 Կարծէ միշտ ինքեան դաշնակցիլ բաղգին .

Այլ աւանդ փառաց դիւրափոփոխին  
 Որ փախչի գընայ նրման ստուերին :

Մի վստահանար յանցաւոր ոսկին ,  
 Ըղգանձս իմաստից Ժողովեա յանձին .

Զի 'ի հոլովիլ ձախողակ անուին


Գանձք իմաստուլթէ 'ի քեզ ճոխասցին :








ՃՂԳ. Նապաստակ և Կարաւ: մե. Գայլ և Ոչխար:



մՂ. Առիւծ և Ճանճ: մթ. Աղուէս և Նոխազ:



մթբ. Աղուէս և Գայլ: մթՂ. Ողնի և Օձ:

## ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԿԱՔԱՒ

Որ ընդ այլոց արկած խընդայ ,  
Նովին չարեօք պատժի և նա :

Երբ ուրիշի ին հասնի շար ,  
Քեզ աւ իռ֊գայ շաք մի խընդար :

Ճղիլ. Սէկ նապաստակ մը կը բռնուի որ  
սորդին որոգայթին մէջ . երբոր անօգուտ  
տեղը ասդին անդին կը զարնուէր որ ազատի՝  
կաքաւը տեսաւ զայն և ծաղը ընելով կան  
չեց . Բարեկամ ո՞ւր են ոտքերդ որոնց վրայ  
կը պարծենայիր թէ շուտ կը վազեմ . ահա  
գեղեցիկ առիթ զանոնք գործածելու, զգոյշ  
կեցիր որ չի կորսնցընես : Վազէ քաջ եղիր .  
ջանա որ զիս անցնիս այս դաշտիս մէջ չորս  
անգամ ցաթկելով : Երբոր ասանկ կը խըն  
տար նապաստակին վրայ՝ շուտով իրեն աւ  
անոր նմանը եղաւ . վասն զի ասանկ անհոգ  
ծիծաղելու ատենը մէկալին թշուառութիւնը  
վրայ , մէկ բազէ մը տեսաւ զայն և վրան հա  
տաւ յափշտակեց :

Մարդիային Բնո֊ւթիւն իւրեկից ըստւի պէտք  
է իրարու օգնեն և միմեարուին աշխարհիս դառ  
նութիւն . ով որ Բնամոռութիւն ուրիշի շարեադը վրայ  
իւրեմբայ իսպառիս նման իւր իրարուի :



Այս չարախնդրաց դործ վրիժառուին  
 Ըզնոյն պատուհաս պատճառեաց անձին,  
 Զոր ինչ ոք ցանկայ լինել օտարին  
 Թէ բարի թէ չար հանդիպի նրմին:  
 Կարեկցիլ այլոց է բանականին,  
 Մեղմել զգառնութի վշտաց ընկերին.  
 Դու մի ոտնակոխ լինիր թըշուառին  
 Զի մի այն աղէտք քեզ փոխաբերցին:



### ԾԵՐ ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼ

Յորժամ ծեր ոք զառամանայ,  
 Միտք տղայոց ի նոյն դառնայ:

Ծերը Դառնայ Տանուի կ'ըլլայ  
 Երբ էի վայաժ Բան իւ հոգայ:

Ճղէ. Սէկ մարդ մը չափահաս եղաւ ու  
 ամենեւին մտքէն չէր անցնէր կարդուիլ: Եր-  
 բոր ատենը հատաւ մէկին չէր հաւնէր որ  
 առնէ, մինչև տարիքն առաւ: Իսկ ծերու-  
 թէ ատենը տեսաւ որ տարիքին չատուծե-  
 նէն կնիկներուն ծանրութի կ'ըլլայ՝ կամե-  
 ցաւ անոնցմէ մէկ կին մը առնել: Վերջա-  
 պէս գրեթէ այլ խռփէր էր մէկ մանկահա-  
 տակ (կէս) կնկան մը հաւնեցաւ և զինքն  
 անանկ զօրեղ հարուստ և մեծատուն ցըցուց  
 մինչև կինն ալ հաւանութիւն տուաւ առնե-  
 լու: Բայց շատ չանցաւ զոջացաւ մարդը,  
 վասն զի սրտակին ատենը ձեռնդրէքն որ

եղաւ՝ (պէր եմ) ըսած ինպէս՝ հասկըցաւ ծերն  
ըրած սխալմունքը սկսաւ պոռալ. Վայ դըւ  
խուս՝ կ'ըտէր զարմանալով, ի՞նչ պէտք էր  
ինձի կապուիլ անանկ բանով մը որ հիմա  
ամենեւին հարկաւոր չէ ինձի. երբոր կը վայ-  
լէր այս բեռը տանել՝ ան ասէնը չուզէցի,  
հիմա ի՞նչ խեղճով կ'ուզեմ:

Խեղճ է անոնց որ ապենով աշխարհէ լին  
մաներ և երբոր փաշտէին ի՛տանեն կերպ կերպ  
գործո՞ւմէ մէջ ինչեւէ՞ իրենց հասակին լի վայ-  
ւածը ի՛շնեն: Հասուն մարդո՞ւ ըրած անխաբո-  
ւելի խեղճ գեւ ի՛շնայ ի՛շնեն:

Այսպէս 'ի մանուկ փոխի ծերունին  
Գործէ զանազան իւրում հասակին .  
Ձի թէ միտք արթուն չիցէ 'ի նրմին  
Ալիք ծերութե ոչ 'ի շահ բերին:  
Ալիք ծերութե ասի 'ի գրբին  
Լի իմաստութի՞ հասակ բարեմին .  
Ճանա ծերանալ 'ի տիս իմաստին  
Ձի մի գործեսցես անլայելս անձին:



## ԱՌԻԻԾ ԵՒ ՈՐՍՈՐԴ


Մի հետեիր անկարգ բերման  
Զի մի նկուն լիցիս խոտան :

Անկարգ բանէն հեռու կենաս  
Որ լաւ մահին յեռալ չիցնաս :

Ճղթ . **Ը**ռիւծ մը կ'ուզէր որսորդին աղջիկըն առնել, ուստի վաղեց հօրը տունը խնդրեց որ տայ իրեն . իսկ որսորդը տեսաւ թէ այս սոսկալի գազանին հետ դուրիս չելուիր , և որովհետեւ կը վախնար անկէ՝ չէ ալ չի կըրցաւ ըսելու , ուզեց խորամանկութեւն բան տեսնել : Առիւծին ըսաց թէ Դուն իմ աղջիկս կ'ուզես , խիստ լաւ . մնաց որ քու բաղձանքիդ չես կրնար հասնիլ , վասն զի աղջիկս կը վախնայ թէ կամ ահուաներդ և կամ եղունգներդ զինքը կը սլատուեն . ուստի սարոն առիւծ , քեզի լաւ կ'ըլլայ՝ եթէ կամենաս ահուաներդ հանելէն ետեւ եղունգներդ ալ փրցընենք , ան ատենը ամէն ուզածդ շատ լաւ կերպով կը կատարուի : Իսկ առիւծին միտքը ցանկութեւն կուրացած ըլլալով չի հասկըցաւ դիտուն գալիքն որ թշնամուոյն ձեռքը սլախի մատնուի . թողուց որ զէնքերն իրմէն հանեցին , ասանկ եղածին սէս վրան թափեցան շները , որսորդը և աղջիկը՝ զարկին մեռուցին :

Խրափ է երիփասաւարդաց որ անխաբ ցանկո-  
 թէ հեփեւելով չի կուրանան և իրենք չիւրենք  
 իորանցնեն : Ասանկ եղաւ անյաղթելի Սամսոնը  
 որ քսան փարի աշխարհք գողացաւց ամենոն յաղ-  
 թեց, Բայց յեփոյ կնիան յեռք ճափնոտեցաւ ու  
 այնպէս իոյ՛ր՝ երկաթնեւոյ՛ իսպա՛ծ Բանփեւոն  
 յեջ հաղեցաւ :

Այս անկարք բերմունք մոլեալ առիւծին  
 Զինաթափ նըկուն արար զամէհին .  
 Այն գողացուցիչ ծովու ցամաքին՝  
 Տէս զիարդ ընկճի բանիւ նենգողին :  
 Ո՛վ քանի՛ հզօրք այսպէս մոլեգին  
 Ի ձեռն կանանց յերկաթ կաշկանդին ,  
 Որոց կեանք արեւ փայլէր 'ի դահին  
 Ապա մաշեցան 'ի թախիժ բանտին :



## ԳԻՏՈՒՆ ԵՒ ՌԱՄԻԿ

Յայնժամ գիտուն միայնակ կայ՝  
 Յորժամ ռամիկք գնան առ նա :

Գիտուն հարդը Դնաի կ'ըլլայ՝  
 Երբ անխելք ճէ քովը կ'երթայ :

Ճղթ. Փիլիսոփայ մը մինակ նստած խու-  
 ցին մէջ միշտ կը մտմտար . որ մը գեղացի  
 ռամիկ մարդ մը տեսաւ զայն մինակ՝ շատ զար-  
 մանալով ըսաց իրեն . Իմ խելքս չի հասնիր  
 Թէ ի՞նչ պատճառով մինակուածի՛ր կը սիրես

այսչափ . երգում ըլլայ քեզի որ ես հազար  
տարի այդ բանը չէի ընդուներ : Երեսն  
անգին դարձրնելով պատասխան տուաւ  
փիլիսոփան . Դուն խիստ դիւրին կ'ընդու-  
նէիր թէ որ դիտնայիր թէ քուկին հոս  
ըլլալդ և քեզի պէս մարդկանց իմ քովս  
դալը որչափ ինձի նեղութի կուտան , զի  
ան ատենը մինակ կը մնամ :

Օրինակ և խրատ է գիտնականաց և բան-  
նայից որոնց պէտք է մշտ բազում ըլլալով  
Գրոց հեթ խօսակցիւ , Բէ որ աշխարհայեան առ-  
մէկեւրը դարձանալով բան ըսեն յարի ընելու չէ :

Արդ իմաստասէրք երբ կան առանձին  
Ընթերցմամբ գրրոց քաղցրը կենակցին .  
Զի միայն իմաստն է ճարակ մտաց  
Ընկեր կենակից բարեկամ անգին :  
Փախիր յամբօխէ խառնադանձ ռամկին  
Յառանձնակ վայրի խօսիլ ընդ գլրին :  
Քանզի ազգակից Աստուծոյ ասին ,  
Որ լռիկ 'ի բանս իմաստնոց յառին :



## ՆԱԽԱՆՁՈՂ ԵՒ ԱԳԱՏ

Փառք ցանկալի նախանձառուին  
Պատիժ մնասն է ընկերին :

Նախանձառին մեռի խնդում  
Է ուրիշին վիշտն ու զըրհում :

մ. Նախանձոտն ու ագահը միատեղ Դիտ-  
մին ոտքն ընկան աղաչեցին որ իր բարերա-  
րութիւնը յայտնելով անոնց շնորհք մ' ընէ .  
իսկ Դիտս կը նայէր որ աւելի զանոնք պատ-  
ժէքան թէ բարիք տայ իրենց . այս կերպովս  
ղիւրենք պատուհասեց : Ըսաց նախանձոտին՝  
Նախ դուն բան մը խնդրէ և ապահով  
եղիր որ ըրած խնդիրքդ պիտի առնես , բայց  
աս ալ գիտնաս որ ես քեզի ինչ որ տամ՝ մէ-  
կաշն անոր կրկնապատիկը պիտի առնէ , ու-  
րեմն որոշէ միտքդ ինչ կ' ուզես : Նախանձո-  
տը չի կրցաւ որոշել և անանկ բանի մը ցան-  
կալ որ կրկնապատիկն ըլլայ ընկերին . ուս-  
տի ըսաց որ իր մէկ աչքը հանէ : Դիտն  
ալ ուղիղ դատաստան տեսնելով՝ զարկածին  
պէս մէկը միաջէնի ըրաւ մէկալը կոյր , մէ-  
կը մէկալով պատուհասեց : Սակայն նա  
խանձոտը կը միխիթարուէր ուրախանալով  
թէ ես մէկ աչքս կորսնցընելով՝ ագահին  
երկու աչքը փորել տուի :

Նախանձոք մարտն անանի ին իւրանայ, որ  
 Ռայն ին նայի ընկերւն զնա մը գայ՝ որչափ Ռեծ  
 զնա իրեն ըստ, հոգը ըն զնան զի ուրիշին  
 Լընաւորն ին Ռիւարոնի :

Ահա կոյր բերմունք կոյր նախանձոտին  
 Նախանձու վնաս բերէ նախ անձին .  
 Յանձն առնու հանել զակըն իւր անգին,  
 Ձի բարձրէ զարե յաջաց ընկերին :  
 Ձինչ դժնդակ կիրք քան զայս մահաձին  
 Որ մահ և չարիս ծընաւ յաշխարհին .  
 Մի քեզ մերձեցի այս կիրք մոլեգին  
 Ձի մի սրտոժեցիս ի շանթէ վերին :



## ՄԱՐԴ ՈՐ ՇՆՁԻ ՁՅՈՒՐՏ ԵՒ ՁՋԵՐՄ

Ձինչ դառնաշունչ քան զայն բերան  
 Որ ցուրտ և ջերմ շնչէ համայն :

Անիծած է անանի բերան  
 Որ ին իւրի խաբէքայ բան :

մեծ . Սխառ ձմեռուան մէջ մէկ ճամբորդ մը  
 ցրտէն պաղելով կը մտնէ գեղացիի մը տուն  
 և կ'աղաչէ որ իրեն տեղ տայ ընդունի : Գե-  
 ղացին սիրով ընդունեց զինքն ու տարաւ  
 իր խուցը հանգչեցուց, մէկէն շատ կրակ վա-  
 ռեց, յետոյ սեղան դրաւ և տաք տաք ապուր  
 մը հանեց իրեն : Բայց կրակ վառելու ատե-



նը երբոր կ'երթար կուգար՝ տեսաւ որ ճամբորդը մատուրներուն վրան շունչ կուտար, հարցուց իրեն՝ Ի՞նչ կը նշանակէ ըրածդ : Պատասխանեց Մատուրներս ցրտէն պաղեր են, տաքնալու համար վրայէն կը շնչեմ ինչպէս որ կը տեսնես : Քիչ մը անցնելէն ետե տեսաւ որ ապուրին վրան ալ անանկ կը փչէր, ըսաց թէ Ապուրը տաքցրնելով համար կը փչես : Չէ ըսաց հապա պաղեցրնելու համար : Կրկնեց գեղացին զարմանալով, Այ դէմ կ'ըլլայ՝ թէ որ երկար ժամանակ իմ տունս պահեմ ասանկ մէկ մարդ մը որուն բերնէն թէ տաք կ'ելլէ թէ պաղ : Չայս ըսելով դուրս ըրաւ խուցէն ու շուտ մը դուռը գոցեց :

Օրինալ է խաբեբայ մարդիանց որոնց բերնէն միշտ ներհալ բան կ'ելլէ՝ սոսա իբրա խառնած . երբեմն մէկ բանին լաւ կ'ըսեն երբեմն գէշ . երբեմն հա երբեմն չէ որ նշան է անհասարակ մոլեխ և անհասարակութիւն :

Այս յաւէտ պատկան հակասաբանին

Որ սուտ ճշմարիտ կըրէ 'ի լեզուին .

Ի՛ ղի ջերմ և ցուրտ և է քաղցր լեզին

Շնչէ միապէս յոր և դէպ բերին :

Ո՛վ քանի՛ անդէպ քեզ բանականին

Տիրական պատկեր գըրեւոյդ Ինն .

Արդ մի ներհականն՝ այլ բարի բարին

Շնչեա ընդ բերան քաղցըր սէր ջերմին :



## ՆԱԽՈՐԴԻՔ ԵՒ ՆԱԽԱՊԵՏ

Ջանա յայլթել ալեաց բաղդին  
Զի քեզ հասցէ աջ հզօրին:

Փոքձանքի մէջ Դոնն աշխարհ,  
Որ Աստուած աւ քեզի օգնէ:

մբ. 1) Եկ նաւ մը կը բռնադատուի ալէկո-  
ծութէ և մինչև կուգայ ցամաքը կը զարնէ:  
Հոն տակը բացուելով երբոր ծովուն ալիք  
ներէն պիտի ընկղմէր, մէջի եղած ճամբորդ-  
ներն սկսան պոռալով յուսահատիլ որոնք  
կրնային իրենց ազատութե՛ն ճամբան մտա-  
ծել, սակայն վախը զիրենք անանկ չփոթեց  
որ ամէն բան թողուցին ու միայն թևերնին  
բացած երկինքէն օգնութի կը խնդրէին:  
Իսկ նաւապետը լաթերը հանելով կը պո-  
ռար անոնց Ո՛վ բարեկամք գէշ բան չէ  
թևերնիդ Դիոսին վերցընել՝ բայց այս վտան-  
գիս մէջ աւելի աղէկ կ'ըլլար որ ծովուն  
վրայ շարժէիք թևերնիդ: Զայս ըսելով ծո-  
վը նետուեցաւ ու լողալով ցամաքն ելաւ,  
և ան ատենը նայեցաւ որ ծովուն մէջ ըն-  
կրղմեցան ճամբորդները նաւուն հետ միա-  
տեղ որոնք ուխտ ընելէն ՚ի զատ՝ ուրիշ ճար  
չուղեցին փնտրուել:

Խրատ է անոնց որ հարկաւոր գործ+եցեմն իւ

յգէն ու աղբի էսէն կ'ըլլան ու իրենց Բանը  
ած յաջողէ առանց աշխատանքի . ապա յն մեն  
ու Ժարդն ալ լաշխաբի ած չի յաջողէր :

Անդուլ պաղատանք անգործ պղերդաց  
Ոչինչ ժամանէն էին լսելաց .  
Զի թէ ոչ շարժին ձեռք վաստակողաց ,  
Մի ակնկալցին նստատ 'ի բարձանց :  
Ահա հատուցումն հեղգասիրտ վատաց  
Որ անշարժ գնան 'ի մահու արկած .  
Զանա յարաժամ մինչ 'ի շունչ կենաց  
Ընդդէմ կալ ուժոյ բաղդին կոհակաց :

## ՉԱՐ ԴՐԱՑԻ

Իժ չարաթոյն կին անըզամ ,  
Խայթէ բնաւից որպէս դաղան :

Զուր Ինիւ՝ Խայթող օյ է ,  
Ան Ժարդու Վիշ Ին Բերէ :

մի. Ընդգամ կնիկ մը միշտ բան կը փնտը  
ուէր որ փուճ տեղը դրացիներուն հետ  
կուլ ընէ : Անոնք ալ գացին Էրկանը գան  
գատ ընելով ըսին թէ Այս Ինչպէս ամբա  
րիշտ կնիկ ունիս որ միշտ կը կուլի կը սո  
ւայ և առտուանց մինչև իրիկուն խռովութե  
մէջ է , Էրանի թէ մեղի մէկ ճար մը գտնէիր  
որ կարենայինք այս չար կնկանը հետ վար  
ուիլ : Ո՛հ , ըսաց , Էրկը ինձմէ՞ ճար կ'ուզէք

վարուէլու . ես անանկ չարաչար կապուեր  
եմ որ չէ թէ միայն ցորեկը՝ այլ և գիշեր  
ցորեկ ուղեմ չուղեմ պիտի քաշեմ :

Խրաք է անոնց որ ինչ անպատ քնիան և  
լաւ Դրացիի հանդիպին իմ աչքս է համբերել  
և իմ հեռու քաշել : Փիւղառից ճառ քեռ-  
հարկաւորք քնի ճառ քեռի ինչ քանից՝ լաւ .  
Ահա ինչ քեռեմ ինչ որ ունի յեռալ ինչ , Բայ  
ուելի ինչ քանից ինչ քան ինչ յեռալ ինչ :

Զինչ այլ դրժնդակ քան զանըղգամ կին  
Ընտանի դազան իւրոց լ' օտարին .  
Մերժէ հաշածէ զընկեր դրացին  
Ի տանէ 'ի տուն լեռնէ 'ի լեռին :  
Փախիր յերեսաց այն չարալեզուին  
Մի սլատասիւսներ կռուարար բանին .  
Սա միակ սլատներ է բեւիարին  
Որ հեղու ըղթոյն 'ի սիրտ բողբոյն :

## ԶԿՆՈՐՍՔ ԵՒ ԶԿՈՒՆՔ

Խոնարհք յաղբից վաղ ճողոպրին ,  
Եղճկ մեծաց եթէ անկցին :

Փոքրին Բան ինչ քեռ քեռ է ,  
Մեծն որ ինչ քեռ քեռ է :

մգ. Զկնորս մը իր թուր ծովը նետածին  
պէս շատ ձկներ մէկէն բռնուեցան մեծ ու

սղտիկ միատեղ և ամէն մէկը կը ջանային  
որ թօռին ծակերէն ելլեն փախչին . բայց  
ամէնքը չի կրցան ազատիլ , միայն մանր  
ձկները դիւրին կերպով մը ծակերէն անցան  
փախան , որովհետեւ թօռին ծակերը մանրե-  
րուն համար լայն էին , իսկ մեծերուն հա-  
մար նեղ , որ ամէն դիւստանկ նեղ ծակ ըլ-  
լալով չի կրցան անցնիլ . ուստի մնացին թօ-  
ռին մէջ բոլորը և ձկնորսին ձեռքն ընկան :

Առախ ևս սորվեցենք թէ խոնարհ և աղքատ  
ճարտը աշխարհիս փորձո՞ւն մէջ որ ինչի՞ շո-  
քով իրնայ ազատիլ , իսկ հպարտ և մեծ ճարտի-  
ներուն իործանումը շարաւար կ'ըլլայ . ևս առա-  
ւել հպարտ ուսումնականներուն և վարդապետ-  
ներուն :

Տես զիարդ խոնարհք անցանէն հեշտին  
Ընդ անցըս խոնարհ մահաբեր ցանցին .  
Փարթամք մեծամեծք ոչ փոյթ ճողոտարին ,  
Որսող թշնամւոյն կերակուր պահին :  
Մի ցանկար վեհից և մեծագունին ,  
Որոց կեանք արեւ մերձ կայ օրհասին .  
Թէ ոչինչ անձկաս կենաց փարթամին  
Փռլթուլ տեղի տան արկածք աշխարհին :



## ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐ

Ի չար արկած թող զանդգամն ,  
 Ի բայց փախիր զի է գազան :

Անշարժն օգնիւ յ' ընտր ,  
 Կ' ընէ ընտել իրեն պաշար :

մէ . Սէկ գայլ մը երկար ժամանակ չը-  
 ներէն հալածուելով կը հոգնի և կը թուլնայ  
 մինչև կ'իջնի մէկ տեղ մը հոգնութի առնե-  
 լու համար որ հեռու էր գետէն ուր աե-  
 ղէն մէկ ոչխար մը ջուր կը խմէր : Որովհետև  
 գայլը ծարաւ և անօթի կը մարէր , ուժն  
 ալ հատեր էր որ կարենայ առաջ երթալ  
 և ուղածը գտնել , ուստի կանչեց ոչխարը  
 ու աղաչեց որ իրեն քիչ մը խմելու ջուր  
 բերէ : Միտքը դրեր էր որ ջուրը խմածին  
 սկստ ոչխարն ալ ուտէ և ասով երկու ու-  
 ղածն ալ սխալ գտնէր . բայց ոչխարն անկէ  
 կասկած ունենալուն համար խիստ զգուշա-  
 նալով տեղէն ալ չի շարժեցաւ ու կանչեց  
 գայլին հեռուէն . Ո'վ բարեկամ ես յօժար  
 կամքով քեզի օգնութի կ'ընէի , բայց որով  
 հետև դուն գայլ ես կը նայիմ որ աւելի  
 մտի կարօտութի ունիս քան թէ ջրի , ուրեմն  
 քեզի աղէկութի ընելու համար կը մտածեմ  
 զիս քեզմէ հեռացրնել քան թէ մօտ գալ :  
 Զայս ըսելով շուտ մը փախաւ և թողուց  
 անանկ գայլն որ ուղածին չափ ոռնայ :

Անգագամ ճարտիկ նեղն որ իյնին անոյշ լեզու-  
 Թաթելու ի'աղաղակեն որ ուրիշը խաբեն . Բայց  
 խելացին պէտք է հեռու թախել , լասն զի ու-  
 ղածնին գանելեն էպե՝ լայն 'ի լրան կը Բերեն :

Արժանի պատիժ այն նենգաւորին  
 Հիւժիւ և մաշիւ առ ցաւոց սրբոյն .  
 Զի որ չար առնել փութայ անմեղին  
 Չարեաց հանգիպի այսպէս վշտագին  
 Արդ մի մերձենար 'ի չար թշնամին ,  
 Եւ մի նըպաստեր այն չարասիրին ,  
 Որ 'ի չար արկած գոչէ լալագին ,  
 Տէս զինչ արասցէ երբ լինի յուժին :



## ԱՌԻՒԾ ԵՒ ՃԱՆՃ

Թէ և յաղթես վեհ առիւծին  
 Երկիր յուժոյ փոքրագունին :

Շաք թ քեաներ ձեծ ձեծ երաւ  
 Պըզքի Բանէ ամօթ 'ի լուսն :


մը. **Ն**անձը առիւծին հետ պատերազմ  
 բացաւ ու խելքովը յաղթեց անոր , վն զի  
 երբեմն կռնակը խածաւ երբեմն կուշոր  
 մինչև համարձակեցաւ ամէն դին խածնել .  
 յետոյ մտաւ ականջն ու քիթը և այնչափ  
 նեղութի տուաւ առիւծին որ կատաղու-  
 թէն ինք զինքը պատուեց թէ ինչո՞ւ համար  
 մէկ պզտի կենդանի մը զիս ասանկ կը չար-



չարէ որ ես անոր բան մը չեմ կրնար ընել :  
 Իսկ ճանճը այս յաղթութիւնն որ ըրաւ սկսաւ  
 բզզալով վեր ելլել և ոստայնին սարդին թրու-  
 չելով խմացընել ըրած յաղթութիւն մինչև  
 խոտորելով գնաց անխելքը սարդին վրայըն-  
 կաւ փակաւ, տեսաւ որ վրան կը վազէ թշնա-  
 մին . Վայ ինձ կը կանչէր, կը վայլէ որ սար-  
 դին ոտքերը ճզմեն զիս որ առիւծին ճան-  
 կերէն ազատեցայ :

Ահաբաւան մարդը վերջ տուի, ինչ որ ընէ  
 վերջապէս էր իրծանի մէկ պղտի պատճառով յի-  
 ր ինչ ըսաւ հասկնայ . որտէ մեծամեծ մար-  
 րիկ աշխարհի քիշելով հաւաքացի էն, մէկ  
 իմաց բանէ յի իրծանէր էն :

Արդ պերճ յաղթութիւն ունայն պարծողին  
 Զիարդ 'ի փոքուէ ջըրեցաւ հեշտին .  
 Զի որ զինքըն վեհ գընէ հզօրին՝  
 Կոր 'ի գլուխ պարտի յանգրէ չնչին :  
 Քանի վեպ յեցեալ 'ի սահուն բաղդին  
 Միշտ յաղթող լինել հանուրց կարծէին .  
 Բայց 'ի սկզբան անդ երբ պերճանային  
 Ի փոքրիկ առթէ 'ի չիք սուղանին :



## ՄՈՒԿՆ ԵՒ ՁԱԴ ԻՒՐ

Թէ փորձ սրակն ոչ տեսանէ  
 Ձիարդ անփորձ ակըն տեսցէ :

Փռն Ռծերուն գուն հեպեւէ  
 Չի գար շատ գուն եպեւէ :

մէ . Սէկ մշակ մը մուկը կը տեսնէ ու  
 ետեւէն կ'իյնի որ սպաննէ . իսկ մուկը աչ-  
 քին սղախկուծէ չէր կրնար ծակը դանել  
 փախչել թէպէտ որչափ որ կարելի էր կը  
 վազէր դէս 'ի ծակը : Ուստի ձագը կանչեց  
 իրեն Մարիկ անկարելի է որ գուն ազա-  
 տիս մինչև որ մէկը քեզի առաջնորդ չըլլայ ,  
 ուրեմն իմ ետեւս եկո՛ւ ես քեզ կը տանիմ  
 հոն ուսկից որ ելար : Ըհ ձագուկս , ըսաց  
 մայրը , ի՞նչպէս կրնամ քեզ առաջնորդ ը-  
 նել ինձի երբոր գիտեմ թէ գուն ինձմէ  
 աղէկ չես կրնար տեսնել :

Պէտէ է որ առաջնորդին միտն ալ Բայ ըսայ  
 ալն ալ որ իարենայ նախ ինչը շիտակ երևալ և  
 ուրիշներուն ալ շիտակ ճամբայ սորվեցնել , Բէ  
 չէ՝ իր աշխարհ իրեն առաջնորդութիւն ընելով  
 Բան ինչ սորվեցնէ որ ինքս Ռծ աճօթ Բան է :

Այս էն թերակիրթ դատմունք անփորձին ,  
 իշխէ առաջնորդ լինել փորձառուին .

Ուղղէ ըզգնացս իւր առաջնորդին ,  
 Այլ ոչ գիտէ ինքն ուր յանգի ուղին :  
 Արդ մի խտտորիւր յաջ և յահեկին  
 Ուղիղ ընթացիր ըստ ուղիղ կարգին :  
 Զի ամօթ մեծ է գիտուն ուսուցչին ,  
 Երբ յայլոց ուղիւ յանսայթաք ուղին :



### ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ ՊԱՅԹԻՆ

Վայ որ անյագ տենչայ ուտել,  
 Մահու սրտոժի անդ 'ի խնդրել :

Որչա՞ր որ շաք ուտել ջանաս՝  
 Անչա՞ր զուտով ուէն և կ'ըլլաս :

մե. **Լ**որկու շուն գետի մը քովէն կ'երթայ  
 ին ու տեսան որ ջրին երեսը կըտոր մը միս  
 կայ իրենցմէ հեռու . մէկը մէկալին ըսաց  
 Թէ Բարեկամ , ջանք ընենք որ այս որսը  
 չի կորսնցընենք , ես շատ լաւ հնարք մը  
 մտածեցի զայն ձեռք ձգելու համար . մեր  
 կեցած տեղէն մինչև հոն եղած ջուրն որ  
 կը տեսնես կրնանք խմել , և այս ջուրը  
 խմածնուս պէս լաւ գիտես որ կը ցամքի  
 մօին եղած տեղը և այսպէս մեզի շատ գիւ-  
 րին կ'ըլլայ երթալ սրտուական միսն ու  
 տել . գիտնաս սիրելի որ առանկ մեր ձեռքէն  
 չելէր միսը : Այս խօսքով սկսան երկուսն  
 ալ խմել գետին ջուրը և սաստիկ ուռե-  
 լով շուտ մը շունչերնին կորեցաւ ու հոն  
 մէկէն ճաթեցան :

Մուսկիանը անանկ իւր իւրացունէ Տարդուս  
 միգրան որ խենդի Բանէր կ'ընէ ու շինանար . հին  
 ապենը Թագաւոր իւր այնչափ որ կ'ըմբռնուի ան  
 սորված էր որ միւլն կ'երակուարին մեջ քիւնը Բե  
 րանը ի խօսէր լէր իւրանար :

Յայս յանդի վախճան ծառայից ախտին ,  
 'Նովին կորնչել յոր անյադ բերին .  
 Այնչափ կուրացէ՛ք յանկարդ բերկրալին  
 Մինչ պայծիւ 'ի ջուր յանկար առնելին :  
 Արդ մի հետեիր բերմանց մոլեգին ,  
 Որ անչափ տենջմամբ յանլուրըս ձգին .  
 Սանձեա զապստամբն եղեալ 'ի կարգին՝  
 Զի մի կորուսցէ ըզբեզ յանաեղին :

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ՆՈՒԱԶ

Մի ընկերեր խորամանկին ,  
 Չգէ զբեզ յանել գբին :


Խաբէբային լուսն ընէր ,  
 Քիւլ իւ յգէ լեւած քոսեր :

մթ . Միւրեան ու այծը միատեղ ճամբոր  
 դուծի կ'ընէին . որ մը սաստիկ ծարուելով  
 պապակեր էին , գտան մէկ հոր մը մէկէն  
 մտան մէջը ջուր խմեցին , բայց դժուարու  
 թիւն եղաւ անկէ դուրս ելլելը որովհե  
 տն հորը խորունկ էր , այծը չէր գիտէր  
 թէ ինչպէս պիտի վեր ելլէ : Աղուէսն ը

սաց իրեն թէ Եղբայր մի վախնար չատ  
դիւրին է երկուքիս ալ ասկէ ելլել . քեզի  
ուրիշ բան պէտք չէ ընել՝ միայն երկու ոտ  
քի վրայ ել շիտակ պատին կրթընէ՝ որչափ  
որ կրնաս վեր բարձրացուր զքեզ , ես ալ  
թաթիկն երովս կռնակէդ վեր կ'ելլեմ եղ  
ջուրներուդ վրայ , յետոյ դիւրին մը կը ցաթ  
կեմ հորին բերանը , անկէ ետեւ քեզի օդ  
նութի ընելով մէկէն վեր կ'ելլես : Այծը  
հաւնեցաւ այս հնարքիս , և անանկ լաւ կե  
ցաւ որ աղուէսը ցաթկեց ելաւ հորէն , ու  
փախչելէն 'ի զատ ուրիշ բանի չի նայեցաւ :  
Ուստի թողուց անանկ ընկերն ու ծիծաղե  
լով կ'ըսէր . Մօրուքդ երկնցընելու տեղը  
խելքդ երկընցուր որ գլխուդ ճարը գլու  
նես և միտք բանեցընելով ատկէ ազատիս :

Խարդախ մարդը մինչև որ բանը լմննայ Բա  
րեկամ-Ռիւն կ'ընէ , անկէ ետեւ ծաղը ընելով իր  
ճամբան կ'երևայ :

Այսչափ է նախատ խարդախ մտերմին ,  
Այս և հասուցումն չարաց ընկերին .  
Նա ընկերանայ ձգել 'ի գբին ,  
Սա յուշի լինի երբ կայ 'ի նմին :  
Այս քեզ է խրատ ո՞ կանանցածին ,  
Մի խաբիր փութով բանիւ նենգողին .  
Մինչ յամբոկ գործոյն քեզ է մտերիմ՝  
Ապա ծաղը առնէ գնայ խնդադին :



## ՈՒՐՈՒՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Մի ուտեր հաց ընդ թշնամին ,  
 Զի կերակուր լինիս նմին :

Թշնամիդ պապին ու հաց ,  
 Քեզ էր կ'ընէ պապառ ճշ հաց :

մթ . ( ) ր մը ուրուրը կը հրամցընէ սլզաի  
 թռչուններն որ հարկիքը դան , իբր թէ  
 մեծ պատրաստութի ունէր իր տօնախում  
 բութիը կատարելու համար : Իսկ անխելք  
 թռչունները բան մը չի մտածելով վազեցին  
 եկան որ հարկիք տեսնեն : Սակայն յիմա  
 րութի ուրուրին ճանկն ընկան որ զանոնք  
 ժողված տեսածին պէս յանկարծակի վրա  
 նին ընկաւ մէկիկ մէկիկ ջարդեց կերաւ :

Նենգաւոր մարդի միշտ երեսանց պապաւելով  
 ուրիշին քոնը կ'աւրեն . ուրեմն պէտք է ամէն  
 մարդո՝ հաւաքաւ , եւս առաւել թշնամոյն : Շաք  
 մարդի պապի գանելու համար եւ հարկի քեւ  
 նելու համար ի՞նչան գացին :

Տէս յիմարութի թռչնոց երամին՝

Որ վստահ դնան առ բուն թշնամին .

Քանզի ոչ փախեան յաղբից փորձողին՝

Անկան ծախեցան ի ժանտ որկորին :

Արդ մի վստահիր յանհաշտ ռիսերիմ,  
 Մի քեզ քաղցրասցի հաց նենդաւորին .  
 Բազումք ցանկուծ թաւառուոյ կերակրին,  
 Ի չար թշնամւոյն որովայն մտին :



## ՄԱՐԴ ԵՒ ՁԻ

Վայ որ դիմէ 'ի դիրկ մարդկան ,  
 Ընկձեն առնեն ոտից կոխան :

Վայ քեզ մարդոս Բէ Յեռա՛ն Իյնաս ,  
 Հոսք Տէ անոր Գեցի Ի' Շէւաս :

մօծ . Երբեմն ձին բարկանալով եղնիկին  
 վրայ որ անոր ջուրը պղտորէր էր՝ սկսաւ  
 ծեծկուիլ , բայց յաղթուեցաւ , երբոր յոյսը  
 հատաւ՝ դնաց մարդուն ընկաւ աղաչեց որ  
 իրեն օգնուծի ընէ : Իսկ մարդը խոստացաւ  
 վրէժինդիր ըլլալու թշնամւոյն դէմ , միայն  
 թէ թող տայ որ սանձ ( ի՛նձ ) դնէ բերանը  
 որով կարենայ առաջ տանել և կայնեցընել  
 զինքը ինչպէս պէտք ըլլայ : Ձին սիրով  
 յանձն առաւ սանձ դնել , ուստի մարդը  
 սանձ դրաւ ու հեծաւ վրան և եղնիկին ե-  
 տնէն ընկաւ բռնեց մեռցուց : Յետոյ ձին  
 շնորհակալ ըլլալով մարդուն ուղեց երթալ ,  
 բայց մարդը տեսնելով անոր շահը՝ ամենեւին  
 մտիկ չըրաւ ըսելով՝ Ա՛՞՞ չընէ որ ես թող  
 տամ ասանկ մէկ կենդանի մը որ այսպէս  
 լաւ ծառայուծի կ'ընէ . զայս ըսաց ու



լաւ մը քաշեց սանձը և ստիպեց որ կամայ  
ակամայ երթայ քաղքին ճամբան . և այսպէս  
ձին կամքը կոտրելով բռնադատեցաւ հնա-  
զանգիլ մարդուն ուսկից յիմարութիւն օգ-  
նութիւն խնդրեր էր :

Խրաք է անոնց որ համախորհեամք ուրիշին  
վրէժխնդիր ըլլալու համար իրենք ղերենք Գերի  
ի՛րենք , աղտաք և լիւսառաւիտն ի՛րենք :

Այս օրինակ է ըմբոստ յիմարին ,  
Ի տիրել այլոց նուաճի ինքնին .  
Առ ՚ի լուծանել վրէժս ընկերին՝  
Սանձի կաշկանդի ձեռամբ մարդկային :  
Դու ազատ ծնեալդ ըստ տիրականին ,  
Մի՛ ընկճիր գիւրաւ յախտից տիրողին .  
Սանձեա զապստամբն անսալ իշխանին ,  
Հրահանգ և կրթեալ հպատակ բանին :



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԳԱՅԼ

Ուտիր կշռել ըզժամանակ ,  
Քննեա զպիտոյսն որ քեզ է անկ :

Այն Բանի Ժամանակի Իսյ ,  
Հարցաւ քննէ քեզն որ Իս-Գայ :

մէք. Եւ զուէս մը գիշերանց կ'ելլէ իր բու-  
նէն կը մոնէ արտին մէջ բան ուտելու հա-

մար . երբոր ասդին անդին կը ստըտէր՝ ըն-  
կաւ հորին մէջ որ չորս գիէն փորած էր :  
Այս բանն եղած ատենը անկէ գայլ մը  
կ'անցնէր . աղուէսը կանչեց իրեն , Բարե-  
կամ , ո՛հ օգնուծիւն ըրէ ինձի կ'աղաչեմ  
չուտով ասկէ հանէ : Գայլն ալ հանդիստ  
ձայնով մը ըսաց Համբերուի , բայց կ'ուզեմ  
խմանալ թէ ինչ պատճառով հորին մէջ ինչ  
նեղու պարտաւորեցար կ'աղաչեմ որչափ  
կարելի է ինձի տեղն 'ի տեղը պատմէ ինչպէս  
ըլլալը : Ո՛վ բարեկամ , ըսաց աղուէսը եր-  
բոր զիս ասկէ հանես . քեզ կը պատմեմ որ  
հետաքրքրուծի՞ր կատարուի , հիմա ատենն  
է ինձմէ պատմուծի խնդրելու երբ կը տես-  
նես որ ահա կը խղդուիմ :

Օրինա՛յ է անոնց որ ուրիշին խելճո-նետնը  
շաւափից ըլլալու քեզը հեգհարհո-նք կ'ուշե-  
պաքճառն իմանալ եւ մշադրելով ծաշը ընել :

Ո՛վ ապարասան մտաց գաղանին ,  
Որ ոչ կարեկից լինի ընկերին .  
Տենչայ խմանալ պատճառ արկածին ,  
Չի ծիծաղեսցի ընդ վիշտս անբաղդին .  
Արդ մի հետեիր դու օրինակին ,  
Եւ մի քեզ տիպար առցես դործ չարին .  
Թէ կամիս գիտել զգործս օտարին ,  
Քննեա և ուսիր ըստ ժամանակին :



## ԱՌԻԻԾ՝ ՀԻԻԱՆԴ ԵՒ ԱՂՈՒԷՍ


Արդ հետք այլոց գնացք և վարք՝  
 Լինին գիտնոց դաստիարակք :

Ուրիշներն ընթաց քեզէն  
 Խելացիներն խրատ փառնէն :

ԺԺԳ. Առիւծը հիւրնդցաւ և ամէն կեն-  
 դանիններուն գետաւան խրկեց կանչեց որ  
 դան միսիթարեն զինքը նեղութէն որ հի-  
 ւանդութիւն կը պատճառէր : Ուստի ամէն-  
 քը շուտով վազեցին եկան առիւծին տեղը  
 որ զանոնք մէկիկ մէկիկ կը խղզէր երբոր  
 հոն կը հասնէին : Մինակ աղուէսը աղէկ  
 չէր սեպէր առիւծին երթալ՝ թէպէտ կա-  
 պիկը շատ անգամ եկեր էր առիւծին կող-  
 մանէ աղաչել որ մէյմը երթայ իր պարտքն  
 ընէ ինչպէս ուրիշներն ըրին . որուն այս  
 պատճառը տուաւ . Շատ անգամ գիտեցի  
 կենդանիներուն ոտքի տեղն որ այցելութե-  
 գացին առիւծին տեսայ որ ամենուն ոտ-  
 քին նշանը կը ցցընէ թէ ներս մտեր են ,  
 բայց չերևնար թէ մէկն անկէ դուրս ելեր է :

Պէտք է արձան փէնաւ Բնամիներէն ու լի  
 խաբուիլ, վասն զի շատ անգամ բարեկամ էրանա-  
 ւով մարդը լարաւար իւր յգէն «բոգայնի» մէջ :

Զխարդ քաջ դիտէ միտք նրբագնին ,  
 Յայլոց փնասուց խրատի ինքնին .  
 Զի նշանք և հետք գործոց աշխարհին՝  
 Մնան խրատել չեղեալ ապառնին :  
 Զգաստ և արթուն լեր յապագային ,  
 Այլոց վերպանք քեզ խրատ լիցին .  
 Թէ թմրեալ շրջիս առ թակարդ ակալին՝  
 Ի նոյն թակարդեալ կորնչիս հեշտին :



### ԿԱՊԻԿ ԵՒ ԿԱՏՈՒ

Զեռք յիմարաց գործէն չահին  
 Զապրուստ և չահ խորամանկին :

Անեւ Գարդի շուքի ի բախտին ,  
 Այլոց համար միշտ կ'աշխատեն :

մեղ . Կապիկն ու կատուն կրակին մօտ կը  
 մտնտային թէ ինչպէս կրնան առնել կրա-  
 կին վրայէն շագանակը ( քէսքանէն ) որ կը խոր-  
 վէր : Ե՛ղբայր , ըսաց կապիկը կատուն , այս  
 շագանակներն որ կը տեսնես՝ անանկ յաջո-  
 ղութի կրնանք առնել որ չէ եղած . այս  
 բանիս համար իմինէս աւելի յարմար կը  
 տեսնեմք ու թաթիկներդ , դուն միայն մո-  
 խիրէն դուրս քաշէ՝ ես ասդին կ'առնեմ :  
 Այս հնարքիս հաշտեցաւ կատուն . և նախ  
 կրակները ետ առաւ ապա մոխիրը , յետոյ  
 թաթիկը տանելով բերելով մէկ քանի հատ  
 կրակին մէջէն հանեց . կատուն թաթիկը

տաքուլթէն կ'երէր՝ կապիկը հանգիստ կ'ու-  
տէր : Մէկ ծառայ մը այս բանիս վրան ե-  
կաւ՝ խռովեց անոր հարկիքը , բայց կապիկը  
մէկէն փախաւ . ուստի բոլոր պատիժը կա-  
տուն քաշեց և բոլոր օգուտը կապիկին  
եղաւ :

Շահասէր ճարտէր Ռաբի իւր շահը իւր նայի , ու-  
րիշին ինչ որ ըլլայ հոգ չենէր , անոր համար  
պէտք է հետո- ինչաւ անանկներէն :

Անխմատ ռամիկք գիւրասահ պատրին ,  
Գործէն վասն այլոց ոչ 'ի շահ անձին .  
Տքնին 'ի հաճել սիրա շահասիրին ,  
Անկեալ 'ի վասնիք չարաչար պատժին :  
Զգոյշ լեր ո՛վ մարդ մերձիլ յայնպիսին՝  
Որ քեզ չար խորհի և շահ իւր անձին ,  
Զի կենակցութի ընդ խորագիտին  
Վնաս պատուհաս բերէ ընկերին :



## ԱՌԻՒԾ ԵՒ ՅՈՒԼՔ

Ուր միութիւն իցէ անքակ՝  
Յաղթէ ուժոյ զերթ ամբարտակ :

Երբոր փեղ ճշ մոռնիւն էայ՝  
Այն բանի յաղթող է' լուսայ :

մօէ . Չորս ցուլ սովորութի էին ըրեր որ  
միատեղ արծին , և իրենց վտանգը ճանչա-  
լով միշտ զգուշութիւն կ'ընէին առիւծի մը  
դէմ որ կը պտըտէր մօտ անտառին մէջ ու  
կը սպասէր որ զանոնք սլարապ գտնէ յափը-  
տակէ : Բայց առիւծը տեսնելով անոնց  
զգուշութիւնը որ միշտ գլուխնին դէպ իրեն  
տնկած կը կենային՝ հարկաւորեցաւ սա-  
տանութի բանեցընելու : Ուստի նախ և ա-  
ռաջ ձևացուց թէ միտքը փոխած է անկէ,  
ետեւ այլ պիտի չի դպչի անոնց , յետոյ ետ  
դարձաւ եղած տեղէն շատ հեռուն գնաց :  
Յուլերն ասանկ տեսածնուն պէս կարծե-  
ցին թէ անոր այսչափ հեռանալովը ապահով  
եղան և հոգ չընելով իրարմէ զատուեցան  
դաշտին մէջ մէկն ասդին մէկալն անդին  
հեռացան : Ան ատենը առիւծը նորէն դար-  
ձաւ յանկարծակի ընկաւ անոնց վրայ , և ո-  
րովհետեւ զատուած էին՝ շատ դիւրին եղաւ  
մէկիկ մէկիկ չորսն ալ յափշտակել :

Ուր քեզ որ Ռաբանու-Լի կայ ամենուն իւր յաշ-  
Լէ . ուր որ Ռաբանու-Լի-ն էի կայ հարկաւ իւր  
խորժանի :

Քանի՜ զօրաւոր անքակ միութիւն

Յաղթող ճիրանաց անյաղթ առիւծուն .

Բայց երբ քայքայի այն ոյժ բռնագոյն՝

Յաղթի 'ի փոքունց այսպէս հեշտագոյն :

Հզօր սէտտութիւնք պանծացեալ 'ի սոյն

Առանց միութեան եղեն անանուն .

Այն որ աշխարհի տիրէր վեհագոյն ,

Արդ անկանգնելի կայ յիւր կործանումն :

## ՈԶՆԻ ԵՒ ՕԶ

Անզգամին թէ տաս տեղի ,

Մերժեալ առնէ զքեզ անտեղի :

Աներեւին Լէ երես քառ ,

Մեծ շատով շոք իւր զշրտա :

մօզ . **Ս**էկ ոգնի մը որսորդէն փախչելով  
ժայռի (խայայի) մը տակ կը մանէ ուր որ  
օձ մը կը բնակէր . աղաչեց օձին որ իրեն  
տեղ տայ պահուելու համար . օձը սիրով ըն-  
դունեց , բայց յետոյ նայեցաւ որ անոր  
փշերէն անհանգիստ կ'ըլլայ՝ հասկըցուց ող-  
նիին թէ որսորդը դնաց հիմա վտանգ մը  
չի կայ կրնաս տեղդ երթալ , կ'աղաչէր որ



ելէ երթայ իր ծակէն : Եւ երթամ ըսաց  
 ողնին , քաւ լիցի : գիտնաս ո՞վ անխեղք որ  
 ես հոս աւելի իրաւունք ունիմ բնակելու  
 քան թէ դուն : Եւ այսպէս ողնին օձէն  
 զօրաւոր ըլլալով գոռարուծիւն չունեցաւ  
 համարձակ անոր դէմ գնելու և վաճառե-  
 լու անկէ :

Օրինակ է անոնց որ անխառն-նետմբ ուրիշի  
 բանը յադիպակեալիւ չեն շինել և իրենց զօր-  
 նը չեն և դարձեալ , Բայց շինեալ այն առաջին  
 ո՞ր կէտէ : Զօրեւելի ապրէր է , ինչ չեն :

Այս է անիրաւ գործ բռնաւորին՝  
 Զօգուտ օտարաց յինքեան ձգողին .  
 Որով և խնդայ յանիրաւ շահին՝  
 Յաւերժանաւ միշտ կարծէ եղկելին :  
 Զինչ օգուտ երբէք գործեաց զըկողին ,  
 Անիրաւ վաստակ անիրաւ տեղին .  
 Լքին զամենայն յայլ վիճակ մտին ,  
 Սուղեցան ի փոր մահու անմահին :



# ԼԵԱՌՆ ՅԵՐԿՈՒՆՍ

Զինչ շահ երկնեւ գործս ահագին ,  
Եւ ծնանեւ վեժած ճնչին :

Մեծ խոստումս իմ Բան իւր շէր ,  
Երբեք գործս չի վնասեր :

Մէջ. Երբեմն լեռանը ցաւը կը բռնէ և  
երբոր սոսկալի ձայնովը կը սլոռար աշ-  
խարհք կը դողացընէր մինչև ամէնքը չորս  
դիէն եկան հոն թափեցան , կարծէին թէ  
մէկ զարհուրելի հրէշ մը սկստի ծնի կամ  
նշանաւոր ցուցանք մը սկստի հանէ որ չէ  
եղած : Բայց քանի՜ մեծ զարմանք եղաւ՝  
երբոր սլոռալով ետքի ճիգն ըրաւ՝ տեսան  
որ ծնաւ լեռը . ի՞նչ ըլլայ աղէկ է , ահա  
մէկ մուկ մը փորէն դուրս ելաւ :

Օրինա՛յ է Ձեծ խոստներս որ խոստով Ձեծ  
Բաներ իւր խոստանան և գործով իման լա՛ր Բան  
իւր քեանեն . անոր համար ի՛շխոսի թէ խոստին ու  
գործոյն մէջը լա՛ր Բան իմ :

Տես սլաակաւելի ձայն մեծաբանին  
Ահեղ որոտայ յամպոց սահմանին .  
Այլ երբ ժամանէ 'ի գլուխ գործոյն՝  
Յեանեալ արտագրէ զիւր մուկն ճնչին :

Թէ ճոխաբանես կարող գոլ մեծին՝  
 Յամօթ համակիս 'ի մեծաց զնին ,  
 Ձի չիք ինչ արդեւ գիւրաշարժ լեզուին ,  
 Բայց արդեամբք առնել գործ է գժուարին :

### ՈՒՐՈՒՐ ԵՒ ՄԱՅՐՆ

Մի անարդեր սեղանս էին ,  
 Մի քեզ շնորհաց գրունք փակեացին :

Վայ որ կ'ընէ Աստուծոյ տէ՛մ ,  
 Դուռն ողորմած գոյ է իր տէ՛մ :

մօ՞ղ. Ուրուրը սաստիկ կը հիւընդնայ, երբոր վերջի շունչը հասաւ՝ կ'ըսէր մօրը . Վայ ինձ մարիկ , աղօթք ըրէ կուռքերուն որ ինձի առողջութիւն տան : Ո'րդեակ ըսաց մայրը՝ շատ ըրի շատ աղաչեցի բայց փուճը գնաց . վս'ղի չեն ուզեր քեզի առողջութի տալ որովհետեւ շատ անգամ տեսեր են որ դուն անոնց սեղանն անարդելով յափը տակեր ես զոհերուն միսն որ իրենց ընծայ եղած էին :

Օրինակ է անհասապ զբիռներուն որոնց աւրե եկեղեցականներուն վրայ է , և միշտ ծաղր ընելով անոնցն օրինակ կ'անարգեն . բայց երբոր ինչ հիւընդնան և խրճուռեան մէջ կ'իյնին՝ անհասաներե ինչ ինքեան որ իրենց համար աղօթ

ընեն . լայն անոնց որ ան ապենը ողորմաւ թան  
պիպի գանեն :

Ահեղ պատուհաս օրինազանցին՝

Մերթիւլ յերեսաց արարչապետին .

Զի որ մեղանչէ յաթոռ անբաւին


Ուստի՛ դեղ և ճար հայթայթէ անձին :

Ո՛հանրախորհուրդ ժառանգ գեհենին ,

Զի՞ գոչես ձայնես երբ կաս ՚ի մահճին .

Խնդրեա զօգնութի մարմնոյ աշխարհին ,

Որ յԱԾ մեղար հաճել զնոսին :



## ԷՇ ԵՒ ԶԻ

Որ ոչ բառնայ զբեռն ընկերին ,

Ծանրի յաւէտ բեռամբ ուժգին :

Թե ընկերի՞ր օգնող լըլըսա՞ն՝

Անօգնական խեղճ էլ հաւա :

մթթ . ( ) Ըմը էշն ու ձին միատեղ ճամբայ  
կերթային . իշուն բեռը շատ ըլլալով աղա-  
չեց ձիուն որ իրեն օգնութի ընէ ու բե-  
ռանը մէկ մասն ալ ինքն առնէ՝ եթէ ու-  
զենայ խնայել անոր կենացը . իսկ ձին ամե-  
նակն չուղեց այս աղէկութին անոր ընել .  
ուստի էշն ընկաւ բեռանը տակ մեռաւ :  
Տէրն որ տեսաւ՝ իշուն կաշին քերթեց բո-  
լոր բեռանը հետ մէկ տեղ դրաւ ձիուն վրայ :  
Ան ատենը ձին սկսաւ սրտաւ . Ո՛վ թշուա-

ուութեա ես չուղեցի բեռանը մէկ մասը տա-  
նելու, հիմա հարկաւորեցայ չէ միայն բո-  
լորը՝ այլ և կաշին ալ միատեղ տանել:

Օրինակ է անողորմ մարդու որ ինչպէս ինքն  
որիշին լողորմեր՝ իրմէ ալ անանկ ողորմութիւնը  
իւ հեռանայ. անոր համար անողորմ մարդը գա-  
ղտնի իւ հմանցընեն որ որիշի վրայ գոռի լտնի:

Ահա իրաւունք արժանի նմին՝

Որ ոչ կարեկցի վշտաց ընկերին.

Այր ընկերատեաց իբրև անկանի

Ոչ ուստեք նպաստ տեսցէ բնաւին:

Երանի՛ կարգան ողորմած անձին

Զի ողորմութիւք յիւրմէ ոչ բառնին.

Թէ չափով օգնէ կարեաց կենակցին,

Անչափ օգնութիւք ՚ի վերուստ թափին:



## ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԵԶԻՆՔ

Վայ որ այլոց ապաւինի,

Զանձին փրկանս ոչինչ հնարի:

Թէ որ յոյ՛ւժտ այլոց Դնէ՛,

Հարիւս գլխո՛ւտ վայ իւ բերէ՛:

մե. Եղնիկ մը որսորդներէն հալածուե-  
լով փախաւ եղներուն գոմը, որոնցմէ մէկն  
ըսացիրեն, Ի՞նչ կ'ընես ողորմելի, հոս կենա-

լովդ մարդու ձեռք կը մաանուիս և վտան-  
դի մէջ քեզ կը ձգես : Ներեցէք ինձի ըսաց  
եղնիկը , թէ որ դուք մարդու բան չըսէք՝  
ես զիս կրնամ ազատել : Գիշեր որ եղաւ  
եղնապանը խոտ բերաւ եղներուն , բայց  
եղնիկը չի տեսաւ հոն : Տանը ծառաները և  
վերակացուն մօտան ելան բան չի տեսան :  
Իսկ եղնիկը կարծելով թէ վտանդէ ազա-  
տեցաւ՝ ելաւ եղներուն շնորհակալ եղաւ  
որ կամեցան պահել զինքն իրենց մէջ : Ա-  
նոնք ալ պատասխանեցին , թէ Մենք կ'ու-  
ղենք որ դուն բոլորովին ազատիս , բայց զգոյշ  
կեցիր որ մեր տիրոջը ձեռքը չի յնիս , վասն  
զի մեծ վտանգ է կենացդ : Շատ ջանցաւ  
տէրը տուն դարձաւ բարեկամին հարկիքէն ,  
տեսաւ որ քիչ օրուան մէջ եղները վատու-  
ցեր են պնաց դոմն որ նայի . երբոր մօտեցաւ  
մտուրին , ըսաց ծառաներուն , թէ Ի՞նչ է  
պատճառն որ խեղճ եղներս քիչ կ'ուտեն ,  
և քիչ յարդ ըլլալով աղբը վնաս կուտայ  
իրենց : Աերջապէս երբոր ասդին անդին  
կը նայէր ուշադրութեամբ տեսաւ եղնիկին մեծ  
եղջիւրները և մէկէն կանչեց ծառաներն որ  
բռնեն մորթեն :

Ո՛վ որ հանգիստ է քնալու՝ իր կենացը վնաս  
իւրեւրէ : Հին աստուծոյ մէկ երեւելի պատգամ է  
երբոր պատեցաւ ի'երթաւ՝ աշխարհս էր զառոյճ-  
նէր իր Ժառն-Բեք , և երբոր քոտն էր Դաւանար  
ապելու խմելու՝ երբեք ըլլալով անանի անպիտան  
մարտ ի'ընտր որ ասէն էր իւր զարմանային :

Եղո՛ւկ խորհրդոց վատասիրտ անձին  
 Որ ապաւինի օտարաց ձեռին .  
 Ոչ ջանայ փախչիլ յապահով տեղին ,  
 Անգործ սպասէ կենաց բարձողին :  
 Քանի՛ք քաջ արանց 'ի յասպարիզին  
 Առաթուր կոխեալ հանուրց տիրէին .  
 Բայց երբ փափկութիւն լը յարկաւ նստին՝  
 Մասնեալ կորնչին զերթ կնամարդին :



### ԱՐՋ ԵՒ ՄԵՂՈՒՔ

Այր անհամբեր միշտ վնասի ,  
 Թէ և իցէ զօրեղ արի :

Ո՛րչա՜ք քառասուն չի համբերէս ,  
 Միշտ շնաւդ Կ'ընէս :

միտ . **Ս**էկ արջ մը քաղցած անօթի ելաւ  
 անտառէն որ կերակուր գտնէ . ճամբուն  
 վրայ մեղրի փեթակ տեսաւ սկսաւ լափել .  
 փեթակէն մեղու մը դուրս ելաւ արջուն ա-  
 կանջը չարաչար խայթելով ցաւցոց , արջն  
 ալ կատաղութէն կործանեց փեթակը : Ան  
 ատենը բոլոր մեղուները բարկանալով դուրս  
 թափեցան մէկէն արջուն վրայ մաղուեցան ,  
 և անանկ խայթեցին զինքն որ արիւնը-  
 լայ եղաւ վրէժխնդիր ըլլալով իրենց թշնա-  
 մւոյն որ փեթակը կործանեց : Եւ այսպէս  
 արջը ամօթով և կատղած ստիպեցաւ ետ  
 դառնալ մեղադրելով իր գազանական ան-



համբերութիւնը՝ որ այնչափ թշնամի իրեն  
վրայ հանելու պատճառ եղաւ :

Խրափ է անոնց որ իրենց ապրումսին համար  
որիչին ղրկանք կ'ընեն . ևս առաւել որիւրմաշ  
անհամբեր մարդկանց որոնք շատ անգամ ուրիշ  
պատճառաւ կ'ընեն :

Այսպէս անհամբեր կրէ զարժանին  
Ըստ իւր ապագայի բերմանց որկորին .  
Ձի որ կեղեքէ զտուն օտարին  
Ձրկանք և յայլոց պատրաստի նմին :  
Մի գողանուծեամբ բերիր յուտելին ,  
Եւ մի գողանար զսարուստ ընկերին .  
Որ թէ և իցէ փանաքի չնչին ,  
Ի նախանձ բրդեալ վնասէ ուժգին :



## ԽՈՏԱՐԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Քաջ զօրանայ սիրտ խոհական ,  
Երբ հանդիպի նմին վզեան :

Խոհեմ մարդ Խելէ կ'ըստնայ ,  
Երբոր իրեն շատ կոփայ :

Միք . Երբեմն շուն մը մտաւ խոհարանը  
կամ կերակուր եփելու տեղը , և հոն սպա-  
սեղով տեսաւ թէ խոհարարը անզգուշութե-  
մբ եր չէր նայէր՝ խլեց անկէ կովին սիրտն՝

ու փախաւ : Իսկ խոհարարը տեսաւ որ շու-  
նը այս չարութիւնն ըրաւ կը փախչի՝ կանչեց  
էտեւէն ասանկ . Դուն այսօր դիւրին կըր-  
ցար զիս խաբէլ , բայց լաւ գիտնաս ես  
ասկէ ետեւ անանկ պիտի նայիմ որ ամենկին  
բան մը չպիտի կրնաս ինձմէ դողնալ , վասն  
զի դուն չէ թէ իմ սիրտս տարիւր այլ մա-  
նաւանդ ինձի սիրտ տուիր , որովհետեւ կո-  
րուստը և ձախորդութիւնը կը բանան մար-  
դուս միտքը և կը սորվեցընեն որ լաւ  
զգուշութիւնն ընելով ազատ ըլլայ 'ի դժբաղ-  
դութեանց որ կը պատահին :

Աշխարհիս խոհարարը չէր զգար , Բայ  
պէտք է որ թէ անգամ ինչո՞ւր թէյնաւ լինի .  
վասն զի խոհարարութիւն և շատ լաւ է որ չե-  
ղեն են մարդու խոհարարութիւնն :

Գեղեցիկ առած բան խոհականին

Որ սիրտ տալ ասէ վնասն առաջին .

Այս մարդոյ պատկան այս բանականին

Մի կրկին անգամ վնասիլ յանձին :

Թէ չես փորձ զգաստ 'ի մի նուագին՝

Անկանիլ քեզ կայ 'ի նոյն վերստին .

Եւ թէ անընդոստ կացցես 'ի կային՝

Սահեալ կործանիս կրկին չորեքիկին :



## ԱՐԾԻՒ ԲԱԶԻ ԵՒ ՅԻՆ

Չբնաղ գործեն գործք և գնացք :

Եւ ոչ պատիր տեսիլ գիմաց :

Գործոք է՛լնէ ճարտը «իբն» ,

Եւ ոչ քեռիս աշտարակ :

միտ . Բազէն ու ցինը վիճաբանութի կ'ընէին արծիւին առջին թէ որն աւելի ազնուական է , ցինը կը գովէր իր գերազանց ուժը և սաստիկ թռչիլը , իսկ բազէն իր ազնիւ բարքը , և կը նայէին թէ ինչ վճիռ կուտայ արծիւը : Պատասխան տուաւ արծիւը , թէ Գնացէք մէյմէկ որս ըրէք , ո՛վ որ ձեզմէ լաւ որս բերէ՝ այն է աւելի ազնուական : Եւ ահա ցինը գնաց մուկ մը բերաւ և բազէն աղաւնի մը : Ան առենը արծիւն ըսաց թէ այնչափ աւելի ազնուական է բազէն քան զցինը , որչափ աղաւնին գերազանց է քան զմուկը , որովհետեւ ուժը չէ՝ հասպա գործքն է ազնուական ընողը :

Աշտարակն-ն էր գործոք է՛լնէ իւրայանի եւ ոչ քեռիս . Բէ որ յեղտ աշտարակն չէ՝ գործոք աշիւն է աշտարակն է՛լնաւ . Բէ որ անանտ աշտարակն է , գործոք չէ՝ աշտարակն է . Ինչ

դէս ուր յայտնի յո-յեղին Բաշէն ( շահին ) ո-  
յինը ( չայլախը ) :

Նազէլի գնացք գործք առաքինի  
 Չքնաղ յօրինեն զսիրտ և հոգի .  
 Թէ սոքա չիցեն լծակցեալ ընդ գեղ՝  
 Չէ ազնիւ չքնաղ այն սիրտ այն հոգի :  
 Մի պանծար ընդ գեղ և յանուն զարմի ,  
 Զանա զքեզ գործով գործել պանծալի .  
 Զի լոկ բան անուն չեն ազնիւ յարգի ,  
 Գործն է պսակիչ ամենայն բանի :



### ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԳՈՐԾԻ

Քոյդ վրիպանք թեթե թուին՝  
 Եթէ հայիս յայլոց թերին :


Քո- պախաւը ԲէՆ- Կ'ըււայ  
 Թէ ուր նայիս այլոց վրայ :

միտ . Երբեմն նապաստակները մէկ տեղ  
 եկան կուլային իրենց խեղճութեւնը վրայ որ  
 վախկոտ ըլլալով շատ վտանգի մէջ էին ,  
 վասն զի մարդէ կը վախնանք , կ'ըսէին , չնէ ,  
 արծիւէ , գրեթէ ամէն բանէ վախ ունինք .  
 ուրեմն մենք ասանկ հատնինք սկիտի . ուս-  
 տի աւելի լաւ է մէկ անգամ մը մեռնիլ քան  
 թէ բոլոր կեանքերնուս մէջ զարհուրան-  
 քով մեռնիլ . զայս ըսելով վազեցին միա-  
 բան որ լիճն իյնին խղիւղին . բայց ասոնց

ոտքին ձայնէն լճին քովի գորտերը վախնա-  
լով մէկէն ջուրը ցաթկեցին : Ան ատենը մէկ  
ծեր նասպաստակ մը իրենցմէ կանչեց . Ո՛վ  
ընկերք , կեցէք մի վախնաք . ահա ինչպէս  
տեսանք մեզմէ շատ աւելի վախկոտ կեն-  
դանիներ ալ կը գտնուին եղեր , հասկա մենք  
տեղերնիս դառնանք :

Ինչնէդո՛ւն մեջ ո՛ր ըլլայ ճարտ' պէտք չէ յո-  
սահապելով դինքը ի՞նչու ընդունել , այլ ի՛նչ վարի-  
նին նայել և միջեւարուիլ . վասն զի յոսահա-  
պութիւնն է թէթեւամտութիւն և ճարտ' իութեան դէ՛-  
հան : Փիւհոտութեանը կ'ըսէին թէ Բարի ճարտը  
շարւարանի մէջ ալ ըլլայ միշտ մեկէնդ կ'ըմբոս-  
տանայ այլայլելու :

Թէ քեզ դժկամակ լիցի ձեռք բաղդին  
Չլացեալ զձիրս օժիտ բնածին'  
Մի կարճամըտիր , հայեաց 'ի ստորինս ,  
Այլոց թերուածք քեզ յորդոր լիցին :  
Չիք ինչ անթերի յեղեւոց կարգին ,  
Գործ է կատարել զայն թերատ ներքին .  
Արդ ուշիմ մտօք քննեա զօտարին ,  
Գտանես զքեզ 'ի գոհ վիճակին :



## ԵՂՋԵՐՈՒ

Թէ և իցեա յանքոյթ տեղի  
Մի գներ զքեզ յապահովի :

Ուր որ ըլլաւ ապահով լին :

Մահէն հետեւ քեզ լի իարծեա :

միւ . ( ) Էկ եղնիկ մը ծովուն քով ժուռ  
գալով բան կ'ուտէր , որ մէկ աչքը չի տես-  
նելուն համար ծովուն դին էր ըրեր , տես-  
նող աչքը ցամաքին դին , և ասանկ զինքն ա-  
պահով կարծելով վախ մը չունէր : Սակայն  
նաւով անցնողները տեսան զայն ու նետով  
զարկին ձգեցին . ողորմելի եղնիկը մեռնե-  
լու ատենը լալով կը կանչէր , Թէ Ուսկից  
որ կը վախնայի այն կողմանէ բան չեղաւ , և  
ուսկից որ վախ չունէի անկէ վնաս քաշե-  
ցի ու զարնուեցայ , ուրեմն վախ չեղած  
տեղէն աւելի վախնալու է եղեր :

Ամէն անգամ և ամէն քեզ պէտք է արեւուն  
իննաւ , Լի լի լի իարծած քեզէն նեպ ինգայ ,  
որովհետեւ իսկածելի բանէն այնչափ յետ  
լի գար՝ որչափ ապահով բանէն : Քաջ նաւապե-  
տը նաւահանգստին յետ ամէն քեզ է վախնալ  
քան Լի ծովուն յետ , կ'ըսէ իմաստուն ճշ :

Այսպէս հասանէն արկածք աշխարհի  
 Անփոյթ շորջողաց յապահով վայրի .  
 Զի աներկեան չիք ուստեք տեղի  
 Յոր ոչ ժամանէն վիշտք աղետալի :  
 Արթուն կաց ո՛վ մարդ յանքոյթ վիճակի ,  
 Ի գործս 'ի գնացս ժիր յամենայնի .  
 Շատք իբրև զինքեանս անվտանգ եղին ,  
 Ի վըտանգ մահու կորեան ցաւադին :



## ՕՁ ԵՒ ԽԵՅԳԵՏԻՆ

Թէ ոչ գընաս յուղիղ կարգին՝  
 Զքեղ չարաչար գործք քո գատին :

Թէ այլոց հեք շիպսի չերևաս ,  
 Մահին Դռուը շիպսի 'ի'երևաս :


միշ. **Խեցգետինը** (սպագողը) օձին հետ  
 ընկեր կ'ըլլայ , և միատեղ երթալու ատենը  
 կը նայի որ օձը մէկին մէկալին չարութիւն  
 կ'ուզէ ընել և խայթել . այս բանէն կաս-  
 կած երթալով խեցգետինը միշտ կը խրա-  
 տէր օձն որ խորամանկութիւն թողու և իրեն  
 պէս պարզամիտ ըլլայ . բայց օձը ամենևին  
 մտիկ չէր ըներ : Ուստի խեցգետինը օր մը  
 տեսաւ թէ օձը կը քնանայ բռնեց ճանկե-  
 րովն անանկ սխմեց որ մեռցուց , և յետոյ  
 երկնցընելով շիտկըցուց ու սկսաւ մեռած օ-  
 ւձին հետ խօսիլ . Թէ որ առաջ, կ'ըսէր, այս  
 պէս շիտակ և պարզ ըլլայիր , հիմա ասանկ



սպառժով չէիր շտկուէր . որովհետեւ ես  
ընկերը շիտակ կ'ուզեմ՝ հարկ եղաւ որ քեզ  
ալ շտկեմ:

Խրափ է անոնց որ Լողոսն լարո-Լիանը Բարո-  
Լեան էփեւել ըլլան . վասն զի Բարի ընողը Բարի իւ  
գփեւել, լար ընողը՝ լար, երբեմն շուփ երբեմն ուշ:

Այս են իրաւունք արդարադատին,  
Չափէ 'ի գործոց չափ չարասիրին .  
Զի որ ոչ դառնայ 'ի գործոց չարին,  
Չարատանջ ուղղի գանիւք արկածին:  
Արդ մի դառնանար ընդդէմ խըրատչին,  
Գանձեա 'ի սըրտի խըրատ մըտերմին,  
Փախիր 'ի գործոց վընասաբերին,  
Թէ ոչ կորընջիլ կամիս յօրհասին:



## ԱՌԻԻԾ ԵՒ ԳԱՅԼ

Մի զոք գըրգուեր ընդդէմ եղբօր  
Զի մի հասցէ քեզ խաւար օր:

Չար թի խօսիւր եղբօրդ վրայ,  
Չար խորհուրդերդ +եւ իւր Գառնայ:

միէ. ( )-եր առիւծ մը երբոր հիւանդ  
սպառկեր էր այրին մէջ՝ ամէն կենդանիները  
գնացին զինքը տեսնելու բաց 'ի աղուէսէն .  
իսկ գայլը մասնուծի կ'ընէր առիւծին թէ

աղուէսը քեզ բանի տեղ չսեպելուն չե-  
կաւ: Այս միջոցիս մէջ աղուէսն ալ հոն  
հասաւ և տեսաւ որ առիւծը մոմըռալով կը  
բարկանայ իրեն, բանը հասկըցաւ ու մէկէն  
առջին գնաց ու ըսաց. Տէր իմ, որ կենդանին  
քու շահդ մտածեց ինչպէս ես որ աշխարհք  
ստորտելով քեզի համար դեղ գտայ բժիշկ  
ներէն: Ի՞նչ դեղ է, ըսաց առիւծը. Քեզի  
դեղ այն է որ գայլը ողջ քերթես ու կաշին  
տաք տաք հագնիս: Առիւծը հաւտալով մէ-  
կէն զարկաւ գայլը սլառուեց, ու երբոր կա-  
շին կը հանէր՝ աղուէսը ծիծաղելով ըսաց.  
Ասանկ հասկըցիր՝ որ պէտք չէ տէրը բար-  
կուծիւն շարժել այլ բարեկամութիւն  
յորդորել:

Որո՞նք որ իշխանին հաճոյ ըլլալու համար ու-  
րիւն իւր մաքնէն և մեծաւորին «իւրաքանչեւ իւր»  
ծէն բարիութեամբ՝ այսպէս իւր պաշտօնին:

Գլըդդուիչ նենգաւորք չարաչար սլառո՞ւթին,

Այլոց գուբ փորեն 'ի նոյն գըլորին.

Որ չար խորհեցաւ ընդդէմ ընկերին

Ե՞րբ ոչ դառնալէս կորեաւ 'ի նըմին:

Քեզ է այս խրատ ծառայդ վեհազնին,

Մի՛ մատնէր զընկերն առ օգտի անձին.

Որչափ քաղցրակեաց լինիս ընդ այլոց՝

Այնչափ բարութեք՝ յայլոց քեզ բերին:



## ԳԻՆԷՄՈՒ ԵՒ ԿԻՆ ԻՒՐ

ՈՅՐ ԿՐՐԹՈՒԹԻՒՆՔ ԻՅԵՆ յՈՈԻ՝  
ԶԻՆՃ և առնես միշտ է յՈՈԻ :

ԵՐԲՐ ԴԵՐ ԳԵԼ ԽՐԺԺ Է՝  
ԻՆՆ ՈՐ ԸՆԷՄ ՕԳՈՒՄ ԸԸՆԷ :

միջ. Մէկ կին մը իր գինով էրկանը գեղ  
կը փնտրուէր . օր մը տեսաւ որ խիստ գինով  
է , տարաւ քարէ շինած գերեզմանին մէջ  
սլառկեցուց և գերեզմանին դուռը գոցեց  
գնաց . կարծէր թէ ասով սխալի զգաստանայ  
մարդը : Բայց իրկուան գնաց գերեզմանին  
դուռը զարկաւ , գինովը ներսէն ձայն հա-  
նեց թէ Ո՞վ ես . կնիկն ալ սլառասխանեց  
թէ Ես մեռելի հաց բերող եմ : Գինովը կան-  
չեց անոր թէ Ինձի ուտելու բան մի բերեր  
հապա խմելու , վասն զի ես չատ կը տրամիմ  
երբոր կերակրի անուն կ'առնեմ ու գինիի  
անուն չեմ առներ : Ան ատենը կնիկը գլու-  
խուն զարնելով կ'ըսէր . Վայ անբաղդիս որ  
ճար մը չգտայ վքեզ շահելու . ահա չար  
սովորութիւնը քեզ անանկ կորսընցուցեր  
է որ ճար չկայ :

ԽԵՐԱՄ ԸԱՅ ԺԱՐԴՈՒՆ ՈՐ ԼԱՐ ԳՈՐԾԻ ԴԵՐ  
ԼՈՒԼԱՆԱՅ , ՎԱՍՆ ՂԻ ՇԱՄ ԱՆԳԱՄ ԽՈՂՈՐՈՒՄԻՆԷ

չորհուրէն ալ մօլի կ'ընէ ինչ ինքնաշնչընէ, անանկ  
որ բնական իրեն զգուշելի Բաներն ալ ինչ սխի ը-  
նէլ ինչպէս փեսանք: Որո՞նք է վայ, որո՞նք է  
խռովութիւն, որո՞նք է դատաստան, Բայց միայն  
գինեմալ մարդոն, կ'ընէ Սողոմոն:

Որ 'ի գործ վատթար այսպէս սովորի,  
Ի նոյն վատթարեալ մոլեալ յիմարի.  
Ձի ունակութեամբ բնութի փոփոխի,  
Ելանէ ըստ չափ թէ չար թէ բարի:  
Թէ անկար երբեք 'ի գործ ինչ յոռի,  
Արա զնէրհական բարին ցանկալի.  
Եւ թէ նոյն դառնաս 'ի գործ առաջին  
Մոլեալ կործանիս յայն անկանգնելի:

### ԲՈՒ ԵՒ ՉՂՋԻԿ

Թէ ըստ տեղւոյն չես նախատես՝  
Ոչինչ օգտիս զոր և գործես:


Որ ասէնին ընդոյշ լըւայ՝  
Երբի ըրածն ունէլ կ'երթայ:

միթ. Սէկը բռնեց բու թռչունը և  
վանդակով սպառուհանին մէջ կախեց որ  
բոլոր գիշերը ձայն կը հանէր կ'երգէր. իսկ  
գիշերահաւը չգիմանալով ասոր ձայնին ե-  
կաւ քովը մօտեցաւ և հարցուց թէ Ինչո՞ւ  
ցորեկը ձայն չես հաներ ու գիշերը կը կան-  
չես: Ան ալ սպասասխանեց թէ Առանց

մտածմունքի չէ ըրածս, վասն զի ցորեկն  
 երգելուս համար բռնուեցայ: Կրկնեց գի-  
 շերահաւը ծիծաղելով թէ Ասկէ ետեւ քե-  
 ղի ոչ զգուշանալ պէտք է և ոչ սկսուիլ.  
 անխելք՝ այդ զգուշութիւնը բռնուելէդ ա-  
 ռաջ ընելու էիր:

Բռն (սկսեալ) օրինակ է անխելի մարդ-  
 ւանց ուր պէտք է շատ քիչ զգուշութիւն լին  
 ներս -- պէտք է շատ քիչ ի՛նչ: Մարդոս  
 ուրախութիւն Բերանն է ուր իր խօսքովն իւ-  
 րանս, ի՛նչ իմաստունը:

Ի զուր է ջանալ յանցանել առթին,  
 Որոնք ըզճար փրկութեան անձին,  
 Խորհիլ և առնել ըստ ժամանակին՝  
 Գործ խոհեմութե է խոհականին:  
 Արթուն նախատես լեր ապագային,  
 Մինչև է եղեալ դեղ խորհեաց ախտին.  
 Ձի գայ ժամանակ երբ ՚ի սոյն սահիս  
 Ոչինչ դեղ և ճար գլտանել մարթիս:



ԿԱՏՈՒ ԵՒ ԽԱՐՏՈՑ

Վայ որ լեզուն զերկրաւ ածէ,  
Բոլոր վընաս ինքեան ածէ :

በኒ - ጥ ማረጋ ረዳ ስር ሂ-ጥጥኑ  
ጥጥኑ ል-ጥጥኑ ስር ሂ-ጥጥኑ :

մը. Կատուն կը մտնէ ոսկէրջին խանութը, և հոն գտնելով խարտոց մը՝ կը սկըսի լնել. բայց լեզուն խարտոցին ակռաներէն քերթուելուն համար՝ արիւնոտեցաւ խարտոցը. իսկ կատուն կ'ուրախանար՝ կարծելով թէ երկաթէն ուտելու բան կը հանէ, մինչև բոլոր լեզուն մաշեցաւ:

1. Լեւոնին քառաշէն ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 2. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 3. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 4. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 5. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 6. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 7. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 8. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 9. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին  
 10. Լեւոնին ԲաճԲաւանի աղբիւրը մարտի  
 1-ին օրը ժամ 11-ին Լեւոնին ժամ 11-ին

Ո՛վ զինորդ դժժնեայ գործ լեզուագարին ,  
 Լոսէ և խարտէ զանուան օտարին .  
 Կարծէ խանգարել զայլոց ըզբարին ,  
 Բայց ինքըն մաշեալ կոտորի յանձին :

Նախանձու է բերք այս գործ խաւարին  
Դառնացեալ ընդդէմ բարեաց ընկերին .  
Մի սրբեր լեզու այլոց 'ի վընաս ,  
Զի մի անըզգայ մաշեցիս կրկին



## ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԲԱՆԴ

Եթէ բարեք քեզ գիպեսցին՝  
Տուր փառս երկնից և ոչ բաղին :

Թէ որ յետագոյ ապրանք իյնին  
Ճանչօիւր խոռոչս երկնաւորին :

մէն . Երկրագործ մը գետինը փորելու  
ատենը գանձ գտաւ , և այս պատճառաւ գի-  
շեր ցորեկ գետնին պատիւ կ'ընէր որ իրեն  
այն բարերարութիւնն ըրաւ . օր մը բաղքը  
բարկանալով երեցաւ իրեն ըսաց . Ո՛վ յի-  
մար ինչո՞ւ համար ինձի ընելու պատիւդ  
գետնին կ'ընես , այն ոսկին ես քեզի տուի  
որ փարթամ ըլլաս , բայց գիտեմ՝ եթէ  
ժամանակը փոխուի և այս ոսկին ուրիշին  
ձեռքն անցնի՝ ան ատենը սխալ պարտաւս  
ղիս թէ բաղդ չունիմ :

Ամէն ճարտար արարտիւն է որ այս արած բա-  
րեւ ճանչնայ և պաշտէ արարիւն , ինչ թէ  
արած սեպեւով ուրիշի արարիւնն է . վասն զի  
ամէն բան այս խոհովն է ի՛րելայ : Բայց զարմանա-



այն է որ շահը իրենց խելօքին կուտան և յա-  
խորդոմէն աս փաւով իւր արանջան , շինքեն թե  
ան ալ իրենց հոգւոյն իրկոմէն համար կուտայ՝  
որ յախորդոմէն մէջ համբերոմիւն ընեն , յաջո-  
ղութեան մէջ ալ խոնարհութիւն :

Այսչափ է խորհուրդ անխմաստ ուսմկին՝  
Որ ոչ ճանաչէ ուստի՞ գայ բարին .  
Երբ գիպի բարեաց գանձուց աշխարհին ,  
Չայն երկրի գըրէ զայն պարգև բաղդին :  
Աղբիւր է բարեաց անսահման բարին ,  
Հանուրց բարերար ըստ էից հարկին .  
Պատկառ կաց ձեռաց ամենակալին ,  
Որ տայ և բառնայ երբ կամք են նըմին :

### ԵՐԿՈՒ ՈՒՂԵՒՈՐԳ

Բազում խընդրակք յաջողակին ,  
Չիք բարեկամ ձախողակին :

Յաջող Բանին խնդրող շատ կայ  
Չախորդին ճարտ չի ծօքենայ :

Ճիշ . Երկու հոգի ճամբայ կ'երթային ,  
մէկը կացին մը գտաւ և ուրախանալով ա-  
մենուն կ'ըսէր թէ կացին գտայ . իսկ ըն-  
կերը կը խրատէր որ գտայ չըսէ , հասլա  
գտանք ըսէ . բայց մէկալը միշտ նոյնը կ'ը-  
սէր : Վիչ մը առաջ գացին նայիս որ կացի-  
նին տէրը վազէլով ետննուն կուգար . ան

ատենը գտնողը խօսքը փոխեց ու սկսաւ  
մէկալին ըսել թէ Կորանք եղբայր : Ան ալ  
սպտասխանեց թէ Ինչո՞ւ Կորանք կ'ըսես ,  
հասաւ Կորայ ըսէ . վասն զի երբոր կացինը  
գտար՝ գտանք չէիր ըսեր՝ գտայ կ'ըսէիր .  
ուրեմն ինչպէս յաջողուլթեանդ զիս մաս-  
նակից չուզեցիր ընել՝ պէտք չէ որ ձախոր  
դուլթեանդ ալ ընես :

Ու որ յաջողուլէ մէջ ուրիշին Բարի կ'ընէ՝  
Եսիւրդուլէ մէջ Դէ՛մ Ինքայ . ինչ այն մար-  
դուն որ յաջողուլէ մէջ հապաքանաւ ձախորդ  
երես չի նայիր :

Բարեբաղդք սանձան յէլս յաջողակին ,  
Ոչ զոք մասնակցեն ընդ բարեաց մասին .  
Բայց թէ Ժամանեն 'ի ձախողակին՝  
Բաշխեն և սրփուեն զայն ընդ բոլորին ,  
Մի մեծամըտիր երբ կաս 'ի բաղդին ,  
Մասնակցեա զայն բաղդ կարօտ ընկերին ,  
Զի յետս յընթադրիլ դիւրասահ անուին՝  
Քեզ նշխարեսցի և բաղդ օտարին :



## ԵՐԿՈՒ ԳՈՐՏՔ

Որ գոհ վարէ կեանս աղքատին՝  
Անքոյթ զուարթ կայ յիւր կային :

Ու որ գոհ չէ իւր Վեճակին՝  
Մահին կ'ըլլայ շահով Բաժին :

մլգ . Երկու գորտ իրարու գրացի ըլլա-  
լով մէկը լճին մէջ կ'ապրէր ապահով և աղ-  
քատ . մէկալը ճամբուն վրայ քիչ ջրի մէջ  
կ'ապրէր հարուստ : Լճին մէջինը շատ ան-  
գամ կը խրատէր ընկերն որ իրեն քով գայ  
ապահով ապրի և դուրսը վտանգի մը չի  
գայ . բայց մէկալն ամենևին անոր մօտիկ չէր  
ընէր ըսելով թէ Ես հոս շատ կերակուր կը  
գտնեմ : Սակայն շատ զըջացաւ երբոր սայլ  
մը վրայէն անցնելով տրորեց , որ մեռնելու  
ատենը կը կանչէր , թէ Ի՛նչ անխելքութի է  
որ շատ ուտելու համար կեանքս կարծրցու-  
ցի . թէ որ ընկերոջս խօսքը մօտիկ ընէի՝ հի-  
մա ողջ կ'ըլլայի :

Որեւէ մարդիկ որ շաքին խախտելով իւր Բա-  
նի վնս հաւնած՝ Վասնգի մէջ ընկէր իւրսու-եւր են :  
Լա- է իբրեւ ճէ հայ հանգիստ խաղաղութեամբ՝  
թան թէ մէկ քուն ճէ ւեցուն Բարիք՝ խառնութի ,  
կ'ըսէ Սուրման :

Աղքատք և փարթամք ըզմի օգ չնչեն ,  
 Ընդ կենաց շաւիղ այլ ոչ զոյգ գիմեն .  
 'Նա գոհ յիւր փոքուն ապահով չըրջի ,  
 Սա անգոհ բազմաց 'ի վըտանգ մաշի :  
 Այս կըրկին վիճակք քեզ տիպ են կըրկին՝  
 Շատանալ փոքու 'ի կեանս աղքատին .  
 Թէ չես գոհ փոքուն՝ փափաքիս չատին՝  
 Առաթուր փշրիս 'ի մահու անուին :

### ՄԵՂՐԱԳՈՐԾ ԵՒ ՄԵՂՈՒ

Մերժեա 'ի բաց զայր անըզգամ ,  
 Մի՛ զընտանի և բարեկամ :


Հեռու կեցի՛ր անըգամեն  
 Չէ՛ թէ օգնիլ բարեկամեն :

մկ . Երբեմն մեղուանոցին մէջ մէկ մարդ  
 մը մտաւ մեղը գողցաւ . երբոր տէրն եկաւ  
 տեսաւ թէ փեթակն աւրած է՝ զարմանա-  
 լով կայներ կը նայէր թէ ո՛վ ըրեր է . ան ա-  
 տենը մեղուներն ալ դարձան եկան , տեսան  
 որ մեղրագործը փեթակին քովն է՝ սկսան  
 խայթել : Ո՛վ անզգամներ , կ'ըսէր մեղրա-  
 գործը , ձեր մեղըր գողցողին բան չըրիք ու  
 ձեզի նայո՞ղը կը խայթէք :

Կան մարդիկ որ անմարտ թշնամի են ինչ զգու-  
 շանար բարեկամութիւն իւր վարուին , իսկ բարեկամեն

Երեւել Դարձելն . Բայց ետեւ ին Հասկնան թէ  
լաւ էն Վերտ Բարեկամին գան զՀամբոյր Թնամայն :

Կշռել զինքն և զայլս է մըտաւորին ,  
Ընտրել զբարեկամ մերժել Թըշնամին .  
Իսկ սիրել ըզվատն ատել ըզբարին՝  
Գործ է յիմարաց խորհուրդ անբանին .  
Են որ գուժ խըրատ մերժեն մտերմին ,  
Կենակցին անհող ընդ դող Թըշնամին .  
Բայց դայ ժամանակ յոր խաբեալ ծաղրին ,  
Յայնժամ ճանաչեն զյարդ բարեկամին :



### ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ ԿՐԹԵԱԼՔ

Յոր ինչ ՚ի բնէ դք սովորի՝  
Այնպէս մնայ չար թէ բարի :

Ինչ Բանի որ սորված ըլլայ  
Գեշ թէ աշէի անանի ՚ի Երևայ :

մէ . Սէկ պարոն մը երկու շուն ունէր .  
մէկին որս ընել սորվեցուց , մէկալին տու-  
նը սլահել . որսորդ շունը միշտ որսի երթա-  
լով կ'աշխատէր և ինչ որ բռնէր սլահապան  
շունը մէկ տեղ կ'ուտէր հետը : Ուստի օր մը  
որսորդ շունը բարկացաւ և նախատելով  
կ'ըսէր անոր . Դուն ամմէն օր առանց աշխա-  
տանաց հանգիստ նստեր ես , իսկ ես միշտ  
կ'աշխատիմ դուն կ'ուտես : Պատասխան  
տուաւ սլահապան շունը՝ Թէ Զիս մի պար-

սաւեր, հապա մեր տէրը պարսաւէ որ ինձի  
աշխատիլ չի սորվեցուց, քեզի սորվեցուց:

Խրափ է ա՛մէն Տարդու Տանաւանդ ծնողաց,  
որ զաւանիսն պղպի՛կաւէ ասեն՝ Բարի Բաներով  
կընէն, Վասն զի ան ասեն՝ ինչպէս սորվին՝ ա-  
նանկ ի՞նչ Ժամն:

Ծնողք վարդապետք յայս պարաւանդին  
Քաջիկ հրահանգել բոյս բարուց մանկին,  
Զի մանկունք ցվերջ զայն առնել կըրթին,  
Գովեստ և պարսաւ նոցա վերբերին:  
Զանա սովորիլ ՚ի բարեաց մասին,  
Առաքինանալ իբրև դիւցազին.  
Ի քեզ նկարեալ բարեաց բոլորին՝  
Տենչալի տիպար գոցիս անփորձին:



## ՁԿՆԿՈՒԼ ԵՒ ԾՈՎ.

Մի հաւատար այլոց ըղբեզ,  
Եւս առաւել զանձն քո քեզ:

Զի հաւաքաս քեզ ուրիշին,  
Եւ Տանաւանդ քեզ բու անյին:

միջ. Ձկնկուլ Թռչունը անապատասեր  
ըլլալով միշտ ծովուն քովերը կը կենցաղա-  
վարի և ծովուն քովի Ժայռերուն մէջ ձագ  
կը հանէ, ինչպէս կ'ըսեն: Եղաւ որ ձագ հա-  
նած ատենը՝ կերակուր գտնելու գնաց, այս

միջոցիս մէջ ծովը ալէկոծելով՝ ալիքները  
քարին զարկեր բռնը ծովուն մէջ ձգեր էր .  
երբոր թռչունը դարձաւ տեսաւ որ ձագե-  
րը ջրին մէջ կորսուեր են , Վայ ինձ կ'ըսէր ,  
ես ցամաքը թշնամի կարծելով ծովուն ասլա-  
ւինեցայ , սակայն ծովն է եղեր իմ բուն  
թշնամիս որ ես չիյտէի :

Խրափ է անոնց որ Լշնամիէն Ժախելու հա-  
մար անանի սուփ Բարեկամի յետո՛ւ իւր հարստին  
որ Լշնամիէն աւելի շատ իւր Բերե իրենց :

2Ի՞նչ չա՛հ արթուն կալ 'ի մի վրտանդին  
Յայլ վտանգ հաշիւ թըմրեալ գլխովին .  
Ձի որ ոչ դիտէ եզըր սահմանին՝  
Անդարձ մոլորեալ դանդաճ յուղին :  
Ծով է այս աշխարհ որ ցանգ երերին  
Ալէքեր հողմունք խաղան 'ի նըմին .  
Արդ մի վրտահիր փոփոխականին  
Ձի մի ծախեսցիս յանյատակ ծոցին :



## ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Ձիարդ դժնեայ կին անըզգամ  
խայթէ զընկերն օտարս համայն :

Չար հանայտ էն օյի նշման  
Որուն յօգին վէպ զէն հոգան :

մէջ . Ս' էկ չար կնիկ մը ամենուն հետ ա-  
տելութիւն վարուելով կռիւ կ'ընէր . օր մը ի-  
րեն ընկերն ուզէց հասկընալ թէ արդեօք  
հօրը տունն ալ անանկ կը վարուի . ուստի  
մէկ պատճառով մը կ'ինը խրկէց հօրը տու-  
նը . բայց քիչ օր անցաւ նայիս դարձաւ ե-  
կաւ . ընկերը հարցուց իրեն թէ Անոնց հետ  
ինչպէս կը վարուէիր հոն : Ան ալ պատաս-  
խան տուաւ թէ ինչպէս պիտի վարուիմ ,  
հովիւներն ալ ինձի հետ աղէկ չէին երթար :  
Ո'վ անըզգամ կին՝ պոռաց էրիկը , եթէ ա-  
նոնց հետ ալ կռիւ ըրիր որ առտուանց  
կ'երթան ոչխարներուն հետ մթոն կը դառ-  
նան , հապա ի՞նչ չես ընէր անոնց որ գի-  
շեր ցորեկ մէկ տեղ ես :

Կոռաւոր ճարտը ուր որ երեւայ զին՝ հետք  
իւ քանի , և մենուն հետ ինչ-իւ բանայ . ուր-  
պի առան է թէ մէկ գեղը քառասուն աղէկին հետ  
ւի ինար լաւութիւն . ինչ մէկ աղէկ քառասուն գե-  
ղին հետ իւ լաւութի :

Այս բոյսք են բարուց կրնոջ ժանտածին  
 Որ միշտ աղմկէ զընկեր գրացին .  
 Ապականիչ թոյն կըրէ 'ի ըզուին ,  
 Աղգէլ զայն այլոց բերկրանք են սըրտին :  
 Բարէ գառնութե այն անըղգամին  
 Յորմէ մերձաւորք հեռանան փախչին .  
 Փոխան գըգուանաց որ պարտ էր նմին  
 Ատեն հալածեն գըժնըդակ զայն կին :

### ՈՒԼ ԵՒ ԳԱՅԼ

Եթէ ունիս բան և հանճար  
 Յաղթես բնաւից չեք քեզ դժուար :

Թէ Լողաս Գործդ այլ Բան ընես՝  
 Հաս Ժառանգի քեզ և Բերես :

մը . Մէկ այծի ձագ մը իր ընկերներէն  
 մոլորած երբոր կ'երթար՝ գայլ մը ասոր ե-  
 տուէն ընկաւ . այծը հասկըցաւ որ ազատուա՛մ  
 չունի՝ դարձաւ ըսաց . Ով գայլ լաւ գիտեմ  
 որ քեզի կերակուր պիտի ըլլամ . ուրեմն  
 կը խնդրեմ որ խեղճութե՛ք չի մեռնիմ , եկո՛  
 քիչ մը խաղ կանչէ՛ ես ալ պար խաղամ՝ ան-  
 կէ ետև ինչ որ կ'ուզես ըրէ : Իսկ գայլը հա-  
 լանեցաւ անոր ու երբոր ոռնալու ձայն  
 կը հանէր որ այծը խաղայ՝ շները գայլին  
 ձայնը առին հեռուէն և մէկէն հոն հասան  
 հալածեցին զգայլը : Բայց գայլը փախչե-  
 լով կ'ըսէր այծին Արժանապէս ինձի այս

բանն եղաւ, պէտք էր երաժշտութիւն ընել  
որ բնական խոհարար (աշխ) եմ:

Ո՛վ որ իր սուրճած բանը իւր յգէ աւանդոր բա-  
նի յետո՛ւ իւր դարնէ՛ր Դժբախդաւեան մէջ կ'իյնի:  
Այն անոնց որ շիպակ ճամբան իւր թողան ա-  
խաւարը կ'երթան, կ'ըսէ Առաիւ:

Այսպէս որ ձրգէն զիւրեանց առնելին  
Միտ դընեն այլոց գործոց և բանին,  
Բայց անդէն ծաղրին առ մըտաւորին  
Ոյր հանճար յաղթէ բռնութեանցին:  
Զինչ հրդօրագոյն քան զէն խմաստին  
Երբ հատու սըրեալ է յիւր յեսանին,  
Հատանէ ըզջիղ արքայից բազկին  
Ծաղրեալ զխորագէտն ածէ յարկածին:



## ԳՈՂԻ ԵՒ ԱՔԱՂԱՂ

Պատճառ լինել գործոց բարեաց  
Ատելի է չարասիրաց:

Թէ լաւ բանի ըլլաւ պարճաւ  
Կը բամբասեն թեղ լարաւար:

մէթ. Պողերը տուն մը մտան թալէլու  
համար. բայց տանը մէջ ուրիշ բան չի գտան՝  
մինակ աքաղաղ մը գտան բռնեցին տարին.  
Երբոր պիտի մորթէին կ'աղաչէր որ թող

տան զինքը . Վասն զի , կ'ըսէր , ես չատ պի-  
տանի եմ մարդու որ գիշերը կ'արթընցը-  
նեմ զանոնք կ'ելլեն կ'աշխատին : Ահա ասոր  
համար՝ ըսին գողերը , դուն մահապարտ  
ես , որ զանոնք արթընցընելով չես թողուր  
մեզի գողութիւններու : Զայս ըսելով գլուխը  
կտրեցին թէ ինչու համար ասանկ բանի  
սպառնառ կ'ըլլայ :

Բարի Բաներո՛ւ պապճառ եղողը ապելի է առ-  
զգահներուն որ իրենց յետեւն Բարի ընել չի  
գար ու Բարեգործութիւն եղողը իմ ուսման է-  
փնէն եղողը իւր Բարեգործութիւն : Ո՛վ որ ուսումը ե-  
հագեցրել իւր յիշե՛լ իրեն քունը մահին մօտ իւր չի-  
նէ եւ ճամբան Դժոխսին գնլ , կ'ըսէ Իմոպոսանը :

Այսպէս Թըշնամիք բարեաց բողոքին  
Ըզպատճառ բարեաց ատեն խրատագին .  
Զի ոյր ակն է չար նըմա չար թուին  
Բարեգործ արդարք սպառնառ բարեծին :  
Դու մի հետեւիր եղծողաց բարին ,  
Նըսպաստ յարգութիւն տուր բարեսիրին .  
Որ սպառնառ լինի բարեաց աշխարհին՝  
Զըքնաղ պանծալի լինի նազելին :



## ԳԻՇԵՐԱՏԱԻ ԵՒ ԿՈՒԶ

Որ ըստ անդուցն զէն իւր փոխէ,  
Անյաղթ մնայ զերծ ՚ի չարէ:

Թէ ըստ անդուցն Բանըդ խիսէ,  
Այն Բանի վրան իւլլէ:

մի. Երբեմն գիշերահաւը (իւճէ գուշակ) թուչեւու ատենը յանկարծ վար կ'իյնի. կուզն (սամսարն) ալ հոն գտնուելով կը բռնէ զինքն որ սպաննէ: Իսկ գիշերահաւը կ'աղաչէր որ չի մեռցընէ. պատասխանեց կուզը Չեմ կրնար քեզ թող տալ որովհետեւ բնու թեամբ ամէն թուչունի հետ հակառակու թիւն ունիմ: Ես՝ ըսաց գիշերահաւը, թուչուն չեմ՝ հապա մուկ եմ: Չայս որ լսեց կուզը թող տուաւ: Ուրիշ անգամ երբոր ընկաւ գիշերահաւը՝ կատուն զինքը բռնեց. կ'աղաչէր թէ զիս մի ուտեր: Կատուն ալ ըսաց բնութիւն ամէն մկներու թըշնամի եմ. ան ալ կ'ըսէր Ես մուկ չեմ թուչուն եմ: Եւ այսպէս երկու անգամ անունը փոխելով ազատեցաւ գիշերահաւը:

Պէտք է ժամանակին յարմարելով վրանգէս. ըստիւ և այն ճարդու հէպ իւլլէսով վարուելով «Իրպը շահիւ, ուլլէ ազգի» սովորութեան խիւլլէ. լով ուրիշ Բանի լի նայել:

Յարմարիլ առթից գործ է հանճարին  
 Մի յամառութիւնս պինդ կալ 'ի նրմին .  
 Ձի փոփոխ շնչմունք հողմոց աշխարհին  
 Հարկաւ փոփոխեն պարագայս անձին :  
 Մի կաշկանդեացեն զքեզ բերմունք աղցին ,  
 Մի սովորութիւնք 'ի քեզ պընդասցին .  
 Փոխեա զայն երբեմն ըստ ժամանակին ,  
 Որով 'ի լաւ անդր գործք նախնեաց փո-  
 (խին :

### ՅԻՌ ԵՒ ԻՇ

Մի երաներ բաղդ մեծատան  
 Ձի տառապանք նմին մերձ կան :

Երեւի մի քաւ մեծամեծին .

Նայէ ներսէն ինչ վիշառանին :

միւս . | Եռան էշը կը տեսնէ ընտանի էշն  
 ու քովը մօտենալով կը նայի անոր փափկու-  
 թեւը երանի կուտայ որ քաղքի մէջ գլա-  
 նուելով լաւ կ'ուտէ և հանգիստ կեանք կը  
 վայելէ : Ուրիշ անգամ տեսաւ որ բեռնա-  
 ւորեալ կ'երթար՝ տերն ալ ետեւէն գաւա-  
 ղանը զարնելով կը քշէր՝ ըսաց Ես աս-  
 կէ ետեւ քեզի երանի սլիտի չի տամ , վասն  
 զի կը տեսնեմ որ առանց չարչարանքի դուն  
 երջանկուիդ չես կրնար վայելել : Ուրեմն  
 իմ աղքատութիւն քու մեծուէդ շատ վեր է  
 որ աղատութիւն ուղած տեղս կ'երթամ :

Պէտք է որ աշխարհներն իրենց վիճախին վրայ  
 գահ ըլլան Կենսելով Տէժապոռաններուն Կաշած  
 ներդաւններն որ Ռշտ Տաճարոսով ին Կանչու-  
 ին : Շաք աշէի է Գիւ աւնենալ հանգիստ , Կան  
 լէ Տէժ Գանջ աւնենալ խոռովու-նեմբ , ի' ըսեն ի-  
 Տապառանները :

Մեծատանց աղքատք երանեն բաղդին ,  
 Նոյնսպէս մեծատունք կենաց աղքատին .  
 Թէ կըշուես նոցուն ըզվիճակ ներքին  
 Փարթամք են թշուառք աղքատք երանին :  
 Մի ցանկարժառաց փարթամադունին  
 Որոյ տաղնասք են լծակից սրբաին .  
 Լաւ են կեանք անինչ որ անվիշտ վարին  
 Քան զայն ցեցակեր կեանք տըրտմականին :



## Է Շ Ե Ի Գ Ո Ր Տ Ք

Ծոյլ հեղգասիրտք փոյթ գանգատին ,  
 Ոչ ինչ յայլոց վատապա հային :

Ծոյնն որ ների գանգապ ի' ընէ ,  
 Այլոց ջանքին նայել լուռէ :

միսք. Լ չը փայտ բարձուած երբոր ջրէ մը  
 կ'անցնէր՝ ընկաւ ջրին մէջ մնաց և չէր կըր-  
 նար ելլել . ուստի փոխանակ աշխատելու  
 սկսաւ հառաջանքով լալ : Իսկ ջրին մէջի  
 գորտերը լսելով անոր հառաջանքը՝ ծաղը կ'ը-  
 նէին ու կ'ըսէին . Թէ որ դուն մեր տեղն



ըլլայիր և այսչափ ժամանակ ջրին մէջ մը-  
նայիր ինչ պիտի ընէիր որ կտոր մը ժամա-  
նակ հոս մնալուդ համար ատանկ կուլան :

Խրապ է ծոյլ մարտիանց որ +իւ Տէ Բանով իւ  
բրանն և լեն նայիւ Գիշեր ցորէի աշխապող  
ներուն վրայ : Գիպունները ծոյլ մարտը իւ նման  
ընեն Բաբաժ աշի որ յայն ծանրութի Տէ ու-  
նի ամենեին Բանի լիգար :

Այս բընական բերք վատ արքանջողին  
Թեթև նեղութիք նրմա մեծք թուին .  
Յայլոց մեծագոյնս եթէ հայէին՝  
Թեթևագունից յօժար տանէին :  
Արդ փոքրագունից մատիր 'ի զընին  
Տես զիւրդ 'ի վիշտս տանջեալ վաստակին .  
Յամօթ լեր ո՛վ վատ ընդ գործ քո չընչին ,  
Ուսիր զօրանալ 'ի մեծագունին :

## ՀԱՒ ԵՒ ԾԻԾԱՌՆ

Զօտար սերմանս հար ըզքարի  
Եւ մի խառներ չարն ընդ բարի :

Գէշ աշէիին հեք լի խառներ  
Զարը +եւմէ հեռու ընեն :

միգ. ( ) ր մը հաւը կը գտնէ օձի հաւկիթ  
մը և հողաբարձուի ընելով կը տաքցընէ որ  
ձագ հանէ : Զայս տեսնելով ծիծեռնիկը

զարմացաւ անոր անխելքուէն զկայ . Ո՛վ  
 յիմար , կ'ըսէր , ինչո՞ւ այդ բանը կ'ընես ,  
 չիտե՞ս որ ձագերն ելածին պէս նախ քեզի  
 պիտի սկսին մնաս տալ : Ան ատենը հաւը  
 մտմբաւորով ըսաց . Այս ի՞նչ յիմարութի է  
 իմ ըրածս որ ասանկ օձ թշնամիս կը սնու-  
 ցանեմ որ նախ ինձի մնաս տալով ձագերս  
 պիտի կորսնցնէ :

Մեծ զգուշութիւն պէտք է նախ ծնողաց որ  
 չար և անասաւի պաշտը չի մօպեցնեն իրենց ան-  
 մէջ մանկանց . երկրորդ պէտք է վարդապետե-  
 րուն որ լուր չի փան աշակերտաց չար սկզբուն-  
 քովիւ անհասաւի աշակերտներուն բաները  
 կարգաւոր :

Զխորդ քաջ խորհի խոհեմ կենդանին ,  
 Մի լինիր ասէ դարմանիչ չարին  
 Որոյ թոյն դըժնեայ 'ի ներքըս պահի  
 Խայթէ և ժայթքէ երբ 'ի չափ աճի :  
 Խըրատ է ծնողաց և քաջ վարժողին ,  
 Անարատ պահէլ ըզսիրտ անմեղին .  
 Որ խառնէ ըզթոյն քաղցր սընընդին՝  
 Կորուստ պատրաստէ իւր անմեղ դառին :

## ԱՂԱԽՆԻ ԵՒ ԱՆՕԹ

Այդ մի անյագ բերիւր յուտել  
Զի մի անկցիս 'ի վիշտս անել:


Ուրեւ խմել շաք մ' յանկար,  
Շաքին ճահողան այս է պարծառ:

միսդ. Ս) էկ աղաւնի մը խիստ ծարուրցած  
ջուր կը փնտրուէր այնչափ բաղձանքով որ  
երբ տեսաւ պատին վրայ ջրի աման մը գը-  
րած՝ շփոթուածէն կարծեց թէ իրաւ ջուր  
է, վեր ելաւ ուժով մը զարկաւ պատին վը-  
րայի ամանին որ իյնի, բայց շատ զղջացաւ,  
վասն զի անանկ սատիկ պատին զարկաւ  
թւերն որ փաստուելով վար ընկաւ. և երբոր  
բռնուեցաւ կուլար թէ Ափսոս իմ անխել  
քուծէս որ կաթ մը ջուր խմելու համար՝  
անմոռութիւն այս խեղճուէս մէջ զիս ձգեցի:

Խրաք է անոնց որ ասանց ճաթելու իրենց  
յանկուսեան եփեւէն անանկ կ'իյնին որ շնասէլով  
իւր իործանին: Ինչպէս որ Գթ-խփն ու Կորոսաբը  
լեն իշխանար, ասանկ ալ ագահին աւագ, կ'ընէ  
ասանկ:

Այսպէս որ անյագ տենչայ յըմպելին՝  
Անգէն կորնչի 'ի նոյն հեշտալին,  
Զի բռնական կիրք կորստականին  
Վաղ կարապետէ 'ի գուրս օրհասին:

Արդ երբ տեսանես սրտիդ բերկրալին՝  
Մի գահավիժիր անսանձ ՚ի նմին .  
Չափակցեալ զկիրս ըստ բանականին՝  
Չքնաղ վայելես զերկնաձիր բարին :



## ԱՂՋԻԿ ԵՒ ԼԱԼԱԿԱՆՔ

Բազումք առ սէր ոսկւոյն անբան  
Առնեն ըզգործս եղերական :

Շաք ճարդ ոսկւոյն համար ի՛շնէ  
Լաւու բանէր որ արծան է :

մխէ . Սէծատուռն մը երկու աղջիկ ու-  
նէր . ասոնց մէկը երբոր մեռաւ լալկան կը-  
նիկներ բերին որ չարաչար ողբ կ'ընէին .  
մէկալ աղջիկը տեսնելով անոնց չափազանց  
լացը՝ կը զարմանար թէ այս ի՛նչ խեղճութի-  
է . Ո՛հ մեղի սէտք է , կ'ըսէր , ասանկ լալ  
հարկաւ որ կսկիծը մերն է , չէ թէ ասոնց  
որ ասանկ սաստիկ կուլան : Պատասխանեց  
մայրը թէ Մի զարմանար , որդեակ , ասոնց  
խեղճ լացին վրայ որովհետեւ ըստրկի համար  
կ'ընեն , ըստրկին ուժն է որ կը լացընէ՝ չէ  
թէ կըսկիծը :

Շաք ճարդի ինն որ արծաթաբոսթէ և իս-  
ռաւորոսթէ համար լաւու բանէր ի՛շնէն ու լին-  
իմանար , վասն զի ցանկութիւն ճրտերնին իւր  
ուարէ :

Այս գործս է այժմեան դարու տրտմածին  
Յոր 'ի սէր օգտի գործեն զեղկեղին .

Աչք ամենեցուն են յանբան ոսկին ,

Միտք ամենեցուն ձգել զայն յանձին :

Զինչ ինչ կործանէ դիրս հողագնտին :

Ի սուսեր մաշէ մարդիկ երկրածին ,

Բայց աշխարհակուլ այս հրահալելին

Որ զաշխարհս ողջոյն գործէ լալագին :



### ՀՈՎ ԻՒ ԵՒ ՈՉԽԱՐԲ

Չարիս խորհել բարերարին

Գործ է տխմար ապիրատին :

Բարեբաւին լաւ թ' ուշեր ,

Որ քեզ հասնին Բարի օրեր :

միտք. **Ս**էկ հովիւ մը ոչխարներն անտա-  
ռը տարաւ, և կաղնի ծառին տակը հանեց իր  
լաթը փռեց՝ ելաւ ծառին վրայ որ պտու-  
ղը վար թափէ, բայց ոչխարները պտուղն  
ուտելու ատենը անոր լաթն ալ միատեղ  
կերան : Իսկ հովիւը երբոր վար ինջաւ տե-  
սաւ որ լաթերը չի կան, Ո՛վ անզգամ կեն-  
դանիներ, ըսաց, դուք ուրիշներուն բուրդ  
կուտաք որ լաթ չինեն՝ իմ լաթերս կուտէք  
որ ձեզ այսչափ կը խնամեմ :

Կան անանի ճարդիի որ հարկաւոր ճարդուն և  
իբենց ընդանեաց չէր և Բարի՜ ճ լին ուղեր  
ընել՝ օգար անարժաններուն կ'ընեն որ ինձ  
կ'երևայ : Ոչ որ Բարեբարին լար հապուցում կ'ը  
նէ՝ լարը իր քնէն լի պահիւի, կ'ըսէ իմաստունը :

Անոպայ տխմարք յայս միտս բերին ,  
Թողեալ զընտանիս օգնեն օտարին .  
Ի զի դառնացեալ բանիւ նենգողին  
Ընդդէմ ելանեն խնամակալին :  
Խակամիտ մանկանց խրատ է անգին  
Ձընկեր և զօտար ոչ ճանաչողին .  
Որ մերժեն խոտեն գուժ խնամարկովին՝  
Անկանին ՚ի ձեռս ռիսերիմ չարին :

## ՀԱՒ ԵՒ ՁԱԳՔ ԻՒՐ

Չիք ապահով պատասպարան  
Իբրև ամուր հնազանդութի :

Մի՛ր բերդ հնազանդութեան ,  
Քեզ լի յօգիւ շնորհ բան :

մի՛ն . Երբեմն հաւը ձագերն առաւ հե-  
ռուն գնաց ուտելու բան գտնելու համար .  
տեսաւ որ ուրուրը կը պտըտի օգին մէջ անոր  
մանար ձագերն յափշտակելու համար՝ մե-  
կէն կանչեց քովը զանոնք ու թւերուն տա-  
կը պահելով ազատեց թշնամոյն ձեռքէն :  
Իսկ ձագերը տեսան որ ուրուրը հեռա-

ցաւ, եւ լան ինքնագլուխ կը ստորտէին: քիչ մը ատենէն ետև նորէն եկաւ ուրուրը, հաւը նորէն կանչեց ձագերն որ գան թւին տակը պահուին. որոնք որ հնազանդեցան եկան մօրը թւին տակը մտան՝ ազատեցան, իսկ անոնք որ չուզեցին մօրերնուհն հնազանդիլ և քովը դալ՝ ընկան թշնամուոյն ճանկը կորան:

Խրատ է մանկանց որոնք որ լաւ հնազանդ են ծնողաց և իրենց մեծին՝ մէշ առէի՝ ի՛շուան. իսկ անհնազանդ եղածնուն պէս ասանկ ի՛շ ի՛որսոսին:

Որդի հնազանդ ծնողաց ձայնին՝

Քաջ պատասպարի ընդ թւօք նորին.

Ճիրանք և մագիլք դժնեայ ոտիսին

Ոչինչ վերս առնեն ի վերայ անձին:

Իսկ որ անհաւան գտանի նմին,

Ինքնակամ չըջի ուր կամք իւր բերին,

Երագէ ինքեան ճիրան գազանին,

Մանրեալ կործանի ի նոյն գառնագին:



## ՊԱՐՏԻՉՊԱՆ ԵՒ ՄՈՒԿՆ

Գործ վատաբեր զօջաքաղին  
Ի միշտ քաղել զօգուտն անձին :


Շահասէր յարդն ամէն բանէ  
Միայն իրեն շահ իւր տալէ :

միւլ. Պարտիզպանը էգիին մէջ մէկ մուկ մը կը բռնէ . երբոր պիտի մեռցնէր, սկսաւ մուկն աղաչել թէ Մի սպաններ զիս մեղք կը գործես, վասն զի ես քու ծառագ եմ, միշտ քեզի համար կ'աշխատիմ ու գիշեր ցորեկ գետինը կը փորեմ առանց վարձքի և հողն ալ ուրիշ տեղ մը չեմ տանիր : Պատասխանեց պարտիզպանը թէ Ի՛նչ որ ընես՝ միայն քու շահիդ համար կ'աշխատիս, և քեզի օգուտ ըլլալու համար աշխարհքի փնաս կուտաս . այս պատճառաւ պէտք է որ գուն անպատճառ մեռնիս :

Ամէն գործի մէջ, պէտք է դիտաւորութիւնը նայել գործողին . շատ բան կայ որ ինքը լար է, բայց լար վախճանով ըլլալուն համար լար կ'ըլլայ :

Դժնեայ զօջաքաղք զանձանց շահ խորհին,  
Ի փնաս այլոց բերին խնդագին .  
Բայց երբ գործ իւրեանց յերևան ածին՝  
Անտագիւտ լինել ջանան յատենին :

Ո՛ր յայնժամ լսող ձայնի զրկողին ,  
 Ինքեան դատախազ նոյն իսկ գործ անձին .  
 Զի գործք թէ չիցեն կարգեալ ի վախճան ,  
 Հարկաւ կորնչիլ կայ ՚ի վախճանին :



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

Որ վասն այլոց չարիս խորհի՛  
 Չարագունին ինքն հանդիպի :

Թէ ո՛ր այլոց լար ուղեւան՝  
 Մեծ լարեցո՛ւն է քիբանան :

Մի[թ. Ս] էկ աղուէս մը խորամանկութե՛ք  
 մեռել ձևացաւ , և դաշտին մէջ ընկած մը-  
 նաց որ թռչունները մօտենալով իրեն ա-  
 ռանց աշխատանաց բռնէ զանոնք ուտէ :  
 Բայց ըրած խաբէութի՛նը գլուխը կերաւ .  
 վասն զի շուն մը դիպուածով անցաւ անկէ ,  
 տեսաւ՝ որ աղուէսը փռուեր սլառկեր է մէ-  
 կէն վրան վազեց սպաննեց . երբոր կը մեռ-  
 ներ կ'ըսէր ողորմելին . Ուրիշները խաբել  
 ուղեւում համար ահա ես խաբուեցայ և ը-  
 րածս գտայ . ճշմարիտ է եղեր թէ ինչ որ  
 ընես՝ զայն կը գտնես :

Ո՛ր լա՛տ խորամանկ ըլլաւ և խորագեպ՝ այն-  
 լա՛տ քեզմէ խորամանկին էլ պատահիս . Դուն ինչ  
 լարութիւն ո՛ր էլ մտածեիր ուրիշին՝ Բուրբ բո-  
 գը խառտ ինձայ , զի անպատիւն ինքնանման լար է :

Զոր ինչ որ խորհի առնել ընկերին՝  
 Նոյն վերագառնայ յիւր ներգործողին .  
 Զի գործ 'ի սրտաճառն բերին հոլովին ,  
 Թէ վատ թէ ընտիր յայնկեդրոն յանկին :  
 Իսկ քեզ մտախոհ վիճակեալ բանին ,  
 Ի ճահ է աննենգ վարիլ ընդ մանկաին .  
 Որչափ խորամանկ գտցիս ընդ այլոց՝  
 Ի նոյն ըմբռնեալ մանրիս դառնագին :



### ՇՈՒՆ ԵՒ ՏԵՐՆ

Պահել զքոյս թէ չես արթուն ,  
 Զիարդ յայլոց խնդրես զնոյն :

Թէ չես հոգար Դոն Կո Բորին՝  
 Ինչ շահ կ'ընէ հոգն ուրիշին :

ԴՃ . **(I)** Էկ մարդ մը շատ հաւ կը պահէր  
 հաւնոցին մէջ . գիշեր մը մոռցաւ հաւնոցին  
 դուռը փակելու , ուստի աղուէսը գիշերն  
 եկաւ բոլոր հաւերը խղզեց : Առաւօտուն  
 երբոր տեսաւ տէրը այս եղած փնասը՝ սաս-  
 տիկ բարկանալով սկսաւ շունը ծեծել թէ  
 ինչո՞ւ համար անհոգ կեցար նայելու որ  
 աղուէսը զանոնք խղզեց : Պատասխան տը-  
 ւաւ շունը թէ , Տէր իմ , դուն առանց պատ-  
 ճառի զիս կը ծեծես , որովհետեւ եթէ դուն  
 անհոգ եղար քու հաւերդ նայելու , և չի  
 մտածելով դուռը բաց թողուցիր , որոնցմէ  
 այդչափ շահ ունէիր , ինչ կ'ուզէիր որ ես

ընեմ. դուն քու պիտուական բանը չի նայել,  
լին ետև ես ինչպէս պիտի նայիմ:

Օրինակ է ծոյլ մարդու որ իր բանին հոգ  
լսանելով ուրիշին յետոյ իջի, և կուգէ որ  
ուրիշը լաւ պէսնէ իրեն բանը, լիցաքէ Բէ ուրի-  
շին շահ լիցայ:

Անիրաւ դատմունք զանցառու հեղգին  
Որ յայլոց վերայ ձրգէ մեղս անձին .  
Ձոր ինքեան անկէր առնել ըստ կարգին՝  
Թողու հեղգու թեամբ առնել օտարին :  
Թէ դու չես ո՛վ վատ հոգածու անձին  
Հիմ յայլոց խնդրես հոգ տանիլ նրմին .  
Եւ եթէ դու քեզ չես հաւատարիմ՝  
Ո՛վ դք քեզ լիցի բարեկամ ներքին :

### ՀՈՒՆ ԵՒ ԻՇ

Չէ վեհապանծ տեսն արտաքին՝  
Թէ համարուն չիցէ ներքին :

Դըրսի բեռք բան մը լարծէ,  
Թէ որ ներսի սիրտն անանկ չէ :

մծւ. Շ ունը դայլին հետ պատերազմ  
ունէր . տեսաւ որ գլուխ չպիտի կրնայ ել  
լել, ուղեց ընկեր մը գտնել որ անով թըշ  
նամուոյն յաղթէ: Ահա օր մը հանդիպեցաւ

իշուն որ կը զըռար, և վրայի համէտը (սէ մէրը) զէնք կարծեց. նայեցաւ որ ձայնն ալ շատ զօրաւոր է՝ միտքը գրաւ թէ իշուն պէս ուժով և քաջ կենդանի չկայ. ուստի իրեն ընկեր ըրաւ ու միատեղ գնաց գայլին հետ պատերազմելու: Բայց էշը երբոր տեսաւ հեռուէն գայլը՝ սիրտը փրթելով մէկէն փախաւ թողուց շունը մինակ: Իսկ շունը զարմանալով կ'ըսէր ետեւէն, թէ Մեղք այդ ձայնիդ ու տեսքիդ որ սիրտ չունիս. ուրեմն դոսի տեսքին նայելու չէ եղեր, հապա ներսի սրտին:

Խրատ է անոնց որ մեծախօս և մեծագլուխ մարդ մեծ իւ համարին. վասն զի մարդոս մեծոթիւն սրտին և հոգւոյն վրայ է՝ չէ թէ մարմնոյն:

Ռամկական մըտաց այս ծնունդ յետին՝  
 Որ միայն դատի տեսլեամբ արտաքին.  
 Յորժամ տեսանէ զյաղթանդամ մարմին՝  
 Կարծէ զերկնաձիր ոգիս 'ի սըրտին:  
 Իսկ իմաստնոց է կշռել զներքին,  
 Վառ 'ի վառ ճրագ փայլի 'ի նմին,  
 Զի այնու մարդն է անյաղթ 'ի մարտին,  
 Եւ ոչ անարի գիմօքն ահագին:



## ՍԱՐԵԱԿ ԵՒ ՏԱՏՐԱԿ

Մի ինչ գրքեր զձայն ճոռոմին ,  
Երկիր յաւէտ որ կայ լըռին :

Շաք խօսողէն շուն թէ վախաւ ,  
Անիկ վախճիւր որ իայ խոնարհ :

մծբ. Սարեակը տատրակին հետ ընկեր  
ըլլալով՝ տեսաւ ուրուրն որ օդին մէջ կեր-  
թար զարհուրեւի ձայն հանելով ինչպէս որ  
սովորութիւն է իրեն . ասոր ձայնէն այնչափ  
սոսկաց որ դողալով կ'ըսէր տատրակին , թէ  
'Նայէ ինչպէս սաստիկ սպառնալով կ'երթայ  
ուրուրը ես խիստ կը վախնամ այս ձայնէն :  
Պատասխան տուաւ տատրակը , թէ Մի վախ-  
նար անանկ ձայներէն , վն զի այս սպառնա-  
լիքս մեզի համար չէ , հապա մկներուն և  
հաւի ձագերուն համար է . մենք արեւոյ է  
աւելի վախնանք սուսիկ բազէին ճանկերէն՝  
որ ձայնէն առաջ մեզի կը հասնին :

Անէւի պէտք է լիօսողէն վախաւ՝ քան Բէ  
Ռեծախօսէն . վասն զի Ռեիին գործք խօսքէն առաջ  
իւ խաբարուի , իսկ Ռեիւիին խայնը առանց գործ-  
քի իւ սպառնայ :

Գեղեցիկ խրատ խոհեմ տատրակին ,  
Զգոյշ կաց , ասէ , որ լռիկ նըստին .

Զի փոխան գործ ոյ բանքն են ճոռոմին ,  
 Իսկ փոխան բանից գործքն են անխօսին :  
 Այդ մի երկնչիւր 'ի ձայնէ ուժգին ,  
 Մի 'ի սպառնալեաց անգործ զըախօսին .  
 Պատկառ կալ յաւէտ անձայն գործողին ,  
 Ոյր նախ քան ըզձայն արդիւնք վըճարին :

### ՓԱՐԹԱՄ ԵՒ ԱԶԳԱԿԱՆ

Որ յոյժ տենչայ յառնուլ զբոլոր՝  
 Կորուսանէ զբարին բոլոր :

Ու որ բոլորն առնել է'ռ-չէ՝  
 Քիչն աւարճէ առնէ է'ելէ :

ԺԺԳ. Տարուստ մարդ մը իր գանձը տա-  
 րաւ ծածուկ անտառին մէջ թաղեց մարդ  
 չիմացաւ . մինակ իր մէկ ազգականը գիտէր՝  
 որ գիշերանց գնաց ոսկիները հանեց գող-  
 ցաւ : Ատեն անցաւ երբոր եկաւ տէրը իր  
 գանձը նայելու՝ տեսաւ որ չկայ , հասկը-  
 ցաւ թէ իր ազգականն է գողցեր , մտածեց  
 անանկ խելք մը բանեցընել որ ոսկին տեղն  
 երթայ : Ուստի կանչեց ազգականն ըսաց ,  
 թէ Կ'աղաչեմ վաղը մէկ տեղ երթանք ան-  
 տառը փորենք գանձս եղած տեղն ու հազար  
 ոսկի ալ նորէն թաղենք : Նայիա գիշերանց  
 ազգականը առաւ գողցած ոսկիները տարաւ  
 տեղը դրաւ որ այն հազար ոսկին ալ տէրը  
 թաղէ հոն՝ անկէ ետեւ բոլորը յափշտակէ :



Իսկ հարուստը երբոր գնաց գտաւ գանձը՝  
վերցուց տարաւ տուն :

Ու որ ցանկանաւ իւր իւր իւր իւր իւր  
բնակիչի՝ Բաբելոն իւր իւր իւր իւր  
իւր իւր իւր իւր :

Այսպէս որ անյագ ցանկայ բոլորին՝  
Վաղ կորուսանէ որ կայ ի ձեռին .  
Զի երբ ոչ գիտէ բերկրիլ ի մասին՝  
Վրբիպի բերկրիլ ի բոլոր բարին :  
Սի ցանկար շատին մի չափազանցին ,  
Զի մի զբերկեցիս ի չափաւորին .  
Հըրճուեա ընդ բարիսն շխարեալ անձին ,  
Նորանոր բարիք քեզ վերագրեցին :

## ՈՉԻԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Ծանր է կրբել վիշտս յընկերէն  
Քան յոխերիմ գիմամարտէն :

Ըստ իւր իւր վերին ընկերին  
Քան իւր իւր իւր իւր իւր :

ՄԾԴ. Գայլը երբեմն ոչխար մը բռնեց .  
Իսկ ոչխարը ամենեւին ձայն չհանեց կեցաւ .  
Գայլը ապահով ըլլալով ոչխարին վրայ եր-  
բոր ասդին անդին ժուռ կուգար , կերպով  
մը ոչխարը փախաւ ազատեցաւ գայլին ձեռ-

քէն ու ընկաւ շան մը ձեռք . բայց շունն  
որ զինքը բռնեց՝ անանկ սաստիկ պոռաց որ  
հովիւը ձայնն առաւ հոն հասաւ ազատեց  
շանը բերնէն : Ինչո՞ւ համար՝ ըսաց հովիւը ,  
երբոր դայլը քեզ բռնեց ձայն ջհանեցիր ,  
ու շունն որ բռնեց բոլոր ուժովդ պոռացիր :  
Պատասխան տուաւ ոչխարը [Թէ Աւելի դը-  
ժուարեցայ երբոր շնէն վնաս տեսայ՝ քան  
[Թէ դայլէն , վասն զի դայլը 'ի բնէ մեր [Թշնա-  
մին է , իսկ շունը պահապան ըլլալով տե-  
սայ [Թէ պահապանը [Թշնամու[ծիւն կ'ընէ՝  
շատ դժուարելով պոռացի :

Ասք դառն է վնաս և նեղութիւն բաշխ  
իսմէն և ազգականէն բան թէ օգարէն , վաս-  
նի բաշխիսմէն իւր վայելէ բաշխութիւն անեւել՝ չէ թէ  
շարութիւն :

Այո՛ դժբերդակ են վերք մըտերմին  
Որ յանկարծ խոցեն զսիրտ բարեկամին .  
Եթէ [Թըշնամին լինէր ոխերիմ՝  
Ոչ յոյժ մորմոքեալ ցաւ գործէր խորին :  
Խըրատ վայելուչ ընկերականին ,  
Միամիտ սիրել զընկեր դըրացին՝  
Բարք է անհամբոյր գազանականին  
Որ զիւրան խոցէ որպէս [Թշնամին :



## ՀԱՒՈՐՍ ԵՒ ԵՂՋԵՐՈՒԿ

Արդ մի խորշեր տանիւ փոքուն ,  
 Զի մի անկցիս 'ի մեծագոյնն :

Եթէ +իււ +աւելււո-ւէս՝  
 Մեծ Վաւառ մեջ +եղ իւ Յգգէս :

մծԷ. Նաւորսը բռնեց եղջերուկ թռու-  
 չունը , և ոտքը չուան կապեց տանը մէջ կը  
 պահէր . իսկ թռչունը դժուարելով մարդու  
 քով կենալու՝ չուանն ոտքը թռաւ գնաց իր  
 բունը նստաւ . բայց չուանը ծառին փաթ-  
 առելով արգիլուեցաւ ալ չկրցաւ անկէ  
 թռչիլ : Ուստի կերակուր չէր գտնէր ու-  
 տելու , երբոր անօթի կը մեռնէր՝ սկսաւ ին-  
 քը զինքը մեղադրելով ըսել . Աւաղ ողոր-  
 մեւոյս , ես չհամբերեցի մարդու ծառայ-  
 ութի ընելու՝ ահա անմոռութիւն կը մեռնիմ .  
 որչափ որ կամեցայ ազատ ըլլալ՝ չարաչար  
 կապուեցայ , վասն զի կապով փախչիլը աւելի  
 վնասակար է եղեր . քան թէ գերի ըլլալը :

Խրափ է անոնց որ պղտի նեղութենէն փախ-  
 լելու համար զապ անգամ մեծին մէջ կ'իյնին ,  
 վասն զի առանց նեղութեան կեանք չկայ : Աս և  
 այս առաջիկա իշխան Խրափ առնել է կեղեցական  
 ներք և մարապետներն որ աշխարհին կապեն

իւ Ժառանգին , եւնէ աշխարհին հետ « Բարեկէսին »  
 Իսկապէս ըստ իւր իրենց :

Կըրէ՛լ յաշխարհի վիշտ տըրտմաբերին ,  
 Հարկ 'ի սկըզբանէ եղաւ մահացուն .  
 Որ 'ի բաց փախչի տանիլ թեթևին՝  
 Կըմին հասանէ ծանր անտանելին :

Մարդ Ժառանգաւոր տըրտմական մասին  
 Մի օտար գըրէ՛ր զոր քեզ սլաշաճին .  
 Եթէ գոհ տանիս՝ ծանուցի թեթևին ,  
 Թէ փոքունց անգոհ քեզ ծանրաբեռնին :



### ԿՐԻԱՅ ԵՒ ԳՈՐՏԻ

Մի մեղադրեր բնութիւնն արդար  
 Թէ հիմ հանուրց բարիս չարար :

Մի արարիւն լէ մեծ բան լուսին ,  
 Թէ լուսնին շաք բան սանին :

մծգ. Սրիան տեսաւ որ դորտերը արագ  
 արագ կը ցաթկէին՝ արտնջալով ըսաց թէ  
 Ինչո՞ւ համար բնութիւնը տուեր է անոնց ա-  
 նանկ արագութիւն և իրեն անանկ ծանրութիւն  
 որ բեռան տակ ըլլալով կամաց կամաց քարշ  
 կուգայ : Բայց օր մը տեսաւ որ արագիւր  
 մտեր է լճին մէջն ու մէկիկ մէկիկ զանոնք  
 ջարդէ կ'ուտէ՝ սկսաւ զինքը մխիթարելով  
 ըսել թէ Ես խեղճ եմ որ կը մեղադրեմ  
 արդար բնութիւնը որ ինձի առանկ մէկ լաւ

զէնք մը տուեր է որով այս վտանգներէս  
ազատ եմ և բանէ մը վախ չունիմ :

Օրինակ է անոյս ուսման եր մէկին վրայ  
Բարի Բան Տէր Կաթողիկոսն ունի ինչ Կրօնական Բե  
ման Եւանջիլի, Եւանջիլի Եւ Եւանջիլի Եւ Եւանջիլի  
Բանիւն է . ո՛վ որ շատ Բարի ունի՝ շատ ալ նե  
շահեալն ունի :

Այս բերք են մտաց անխորհուրդ ռամկին՝  
Որ պշնու ցանկայ ընդ այլոց բարին .  
Երբ գեղեցիկ ինչ գիտէ յօտարին ,  
Կարծէ զինքն զիրկ յիրաց բնաւին :  
Մի լինիր չարակն յընկեր դրացին ,  
Քոյդ չեն փոքր օժիտք նկատեալ յանձին .  
Եթէ մի աղամբ գիտեալ ձերս այլոց՝  
Միւսով տես չարիս լծակցեալ նմին :



## ԱՌՆԷՏԻ ԵՒ ԿԱՂՆԻ

Որ ոչ խորհի զգործոց վախճան՝  
Զղջայ կրէ ցաւս անվախճան :

Բան Տէր Եւրոպ լեւելէ ,  
Երբի ցաւս օգոստոս լեւելէ :

ՄԾԷ. Եւանջիլի աշխատանքէ փախչե  
լու համար խորհուրդ ըրին իրենց մէջ որ  
կաղնի ծառին արմատները կրծելով վար

ձգեն , որ ելլելու ինջնելու նեղութիւն չի  
քաշելով վարէն ուտեն պտուղները : Բայց  
ասոնց մէջէն մէկ ծեր մը պատասխան  
տուաւ , թէ Մենք հիմա մեզի կերակուր  
տուողն որ կտրենք՝ հասկա եկած տարի  
ո՞վ մեզի կերակուր պիտի տայ . քիչ մը նե-  
ղութի չի քաշելու համար ի՞նչ խեղբով զմեզ  
սնուցանողը պիտի վար ձգէք , գնացէք բա-  
ներնիդ այս միտքը մէկ բանին ետքը չի մը-  
տածելէն կուգայ :

Առնէփն է հապոռի նման կենդանի որ ծառի  
պտուղ կ'ուտէ տմառաւ , իսկ յձեռաւ կ'ընեն ինչ վեց  
ամիս Ռմբաժ իւր Ժնայ Բան լոսպէր : Օրինակ Բե-  
րած է անմեք հարդիանց որ ետքը լի հաածելու  
Բան կ'ընեն :

Այսպէս որ կշուէ զսկիզբն և վախճան՝  
Կանխաւ գուշակէ զանոցոյ ապագայն .  
Որով միշտ առնէ գործ աներկեան ,  
Ոչինչ վրիպի անձն խոհական :  
Սրդ մի անխորհուրդ առնէր գործս համայն ,  
Այլ որիչ մտք քննեա զասպագայն :  
Զի նախկին պատճառն է վախճանական ,  
Ոյր սակա եղանին բնաւք եղական :

## ԶԻՆՈՒՈՐ ԵՒ ԶԻ

Նորասիրաց նորն է սիրուն ,  
Ընտրեն զնորն հինըն թողուն :

Փռճած Բանէն եւ Քէնէնար ,  
Մ'ապէր հինը նորին համար :

մծԵ. Սէկ զինուոր մը սրավար ձի մը ու  
նէր որ երկար ժամանակ իրեն լաւ ծառայ-  
ութիւն ըրեր էր ամէն բանի մէջ . իսկ զի-  
նուորը նորէն ուրիշ ձի մը գնեց որ անշահ  
ըլլալով մէկալ ձիէն շատ վար էր : Սակայն  
տէրը նոր գնած ձին առաջինէն շատ փա-  
փուկ կը պահէր և մեծ գութ ունէր վրան :  
Օր մը անշահ ձին ըսաց լաւ ձիուն , թէ  
Դուն ինձմէ շատ զօրաւոր ես և լաւ ծառայ-  
ութի կ'ընես , բայց մեր տէրը զիս քեզմէ  
շատ կը սիրէ ու խիստ լաւ կը նայի : Ան ալ  
պատասխան տուաւ թէ Զարմանք բան չէ ,  
որովհետեւ սովորութիւն է մարդկանց հինը  
ձգել նորը սիրել :

Օրինակ է Տարգմանիկ Տառն անհասարակութե-  
որ սովոր են նորը սիրել և հինէն վեր Բանել  
Բեպէս գէշ ըլլայ . սակայն նորասիրութիւն թէ  
թէ ինքնէր Բեբէր է շատ Տարգոմ :



Ահա նշանակ անհաստատ սրտին  
 Որ ընտրէ զնորն ատէ զընտրելին .  
 Ոչինչ համարի հնութին անգին  
 Անհասուն մտաց այն նորասիրին :  
 'Նորասիրութ թէ մերժես զհինն'  
 Յեղաշարժ ոգիս ցուցանես յանձին .  
 Հնադիտութ թէ զննես զնորն ,  
 Հնոց և նորոց դոս հետաքննին :



### ԳԱՅԼ ԳԱՌՆԱԶԳԵՍՏ


Բազում գառինք ըստ արտաքնոյն ,  
 Այլ քանասար գայլ ըստ ներքնոյն :

Ըսքը Դրեն գառն է անեղ ,  
 Սախան ներսն է գառն անեղ :

մծթ . Լորբեմն գայլը վրան առաւ ոչխարին մորթը ( Կէրին ) գնաց ոչխարներուն մէջ խառնուեցաւ , և ամէն օր մէյմէկ ոչխար կ'ուտէր : Տէրն որ խմացաւ սպաննեց զգայլն , ու անանկ մորթը վրան կախեց ծառէն . երբոր հովիւները կը հարցընէին , թէ ինչո՞ւ համար ոչխարը կախեր էս ծառէն , պատասխան կուտար թէ Մորթն որ կը տեսնէք իրաւ ոչխարի է , բայց ինքը գայլ է . երևցածը անմեղ գառն է , ներսը պատառող գայլ է : Ուստի դրսինը մի նայիք՝ ներսինը նայեցէք որ այս անմեղ կերպարանքով այնչափ ոչխարներս կերաւ :

Օրինակ է կեղծաւոր և խաբէֆայ մարգիանց  
որսորդ երեւաւ շորիշին քան ի մաւրէն , Բայց  
օր ՚ն խայտառակ ՚լուա , Իրենց կեղծաւորու  
թիւնը :

Այսպէս կեղծաւորք զերթ փարիսեցին  
Արդար ձկանան ձկուիւ արտաքին .  
Քաղցրաթոյն բանիւ մաքուր երևին ,  
Այլ ՚ի ներքոյ են գազան գառնագին :  
Արդ մի հաւատար կեղծութեանց նոցին՝  
Որոց այլ է սիրտ այլ ինչ ՚ի լեզուին ,  
Մի քեզ բարեձև գազանք մերձեցին ,  
Զի մի ծախեցիս յանդուծ որկորին :



## ՁԻԹԵՆԻ ԵՒ ԴԴՄԵՆԻ

Որ փոյթ ցոլայ վաղ շիջանի ,  
Կանխաբողբոջն անդէն խամրի :

Ըստ Բոսածը ըստ ին ըննայ ,  
Ու չհասածը ին ԴԴՄԵՆԱՅ :


մի . Չիթենին կը զարմանար դդումին  
վրայ որ քովը բուսած էր , թէ ինչպէս քիչ  
ժամանակին մէջ այնչափ աճեցաւ մինչև  
զինքն անցաւ երկայնութիւն որ քսան տա  
րի առաջ էր տնկած : Բայց շատ չանցու  
տեսաւ որ ձմեռուան մօտ չորցաւ դդումը .  
ան ատենը ձիթենին միտքը փոխեց ու ըսաց .  
Իրաւի յիմարութի է նախանձիլ ասանկ շուտ

աճողներուն վրայ, վն դի մէկէն մեծցողը՝  
շուտ ալ կը կորսուի եղեր: Ուրեմն շատ  
աղէկ է կամաց կամաց աճիլ ու շատ մնալ,  
քան թէ շուտ աճիլ ու շուտ չորնալ:

Աստուծոյ եղած Բանը շատ էի քննէր կ'անցնէի,  
աստի պէտք է իմ Բանի մէջ որ լին-  
այ թէ իմ շուտ շուտնալով իմ Բանի մէջէն, իմ  
էի իմ Բանի եղած Բանը՝ իմ Բանի շուտ  
էի Բանի:

Զինչ օգուտ պանծալ ճոխանալ հեշտին,  
Ընդ փոյթ նուազեալ խամբիլ գլխովին.  
Լաւ է անագան աճիլ 'ի չափին,  
Յերկարեւ մնալ 'ի նոյն վիճակին:

Մի ցանկար փառաց փախստականին  
Որ փոյթ ցոլացեալ անդրէն խաւարին.  
Փառք էն տիրապէս փառք հոգեկանին՝  
Որ փայլին ընդ ձիգս յանծայր ջրջանին:



## ԱՌԻՆ ԵՒ ԾԱՌԱՅ

Երբ որ այրի ջրով ջերմին՝  
Խիթայ մերձիլ 'ի ջուր ցրտին:


Երբ լեզուն լախիւս կ'ըլլայ,  
Պաշ ջրէն ալ էի հօգեւայ:

մկն. Պարոնի մը տուն մէկ շուն մը կար  
որ ամէն անգամ երբոր անձրև կուգար՝ դռ-

նէն դուրս չէր ելլեր ծակերը կը մտնէր . օր մը տանը ծառան ուղեց շունը դուրս ընել անձրևի ատեն . կ'աղաչէր շունն որ քիչ մը ատեն տայ իրեն մինչև որ անձրևը անցնի . վասն զի առանց պատճառի չէ կ'ըսէր այս ըրածս : Ան ալ հարցուց թէ ի՞նչ է պատճառն որ անձրևի ատեն դուրս չես ելլեր : Պատասխանեց թէ Մէկ անգամ մը դիպուա ծով տաք ջրին մօտեցայ կռնակիս կաշին խաչեց , անոր համար պաղ ջրէն ալ կը վախնամ :

Ընթեր օրինակ է զգուշաւոր մարդոս որ ելի մէկ բանէ յը շնաս փեսնէ՝ ամէն բանէն զգուշաւի կ'ընէ որ նորէն շնաս յը չի քաշէ :

Գեղեցիկ հանճար մտաց փորձառուին ,  
 Լուրջ կայ չփորձիլ 'ի նոյն վերստին .  
 Եթէ որ փորձի 'ի միում առթի՝  
 Պարտի արթուն կալ յամենայն առթին :  
 Պատշաճ յորդորակ ժիր պատանեկին  
 Առ 'ի հեռանալ յառթից վտանգին .  
 Թէ առարկային չփորձեաց զքեզ դիւրին՝  
 Մի՛ անփորձ մերձիր յիր ինչ բնաւին :



## ՀԱՒՈՐՍ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Միտք տղայոց չեն խոհական ,  
Զոր ինչ լսեն այնպէս գնան :

Խաբէ՛հայ Բան լընէս քղան ,  
Անձեղ խօսքն է անձեղաց լեռն :

Մկ՛ . Հաւորսը զարկաւ տասը թռչուն ,  
ու շամբուրն անցուց տուաւ տղուն որխոր-  
վէ մինչև ինքը գայ . բայց երթալու ատենը  
ապսպրեց որ զգոյշ կենայ չըլլայ թէ մոխի-  
րին մէջ ձգէ , թէ չէ՝ բոլորը քեզի կը կեր-  
ցընեմ կ'ըսէր : Թռչունները գրեթէ խորված  
էին՝ գիպուածով տղուն ձեռքէն ընկան մո-  
խիւրին մէջ : Տղան ալ տիրոջը խօսքին նայե-  
լով սկսաւ ուտել . ինը հատը կերաւ կշտա-  
ցաւ մէկ հատը չի կրցաւ ուտել : Երբոր  
տէրն եկաւ՝ սկսաւ տղան լալ . ան ալ հար-  
ցուց թէ ինչու համար կուլաս . պատասխա-  
նեց թէ Յանկարծակի թռչունները ձեռքէս  
ընկան , ես ալ ինը հատը կերայ մէկը չկըր-  
ցայ ուտել , կ'աղաչեմ մի բարկանար վասն  
զի խիստ կշտացայ : Ան ատենը հաւորսը մըտ-  
մըտալով ըսաց՝ թէ Շատ զգուշութի պէտք  
է եղեր տղոց բան հասկըցընելու :

Տը՞ Բն-Բիլ Կարգա՞յ Ըսաւ՞ Լա՞ր Կո՞ւլ

Բէ պէտք է վարձուիլ հեփերնին և գեշ օրինակ  
 լի քաւիքներն խաբէական խօսքերով: Առաջիկա  
 «է Բէ խելացիներուն հեփ կեցողը խելացի կ'ըլ  
 ւայ, անպատէն հեփ կեցողը անպատ»:

Է խոհեմ մտաց վարիլ ընդ մանկտին  
 Կըշուէլ և խօսիլ առաջի նոցին,  
 Ձի Թերակառտար միտք մանկականին  
 Ձոր ինչ և լսէ գըրէ 'ի սրտին:  
 Մի խօսիր խարդախ և կամ զանաեղին,  
 Ձի մի չարուսոյց լիցիս անմեղին.  
 Խօսեաց պարզ արդար ըստ հոգեկանին  
 Օրինակ բարեաց ելով համբակին:



## ԴԻՈՍ ԵՒ ԿԱՊԻԿ

Իւրաքանչիւրն իւրով բերկրի,  
 Ձի ամենից իւրն է բարի:

Այն հարդու ինչ է աղուոր,  
 Թէ և ըլլայ պախասաւոր:

միջ. Դիոս ուղեց իմանալ Թէ ամէն  
 կենդանիներուն մէջ որո՞ւն ձագը աւելի գե-  
 ղեցիկ է. հրաման հանեց որ ամէն կենդանի  
 իր ձագն առնէ գայ. ուստի ամէնքը իրենց  
 ձագերովն եկան Ժողովեցան. կապիկն ալ իր  
 ձագը բերաւ հոն: Իսկ Դիոս անոնց վըայ  
 նայելով սկսաւ ծիծաղիլ. երբոր կապիկը  
 տեսաւ Դիոսին ծիծաղ երեսը՝ ուրախանա-

լով կըսէր թէ Իմ ճագս ամենէն գեղեցիկ  
տեսաւ, անոր համար կը խնդայ Դիոս:

Խելացի Տարտը իբեհ աւելցածը Բանի փեշէն  
դնելով աւրիշին իւնայի որ իբեհն աւ խաբարե-  
լագործէ. վասն զի անիւնէն Տարտիկի մայն իբեհ  
Բանին իւ հաւնին: Սոյրաք թիւսոտային հա-  
ցոյնն թէ Ո՞ր իենդանին գեղեցիկ է. ան աւ պա-  
րասխան պոռաւ թէ Խրապոռած խորի Տարտը:

Անմիտ ինքնասէրք նրմանեալ կապկի  
Զոր ինչ և ունին համարին յարդի.  
Ոչ հային յայլոց բարին ցանկալի  
Զիւրեանցն 'ի կատար բերել անթերի:  
Տէս քանի՜ չքնաղ յօտարս երևի  
Զանազան օժիտ ձիրք առաքինի.  
Կրթեալ վրոյդ ծնունդ գործով պանծալի  
Պայծառ փայլեցո՛ւ այլոց առաջի:





## ՍԱՐԴ ԵՒ ԾԻԾԱՌՆ

Մի զքեզ դներ վեհ յաղթական ,  
Զի մի վեհից լիցիս կոխան :

Մեծերն՝ իւրդ +եւ լի շնեւ ,  
Ու ինչ !' ըստ ճանաչիւր զւեւ :

միդ . Ս ամուկը տեսաւ թէ ծիծեռնիկը  
վեր վար օդին մէջ թռչելով ճանճերը կ'ու-  
տէ իրեն բան չի մնար՝ ուղեց որ բռնէ .  
ուստի իրեն թելերէն որոգայթ մը լարեց  
ծիծեռնիկին ճամբուն վրան որ ճանճի սկէս  
բռնուի . բայց երբոր ծիծեռնիկն անկէ ան-  
ցաւ ոչ միայն պատուեց աւրեց անոր որոգայ-  
թը , այլ և մամուկն ալ հետը տարաւ զար-  
կաւ պատին ճզմեց , որ երբոր կը մեռնէր՝  
կուլար թէ իմ մահս ես ձեռքովս պատճա-  
ռեցի , ճանճին յաղթելովս կարծէի թէ մեծ  
կենդանիներուն ալ պիտի յաղթեմ : Ահա  
իմ տկարութիւն չի ճանչնալու համար արժա-  
նի եղայ այս պատուհասիս :

Անիկա հարդիկ ելէ պարիկ +աջոն-նի՝ ՏԵ ԳԻՐ-  
ԺԵՆ իւրծէն ինչ աշխարհ + դիմացինն լի ինտեր-  
էլլէ . և այս խելահալ երեւոյթ մեծին հեպ կ'իյնին  
նաւարակաւ ինչ իրարմէն : Ուստի Գիւր-նիւր-նի  
առջի խրատն է ճանաչիւր զւեւ :

Այսպէս ամբարիշտք կըրեն զարժանին  
 Ոչինչ չափելով զօրութի անձին .  
 Երբ իշխեն փոքունց ընդ վեհից կռուին  
 Յորոց և անդէն կոխին սատակին :  
 Արդ մի մաքառիր ընդ վեհագունին ,  
 Զի մի կորիցես նըման յիմարին .  
 Պատկառ կալ պետաց և գիտնականին ,  
 Պանծալի լիցիս 'ի շնորհս նոցին :

### ՊԱՌԱՒ ԵՒ ԲԺԻՇԿ

Ջանա՛ պահէլ ըղ ճրագ . քո վառ  
 Մի՛ տիրեսցէ անձինդ խաւար :

Նայէ՛ +ո- լոյսդ որ վառ շնայ ,  
 Աւրջ լոյսը +եղ մոռ-ի՛ լ'ըւսայ :

միե . **Ս**էկ պառաւ մը աչքի ակարութի  
 ունենալուն համար կանչեց բժիշկն որ ը-  
 ուրնացընէ՝ այսպիսի պայմանով : Թէ որ ա-  
 ուողջանայ՝ անոր ուղածը տայ . իսկ թէ չա-  
 ուողջանայ՝ բան մը չի տայ : Բժիշկը սկսաւ  
 դեղ ընելով ամէն օր աչքը եղով օծել . բայց  
 տեսաւ թէ չաւողջանար , ամէն դալուն մէ-  
 յէկ բան տնէն գողնալով կը տանէր անանկ  
 որ տան մէջ բան չի մնաց մինչև պառաւն  
 ալ կըրցաւ տեսնել թէ տանը բաները պակ-  
 սեր են : Ուստի երբոր բժիշկը պահանջե-  
 լով իր վարձքը կը հաստատէր վկայութի  
 թէ ըուրնացաւ աչքը լաւ կը տեսնէ , պա-

տասխանեց պառաւը թէ Սուտ է ամենեկին ,  
վասն զի երբոր աչքս կ'ըցաւէր , շատ բան  
կը տեսնէի տանս մէջ . հիմա որ կ'ըսես ըս-  
ընտցար՝ ամենեկին տանս մէջ բան չեմ տես-  
ներ . ինչո՞ւն պէտք է անանկ տեսնելն որ  
ինձի պէտք եղած բաները չեմ տեսներ :

Օրինակ է անհասարկիմ մարդկանց որ էնէ  
աչէի՞նք յ' աւելեւո-ւլան իրիկն ժեսս իռ-պան :  
Ասանկ սոսա Բարեբարներէն զգո-շանաւա է ո-  
րոնք Բարի ընելա-ապէնը ունեցած Բարիքդ իւր  
վերցնեն :

Այսպէս ինքնամատն 'ի ձեռս օտարին  
Զըրկի 'ի բարեաց զոր ունէր յանձին .  
Զի այլք վն ինքեանց տքնին վատտակին  
Ոչ վասն ընկերին ոչ բարեկամին :  
Թէ ճըրագ մարմնոյդ իցէ խաւարին ,  
Ուստի՞ քեզ ճըրագ լուսատու անձին .  
Այլոց լոյս ճըրագ վասն ինքեանց վառին  
Ի քեզ մըթագնեալ փուլթով խաւարին :



## ՈՒՂԵՒՈՐ ԵՒ ՀԵՐՄԻՍ

Արդ մի ստեր զուխտ և զերդուան  
Զի ոչ խաբի բարձրեալն անքուն :

Հոգեւորիդ սոսա մի խառնէր  
Զի լէս կեանս զԱԾ խաբէր :

միջ. **Ն**ամբորդ մը երկան ճամբորդութե մէջ անանկ կ'անթեւայ որ ուխտ կ'ընէ թէ ինչ ուտելու բան որ գտնէ կէսը Հերմէսին ընծայ ընէ : Կայիս որ ճամբուն վրայ պարկ մը կը գտնէ մէջը լեցուն նուշ և արմաւ ( պապեմ, խուրճայ ) . շուտով կը մոռնայ ուխտը ու կը նստի բոլոր կ'ուտէ : Բայց խելքովը սատանութի մտածելով, Ժողվեց արմաւին կուտերը և նուշին կեղևները դրաւ կուռքին սեղանին վրայ և հառաչելով ըսաց. Ո՛վ մեծ Հերմէս, ընդունէ իմ ուխտս որ կատարեցի. վասն զի ահա գտած բանիս դրսինն ու ներսինը հաւասար բաժնեցի :

Առաին խրատ է ագահ և մռլի մարդիանց որ հոգեւոր Բանի մէջ աւ խաբէրութի իւր Բանեցնեն : Կառապանները լապ անգամ Հերմէս լածին ուխտի'նէն :

Տեսեր զվատ խորհուրդ մռլի խարդախին,  
Զխարդ արատէ զուխտն ընդ արարչին.

Նենգուլթեամբ վարի 'ի հոգևորին  
 Մարդկօրէն չափէ զերաւունս էին :  
 Բաբէ կոյր մտաց նենգող ագահին  
 Զըրկէլ նկրտի զտիրող բոլորին .  
 Որ ըզտիրտս էից ունի 'ի ձեռին  
 Դիտէ զամենայն , սլաութէ ցաւագին :



### ԻՇԱՄԵՂՈՒՔ ԵՒ ԿԱՔԱՒ

Չար է խորհուրդ չարասիրաց .  
 Չոր ինչ առնես , բերեն փնաս :

Երբ որ յիշես « Իբրեւ լաւ է ,  
 Ինչ ալ ընես ղէն իւր Բերէ :

միջ . Իշամեղուններն ու կաքաւները օր մը  
 սաստիկ ծարուրցած կուգան երկրագործին  
 կ'աղաչեն որ ջուր տայ իրենց . և խոստա-  
 ցան կաքաւներն որ ջրին տեղը փօրեն անոր  
 էգին . իշամեղուններն ալ չորս դին սպա-  
 սելով գողերը խայթեն : Իսկ երկրագործը  
 սլաոտասիւսն տուաւ թէ Ես երկու եղ ու-  
 նիմ որոնք առանց բան խոստանալու իմ  
 ամէն բանս կ'ընեն . ուրեմն աւելի աղէկ է  
 անոնց տամ քան թէ ձեզի որ ձեր օգտին  
 համար ինձի սուտ խոստմունքներ կ'ընէք :

Օրինակ է շատաւար մարտիանց որոնց խոստ-  
 մանքն է աղէկութիւն ընել , իսկ գործին է շատ

Բերել ուրիշին : Հաւատարիմ հարգումն ամէն աշ-  
խարհի լեցումն է . իսկ անհաւատին ամէն բան  
պակաս է ի՛նչէ իմաստաւոր :

Ժանտ մնասաբերք խոստանան բարին ,  
Նիւթել ըզարիս բերին նըկըրտին .  
Զի ոյր կամքն է չար միշտ ՚ի չար հակին  
Ոչինչ ցուցանեն ՚ի բարեաց մասին :  
Արդ մի թևարկու լինիր զըրկողին ,  
Թէ և փաղաքէ զերթ յուշկապարկին .  
Խաղապատելով յածի կաթոգին  
Մինչև լցուսցէ ըզկարիս անձին :

### ԱՐՏՈՒՏ ԵՒ ՀԱՒՈՐՍ

Մի կերակուր և դոյզըն շահ  
Քեզ նիւթեացեն վտանդ և մահ :


Քիչ ինչ հանգիստ ի պոր ինչ հատ  
Քեզ ինչ գէն հաճին առաջ :

մկն . Արտուտ թռչունը որ է հաբեղա-  
ձաղը ամէն օր կ'երթար ցորեն ուտելու . օր  
մը տեսաւ զայն հաւորսը որոգայթ լարեց  
բռնեց : Իսկ թռչունը հասկըցաւ որ ազա-  
տում չունի սկսաւ լալ . վայ անբաղդիս ,  
կ'ըսէր , ես ոչ արծաթ եմ գողցեր , ոչ ոսկի  
և ոչ մեծ չարութի մը մարդու ըրած եմ .  
հասկա միայն ցորենին մէկ հատիկին համար  
պիտի կորսուիմ . շատ աղէկ էր որ լեռնե-

ըուն խոտերն ուտէի՝ քան թէ մէկ քանի  
հատ ցորենն որ մահուանս սպառնառ եղան :

Խրափ է անոնց որ քիչ շահի համար մեծ վնաս  
գի մեջ դիրենք ին յգէն . և ուրիշէն քիչ մը քան  
յափշտակելու համար շարաւար ին կորստին .  
ինչպէս եղաւ որդաբալ ( չայլըդուշու ) :

Որ անյագ տենչմամբ ձկտի յուտելին  
Սակաւ կերակուրն առթէ մահ նըմին .  
Ձի անիրաւողք յայլոց 'ի բարին  
Դառնն փնասին 'ի մեծի սպառօին :  
Մի բերիւր զըրկէլ զինչոս օտարին  
Եւ մի դիմագրաւ լինիւր վտանգին .  
Ձի փոքրիկ արկած դուզնաքեայ օգտին  
Հատանէ ըզկեանս վերջ տայ բոլորին :



### ԲՈՒՇԿ ԵՒ ՀՈՒԱՆԴ

Թէ դու չես քեզ բժիշկ ճարտար  
Ոչինչ օգտէ բժըշկաց ճար :

Երեսպաշին երես մի քար ,  
Քեզի կ'ընէ իրեն պաշար :

մկթ . Բժիշկը գնաց հիւանդ մը տեսնե-  
լու և հարցուց թէ ինչպէս է . հիւանդն  
ալըսաց թէ Չափէն աւելի կը քրտնիմ . Բա-  
րի նշան է ըսաց բժիշկը : Երկրորդ անգամ  
20\*



գնաց հոն բժիշկը երբոր հարցուց հիւանդին , պատասխան տուաւ թէ Սաստիկ մտէլէն դող մը կուգայ ինձի . Բարի է ըսաց : Դարձեալ երրորդ անգամ գնաց երբոր հարցուց , անալ ըսաց Ջրդող (սըխա) եղայ . Բարինշան է ըսաց բժիշկը : Յետոյ իր ընտանիքէն մէկը հարցուց հիւանդին թէ Ինչպէս ես : Ինչպէս պիտի ըլլամ , կ'ըսէր . ահա բարի նշաններու մէջ կը մեռնիմ :

Պէտք է երեւոյ՞ Դարձնել երեսպաշէն և Բէկեղծաւորութիւն հասանելով հասապաւ խօսին . Վասն զի անանի Տարբիի ամէն զի ինչ դատան :

Տիպ է այս տըխմար մարդահաճոյին ,  
 Որ ըզներհականն կըրէ 'ի լեզուին .  
 Խառնէ անպատկառ սուտն ը ճմարտին  
 Ի միում կիտի ընտրէ զերկոսին :  
 Քանի՜ անարդանք այն մարդէլուզին  
 Չիւր ուղիղ դատման զիսկն եղծանողին .  
 Որ 'ի սէր օգտի խօսի զանտեղին ,  
 Մինչև մի կարծել զայոն ընդ ոչին :



## ԱԳԱՏ ԵՒ ՈՐԴՒՒ ԻՒՐ

Այլք վայելեն յինչս ագահին ,  
Ինքն է միայն պահնակ գանձին :

Ագահն իրեն բանին փեր չէ ,  
Այլոյ համար զայն ինչ պահէ :

մհ . **Բ**ագահ մարդ մը իր պարտիզին մէջ  
ուռներ պատուական խնձորի ծառեր բայց  
մինչև որ խնձորները չի փթտէին մէկ հաս  
մը չէր ուտէր : Իսկ որդին առատասիրտ ըլլա  
լով օր մը առաւ ընկերները պարտէզը տա  
րաւ և ստիպելով կ'ըսէր անոնց թէ Մի վախ  
նաք կերէք լաւ խնձորները որչափ կ'ուզէք .  
մինակ փթտածները մի ուտէք վն զի հայրս  
պիտի ուտէ զանոնք :

Օրինակ է ագահին որ բարեշին համար ի՞նչ  
խաբի չէ Լէ իրեն համար . Լէպէտ պապասխանը  
ինչը պիտի փայ այս լաւ ակաբին համար :

Օտարք՝ ընտանիք ժառանգ ագահին  
Քաղցրը վայելեն 'ի վաստակ նորին .  
Մահուչափ տքնի պահել զփտելին ,  
Մինչև ակամայ տացէ օտարին :  
Ո՛վ յիմարուծէ ասպառուժ սրտին ,  
Առ ի՞նչ չարատանջ յաւելու զբարին .

Երբ ոչ վայելէ զայն գանձ զայն ոսկին,  
Հիմ վասն օտարաց տանջի գառնագին:

### ՄԱՆՈՒԿ ԵՒ ԿԱՐԻՃ

Մի մերձեւոր յամէն կենդան,  
Բազումք ունին թոյն 'ի տըտան:

Մի հօգեւոր ամէն բանի,  
Հոգով ժառ հոգայ + եղի:

մհմ. **Մ**իմեղ տղայ մը պարտէզը կը մանէ  
և կը աւանդէ որ գեղեցիկ կը թուէին թիթեռ  
նիկները (+էէէէէէէէէէ) սկսաւ բռնել հետեր-  
նին խաղալ: Յետոյ կարիճ մը տեսաւ չքիտ  
նալով գնաց քովն որ բռնէ: Իսկ կարիճը ըս-  
տառնալով սուր ցըցուց ու ըսաց հանդարտ  
կեցիր, ո՞վ անխելք, ինձի մի դպչիր, հիմա ա-  
նանկ կը խայթեմ քեզ որ կը մեռնիս, եթէ  
ամէն բանի ասանկ անխտիր դպչելու ը-  
լաս՝ վայ է քեզի:

Խրատ է անոնց որ ամէն հարգո- հեպ և  
ամէն քեշ Ռաիւերայ իւ վարդին. վասն զի շա-  
բառն իայ որ իւ Բռնաւորէ պարտէ ինչպէս իարի-  
ճը( ագռէսը. ) ուստի շաբ անմեղ հարգի՛ն ասանկ  
իւրոոսած էն:

Անմիտ պատանիք ընդ չարն ընդ բարին  
Բերեալ անխորհուրդ մի աչքը հային.

Բայց երբ 'ի կարճէն մահաթոյն խայթին ,  
 Յայնժամ իմանան վրիպանս անձին :  
 Սի պատրիւ տեսչեամբ ըզգայականին ,  
 Եւ մի անտարբեր հուսլ լինիր վատին .  
 Որչափ արտաքուստ անմեղ երևին ,  
 Այնչափ մահաշունչ թիւնալից ներքին :



### ԱՌԻԻԾ ԵՒ ՅՈՒԼ

Արդ մի ճաշեր ընդ թշնամին  
 Զի մահաբեր է ճաշ նորին :

Զար Բշնամուսն «Էղան լերեաս  
 Որ Էրեւանի Իրեն ԼԵԼԱՍ :

մհթ. Մուիւծը միտքը դրաւ որ վարպե-  
 տութիւն ուտէ ցուլ մը . ուստի հրամցուց ի-  
 րեն հարկիքը . Բարեկամ, կ'ըսէր, մէկ ոչխար  
 մը մորթեցի և ամէն պատրաստութիւն ան-  
 սայ, կը խնդրեմ որ իրիկուն Դուն ալ իմ  
 հարկիքիս մէջ գտնուիս : Յուր գնաց հե-  
 ոուէն նայեցաւ որ ամէն պատրաստութի-  
 կայ՝ բայց ոչխար չի կայ, հասկըցաւ բանը  
 ու սկսաւ փախչիլ : Ինչո՞ւ համար կ'երթաս  
 ըսաց աւիւծը . ցուլն ալ պատասխան տուաւ,  
 Թէ Տեսայ որ հարկիքիդ ամէն բանը պատ-  
 ըաստ է ցուլը ուտելու համար չէ թէ ոչ  
 խարը :

Խաբէբայ մարտիկ շաք անգամ պապին ընելով  
և ընծայ ասելով ինչ Խաբէն զորիչը . ուստի պէտ  
է հետոս փախլիւ անանկ խորամանկներէն :

Դըրժող դաւաճանք 'ի տիպ առիւծին ,  
Յարդեղով սլաութեն ըզսիրտ բարեզարդ .  
Զի ճաշ և կաշառք ըզբազումս արկին ,  
Յանգուծ դժրողաց կորուսիչ թակարթ :  
Մի քեզ քաղցրասցի ճաշ դաւաճանին ,  
Մի կախարդեացէ սլաութիւ նենգողաց .  
Ըզգոյշ լէր արթուն ըստ խորագիտին ,  
Թափել հնարիւք չարին 'ի ձեռաց :



## ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ՀԵՐՔԻՒԼԷՍ

Արդ մի անջան կարդար զերկին ,  
Զի վիք նպաստ անգործ վատին :

Զան + ընելով աղաղակէ  
Որ երիւսաւուն յայնչդ Լէ :

մօգ. Սէկ գեղացի մը իր սայլը առեր  
տեղ կ'երթար . յանկարծ ընկաւ սայլը ջրոս  
փոսին մէջ ու չէր կրնար առաջ երթալ՝ մնաց  
անանկ . իսկ գեղացին թողուց զայն ու սկը  
սաւ հերքիւլէս չնծին աղաչել որ գայ սայ  
լը հանէ տղմին մէջէն : Իսկ հերքիւլէս ծի  
ծաղեցաւ անոր վրան . Ո՛վ անխելք ըսաց ,

զարկ ձիերուդ, հրէ սայլը և ապա կանչէ  
Հերթիւէսն որ գայ օգնէ քեզի:

Հերթիւէս իմ Հերթիւէս հին ասունք քաջ ու  
զօրաւոր էր որ անպատեւի քաջագործութեւն հա-  
մար հին իռապառքներէն ին պաշտէին զայն և նե-  
ղութի մէջ օգնութի ին իանձնին որ օրինակ է  
այ նախախնամութեան, որ հարկաւոր քեզն ին  
հասնի ջանք ընդին. Բայց ուր քեզ որ մարտա-  
ճարն և հնարքն ին հասնի, ան ասունք ին հասնի  
վերին նախախնամութեւն, զի ծոյշ մարտէն մշտ  
հետու է:

Թէ խնդրես նպաստ արարող մատին,  
վատակեալ զմատուռնս՝ի գործ պիտանին.  
Թէ անջան կարգաս զօգնուի վերին,  
Մի՛ ակնկալցիս սատար երկնային:  
Զանա՛ գու ո՛վ վատ ըստ կարի անձին,  
Հասցէ քեզ յօգնել ձեռք նախագիտին.  
Զի նա քեզ թողու առնել զկարելին,  
Եւ զանկարն ինքեան պահէ հրաշալին:



## ԳԵՂԱՋՈՒԿ ԵՒ ԽՈԶ

Թէ և հասցես զականջ անլուր,  
Ոչ խմանայ խորատ և լուր :

Ան ասեմն որ լսել լուրէ,  
Ինչ որ ընես խօսք չի լսէ :

մհդ. Գեղացի մը տեսաւ որ գրացիին  
խողը մտեր է արտը կ'ապականէ ցանած գա-  
րին, շատ վաճառեց մտիկ չըրաւ. անալ բար-  
կութի՞ զարկաւ մէկ ականջը կտրեց. Բայց  
խողը նորէն սկսաւ հոն մտնել մինչև զար-  
կաւ գեղացին մէկալ ականջն ալ կտրեց :  
Բայց խողը՝ ամենևին այս բանէն ետ չի կե-  
ցաւ. բռնեց տիրոջը տարաւ որ մորթէ :  
Իսկ տէրը երբոր գլուխը կտրեց ու ճղքեց,  
տեսաւ որ խողն ըղեղ չունի՝ շատ զարմա-  
ցաւ : Մի զարմանար, ասոր վրայ ըսաց գե-  
ղացին. վասն զի թէ որ խելք և զգայութի  
ունենար, երկու ականջն որ կտրեցի՝ կը հաս-  
կընար ու չէր գար նորէն խմ գարիս ապա-  
կանէր :

Օրինակ է պիտ գլխի իռլա մարդկանց որ  
ասեմնին խօսք չեն ընդունիր և իրենց հասնե-  
լով ասեմնի բուն ի՛նչն, որ պէտք է ըսել Բէ ու  
Խէն ասեմն ու յիս :



Ահա ապառուժ գործ անխըրատին  
 Որ ոչինչ ազդու մն ընդունի յանձին .  
 Գոյ յոյս բուսանիլ սերմն յապառաժին  
 Քան յանլուր ականջ վայրագ տարտամին :  
 Տես, զիա՛րդ անգործ մընայ սերմն անգին ,  
 Յանհըրահանգ սիրտ 'ի միտս անսաստին .  
 Ընկալ ըզխրատ 'ի հերկեալ սըրտին ,  
 Ընձիւղէլ բարիս զերթ սլարարա երկրին :

### ԱԳԱՀ ՀԻՒԱՆԴ

Մի գանձեր քեզ զկորըստականն  
 Զի մի տացէ զքեզ կորըստեան :


Զանա՛ հոգայդ ոսկին շաքնայ  
 Որ երբ մեռնիս քեզի դէմ գայ :

մէ . Մէկ ագահ մը անիրաւութիւն շատ  
 հարստութիւն ունէր . երբոր հիւընդցաւ և  
 տեսաւ որ պիտի մեռնի , ուղեց որ իր բոլոր  
 գանձը բերեն առջին : Ուստի առաւ առջին  
 ոսկիները ու սկսաւ հառաչելով անոնց հետ  
 խօսիլ . Ո՛վ սիրական ոսկիներս , կ'ըսէր՝ ես  
 ձեզ չարաչար աշխատանքներով վաստակե-  
 ցայ ու դուք ինձի ամենևին հանգիստ և  
 զուարճութիւն մը չտուիք հապա միշտ  
 տրտմութիւն և նեղութիւն : Պատասխան տուին  
 ոսկիները թէ Մենք զուարճութիւն կըր-  
 նանք տալ միայն քու ժառանգներուդ եր-  
 բոր ուտելով խմելով բոլորը կը մսխեն . բայց

ճիտենք թէ հոգուդ բանը ինչպէս պիտի  
ըլայ որ հոս ալ տանջուեցաւ ու հոն ալ  
պիտի տանջուի :

Ո՛վ որ ագահութեամբ հոս իւ գանձե՛ հագաւ  
ճարճով իւ իւրստի . վասն զի հոս չէ մեր հայ-  
րենիւ, այլ երկինքն է ուր պիտի Լագաւորեն  
յաւիտեան ինչպէս ի՛շխիս հին թիւսո՞րաներն  
ալ : Փիւհոտոյի ճէ հարցոսցին Բէ հայրենիւ  
շաք իւ սիւրճ . ան ալ երկինքն նայելով ըսաւ,  
Խիստ շաք իւ սիւրճ ի՞մ բուն հայրենիւ :

Նանրախոհ ագահք վըշտանան յանձին  
Ժողովել ըզգանձս գործի կորուստին .  
Կարծեն թէ իշխեն ոսկւոյ արծաթին ,  
Բայց ինքեանք յոսկւոյ գերեւի կաշկանդին :  
Քանիք 'ի ստանալ կորստականին ,  
Կորուսին ըզկեանս և սիրտս ընդ նրմին .  
Գանձել քեզ լիցի 'ի բուն հայրենին  
Ուր յաւերժ բերկրի վերնաձեմ հոգին :



## ԹՈՒԹԱԿ

Չէ մարդարէ ընդունելի

Եւ ոչ գիտուն յիւր քաղաքի :

Գիտուն մարդիկ պատիւ չունին ,

Իրենց քան Տէջ եւ քաղաքին :

մօջ. Թուածակը (սոսոս գուշուն) երբոր  
արևելքէն եկաւ արևմուտքը՝ ամէնքը մեծ  
պատիւ կ'ընէին իրեն որովհետեւ արևմուտք  
ջրլար այս Թուշունը : Օր մը հարցուցին Թէ  
Ի՞նչու համար քու աշխարհքիդ մէջ քեզի  
պատիւ չեն ըներ ու հոս այսչափ պատիւ  
ներ կ'ընեն , արծը Թէ և փղոսկրէ վանդակի  
մէջ կը դնեն և զանազան փափուկ կերա-  
կուրներով կը սրահեն : Պատասխանեց Թէ  
Մի՛ զարմանաք . վասն զի ամէն տեղ վայլած  
պատիւը չընկելուն համար , ես հոս պա-  
տուաւոր եղայ և այս պատճառաւ գիտուն  
ներն ալ իրենց քաղաքը կը ձգեն ուրիշ տեղ  
կ'երթան որ ընդունելի ըլլան ու պատիւ  
ունենան :

Իմաստուն մարդիկ իրենց քաղաքին եւ ազգա-  
կանացը Տէջ ընդունելի չեն . օգար քեզ աւելի  
յարգութիւն ունին : Գիտունի մը հարցոյցին Թէ  
Ո՞ր ազգականներդ քեզ աւելի ի՞նչ մեծցնեն . ա-  
ռաւ պատասխան քոսաւ Թէ Միայն գիւրգիւր :

Բանիբուն խոհեմք գիտունք ցանկալի  
 Չեն յարգի և մեծ յիւրայնոց միջի .  
 Զի յաճախութի ընդ մերձաւորին ,  
 Գործէ զմեծարուս անարգ խոտելի :  
 Լաւ է յարգանք կալ յանապատի  
 Քան անարգ մընալ 'ի մեծ քաղաքի .  
 Փախի՛ր ուր գիտունք չիցեն յարգելի ,  
 Նըստեալ առարնին յառանձին տեղի :



### ԱՐԾԻՒ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

Ոյժ և մագիլ զարծիւ տգեղ  
 Աւնեն սիրուն և աչագեղ :

Հարուստն որչափ իողաւ Երեւնայ  
 Քաջ իմաստուն աղուոր կ'ըլլայ :

մէջ . Երբեմն արծիւը եկաւ ուրիշ թռու  
 չուններուն մէջ նստեցաւ ու սկսաւ սար-  
 ծենալ . Չեմ կարծեր թէ, կ'ըսէր, ինձմէ գե-  
 ղեցիկ գտնուի աշխարհքիս վրայ . ահա իմ  
 վրաս յայտնի կ'երևնան շատ գեղեցիկ նշան-  
 ներ : Երբոր իր վրայի ամէն բանը կը գողէր,  
 բոլոր թռուչունները վախերնուն կը հաստա-  
 տէին թէ ճշմարիտ է , մինակ սիրամարդը  
 քթին տակէն ըսաց կամաց մը թէ Կտուցքդ  
 ու ճանկերդ քեզ գեղեցիկ են ըրեր . թէ որ  
 ասոնք չըլլային՝ կը գտնուէր հոս մէկն որ  
 քեզի ցոյց տար թէ ոչ միայն գեղեցիկ չես  
 այլ և խիստ տգեղ ես :

Մեծաբեիան աւանդ ճարտը գեղեցիկ աւ կ'ըլլայ,  
 Գիպոան աւ. որովհետեւ ամենքը լախերեան կ'ը-  
 փովեն. ինչ որ ըսէ գլխաւ ծռելով անանի է  
 կ'ըսեն Բեդեպ յիմար ըլլայ. անոր համար հին  
 ժիւղոտեաները քգեպ Ռեծապոսաներուն անունը  
 Գրեց են՝ Անաստան ասիւղեն:

Անիմաստ փարթամք ինքեանց վեհ թուին  
 Յանձին պարծեցեալ ունող բողոքին.

Ոչ ոք գիմադիր խորհրդոց նոցին,

Բընաւք ծընրադիր յոխորտող ձայնին:

Այս թիւր ըսկզբունք թիւրեալ աշխարհին,  
 Որ ըզմեծութիւն դընէ 'ի գանձին.

Գեղեցիկ գիտուն փարթամք համարին,

Թէ և խեղ. տըգեղ ըստ բընականին:



## ԻՇ ԵՒ ՇՈՒՆ

Որ ոչ լսէ զձայն կարօտի,

Չօգտի ուսանէք երբ կարօտի:

Թէ լին հասնից դռան ուրիշին,

Մարդ չի հասնից քո խելճ յայնին:

Մհ. Լին ու շունը ընկեր ըլլալով միա-  
 տեղ կ'երթային բայց իշուն վր հաց կար բար-  
 ձուած որ աղքատներուն կը տանէր: Ասոնք  
 ճամբան կ'անօթեան՝ էջը կ'երթայ խոտ ու-  
 տելու և շունը կ'աղաչէ իշուն որ իրեն քիչ  
 մը հաց տայ. իսկ էջը ծաղը ընկելով կ'ըսէր

շանը թէ խոտ կեր ինձի հետ: Այս խօսքիս վրայ նայիս գայլը հոն հասաւ. էշն սկըսաւ աղաչել շանը թէ Շո՛ւն եղբայր, կաղաչեմ օգնէ ինձի և հալածէ զգայլն որ զիս ջւպատուէ, գիտեմ որ կրնաս այս շնորհքն ընել: Պատասխան տուաւ շունը թէ Քիչ մը առաջ կտոր մը հաց չտուիր ինձի, հիմա զիս քեզի օգնութիւն կը կանչես, գնա կորսուէ՝ ինձի անանկ ընկեր պէտք չէ որ կարօտութեանս ատենը օգուտ մը չունի: Եւ այսպէս թողուց որ գայլը պատուեց զայն:

Խրափ է անոնց որ ուրիշը կ'արհամարհեն, օգնութիւն չը ընեն ընէր և իրենք ալ խեղճ կ'ըլլան. վասն զի չիայ անանկ անպիտան որ պէտք է շատ արեւը օգնութիւն չը չիարենայ ընել քոխարեն: Շափ անգամ ուրիշ աշէկութիւն չը ընելով մեծ Բարեկենցիկ ծագէր են:

Բոյսք են բընական իմացականին

Կարեկցիլ այլոց նըպատել նոցին.

Իսկ թողուլ զընկեր կարօտ ցաւագին

Բերմունք են սըրտի անասնականին:

Թէ մատամբ մերձիս յօգուտ կարօտին,

Բազումք թեկն ամեն և քոյդ կարօտին.

Թէ մերժես ըզձայն առ քեզ կարօտին,

Կաս մընաս 'ի վիշտս միշտ կարօտագին:

## ԷՇ ԵՒ ԽՈԶ

Ջանա 'ի գործ կրթել զմարմին  
Մի՛ պարարեր նրման խողին :

Կըրնէ ըւտեւ աշխատանքով  
Թէ չէ մահին ի'երևա շոքով :


մէթ . | Եւ սաստիկ կը նախանձէր խողին .  
վասն զի կը տեսնէր որ առանց աշխատանաց  
բոլոր օրը կ'ուտէր կը գիրնար . իսկ ինքն առ-  
տուրնէ մինչև իրիկուն բեռ կրելով հոգին  
կ'ելլէր : Օր մը տէրն ուզեց մորթել զխողն  
որ շատ գիրցած էր . երբոր պառկեցուցին  
մորթեցին , էշը զարմանալով մը կը նայէր . Ա-  
հա պատճառը հասկըցայ թէ ինչո՞ւ համար  
մեր տէրը գգուելով գիրցուց խողն որ մոր-  
թէ և իրեն կերակուր ընէ : Ուրեմն շատ ա-  
ղէկ է էշ ըլլալ քան թէ խող . և այսպէս  
գոհ եղաւ իր վիճակին վրայ :

Խրաք է անոնց որ ուրիշին հանգստութեանը  
վրայ իջ նախանքին . վասն զի որչա՞ք Երեմ-  
իի էրեւան , այնչա՞ք շաք նեղութեց քա՞յ էն .  
անոր համար իմաստասէրը աշխատաւորաց կեան-  
քը քարեմեքուն կեանքէն վեր իջ Դնէն :

Ահա այս վախճան է պորտաբուծին  
Որ միայն ընու ըզծակ կարասին .



Բայց որչափ սրարարտ լինի փրտելին  
 Փռւթով 'ի ըստանդ վարի կըտըրջին :  
 Արդ մի նախանձիր կենաց անգործին ,  
 Զանա միշտ կըրթիլ 'ի գործ պիտանին .  
 Քանզի կեանքն է կեալ յօգուտ աշխարհին  
 Այլ ոչ 'ի կորուստ բուծանել զմարմին :



### ԱՔԱՂԱՂ ԵՒ ԱՂՈՒԻՍ

Եթէ անկար յարկած չարին ,  
 Փախիր 'ի բաց հետոց նորին :


Թէ շատ քէսար տնւղփամէն ,  
 Հէռու գախիր էտած քէղէն :

ՃՃ. Սէկ աքաղաղ մը աղուէսին ձեռքն  
 ընկաւ բայց շատ աշխատելով և Զանքով  
 փրցուց զինքն անոր ձեռքէն ու փախաւ :  
 Օր մը մէկ քանի աքաղաղներու հետ երբոր  
 Ժուռ կուգար՝ տեսաւ աղուէսի մը մորթ և  
 մէկէն սկսաւ փախչիլ : Այն որ տեսան ըն-  
 կերները՝ ամէնքը միատեղ վրան խնդացին .  
 այնչափ որ աքաղաղը չդիմացաւ եւ դարձաւ  
 ըսաց իրենց . Հը , Թէ որ դուք ալ աղուէ-  
 սին ճանկը մտնէիք , չէ Թէ միայն մորթէն՝  
 այլ և կոխած տեղէն ալ կը փախչէիք դո-  
 ղալով :

Օրինակ է զգուշանոր մարդու ոչ ամէն պարս-

Գանեբը Դիֆելով անանի կը ղգուլանայ, որ նորէն  
Ժորժուսէան Տէջ լիյնար և ամէն Բանի Տէջ Ժորժ  
Կ'ըլլայ :

Խոհական միտաց այս գործ փորձառուին ,  
Փախցի 'ի հետոյ դաժան փորձողին .  
Չի կրեալ արկածք տարանան խորին  
Առ 'ի ոչ փորձիլ 'ի նոյն վերստին :  
Լէր չըրջահայեաց յամենայն ատթին ,  
Չի ցանկ լարեալ կան գարանք ոտիսին .  
Թէ արթուն գնաս և հըսկող յանձին՝  
Անգործ մնան հաղբք դարանակողին :



### ԻՇ ԵՒ ԳԱՅԼ

Որ յանսովոր գործ ինչ միտի՝  
Գանիւք վշտօք ծանր տուժի :

Չի սորված Բան ընել ուղես՝  
Ծառեր կ'ըլլաս Տէժ դէն կ'ընես :

մձն . Երբեմն իշուն ոտքը փուշ մտնե-  
լով շատ կը տանջուէր փուշին ցաւէն , ուս-  
տի տեսաւ որ գայլը վրան կուգայ՝ սկսաւ  
ողորմուկ ձայնով աղաչել . Ո՛վ գայլ, կ'ըսէր ,  
ահա այս ցաւս զիս սկիտի մեռցընէ ու ագ-  
ռաւներուն կերակուր պիտի ըլլամ , քեզմէ  
օգնուի մը կը խնդրեմ՝ ինձի շնորհք ընելով  
հանէ ոտքէս փուշը գոնէ անանց ցաւի մեռ-  
նիմ : Իսկ գայլը ուրախանալով մօտեցաւ իրեն

և առջևի ակռաներովը բռնեց փուշը կամաց  
մը հանեց ոտքէն: Սակայն էջը մոռնալով  
քաշած ցաւը՝ կից մը զարկաւ երեսին որ  
ակռաները թափելով պատուեց գայլին ճա-  
կատն ու փախաւ: Երբոր գայլին խելքը  
գլուխն եկաւ՝ սկսաւ ինքերեն ըսել թէ Ա-  
ղէկ եղաւ ինձի, որովհետեւ ես անասուննե-  
րուն մնագործութիւնը սորված էի՝ հիմա  
ուզեցի ըլլալ անոնց վերաբոյժ (ճէռահ):

Որո՞ք ո՞ր էրենց սովորական արուեստը իւր  
ու չի սորված բանի յետո՞ք իւր զարնէն՝ ծաղը ի՛նչ-  
լան և մեծ վասնգի մէջ կ'իյնին:

Որ ձգէ ըզգործս սովորականին

Միտի յանսովորն 'ի ճահ օտարին՝

Անդ խայտառակեալ տուփի և ծաղրի,

Անագան ուրեմն մեղադրի ինքնին:

Արդ մի գահավէժ լինիր յառնելին,

Եւ մի ոստոստեր 'ի միոյ առ մին.

Անսասան կացեալ 'ի քոյդ վիճակին՝

Յաւերթանաս միշտ 'ի գերագունին:



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՌԻՒԾ

Երբ յաճախէս պետն ընդ ռամկին՝  
Կորուսանէ զսխալիւ անձին :

Մեծն որ ուսմիին շաք էրնայ,  
Անարգ և ցած ճարտ ճշ Կ'ըլլայ :

մօթ . **Ա**յլուէսը բնաւ առիւծ չէր տեսած .  
Եղաւ որ օր մը դիմացն ելաւ , անանկ սաս-  
տիկ վախցաւ որ քիչ մնաց կը մեռնէր : Երկ-  
րորդ անգամ երբոր տեսաւ՝ վախցաւ , բայց  
առաջինին պէս չեղաւ : Իսկ երրորդ անգամ  
որ տեսաւ առիւծը՝ ամենևին վախ մը չու-  
նեցաւ , համարձակ սկսաւ հետը խօսիլ և  
ինքիրեն ըսել թէ Վախն ու ակնածութիւնն  
է եղեր մենծութի տուողը չէ թէ մեծ մար-  
մինը և մեծ անուանը :

Որչափ Ձեծ և սոսիաւի Բան ըլլայ՝ Երբ որ շաք  
անգամ իւր փեսնոսի՝ վախը Կ'երևայ և հասարակ  
Բան ճշ Կ'ըլլայ : Այս պարագայս հին ասեւն է-  
րնեւի թիւիսոթանեցը և Գործերը Գիւ անգամ  
ճարտու Կ'երևային . և երբ Ժողովուրդը զանոն  
իւր փեսնե՛ր՝ Կարծեր Բէ երկնէն իջած են :

Գլխապետք իշխանք 'ի վեհ վիճակին՝  
Ցանցառ երևիլ ռամկաց հարկադրին .

Զի յաճախութի կարճէ զյարգ անձին,  
 Թէ և մեծայարգ իցեն ահագին:  
 Իսկ դու վերանցեալ 'ի պատիւ կարգին՝  
 Մի յաճախ նստիր 'ի Ժողով ռամկին.  
 Կշռելով զանձինս, զխօսս, զտեղին՝  
 Վէհասպանձ բազմեաց առաջի նոցին:



### ԳԱՅԼ ԾԵՐԱՅԵԱԼ

Բազում ընկերք ճոխ մեծատան,  
 Ոչ որ մերձի յաղքատ սեղան:

Մեծ սեղանին շաք ընկեր իայ,  
 Աշտապին Ժողմարդ ճշ լերնայ:

մձգ. Պայլ մը անանկ ծերացած էր որ  
 ոչ կերակուր կրնար գտնել և ոչ մէկն իրեն  
 բան կուտար, անանկ որ ամէնքը զինքը կը  
 հալածէին: Օր մը ելաւ անտառը գնաց և  
 հոն գտաւ մէկ մեռած եզ մը՝ վաղեց ուտե-  
 լու: Բայց ուրիշ գայլերը մէկէն հոան որ ա-  
 ոին հոն թափեցան որպէս զի ուտելով օդ-  
 նեն իրեն, Վասն զի ընկեր եղբ կ'ըսէին: Իսկ  
 ծերը բարկանալով կ'ըսէր. Հիմա որ կերա-  
 կուր ունիմ ամէնքնիդ ինձի ընկեր եղաք, և  
 երբոր բան չունէի՝ մէկերնիդ զիս ընկեր չէիք  
 ճանչնար և միաբան զիս կը հալածէիք, ու  
 բեմն ունեցածիս ընկեր էք չէ թէ ինձի:



Ան ալ պատասխան տուաւ, թէ Մայրս զիս  
ասոր յանձնեց, ուստի աւելի կ'ուզեմ հնա-  
զանդ ըլլալ մօրս՝ քան քեզի որ կեղծաւոր  
խօսքերովդ կ'ուզես զիս ասկէ հանել ու  
պատուել:

Ու որ Բշխամայն խօսքին նայելով անհնազանդ  
կ'ըլլայ՝ հարկաւ կ'ը կորսուի. խրատ ըլլայ ման-  
կանց որ լար ընկերներուն հաւաքաւով իրենց մե-  
ծեն լի հեռանան:

Այսպէս փաղաքէ նենգող թըշնամին  
խորամանկ բանիւ ըզսիրտ անմեղին.  
Տքնի ճողոպրել 'ի ձեռաց վեհին՝  
Զի ծախեսցէ զայն 'ի Ժանիս հեշտին:  
Մի՛ լսեր ըզձայն կորուսիչ թովչին  
Նազելի բանիւ զքեզ խարդախողին.  
Հնազանդ և հլու կաց մեծաւորին,  
Հարեալ ըզքերան դազան բանսարկովին:





## ԵԶՆԱՎԱՐ ԵՒ ԵԶԻՆՔ

Որում իմիք ոք կարօտի՝  
Զայն երազէ՛ ի գիշերի :

Ի՞նչ Բանի որ մարդ խախտէ՝  
Երազին մէջ զայն ին Գեանէ :

մօձէ . ( ) ր մը եղնավարը կը մտնէ եղնե-  
լուռն գոմը , կը տեսնէ որ բոլորն ուրախու-  
թէ մէջ են . կը հարցընէ թէ Ի՞նչ պատճա-  
ռաւ ասանկ կ'ուրախանաք : Անոնք ալ պա-  
տասխան տուին , թէ Այս գիշեր երազ Գե-  
անք որ զմեզ մէկ խիստ զուարճալի դաշտի  
մը մէջ տարեր խոտ կը , կերցընէիր՝ անոր  
համար կ'ուրախանանք : Պատասխան տուաւ  
եղնավարը թէ Ես ալ տեսայ որ բոլոր օրը  
ձեզ կ'աշխատցընէի երկիր փորելու , ուստի  
պէտք է որ իմ երազս իրաւ ելլէ՝ ձերինը  
սուտ : Զայս ըսելով վերցուց տարաւ զիրենք  
արար հերկելու :

Օրինակ է անոնց որ անհոգ-նեամբ երազի կ'ա-  
րան , որովհետեւ երազը ան ապենելի Գեաքճառի՝  
Երբ որ միտք Բան ճէ Իայ որ գիշերը զայն Գեանէ՝  
Երազ կ'ըլլայ . Ինչպէս Ժաբա մարտը ջուր ին Գեա-  
նէ . Բայց երբ որ ըշեշը ին Լոնայ ու արեւն ին  
Գաթնայ՝ զարհուրելի երազ ին Գեանէ : Նայէ Տեր  
Ճեմարանին 979 համարը :

Զիւորդ պաշարեալ միտք նախագատին  
 Երազէ զայն ինչ որում կարօտին .  
 Բերկրի հանդիպիլ բարեաց բոլորին  
 Զոր ետես ընդ կարծ յանգոյ կարելին :  
 Մի՛ զքեզ շարժեսցէ տեսիլ անգոյին  
 Որ չէ ինչ պատճառ բարւոյ և չարին .  
 Այլ այն դադարաւոր նման ստուերին  
 Անցանէ ընդ միտս ըզգայականին :



### ԱԳԱՅ ԴԵՍՊԱՆ

Ագահն 'ի սէր գոյզն ինչ օգտի  
 Ծանակ լինել լաւ համարի :

Ագահը +իւշահի համար  
 Զին+ը 'իւնէ անարգ և վար .

մօզ . Երբեմն ագահ մարդ մը դեսպան  
 գնաց ուրիշ քաղաք մը . երբոր քաղքին մօ  
 տեցաւ՝ ամէնքը դէմը գացին նուագարան  
 ներով . զի սովորութիւն էր որ երաժիշտները  
 քաղքին գոռը կ'երթային հանդէսով նուա  
 դարաններ կը չալէին որ անկէ պարգև առ  
 նեն . բայց ագահը մարդ խրկեց որ չիգան  
 բան չալէն , Ասան զի սուգ ունիմ , կ'ըսէր , մօրս  
 մահուանը համար : Այս պատճառաւ քաղա  
 քացիք գացին զինքը մխիթարելու . երբոր ի  
 ըրարու կը հարցունէին թէ արդեօք որչափ ա  
 տեն է որ ասոր մայրը մեռեր է , պատասխան  
 տուաւ ագահը թէ Քառսուռն տարի մը կայ .

Աս որ լսեցին սկսան ամէնքը ծաղրելով  
զարմանալ անոր ազահուլթեանը վրայ :

Օրինալ է յոժ ագահին որ Տէլ պալիէ և +իւ Տէ  
շահաւ համար աթենոն ծաղրէ ի'ւրեւայ . Բայց հար-  
չուս վայլածն այն է որ ոսկին անարգէ՝ և ինք  
լանարգուի : Ուր քեզ որ ոսկին իւրօտի՝ աթեն-  
+ը իւրեւն , ի'ւրէ գիտուն Տէ :

Այս սկիզբն յուր մըտաց ժլատին

Ոյր նըստատակն է յաւելուլ յոսկին .

Մինչ դանկ մի ծախել դըժուար է նմին ,

Քան ծանակ լինել բոլոր աշխարհին :

Եւ հիմ ժողովի այն գանձ այն ոսկին ,

Երբ ոչինչ ծախի յօգուտ գանձողին .

Կաշկանդէ կասկէ ըզտիրա և հոգին ,

Ի նախատ բերի կծծի ագահին :

## ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ՄՈՒԿՆ

Ընկեր ծառայ են մտերիմ

Բաղդին միայն և ոչ անձին :

Շաք Բարեկամ քառուս ու պապոնին ,

Մարտ Տէ լի էայ նեշ ապենին :

ԺՃԷ . Ս'էկ գեղացիի մը տունն յանկարծ  
բռնկեցաւ կ'երէր չարաչար , և ինքը հեռուն  
կեցած երբոր կը նայէր՝ տեսաւ որ մուկ մը

տնէն դուրս ցաթկեց կը փախչէր . մէկէն  
գեղացին վրան վազեց ու բռնեց մոկկը կը  
րակին մէջ նետեց . թշուառական , կ'ըսէր ,  
քանի որ տունս շէն էր կը վայլէիր , հիմա  
որ թշուառութե՛ն հասաւ դո՛ւրս կը փախչիս,  
այս է քու ընտանութի՛դ , ուրեմն ինչպէս  
որ աղէկութի՛ր վայլեցիր՝ գնա խեղճութի՛ն  
ալ քաշէ . քեզի պէս բարեկամին այսպէս  
պէտք է ընել :

Օրինակ է աշխարհքիս Ռշո-առու-Ռեանն որ երբ  
Տէլը Յախորդո-Ռեան մէջ կ'իյնի՝ ամենքը երես իւր  
դարձնեն , մէկը լի նայի՛ր երեսը . Բայց ճշմարիտ  
Բարեկամը Յախորդո-Ռեան մէջ աւելի Բարեկամ-  
Ռիւն կ'ընէ :

Ո՛ւր այն բարեկամ ընկեր մտերիմ  
Յաջող վիճակին նոյն և ձախողին .  
Արդի բարեկամք միայն յաջողին ,  
Ոչ որ մերձաւոր ձախողակ բաղդին :  
Ո՛վ դիւրափոփոխ մըտաց մարդկային  
Որ այսպէս փոխի ընդ փոխիլ բաղդին .  
Չայն որ յանմահից գընէին սակին՝  
Յետոյ անարժան իւրեանց ողջունին :



## ՎԱՐԱՋ ԵՒ ԻՇ

Տէս զփնաս քո վաղագոյն՝  
Մինչ չև գործեալ է թշնամւոյն :

Գալա շնան ապենով փես ,  
Չի կարծածէր ղէն իւր Կաշէն :

մօք . | Եւան խողը իր ակռաներուն զօ-  
րութիւնը ապաւինելով՝ որ խիստ երկայն զօ-  
րեղ էին , ուղեց իշուն հետ կռիւ ընել : Իսկ  
էշը վարպետութենով մը մօտեցաւ խողին  
և անանկ կից մը զարկաւ ճակատին որ կի-  
սամահ գետինն ընկաւ խողը : Յետոյ խողին  
միտքը վրան գալով սկսաւ ըսել ինքիւրեն ,  
Թէ Ոտքով կռուիլը մտքէս չէր անցած՝ աս  
ալ սորվեցայ բայց հանգերձ փնասով :

Միշտ պէտք է մտաւ , Բէ ուստի ինչոյ շնան  
գաւ , Էն Բէ ղինչ բանի մը փեղ Կենդան ղաւ-  
նախապէս . վասն ղի ի կարծած մարդիկ Դեժ շնան  
իւրան փաւ :

Այս պատիժ պահի յանձնապատասխին  
Որ ղինքն յաղթական դրնէ բոլորին .  
Իսկ այն ապիկար որ շրջի ընին՝  
Չգետնի հարեալ յաղթէ գոռողին :

Մի՛ զոք արհամարհ դներ և չընչին ,  
 Զանալ անխորհուրդ կոխել առ ոտին .  
 Գոյ զէն զօրութի՛ն սիրա խոնարհին ,  
 Հանէ և ծաղրէ զհսկարա թըշնամին :

### ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԻՇ

Մի՛ դներ ինչ յաւերժական ,  
 Զի մահն հանուրց գնէ վախճան :

Մնացաւան Բան յԸ չի իայ ,  
 Այն Բանի մահը մօտ իայ :

մէթ . Մէկ բանաստեղծ մը կը պարծե-  
 նար թէ ես անանկ վարպետ եմ և անանկ լաւ  
 կերպով բան կը սորվեցընեմ որ չէ թէ միայն  
 մարդիկ այլ և էշն ալ կրնայ սորվիլ իմ  
 բանաստեղծութիւն : Զայս երբոր լսեց մէկ  
 իշխան մը կանչեց զինքն ըսաց , թէ իմ իշուս  
 ալ բանաստեղծութի սորվեցուր , ահա քեզի  
 տասը տարի ժամանակ , և ինչ որ կ'ուզես  
 կուտամ : Բանաստեղծն ալ խոստացաւ  
 թէ խիստ լաւ այսչափ տարուան մէջ կրնամ  
 սորվեցընել՝ բան մը չէ , թէ որ չի սորվի՝ բո-  
 լոր կեանքիս մէջի ըրած վատտակս քեզի կու-  
 տամ : Այս դաշինքիս համար շատ մարդիկ  
 զինքը մեղադրեցին թէ անանկ բան մը վրան  
 առաւ որ անկարելի է : Պատասխանեց բա-  
 նաստեղծը Ո՛վ յիմարներ , տասը տա-  
 րուան մէջ կամ իշխանը կամ էշը և կամ ես  
 կը մեռնիմ :

Խրափ է անոնց որ աշխարհքիս անցաւոր Բա-  
նէրուն վրայ հոգի եւ Կաշէն . զի մահը շուրջ մէկ  
հասնի մօէն Բանի եւ Լճնոցնէ : Հոգի քանոզ մար-  
դոան ոսկորնէրը եւ ցամաքն , կ'ըսէ Իմաստաւոր :

Արթուն խորագէտ գիտող վախճանին  
Ծաղրէ զխորհուրդ յիմար իշխանին .  
Ձի գիտունք միայն զներկայն ունին ,  
Իսկ յիմարք զգարս խոստանան անձին .  
Ունայն վաղանցուկ զինչ քան զմարմին  
Ում կից են արկածք մանգաղ օրհասին .  
Ի Թարթեւ ական հասանէ նմին ,  
Վերջ տայ խորհրդոց նանրախոհ ռամկին :



### ԽՈՅ ԵՒ ՅՈՒԼ

Հպարտ յիմարն վստահ յանձին  
Դայ 'ի սլայքար ընդ հըզօրին :

Յիմար մարդիկ շէրեն + Դայն  
Մեծ եւ Խործեն , Ժիծառ կ'ըսան :

միլ . Սէկ արու ոչխար մը խիստ զօրաւոր  
և մեծ ըլլալով ոչխարներուն մէջ՝ միշտ կը  
կռուէր անոնց հետ և ամենուն յաղթող էր ,  
որ այնչափ ամբարտաւան եղաւ՝ մինչև յան-  
դըգնեցաւ ցուլին հետ ալ կռուիլ . բայց եր-  
բոր իրարու գէմեւան՝ ցուլը անանկ սաստիկ  
զարկաւ ոչխարին՝ որ գլուխը ճզմելով եղ-  
ջիւրները Թափեց գետինը ձգեց : Ուստի



մեռնելու ատենը կ'ըսէր ոչխարը հառաչելով. Ո՛վ թշուառականիս, այս ի՛նչ անխեղ հսկարտութի էր ըրածս որ համարձակեցայ կռուիլ ցուլին հետ, որովհետեւ բնութիւնն անանկ քաջ է ըրեր զայն՝ որ մէկը չի հասնիր իրեն:

Ուրիշ իրիկ մեծին հետ կռուիլի՝ ուղե մեծապէս իւր շնորհիւ և ամենուրեք ծաղւր ի՛րաւայ: Գիտունի իւր հարցոսցին թէ Ուլէ լաւաւ արժանի, ան աւագ արարածն արարած՝ թէ Չափը լի գիտցող ճարտը:

Զրախոհ յիմարք վստահեալ յանձին  
Եղջիւր ամբառնան ընդդէմ՝ հըզօրին,  
Անդէն զինաթափ ձգեալ ՚ի դետին՝  
Փորձեն ՚ի մնաս զոյժ ասոյանին:  
Մի՛ բերիւր կադեւ ընդ վեհագունին,  
Մի՛ ընդ իշխանաց և գիտնականին.  
Զի նոցին հարուածք մնասեն ուժգին՝  
Զգեն յայն փորեալ խորխորատ խորին:



## ԱՂՈՒԷՍ ԵՒ ՇՈՒՆ

Գովէստ ոմանց փնասէ ուժգին  
Քան զպարսաւ չարախօսին :

Գովէստ կայ որ մեծ գէն կուտայ ,  
Կայ պարսաւ որ փնս չի պայ :

մղն . Շ ուն մը աղուէսին ետեւէն ընկեր  
կը հալածէր որ բռնէ . աղուէսը տեսաւ թէ  
աղատում չունի՝ կանչեց շանը Ո՛վ շուն ի՞նչ  
ես ընկեր ետեւէս , իմ մարմինս միս չունի  
որ ուտես . ահա անդին գէր նապաստակ մը  
կայ , վաղէ ետեւէն՝ որուն մարմինը իմինէս  
չատ լաւ է : Շ ունը տեսաւ նապաստակն ու  
վաղեց ետեւէն , բայց չի կրցաւ հասնիլ մինչև  
փախաւ աղատեցաւ ձեռքէն : Քանի մը օրէն  
ետեւ նապաստակը երբոր տեսաւ աղուէսը ,  
սկսաւ մեղադրել թէ Ինչո՞ւ համար զինքը  
գովեց շանը : Պատասխանեց աղուէսը թէ  
որ արհամարհէի զքեզ ի՞նչ պիտի ըսէիր որ  
աղէկ ըսելուս համար կը տրտնջաս : Ան ալ  
ըսաց Ա՛լ աղէկ էր զիս վար զարնէիր՝ քան  
թէ ասանկ չարութիւն գովէիր :

Խորամանկ մարդը սոսք գովասանքով և անոյշ  
լեզուով ի՞նչ մասնէ մարդը . սոսքի լապ անգամ գո-  
վէսը նախապիտէն աւելի փնս ի՞նչ բերէ :

Այս գործ է մատնիչ սուտ բարեկամին  
 Որ ատէ զընկերն յիւր վատ ներքողին .  
 Քաղցր գեղգեղեալ ըզձայն մահաբերին  
 Մատնէ զայն հնարիւք ժանեաց օրհասին :  
 Են և անձնատէք որ 'ի շահ անձին  
 Ոչ խղճեն զըրկել բարիս օտարին .  
 Յորինչ վատտակին զորինչ և խօսին՝  
 Զամենայն յիւրեանց չըջեն 'ի բարին :

### ՇԻՆԱԿԱՆ ԵՒ ԳԱՌՆ

Զինչ զօրաւոր քան ըզկաշառ՝  
 Որ շատ գործոց լինի պատճառ :


Կաշառքն այնչափ զօրաւոր է  
 Որ աշխարհքին բանը չ'աւրէ :

մղթ. Գեղացի մը կ'երթար միշտ իշխա-  
 նին օր իր խնդիրքը կատարէ . բայց իշխանը  
 ամէն անգամ որ կը տեսնէր զայն՝ չի տեսնե-  
 լու զարնելով ուրիշ բանի հետ կ'ըլլար , ոչ  
 գիմացը հանել կուտար , և ոչ խօսքը մտիկ կ'ը-  
 նէր , անանկ որ յուսահատեցաւ խեղճը : Օր  
 մը խեղք ըրաւ , առաւ հետը մէկ գէր և փա-  
 փուկ գառն մը կանուխ գնաց իշխանին . եր-  
 բոր դռանը մօտեցաւ՝ ձայն հանել տուաւ  
 գառին . ծառաները այս ձայնս լսածնուն  
 սէս մէկէն տարին գեղացին իշխանին քով  
 որ խօսեցաւ հետը ինչ որ սէտք էր խօսիլ  
 և խնդիրքը կատարեց : Ան սատենը գեղացին

դարձաւ գառին ըսաց, Հատ մեծապէս  
շնորհակալ եմ քեզի, սիրելի գառնուկս, որ  
զիս արժանի ըրիր այս բաղձալի խօսակցու-  
թեան:

Խրափ է անոնց որ հաշտութիւն չեն խաւարն եւ ան-  
խրա- Բան կ'ընեն, վասն զի հաշտութիւն փեռած  
Բան մէկն չի ինտր փեռնել. Բայց արտաք շա-  
տաւորն մէկս ոչ քի է ճշմարտութեան հեփեիլ:

Տես զիւրդ բաղնէ զկուրծս իշխանին  
Ապիկար մըրմունջ ձայնի կաշառին.  
Որով անիրաւ գատաւորք լինին  
Եւ ոչ զօրութեամբ ճըշմարիտ փաստին:  
Այս ձայն խանգարէ զկարդ օրէնքսդրին,  
Փոխարկէ ըզսուտն 'ի տիպ ճըշմարտին.  
Փոխէ ըզլեզու եւ սիրտ դատողին՝  
Բաջ հանդիսանայ յայն հանգէս դատին:



## ԾԵՐ ԵՒ ՄԱՆՈՒԿ

Թէ ոչ յորդորն ազդէ խեղին՝  
Ուղղեսցէ զայն հարուած գանին:

Թէ խրափ օգոփ լենէ՝  
Գառազանը լաւ է լեքիէ:

Մկ. Եւրբեմն ծեր մը տեսաւ մէկ մանուկ  
տղայ մը որ սլաքաւոր մտեր սլաքուղ կը գող-

նար . սկսաւ անոյշ խօսքերով խրատ տալ որ  
այն չարութիւնը չընէ՝ երթայ անկէ . իսկ մա-  
նուկը ծաղր ընելով մտիկ չէր ընել խօսքին :  
Ուստի տեսաւ ծերն որ խօսքը փուռ եղաւ՝  
սկսաւ ինքիրեն ըսել Ես կարծէի որ մար-  
դուս զօրութիւնը խօսքին և ուժին վրայ կը  
կայանայ , ահա խօսքս զօրութիւն մը չունե-  
ցաւ , նայինք ուժն ունի՞ զօրութիւն : Զայս ըսե-  
լով քարեր ժողվեց ու կը նետէր մանկանը  
վրայ . նայիս մանուկը շուտ մը ծառէն ինջաւ  
փախաւ : Եւ այսպէս խօսքին չտեսած բա-  
նը ուժը տեսաւ , մինչև զարմանալով կ'ըսէր  
ծերը թէ Ինչո՞ւ պէտք եղաւ իմ փորձ խրատս՝  
երբոր տկար ձեռքիս ուժը անկէ աւելի բան  
տեսաւ :

Խրատ է Տանիանց որ ծերոց խօսքը լաւ պահեն .  
որնէ՞ թորձ ըլլալով թու՞մք բան չեն խօսիւ , լա-  
հարիստ որ խրատ և խորհուրդ իո՞քան : Հարցո՞-  
ցին Բէ Աւխարհիս ո՞ր բանը ծանրագին է . վճիռ  
էլա՞ւ Բէ Խէւարի և թորձ ծերուն խրատները :

Ահա բոյս բարուց խեղ. պատանեկին  
Զոր ոչինչ չարժէ ձայն խոհականին .  
Միակ բռնութիւնն ուղղէ զայնալիսին  
Զընկենուլ զեղեռն առնել ըզբարին :  
Արդ մի հետեիր դու ըստահակին  
Անըսող ելով ձայնի ազդողին .  
Ամբարեա 'ի սիրտ իբր աղուհս անգին  
Խրատ ծերունեաց և զառակ նոցին :

## ՄԵՂՈՒ ԵՒ ՄԺԵՂ

Հետեւեաց դու այն արուեստին .  
 Որ քեզ այլոց յօգուտ կարգին ,

Անանի Բան ին սորվիլ առէ  
 Որ չեւ այլոց շահ ին Բերէ :

մղմ. **Չ**մեռուան մէջ մթեղը (սիւրիսիւնէն) գնաց մեղուներուն աղաչեց որ իրեն տեղ և կերակուր տան , խոստանալով անոնց թէ ձեր ձագերուն երաժշտութիւն կը սորվեցընեմ : Պատասխան տուին մեղուները թէ Չենք ուզեր որ ձագերնիս այսպիսի արուեստ սորվին , այլ կ'ուզենք անանկ բան սորվին որ կարենան ուրիշին կերակուր տալ և աղքատուէ ազատել , չէ թէ երաժշտութիւն դիտնալ որ բանի մը պիտուական չէ :

Օրինակ է անոնց որ միշտ օգտաւոր Բանի էրեւել ըստալ իրենց դասիւններուն անօգուտ Բան ընէ սորվեցընէր , որ յետոյ խեղճ ընէ ըստալ և ուրիշին ալ օգուտ իրնան ընէ :

Քաջ նազաբանէ իմաստ առակիս  
 Յունկըն նազելի մանկանց անմեղին .  
 Ուսիր վայելուչ , ասէ , զպիտանիս ,  
 Լիք զանօգտակարն քեզ և բոլորին :

Թէ կըրթիս գիտե՛լ զանպիտանս անձին՝  
 Ոչ լինիս գիտուն՝ այլ վարիչ հողմին .  
 Թէ ջանաս գիտե՛լ գիւտս օգտակարին  
 Յայնժմ քեզ իմաստք բարեաց հանճարին:



## ՄԱՐԴ ԵՒ ՕՁ

Թող զապերխան յարկած իւր չար՝  
 Զի ոչ գիտէ զիւր բարերար:

Ապերախին օգնիւ յ' ըւար  
 Եւք երախիք բան լիճանլուր:

մղէ. ( ) ձ մը երբեմն քարին տակը մնացեր  
 երբոր կը ճգմուէր՝ տեսաւ թէ անկէ մարդ  
 մը կ'անցնի՝ աղաչեց որ քարը վրայէն վերցը  
 նելով զինքն աղատէ և իրեն շատ մեծ պար  
 գէներ խոստացաւ: Մարդն ալ վերցուց  
 վրայէն քարն ազատեց օձը: Իսկ օձը խօսքէն  
 դարձաւ, ու բան մը չէր ուզէր անոր տալ,  
 մինչև սկսան բարկանալով հակաճառութի  
 ընել. ան ատենը դիպուածով անկէ կապիկը  
 կ'անցնէր, կանչեցին զայն իրենց մէջ դատա  
 ւոր դրին որ այս վէճը կտրէ: Պատասխան  
 տուաւ կապիկը. Ես լաւ դատաստան չեմ  
 կրնար կտրել մինչև որ չտեսնեմ թէ  
 ինչպէս քարին տակը սխմուած էր օձը. այս  
 խօսքովս սարտաւորեց օձն որ կենայ, և  
 մարդը դրաւ քարը վրան: Դարձաւ կապիկն  
 ըսաց, թէ Ահա այս է ուղիւղ դատաստան



որ գուն քարին տակը այսպէս մնալով սատ  
կիս :

Ապերախառնիւնը շաք աճած մարդը քառա  
յանքի մէջ իւր յգէ և անօգնական իւր իրաւունքն է :  
Շաք մեծամեծ մարդիկ ապերախա մարդկանց հան  
դիպելով օգտակար բան մը լըրած աշխարհէն ելած  
են որ շաք բան իրնային ընել :

Այսպէս ապերախոք գործով խաւարին  
Դիմագրեն կամաց բարերար անձին .  
Մերժեն ըզնըպատ որ սլարա էր նոցին ,  
Պատրաստեն անձանց կորուստ ցաւագին :  
Ուսիր ճանաչել զգործ բարերարին  
Որ քեզ 'ի նըպատո բերի խնդագին .  
Զի գործ դըժընգակ է դըժնեայ օձին  
Մերժել զբարերար մաշիւ առ վըշտին :

### ԷՇ

Աղքատք մընան յաջող ելից ,  
Այլ կեանք նոցա միշտ ցաւալից :

Աշտապն որւա՞ի հանգլիւ ընայ ,  
Հանգիստն իրմէն հեռո՞ւ կ'երթայ :

մղձ . 1 շը ձմեռուան մէջ սառտիկ կը վշտա  
նար ցրտէն և մինակ յարգ (սաճան) կ'ուտէր  
ուրիշ բան չէր գտներ ուտելու . և այս պատ

Ճառաւ կը ցանկար գարնան որ ցրտէն ա-  
զատի և խոտ գտնէ ուտելու : Գարուն որ  
եկաւ սարտաւորեցաւ բրուտին կաւը տա-  
նել փուռը՝ որ կաւէ ամաններ շինեն . Ո՛հ,  
կըսէր, երանի թէ ամառ գար որ քիչ մը  
հանգչէի : Ամառն ալ եկաւ՝ սարտաւորե-  
ցաւ ցորեն և սլտուղ կրելու : Ան ատենը  
ինքիրեն ըսաց թէ Ինձի շատ լաւ է ձմեռն  
որ տէրս ցրտէն չկրնար աշխատիլ, ես ալ  
քիչ մը կը հանգչիմ :

Աղչապն ու Բանուորը ալ քիչ է որ Բուր քարին  
աշխատին և իրենց Բեռը հասֆէրու-Ռեմսֆ քանին .  
Վասն զի հասֆէրուշին Բեռը իւր Բեռնանայ և ան  
հասֆէրին Բեռը իւր Ժանրանայ :

Աղբատք գործաւորք միշտ գործել հարկին,  
Ոչ անգործ մընալ յաջողակ բաղդին .  
Քանզի վաստակիլ կընքեալ է նոցին՝  
Ժըրանալ քաջիկ ՚ի բոլոր տարին :  
Եթէ փափաքիս անգործ վիճակին՝  
Ջանք քո և վաստակ քեզ ծանրաբեռնին,  
Զի Ժիքք նաև հեղգ տանիլ հարկադրին,  
Նա թեթեւ տանի և սա ծանրագին :



## ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՅ

Լաւ է փոխել զտունն յայլ տեղի,  
Քան մերձ ունեւ չար դըրացի:

Լաւ է քուն քել յգէւ երևալ՝  
Քան գէւին հեք մէկքել ինաւ:

մղէ. Երբեմն Դիոս կամեցաւ ամէն կեն-  
դանին երուն խնդիրքը կատարել. ուստի ա-  
մէնքն եկան իրենց խնդիրքը յայտնեցին. կը-  
րիայն ալ եկաւ կ'աղաչէր որ տունը իր վը-  
րան դնէ, որպէս զի ուր որ երթայ՝ հետը  
տանի: Ինչո՞ւ համար, ըսաց Դիոս, կ'ուզես  
այդ բեռը հետդ տանել: Ան ալ ըսաց թէ  
Շատ լաւ է իմ հետս տանիլ այս բեռը, քան  
թէ չար դրացին որ ունենամ չի կրնամ տե-  
ղես չարժիլ և ամէն օր անոր նեղութիւնը  
քաշելով կ'ծու խօսքը լսել:

Չոր Դրացիէն և լաւ ընկերէն պէտք է հեռու  
իջնել, վասն զի որչա՞ր Բարեկամութիւն ընես  
իսկ թէ պապասխան ասս' այնչա՞ր ի՞նչ լաւանայ  
անգգամ:

Անըզգամ ընկեր և չար դըրացին -

Լըքանէն ըզսիրտ թողուլ զտուն տեղին.  
Մինչ բառնալ ըզտուն թեթեւ դատեցին  
Քան կալ կենակցիլ ընդ անըզգամին:

Փախիր յայնպիսեաց թէ քեզ մերձեցին,  
 Մի սրտասխաներ բանից բանսարկուին,  
 Կագ և թշնամանք են բերկրանք նոցին,  
 Զըրկել զմերձաւորն հանճար համարին:



## ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴՒ ԻՒՐ

Միտ դիր ծերոց ուսիր զմաստ  
 Եւ մի լինիր անմիտ գըրաստ:

Թէ ո՞ր ծերոց ւսող ըլլաս,  
 Խելեղ՝ գիտան ճարդ ճշ կ'ըլլաս:

մղը. **Մ**էկ խելացի ծեր մը միշտ կը խրա-  
 տէր որդին որ ժամանակը փուռ չծախէ,  
 ուսման միտք դնէ ու բան սորվի և անտաւոր  
 չար սովորութիւնները վար դնէ: Բարի ծերը  
 գիշեր ցորեկ կը ջանար միտքը խօթել, թէ  
 Ի՞նչպէս ազնիւ և գեղեցիկ է առաքինութիւնը,  
 և քանի՜ զգուեղի և գէշ բան է մոլութիւնը:  
 Պատասխան տուաւ որդին լրբութիւնով. Կ'աղա-  
 չեմ, հայրիկ, շատ երկան մընէր, մտածէ թէ  
 ես որ այնչափ քարոզիչներէ յորդորանք լը-  
 սեր եմ առաքինի ըլլալու համար և մօտիկ  
 չեմ ըրած, գուցէ որ քարոզիչ չեմ ի՞նչպէս  
 պիտի մօտիկ ընեմ խօսքիդ:

Տգեփ և անբաւար ճարդի խելացիներուն  
 Խեղճ Բանի փեղ լին գներ, որովհետեւ Իրենց

լար Տու-նէն Դէճ է, Բայց օր իո-գայ որ շաք ին  
զըջան, և ին քնարենն այն խրապներն ու շէն  
իւնար գրնէլ: Ու ին ին Ժնօշքէ՛ն ի՛ննարգէ՛ն լայն  
ին Տարի և աւել ին խաւարի, ի՛նն Աւախ:

Այս վայրենամիտ բարք ըստահակին  
Որ զիմաստ ծերոց կոխէ առ ոտին .  
Գիտուածիւնք խրատք բարոյականին՝  
Ներհակ են ախտից ներհակ և վատին :  
Թէ անուս են միտք դատմունք խաւարին՝  
Չեն մարդոյ դատմունք այլ բան անբանին .  
Չի այր անխրատ ի պատկեր չըրջի,  
Մարդ անբանական անբան ի բանին :

### ՀՈՎԻԻ ԵՒ ՇՈՒՆ

Ծանր են զրկանք բարեկամին՝  
Քան մեծ չարիք դառն ոտիսին :

Շաք գարշելի ապերախ է  
Բարեբարին որ լար ի՛ննէ :

միլթ . **Տ**ովիւր ոչխարներն իր շանը յանձ  
նեց որ հոգ տանելով նայի զանոնք, և շատ  
առատ կը կերակրէր շունն որ լաւ հոգայ .  
խսկ շունը ամէն օր մէյմէկ ոչխար կը սպառուէր  
կ'ուտէր: Երբոր իմացաւ տէրը բռնեց շու-  
նը կապեց որ մեռցընէ, շունը ոտքն ընկաւ  
կ'աղաչէր . Տէր իմ կ'ըսէր՝ զիս մի սպաննէր,  
որովհետեւ քեզի ընտանի ծառայ եմ: Պա-

տասխան տուաւ տէրը, թէ Եւս առաւել  
մահասլարտ ես դուն որ ինձի ընտանի ըլլա-  
լով՝ հաւատացի քեզի ու ասանկ անիրաւու-  
թիւն ըրիր ինձի. զայս ըսելով զարկաւ մեռ-  
ցուց:

Աւելի արժանի էն պապուհասի անոնք որ ի-  
րենց Բարեկամին շարունակէ կ'ընեն, հասապարիճ կ'ը-  
ջնանան՝ և անհասապարիճէն շաք գեշտ-նիւն  
կ'ընեն:

Քանի՜ անիրաւ գործ դաւաճանին  
Ձընկեր բարեկամ թըշնամանողին.  
Որով և կրէ զարժանիս անձին՝  
Դառըն տանջանաց սլատուհաս կրկին:  
Ձի՛նչ դժընդակ կիրք սրտի նենգողին  
Ատել և ատիլ նըման գազանին.  
Ձընկերսիրութիւն մերժեալ է ինքնին,  
Որ միակ զարդ է բուն բանականին:

## ԱՌԻԻԾ ԵՒ ԿԱՊԻԿ

Չիք ինչ խոտան յէից կարգին  
Որ 'ի պիտոյս ինչ ոչ կարգին :

Ամեն Բանէն օգուտ կ'եւէ,  
Բանը ինչպէ՞լ գործածելն է :

Ե. Առիւծը չորքոտանիներուն թագաւորը ըլլալով բոլորը գլխուն ժողովեց պատերազմի ելաւ թռչուններուն դէմ. ուստի բանակ (օգուտ) կազմելով բոլոր կենդանիները կարգի դրաւ թշնամիներուն դէմ որ պատերազմի : Բայց կապիկը նայեցաւ որ էշն ու նապաստակը այն կարգին մէջն են, հարցուց առիւծին թէ Ասոնք հոս ինչո՞ւ են կեցեր, ասանկ վախկոտները կրնան պատերազմը նեղ : Ան ալ պատասխան տուաւ, թէ Էշը զուարթ փողահար (Լաւաճիկ) կ'ըլլայ որ մէկալնոնք ծեծկուին. իսկ նապաստակն ալ արագ փախչելովը սուրհանդակ (Լաւար) կ'ըլլայ՝ խօսք տանի կը բերէ :

Աշխարհիս մէջն անպէտք Բան չ'ըլլէ պէտքուած. ամեն Բան պիտուա՞ն է երբեք փեղն ինչի՞ կ'իսել քով գործածուի :

Չըքնաղ են ծնունդ մօր նախատեսին,  
Չըքնաղ 'ի գործ ինչ կարգեալք լը յատկին.





Ճշմարիտ Բարեկամը և սուս Բարեկամը յա-  
խարդու-Լեան մեջ իւր յայտնու-ին . ինչպիսիք Գործ-  
իւր Գործու-ի ճշմարիտ Բարեկամը, անոր համար  
Ռեյս յայտնու-ի է : Այլեւս անոր Լազարու-ի հար-  
ցուցին Լէ Ո՞ր է Գործը . ան ալ Բարեկամները  
ընդուն- :

Ընտրեալ 'ի բիւրուց անգիւտ մըտերիմ'  
ի կեանս և 'ի մահ կայ ընդ մըտերմին .  
Ձոր ընդ գանձս երկրի 'ի կըշիւ եզին  
Ծանրեաց 'ի կըշիւ յարգ բարեկամին :  
Թէ տիրես գանձուց և հանքաց երկրին՝  
Չունիս բարեկամ քեզ հաւատարիմ .  
Չարժեն և ոչինչ այն հանք այն ոսկին  
Որ գան և գընան ըստ բերման բաղդին :

## ԱՐՏԱՎԱՐ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՔ

Ձոր ինչ կարես անձամբ գործել՝  
Բարեկամաց զայն մի յանձներ :

Գործէ ուրախ յետեւ ին-գայ,  
Ձի ուրիշէն քեզ չու-ի ի :

յԹ. Նաբեղաձագը կամարտուա թռչու-  
նը բուն շիներ էր արտի մը մէջ . օր մը կե-  
րակուր բերելու գնաց ձագերուն, սկստուի-  
րեց անոնց որ ինչ լսեն իրեն սկստմեն :  
Քիչ մ' անցաւ արտին տէրն եկաւ նայեցաւ  
որ ցորենը հասած է , ըսաց իր զաւկին՝ Թէ  
Առաւօտուն կանուխ երթայ բարեկամները

կանչէ որ գան միատեղ հնձեն : Երբոր դարձաւ թռչունը՝ վրան թափեցան ձագերն աղաչեցին որ զիրենք անկէ հանէ՝ վասն զի բարեկամները վաղը պիտի գան հնձեն ցորենը : Իսկ մայրը սիրտ կուտար ձագերուն թէ Մի՛ վախնաք, եթէ արտավարը բարեկամներուն յանձնեց՝ վաղը չի հնձուիր ցորենը՝ հանգիստ կեցիք : Արտուտը մէկալ օրընորէն գնաց կերակուր բերելու . ձագերը նայեցան որ արտին տէրն եկաւ շատ սպասեց եկող մը չեղաւ, ուստի ըսաց որդւոյն թէ Երթայ ազգականներուն և դրացիներուն ըսէ որ վաղը գան կտրեն : Զայս երբ լսեցին ձագերը վախնալով մօրերնուն պատմեցին . ան ալ Մի՛ վախնաք ըսաց բան չի կայ : Այն օրն ալ տէրն եկաւ սպասեց՝ մարդ մը չեկաւ . ապա ըսաց որդւոյն թէ Ահա ամէնքը մեզ խաբեցին չեկան, ուրեմն վաղը կանուխ մէյմէկ մանդաղ առնենք մենք գանք հնձենք ցորենը : Զայն որ լսեց թռչունը առաւ ձագերը փախաւ՝ ըսելով թէ Հիմա կ'աւտամ որ կը հնձուի ցորենը, վասն զի գործքն իրենց մնաց :

Առախ կը խրափէ Լէ Այն Բանն որ մեր թեռքէն կուգայ՝ պէտք է որ իշխի յանձնել, ինչ որ օրհնէն շահ էի կայ . ամէն մարդ իր շահը կը նայի :

Այսչափ են խընամք սերտ բարեկամաց  
 Որ անգործ թողուն ըզգործ մտերմաց .  
 Այժմեան բարեկամք խնդրեն շահ անձանց՝  
 Ոչ որ մտադրէ յօգուտ ընկերաց :

Վայ որ ապաստան չինի մտերմաց ,  
 Զոր անձամբ կարէ՝ թողու օտարաց .  
 Օտարք վաստակին միայն վասն ինքեանց ,  
 Մի ակնկալցի չահ յայլոց ձեռաց :

## ԱՊՈՂՈՆ ԵՒ ՊԱՏԱՆԻ

Արդ մի փորձեր զայր գիտնական ,  
 Մի ծաղրեսցիս իբրև անբան :

Հասաքի Բան ԼԵԼԱյ Ժողէն ,  
 Քեզ գիպնոց ԺԺԺաղբ Ի՛նչէն :

Եթ . Սէկ չարամիտ պատանի մը գնաց  
 Դեղոս կղզին Ապողոն չածին կռատունը , և  
 փորձելու համար թռչուն մը ձեռքն առաւ  
 լաթին տակը պահեց , ու արձանին մօտե-  
 ցաւ հարցուց թէ Ձեռքս որ ունիմ գիտցիր  
 շնչաւոր է թէ անչունչ : Միտքը դրաւ որ  
 եթէ անչունչ ըսէ՝ թռչունը ողջ պիտի դուրս  
 հանէ , և թէ շնչաւոր ըսէ՝ մէկէն խղզէ ա-  
 նանկ պիտի ցոյց տայ : Ապողոնին քուրմին  
 կնիկը բանը հասկընալով պատասխան տը-  
 ւաւ կուռքին բերնէն թէ Ինչպէս կամիս  
 անանկ ըրէ , կ'ուզես ողջ հանէ՝ կ'ուզես մե-  
 ռած , որովհետեւ անոր կեանքը քու ձեռքդ է :

Օրինակ է իւրախմաստիւ երոն ու իրենց խելո-  
 ՛ւն Ի՛րաւէն ա, անպնէկի Խառավարութիւնը լաճել

«- Ժողովել եւ երբեք իմաստուններ չարհամարհել,  
Բայց ղէկէն խայտառակ կ'ըլլան :

Ահա վատ խորհուրդ թերահաւատին  
Որ փորձել ժլպրհի զոյժ նախագիտին .  
Անդէն խայտառակ լինի 'ի բանին ,  
Մերժի յիմաստնոց զերթ իմաստակին :  
Մի լինիր քըննիչ օրինականին ,  
Եւ մի անգոսներ զօժեալս Արարչին .  
Զի դու չես կարգեալ դատաւոր նոցին ,  
'նա քեզ դատաւոր օրինօք վերին :



### ԱՌԱՔՒՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՍԿԻ

Գանձ և ոսկի գործի չարին՝  
Դիմեն 'ի ձեռս զսկող ժանտին :

Դանձն ու ոսկին շարին կ'երթան  
Որ շարումէան գործի ըլլան :

յԳ. Եւաքինութիւր երբեմն զարմանալով  
կ'ըսէր ոսկիներուն թէ Ինչո՞ւ համար առա-  
ւել կ'ուզէք չար մարդկանց ձեռքն երթալ  
քան թէ բարիներուն . Անոնք ալ պատաս-  
խան տուին թէ Մեր աշկերտները վաշխ առ-  
նելով զրկանք կ'ընեն , սուտ տեղը կ'երդ-  
ւըննան և այլ շատ անօրէն բաներ ընելով  
կը շահին մեզ , իսկ քու աշկերտներդ ասոնց  
հակառակը կ'ընեն , անոր համար կը հար-  
կադրինք առաքինի բարեպաշտներէն փախ

չիլ և զըկող չարերուն ձեռքն երթալ: Առա-  
քինութիւն ալ ըսաց Որովհետեւ ասանկ է՝  
էս ալ աւելի կ'ուզեմ որ իմ աշկերտներս  
աղքատ ըլլան քան թէ փարթամ:

Խրաք է անոնց որ զբնիշխանութեամբ կ'ուզեն հարըն-  
քանալ. շաք աշէի է աղքատ ըլլալ քան թէ զբնիշ-  
խութեան, վասն զի աղքատութեանը կ'անցնի բայց  
զբնիշխանութեանը ինչ քանայ ցաւիքեանս ցաւիքեանից:  
Շաք աշէի է արդար աղքատը քան սուր քեթա-  
րութեանը, կ'ըսէ Սողոմոն:

Ընտրելի վիճակ գընացք աղքատին

Անհոգ և անինչ ըզմայլող յանձին.

Զի ոչ մաշէ կեանս ՚ի գիւտ դրամին,

Մաշէ զամենայն ՚ի ստանալ բարին:

Նա կեանք անգբաղ գոհար է անգին,

Մի վատներ դիւրաւ ՚ի գիւտ կորուսչին.

Առ ինչ մթերել զայն գանձ փրտելին,

Երբ մաշեալ վատնէ ըզսիրտ և հոգին:



## ԳԻՏՈՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Եթէ խընդրեա, խիղճ, զուղղութիւն՝  
Արդ նախ յանձին խնդրեա ըզնոյն:

Թէ է՞րդէս մէկն արդար ըլլայ՝  
Առաջ նայէ՛ք ուսումն ի՞նչ:

Ե. Երկրագործ մը մէկ հարուստի մը քով տարիներով կ'աշխատէր, երբոր ատենն եկաւ որ քովէն ելլէ՝ ուզեց իր վարձքը: Ան ալ պատասխան տուաւ թէ խիտ լաւ, բայց դուն ալ կերածիդ ստակը տուր, վասն զի ինչ որ կ'աշխատէիր ես քեզի կրկինը կը կերցընէի որ լաւ դատիս: Հատ վիճաբանութիւն ելէն ետեւ դատաւորին առջին ելան. երկրագործը կ'ըսէր թէ Իրաւունք է որ մշակը եղած տեղն ուտէ, և իր վարձքէն ալ չի զրկուի. իսկ հարուստը կաշառքին ու ժով դատաւորն իր կողմն ըրաւ որ այսպէս վճիռ կտրեց թէ որ կերածը աշխատանքէն քիչ է՝ թող պարտաւորի հարուստը հատուցանելու, իսկ թէ շատ է՝ ինչպէս կը վկայէր հարուստը, թող երկրագործը աշխատելով հատուցանէ: Չայս որ լսեց խեղճը գլխուն զարնելով կը պոռար թէ Արդարութիւն չկայ, խիղճմտանքը մեռաւ: Ասոր ասանկ լացը տեսաւ գիտուն մարդ մը միտի թարեւով ըսաց Ինչո՞ւ կը կանչես լալով,



խղճմտանքը չէ մեռած մի լար, հապա բո-  
լորովին համբարձեր է, վասն զի թէ որ մե-  
ռած ըլլար՝ գէթ մէկ ոսկորը կը մնար:

Արդարութիւնը և խիղճը միշտ դժուարագիտա-  
ք՝ հանաւանդ հիմա, Լեւոնի ամենքը կը խնայուէն  
զայն ուրիշին գով, և իրենց գով ամենեւին չեն  
խնայուեր:

Քանի՛ սկանծալի բան գիտնականին  
Համարի զուղիղն յանուրեք վայրին,  
Թէ գոյր ուղղութիւն լինէր 'ի նմին  
Որ յայլս որոնէ յօտարաց անձին:  
Զի՛ վայես յիմար զուղիղն ընդ խղճին՝  
Որք 'ի վաղ դարուց անտեղի շրջին.  
Նա զի չեն հեռի թէ կոչես յանձին,  
Անխիղճք միայն զայն յինքեանց մերժեցին:



## ԾԵՐ ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Վայ որ չար ինչ խորհի ծնողին,  
Որդիքն զնոյն առնեն նմին:

Ինչ որ ընէ ծնողիդ տէ՛մ  
Քո՛ւ զաւակդ կ'ընէ +եղ տէ՛մ:

Ե՛լ. Սէկ անդգամ որդի մը իր ծեր հայրը  
անէն դուրս կ'ընէ. ան ալ կ'երթայ հիւանդա-  
նոցը կը սպառկի, երեւի վրայ կը մնայ խեղ

Ճուլթի : Օր մը որդին անկէ կ'անցներ , կան-  
չեց ըսաց հայրը թէ Կաղաչեմ , որդի , ինձի  
ջուխտ մը կապերտ ( + իւի ) խրկէ իմ բաներէս  
որ վաստակովս դներ եմ : Որդին ալ մեղքը  
նալով տուաւ իր որդւոյն երկու կապերտ  
խրկեց հօրը : Իսկ ծերը մէկն առաւ , մէ-  
կալը որդւոյն խրկեց , և ըսաց թոռանը թէ  
Կ'ուզեմ որ հայրդ լաւ սլահէ այս մէկ կա-  
պերտը իրեն . համար , վն զի երբոր ինքն ալ  
հիւանդանոցը դայ իյնի՝ ինչպէս ես եմ ե-  
ղեր , պէտք կ'ըլլայ իրեն :

Զաւակի ինչ Բնւ որ ընէ իր ծնողաց՝ այն ինչ  
գրեմ , Բէ Բարի ըլլայ և Բէ լար . Վն այն դա-  
ւակին որ լար ընելով ծնողաց սիրտը ինչ ցաւ-  
ոս լարաւար ինչ պարտահաւի : Սոկրատ Գիւն-  
գան ի՛նչեւ Բէ Պարտաւորեալ ծնողնիդ որ յիշ  
իւանդին պարտաւոր էն , իսկ վարդապետը՝ որ Բա-  
րի ինչաց պարտաւոր է :

Ո՛վ զիարդ անգութ սիրտ Ժանտ զաւակին  
Դառնանայ ընդդէմ իւրոյ ծնողին .  
Անտուն անտեղի առնէ ծերունին  
Որ ինքեան զգուբաշխեաց զտուն տեղին :  
Սակայն անյեղ ինչ օրէնք երկնային  
Անձին վերբերեն զոր դործեաց նմին .  
Թէ պատուասիրեաց՝ հանդիպի պատուին ,  
Եւ թէ անարդեաց՝ կրկնի չորեքկին :



## ԾԵՐԵՒ ՄԱՀ


Զինչ սոսկալի կիրք բռնական  
Քան զապաժոյժ երկիւղ մահուան :

Մահին գաւն է դառն ահագին,  
Մինչ ծեւ արայն իւր սահմանին :

յէ. ( )ը մը մէկ ծեր մը փայտ կտրելու  
համար լեռը կ'երթայ, և կտրած փայտերը  
կապէ բեռ կը շինէ, և երբ բարձուած կը բե-  
րէր քաղաքը՝ ճամբան երկայն շըլալով խիստ  
կը հոգնի՝ մինչև ալ չի դիմանար բեռը վար  
կը ձգէ ու կը սկըսի մահը կանչել որ իրեն  
հասնի: Նայիս յանկարծ մահն երեցաւ ի-  
րեն և հարցուց թէ Զիս ինչո՞ւ համար կան-  
չեցիր: Պատասխանեց ծերը դողալով. Անոր  
համար կանչեցի որ դաս բեռս վրաս բար-  
ձրնէս:

Ո՛րչափ յեղեղութեան մէջ ըլլայ մարդ և ո՛ր-  
չափ ծերութեամբ լարւարո՞ւի՝ մահն իւր քափաւի ու-  
սուրբիւ ի՞նչ, վասն զի բնութիւնը լոպէս քա-  
նութիւ և հագին մարմնէն զապաժնի՝ որ սոսկալի  
վեճակ մ'է և առնաճաճարիք. Բայց զգայութիւնը  
իւրաքանչեւ մարդը հեռու դնելով մահը որ միշտ մահ-  
խանայուաց քով իւր ընթիւ:

Ո՛հ դժոխերես տեսիլ օրհասին՝  
 Բուռն բռնաւոր ըզգայականին,  
 Թըշնամի կենաց հատանող թելին,  
 Ատելի ծերոց մինչ 'ի շունչ վերջին:  
 Մի՛ կոչեր ըզմահ 'ի չար արկածին,  
 Մի՛ 'ի քէն ելցէ յիշատակ նորին.  
 Զի մահ գիտացեալ չէ մահ՝ այլ բաժին,  
 Մահ ոչ գիտացեալ մահ է չարածին:



### ՄԱՀ ԵՒ ԾԵՐ

Բուռն և ազդու է ձայն մահուան  
 Որ ցանդ հնչէ 'ի լուր մարդկան:

Մահն անդադար մեղ խայն կոտոր,  
 Չէնք՝ արեւնար Լեւ Խնչ խայն կայ:

յԵ. Երբեմն մահն եկաւ յանկարծ ծե-  
 րու մը վրայ հոգին առնելու. ծերը կ'ա-  
 ղաղակէր ու կ'աղաչէր որ քիչ մը ժամանակ  
 տայ իրեն կտակ ընելու համար: Պատաս-  
 խանեց մահը թէ Չեմ կրնար քեզի ժամանակ  
 տալ, որովհետեւ շատ անգամ քեզի իմացու-  
 ցի դուն ամենեւին կտակդ միտքդ չի բերիր:  
 Ե՛րբ ինձի իմացուցիր, ըսաց ծերը: Մահն  
 ալ ըսաց թէ Երբոր ընկերներուդ հոգին ա-  
 ուի ինչո՞ւ միտքդ չի բերիր թէ օր մը ինձի  
 ալ կուգայ. շատ անգամ մանուկներուն և  
 կտրիճներուն հոգին աւի՛ տեսար. շատ հեղ-  
 լսեցիր որ դրացիներդ վերուցի տարի՝  
 կը տեսնէիր որ ուժդ սլակսեր է մարմինդ  
 մաշեր գացեր է և աշխարհք քեզի համար  
 հինցեր է՝ դուն աշխարհքիս փակեր էիր:

ես ասանկ բաներով գիշեր ցորեկ քեզի խմացում կուտայի դուն ամենևին չէիր պատրաստուէր: Քեզի պէտք չէր որ ան ատենը մահդ մտածելով կարգաւորէիր բանդ ու այս կէտիս չի ձգէիր, ուրեմն եւ եկո պատասխան տուր գործքերուդ:

Պէտք է մշտաւ արեւուն և պարսապի կենալ մահին գալարեանը որ ամեն բոլորէ մօտ է մահիւնացում: որչափ գաւազն սպառեց ճշմարիտ է՝ այնչափ աւանդիպէլի է գալուտն արեւը: Եւանի մարդուն որ պարսապի գինեւունով բարի մահուն արժանի կ'ըլլայ որ մի միայն վախճանն է մարդուն, որովհետեւ յաւիտենական վիճակին մէջ կ'ը մօտէ որ ծայր ճոխ լուսնի: Ահա այս յաւիտենական վիճակը իտապաշարներն ալ բանադարաց որ խրատներով և օրինակներով ջանացին մարդիկ առաքինի ընել և անմահ: Ինչպէս մէկն ալ ողորմելի Եղովբոսն էր, որուն խրատներն էն բարեպաշար՝ Լեւոյէր ինքը իտապաշար: Այս ահա և մեր վախճանն որ իսմէրանէ քոքիի աշխարհաբոլս առաքինի պեսնել մեր մանկունքը և իմաստասէր, որպէս զի բարի վարդով անցընեն այս անցաւոր վիճակն և երջանի ըլլան:

Չարթիր 'ի քրնոյ մարդ եղծանելի,

Ահա ազդարարն 'ի դուռն մերձի.

Չայնէ հանապաղ հրաժարիլ աստի


Գնալ յանվախճան և յանդարձ ողորմի

Արթուն կաց ընդ ձայն ըզրէ կոչողի,

Չի մի անպատրաստ հարցէ դէպի

Թէ լսես զձայնն զայնի գրգռի,

Մերձ ծանիր զնա 'ի քննոյ հեռի:



# Յ ԸՆԿ

## ՎԱՐՈՒՑ ԵԶՈՎԲՈՍԻ

|         |                                      |    |
|---------|--------------------------------------|----|
| ԳԼ. Ը.  | Նանդամանք եղովբոսի.                  | 3  |
| ԳԼ. Բ.  | Զրպարտութի եղովբոսի.                 | 7  |
| ԳԼ. Գ.  | Հիւրասիրութիւն եղովբոսի.             | 11 |
| ԳԼ. Դ.  | Վաճառումն եղովբոսի.                  | 13 |
| ԳԼ. Ե.  | Ճարտարմտութիւն եղովբոսի.             | 17 |
| ԳԼ. Ձ.  | Երկրորդ վաճառումն եղովբոսի.          | 19 |
| ԳԼ. Է.  | Եղովբոս երթայ 'ի տուն.               | 25 |
| ԳԼ. Ը.  | Պատասխանատուութի եղովբոսի.           | 28 |
| ԳԼ. Թ.  | Խորամանկութիւն եղովբոսի.             | 31 |
| ԳԼ. Ժ.  | Վրէժխնդրութիւն եղովբոսի.             | 34 |
| ԳԼ. ԺԱ. | Եղովբոս դարձուցանէ ըզտիկինն 'ի տուն. | 38 |
| ԳԼ. ԺԲ. | Սպաս եղովբոսի.                       | 39 |
| ԳԼ. ԺԳ. | Երկրորդ սպաս եղովբոսի.               | 41 |
| ԳԼ. ԺԴ. | Հնարագիտութիւն եղովբոսի.             | 42 |

|                                                 |    |
|-------------------------------------------------|----|
| ԳԼ. ԺԵ. Խօսք Եղովթոսի ընդ Դա-<br>տաւորին.       | 46 |
| ԳԼ. ԺԶ. Հանճար Եղովթոսի.                        | 47 |
| ԳԼ. ԺԷ. Ապերախտուն Քսանդոսի<br>ընդդէմ Եղովթոսի. | 15 |
| ԳԼ. ԺԸ. Փորձէ Եղովթոս զգիտնա-<br>կանս.          | 52 |
| ԳԼ. ԺԹ. Հնադիտութի Եղովթոսի.                    | 54 |
| ԳԼ. Ի. Ազատութի Եղովթոսի.                       | 57 |
| ԳԼ. ԻԱ. Եղովթոս հաշտեցուցանէ<br>զԹագաւորն.      | 63 |
| ԳԼ. ԻԲ. Եղովթոս գրէ զառակս իւր.                 | 65 |
| ԳԼ. ԻԳ. Եղովթոս որդեգրէ ինքեան<br>զԵննոս.       | 67 |
| ԳԼ. ԻԴ. Անյիշատարութի և խրատք<br>Եղովթոսի.      | 70 |
| ԳԼ. ԻԵ. Եղովթոս կրթէ զձագս ար-<br>ծուոյ.        | 72 |
| ԳԼ. ԻԶ. Խնաստութի Եղովթոսի.                     | 76 |
| ԳԼ. ԻԷ. Եղովթոս գնայ 'ի Յոյնս, և<br>'ի Դեղոս.   | 80 |
| ԳԼ. ԻԸ. Մահ Եղովթոսի.                           | 83 |





# Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Կ Ա Ց

Ըստ Խորհրդի յայտնաբերելից

|                                  | Երեւ |
|----------------------------------|------|
| Ագաւ (Բաժանագէտ) և Անցաւոր .     | 295  |
| Ագաւ և Նախանձող .                | 373  |
| Ագաւ և Որդի իւր .                | 467  |
| Ագաւ հիւանդ .                    | 473  |
| ✓ Ագաւ գէսպան (էլէի) .           | 488  |
| Ագռաւ (գառաւ) և Արծիւ .          | 105  |
| Ագռաւ և Աղուէս .                 | 107  |
| Ագռաւ և Ոչխար .                  | 174  |
| Ագռաւ և Արծիւ .                  | 191  |
| Ագռաւ ծարաւի .                   | 242  |
| Ագռաւ և Թռչունք .                | 336  |
| Աղգահան և Փարթամ .               | 444  |
| Ածխագործ (շէօթ-ըճի) և Ներկարար . | 254  |
| ✓ Աղախին (հալալը) և Պառաւ .      | 305  |
| Աղաւնի (իւլէրճի) և Ուրուր .      | 119  |
| Աղաւնի և Բաղէ .                  | 141  |
| Աղաւնի և Մրջին .                 | 208  |
| Աղաւնի և Անօթ .                  | 433  |
| Աղբիւր և Գետ .                   | 351  |
| Աղուէս (Բէլի) և Ագռաւ .          | 107  |
| Աղուէս և Արծիւ .                 | 109  |
| Աղուէս և Արագիւ .                | 130  |
| Աղուէս և Կապիկ .                 | 137  |

|                              |     |
|------------------------------|-----|
| ✓ Աղուէս և Գայլ.             | 143 |
| Աղուէս և Խաղող.              | 147 |
| Աղուէս և Կապիկ.              | 152 |
| Աղուէս և Ա.բիս.              | 157 |
| Աղուէս և Ա.բաղաղ.            | 183 |
| Աղուէս և Կատու.              | 185 |
| Աղուէս Գայլ և Կապիկ.         | 197 |
| Աղուէս և Մորենի.             | 198 |
| ✓ Աղուէս և Առիւծ.            | 206 |
| Աղուէս և Գորտ.               | 219 |
| Աղուէս և Ընձառիւծ.           | 251 |
| Աղուէս և Ա.բաղաղ.            | 263 |
| Աղուէս և Կոկորդիլոս.         | 272 |
| Աղուէս Առիւծ և Արջ.          | 279 |
| Աղուէս և Կինճ.               | 298 |
| Աղուէս Առիւծ և Էշ.           | 303 |
| Աղուէս և Ձեռ իւր.            | 318 |
| Աղուէս և Երկրագործ.          | 333 |
| Աղուէս և Նոխաղ.              | 385 |
| Աղուէս և Գայլ.               | 389 |
| Աղուէս և Առիւծ հիւանդ.       | 391 |
| Աղուէս և Շուն.               | 439 |
| Աղուէս և Ա.բաղաղ.            | 480 |
| Աղուէս և Առիւծ.              | 483 |
| Աղուէս և Շուն.               | 495 |
| Աղբատ և Գող.                 | 364 |
| Այգեգործ (աղաճ) և Որդիք իւր. | 320 |
| Այգի և Եղջերու.              | 332 |
| Այծ (+էէ) և Առիւծ.           | 241 |
| Այծ և Հովիւ.                 | 353 |
| Այր անհեր.                   | 268 |
| Այր և Կին.                   | 424 |
| Անգղ (ափապա) Առիւծ և Կինճ.   | 336 |

|                                                    |     |
|----------------------------------------------------|-----|
| Անդամք և Որովայն .                                 | 151 |
| Անտառ (օռման) և Փայտահատ .                         | 146 |
| Անցաւոր և Ագահ .                                   | 295 |
| Անօթ երկաթի և Անօթ խեցեղէն ,<br>( Գապ . պաշտապ ) . | 226 |
| Անօթ և Աղաւնի .                                    | 433 |
| Ապողոն Դիոս և Մոմոս .                              | 315 |
| Ապողոն և Պատանի .                                  | 511 |
| Առաքինութիւն և Ոսկի .                              | 512 |
| Առիւծ (ասլան) և Կենդանիք .                         | 98  |
| Առիւծ ծեր .                                        | 111 |
| Առիւծ և Մուկն .                                    | 114 |
| Առիւծ էշ և Աբաղաղ .                                | 163 |
| Առիւծ և Ուլ .                                      | 167 |
| Առիւծ և Մարդ .                                     | 169 |
| Առիւծ և Աղուէս .                                   | 206 |
| Առիւծ և Այծ .                                      | 241 |
| Առիւծ Արջ և Աղուէս .                               | 279 |
| Առիւծ և Գորտ .                                     | 287 |
| Առիւծ Աղուէս և էշ .                                | 303 |
| Առիւծ և Որսորդք .                                  | 345 |
| Առիւծ Կինճ և Անգղ .                                | 346 |
| Առիւծ և Որսորդ .                                   | 370 |
| Առիւծ և Ճանճ .                                     | 381 |
| Առիւծ հիւանդ և Աղուէս :                            | 391 |
| Առիւծ և Յուլք .                                    | 394 |
| Առիւծ և Գայլ .                                     | 410 |
| Առիւծ և Յուլ .                                     | 469 |
| Առիւծ և Աղուէս .                                   | 483 |
| Առիւծ և Կապիկ .                                    | 507 |
| Առնէտք և Կաղնի .                                   | 449 |
| Վ Աստղաբաշխ .                                      | 280 |
| Աստղաբաշխ մոդ (Քալճը) .                            | 326 |

|                                |     |
|--------------------------------|-----|
| Արագիլ (ւէյւէի) և Աղուէս .     | 130 |
| Արագիլ և Հողագործ .            | 308 |
| Արծիւ (Գարդաւ) և Ագռաւ .       | 105 |
| Արծիւ և Աղուէս .               | 109 |
| Արծիւ և Ագռաւ .                | 191 |
| Արծիւ և Կրիայ .                | 215 |
| Արծիւ և Բզէզ .                 | 238 |
| Արծիւ և Նապաստակ .             | 248 |
| Արծիւ նետահար .                | 343 |
| Արծիւ և Կաջաղակ .              | 361 |
| Արծիւ Բազէ և Յին .             | 405 |
| Արծիւ և Սիրամարգ .             | 476 |
| Արջ (այլ) Առիւծ և Աղուէս .     | 279 |
| Արջ և Մեղուք .                 | 402 |
| Արտավար (ւիճիւճի) և Հաւ .      | 193 |
| Արտավար և Կարնայ .             | 338 |
| Արտավար և Բարեկամք .           | 509 |
| Արտուտ (չայլ Գռ-չռ) և Հաւորս . | 464 |
| Աւաղակ հեղձեալ .               | 261 |
| Աւաղակ և Դիոս .                | 285 |
| Ա.բաղաղ (Խօժօղ) և Մարգարիտ .   | 91  |
| Ա.բաղաղ Առիւծ և Իշ .           | 163 |
| Ա.բաղաղ և Կաքաւ .              | 171 |
| Ա.բաղաղ և Աղուէս .             | 183 |
| Ա.բաղաղ և Հնդկահաւ .           | 186 |
| Ա.բաղաղ և Կատու .              | 193 |
| Ա.բաղաղ և Աղուէս .             | 263 |
| Ա.բաղաղ և Բազէ .               | 291 |
| Ա.բաղաղ և Գողթ .               | 426 |
| Ա.բաղաղ և Աղուէս .             | 480 |
| Ա.բիս (իւլիւճի) և Աղուէս .     | 157 |
| Բազէ (չահիւ) և Աղաւնի .        | 141 |

|                               |     |
|-------------------------------|-----|
| Բազէ և Ա. քաղաղ.              | 291 |
| Բազէք.                        | 358 |
| Բազէ Արծիւ և Յին.             | 405 |
| Բաղդ և Երևտասարդ.             | 324 |
| Բաղդ և Երկրագործ.             | 416 |
| ✓ Բանաստեղծ և Էշ.             | 492 |
| Բարեկամք.                     | 508 |
| Բարեկամք և Արտավար.           | 509 |
| Բզէզ (պէօճէի) և Արծիւ.        | 238 |
| Բէշէ մշկոյ (գաւառ) և Որսորդք. | 292 |
| ✓ Բժիշկ երկու և Հիւանդ.       | 252 |
| ✓ Բժիշկ և Մեռելաթաղ.          | 282 |
| ✓ Բժիշկ կարկատիչ (էփիճի).     | 299 |
| Բժիշկ և Պառաւ.                | 460 |
| ✓ Բժիշկ և Հիւանդ.             | 465 |
| Բու (պայուշ) և Թռչունք.       | 189 |
| Բու և Չղջիկ.                  | 413 |
| Գայլ (գաւառ) և Գառն.          | 92  |
| Գայլ և Կռուհիկն.              | 99  |
| Գայլ և Էդ Խոզ.                | 121 |
| Գայլ և Ուշ.                   | 126 |
| Գայլ և Կիսարձան.              | 132 |
| Գայլ և Աղուէս.                | 143 |
| Գայլք և Ոչխարք.               | 144 |
| Գայլ և Շուն.                  | 148 |
| Գայլ և Փայտահատ.              | 160 |
| Գայլ և Զորի.                  | 177 |
| Գայլ և Ողնի.                  | 182 |
| Գայլ և Շունք.                 | 190 |
| Գայլ Աղուէս և Կապիկ.          | 197 |
| Գայլ և Վագր.                  | 233 |
| Գայլ և Շուն վախ (շալիք).      | 258 |

|                              |     |
|------------------------------|-----|
| Գայլ փոքր և Հովիւ .          | 312 |
| Գայլք և Ոչխարք .             | 349 |
| Գայլ և Ոչխար .               | 380 |
| Գայլ և Աղուէս .              | 389 |
| Գայլ և Առիւծ .               | 410 |
| Գայլ և Ուշ .                 | 425 |
| Գայլ գառնաղգեստ .            | 452 |
| Գայլ և Էշ .                  | 481 |
| ✓ Գայլ ծերացեալ .            | 484 |
| Գայլ և Գառն .                | 485 |
| Գանձ (հալէլ) և Մարդ .        | 365 |
| Գառն (գոռն) և Գայլ .         | 92  |
| Գառն և Գայլ .                | 485 |
| Գառն և Շինական .             | 496 |
| Գաւազան (փէլէլէլ) և Շուն .   | 221 |
| Գեղջուկ և Խոզ .              | 472 |
| Գետ և Աղբիւր .               | 351 |
| Գինեմոլ (սարհօշ) և Կին իւր . | 412 |
| Գիշերահաւ և Կուղ .           | 428 |
| ✓ Գիտուն և Ռամիկ .           | 371 |
| ✓ Գիտուն և Երկրագործ .       | 514 |
| Գող և Շուն .                 | 120 |
| Գող որդի և Մայրն .           | 209 |
| Գող և Պատանի .               | 239 |
| Գող և Աղբատ .                | 364 |
| Գողք և Աքաղաղք .             | 426 |
| Գորտ (գոռաշաւ) և Մուկն .     | 94  |
| Գորտք [Ժագաւոր խնդրեն .      | 117 |
| Գորտ և Կով .                 | 139 |
| Գորտ և Աղուէս .              | 219 |
| Գորտք .                      | 276 |
| Գորտ և Առիւծ .               | 287 |
| Գորտք և Նապաստակք .          | 406 |

|                                    |     |
|------------------------------------|-----|
| Գորտք երկու .                      | 419 |
| Գորտք և էշ .                       | 430 |
| Գորտք և կրիայ .                    | 448 |
| Գդմենի (գապագ) և Ձիթենի .          | 453 |
| Դիոս և Ուղտ .                      | 222 |
| Դիոս և Կենդանիք .                  | 230 |
| Դիոս և Աւանակ .                    | 285 |
| Դիոս Ապողոն և Մոմոս .              | 315 |
| Դիոս և Մարդիկ .                    | 328 |
| Դիոս և Կրիայ .                     | 330 |
| Դիոս և Կապիկ .                     | 457 |
| Դիոս և Կրիայ .                     | 503 |
| Դլբին (էօնու) և Դոն .              | 281 |
| Դլբին և Կապիկ .                    | 311 |
| Դոն (գալաֆու) և Դլբին .            | 281 |
| Եզն (էօնու) և Երկրագործ .          | 247 |
| Եզնիք և Լուծ .                     | 261 |
| Եզն և Կով .                        | 317 |
| Եզնիք և Եղջերու .                  | 400 |
| Եզնաւար և Եզնիք .                  | 487 |
| Եզնին (լաճ) և Մորենի .             | 235 |
| Եղէգն (գաֆու) և Կաղնի .            | 176 |
| Եզն (էնի) որ նկատէ զինքն 'ի ջրի .  | 155 |
| Եզն և ձագ իւր .                    | 297 |
| Եղջերու (էնի) և Ուլար .            | 95  |
| Եղջերու և Այգի .                   | 332 |
| Եղջերու և Եզնիք .                  | 400 |
| Եղջերու .                          | 408 |
| Եղջերուի (պոնդայ գոնու) և Հաւորս . | 447 |
| Երիտասարդ և Բաղդ .                 | 324 |
| Երկրագործ (լիֆոճի) և Օճ .          | 101 |



|                                   |         |
|-----------------------------------|---------|
| Երկրագործ և Օձ .                  | 128     |
| Երկրագործ և Եղն .                 | 247     |
| Երկրագործ և Շուշք իւր .           | 302     |
| Երկրագործ և Աղուէս .              | 333     |
| Երկրագործ և Բաղդ .                | 416     |
| Երկրագործ և Գիտուն .              | 514     |
| <br>Զինուոր և Ձի .                | <br>451 |
| Էշ .                              | 501     |
| Էշ և Խոզ .                        | 102     |
| Էշ և փոքրիկ Շուն .                | 112     |
| Էշ և Ձի .                         | 153     |
| Էշ Առիւծ և Աքաղաղ .               | 163     |
| Էշ ճիւղնդ .                       | 164     |
| Էշ և Տէր իւր .                    | 218     |
| Էշ և Երկու մարդիկ .               | 257     |
| Էշ Առիւծ և Աղուէս .               | 303     |
| Էշ և Ձի .                         | 306     |
| Էշ բեռնաբարձ .                    | 341     |
| Էշ կռաբարձ .                      | 348     |
| Էշ և Ձի .                         | 399     |
| Էշ և Յիւ .                        | 429     |
| Էշ և Գորտք .                      | 430     |
| Էշ և Շուն .                       | 477     |
| Էշ և Խոզ .                        | 479     |
| Էշ և Գայլ .                       | 481     |
| Էշ և Վարաղ .                      | 491     |
| Էշ և Բանաստեղծ .                  | 492     |
| <br>Ընձառիւծ (Գառլուշ) և Աղուէս . | <br>251 |
| Ընկերք երկու .                    | 224     |

|                                     |     |
|-------------------------------------|-----|
| Թշնամիք երկու .                     | 277 |
| Թուլթակ .                           | 475 |
| Թուլթակ ( ԳՈՒԳՈՒ ԳՈՒՆՈՒ ) և Կապիկ . | 195 |
| Թուչնորս ( ԳՈՒՆԿԱՎ ) և Օձ .         | 283 |
| Թուչունք և Ծիծառն .                 | 115 |
| Թուչունք և Չղջիկան .                | 140 |
| Թուչունք և Բու .                    | 189 |
| Թուչունք և Ագռաւ .                  | 336 |
| Թուչունք և Ուրուր .                 | 387 |
| Իշամեղուք ( ԷՆԷ՜ ԽԵՆԸ ) և Կաքաւք .  | 463 |
| Լալականք .                          | 434 |
| Լեառն յերկունս .                    | 397 |
| Լու ( ԺԷՐԷ ) և Մարդ .               | 170 |
| Լուծ ( ԿՕՅՈՒՆԿՈՒՐԱԳ ) և Եղինք .     | 262 |
| Լուսինեակ ( ԿԻՆԼԿԻՆԸ ) և Ուրուր .   | 205 |
| Խաղախորդ ( ԼԽԱԿԱԳ ) և Ոստիկան .     | 356 |
| Խաղող և Աղուէս .                    | 147 |
| Խաչափառ ( ԼԱՊԱՆՕՎ ) և Չադ իւր .     | 216 |
| Խարտոց ( ԿԷՕՐԺԻՆ ) և Օձ .           | 156 |
| Խարտոց և Կատու .                    | 415 |
| Խեցգետին ( ԸԽԿԱԳՕՎ ) և Օձ .         | 409 |
| Խոզ և Իշ .                          | 102 |
| Խոզ էգ և Գայլ .                     | 121 |
| Խոզ և Գեղջուկ .                     | 472 |
| Խոզ և Իշ .                          | 479 |
| Խոհարար ( ԽԶԸ ) և Շուն .            | 403 |
| Խոյ ( ԳՕՎ ) և Յուլ .                | 493 |
| Ծաղիկք և Վարդ .                     | 265 |

|                              |     |
|------------------------------|-----|
| Ծառայ և Շուն .               | 454 |
| Ծեր ամուսնացեալ .            | 368 |
| Ծեր և Մանուկ .               | 497 |
| Ծեր հայր և Որդի .            | 515 |
| Ծեր և Մահ .                  | 517 |
| Ծեր և Սահ .                  | 518 |
| Ծիծառն (Գլուխիլ) և Թռչունք . | 115 |
| Ծիծառն և Պատանի .            | 325 |
| Ծիծառն և Հաւ .               | 431 |
| Ծիծառն և Սարգ .              | 459 |
| Ծով և Վաճառական .            | 289 |
| Ծով և Ձկնկուլ .              | 422 |

|                                 |     |
|---------------------------------|-----|
| Կաղնի (Քէշ) և Եղէգն .           | 176 |
| Կաղնի և Առնէաք .                | 449 |
| Կաջաղակ (սագսաղան) և Սիրամարդ . | 139 |
| Կաջաղակ և Սիրամարդ .            | 303 |
| Կաջաղակ և Արծիւ .               | 361 |
| Կապիկ և Աղուէս .                | 137 |
| Կապիկ և Աղուէս .                | 152 |
| Կապիկ և Թութակ .                | 195 |
| Կապիկ Գայլ և Աղուէս .           | 197 |
| Կապիկ և Ձադ իւր .               | 260 |
| Կապիկ և Դլբին .                 | 311 |
| Կապիկ և Կատու .                 | 392 |
| Կապիկ և Դիոս .                  | 457 |
| Կապիկ և Առիւծ .                 | 507 |
| Կառք և Ճանճ .                   | 134 |
| Կատու և Մկունք .                | 166 |
| Կատու և Աղուէս .                | 185 |
| Կատու և Աքաղաղ .                | 193 |
| Կատու և Հաւ .                   | 336 |
| Կատու և Կապիկ .                 | 392 |

|                                  |     |
|----------------------------------|-----|
| Կատու և Խարտոց .                 | 415 |
| Կարաս (Բոյ Գոռ-շոռ) և Կռուկնին . | 266 |
| Կարաս և Արտավար .                | 338 |
| Կարիճ (սփռեալ) և Մանուկ .        | 468 |
| Կաքաւ (+է+ւի) և Աքաղաղ .         | 171 |
| Կաքաւ և Նապաստակ .               | 367 |
| Կաքաւք և Իշամեղուք .             | 463 |
| Կենդանիք և Ասիւծ .               | 98  |
| Կենդանիք և Դիոս .                | 230 |
| ✓ Կին և Ոչնար .                  | 352 |
| ✓ Կին և Մահ .                    | 363 |
| ✓ Կանայք երկու և Մարդ .          | 201 |
| ✓ Կին և Այր .                    | 424 |
| Կինճ (էապան աստուծոս) և Աղուէս . | 298 |
| Կինճ Ասիւծ և Անդղ .              | 346 |
| Կիսարձան (Բաշ Գաճա) և Գայլ .     | 132 |
| Կոկորդիլոս և Աղուէս .            | 272 |
| Կով և Գորս .                     | 139 |
| Կով և Շուն .                     | 188 |
| Կով և Եղն .                      | 317 |
| Կուղ (սաճաւ) և Գիշերահաւ .       | 428 |
| Կուռք (Գոռ) և Մարդ .             | 199 |
| Կռուկնին (Բոռ-նա) և Գայլ .       | 99  |
| Կռուկնին և Սիրամարդ .            | 232 |
| Կռուկնին և Կարաս .               | 266 |
| Կրիայ (Բոսպաղ) և Նապաստակ .      | 180 |
| Կրիայ և Արծիւ .                  | 215 |
| Կրիայ և Դիոս .                   | 330 |
| Կրիայ և Գորսք .                  | 448 |
| Կրիայ և Դիոս .                   | 503 |
| Հայր և Որդեք .                   | 202 |
| Հայր և Որդի իւր .                | 504 |

|                                           |     |
|-------------------------------------------|-----|
| Հաւ և Արտավար .                           | 194 |
| Հաւ պարարտ .                              | 329 |
| Հաւ և Կատու .                             | 339 |
| Հաւ և Ծիծառն .                            | 431 |
| Հաւ և Չաղ իւր .                           | 436 |
| Հաւորս և Սարեակ .                         | 162 |
| Հաւորս և Եղջերուկ .                       | 447 |
| Հաւորս և Մանուկ .                         | 456 |
| Հաւորս և Արտուտ .                         | 464 |
| Հերմէս և Փայտահատ .                       | 212 |
| Հերմէս և Ուղեոր .                         | 462 |
| Հերքիւլէս և Շինական .                     | 470 |
| Հիւանդ և երկու Բժիշկ .                    | 252 |
| Հիւանդ և Բժիշկ .                          | 465 |
| Հնդիկ (արապ) .                            | 288 |
| Հնդկահաւ (հինգ լաւ-աղ) և Աքաղաղ .         | 186 |
| Հողագործ և Արագիւ .                       | 308 |
| Հողամաղ (գարապալապ) Մորենի և<br>Չղջիկան . | 255 |
| Հովիւ ստախոս .                            | 204 |
| Հովիւ և Շուն .                            | 293 |
| Հովիւ և Գայլ փոքր .                       | 312 |
| Հովիւ և Որսորդ .                          | 340 |
| Հովիւ և Այծ .                             | 353 |
| Հովիւ և Ոչխար .                           | 360 |
| Հովիւ և Ոչխարք .                          | 435 |
| Հովիւ և Շուն .                            | 505 |
| 2ի և Էշ .                                 | 153 |
| 2ի և Էշ .                                 | 306 |
| 2ի և Էշ .                                 | 335 |
| 2ի և Ձիադարման .                          | 388 |
| 2ի և Մարդ .                               | 399 |
| 2ի և Էշ .                                 |     |

|                                    |     |
|------------------------------------|-----|
| Ձի և Ձինուոր .                     | 451 |
| Ձիթենի ( շէյթէն աշաճը ) և Դդմենի . | 453 |
| Ձկնկուլ ( Գարապաթաթ ) և Ծով .      | 422 |
| Ձկնորս և Ձուկն փոքրիկ .            | 237 |
| Ձկնորս և Ձկունք .                  | 271 |
| Ձկնորսք .                          | 275 |
| Ձկնորս և Ձկունք .                  | 378 |
| Ձուկն փոքրիկ և Ձկնորս .            | 237 |
| Ձկունք և Ձկնորս .                  | 271 |
| Ձկունք և Ձկնորս .                  | 378 |

|                                    |     |
|------------------------------------|-----|
| Ճանճ և Կառք .                      | 134 |
| Ճանճք և Մրջիւն .                   | 135 |
| Ճանճ .                             | 211 |
| Ճանճ և Առիւծ .                     | 381 |
| Ճպուռն ( ճըւճը ալեճէի ) և Մրջիւն . | 173 |

|                       |     |
|-----------------------|-----|
| ✓ Մահ և Կին .         | 363 |
| ✓ Մահ և Ծեր .         | 517 |
| ✓ Մահ և Ծեր .         | 518 |
| ✓ Մայր և Գող որդին .  | 209 |
| ✓ Մայր և Տղայ լացող . | 214 |
| Մանուկ և Հաւորս .     | 456 |
| Մանուկ և Կարիճ .      | 468 |
| Մանուկ և Ծեր .        | 497 |
| Մարգարիտ և Աքաղաղ .   | 90  |
| Մարդ և Առիւծ .        | 169 |
| Մարդ և Լու .          | 170 |
| Մարդ և Կուռք .        | 199 |
| Մարդ և Երկու կանայք . | 201 |
| Մարդ երկու և Էշ .     | 257 |
| Մարդիկ և Դիտս .       | 328 |
| Մարդ և Գանձ .         | 363 |

|                                 |     |
|---------------------------------|-----|
| Մարդ որ շնչէ զցուրտ և զջերմ .   | 374 |
| Մարդ և Ձի .                     | 388 |
| Մարդ և Օձ .                     | 500 |
| Մեղուք և Արջ .                  | 402 |
| Մեղու և Մժեղ .                  | 499 |
| Մեղրագործ (պալճը) և Մեղու .     | 420 |
| Մեռելաթաղ և Բժիշկ .             | 282 |
| Մժեղ (սիւրիսիւն) և Մեղու .      | 499 |
| Մոմոս Գիոս և Ասողոն .           | 315 |
| Մորենի (լաւ) և Աղուէս .         | 198 |
| Մորենի և Եղևին .                | 235 |
| Մորենի Հողամաղ և Չղջիկան .      | 255 |
| Մուկն և Գորս .                  | 94  |
| Մուկն ընտանի և Մուկն դաշտային . | 103 |
| Մուկն և Առիւծ .                 | 114 |
| Մկունք և Կատու .                | 166 |
| Մկունք խորհրդակցին .            | 227 |
| Մուկն և Յուլ .                  | 244 |
| Մուկն փոքրիկ և Մայրն .          | 245 |
| Մուկն և Չագ իւր .               | 383 |
| Մուկն և Պարտիզական .            | 438 |
| Մուկն և Շինական .               | 489 |
| Մրջին և Ճանճ .                  | 135 |
| Մրջին և Ճպուռն .                | 173 |
| Մրջին և Աղաւնի .                | 208 |
| Նախանձող և Ագահ .               | 373 |
| Նապաստակք (Լաւշան) .            | 124 |
| Նապաստակ և Կրիայ .              | 180 |
| Նապաստակ և Արծիւ .              | 248 |
| Նապաստակ և Կաքաւ .              | 367 |
| Նապաստակք և Գորս .              | 406 |
| Նաւապետ .                       | 354 |



|                             |     |
|-----------------------------|-----|
| Նաւորդք և Նաւասպետ .        | 376 |
| Ներկարար և Ածխագործ .       | 254 |
| Նոխաղ (էր+է+ +էլի) և Յուլ . | 229 |
| Նոխաղ և Աղուէս .            | 385 |

|                       |     |
|-----------------------|-----|
| Շինական և Հերքիւլէս . | 470 |
| Շինական և Մուկն .     | 489 |
| Շինական և Գառն .      | 496 |
| Շուն և Սաուեր .       | 96  |
| Շուն փոքրիկ և Էշ .    | 112 |
| Շուն և Գող .          | 120 |
| Շուն և Որսորդ .       | 123 |
| Շուն և Ոչխար .        | 127 |
| Շուն և Գայլ .         | 148 |
| Շուն և Կով .          | 188 |
| Շունք և Գայլ .        | 190 |
| Շուն և Գաւազան .      | 221 |
| Շուն վախ և Գայլ .     | 258 |
| Շուն և Զրշուն .       | 267 |
| Շուն և Հովիւ .        | 293 |
| Շունք և Երկրագործ .   | 302 |
| Շունք Երկու .         | 321 |
| Շուն սլայտառի .       | 357 |
| Շունք Երկու սլայթին . | 384 |
| Շուն և Խոհարար .      | 403 |
| Շունք Երկու կրթեալք . | 421 |
| Շուն և Աղուէս .       | 439 |
| Շուն և Տէրն .         | 440 |
| Շուն և Էշ .           | 441 |
| Շուն և Ոչխար .        | 445 |
| Շուն և Ծառայ .        | 454 |
| Շուն և Էշ .           | 477 |
| Շուն և Աղուէս .       | 495 |



|                            |     |
|----------------------------|-----|
| Ուրուր (շոյշոփ) և Աղաւնի . | 119 |
| Ուրուր և Լուսինեակ .       | 205 |
| Ուրուր .                   | 344 |
| Ուրուր և Թռչունք .         | 387 |
| Ուրուր և Մայրն .           | 398 |

|                                 |     |
|---------------------------------|-----|
| Չար գրացի .                     | 377 |
| Չղջիկան (կէճէ գոշո) և Թռչունք . | 140 |
| Չղջիկան Մորենի և Հողամաղ .      | 255 |
| Չղջիկան և Բու .                 | 413 |

|                     |     |
|---------------------|-----|
| Պառաւ և Աղախին .    | 305 |
| Պառաւ և Բժիշկ .     | 460 |
| Պատանի և Գող .      | 239 |
| Պատանի և Ծիծառն .   | 325 |
| Պատանի և Ապողոն .   | 511 |
| Պարտիզպան և Մուկն . | 438 |

|                            |     |
|----------------------------|-----|
| Ջորի (գաթշո) և Գայլ .      | 177 |
| Ջորի .                     | 323 |
| Ջրչուն (գոշոփոշո) և Շուն . | 267 |

|                  |     |
|------------------|-----|
| Ռամիկ և Գիտուն . | 371 |
|------------------|-----|

|                                   |     |
|-----------------------------------|-----|
| Սադ (գաշ) և Տէրն .                | 250 |
| Սարդ (էօրի-ճէէ) և Ծիծառն .        | 459 |
| Սարեակ (գաթաթա-ո-գ) և Հաւորս .    | 162 |
| Սարեակ և Տաւրակ .                 | 443 |
| Սիրամարդ (թառաշոփոշո) և Կաջաղակ . | 133 |

|                                 |     |
|---------------------------------|-----|
| Սիրամարդ և Սոխակ .              | 159 |
| Սիրամարդ և Կռուկներն .          | 232 |
| Սիրամարդ և Կաջաղակ .            | 309 |
| Սիրամարդ և Արծիւ .              | 476 |
| Սոխակ (պիւ-լպիւ-լ) և Սիրամարդ . | 159 |
| Ստուեր և Շուկն .                | 96  |
| Սօսի (լէնար) և Ուղլուորք .      | 270 |
| Վադր (իւլէլէլ) և Գայլ .         | 233 |
| Վաճառական և Ծով .               | 289 |
| Վարաղ (Եսպան պոճուղաւ) և Էշ .   | 491 |
| Վարդ և Ծաղիկք .                 | 265 |
| Վիշապք (աթպէր) .                | 179 |
| Տաւրակ (Գոմար) Սարեակ .         | 443 |
| Տղայ լացող և Մայրն .            | 214 |
| Յին (լայլափ) Արծիւ և Բազէ .     | 405 |
| Յիւ (Եսպան ելէյի) և Էշ .        | 429 |
| Յուլ (պո-ղա) և Նոխաղ .          | 229 |
| Յուլ և Մուկն .                  | 244 |
| Յուլք և Առիւծ .                 | 394 |
| Յուլ և Առիւծ .                  | 469 |
| Յուլ և Խոյ .                    | 493 |
| Փայտահատ և Անտառ .              | 146 |
| Փայտահատ և Գայլ .               | 160 |
| Փայտահատ և Հերմէս .             | 212 |
| Փարթամ և Ազգական .              | 444 |
| Փողահար                         | 301 |

|                  |     |
|------------------|-----|
| Օձ և Երկրագործ . | 101 |
| Օձ և Երկրագործ . | 128 |
| Օձ և Խարտոց .    | 156 |
| Օձ և Թռչնորս .   | 283 |
| Օձ և Տուռն .     | 313 |
| Օձ և Ողնի .      | 395 |
| Օձ և Խեցեփոխ .   | 409 |
| Օձ և Մարդ .      | 500 |

